ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական ինտեգրման մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի հռչակագրի վրա,

առաջնորդվելով պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքով, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների գերակայության սկզբունքն անվերապահորեն պահպանելու անհրաժեշտությամբ,

ցանկանալով ամրապնդել համերաշխությունն ու խորացնել համագործակցությունն իրենց ժողովուրդների միջև՝ պահպանելով հարգանքը նրանց պատմության, մշակույթի ու ավանդույթների նկատմամբ,

համոզմունք հայտնելով, որ եվրասիական տնտեսական ինտեգրման հետագա զարգացումը համահունչ է Կողմերի ազգային շահերին,

առաջնորդվելով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տնտեսություններն ամրապնդելու և դրանց ներդաշնակ զարգացումն ու մերձեցումն ապահովելու, ինչպես նաև գործարար ակտիվության կայուն աճը, հավասարակշռված առևտուրը և բարեխիղճ մրցակցությունը երաշխավորելու ձգտումներով,

ապահովելով տնտեսական առաջընթաց՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների առջև դրված այն ընդհանուր խնդիրների լուծմանն ուղղված համատեղ գործողությունների միջոցով, որոնք առնչվում են համաշխարհային տնտեսության շրջանակներում կայուն տնտեսական զարգացմանը, բազմակողմանի արդիականացմանը և ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացմանը,

հաստատելով այլ երկրների, ինչպես նաև միջազգային ինտեգրացիոն կազմավորումների ու միջազգային կազմակերպությունների հետ տնտեսական փոխշահավետ և իրավահավասար համագործակցությունը հետագայում ամրապնդելու ձգտումը,

հաշվի առնելով Առևտրի համաշխարհային կազմակերպության նորմերը, կանոններն ու սկզբունքները,

հաստատելով իրենց հավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին, ինչպես նաև միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող այլ սկզբունքներին և նորմերին,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Բաժին I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Եվրասիական տնտեսական միության հիմնադրումը

Իրավասուբյեկտությունը

1. Սույն Պայմանագրով Կողմերը հիմնադրում են Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ), որի շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի տեղաշարժի ազատությունը, սույն Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսության ճյուղերում համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը:

2. Միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է, որն ունի միջազգային իրավասուբյեկտություն:

Հոդված 2
Սահմանումները

Սույն Պայմանագրի նպատակներով օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

«օրենսդրության ներդաշնակեցում»՝ անդամ պետությունների օրենսդրության մոտարկում, որն ուղղված է առանձին ոլորտներում համանման (համադրելի) նորմատիվ իրավական կարգավորում սահմանելուն,

«անդամ պետություններ»՝ Միության անդամներ և սույն Պայմանագրի կողմեր հանդիսացող պետություններ,

«պաշտոնատար անձինք»՝ անդամ պետությունների այն քաղաքացիները, որոնք նշանակված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների և Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների տեղակալների, ինչպես նաև Միության դատարանի քարտուղարության ղեկավարի, Միության դատարանի քարտուղարության ղեկավարի տեղակալների և Միության դատարանի դատավորների խորհրդականների պաշտոններում,

«միասնական տնտեսական տարածք»՝ անդամ պետությունների տարածքներից բաղկացած տարածք, որտեղ շուկայական սկզբունքների և ներդաշնակեցված կամ միասնականացված իրավական նորմերի կիրառման հիման վրա գործում են տնտեսության կարգավորման համանման (համադրելի) ու միատեսակ մեխանիզմներ և որտեղ գոյություն ունի միասնական ենթակառուցվածք,

«միասնական քաղաքականություն»՝ անդամ պետությունների կողմից սահմանված՝ սույն Պայմանագրով նախատեսված ոլորտներում իրականացվող քաղաքականություն, որը ենթադրում է անդամ պետությունների կողմից միասնականացված իրավական կարգավորում, այդ թվում՝ Միության մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակներում կայացված որոշումների հիման վրա,

«Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրեր»՝ Միության գործունեությանը և զարգացմանն առնչվող հարցերով անդամ պետությունների միջև կնքվող միջազգային պայմանագրեր,

«երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրեր»՝ երրորդ պետությունների, նրանց ինտեգրացիոն կազմավորումների ու միջազգային կազմակերպությունների հետ կնքվող միջազգային պայմանագրեր,

«ընդհանուր (միասնական) շուկա»՝ Միության շրջանակներում ծավալվող տնտեսական հարաբերությունների ամբողջություն, որոնց դեպքում ապահովվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի տեղաշարժի ազատությունը,

«կարգադրություն»՝ Միության մարմինների կողմից ընդունվող կազմակերպակարգադրական ակտ,

«որոշում»՝ Միության մարմինների կողմից ընդունվող, նորմատիվ իրավական բնույթի դրույթներ պարունակող ակտ,

«համակարգված քաղաքականություն»՝ քաղաքականություն, որը ենթադրում է անդամ պետությունների համագործակցություն Միության մարմինների շրջանակներում հավանության արժանացած ընդհանուր մոտեցումների հիման վրա, որոնք անհրաժեշտ են Միության՝ սույն Պայմանագրով նախատեսված նպատակներն իրագործելու համար,

«համաձայնեցված քաղաքականություն»՝ տարբեր ոլորտներում անդամ պետությունների կողմից իրականացվող քաղաքականություն, որը ենթադրում է իրավական կարգավորման այն չափով ներդաշնակեցում, այդ թվում՝ Միության մարմինների որոշումների հիման վրա, որն անհրաժեշտ է Միության՝ սույն Պայմանագրով նախատեսված նպատակներն իրագործելու համար,

«աշխատակիցներ»՝ անդամ պետությունների քաղաքացիներ, որոնք Միության մարմիններում աշխատում են իրենց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի հիման վրա և որոնք պաշտոնատար անձինք չեն,

«Մաքսային միություն»՝ անդամ պետությունների առևտրատնտեսական ինտեգրման ձև, որով նախատեսվում է միասնական մաքսային տարածք, որի սահմաններում փոխադարձ առևտրի մեջ չեն կիրառվում մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր և հավաքագրումներ), ոչ սակագնային կարգավորման միջոցներ, հատուկ պաշտպանական, հակագնագցման ու փոխհատուցման միջոցներ, և որտեղ գործում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը և երրորդ կողմի հետ ապրանքների արտաքին առևտրի կարգավորման միասնական միջոցները,

«երրորդ կողմ»՝ Միության անդամ չհանդիսացող պետություն, միջազգային կազմակերպություն կամ միջազգային ինտեգրացիոն կազմավորում,

«օրենսդրության միասնականացում»՝ անդամ պետությունների օրենսդրության մոտարկում, որն ուղղված է սույն Պայմանագրով սահմանված առանձին ոլորտներում իրավական կարգավորման նույնական մեխանիզմներ սահմանելուն:

Սույն Պայմանագրում օգտագործվող այլ հասկացություններ ընկալվում են այն իմաստներով, որոնք ներկայացված են սույն Պայմանագրի և դրա հավելվածների համապատասխան բաժիններում:

Բաժին II
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոդված 3
Միության գործունեության հիմնական սկզբունքները

Միությունն իր գործունեությունն իրականացնում է անդամ պետությունների կողմից սույն Պայմանագրին համապատասխան իրեն վերապահվող իրավասության շրջանակներում՝ հետևյալ սկզբունքների հիման վրա՝

միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների՝ ներառյալ անդամ պետությունների ինքնիշխան հավասարության և նրանց տարածքային ամբողջականության սկզբունքների նկատմամբ հարգանքը,

անդամ պետությունների քաղաքական կարգի առանձնահատկությունների նկատմամբ հարգանքը,

Կողմերի փոխշահավետ համագործակցությունը, իրավահավասարությունն ապահովելը և ազգային շահերը հաշվի առնելը,

շուկայական տնտեսության և բարեխիղճ մրցակցության սկզբունքների պահպանումը,

անցումային ժամանակահատվածների ավարտից հետո Մաքսային միության գործունեությունը՝ առանց բացառումների և սահմանափակումների:

Անդամ պետությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում, որպեսզի Միությունն իրականացնի իր գործառույթները, և ձեռնպահ են մնում այնպիսի միջոցներից, որոնք կարող են վտանգել Միության նպատակների իրագործումը:

Հոդված 4
Միության հիմնական նպատակները

Միության հիմնական նպատակներն են՝

անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ ի նպաստ դրանց բնակչության կենսամակարդակի բարձրացման շահերի,

Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի միասնական շուկա ձևավորելու ձգտումը,

համաշխարհային տնտեսության պայմաններում բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը և ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումը:

Հոդված 5
Իրավասությունը

1. Միությունն օժտվում է իրավասությամբ սույն Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում և ծավալներով:

2. Անդամ պետություններն իրականացնում են համակարգված կամ համաձայնեցված քաղաքականություն՝ սույն Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում և ծավալներով:

3. Տնտեսության այլ ոլորտներում անդամ պետությունները ձգտում են իրականացնել համակարգված կամ համաձայնեցված քաղաքականություն՝ Միության հիմնական սկզբունքներին և նպատակներին համապատասխան:

Այդ նպատակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել համապատասխան հարցերով օժանդակ մարմիններ (Կողմերի պետական մարմինների ղեկավարների խորհուրդներ, աշխատանքային խմբեր, հատուկ հանձնաժողովներ) և (կամ) տրվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հանձնարարականներ համապատասխան ոլորտներում Կողմերի փոխգործակցությունը համակարգելու ուղղությամբ:

Հոդված 6
Միության իրավունքը

1. Միության իրավունքի մաս են կազմում՝

սույն Պայմանագիրը,

Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը,

երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերը,

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներն ու կարգադրությունները, որոնք ընդունվել են սույն Պայմանագրով ու Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված իրենց լիազորությունների շրջանակներում:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները ենթակա են անդամ պետությունների կողմից դրանց ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով կատարման:

2. Երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերը չպետք է հակասեն Միության գործունեության հիմնական նպատակներին, սկզբունքներին ու կանոններին:

3. Սույն Պայմանագրի և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի միջև հակասություններ առաջանալու դեպքում գերակայում է սույն Պայմանագիրը:

Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները չպետք է հակասեն սույն Պայմանագրին և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին:

4. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների միջև հակասություններ առաջանալու դեպքում՝

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ,

Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ:

Հոդված 7
Միության միջազգային գործունեությունը

1. Միությունն իրավունք ունի իր իրավասության շրջանակներում իրականացնելու Միության առջև դրված խնդիրների կարգավորմանն ուղղված միջազգային գործունեություն: Այսպիսի գործունեության շրջանակներում Միությունն իրավունք ունի միջազգային համագործակցություն ծավալելու պետությունների, միջազգային կազմակերպությունների ու միջազգային ինտեգրացիոն կազմավորումների հետ և ինքնուրույն կամ անդամ պետությունների հետ կնքելու իր իրավասությանը վերապահված հարցերին առնչվող միջազգային պայմանագրեր:

Միության կողմից միջազգային համագործակցություն ծավալելու կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ: Երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրեր կնքելու հարցերը սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով:

2. Երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերի նախագծերին առնչվող բանակցությունների վարումը, ինչպես նաև դրանց ստորագրումն իրականացվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա անդամ պետությունների կողմից համապատասխան ներպետական ընթացակարգերը կատարելուց հետո:

Երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրի՝ Միության համար պարտադիր լինելու վերաբերյալ նրա համաձայնությունն արտահայտելու, միջազգային պայմանագիրը դադարեցնելու, կասեցնելու կամ դրանից դուրս գալու մասին որոշումը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդն ընդունում է բոլոր անդամ պետությունների կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելուց հետո:

Բաժին III
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 8
Միության մարմինները

1. Միության մարմիններն են՝

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը (այսուհետ՝ Բարձրագույն խորհուրդ),

Եվրասիական միջկառավարական խորհուրդը (այսուհետ՝ Միջկառավարական խորհուրդ),

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով, ԵՏՀ),

Եվրասիական տնտեսական միության դատարանը (այսուհետ՝ Միության դատարան):

2. Միության մարմինները գործում են այն լիազորությունների շրջանակներում, որոնք նրանց վերապահված են սույն Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

3. Միության մարմինները գործում են սույն Պայմանագրի 3-րդ հոդվածում նշված սկզբունքների հիման վրա:

4. Բարձրագույն խորհրդում, Միջկառավարական խորհրդում և Հանձնաժողովի խորհրդում նախագահությունն իրականացվում է ռոտացիոն սկզբունքով՝ ռուսերեն այբբենական կարգով, մեկ անդամ պետության կողմից, օրացուցային մեկ տարվա ընթացքում՝ առանց երկարաձգման իրավունքի:

5. Անդամ պետությունների տարածքներում Միության մարմինների գտնվելու պայմանները սահմանվում են Միության և գտնվելու վայրի պետությունների միջև կնքվող առանձին միջազգային պայմանագրերով:

Հոդված 9
Միության մշտապես գործող մարմինների կառուցվածքային ստորաբաժանումներում պաշտոններ զբաղեցնելը

1. Միության մշտապես գործող մարմինների կառուցվածքային ստորաբաժանումներում պաշտոններ զբաղեցնելու իրավունք ունեն անդամ պետությունների այն քաղաքացիները, որոնք ունեն համապատասխան մասնագիտական կրթություն և աշխատանքային փորձ:

2. Հանձնաժողովի դեպարտամենտի պաշտոնատար անձինք չեն կարող լինել միևնույն պետության քաղաքացիներ: Նշված պաշտոններն զբաղեցնելու համար թեկնածուների ընտրությունն իրականացվում է ԵՏՀ-ի մրցութային հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով Կողմերի հավասար ներկայացվածության սկզբունքը: Նշված պաշտոններն զբաղեցնելու մրցույթին մասնակցելու համար թեկնածությունները ներկայացնում է Հանձնաժողովի խորհրդի անդամը՝ համապատասխան Կողմից:

3. Հանձնաժողովի դեպարտամենտներում այլ պաշտոններ զբաղեցնելու համար թեկնածուների ընտրությունն իրականացվում է ԵՏՀ-ի կողմից մրցութային հիմունքով՝ հաշվի առնելով Հանձնաժողովի ֆինանսավորման մեջ Կողմերի բաժնեմասային մասնակցությունը:

4. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված պաշտոններն զբաղեցնելու համար թեկնածուների ընտրության հարցերով ԵՏՀ մրցութային հանձնաժողովի կազմի մեջ մտնում են Հանձնաժողովի կոլեգիայի բոլոր անդամները՝ բացառությամբ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի:

ԵՏՀ-ի մրցութային հանձնաժողովն իր որոշումները կայացնում է առաջարկությունների տեսքով՝ ձայների մեծամասնությամբ, և դրանք ներկայացնում Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի հաստատմանը: Եթե Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը կոնկրետ թեկնածուի վերաբերյալ ընդունում է այնպիսի որոշում, որը հակասում է ԵՏՀ մրցութային հանձնաժողովի առաջարկությանը, ապա Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը հարցը ներկայացնում է Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը վերջնական որոշում կայացնելու նպատակով:

«ԵՏՀ մրցութային հանձնաժողովի մասին» հիմնադրույթը (ներառյալ մրցույթի անցկացման կանոնները), դրա կազմը, ինչպես նաև Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների և տնօրենների տեղակալների պաշտոններն զբաղեցնելու համար թեկնածուներին ներկայացվող որակավորման պահանջները հաստատվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից:

5. Թեկնածուների ընտրության կարգը և Միության դատարանի աշխատակազմում պաշտոնի նշանակումն իրականացվում են Միության դատարանի գործունեությունը կարգավորող փաստաթղթերին համապատասխան:

Հոդված 10
Բարձրագույն խորհուրդը

1. Բարձրագույն խորհուրդը Միության բարձրագույն մարմինն է:

2. Բարձրագույն խորհրդի կազմի մեջ մտնում են անդամ պետությունների ղեկավարները:

Հոդված 11
Բարձրագույն խորհրդի աշխատակարգը

1. Բարձրագույն խորհրդի նիստերն անցկացվում են տարին առնվազն մեկ անգամ:

Միության գործունեությանն առնչվող անհետաձգելի հարցերը լուծելու նպատակով կարող են գումարվել Բարձրագույն խորհրդի արտահերթ նիստեր՝ ցանկացած անդամ պետության կամ Բարձրագույն խորհրդի նախագահի նախաձեռնությամբ:

2. Բարձրագույն խորհրդի նիստերն անցկացվում են Բարձրագույն խորհրդի նախագահի ղեկավարությամբ:

Բարձրագույն խորհրդի նախագահը՝

վարում է Բարձրագույն խորհրդի նիստերը,

կազմակերպում է Բարձրագույն խորհրդի աշխատանքը,

իրականացնում է Բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերի նախապատրաստական գործընթացների ընդհանուր ղեկավարումը:

Բարձրագույն խորհրդի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Բարձրագույն խորհրդի՝ նախագահող անդամ պետությունը ներկայացնող նոր անդամն իրականացնում է Բարձրագույն խորհրդի նախագահի լիազորությունները մնացած ժամկետի ընթացքում:

3. Բարձրագույն խորհրդի նախագահի հրավերով Բարձրագույն խորհրդի նիստերին կարող են մասնակցել Հանձնաժողովի խորհրդի անդամները, Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը և հրավիրված այլ անձինք:

Բարձրագույն խորհրդի մասնակիցների ցուցակը և նիստերի ձևաչափը սահմանվում են Բարձրագույն խորհրդի նախագահի կողմից Բարձրագույն խորհրդի անդամների հետ համաձայնեցմամբ:

Բարձրագույն խորհրդի նիստերի օրակարգը ձևավորվում է Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների առաջարկությունների հիման վրա:

Բարձրագույն խորհրդի նիստերին զանգվածային լրատվամիջոցների հավատարմագրված ներկայացուցիչների ներկայության հարցը կարգավորվում է Բարձրագույն խորհրդի նախագահի կողմից:

4. Բարձրագույն խորհրդի նիստերի անցկացումը կազմակերպելու կարգը հաստատվում է Բարձրագույն խորհրդի կողմից:

5. Բարձրագույն խորհրդի նիստերի նախապատրաստման ու անցկացման կազմակերպչական, տեղեկատվական և նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ ընդունող անդամ պետության աջակցությամբ: Բարձրագույն խորհրդի նիստերի անցկացման ֆինանսական ապահովումն իրականացվում է Միության բյուջեի միջոցների հաշվին:

Հոդված 12
Բարձրագույն խորհրդի լիազորությունները

1. Բարձրագույն խորհուրդը քննարկում է Միության գործունեությանն առնչվող սկզբունքային հարցերը, սահմանում ինտեգրացիայի զարգացման ռազմավարությունը, ուղղություններն ու հեռանկարները և ընդունում Միության նպատակների իրագործմանն ուղղված որոշումներ:

2. Բարձրագույն խորհուրդն իրականացնում է հետևյալ հիմնական լիազորությունները՝

1) սահմանում է Միության ձևավորման և զարգացման ռազմավարությունը, ուղղություններն ու հեռանկարները և ընդունում Միության նպատակների իրագործմանն ուղղված որոշումներ,

2) հաստատում է Հանձնաժողովի կոլեգիայի կազմը, բաշխում է պարտականությունները Հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջև և դադարեցնում է նրանց լիազորությունները,

3) նշանակում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահին և ընդունում նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում,

4) անդամ պետությունների ներկայացմամբ նշանակում է Միության դատարանի դատավորներին,

5) հաստատում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքային կանոնակարգը,

6) հաստատում է Միության բյուջեն, «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» հիմնադրույթը և Միության բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը,

7) սահմանում է անդամ պետությունների՝ Միության բյուջե կատարած բաժնեմասային ներդրումների չափը (սանդղակը),

8) անդամ պետության առաջարկով քննարկում է այն հարցերը, որոնք վերաբերում են Միջկառավարական խորհրդի կամ Հանձնաժողովի ընդունած որոշումները չեղարկելուն կամ փոփոխելուն՝ հաշվի առնելով 16-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթները,

9) Միջկառավարական խորհրդի կամ Հանձնաժողովի առաջարկությամբ քննարկում է այն հարցերը, որոնց շուրջ որոշում ընդունելիս ընդհանուր համաձայնություն (կոնսենսուս) ձեռք չի բերվել,

10) հարցումներով դիմում է Միության դատարան,

11) հաստատում է Միության դատարանի դատավորների, Միության դատարանի աշխատակազմի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների եկամուտների, գույքի և գույքային բնույթի պարտավորությունների մասին տվյալների հավաստիությունն ու ամբողջականությունն ստուգելու կարգը,

12) սահմանում է Միություն նոր անդամներ ընդունելու և Միությանն անդամակցությունը դադարեցնելու կարգը,

13) ընդունում է դիտորդի կարգավիճակ կամ Միությանն անդամակցելու համար թեկնածու պետության կարգավիճակ տալու կամ այն չեղյալ համարելու մասին որոշում,

14) հաստատում է Եվրասիական տնտեսական միության կողմից միջազգային համագործակցություն իրականացնելու կարգը,

15) ընդունում է Միության անունից երրորդ կողմի հետ բանակցելու, այդ թվում՝ դրա հետ Միության միջազգային պայմանագրեր կնքելու և բանակցություններ վարելու իրավունք վերապահելու, ինչպես նաև երրորդ կողմի հետ կնքող միջազգային պայմանագրի՝ Միության համար պարտադիր լինելուն նրա համաձայնությունն արտահայտելու, միջազգային պայմանագիրը դադարեցնելու, կասեցնելու կամ դրանից դուրս գալու մասին որոշումներ,

16) հաստատում է Միության մարմինների ընդհանուր հաստիքների թվակազմը, Միության մարմիններում անդամ պետությունների քաղաքացիների թվից պաշտոնատար անձանց ներկայացվածության չափանիշները, որոնք մրցութային հիմունքով ուղարկվում են անդամ պետությունների ներկայացմամբ,

17) հաստատում է Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, Միության մարմինների պաշտոնատար անձանց և աշխատակիցների աշխատանքի դիմաց վարձատրության կարգը,

18) հաստատում է «Եվրասիական տնտեսական միության մարմիններում արտաքին աուդիտի (վերահսկողության) մասին» հիմնադրույթը,

19) քննարկում է Միության մարմիններում անցկացված արտաքին աուդիտի (վերահսկողության) արդյունքները,

20) հաստատում է Միության խորհրդանշանները,

21) հանձնարարություններ է տալիս Միջկառավարական խորհրդին և Հանձնաժողովին,

22) ընդունում է համապատասխան հարցերով օժանդակ մարմիններ ստեղծելու մասին որոշումներ,

23) իրականացնում է սույն Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 13
Բարձրագույն խորհրդի որոշումներն ու կարգադրությունները

1. Բարձրագույն խորհուրդն ընդունում է որոշումներ ու կարգադրություններ:

2. Բարձրագույն խորհրդի որոշումներն ու կարգադրություններն ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Բարձրագույն խորհրդի՝ Միությունում անդամ պետության անդամակցության դադարեցման հետ կապված որոշումներն ընդունվում են հետևյալ սկզբունքով՝ «ընդհանուր համաձայնություն (կոնսենսուս)՝ հանած այն անդամ պետության ձայնը, որը ծանուցել է Միությունում իր անդամակցությունը դադարեցնելու մտադրության մասին»:

Հոդված 14
Միջկառավարական խորհուրդը

Միջկառավարական խորհուրդն անդամ պետությունների կառավարությունների ղեկավարներից բաղկացած Միության մարմին է:

Հոդված 15
Միջկառավարական խորհրդի աշխատակարգը

1. Միջկառավարական խորհրդի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան տարին երկու անգամ:

Միության գործունեությանն առնչվող անհետաձգելի հարցերը լուծելու նպատակով կարող են գումարվել Միջկառավարական խորհրդի արտահերթ նիստեր ցանկացած անդամ պետության կամ Միջկառավարական խորհրդի նախագահի նախաձեռնությամբ:

2. Միջկառավարական խորհրդի նիստերն անցկացվում են Միջկառավարական խորհրդի նախագահի ղեկավարությամբ:

Միջկառավարական խորհրդի նախագահը՝

վարում է Միջկառավարական խորհրդի նիստերը,

կազմակերպում է Միջկառավարական խորհրդի աշխատանքը,

իրականացնում է Միջկառավարական խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերի նախապատրաստական գործընթացների ընդհանուր ղեկավարումը:

Միջկառավարական խորհրդի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Միջկառավարական խորհրդի՝ նախագահող անդամ պետությունը ներկայացնող նոր անդամն իրականացնում է Միջկառավարական խորհրդի նախագահի լիազորությունները մնացած ժամկետի ընթացքում:

3. Միջկառավարական խորհրդի նախագահի հրավերով Միջկառավարական խորհրդի նիստերին կարող են մասնակցել Հանձնաժողովի խորհրդի անդամները, Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը և հրավիրված այլ անձինք:

Միջկառավարական խորհրդի մասնակիցների ցուցակը և նիստերի ձևաչափը սահմանվում են Միջկառավարական խորհրդի նախագահի կողմից Միջկառավարական խորհրդի անդամների հետ համաձայնեցմամբ:

Միջկառավարական խորհրդի նիստերի օրակարգը ձևավորվում է Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների առաջարկությունների հիման վրա:

Միջկառավարական խորհրդի նիստերին զանգվածային լրատվամիջոցների հավատարմագրված ներկայացուցիչների ներկայության հարցը կարգավորվում է Միջկառավարական խորհրդի նախագահի կողմից:

4. Միջկառավարական խորհրդի նիստերի անցկացման կարգը հաստատվում է Միջկառավարական խորհրդի կողմից:

5. Միջկառավարական խորհրդի նիստերի նախապատրաստման ու անցկացման կազմակերպչական, տեղեկատվական և նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ ընդունող անդամ պետության աջակցությամբ: Միջկառավարական խորհրդի նիստերի անցկացման ֆինանսական ապահովումն իրականացվում է Միության բյուջեի միջոցների հաշվին:

Հոդված 16
Միջկառավարական խորհրդի լիազորությունները

Միջկառավարական խորհուրդն իրականացնում է հետևյալ հիմնական լիազորությունները՝

1) ապահովում է սույն Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի և Բարձրագույն խորհրդի որոշումների իրականացման ու կատարման նկատմամբ հսկողությունը,

2) Հանձնաժողովի խորհրդի առաջարկությամբ քննարկում է այն հարցերը, որոնց շուրջ Հանձնաժողովի խորհրդում որոշումներ ընդունելիս ընդհանուր համաձայնություն (կոնսենսուս) ձեռք չի բերվել,

3) հանձնարարություններ է տալիս Հանձնաժողովին,

4) Բարձրագույն խորհուրդ է ներկայացնում Խորհրդի անդամների և Հանձնաժողովի կոլեգիայի անդամների թեկնածությունները,

5) հավանություն է տալիս Միության բյուջեի, «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» հիմնադրույթի և Միության բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության նախագծերին,

6) հաստատում է «Եվրասիական տնտեսական միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգման մասին» հիմնադրույթը, Միության

մարմինների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգման ստանդարտներն ու մեթոդաբանությունը, ընդունում է որոշումներ Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեությունը վերստուգելու վերաբերյալ և սահմանում դրանց անցկացման ժամկետները,

7) անդամ պետության առաջարկությամբ քննարկում է Հանձնաժողովի ընդունած որոշումների չեղարկմանը կամ փոփոխմանն առնչվող հարցերը կամ, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, դրանք ներկայացնում է Բարձրագույն խորհրդի քննարկմանը,

8) ընդունում է որոշում Խորհրդի կամ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումների գործողության կասեցման վերաբերյալ,

9) հաստատում է Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցների, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների եկամուտների, գույքի և գույքային բնույթի պարտավորությունների մասին տվյալների հավաստիությունն ու ամբողջականությունն ստուգելու կարգը,

10) իրականացնում է սույն Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 17
Միջկառավարական խորհրդի որոշումներն ու կարգադրությունները

1. Միջկառավարական խորհուրդն ընդունում է որոշումներ ու կարգադրություններ:

2. Միջկառավարական խորհրդի որոշումներն ու կարգադրություններն ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Հոդված 18
Հանձնաժողովը

1. Հանձնաժողովը Միության մշտապես գործող կարգավորող մարմինն է: Հանձնաժողովը բաղկացած է Խորհրդից ու Կոլեգիայից:

2. Հանձնաժողովն ընդունում է որոշումներ, կարգադրություններ ու առաջարկություններ:

Հանձնաժողովի խորհրդի որոշումները, կարգադրություններն ու առաջարկություններն ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Հանձնաժողովի Կոլեգիայի որոշումները, կարգադրություններն ու առաջարկություններն ընդունվում են որակյալ մեծամասնությամբ կամ ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Բարձրագույն խորհուրդը սահմանում է «զգայուն» հարցերի ցանկը, որոնց վերաբերյալ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումներն ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Ընդ որում, որակյալ մեծամասնությունը կազմում է Հանձնաժողովի կոլեգիայի անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդը:

3. Հանձնաժողովի կարգավիճակը, խնդիրները, կազմը, գործառույթները, լիազորություններն ու աշխատակարգը սահմանվում են սույն Պայմանագրի 1-ին հավելվածի համաձայն:

4. Հանձնաժողովի գտնվելու վայրը Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքն է:

Հոդված 19
Միության դատարանը

1. Միության դատարանը Միության մշտապես գործող դատական մարմինն է:

2. Միության դատարանի կարգավիճակը, կազմը, իրավասությունը, գործունեության իրականացման ու ձևավորման կարգը սահմանվում են Եվրասիական տնտեսական միության դատարան ստատուտով՝ սույն Պայմանագրի 2-րդ հավելվածի համաձայն:

3. Միության դատարանի գտնվելու վայրը Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքն է:

Բաժին IV
ՄԻՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Հոդված 20
Միության բյուջեն

1. Միության մարմինների գործունեության ֆինանսավորումն իրականացվում է Միության բյուջեի միջոցների հաշվին, որը ձևավորվում է «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» հիմնադրույթով սահմանված կարգով:

Հերթական ֆինանսական տարվա համար Միության բյուջեն ձևավորվում է ռուսական ռուբլով՝ անդամ պետությունների բաժնեմասային ներդրումների հաշվին: Անդամ պետությունների՝ Միության բյուջե կատարվող բաժնեմասային ներդրումների չափը (սանդղակը) սահմանվում է Բարձրագույն խորհրդի կողմից:

Միության բյուջեի եկամուտներն ու ծախսերը պետք է հավասարակշռված լինեն: Ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ից և ավարտվում դեկտեմբերի 31-ին:

2. Միության բյուջեն և «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» հիմնադրույթը հաստատվում են Բարձրագույն խորհրդի կողմից:

Միության բյուջեում և «Եվրասիական տնտեսական միության բյուջեի մասին» հիմնադրույթում փոփոխությունների կատարումն իրականացվում է Բարձրագույն խորհրդի կողմից:

Հոդված 21
Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումը

Միության բյուջեի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով անցկացվում է Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգում ոչ պակաս, քան երկու տարվա ընթացքում մեկ անգամ:

Ցանկացած անդամ պետության նախաձեռնությամբ Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության հետ կապված առանձին հարցերի մասով կարող են ստուգումներ անցկացվել:

Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումներն իրականացվում են անդամ պետությունների պետական ֆինանսական հսկողության մարմինների ներկայացուցիչներից բաղկացած վերստուգողների խմբի կողմից:

Միության մարմինների ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումների արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են Միջկառավարական խորհրդի քննարկմանը:

Հոդված 22
Արտաքին աուդիտը (հսկողությունը)

Միության բյուջեի միջոցների ձևավորման, կառավարման ու տնօրինման արդյունավետության, Միության գույքի և այլ ակտիվների օգտագործման արդյունավետության որոշման նպատակով անցկացվում է արտաքին աուդիտ (հսկողություն): Արտաքին աուդիտը (հսկողությունը) իրականացվում է անդամ պետությունների պետական ֆինանսական հսկողության մարմինների ներկայացուցիչներից բաղկացած տեսուչների խմբի կողմից: Արտաքին աուդիտի (հսկողության) ստանդարտներն ու մեթոդաբանությունը սահմանվում են անդամ պետությունների պետական ֆինանսական հսկողության մարմինների կողմից:

Միության մարմիններում անցկացված արտաքին աուդիտի (հսկողության) արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են Բարձրագույն խորհրդի քննարկմանը:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին V
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 23
Տեղեկատվական փոխգործակցությունը Միության շրջանակներում

1. Միության գործունեությանն առնչվող բոլոր ոլորտներում ինտեգրացիոն գործընթացների տեղեկատվական ապահովման նպատակով մշակվում ու իրականացվում են Միության շրջանակներում տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկատվական փոխգործակցության և վստահության անդրսահմանային տարածության ապահովմանն ուղղված միջոցառումներ:

2. Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների իրականացման դեպքում տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի կիրառմամբ, որով ապահովվում է ըստ տարածքների տեղաբաշխված պետական տեղեկատվական ռեսուրսների և լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի, ինչպես նաև Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների ու տեղեկատվական համակարգերի ինտեգրացումը:

3. Պետական տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվական համակարգերի արդյունավետ փոխգործակցությունն ու համակարգումն ապահովելու նպատակով տեղեկատվայնացման ու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում անդամ պետություններն իրականացնում են համաձայնեցված քաղաքականություն:

4. Ծրագրատեխնիկական միջոցներ ու տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելիս անդամ պետություններն ապահովում են փոխգործակցության ընթացքում օգտագործվող կամ ձեռք բերված մտավոր սեփականության պահպանությունը:

5. Միության շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության և դրա իրականացումը համակարգելու հիմնարար սկզբունքները, ինչպես նաև ինտեգրացված տեղեկատվական համակարգի ստեղծման ու զարգացման կարգը սահմանվում են սույն Պայմանագրի 3-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 24
Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունները

1. Միության գործունեության ու զարգացման արդյունավետության նպատակով ձևավորվում են Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունները:

2. Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձևավորումն իրականացվում է հետևյալ սկզբունքներին համապատասխան՝

1) մասնագիտական անկախությունը,
2) գիտական հիմնավորվածությունն ու համադրելիությունը,
3) ամբողջականությունն ու արժանահավատությունը,
4) արդիականությունն ու յուրաժամանակությունը,
5) բաց լինելն ու հանրամատչելիությունը,
6) ծախսերի արդյունավետությունը,
7) վիճակագրական գաղտնիությունը:

3. Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձևավորման և տարածման կարգը սահմանվում է սույն Պայմանագրի 4-րդ հավելվածի համաձայն:

Բաժին VI
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 25
Մաքսային միության գործունեության սկզբունքները

1. Անդամ պետությունների Մաքսային միության շրջանակներում՝

1) գործում է ապրանքների ներքին շուկա,

2) կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը և երրորդ կողմերի հետ ապրանքների արտաքին առևտրի կարգավորման այլ միասնական միջոցներ,

3) գործում է ապրանքների առևտրի միասնական ռեժիմ երրորդ կողմերի հետ հարաբերություններում,

4) իրականացվում է միասնական մաքսային կարգավորում,

5) իրականացվում է ապրանքների ազատ տեղափոխում անդամ պետությունների տարածքներով՝ առանց մաքսային հայտարարագրման ու պետական հսկողության (տրանսպորտային, սանիտարական, անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական) կիրառման՝ բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված դեպքերի:

2. Սույն Պայմանագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

ներմուծման մաքսատուրք՝ պարտադիր վճար, որը գանձվում է անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից Միության մաքսային տարածք ապրանքներ ներմուծելու դեպքում,

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկ (ԵԱՏՄ ԱՏԳ ՄԱԱ)՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ, որը հիմնված է Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգի ու Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի վրա,

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագին (ԵԱՏՄ ՄՄՍ)՝ երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի դրույքաչափերի ամբողջություն, որը համակարգված է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան,

սակագնային առանձնաշնորհում (պրեֆերենցիա)՝ ներմուծման մաքսատուրքերի վճարումից ազատում կամ Միության հետ ազատ առևտրի գոտի ձևավորող երկրների ծագման ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի նվազեցում կամ Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ զարգացող երկրների և (կամ) Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ առավել թույլ զարգացած երկրների ծագման ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի նվազեցում:

Հոդված 26
Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) հաշվեգրումն ու բաշխումը

Վճարված (գանձված) ներմուծման մաքսատուրքերը ենթակա են հաշվեգրման և բաշխման անդամ պետությունների բյուջեների միջև:

Ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրումն ու բաշխումը, անդամ պետությունների բյուջեների եկամուտների կազմ դրանք փոխանցելն իրականացվում են սույն Պայմանագրի 5-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 27
Ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների ու ազատ պահեստների ստեղծումն ու գործունեությունը

Անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելու, ներդրումներ ներգրավելու, նոր տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրություններ ստեղծելու և զարգացնելու, տրանսպորտային ենթակառուցվածքի, զբոսաշրջության ու առողջարանային-կուրորտային ոլորտը զարգացնելու նպատակով, ինչպես նաև այլ նպատակներով անդամ

պետությունների տարածքներում ստեղծվում ու գործում են ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիներ ու ազատ պահեստներ:

Ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների ու ազատ պահեստների ստեղծման և գործունեության պայմանները սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

Հոդված 28
Ներքին շուկան

1. Միությունը միջոցներ է ձեռնարկում սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան ներքին շուկայի գործունեությունն ապահովելու նպատակով:

2. Ներքին շուկան ընդգրկում է տնտեսական տարածք, որում, սույն Պայմանագրի դրույթների համաձայն, ապահովվում է ապրանքների, անձանց, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժը:

3. Ներքին շուկայի գործունեության շրջանակներում ապրանքների փոխադարձ առևտրում անդամ պետությունները չեն կիրառում ներմուծման ու արտահանման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր և հավաքագրումներ), ոչ սակագնային կարգավորման միջոցներ, հատուկ պաշտպանական, հակագնագցման ու փոխհատուցման միջոցներ՝ բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված դեպքերի:

Հոդված 29
Ապրանքների ներքին շուկայի գործունեության կարգից բացառությունները

1. Ապրանքների փոխադարձ առևտրում անդամ պետություններն իրավունք ունեն կիրառելու սահմանափակումներ (պայմանով, որ այդ միջոցներն անհիմն խտրականության միջոց կամ առևտրի քողարկված սահմանափակում չլինեն), եթե այդ սահմանափակումներն անհրաժեշտ են՝

1) մարդու կյանքի և առողջության պահպանման,
2) հասարակական բարոյականության և իրավակարգի պաշտպանության,
3) շրջակա միջավայրի պահպանության,
4) կենդանիների և բույսերի, մշակութային արժեքների պաշտպանության,
5) միջազգային պարտավորությունների կատարման,
6) երկրի պաշտպանության և անդամ պետության անվտանգության ապահովման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հիմքերով՝ ներքին շուկայում կարող են ներմուծվել նաև սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ՝ սույն Պայմանագրի XI բաժնով սահմանվող կարգով:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հիմքերով՝ առանձին կատեգորիայի ապրանքների շրջանառությունը կարող է սահմանափակվել:

Միության մաքսային տարածքում այդպիսի ապրանքների տեղափոխման կամ շրջանառության կարգը սահմանվում է սույն Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխան:

Բաժին VII
ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 30
Դեղամիջոցների ընդհանուր շուկայի ձևավորումը

1. Միության շրջանակներում անդամ պետություններն ստեղծում են պատշաճ դեղագործական գործելակերպի չափանիշներին համապատասխանող դեղամիջոցների ընդհանուր շուկա՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա՝

1) դեղամիջոցների շրջանառության ոլորտում անդամ պետությունների օրենսդրության պահանջների ներդաշնակեցում և միասնականացում,

2) Միության տարածքում շրջանառության մեջ գտնվող դեղամիջոցների որակին, արդյունավետությանն ու անվտանգությանն առնչվող պարտադիր պահանջների միասնականության ապահովում,

3) դեղամիջոցների շրջանառության ոլորտում միասնական կանոնների ընդունում,

4) դեղամիջոցների որակի, արդյունավետության ու անվտանգության գնահատման համար հետազոտության և հսկողության միատեսակ կամ համադրելի մեթոդների մշակում ու կիրառում,

5) դեղամիջոցների շրջանառության նկատմամբ հսկողության (վերահսկողության) ոլորտում անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցում,

6) դեղամիջոցների շրջանառության ոլորտում անդամ պետությունների համապատասխան լիազորված մարմինների կողմից թույլատրական և հսկողական ու վերահսկողական գործառույթների իրականացում:

2. Միության շրջանակներում դեղամիջոցների ընդհանուր շուկայի գործունեությունն իրականացվում է Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 100-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 31
Բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) ընդհանուր շուկայի ձևավորումը

1. Միության շրջանակներում անդամ պետություններն ստեղծում են բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) ընդհանուր շուկա՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա՝

1) բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) շրջանառության ոլորտում անդամ պետությունների օրենսդրության պահանջների ներդաշնակեցում,

2) Միության տարածքում շրջանառության մեջ գտնվող բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) արդյունավետությանն ու անվտանգությանը ներկայացվող պարտադիր պահանջների միասնականության ապահովում,

3) բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) շրջանառության ոլորտում միասնական կանոնների ընդունում,

4) բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) որակի ապահովման համակարգի ստեղծման համար միասնական մոտեցումների սահմանում,

5) բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) շրջանառության նկատմամբ հսկողության (վերահսկողության) ոլորտում անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցում:

2. Միության շրջանակներում բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) ընդհանուր շուկայի գործունեությունն իրականացվում է Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 100-րդ հոդվածի դրույթները:

Բաժին VIII
ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 32
Մաքսային կարգավորումը Միությունում

Միությունում իրականացվում է միասնական մաքսային կարգավորում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին և Միության իրավունքը կազմող՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան, ինչպես նաև սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան:

Բաժին IX

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Ընդհանուր դրույթներ արտաքին առևտրային քաղաքականության մասին

Հոդված 33
Միության արտաքին առևտրային քաղաքականության նպատակներն ու սկզբունքները

1. Միության արտաքին առևտրային քաղաքականությունն ուղղված է անդամ պետությունների կայուն տնտեսական զարգացման խթանմանը, տնտեսության բազմազանեցմանը, նորարարության զարգացմանը, առևտրի ու ներդրումների ծավալների մեծացմանը և կառուցվածքի բարելավմանը, ինտեգրացիոն գործընթացների արագացմանը, ինչպես նաև համաշխարհային տնտեսության շրջանակներում Միության՝ որպես արդյունավետ ու մրցունակ կազմակերպության հետագա զարգացման ապահովմանը:

2. Միության արտաքին առևտրային քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներն են՝

Միության արտաքին առևտրային քաղաքականության իրականացման այնպիսի միջոցների ու մեխանիզմների կիրառումը, որոնք անդամ պետությունների արտաքին առևտրային գործունեության մասնակիցների համար ծանրաբեռնող են ոչ ավելի, քան անհրաժեշտ է Միության նպատակներն արդյունավետ իրագործելու համար,

Միության արտաքին առևտրային քաղաքականության իրականացման միջոցներն ու մեխանիզմները մշակելու, ընդունելու և կիրառելու գործընթացի հրապարակայնությունը,

Միության արտաքին առևտրային քաղաքականության իրականացման միջոցներն ու մեխանիզմները կիրառելու հիմնավորվածությունն ու օբյեկտիվությունը,

անդամ պետությունների արտաքին առևտրային գործունեության մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի, ինչպես նաև ապրանքներ արտադրողների ու ծառայություններ մատուցողների ու դրանց սպառողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը,

արտաքին առևտրային գործունեության մասնակիցների իրավունքների պահպանումը:

3. Արտաքին առևտրային քաղաքականությունն իրականացվում է Միության կողմից ինքնուրույն կամ անդամ պետությունների հետ այն ոլորտներում, որտեղ Միության մարմիններն ընդունում են անդամ պետությունների կողմից պարտադիր կատարման ենթակա որոշումներ, երրորդ կողմի հետ միջազգային պայմանագրեր կնքելու, միջազգային կազմակերպություններում մասնակցելու կամ արտաքին առևտրային քաղաքականության միջոցներ ու մեխանիզմներ ինքնուրույն կիրառելու միջոցով:

Միությունը պատասխանատվություն է կրում իր կողմից կնքվող միջազգային պայմանագրերով սահմանվող պարտավորությունների կատարման համար և իրականացնում է այդ պայմանագրերով սահմանվող իր իրավունքները:

Հոդված 34
Առավել բարենպաստության ռեժիմը

Ապրանքների արտաքին առևտրի նկատմամբ Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի իմաստով (ՍԱԳՀ, 1994 թվական) առավել բարենպաստության ռեժիմը կիրառվում է այն դեպքերում և պայմաններով, երբ առավել բարենպաստության ռեժիմի կիրառումը նախատեսված է երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև անդամ պետությունների՝ երրորդ կողմի հետ կնքվող միջազգային պայմանագրերով:

Հոդված 35
Ազատ առևտրի ռեժիմը

ՍԱԳՀ-ի (1994 թվական) իմաստով ապրանքների ազատ առևտրի ռեժիմը սահմանվում է երրորդ կողմի հետ առևտրի նկատմամբ՝ այդպիսի երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության

միջազգային պայմանագրի հիման վրա՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 102-րդ հոդվածի դրույթները:

Երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագիրը, որով սահմանվում է ազատ առևտրի ռեժիմը, կարող է ներառել արտաքին առևտրային գործունեության հետ կապված այլ դրույթներ:

Հոդված 36
Զարգացող և (կամ) առավել թույլ զարգացած երկրների ծագման ապրանքների նկատմամբ կիրառվող սակագնային առանձնաշնորհումները

1. Զարգացող և (կամ) առավել թույլ զարգացած երկրների տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով Միությունը, սույն Պայմանագրին համապատասխան, կարող է տրամադրել սակագնային առանձնաշնորհումներ՝ Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ զարգացող երկրների և (կամ) Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ առավել թույլ զարգացած երկրների ծագման ապրանքների նկատմամբ:

2. Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ զարգացող երկրների ծագման ապրանքների նկատմամբ, որոնք Միության մաքսային տարածք ներմուծվում են առանձնաշնորհումների տրամադրմամբ, կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի 75 տոկոսի չափով:

3. Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ առավել թույլ զարգացած երկրների ծագման ապրանքների նկատմամբ, որոնք Միության մաքսային տարածք ներմուծվում են առանձնաշնորհումների տրամադրմամբ, կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի զրոյական դրույքաչափեր:

Հոդված 37
Ապրանքների ծագումը որոշելու կանոնները

1. Միության մաքսային տարածքում կիրառվում են Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու միասնական կանոնները:

2. Մաքսասակագնային կարգավորման միջոցներ կիրառելու (բացառությամբ սակագնային առանձնաշնորհումների տրամադրման), ոչ սակագնային կարգավորման և շուկայի պաշտպանության միջոցներ կիրառելու, ապրանքների ծագումը դրոշմավորելուն ներկայացվող պահանջներ սահմանելու, պետական (մունիցիպալ) գնումներ իրականացնելու, ապրանքների արտաքին առևտրի վիճակագրություն վարելու նպատակներով կիրառվում են Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններ (ապրանքների ծագումը որոշելու ոչ առանձնաշնորհային (ոչ պրեֆերենցիալ) պայմաններ), որոնք սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

3. Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ զարգացող կամ առավել թույլ զարգացած երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ սակագնային առանձնաշնորհումներ տրամադրելու նպատակով կիրառվում են զարգացող և առավել թույլ զարգացած երկրներից ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններ, որոնք հաստատվում են Հանձնաժողովի կողմից:

4. Միության տարածք այնպիսի պետություններից ներմուծվող ապրանքների նկատմամբ սակագնային առանձնաշնորհումներ տրամադրելու նպատակներով, որոնց հետ առևտրատնտեսական հարաբերություններում Միության կողմից կիրառվում է ազատ առևտրի ռեժիմը, կիրառվում են ապրանքների ծագումը որոշելու այն կանոնները, որոնք հաստատվում են երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության՝ ազատ առևտրի ռեժիմի կիրառումը նախատեսող համապատասխան միջազգային պայմանագրով:

5. Եթե երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության՝ ազատ առևտրի ռեժիմի կիրառումը նախատեսող միջազգային պայմանագրով սահմանված չեն ապրանքի ծագումը որոշելու

կանոններ, կամ դրանք ընդունված չեն այդպիսի պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ, ապա Միության տարածք ներմուծվող՝ այդ երկրի ծագման ապրանքների նկատմամբ, մինչև ապրանքների ծագումը որոշելու համապատասխան կանոնների ընդունումը, կիրառվում են ապրանքների ծագումը որոշելու՝ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված կանոնները:

6. Ապրանքների ծագումը որոշելու (հաստատելու) ոլորտում երրորդ կողմի բազմակի խախտումների վերաբերյալ փաստերի առկայության դեպքում Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից տվյալ պետությունից ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու (հաստատելու) ճշտության նկատմամբ դիտանցում իրականացնելու վերաբերյալ: Ապրանքների ծագումը որոշելու (հաստատելու) ոլորտում երրորդ կողմի համակարգային խախտումներ բացահայտելու դեպքում Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից ապրանքների ծագումը հաստատող փաստաթղթերի ընդունումը կասեցնելու մասին: Սույն կետի դրույթներով չեն սահմանափակվում անդամ պետությունների՝ ներմուծվող ապրանքների ծագման նկատմամբ հսկողության և դրա արդյունքների հիման վրա միջոցներ ձեռնարկելու լիազորությունները:

Հոդված 38
Ծառայությունների արտաքին առևտուրը

Երրորդ կողմերի հետ ծառայությունների առևտրի ոլորտում համակարգումն իրականացվում է անդամ պետությունների կողմից:

Համակարգում իրականացնելը չի նշանակում այդ ոլորտում Միության վերազգային իրավասություն:

Հոդված 39
Երրորդ կողմերի հետ առևտրում սահմանափակող միջոցների վերացումը

Հանձնաժողովն աջակցում է երրորդ կողմերին շուկաների հասանելիությունն ապահովելու ընթացքում, իրականացնում է անդամ պետությունների նկատմամբ երրորդ կողմի սահմանած սահմանափակող միջոցների դիտանցում, և եթե երրորդ կողմը Միության նկատմամբ որևէ միջոց է կիրառում, կամ Միության ու երրորդ կողմի միջև առևտրային վեճ է առաջանում, ապա Հանձնաժողովը, անդամ պետությունների մասնակցությամբ, համապատասխան երրորդ կողմի հետ խորհրդակցություններ է անցկացնում:

Հոդված 40
Երրորդ կողմի նկատմամբ պատասխան միջոցների կիրառումը

1. Եթե երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության և (կամ) անդամ պետությունների՝ երրորդ կողմերի հետ կնքվող միջազգային պայմանագրով նախատեսվում է պատասխան միջոցներ կիրառելու հնարավորություն, ապա Միության տարածքում պատասխան միջոցներ ներմուծելու մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից, այդ թվում՝ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը բարձրացնելու, քանակական սահմանափակումներ ներմուծելու, առանձնաշնորհումների տրամադրումը ժամանակավորապես կասեցնելու կամ Հանձնաժողովի իրավասությունների շրջանակներում այլ միջոցներ ընդունելու միջոցով, որոնք ազդեցություն ունեն համապատասխան պետության հետ արտաքին առևտրի վրա:

2. Մինչև 2015 թվականի հունվարի 1-ն անդամ պետությունների՝ երրորդ կողմերի հետ կնքող միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում անդամ պետություններն իրավունք ունեն միակողմանիորեն՝ որպես պատասխան միջոցներ կիրառելու ներմուծման մաքսատուրքերի՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի հետ համեմատած ավելի բարձր դրույքաչափեր, ինչպես նաև միակողմանիորեն կասեցնելու սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը՝ պայմանով, որ այդպիսի պատասխան միջոցների կիրառման մեխանիզմները չեն խախտում սույն Պայմանագրի դրույթները:

Հոդված 41

Արտահանումը զարգացնելուն ուղղված միջոցները

Միությունը, Առևտրի համաշխարհային կազմակերպության միջազգային պայմանագրերին, նորմերին ու կանոններին համապատասխան, կարող է կիրառել երրորդ կողմերի շուկաներ անդամ պետությունների ապրանքների արտահանումը զարգացնելուն ուղղված համատեղ միջոցներ:

Համատեղ միջոցները մասնավորապես ներառում են արտահանման ապահովագրությունն ու վարկավորումը, միջազգային լիզինգը, «Եվրասիական տնտեսական միության ապրանք» հասկացության խթանումը և Միության ապրանքների միասնական դրոշմավորման համակարգի ներմուծումը, արտերկրում ցուցահանդեսատոնավաճառային ու էքսպոզիցիոն գործունեությունը, գովազդային ու իմիջի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

2. Մաքսասակագնային կարգավորումը և ոչ սակագնային կարգավորումը

Հոդված 42
Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը

1. Միության մաքսային տարածքում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկն ու Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը, որոնք հաստատվում են Հանձնաժողովի կողմից և համարվում են Միության առևտրային քաղաքականության գործիքները:

2. Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը կիրառելու հիմնական նպատակներն են՝

1) Միության՝ համաշխարհային տնտեսությանն արդյունավետ ինտեգրման համար պայմանների ապահովումը,

2) Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման ապրանքային կառուցվածքի ռացիոնալացումը,

3) Միության մաքսային տարածքում ապրանքների արտահանման և ներմուծման ռացիոնալ հարաբերակցության պահպանումը,

4) Միությունում ապրանքների արտադրության և սպառման կառուցվածքում առաջընթացի ապահովմանն ուղղված փոփոխությունների համար պայմանների ստեղծումը,

5) Միության տնտեսության ճյուղերին օժանդակության տրամադրումը:

3. Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի շրջանակներում կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի հետևյալ տեսակները՝

1) ադվալորային՝ հաշվարկվում է հարկման ենթակա ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ տոկոսներով,

2) յուրահատուկ՝ հաշվարկվում է ըստ ֆիզիկական հատկանիշների՝ հարկման ենթակա ապրանքների բնաիրային արտահայտությամբ (քանակ, զանգված, ծավալ կամ այլ հատկանիշներ),

3) խառը՝ երբ զուգակցվում են սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված երկու տեսակները:

4. Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը միասնական են և ենթակա չեն փոփոխման՝ պայմանավորված Միության մաքսային սահմանով ապրանք տեղափոխող անձանցից, գործարքների տեսակներից և այլ հանգամանքներից՝ բացառությամբ սույն Պայմանագրի 35-րդ, 36-րդ և 43-րդ հոդվածներով սահմանված դեպքերի:

5. Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման օպերատիվ կարգավորման նպատակով, անհրաժեշտության դեպքում, կարող են սահմանվել սեզոնային մաքսատուրքեր, որոնց գործողության ժամկետը չի կարող գերազանցել տարվա ընթացքում 6 ամիսը, և որոնք կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով նախատեսված ներմուծման մաքսատուրքերի փոխարեն:

6. Միությանն անդամակցած պետությունն իրավունք ունի կիրառելու Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ ապրանքների անվանացանկին և դրույքաչափերին համապատասխան, որոնք հաստատվում են Հանձնաժողովի կողմից՝ Միությանն այդ անդամ պետության անդամակցության մասին միջազգային պայմանագրի հիման վրա:

Միությանն անդամակցած պետությունը պարտավոր է ապահովել այն ապրանքների՝ միայն իր տարածքի սահմաններում օգտագործումը, որոնց նկատմամբ կիրառվել են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի հետ համեմատած ավելի ցածր ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր և ձեռնարկել միջոցներ՝ թույլ չտալու համար այլ անդամ պետություններ այդպիսի ապրանքների արտահանումը՝ առանց վճարելու Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների և ապրանքները ներմուծելիս վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության չափով ներմուծման մաքսատուրքերը:

Հոդված 43
Սակագնային արտոնությունները

1. Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների նկատմամբ կարող են կիրառվել սակագնային արտոնություններ՝ ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատելու կամ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը նվազեցնելու ձևով:

2. Սակագնային արտոնությունները չեն կարող անհատական բնույթ կրել և կիրառվում են անկախ ապրանքների ծագման երկրից:

3. Սակագնային արտոնությունների տրամադրումն իրականացվում է սույն Պայմանագրի 6-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 44
Սակագնային քվոտաները

1. Միության մաքսային տարածք ներմուծվող՝ երրորդ երկրների ծագման գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակների նկատմամբ թույլատրվում է սահմանել սակագնային քվոտաներ, եթե նույնանման ապրանքներ արտադրվում (արդյունահանվում, աճեցվում) են Միության մաքսային տարածքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների նկատմամբ, որոնք Միության մաքսային տարածք են ներմուծվում սահմանված սակագնային քվոտայի չափի սահմաններում, կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի համապատասխան դրույքաչափերը:

3. Միության մաքսային տարածք ներմուծվող՝ երրորդ երկրների ծագման գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակների նկատմամբ սակագնային քվոտաների սահմանումը և սակագնային քվոտաների չափերի բաշխումն իրականացվում են սույն Պայմանագրի 6-րդ հավելվածով նախատեսված կարգով:

Հոդված 45
Մաքսասակագնային կարգավորման հարցերով Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

իրականացնում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի վարումը,

սահմանում է ներմուծման, այդ թվում՝ սեզոնային մաքսատուրքերի դրույքաչափերը,

սահմանում է սակագնային արտոնությունների տրամադրման դեպքերն ու պայմանները,

սահմանում է սակագնային արտոնություններ կիրառելու կարգը,

սահմանում է Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգը կիրառելու պայմաններն ու կարգը, այդ թվում՝ հաստատում է՝

Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ զարգացող երկրների ցանկը,

Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ առավել թույլ զարգացած երկրների ցանկը,

զարգացող երկրների կամ առավել թույլ զարգացած երկրների ծագման ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ Միության մաքսային տարածք ներմուծելիս տրամադրվում են միասնական սակագնային առանձնաշնորհումներ,

սահմանում է սակագնային քվոտաները, բաշխում է սակագնային քվոտայի չափն անդամ պետությունների միջև, սահմանում է արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև սակագնային քվոտայի չափը բաշխելու մեթոդն ու կարգը, իսկ, անհրաժեշտության դեպքում, բաշխում է սակագնային քվոտայի չափը երրորդ երկրների միջև կամ ընդունում է ակտ, որին համապատասխան անդամ պետությունները սահմանում են արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև սակագնային քվոտայի չափը բաշխելու մեթոդն ու կարգը, իսկ, անհրաժեշտության դեպքում, բաշխում են սակագնային քվոտայի չափը երրորդ երկրների միջև:

3. «Զգայուն» ապրանքների ցանկը, որոնց համար ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի փոփոխության մասին որոշումն ընդունում է Հանձնաժողովի Խորհուրդը, հաստատվում է Բարձրագույն խորհրդի կողմից:

Հոդված 46
Ոչ սակագնային կարգավորման միջոցները

1. Երրորդ երկրների հետ առևտրում Միության կողմից ընդունվում են ոչ սակագնային կարգավորման հետևյալ միջոցները՝

1) ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման արգելք,

2) ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման քանակական սահմանափակումներ,

3) ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման բացառիկ իրավունք,

4) ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման ավտոմատ լիցենզավորում (հսկում),

5) ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման թույլատրական կարգ:

2. Ոչ սակագնային կարգավորման միջոցները սահմանվում և կիրառվում են հրապարակայնության ու խտրականության բացառման սկզբունքների հիման վրա՝ սույն Պայմանագրի 7-րդ հավելվածով սահմանված կարգով:

Հոդված 47
Ոչ սակագնային կարգավորման միջոցները միակողմանիորեն ներմուծելը

Անդամ պետությունները երրորդ երկրների հետ առևտրում կարող են միակողմանիորեն ներմուծել և կիրառել ոչ սակագնային կարգավորման միջոցներ՝ սույն Պայմանագրի 7-րդ հավելվածով սահմանված կարգով:

3. Ներքին շուկայի պաշտպանության միջոցները

Հոդված 48
Ընդհանուր դրույթներ ներքին շուկայի պաշտպանության միջոցներ ներմուծելու մասին

1. Ապրանքներ արտադրողների տնտեսական շահերի պաշտպանության նպատակով Միության մաքսային տարածք ներմուծվող և երրորդ երկրների ծագման ապրանքների նկատմամբ Միությունում կարող են ներմուծել ներքին շուկայի պաշտպանության միջոցներ՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների, ինչպես նաև այլ միջոցների տեսքով՝ սույն Պայմանագրի 50-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

2. Հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու կամ հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցը փոփոխելու կամ չեղարկելու կամ միջոցը չկիրառելու մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից:

3. Հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառումն իրականացվում է սույն Պայմանագրի 8-րդ հավելվածով սահմանված պայմաններով և կարգով:

4. Ապրանքը ներմուծելիս հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառմանը նախորդում է ուսումնասիրություն, որն իրականացվում է սույն Պայմանագրի 8-րդ հավելվածին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից որպես ուսումնասիրությունների իրականացման համար պատասխանատու մարմին նշանակված մարմնի կողմից (այսուհետ՝ ուսումնասիրություն իրականացնող մարմին):

5. Հատուկ պաշտպանական, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվեգրումը և բաշխումն իրականացվում են սույն Պայմանագրի 8-րդ հավելվածին համապատասխան:

Հոդված 49
Հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցները կիրառելու սկզբունքները

1. Հատուկ պաշտպանական միջոցը կարող է ապրանքի նկատմամբ կիրառվել, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ Միության մաքսային տարածք տվյալ ապրանքի ներմուծումն իրականացվում է այնպիսի աճող ծավալներով (բացարձակ կամ անդամ պետություններում նույնանման կամ ուղղակիորեն մրցակից ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի նկատմամբ հարաբերական ցուցանիշներով) և այնպիսի պայմաններով, որոնք լուրջ վնաս են հասցնում անդամ պետության տնտեսության ճյուղին կամ ստեղծում են այդպիսի վնաս հասցնելու վտանգ:

2. Հակագնագցման միջոցը կարող է կիրառվել գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի նկատմամբ, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ Միության մաքսային տարածք տվյալ ապրանքի ներմուծումը նյութական վնաս է հասցնում անդամ պետության տնտեսության ճյուղին, ստեղծում է այդպիսի վնաս հասցնելու վտանգ կամ էականորեն դանդաղեցնում է անդամ պետության տնտեսության ճյուղի ստեղծումը:

3. Փոխհատուցման միջոցը կարող է կիրառվել ներմուծվող այն ապրանքի նկատմամբ, որի արտադրության, արտահանման կամ տրանսպորտային փոխադրման ժամանակ կիրառվել է արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիա այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմնի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ այդպիսի ապրանքի ներմուծումը Միության մաքսային տարածք նյութական վնաս է հասցնում անդամ պետության տնտեսության ճյուղին, ստեղծում է այդպիսի վնաս հասցնելու վտանգ կամ էականորեն կասեցնում է անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծումը:

4. Ներքին շուկայի պաշտպանության միջոցներ կիրառելու նպատակներով անդամ պետությունների տնտեսության ճյուղ ասելով ենթադրվում է նույնանման ապրանքի (հակագնագցման և փոխհատուցման ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով) կամ նույնանման կամ ուղղակիորեն մրցակից ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով) բոլոր արտադրողները, կամ այդ արտադրողներից նրանք, որոնց մասնաբաժինն անդամ պետության համապատասխանաբար նույնանման ապրանքի կամ նույնանման կամ ուղղակիորեն մրցակից ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի մեջ կազմում է զգալի մասը, բայց ոչ պակաս, քան 25 տոկոսը:

Հոդված 50
Ներքին շուկայի պաշտպանության մյուս միջոցները

Անդամ պետությունների արտադրողների վրա երրորդ կողմից ներմուծման բացասական ազդեցությունը վերացնելու նպատակով ազատ առևտրի ռեժիմ սահմանելու մասին այդ երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրով կարող է նախատեսվել ներքին շուկայի պաշտպանության՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներից տարբերվող միջոցներ երկկողմանիորեն կիրառելու իրավունք, այդ թվում՝ գյուղատնտեսական ապրանքների ներմուծման մասով:

Այդպիսի միջոցներ կիրառելու մասին որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից:

Բաժին X
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ

Հոդված 51
Տեխնիկական կանոնակարգման ընդհանուր սկզբունքները

1. Միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգումն իրականացվում է հետևյալ սկզբունքներին համապատասխան՝

1) արտադրանքին կամ արտադրանքին և դրան ներկայացվող պահանջներին առնչվող՝ նախագծման (ներառյալ հետազննման), արտադրության, շինարարության, մոնտաժի, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պարտադիր պահանջների սահմանում,

2) Միության տեխնիկական կանոնակարգերում միասնական պարտադիր պահանջների կամ անդամ պետությունների օրենսդրությունում ազգային պարտադիր պահանջների սահմանում ապրանքների միասնական ցանկում ընդգրկված արտադրանքի նկատմամբ, որի համար Միության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ (այսուհետ՝ միասնական ցանկ),

3) Միության տեխնիկական կանոնակարգերի՝ անդամ պետություններում կիրառում և կատարում առանց բացառումների,

4) Միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման համապատասխանություն անդամ պետությունների տնտեսական զարգացմանն ու գիտատեխնիկական զարգացման մակարդակին,

5) անդամ պետությունների հավատարմագրման, անդամ պետությունների համապատասխանության հաստատման և անդամ պետությունների վերահսկիչ (հսկիչ) մարմինների անկախություն արտադրողներից, վաճառողներից, կատարողներից և ձեռքբերողներից, այդ թվում՝ սպառողներից,

6) համապատասխանության գնահատման պարտադիր ընթացակարգերի իրականացման ժամանակ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոնների ու մեթոդների միասնականություն,

7) Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կիրառման միասնականություն՝ անկախ գործարքների տեսակներից և (կամ) առանձնահատկություններից,

8) համապատասխանության գնահատում իրականացնելու դեպքում մրցակցության սահմանափակման անթույլատրելիություն,

9) Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացում անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման հիման վրա,

10) ստանդարտների կիրառման կամավորություն,

11) միջպետական ստանդարտների մշակում և կիրառում,

12) միջպետական ստանդարտների ներդաշնակեցում միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին,

13) համապատասխանության պարտադիր գնահատում իրականացնելու կանոնների և ընթացակարգերի միասնականություն,

14) անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման ապահովում՝ արտադրանքին ներկայացվող պարտադիր պահանջների, համապատասխանության պարտադիր գնահատման կանոնների և ընթացակարգերի խախտման համար պատասխանատվության սահմանման մասով,

15) Միության շրջանակներում չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացում,

16) ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար անհարկի խոչընդոտների սահմանման անթույլատրելիություն,

17) նոր պահանջներին և փաստաթղթերին փուլ առ փուլ անցնելու նպատակներով անցումային դրույթների սահմանում:

2. Սույն բաժնի դրույթները չեն տարածվում սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների սահմանման և իրականացման վրա:

3. Միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման կարգը, կանոններն ու ընթացակարգերը սահմանվում են սույն Պայմանագրի 9-րդ հավելվածի համաձայն:

4. Միության շրջանակներում չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականությունն իրականացվում է սույն Պայմանագրի 10-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 52
Միության տեխնիկական կանոնակարգերն ու ստանդարտները

1. Մարդու կյանքի և (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի և (կամ) առողջության պաշտպանության, սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխարգելման, ինչպես նաև էներգետիկ արդյունավետության ու ռեսուրսախնայողության ապահովման նպատակներով Միության շրջանակներում ընդունվում են Միության տեխնիկական կանոնակարգերը:

Այլ նպատակներով Միության տեխնիկական կանոնակարգերի ընդունում չի թույլատրվում:

Միության տեխնիկական կանոնակարգեր մշակելու և ընդունելու կարգը, ինչպես նաև դրանց մեջ փոփոխություններ կատարելու և դրանք չեղարկելու կարգը սահմանում է Հանձնաժողովը:

Միության տեխնիկական կանոնակարգերը կամ պարտադիր ազգային պահանջները գործում են միայն այն ապրանքների նկատմամբ, որոնք ընդգրկված են Հանձնաժողովի կողմից հաստատված միասնական ցանկում:

Միասնական ցանկի ստեղծման և վարման կարգը հաստատվում է Հանձնաժողովի կողմից:

Անդամ պետությունները թույլ չեն տալիս իրենց օրենսդրությամբ սահմանել միասնական ցանկում չընդգրկված արտադրանքին առնչվող պարտադիր պահանջներ:

2. Միության տեխնիկական կանոնակարգերը Միության տարածքում ունեն ուղղակի գործողություն:

Միության կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգը գործողության մեջ դնելու կարգը և անցումային դրույթները սահմանվում են Միության տեխնիկական կանոնակարգով և (կամ) Հանձնաժողովի ակտով:

3. Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման և Միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման համար կամավոր հիմունքներով կարող են կիրառվել միջազգային, տարածաշրջանային (միջպետական) ստանդարտները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ (մինչև տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների ընդունումը) անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտները:

Հոդված 53
Արտադրանքի շրջանառությունն ու Միության տեխնիկական կանոնակարգերի գործողությունը

1. Միության տարածքում շրջանառության մեջ դրվող արտադրանքը պետք է անվտանգ լինի:

Այն արտադրանքի անվտանգության ապահովման և շրջանառության կանոններն ու կարգը, որին ներկայացվող պահանջները սահմանված չեն Միության տեխնիկական կանոնակարգերով, սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով:

2. Այն արտադրանքը, որի մասով ուժի մեջ է մտել Միության տեխնիկական կանոնակարգ (Միության տեխնիկական կանոնակարգեր), Միության տարածքում շրջանառության մեջ է դրվում՝ պայմանով, որ այն անցել է Միության տեխնիկական կանոնակարգով (Միության տեխնիկական կանոնակարգերով) սահմանված համապատասխանության գնահատման անհրաժեշտ ընթացակարգերը:

Անդամ պետություններն իրենց տարածքում ապահովում են Միության տեխնիկական կանոնակարգի (Միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանող արտադրանքի շրջանառությունը՝ առանց ներկայացնելու Միության տեխնիկական կանոնակարգում ներառված՝ այդ արտադրանքին ներկայացվող պահանջներից

բացի լրացուցիչ պահանջներ և առանց իրականացնելու համապատասխանության գնահատման լրացուցիչ ընթացակարգեր:

Սույն կետի երկրորդ պարբերության դրույթները չեն տարածվում սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման վրա:

3. Միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից անդամ պետությունների տարածքներում արտադրանքին, կամ արտադրանքին և դրան ներկայացվող պահանջների հետ կապված՝ նախագծման (ներառյալ հետազննման), արտադրության, շինարարության, մոնտաժի, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող համապատասխան պարտադիր պահանջները, որոնք սահմանված են անդամ պետությունների օրենսդրությամբ կամ Հանձնաժողովի ակտերով, գործում են միայն անցումային դրույթներով սահմանված մասով, և Միության տեխնիկական կանոնակարգով և (կամ) Հանձնաժողովի ակտով սահմանված անցումային դրույթների գործողության ավարտի ամսաթվից չեն տարածվում արտադրանքը շրջանառության մեջ դնելու, տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանությունը գնահատելու, Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) վրա:

Սույն կետի առաջին պարբերության դրույթները չեն տարածվում սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման վրա:

Արտադրանքին կամ արտադրանքին և դրան ներկայացվող պահանջներին առնչվող՝ նախագծման (ներառյալ հետազննման), արտադրության, շինարարության, մոնտաժի, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող՝ մինչև Միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը Հանձնաժողովի ակտերով սահմանված պարտադիր պահանջներն ընդգրկվում են Միության տեխնիկական կանոնակարգերում:

4. Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողությունն (վերահսկողությունն) իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

Միության տեխնիկական կանոնակարգերի պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) ոլորտում անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման սկզբունքներն ու մոտեցումները սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով:

5. Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջները չպահպանելու, ինչպես նաև Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման ընթացակարգերը խախտելու համար պատասխանատվությունը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 54
Հավատարմագրումը

1. Միության շրջանակներում հավատարմագրումն իրականացվում է հետևյալ սկզբունքներին համապատասխան՝

1) հավատարմագրման ոլորտում առկա կանոնների ու մոտեցումների ներդաշնակեցում միջազգային ստանդարտներին,

2) հավատարմագրման կամավորության, հավատարմագրման ընթացակարգերի, կանոնների և արդյունքների մասին տեղեկությունների թափանցիկության ու հասանելիության ապահովում,

3) անդամ պետությունների հավատարմագրման մարմինների օբյեկտիվության, անաչառության և արհեստավարժության ապահովում,

4) հավատարմագրման համար դիմողների համար հավատարմագրման և հավատարմագրման ընթացքում ստացված տեղեկությունների գաղտնիության ապահովման մասով հավասար պայմանների ապահովում,

5) անդամ պետության մի մարմնի կողմից՝ հավատարմագրման լիազորությունները պետական հսկողության (վերահսկողության) լիազորությունների հետ համատեղելու անթույլատրելիություն՝ բացառությամբ անդամ պետությունների հավատարմագրված՝ համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ սերտիֆիկացման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) գործունեության նկատմամբ հսկողության իրականացման,

6) անդամ պետության մեկ մարմնի կողմից՝ հավատարմագրման և համապատասխանության գնահատման լիազորությունները համատեղելու անթույլատրելիություն:

2. Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումն իրականացնում են անդամ պետությունների հավատարմագրման մարմինները, որոնք, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, լիազորված են իրականացնելու այդ գործունեությունը:

3. Որևէ անդամ պետության հավատարմագրման մարմին չպետք է մրցակցի մյուս անդամ պետությունների հավատարմագրման մարմինների հետ:

Անդամ պետությունների հավատարմագրման մարմինների մրցակցությունը թույլ չտալու համար անդամ պետության համապատասխանության գնահատման մարմինը հավատարմագրման նպատակով դիմում է այն անդամ պետության հավատարմագրման մարմին, որի տարածքում այն գրանցված է որպես իրավաբանական անձ:

Եթե որևէ անդամ պետության հավատարմագրման մարմին հավատարմագրման նպատակով դիմում է մյուս անդամ պետության տարածքում որպես իրավաբանական անձ գրանցված համապատասխանության գնահատման մարմին, ապա այդ հավատարմագրման մարմինը դրա մասին տեղեկացնում է այն անդամ պետության հավատարմագրման մարմնին, որի տարածքում գրանցված է համապատասխանության գնահատման մարմինը: Նշված դեպքում անդամ պետությունների հավատարմագրման մարմինները կարող են հավատարմագրում իրականացնել, եթե այն անդամ պետության հավատարմագրման մարմինը, որի տարածքում գրանցված է համապատասխանության գնահատման տվյալ մարմինը, հավատարմագրում չի իրականացնում պահանջվող ոլորտում: Ընդ որում, այն անդամ պետության հավատարմագրման մարմինը, որի տարածքում գրանցված է համապատասխանության գնահատման մարմինը, իրավունք ունի հանդես գալու որպես դիտորդ:

4. Անդամ պետությունների հավատարմագրման մարմիններն իրականացնում են փոխադարձ համեմատական գնահատումներ՝ նույնանման ընթացակարգեր սահմանելու նպատակով:

Անդամ պետությունների համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման աշխատանքների արդյունքների ճանաչումն իրականացվում է սույն Պայմանագրի 11-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 55
Երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրի տեխնիկական խոչընդոտների վերացումը

Երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրի տեխնիկական խոչընդոտների վերացման կարգն ու պայմանները սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով:

Բաժին XI
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ, ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հոդված 56
Սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման ընդհանուր սկզբունքները

1. Սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներն իրականացվում են գիտական հիմնավորում ունեցող

սկզբունքների հիման վրա և միայն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքի ու առողջության պաշտպանության համար:

Միության շրջանակներում կիրառվող՝ սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումները հիմնվում են միջազգային ու տարածաշրջանային ստանդարտների, հրահանգների և (կամ) հանձնարարականների վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան գիտական հիմնավորմամբ ներմուծվում են սանիտարական, անասնաբուժասանիտարական կամ կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ, որոնցով ապահովվում է սանիտարական, անասնաբուժասանիտարական կամ կարանտինային բուսասանիտարական պաշտպանության ավելի բարձր մակարդակ, քան միջազգային ու տարածաշրջանային ստանդարտների, հրահանգների և (կամ) հանձնարարականների վրա հիմնված միջոցներով:

2. Բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցությունը, ինչպես նաև անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական անվտանգությունն ապահովելու նպատակներով Միության շրջանակներում իրականացվում է համաձայնեցված քաղաքականություն սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման ոլորտում:

3. Համաձայնեցված քաղաքականությունն իրականացվում է սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման ոլորտում միջազգային պայմանագրերի ու Հանձնաժողովի ակտերի՝ անդամ պետությունների կողմից համատեղ մշակման, ընդունման և իրականացման միջոցով:

4. Անդամ պետություններից յուրաքանչյուրն իրավունք ունի մշակելու ու ներմուծելու ժամանակավոր սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ:

Ժամանակավոր սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ ներմուծելիս անդամ պետությունների լիազորված մարմինների փոխգործակցության կարգը հաստատվում է Հանձնաժողովի կողմից:

5. Կենդանիների և կենդանական ծագման մթերքի նույնականացման, գրանցման և հետագծելիության իրականացման ժամանակ համաձայնեցված մոտեցումները կիրառվում են Հանձնաժողովի ակտերին համապատասխան:

6. Սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացումն ու անդամ պետությունների սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների ոլորտում լիազորված մարմինների փոխգործակցությունն իրականացվում է սույն Պայմանագրի 12-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 57
Սանիտարական միջոցառումների իրականացումը

1. Սանիտարական միջոցառումներն իրականացվում են անձանց, տրանսպորտային միջոցների, ինչպես նաև սանիտարահամաճարակային վերահսկողության (հսկողության) ենթակա՝ Հանձնաժողովի ակտերի համաձայն արտադրանքի (ապրանքների) միասնական ցանկում ընդգրկված և սանիտարահամաճարակային վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանքի (ապրանքների) նկատմամբ:

2. Պետական սանիտարահամաճարակային վերահսկողության (հսկողության) ենթակա արտադրանքի (ապրանքների) նկատմամբ սահմանվում են միասնական սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներ և ընթացակարգեր:

Այն արտադրանքին (ապրանքներին) ներկայացվող միասնական սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջները, որոնց վերաբերյալ մշակվում են Միության տեխնիկական կանոնակարգեր, ընդգրկվում են Միության տեխնիկական կանոնակարգերում՝ Հանձնաժողովի ակտերին համապատասխան:

3. Միասնական սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջների ու ընթացակարգերի մշակման, հաստատման, փոփոխության և կիրառման կարգը հաստատվում է Հանձնաժողովի կողմից:

4. Բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցությունն ապահովելու նպատակով բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտում լիազորված մարմինների կողմից իրականացվում է պետական սանիտարահամաճարակային վերահսկողություն (հսկողություն)՝ անդամ պետությունների օրենսդրությանը և Հանձնաժողովի ակտերին համապատասխան:

Բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտում լիազորված մարմինները կարող են պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնել Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ, պետական սանիտարահամաճարակային վերահսկողության (հսկողության) շրջանակներում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 58
Անասնաբուժասանիտարական միջոցառումների իրականացումը

1. Անասնաբուժասանիտարական միջոցառումներն իրականացվում են Միության մաքսային տարածք ներմուծվող և Միության մաքսային տարածքով տեղափոխվող ապրանքների (այդ թվում՝ անձնական օգտագործման ապրանքների) նկատմամբ, որոնք ներառված են անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող միասնական ցանկում, ինչպես նաև անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների նկատմամբ:

2. Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների և օբյեկտների նկատմամբ կիրառվում են Հանձնաժողովի կողմից հաստատվող միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներ:

3. Կենդանիների, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների հարուցիչների և միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին չհամապատասխանող ապրանքներ ներմուծելու և տարածումը կանխարգելելու նպատակով անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) է իրականացվում անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների, այդ թվում՝ անձնական օգտագործման ապրանքների, ինչպես նաև Հանձնաժողովի ակտերին համապատասխան անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների նկատմամբ:

Անդամ պետությունների՝ կենդանիների հատուկ վտանգավոր, կարանտինային և զոոնոզ հիվանդությունների կանխարգելմանը, ախտորոշմանը, օջախների տեղայնացմանն ու վերացմանն ուղղված փոխգործակցությունն իրականացվում է Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով:

4. Միության մաքսային տարածքով՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների տեղափոխման ժամանակ անասնաբուժության ոլորտում լիազորված մարմիններն անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) են իրականացնում անդամ պետությունների պետական սահմաններով անցման կետերում կամ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ վայրերում, որոնք անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, սարքավորվում և ապահովվում են անասնաբուժական հսկողության (վերահսկողության) միջոցներով:

5. Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակ Միության մաքսային տարածք է ներմուծվում Հանձնաժողովի կողմից հաստատվող միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին համապատասխան՝ պայմանով, որ առկա լինի անասնաբուժության ոլորտում այն անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրված թույլտվությունը, որի տարածք են ներմուծվում նշված ապրանքները, և (կամ) անասնաբուժական սերտիֆիկատը, որը տրամադրվում է նշված ապրանքն ուղարկող պետության իրավասու մարմնի կողմից:

6. Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքները որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք են փոխադրվում միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին

համապատասխան: Նշված ապրանքներն ուղեկցվում են անասնաբուժական սերտիֆիկատով, եթե այլ բան սահմանված չէ Հանձնաժողովի կողմից:

Անդամ պետությունները փոխադարձաբար ճանաչում են անասնաբուժության ոլորտում լիազորված մարմինների կողմից տրամադրվող՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող միասնական ձևի անասնաբուժական սերտիֆիկատները:

7. Երրորդ երկրներում անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների արտադրության, վերամշակման, տրանսպորտային փոխադրման և (կամ) պահպանման դեպքում դրանց անվտանգության ապահովման հիմնական սկզբունքը վերահսկման արտասահմանյան պաշտոնական համակարգի աուդիտի անցկացումն է:

Անասնաբուժության ոլորտում լիազորված մարմիններն անցկացնում են անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների վերահսկողության և ստուգման (տեսչական ստուգման) արտասահմանյան պաշտոնական համակարգերի աուդիտ՝ Հանձնաժողովի ակտերին համապատասխան:

8. Անդամ պետություններն իրավունք ունեն մշակելու և ներմուծելու ժամանակավոր անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներ և միջոցառումներ՝ երրորդ երկրների կամ անդամ պետությունների տարածքներում կենդանահամաճարակային իրավիճակի վատթարացման մասին համապատասխան միջազգային կազմակերպություններից, անդամ պետություններից, ինչպես նաև երրորդ երկրներից պաշտոնական տեղեկություններ ստանալու դեպքում:

Նշված տեղեկությունների առկայության դեպքում, սակայն բավականաչափ գիտական հիմնավորվածության բացակայության կամ անհրաժեշտ ժամկետներում այն ներկայացնելու անհնարինության դեպքում անդամ պետությունները կարող են ձեռնարկել անհետաձգելի անասնաբուժասանիտարական միջոցառումներ:

Հոդված 59
Կարանտինային բուսասանիտարական միջոցառումները

1. Կարանտինային բուսասանիտարական միջոցառումներն իրականացվում են ենթակարանտինային արտադրանքի (ենթակարանտինային բեռների, ենթակարանտինային նյութերի, ենթակարանտինային ապրանքների) ցանկում (այսուհետ՝ ենթակարանտինային արտադրանքի ցանկ) ընդգրկված արտադրանքի նկատմամբ, որը Միության մաքսային սահմանի վրա և Միության մաքսային տարածքում ենթակա է կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության), ինչպես նաև Միության կարանտինային օբյեկտների միասնական ցանկում ընդգրկված կարանտինային օբյեկտների և ենթակարանտինային օբյեկտների նկատմամբ:

2. Միության մաքսային տարածքում և Միության մաքսային սահմանի վրա կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է ենթակարանտինային արտադրանքի ցանկում ընդգրկված արտադրանքի, Միության կարանտինային օբյեկտների միասնական ցանկում ընդգրկված կարանտինային օբյեկտների, ինչպես նաև ենթակարանտինային օբյեկտների նկատմամբ:

3. Ենթակարանտինային արտադրանքի ցանկը, Միության կարանտինային օբյեկտների միասնական ցանկը և միասնական կարանտինային բուսասանիտարական պահանջները հաստատվում են Հանձնաժողովի կողմից:

Բաժին XII
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 60
Սպառողների իրավունքների պաշտպանության երաշխիքները

1. Սպառողների իրավունքները և դրանց պաշտպանությունը երաշխավորվում են սպառողների իրավունքների պաշտպանության մասին անդամ պետությունների օրենսդրությամբ, ինչպես նաև սույն Պայմանագրով:

2. Անդամ պետության քաղաքացիները, ինչպես նաև դրա տարածքում բնակվող այլ անձինք մյուս անդամ պետությունների տարածքում սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում օգտվում են նույն իրավական պաշտպանությունից, որից օգտվում են այդ մյուս անդամ պետությունների քաղաքացիները և իրավունք ունեն դիմելու սպառողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպություններ, այլ կազմակերպություններ, ինչպես նաև դատարաններ և (կամ) իրականացնելու այլ ընթացակարգային գործողություններ՝ մյուս անդամ պետությունների քաղաքացիներին տրամադրվող նույն պայմաններով:

Հոդված 61
Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը

1. Անդամ պետություններն սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացնում են համաձայնեցված քաղաքականություն, որն ուղղված է անդամ պետության քաղաքացիների շահերը տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ գործունեությունից պաշտպանելու նպատակով հավասար պայմաններ ստեղծելուն:

2. Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացումն ապահովվում է սույն Պայմանագրին և սպառողների իրավունքների պաշտպանության մասին անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ սույն Պայմանագրի 13-րդ հավելվածով սահմանված սկզբունքների հիման վրա:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

Բաժին XIII
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 62
Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները

1. Միության շրջանակներում իրականացվում է համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն, որով նախատեսվում է անդամ պետությունների համատեղ գործողությունների մշակում և իրականացում՝ անդամ պետությունների տնտեսության հավասարակշռված զարգացում ապահովելու նպատակով:

2. Անդամ պետությունների կողմից համաձայնեցված քաղաքականության իրականացումը համակարգվում է Հանձնաժողովի կողմից՝ սույն Պայմանագրի 14-րդ հավելվածի համաձայն:

3. Անդամ պետությունների կողմից իրականացվող համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) անդամ պետությունների տնտեսության կայուն զարգացման ապահովումը՝ Միության ինտեգրացիոն ներուժը և յուրաքանչյուր անդամ պետության մրցակցային առավելություններն օգտագործելու միջոցով,

2) անդամ պետությունների տնտեսության գործունեության միասնական սկզբունքների ձևավորումը և դրանց արդյունավետ փոխգործակցության ապահովումը,

3) անդամ պետությունների տնտեսության ներքին կայունության բարձրացման նպատակով պայմանների ստեղծումը՝ ներառյալ մակրոտնտեսական կայունության, ինչպես նաև արտաքին ազդեցության նկատմամբ կայունության ապահովումը,

4) անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացումը կանխատեսելու համար ընդհանուր սկզբունքների և կողմնորոշիչների մշակումը:

4. Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն իրականացվում են սույն Պայմանագրի 14-րդ հավելվածին համապատասխան:

Հոդված 63
Տնտեսական զարգացման կայունությունը որոշող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

Անդամ պետությունները տնտեսական քաղաքականությունը ձևավորում են տնտեսական զարգացման կայունությունը որոշող հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքների շրջանակներում՝

պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի տարեկան պակասուրդը չի գերազանցում համախառն ներքին արդյունքի 3 տոկոսը,

պետական կառավարման հատվածի պարտքը չի գերազանցում համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը,

գնաճի մակարդակը (սպառողական գների ինդեքսը) տարեկան արտահայտությամբ (դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, տոկոսներով) ավելի, քան 5 տոկոսային կետով չի գերազանցում գնաճի մակարդակն այն անդամ պետությունում, որտեղ այդ ցուցանիշն ունի ամենափոքր արժեքը:

Բաժին XIV
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 64
Համաձայնեցված արժութային քաղաքականության նպատակներն ու սկզբունքները

1. Անդամ պետությունները, տնտեսական ինտեգրումը խորացնելու, արժութային-ֆինանսական ոլորտում համագործակցությունը զարգացնելու, անդամ պետությունների տարածքներում ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժն ապահովելու, արտաքին առևտրային և ներդրումային գործառնություններում անդամ պետությունների ազգային արժույթների դերակատարությունը բարձրացնելու, ինչպես նաև նշված արժույթների փոխադարձ փոխարկելիությունն ապահովելու նպատակով մշակում և իրականացնում են համաձայնեցված արժութային քաղաքականություն հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) արժութային քաղաքականության ձևավորման և իրականացման նկատմամբ մոտեցումների փուլ առ փուլ ներդաշնակեցում ու մոտարկում այն ծավալով, որքանով դա համապատասխանում է ինտեգրացիոն համագործակցության ձևավորված մակրոտնտեսական պահանջներին,

2) ազգային և միջպետական մակարդակներում անհրաժեշտ կազմակերպաիրավական պայմանների ստեղծում արժութային ոլորտում ինտեգրացիոն գործընթացների զարգացման, արժութային քաղաքականության համակարգման և համաձայնեցման նպատակով,

3) արժութային ոլորտում այնպիսի գործողությունների բացառում, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ ինտեգրացիոն գործընթացների զարգացման վրա, իսկ դրանք ստիպված կիրառելու դեպքում՝ այդպիսի գործողությունների հետևանքների նվազեցում,

4) տնտեսական քաղաքականության իրականացում, որն ուղղված է անդամ պետությունների ազգային արժույթների նկատմամբ վստահությունը բարձրացնելուն ինչպես յուրաքանչյուր անդամ պետության ներքին արժութային շուկայում, այնպես էլ միջազգային արժութային շուկաներում:

2. Անդամ պետությունները, համաձայնեցված արժութային քաղաքականություն իրականացնելու նպատակով, միջոցներ են ձեռնարկում՝ սույն Պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն:

3. Փոխարժեքային քաղաքականությունը համակարգվում է առանձին մարմնի կողմից, որի կազմի մեջ են մտնում անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի

ղեկավարները, և որի գործունեության կարգը սահմանվում է Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով:

4. Արժութային իրավահարաբերությունները համակարգելու և ազատականացման միջոցներ ձեռնարկելու՝ անդամ պետությունների համաձայնեցված մոտեցումները սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով:

Բաժին XV
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ, ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հոդված 65
Նպատակները և կարգավորման առարկան, կիրառության ոլորտը

1. Սույն բաժնի նպատակը ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման ազատության ապահովումն է Միության շրջանակներում՝ սույն բաժնի պայմաններին և սույն Պայմանագրի 16-րդ հավելվածին համապատասխան:

Անդամ պետություններում ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման կարգավորման իրավական հիմքերը սահմանվում են սույն Պայմանագրի 16-րդ հավելվածով:

2. Սույն բաժնի դրույթները կիրառվում են անդամ պետությունների կողմից իրականացվող այն միջոցների նկատմամբ, որոնք առնչվում են ծառայությունների մատուցմանն ու ստացմանը, հիմնադրմանը, գործունեությանը և ներդրումների իրականացմանը:

Սույն բաժնի դրույթները չեն կիրառվում՝

սույն Պայմանագրի XXII բաժնով կարգավորվող պետական (մունիցիպալ) գնումների նկատմամբ,

պետական իշխանության գործառույթների կատարման նպատակով մատակարարվող ծառայությունների և իրականացվող գործունեության նկատմամբ:

3. Սույն Պայմանագրի XVI, XIX, XX և XXI բաժիններում ընդգրկվող ծառայությունները համապատասխանաբար կարգավորվում են այդ բաժինների դրույթներով: Սույն բաժնի դրույթները գործում են նշված բաժիններին չհակասող մասով:

4. Էլեկտրակապի ծառայությունների առևտրի մասով առաջացող իրավահարաբերությունների առանձնահատկությունները սահմանվում են «Էլեկտրակապի ծառայությունների առևտրի» կարգին համապատասխան (սույն Պայմանագրի 16-րդ հավելվածի 1-ին հավելված):

5. Ֆիզիկական անձանց մուտքի, ելքի, ժամանման և աշխատանքային գործունեության առանձնահատկությունները կարգավորվում են սույն Պայմանագրի XXVI բաժնով՝ սույն բաժնին չհակասող մասով:

6. Սույն բաժնում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես՝

1) ցանկացած անդամ պետությանն ուղղված՝ այնպիսի տեղեկություններ տրամադրելու պահանջ, որոնց բացահայտումն անդամ պետությունը դիտարկում է որպես իր անվտանգության կարևորագույն շահերին հակասող.

2) խոչընդոտ ցանկացած անդամ պետության համար ցանկացած գործողություններ ձեռնարկելու հարցում, որոնք անդամ պետությունն անհրաժեշտ է համարում իր անվտանգության կարևորագույն շահերը պաշտպանելու համար օրենսդրական ակտի ընդունման միջոցով, այդ թվում՝

ուղղակիորեն կամ անուղղակիորեն ռազմական հաստատությանը մատակարարելու նպատակով իրականացվող ծառայությունների մատակարարմանն առնչվող,

տրոհվող կամ ջերմամիջուկային նյութերին կամ այն նյութերին առնչվող, որոնցից դրանք ստացվել են,

պատերազմի ժամանակ կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակներում ընդունված.

3) խոչընդոտ ցանկացած անդամ պետության համար՝ միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման նպատակով Միավորված ազգերի կազմակերպության

կանոնադրությանը համապատասխան իր պարտավորությունները կատարելու համար ցանկացած գործողություն ձեռնարկելու հարցում:

7. Սույն բաժնի դրույթները չեն խոչընդոտում անդամ պետությանը ձեռնարկելու կամ կիրառելու այնպիսի միջոցներ, որոնք՝

1) անհրաժեշտ են հասարակության բարոյականության կամ հասարակական կարգի պահպանության համար: Հասարակական կարգի նկատառումներով բացառությունները կարող են կիրառվել միայն, եթե հասարակության արմատական շահերի դեմ ուղղված իրական և բավականին լուրջ վտանգ է ստեղծվում.

2) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար.

3) անհրաժեշտ են անդամ պետությունների՝ սույն բաժնի դրույթներին չհակասող օրենսդրության պահպանման համար՝ ներառյալ այն միջոցները, որոնք վերաբերում են՝

մոլորության մեջ գցող և անբարեխիղճ գործելակերպի կամ քաղաքացիաիրավական պայմանագրերը չկատարելու հետևանքների կանխարգելմանը,

առանձին անձանց մասնավոր կյանքին միջամտելուց պաշտպանությանը անձնական բնույթի տեղեկություններ մշակելիս ու տարածելիս և անձնական կյանքի ու հաշիվների մասին տեղեկությունների գաղտնիության պաշտպանությանը,

անվտանգությանը.

4) անհամատեղելի են սույն Պայմանագրի 16-րդ հավելվածի 21-րդ և 24-րդ կետերի հետ՝ պայմանով, որ փաստացի տրամադրվող ռեժիմի տարբերությունը պայմանավորված է ուղղակի հարկերով արդար կամ արդյունավետ հարկումը և ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության մասով այլ անդամ պետության կամ երրորդ պետությունների անձանցից դրանց գանձումն ապահովելու ձգտումով, և այդպիսի միջոցները չպետք է հակասեն անդամ պետությունների միջազգային պայմանագրերի դրույթներին.

5) անհամատեղելի են սույն Պայմանագրի 16-րդ հավելվածի 27-րդ և 29-րդ կետերի հետ՝ պայմանով, որ ռեժիմի մասով տարբերությունը հարկման, այդ թվում՝ կրկնակի հարկումից խուսափելու հարցերին առնչվող այն համաձայնագրի արդյունքն է, որի մասնակիցն է համապատասխան անդամ պետությունը:

8. Սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված միջոցների ձեռնարկումը չպետք է հանգեցնի անդամ պետությունների միջև կամայական կամ չարդարացված խտրականության կամ ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման գործում քողարկված սահմանափակումների:

9. Եթե անդամ պետությունը ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասով երրորդ պետության նկատմամբ պահպանում է սահմանափակումներ կամ արգելքներ, ապա սույն բաժնում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող այդ անդամ պետությանը՝ մյուս անդամ պետության անձանց վրա տարածելու սույն բաժնի դրույթները, եթե այդիպիսի անձը պատկանում կամ վերահսկվում է նշված երրորդ պետության անձի կողմից, իսկ սույն բաժնի դրույթների տարածումը կհանգեցնի նշված արգելքների և սահմանափակումների շրջանցմանը կամ խախտմանը:

10. Անդամ պետությունը կարող է ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասով սույն բաժնին համապատասխան ստանձնած իր պարտավորությունները չտարածել մյուս անդամ պետության անձի վրա, եթե ապացուցվի, որ մյուս անդամ պետության այդպիսի անձը էական գործնական գործառնություններ չի իրականացնում այդ մյուս անդամ պետության տարածքում և պատկանում կամ վերահսկվում է առաջին անդամ պետության անձի կամ երրորդ պետության անձի կողմից:

Հոդված 66
Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման ազատականացումը

1. Անդամ պետությունները մյուս անդամ պետությունների անձանց ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության մասով չեն ներմուծի նոր խտրական միջոցներ՝ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ գործող ռեժիմի հետ համեմատած:

2. Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման ազատությունն ապահովելու նպատակով անդամ պետություններն իրականացնում են փոխադարձ ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման պայմանների փուլ առ փուլ ազատականացում:

3. Անդամ պետությունները ձգտում են հնարավորինս մեծ թվով ծառայությունների հատվածներում ապահովել սույն Պայմանագրի 16-րդ հավելվածի 38-43-րդ կետերով նախատեսված ծառայությունների միասնական շուկայի ձևավորումը և գործունեությունը:

Հոդված 67
Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման ազատականացման սկզբունքները

1. Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման ազատականացումն իրականացվում է միջազգային սկզբունքների ու ստանդարտների հիման վրա՝ անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման և անդամ պետությունների իրավասու մարմինների փոխադարձ վարչական համագործակցության կազմակերպման միջոցով:

2. Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման ազատականացման գործընթացում անդամ պետությունները ղեկավարվում են հետևյալ սկզբունքներով՝

1) ներքին կարգավորման օպտիմալացում՝ անհարկի ներքին կարգավորման, այդ թվում՝ ծառայությունների մատակարարների, ստացողների, հիմնադրում կամ գործունեություն իրականացնող անձանց և ներդրողների համար թույլատրական պահանջների և ընթացակարգերի փուլ առ փուլ պարզեցում և (կամ) վերացում՝ հաշվի առնելով ծառայությունների կոնկրետ ոլորտների կարգավորման լավագույն միջազգային փորձը, իսկ դրա բացակայության դեպքում՝ անդամ պետությունների առավել առաջադիմական մոդելներն ընտրելու և կիրառելու միջոցով.

2) համամասնություն՝ անդամ պետությունների օրենսդրության բավարար չափով ներդաշնակեցման անհրաժեշտություն ու փոխադարձ վարչական համագործակցություն ծառայությունների, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման շուկայի արդյունավետ գործունեության համար.

3) փոխշահավետություն՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման ազատականացում՝ օգուտների ու պարտականությունների արդար բաշխման սկզբունքի հիման վրա՝ յուրաքանչյուր անդամ պետության համար հաշվի առնելով ծառայությունների ոլորտների և գործունեության տեսակների «զգայունությունը».

4) հետևողականություն՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասով ցանկացած միջոցների ձեռնարկում, այդ թվում՝ անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցում և վարչական համագործակցություն՝ հիմք ընդունելով հետևյալը՝

ծառայությունների ոչ մի ոլորտում և գործունեության ոչ մի տեսակի դեպքում չի թույլատրվում փոխադարձ հասանելիության պայմանների վատթարացում՝ սույն Պայմանագրի ստորագրման ամսաթվի դրությամբ գործող պայմանների և սույն Պայմանագրով ամրագրված պայմանների հետ համեմատած,

Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող, սույն Պայմանագրի 16-րդ հավելվածի 2-րդ կետի 4-րդ պարբերությունում և 15-17-րդ, 23-րդ, 26-րդ, 28-րդ, 31-րդ, 33-րդ և 35-րդ կետերում նշված՝ սահմանափակումների, բացառումների, լրացուցիչ պահանջների ու պայմանների անհատական ազգային ցանկերով նախատեսված սահմանափակումների, բացառումների, լրացուցիչ պահանջների ու պայմանների փուլ առ փուլ կրճատում.

5) տնտեսական նպատակահարմարություն՝ սույն Պայմանագրի 16-րդ հավելվածի 38-43-րդ կետերով նախատեսված՝ ծառայությունների միասնական շուկայի ձևավորման շրջանակներում ծառայությունների առևտրի ազատականացում առաջնահերթության կարգով ծառայությունների այն ոլորտների մասով, որոնք ամենաշատն են ազդում Միության ներքին շուկայում արտադրվող և իրացվող ապրանքների ինքնարժեքի, մրցունակության և (կամ) ծավալների վրա:

Հոդված 68
Վարչական համագործակցությունը

1. Անդամ պետությունները սույն բաժնով կարգավորող հարցերի վերաբերյալ իրավասու մարմինների միջև արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով միմյանց աջակցություն են ցուցաբերում:

Համագործակցության արդյունավետությունը, այդ թվում՝ տեղեկությունների փոխանակումն ապահովելու նպատակով անդամ պետությունների իրավասու մարմինները համաձայնագրեր են կնքում:

2. Վարչական համագործակցությունը ներառում է՝

1) անդամ պետությունների իրավասու մարմինների միջև տեղեկությունների օպերատիվ փոխանակումը, ընդհանուր առմամբ, թե՛ ըստ ծառայությունների ոլորտների և թե՛ ըստ շուկայի կոնկրետ մասնակիցների,

2) ծառայություններ մատուցողների կողմից սպառողների, շուկայի բարեխիղճ սուբյեկտների իրավունքների ու օրինական շահերի, ինչպես նաև հասարակական (պետական) շահերի խախտումների կանխարգելման մեխանիզմի ստեղծումը:

3. Անդամ պետությունների իրավասու մարմինները կնքված համաձայնագրերի շրջանակներում կարող են մյուս անդամ պետությունների իրավասու մարմիններից պահանջել իրենց իրավասության ոլորտին առնչվող և սույն բաժնով նախատեսված պահանջների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ, այդ թվում՝

1) այդ մյուս անդամ պետությունների այն անձանց վերաբերյալ, որոնք առաջին անդամ պետության տարածքում հիմնադրում են իրականացնում կամ ծառայություններ են մատակարարում և, մասնավորապես, այն տվյալների վերաբերյալ, որոնցով հաստատվում են, որ այդպիսի անձինք իսկապես հիմնադրված են իրենց տարածքներում, և որ, ըստ իրավասու մարմինների տվյալների, տվյալ անձինք իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն,

2) իրավասու մարմինների կողմից տրված թույլտվությունների և գործունեության այն տեսակների վերաբերյալ, որոնց իրականացման համար թույլտվություններ են տրվել,

3) վարչական միջոցների, քրեաիրավական պատժամիջոցների կամ անձին անվճարունակ (սնանկ) ճանաչելու մասին այն որոշումների վերաբերյալ, որոնք ընդունվել են իրավասու մարմինների կողմից այդ անձի առնչությամբ և անմիջականորեն առնչվում են նրա իրավասությանը կամ գործարար համբավին: Որևէ անդամ պետության իրավասու մարմինները պետք է տրամադրեն մյուս անդամ պետության իրավասու մարմնի պահանջած համապատասխան տեղեկությունները, այդ թվում՝ առաջին անդամ պետության տարածքում հիմնադրում իրականացնող կամ ծառայություններ մատակարարող անձանց պատասխանատվության ենթարկելու հիմքերի մասին տեղեկությունները:

4. Անդամ պետությունների իրավասու (այդ թվում՝ գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող) մարմինները վարչական համագործակցություն են ծավալում հետևյալ նպատակներով՝

1) որևէ անդամ պետության ծառայություններ ստացողների իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգի ստեղծում մյուս անդամ պետության ծառայություններ մատակարարողի կողմից այդպիսի ծառայություններ մատակարարելու դեպքում,

2) ծառայություններ մատակարարողների և ստացողների կողմից հարկային և այլ պարտավորությունների կատարում,

3) անբարեխիղճ գործարար պրակտիկայի կանխում,

4) անդամ պետությունների ծառայությունների ծավալների մասին վիճակագրական տվյալների հավաստիության ապահովում:

5. Եթե անդամ պետությանը հայտնի է դարձել, որ ցանկացած ծառայություն մատակարարողի, հիմնադրում կամ գործունեություն իրականացնող անձի կամ ներդրողի գործողությունները կարող են վնաս հասցնել մարդկանց, կենդանիների, բույսերի առողջությանը կամ անվտանգությանը կամ շրջակա միջավայրին այդ անդամ պետության տարածքում կամ այլ

անդամ պետությունների տարածքներում, ապա առաջին անդամ պետությունը սեղմ ժամկետներում դրա մասին տեղեկացնում է բոլոր անդամ պետություններին և Հանձնաժողովին:

6. Հանձնաժողովն աջակցում է Միության՝ սույն բաժնով կարգավորվող հարցերի վերաբերյալ տեղեկատվական համակարգերի ստեղծմանը և մասնակցում է դրանց գործունեության ապահովմանը:

7. Անդամ պետությունները Հանձնաժողովին կարող են տեղեկացնել մյուս անդամ պետությունների կողմից սույն հոդվածով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքերի մասին:

Հոդված 69
Թափանցիկությունը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է սույն բաժնով կարգավորվող հարցերի առնչությամբ իր օրենսդրության բաց լինելն ու հասանելիությունը:

Այդ նպատակով անդամ պետության բոլոր նորմատիվ իրավական ակտերը, որոնք առնչվում կամ կարող են առնչվել սույն բաժնով կարգավորվող հարցերին, պետք է հրապարակվեն պաշտոնական աղբյուրում, իսկ հնարավորության դեպքում նաև «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակության ցանցի (այսուհետ՝ ինտերնետ ցանց) համապատասխան կայքում այնպես, որ ցանկացած անձ, որի իրավունքներին և (կամ) պարտավորություններին այդպիսի նորմատիվ իրավական ակտերը կարող են առնչվել, ունենա դրանց ծանոթանալու հնարավորություն:

2. Անդամ պետությունների՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված նորմատիվ իրավական ակտերը պետք է հրապարակվեն իրավական որոշակիությունը և այն անձանց հիմնավորված ակնկալիքներն ապահովող ժամկետում, որոնց իրավունքներին և (կամ) պարտավորություններին այդ նորմատիվ իրավական ակտերը կարող են առնչվել, բայց, ամեն դեպքում, մինչև դրանք ուժի մեջ մտնելու (գործողության մեջ դնելու) ամսաթիվը:

3. Անդամ պետություններն ապահովում են սույն հոդվածի 1-ին կետում նշված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախնական հրապարակումը:

Ինտերնետ ցանցում՝ նորմատիվ իրավական ակտի նախագծի մշակման համար պատասխանատու պետական մարմինների պաշտոնական կայքերում կամ հատուկ ստեղծված կայքերում անդամ պետությունները տեղադրում են նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, դրանց վերաբերյալ անձանց դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնելու կարգը, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի նախագծի հանրային քննարկում իրականացնելու ժամկետի մասին տեղեկությունները՝ բոլոր շահագրգիռ անձանց իրենց դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով:

Նշված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հրապարակվում են, որպես կանոն, դրանք ընդունելու ամսաթվից 30 օրացուցային օր առաջ: Նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կարող են նախապես չհրապարակվել այն բացառիկ դեպքերում, երբ անհրաժեշտ է օպերատիվ կերպով արձագանքել, ինչպես նաև այն դեպքերում, երբ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախնական հրապարակումը կարող է խոչընդոտել դրանց կատարումը կամ այլ կերպ հակասել հանրության շահերին:

Հանրային քննարկման շրջանակներում անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից ստացված դիտողությունները և (կամ) առաջարկությունները, հնարավորության դեպքում, հաշվի են առնվում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի լրամշակման ժամանակ:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված նորմատիվ իրավական ակտերի (դրանց նախագծերի) հրապարակումը պետք է ուղեկցվի դրանց ընդունման և կիրառման նպատակների պարզաբանմամբ:

5. Անդամ պետությունները մեխանիզմ են ստեղծում, որը սույն հոդվածի 1-ին կետում նշված գործող և (կամ) ընդունման համար նախատեսվող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ ցանկացած անձի գրավոր կամ էլեկտրոնային հարցումներին պատասխանելու հնարավորություն է ընձեռում:

6. Անդամ պետություններն ապահովում են մյուս անդամ պետությունների անձանց՝ սույն բաժնով կարգավորվող հարցերի վերաբերյալ դիմումների ուսումնասիրությունը՝ իրենց օրենսդրությանը համապատասխան իրենց անձանց համար սահմանված կարգով:

Բաժին XVI
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 70
Ֆինանսական շուկաների կարգավորման նպատակներն ու սկզբունքները

1. Միության շրջանակներում անդամ պետություններն իրականացնում են ֆինանսական շուկաների համաձայնեցված կարգավորում հետևյալ նպատակներին և սկզբունքներին համապատասխան՝

1) Միության շրջանակներում ընդհանուր ֆինանսական շուկա ստեղծելու և անդամ պետությունների ֆինանսական շուկաների ոչ խտրական հասանելիություն ապահովելու նպատակով անդամ պետությունների տնտեսական ինտեգրման խորացում,

2) ֆինանսական ծառայությունների սպառողների իրավունքների ու օրինական շահերի երաշխավորված ու արդյունավետ պաշտպանության ապահովում,

3) բանկային և ապահովագրական ոլորտներում, ինչպես նաև արժեթղթերի շուկայում որևէ անդամ պետության լիազորված մարմինների կողմից տրված լիցենզիաների՝ այլ անդամ պետությունների տարածքներում փոխադարձ ճանաչման համար պայմանների ստեղծում,

4) անդամ պետությունների ֆինանսական շուկաներում ռիսկերի կարգավորման համար մոտեցումների սահմանում՝ միջազգային չափանիշներին համապատասխան,

5) բանկային գործունեությանը, ապահովագրական գործունեությանը և արժեթղթերի շուկայում գործունեությանը (պրուդենցիալ պահանջներ) ներկայացվող պահանջների սահմանում,

6) ֆինանսական շուկայի մասնակիցների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգի սահմանում,

7) ֆինանսական շուկայի մասնակիցների գործունեության թափանցիկության ապահովում:

2. Ֆինանսական շուկայում կապիտալի ազատ տեղաշարժն ապահովող պայմաններ ստեղծելու նպատակով անդամ պետությունները կիրառում են համագործակցության հետևյալ հիմնական ձևերը, այդ թվում՝

1) անդամ պետությունների լիազորված մարմինների միջև բանկային գործունեության, ապահովագրական գործունեության և արժեթղթերի շուկայում գործունեության կարգավորման ու զարգացման, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխան հսկողության ու վերահսկողության հարցերով տեղեկությունների՝ ներառյալ գաղտնի տեղեկությունների փոխանակում,

2) ֆինանսական շուկաներում առաջացող ընթացիկ և հնարավոր խնդիրների քննարկման և դրանց լուծման համար առաջարկների մշակման վերաբերյալ համաձայնեցված միջոցառումների իրականացում,

3) անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից բանկային գործունեության, ապահովագրական գործունեության և արժեթղթերի շուկայում գործունեության կարգավորման հարցերով փոխադարձ խորհրդակցությունների անցկացում:

3. Սույն հոդվածի 1-ին կետում շարադրված նպատակներն իրագործելու նպատակով անդամ պետությունները, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխան և հաշվի առնելով սույն Պայմանագրի 17-րդ հավելվածը և սույն Պայմանագրի 103-րդ հոդվածը, իրականացնում են ֆինանսական շուկայի ոլորտում իրենց օրենսդրության ներդաշնակեցում:

Բաժին XVII
ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ

Հոդված 71

Հարկման ոլորտում անդամ պետությունների փոխգործակցության սկզբունքները

1. Որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքները հարկվում են անուղղակի հարկերով:

2. Անդամ պետությունները փոխադարձ առևտրի մեջ հարկերը, մյուս հավաքագրումներն ու վճարները գանձում են այնպես, որ հարկումն այն անդամ պետությունում, որի տարածքում իրականացվում է մյուս անդամ պետությունների ապրանքների իրացումը, լինի ոչ պակաս բարենպաստ, քան այն հարկումը, որը կիրառվում է այդ անդամ պետության կողմից նույն հանգամանքներում իր տարածքի ծագման նույնանման ապրանքների նկատմամբ:

3. Անդամ պետությունները սահմանում են փոխադարձ առևտրի վրա ազդեցություն ունեցող հարկերի մասով օրենսդրության ներդաշնակեցումն իրականացնելու ուղղությունները, ինչպես նաև ձևերն ու կարգը, որպեսզի չխախտվեն մրցակցության պայմանները, և չխոչընդոտվի ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների ազատ տեղաշարժն ազգային մակարդակով կամ Միության մակարդակով՝ ներառյալ.

1) առավել զգայուն ենթաակցիզային ապրանքների ակցիզների դրույքաչափերի ներդաշնակեցումը (մոտարկումը),

2) փոխադարձ առևտրում ավելացված արժեքի հարկի գանձման համակարգի հետագա կատարելագործումը (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ):

Հոդված 72
Անդամ պետություններում անուղղակի հարկերի գանձման սկզբունքները

1. Ապրանքների փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է նշանակման երկրի սկզբունքով, որով նախատեսվում է ապրանքների արտահանման ժամանակ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառում և (կամ) ակցիզների վճարումից ազատում, ինչպես նաև ներմուծման ժամանակ դրանց հարկումն անուղղակի հարկերով:

Ապրանքների արտահանման ու ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձումը և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմն իրականացվում են սույն Պայմանագրի 18-րդ հավելվածով սահմանված կարգի համաձայն:

2. Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է այն անդամ պետությունում, որի տարածքը ճանաչվում է աշխատանքների իրականացման, ծառայությունների մատուցման վայր:

Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է սույն Պայմանագրի 18-րդ հավելվածով նախատեսված կարգով:

3. Անուղղակի հարկերի լրիվ չափով վճարումն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունների փոխանակումն անդամ պետությունների հարկային մարմինների միջև իրականացվում է առանձին միջազգային միջգերատեսչական պայմանագրին համապատասխան, որով սահմանվում են նաև տեղեկությունների փոխանակման կարգը, ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման հայտարարության ձևը, դա լրացնելու կանոններն ու փոխանակման ձևաչափի վերաբերյալ պահանջները:

4. Որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքներ ներմուծելու դեպքում անուղղակի հարկերը գանձվում են այն անդամ պետության հարկային մարմինների կողմից, որի տարածք ներմուծվում են ապրանքները, եթե ակցիզային դրոշմանիշերով (հսկիչ դրոշմապիտակներով, նշաններով) դրոշմավորման ենթակա ապրանքների մասով այդ անդամ պետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

5. Փոխադարձ առևտրում անդամ պետության տարածք ապրանքներ ներմուծելու ժամանակ անուղղակի հարկերի դրույքաչափերը չպետք է գերազանցեն անուղղակի հարկերի այն դրույքաչափերը, որոնցով հարկվում են նույնանման ապրանքներն այդ անդամ պետության տարածքում դրանց իրացման ժամանակ:

6. Անուղղակի հարկեր չեն գանձվում, երբ անդամ պետության տարածք են ներմուծվում՝

1) ապրանքներ, որոնք այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան դրա տարածք ներմուծելու դեպքում ենթակա չեն հարկման (ազատվում են հարկումից),

2) ապրանքներ, որոնք ֆիզիկական անձանց կողմից ներմուծվում են անդամ պետության տարածք ոչ ձեռնարկատիրական գործունեության նպատակով,

3) ապրանքներ, որոնց ներմուծումը որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք իրականացվում է դրանց՝ մեկ իրավաբանական անձի շրջանակներում փոխանցման հետ կապված (անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել այդպիսի ապրանքների ներմուծման (արտահանման) մասին հարկային մարմիններին ծանուցելու պարտավորություն):

Հոդված 73
Ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը

Եթե որևէ անդամ պետություն, իր օրենսդրությանը և միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան, իրավունք ունի հարկելու մյուս անդամ պետության հարկային ռեզիդենտի (կացության մշտական վայր ունեցող անձի) կողմից՝ նշված առաջին անդամ պետությունում իրականացվող վարձու աշխատանքի հետ կապված եկամուտը, ապա այդպիսի եկամուտն առաջին անդամ պետությունում վարձու աշխատանքի առաջին օրվանից հարկվում է այդ առաջին անդամ պետության ֆիզիկական անձանց՝ հարկային ռեզիդենտների (կացության մշտական վայր ունեցող անձանց) այդպիսի եկամուտների համար նախատեսված հարկային դրույքաչափերով:

Սույն հոդվածի դրույթները կիրառվում են անդամ պետությունների քաղաքացիների կողմից վարձու աշխատանքի հետ կապված եկամուտների հարկման նկատմամբ:

Բաժին XVIII
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 74
Ընդհանուր դրույթներ

1. Սույն բաժնի առարկան անդամ պետությունների տարածքներում հակամրցակցային գործունեության, ինչպես նաև երկու և ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա բացասաբար անդրադարձող գործունեության հայտնաբերումն ու կանխումն ապահովող մրցակցության ընդհանուր սկզբունքներ ու կանոններ սահմանելն է:

2. Սույն բաժնի դրույթները տարածվում են անդամ պետությունների տարածքներում մրցակցային (հակամենաշնորհային) քաղաքականության իրականացման հետ կապված հարաբերությունների և այն անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) մասնակցությամբ հարաբերությունների վրա, որոնք ունեն կամ կարող են ունենալ բացասական ազդեցություն երկու և ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա: Հանձնաժողովի իրավասությունը որոշելու նպատակով շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչները սահմանվում են Բարձրագույն խորհրդի որոշմամբ:

3. Անդամ պետություններն իրավունք ունեն իրենց օրենսդրությամբ սահմանելու սույն Պայմանագրի 75-րդ և 76-րդ հոդվածներով նախատեսված արգելքների նկատմամբ լրացուցիչ արգելքներ, ինչպես նաև լրացուցիչ պահանջներ և սահմանափակումներ:

4. Անդամ պետությունները երրորդ երկրների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) գործողությունների նկատմամբ իրականացնում են համաձայնեցված մրցակցային (հակամենաշնորհային) քաղաքականություն, եթե այդպիսի գործողությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ անդամ պետությունների ապրանքային շուկաներում մրցակցության վիճակի վրա:

5. Սույն բաժնում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած անդամ պետության համար ցանկացած այնպիսի միջոց ձեռնարկելուն ուղղված խոչընդոտ, որն այն անհրաժեշտ է համարում երկրի պաշտպանության կամ պետության անվտանգության կարևորագույն շահերը պաշտպանելու համար:

6. Սույն բաժնի դրույթները կիրառվում են բնական մենաշնորհի սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով սույն Պայմանագրով նախատեսված առանձնահատկությունները:

7. Սույն բաժնի դրույթների կատարումն իրականացվում է սույն Պայմանագրի 19-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 75
Մրցակցության ընդհանուր սկզբունքները

1. Անդամ պետություններն իրենց մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության նորմերը կիրառում են անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) նկատմամբ հավասար պայմաններով նույն կերպ և հավասար չափով՝ անկախ այդպիսի տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կազմակերպաիրավական ձևից և գրանցման վայրից:

2. Անդամ պետություններն իրենց օրենսդրությամբ սահմանում են նաև արգելքներ՝

1) պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց գործառույթներն իրականացնող այլ մարմինների կամ կազմակերպությունների կամ դրանց և տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջև համաձայնությունների առնչությամբ, եթե այդպիսի համաձայնությունները հանգեցնում կամ կարող են հանգեցնել մրցակցությունն արգելելուն, սահմանափակելուն կամ վերացնելուն՝ բացառությամբ սույն Պայմանագրով և (կամ) անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,

2) պետական կամ մունիցիպալ առանձնաշնորհումների տրամադրման առնչությամբ՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերի և հաշվի առնելով սույն Պայմանագրով և (կամ) անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերով նախատեսված առանձնահատկությունները:

3. Անդամ պետությունները արդյունավետ միջոցներ են ձեռնարկում սույն հոդվածի 2-րդ կետի առաջին ենթակետով նախատեսված գործողությունների (անգործության) կանխարգելման, հայտնաբերման և կանխման ուղղությամբ:

4. Անդամ պետություններն իրենց օրենսդրությանը համապատասխան ապահովում են տնտեսական համակենտրոնացման նկատմամբ արդյունավետ հսկողություն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է յուրաքանչյուր անդամ պետության տարածքում մրցակցության պաշտպանության և զարգացման համար:

5. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է պետական իշխանության այնպիսի մարմնի առկայությունը, որն իրավասու է մրցակցային (հակամենաշնորհային) քաղաքականության իրականացման և (կամ) անցկացման համար, ինչն, ի թիվս այլոց, ենթադրում է այդպիսի մարմնին՝ հակամրցակցային գործունեության և անբարեխիղճ մրցակցության նկատմամբ արգելքը պահպանելու, տնտեսական համակենտրոնացման նկատմամբ վերահսկողական լիազորությունների վերապահում, ինչպես նաև մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության խախտումները կանխարգելելու և հայտնաբերելու, նշված խախտումները դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու և այդպիսի խախտումների համար պատասխանատվության ենթարկելու լիազորությունների վերապահումը (այսուհետ՝ անդամ պետության լիազորված մարմին):

6. Անդամ պետություններն իրենց օրենսդրությամբ սահմանում են տուգանային պատասխանատվության միջոց՝ տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) ու իշխանության մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ հակամրցակցային գործունեություն իրականացնելու համար՝ հիմք ընդունելով արդյունավետության, համաչափության, ապահովվածության, անխուսափելիության և որոշակիության սկզբունքները, և ապահովում են դրանց կիրառման նկատմամբ հսկողությունը: Ընդ որում, անդամ պետություններն ընդունում են, որ տուգանային պատասխանատվության միջոցներ կիրառելու դեպքում առավել բարձր տուգանային պատասխանատվության միջոցներ պետք է սահմանվեն մրցակցության համար ամենամեծ վտանգ ներկայացնող խախտումների համար (մրցակցությունը սահմանափակող համաձայնություններ, անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից իրենց գերիշխող դիրքի չարաշահում), ընդ որում,

նախապատվությունը տրվում է տուգանային պատասխանատվության այն միջոցներին, որոնք հաշվարկվում են՝ հիմք ընդունելով իրավախախտի կողմից այն ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարից կամ իրավախախտի կողմից այն ապրանքը ձեռք բերելու համար ծախսերի գումարից, որի շուկայում կատարվել է իրավախախտումը:

7. Անդամ պետություններն իրենց օրենսդրությանը համապատասխան ապահովում են իրենց կողմից իրականացվող մրցակցային (հակամենաշնորհային) քաղաքականության տեղեկատվական թափանցիկությունը, այդ թվում՝ անդամ պետությունների լիազորված մարմինների գործունեության մասին տեղեկությունները զանգվածային լրատվամիջոցներում և ինտերնետ ցանցում տեղադրելու միջոցով:

8. Անդամ պետությունների լիազորված մարմիններն իրենց պետության օրենսդրությանը և սույն Պայմանագրին համապատասխան իրականացնում են փոխգործակցություն՝ ծանուցումներ, տեղեկությունների տրամադրման վերաբերյալ հարցումներ ուղարկելու, խորհրդակցություններ անցկացնելու, մյուս անդամ պետության շահերին առնչվող ուսումնասիրությունների (գործերի քննության) մասին տեղեկացնելու, անդամ պետություններից մեկի լիազորված մարմնի պահանջի հիման վրա ուսումնասիրություններ (գործերի քննություն) անցկացնելու և դրա արդյունքների մասին տեղեկացնելու միջոցով:

Հոդված 76
Մրցակցության ընդհանուր կանոնները

1. Արգելվում է գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) կողմից այնպիսի գործողությունների (անգործության) իրականացումը, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել մրցակցությունն արգելելուն, սահմանափակելուն, վերացնելուն և (կամ) այլ անձանց շահերը ոտնահարելուն, այդ թվում՝ հետևյալ գործողությունները (անգործությունը)՝

1) ապրանքի բարձր կամ ցածր մենաշնորհային գին սահմանելը, պահպանելը,

2) ապրանքը շրջանառությունից հանելը, եթե դրա արդյունքում ապրանքի գինը բարձրացել է,

3) կոնտրագենտին պայմանագրի՝ իր համար ոչ շահավետ կամ պայմանագրի առարկային չվերաբերող տնտեսապես կամ տեխնոլոգիապես չհիմնավորված պայմաններ պարտադրելը,

4) ապրանքի արտադրությունը տնտեսապես կամ տեխնոլոգիապես չհիմնավորված կրճատելը կամ դադարեցնելը, եթե այդ ապրանքը պահանջարկ ունի կամ դրա մատակարարման համար պատվերներ են տրվել՝ դրա շահութաբեր արտադրության հնարավորության առկայության դեպքում, ինչպես նաև եթե ապրանքի արտադրության այդպիսի կրճատումը կամ դադարեցումն ուղղակիորեն նախատեսված չէ սույն Պայմանագրով և (կամ) անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերով,

5) առանձին գնորդների (պատվիրատուների) հետ պայմանագիր կնքելուց տնտեսապես կամ տեխնոլոգիապես չհիմնավորված հրաժարվելը կամ խուսափելը համապատասխան ապրանքի արտադրության կամ մատակարարման հնարավորության առկայության դեպքում՝ հաշվի առնելով սույն Պայմանագրով և (կամ) անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերով նախատեսված առանձնահատկությունները,

6) միևնույն ապրանքի համար տնտեսապես, տեխնոլոգիապես կամ այլ կերպ չհիմնավորված տարբեր գներ (սակագներ) սահմանելը, խտրական պայմաններ ստեղծելը՝ հաշվի առնելով սույն Պայմանագրով և (կամ) անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերով նախատեսված առանձնահատկությունները,

7) այլ տնտեսավարող սուբյեկտների համար ապրանքային շուկայի հասանելիության ապահովման կամ ապրանքային շուկայից դուրս գալու խոչընդոտներ ստեղծելը:

2. Չի թույլատրվում անբարեխիղճ մրցակցություն, այդ թվում՝

1) կեղծ, ոչ ճշգրիտ կամ խեղաթյուրված տեղեկություններ տարածելը, որոնց պատճառով տնտեսավարող սուբյեկտը (շուկայի սուբյեկտը) կարող է կրել կորուստներ, կամ որոնք կարող են վնաս հասցնել նրա գործարար համբավին,

2) ապրանքի արտադրության բնույթի, եղանակի և վայրի, դրա սպառողական հատկանիշների, որակի և քանակի կամ դրա արտադրողների առնչությամբ մոլորության մեջ գցելը,

3) տնտեսավարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) կողմից ոչ կոռեկտ համեմատություն կատարելն իր կողմից արտադրվող կամ իրացվող ապրանքների և այլ տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից արտադրվող կամ իրացվող ապրանքների միջև:

3. Մեկ ապրանքային շուկայում գործող, մրցակից հանդիսացող անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջև արգելվում են այնպիսի համաձայնությունների կնքումը, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել՝

1) գների (սակագների), զեղչերի, հավելումների (հավելավճարների), հավելագների սահմանմանը կամ պահպանմանը,

2) աճուրդի ժամանակ գների բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը,

3) ապրանքային շուկայի բաժանմանը՝ ըստ տարածքային սկզբունքի, ապրանքների վաճառքի կամ գնման ծավալի, իրացվող ապրանքների տեսականու կամ վաճառողների կամ գնորդների (պատվիրատուների) կազմի,

4) ապրանքների արտադրության կրճատմանը կամ դադարեցմանը,

5) կոնկրետ վաճառողների կամ գնորդների (պատվիրատուների) հետ պայմանագրեր կնքելուց հրաժարվելուն:

4. Արգելվում են տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջև «ուղղահայաց» համաձայնությունների կնքումը՝ բացառությամբ սույն Պայմանագրի 19-րդ հավելվածով սահմանված թույլատրելիության չափանիշներին համապատասխան թույլատրելի համարվող «ուղղահայաց» համաձայնությունների, եթե՝

1) այդպիսի համաձայնությունները հանգեցնում կամ կարող են հանգեցնել ապրանքի վերավաճառքի գնի սահմանմանը՝ բացառությամբ այն դեպքի, երբ վաճառողը գնորդի համար սահմանում է ապրանքի վերավաճառքի առավելագույն գինը,

2) այդպիսի համաձայնությամբ նախատեսվում է գնորդի՝ այն տնտեսավարող սուբյեկտի (շուկայի սուբյեկտի) ապրանքը չվաճառելու պարտավորությունը, որը վաճառողի մրցակիցն է: Այդպիսի արգելքը չի տարածվում գնորդի կողմից՝ ապրանքային նշան կամ վաճառողի կամ արտադրողի անհատականացման այլ միջոց կրող ապրանքի վաճառքը կազմակերպելու վերաբերյալ համաձայնության վրա:

5. Տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջև արգելվում են այլ համաձայնություններ՝ բացառությամբ սույն Պայմանագրի 19-րդ հավելվածով սահմանված թույլատրելիության չափանիշներին համապատասխան թույլատրելի համարվող «ուղղահայաց» համաձայնությունների, եթե սահմանված է, որ այդպիսի համաձայնությունները հանգեցնում կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը:

6. Ֆիզիկական անձանց, առևտրային կազմակերպություններին և ոչ առևտրային կազմակերպություններին արգելվում է համակարգել անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) տնտեսական գործունեությունը, եթե այդպիսի համակարգումը հանգեցնում կամ կարող է հանգեցնել սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում նշված ցանկացած հետևանքի, որը չի կարող համարվել թույլատրելի՝ սույն Պայմանագրի 19-րդ հավելվածով սահմանված թույլատրելիության չափանիշներին համապատասխան: Անդամ պետություններն իրավունք ունեն իրենց օրենսդրությամբ սահմանելու տնտեսական գործունեության համակարգման նկատմամբ արգելք, եթե այդպիսի համակարգումը հանգեցնում կամ կարող է հանգեցնել նաև սույն հոդվածի 5-րդ կետում նշված հետևանքներին, որոնք չեն կարող թույլատրելի համարվել՝ սույն Պայմանագրի 19-րդ հավելվածով սահմանված թույլատրելիության չափանիշներին համապատասխան:

7. Հանձնաժողովը, սույն Պայմանագրի 19-րդ հավելվածով նախատեսված կարգով, կանխում է անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների), ինչպես նաև անդամ պետությունների՝ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից սույն բաժնով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները, եթե այդպիսի խախտումներն ունեն կամ կարող են բացասական ազդեցություն ունենալ երկու կամ ավելի անդամ պետությունների տարածքներում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա՝ բացառությամբ ֆինանսական շուկաների:

Գների պետական կարգավորումը

Գների պետական կարգավորում ներմուծելու, ինչպես նաև այն ներմուծելու մասին անդամ պետությունների որոշումները վիճարկելու կարգը սահմանվում է սույն Պայմանագրի 19-րդ հավելվածով:

Բաժին XIX
ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀԸ

Հոդված 78
Բնական մենաշնորհի ոլորտները և սուբյեկտները

1. Անդամ պետությունները բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեությունը կարգավորելիս առաջնորդվում են սույն Պայմանագրի 20-րդ հավելվածով նախատեսված նորմերով և դրույթներով:

2. Սույն բաժնի դրույթները տարածվում են անդամ պետությունների միջև առևտրի վրա ազդող և սույն Պայմանագրի 20-րդ հավելվածի 1-ին հավելվածում նշված բնական մենաշնորհի ոլորտում անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների, սպառողների, գործադիր իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունների վրա:

3. Բնական մենաշնորհի կոնկրետ ոլորտներում իրավահարաբերությունները սահմանվում են սույն բաժնով՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի XX և XXI բաժիններով նախատեսված առանձնահատկությունները:

4. Անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտներից են նաև սույն Պայմանագրի 20-րդ հավելվածի 2-րդ հավելվածում նշված բնական մենաշնորհի ոլորտները:

Սույն Պայմանագրի 20-րդ հավելվածի 2-րդ հավելվածում նշված բնական մենաշնորհի ոլորտների առնչությամբ կիրառվում են անդամ պետությունների օրենսդրության պահանջները:

5. Բնական մենաշնորհի ոլորտներին դասվող բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների ցանկը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

6. Անդամ պետությունները ձգտում են ներդաշնակեցնել սույն Պայմանագրի 20-րդ հավելվածի 1-ին և 2-րդ հավելվածներում նշված բնական մենաշնորհի ոլորտները՝ դրանց կրճատման և սույն Պայմանագրի XX և XXI բաժիններում անցումային շրջանի հնարավոր սահմանման միջոցով:

7. Անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնումն իրականացվում է՝

անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, եթե անդամ պետությունը մտադիր է բնական մենաշնորհի ոլորտին դասել այն ոլորտը, որը մյուս անդամ պետությունում բնական մենաշնորհի ոլորտ է և նշված է սույն Պայմանագրի 20-րդ հավելվածի 1-ին կամ 2-րդ հավելվածում,

Հանձնաժողովի որոշմամբ, եթե անդամ պետությունը համապատասխան կերպով Հանձնաժողով դիմելուց հետո մտադիր է բնական մենաշնորհի ոլորտին դասել բնական մենաշնորհի այլ ոլորտ, որը նշված չէ սույն Պայմանագրի 20-րդ հավելվածի 1-ին կամ 2-րդ հավելվածում:

8. Սույն բաժինը չի տարածվում անդամ պետությունների միջև գործող երկկողմ միջազգային պայմանագրերով կարգավորվող հարաբերությունների վրա: Անդամ պետությունների միջև նոր կնքվող երկկողմ միջազգային պայմանագրերը չեն կարող հակասել սույն բաժնին:

9. Սույն Պայմանագրի XVIII բաժնի դրույթները կիրառվում են բնական մենաշնորհի սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով սույն բաժնով նախատեսված առանձնահատկությունները:

Բաժին XX
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՆ

Հոդված 79
Անդամ պետությունների փոխգործակցությունն էներգետիկայի ոլորտում

1. Անդամ պետությունների վառելիքաէներգետիկ համալիրների ներուժն արդյունավետ օգտագործելու, ինչպես նաև ազգային տնտեսություններն էներգետիկ պաշարների հիմնական տեսակներով (էլեկտրաէներգիա, գազ, նավթ և նավթամթերքներ) ապահովելու նպատակով անդամ պետություններն ապահովում են էներգետիկայի ոլորտում երկարաժամկետ փոխշահավետ համագործակցության զարգացումը, վարում են համակարգված էներգետիկ քաղաքականություն, իրականացնում են էներգետիկ պաշարների ընդհանուր շուկաների փուլ առ փուլ ձևավորում՝ սույն Պայմանագրի 81-րդ, 83-րդ և 84-րդ հոդվածներով նախատեսված միջազգային պայմանագրերին համապատասխան՝ հաշվի առնելով էներգետիկ անվտանգության ապահովումը՝ ըստ հետևյալ հիմնական սկզբունքների՝

1) էներգետիկ պաշարների շուկայական գնագոյացման ապահովում,

2) էներգետիկ պաշարների ընդհանուր շուկաներում մրցակցության զարգացման ապահովում,

3) էներգետիկ պաշարների, համապատասխան սարքավորումների, տեխնոլոգիաների և դրանց առնչվող այլ ծառայությունների առևտրի գործընթացում տեխնիկական, վարչական և այլ խոչընդոտների բացակայություն,

4) էներգետիկ պաշարների ընդհանուր շուկաների տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման ապահովում,

5) էներգետիկ պաշարների ընդհանուր շուկաներում անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար ոչ խտրական պայմանների ապահովում,

6) անդամ պետությունների էներգետիկ համալիրում ներդրումներ ներգրավելու համար բարենպաստ պայմանների ստեղծում,

7) էներգետիկ պաշարների ընդհանուր շուկաների տեխնոլոգիական և առևտրային ենթակառուցվածքի գործունեության ազգային նորմերի և կանոնների ներդաշնակեցում:

2. Էլեկտրաէներգետիկայի, գազի, նավթի և նավթամթերքների ոլորտներում իրենց գործունեությունն իրականացնող անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների՝ սույն բաժնով չկարգավորվող հարաբերությունների առնչությամբ կիրառվում է անդամ պետությունների օրենսդրությունը:

3. Սույն Պայմանագրի XVIII բաժնի դրույթները կիրառվում են էլեկտրաէներգետիկայի, գազի, նավթի և նավթամթերքների ոլորտներում անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի սույն բաժնով և XIX բաժնով նախատեսված առանձնահատկությունները:

Հոդված 80
Գազի, նավթի և նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռները

1. Էներգետիկ ամբողջական ներուժի արդյունավետ օգտագործման և էներգետիկ պաշարների միջպետական մատակարարումներն օպտիմալացնելու նպատակով անդամ պետությունների լիազորված մարմինները մշակում և համաձայնեցնում են՝

Միության գազի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը,

Միության նավթի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը,

Միության նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռները:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հաշվեկշիռների մշակումն իրականացվում է Հանձնաժողովի մասնակցությամբ և սույն Պայմանագրի 104-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ժամկետում մշակվող և անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից համաձայնեցվող՝ գազի, նավթի և նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների ձևավորման մեթոդաբանությանը համապատասխան:

Հոդված 81
Միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորումը

1. Անդամ պետություններն իրականացնում են Միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի փուլ առ փուլ ձևավորումը զուգահեռ աշխատող էլեկտրաէներգետիկական համակարգերի հիման վրա՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 104-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված անցումային դրույթները:

2. Անդամ պետությունները մշակում են Միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման հայեցակարգն ու ծրագիրը, որոնք հաստատվում են Բարձրագույն խորհրդի կողմից:

3. Անդամ պետությունները Միության շրջանակներում կնքում են ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման մասին միջազգային պայմանագիր, որը հիմնված է Միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման հաստատված հայեցակարգի և ծրագրի դրույթների վրա:

Հոդված 82
էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովումը

1. Առկա տեխնիկական հնարավորության շրջանակներում անդամ պետություններն ապահովում են էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններից անարգել օգտվելու հնարավորություն՝ էլեկտրական էներգիայի (հզորության) մասով անդամ պետությունների ներքին պահանջներն ապահովելու համար նշված ծառայություններն առաջնահերթորեն օգտագործելու պայմանով՝ սույն Պայմանագրի 21-րդ հավելվածի համաձայն միասնական սկզբունքներին և կանոններին համապատասխան:

2. էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության սկզբունքներն ու կանոնները՝ ներառյալ սույն Պայմանագրի 21-րդ հավելվածում շարադրված գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքները գործում են Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության առնչությամբ: Նոր անդամների՝ Միությանն անդամակցելու դեպքում նշված հավելվածում համապատասխան փոփոխություններ են կատարվում:

Հոդված 83
Միության՝ գազի ընդհանուր շուկայի ձևավորումը և գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովումը

1. Անդամ պետություններն իրականացնում են Միության՝ գազի ընդհանուր շուկայի փուլ առ փուլ ձևավորումը 22-րդ հավելվածի համաձայն՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 104-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված անցումային դրույթները:

2. Անդամ պետությունները մշակում են Միության՝ գազի ընդհանուր շուկայի ձևավորման հայեցակարգն ու ծրագիրը, որոնք հաստատվում են Բարձրագույն խորհրդի կողմից:

3. Անդամ պետությունները Միության շրջանակներում կնքում են գազի ընդհանուր շուկայի ձևավորման մասին միջազգային պայմանագիր, որը հիմնված է Միության՝ գազի ընդհանուր շուկայի ձևավորման հաստատված հայեցակարգի ու ծրագրի դրույթների վրա:

4. Առկա տեխնիկական հնարավորությունների, գազափոխադրման համակարգերի ազատ հզորությունների սահմաններում, հաշվի առնելով Միության գազի համաձայնեցված ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը և հիմք ընդունելով տնտեսավարող սուբյեկտների քաղաքացիաիրավական պայմանագրերը՝ անդամ պետությունները, սույն Պայմանագրի 22-րդ հավելվածով նախատեսված միասնական սկզբունքների, պայմանների և կանոնների հիման վրա, ապահովում են գազի փոխադրման նպատակով անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերից անարգել օգտվելու՝ մյուս անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների հնարավորությունը:

Հոդված 84

Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորումն ու նավթի և նավթամթերքների փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովումը

1. Անդամ պետություններն իրականացնում են Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների փուլ առ փուլ ձևավորումը՝ սույն Պայմանագրի 23-րդ հավելվածի համաձայն՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 104-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված անցումային դրույթները:

2. Անդամ պետությունները մշակում են Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման հայեցակարգն ու ծրագիրը, որոնք հաստատվում են Բարձրագույն խորհրդի կողմից:

3. Անդամ պետությունները Միության շրջանակներում կնքում են նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման մասին միջազգային պայմանագիր, որը հիմնված է Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման հաստատված հայեցակարգի և ծրագրի դրույթների վրա:

4. Առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում, հաշվի առնելով Միության նավթի համաձայնեցված ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը, Միության նավթամթերքների համաձայնեցված ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը և հիմք ընդունելով տնտեսավարող սուբյեկտների քաղաքացիաիրավական պայմանագրերը՝ անդամ պետությունները, սույն Պայմանագրի 23-րդ հավելվածով նախատեսված միասնական սկզբունքների, պայմանների և կանոնների հիման վրա, ապահովում են անդամ պետությունների տարածքներում տեղակայված նավթի և նավթամթերքների փոխադրման համակարգերից անարգել օգտվելու՝ մյուս անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների հնարավորությունը:

Հոդված 85
էներգետիկայի ոլորտում Հանձնաժողովի լիազորությունները

էներգետիկայի ոլորտում Հանձնաժողովն իրականացնում է սույն բաժնի կատարման դիտանցում:

Բաժին XXI
ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Հոդված 86
Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականությունը

1. Միությունում իրականացվում է համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականություն, որն ուղղված է տնտեսական ինտեգրման ապահովմանը, միասնական տրանսպորտային տարածքի հետևողական և փուլ առ փուլ ձևավորմանը՝ մրցակցության, բաց լինելու, անվտանգության, հուսալիության, հասանելիության ու էկոլոգիականության սկզբունքների հիման վրա:

2. Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության խնդիրներն են՝

1) տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի ստեղծումը,

2) տրանսպորտի և լավագույն փորձի կիրառման ոլորտում ընդհանուր առավելությունների ապահովմանն ուղղված համաձայնեցված միջոցների ընդունումը,

3) անդամ պետությունների տրանսպորտային համակարգերի ինտեգրումը համաշխարհային տրանսպորտային համակարգին,

4) անդամ պետությունների տարանցիկ փոխադրման ներուժի արդյունավետ օգտագործումը,

5) տրանսպորտային ծառայությունների որակի բարձրացումը,

6) տրանսպորտում անվտանգության ապահովումը,

7) շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա տրանսպորտի վնասակար ազդեցության նվազեցումը,

8) բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը:

3. Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական գերակայություններն են՝

1) միասնական տրանսպորտային տարածքի ձևավորումը,

2) եվրասիական տրանսպորտային միջանցքների ստեղծումն ու զարգացումը,

3) Միության շրջանակներում տարանցիկ փոխադրման ներուժի օգտագործումը և զարգացումը,

4) տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման համակարգումը,

5) փոխադրման գործընթացների օպտիմալացումն ապահովող լոգիստիկ կենտրոնների և տրանսպորտային կազմակերպությունների ստեղծումը,

6) անդամ պետությունների կադրային ներուժի ներգրավումը և օգտագործումը,

7) տրանսպորտի ոլորտում գիտության և նորարարությունների զարգացումը:

4. Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականությունը ձևավորվում է անդամ պետությունների կողմից:

5. Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության հիմնական ուղղություններն ու իրականացման փուլերը սահմանվում են Բարձրագույն խորհրդի կողմից:

6. Անդամ պետությունների կողմից համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրագործման դիտանցումն իրականացնում է Հանձնաժողովը:

Հոդված 87
Կիրառության ոլորտը

1. Սույն բաժնի դրույթները կիրառվում են ավտոմոբիլային, օդային, ջրային և երկաթուղային տրանսպորտի նկատմամբ՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի XVIII և XIX բաժինների դրույթները և սույն Պայմանագրի 24-րդ հավելվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Անդամ պետությունները ձգտում են փուլ առ փուլ ազատականացնել անդամ պետությունների միջև տրանսպորտային ծառայությունները:

Ազատականացման կարգը, պայմանները և փուլայնությունը սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 24-րդ հավելվածով նախատեսված առանձնահատկությունները:

3. Տրանսպորտում անվտանգության (տրանսպորտային անվտանգության և տրանսպորտի շահագործման անվտանգության) պահանջները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով:

Բաժին XXII
ՊԵՏԱԿԱՆ (ՄՈՒՆԻՑԻՊԱԼ) ԳՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 88
Կարգավորման նպատակներն ու սկզբունքները պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում

1. Անդամ պետությունները պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում (այսուհետ՝ գնումներ) սահմանում են կարգավորման հետևյալ նպատակներն ու սկզբունքները՝

գնումների ոլորտում հարաբերությունների կարգավորում անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ և անդամ պետությունների միջազգային պայմանագրերով,

անդամ պետություններում գնումների նպատակով օգտագործվող միջոցների օպտիմալ և արդյունավետ ծախսման ապահովում,

անդամ պետություններին գնումների ոլորտում ազգային ռեժիմի տրամադրում,

գնումների ոլորտում երրորդ երկրներին՝ անդամ պետություններին տրամադրվող ռեժիմից առավել բարենպաստության ռեժիմի տրամադրման անթույլատրելիություն,

գնումների մասին բաց և թափանցիկ տեղեկությունների ապահովում,

էլեկտրոնային ձևով իրականացվող գնումներին՝ հնարավոր մատակարարների և անդամ պետությունների մատակարարների անարգել մասնակցության ապահովում՝ որևէ անդամ պետության կողմից մյուս անդամ պետության օրենսդրությանը համապատասխան պատրաստված էլեկտրոնային թվային ստորագրության փոխադարձ ճանաչման միջոցով,

գնումների ոլորտում անդամ պետության իշխանության՝ կարգավորող և վերահսկող լիազորված մարմինների առկայության ապահովում (թույլատրվում է այդ ֆունկցիաների իրականացումը մեկ մարմնի կողմից),

անդամ պետությունների՝ գնումների մասին օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության սահմանում,

գնումների ոլորտում մրցակցության խթանում, ինչպես նաև կոռուպցիային և այլ չարաշահումների հակազդում:

2. Սույն Պայմանագրի գործողությունը չի տարածվում այն գնումների վրա, որոնց վերաբերյալ տեղեկություններն անդամ պետությունների օրենսդրությամբ պետական գաղտնիք են համարվում:

3. Գնումներն անդամ պետություններում իրականացվում են սույն Պայմանագրի 25-րդ հավելվածի համաձայն:

4. Սույն բաժնի գործողությունը չի տարածվում անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի կողմից իրականացվող գնումների վրա՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդից չորրորդ պարբերությունների դրույթները:

Անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերը գնումներ են իրականացնում վարչատնտեսական կարիքներն ապահովելու, շինարարական աշխատանքներ և կապիտալ վերանորոգում կատարելու համար՝ գնումներ իրականացնելու իրենց ներքին կանոններին (այսուհետ՝ «Գնումների մասին» հիմնադրույթ) համապատասխան: «Գնումների մասին» հիմնադրույթը չպետք է հակասի սույն հոդվածում շարադրված նպատակներին ու սկզբունքներին, այդ թվում՝ պետք է հավասար հասանելիություն ապահովի անդամ պետությունների հավանական մատակարարների համար: Բացառիկ դեպքերում ազգային (կենտրոնական) բանկի բարձրագույն մարմնի որոշմամբ կարող են բացառումներ սահմանվել նշված սկզբունքներից:

«Գնումների մասին» հիմնադրույթը պետք է պարունակի գնումներին ներկայացվող պահանջները, այդ թվում՝ գնումների ընթացակարգերը նախապատրաստելու և իրականացնելու կարգը (ներառյալ գնման եղանակները) և դրանք կիրառելու պայմանները, պայմանագրեր կնքելու կարգը:

Ընդ որում, «Գնումների մասին» հիմնադրույթը և անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի կողմից պլանավորվող և իրականացված գնումների վերաբերյալ տեղեկությունները տեղադրվում են ինտերնետ ցանցում՝ անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի պաշտոնական կայքերում՝ «Գնումների մասին» հիմնադրույթով սահմանված կարգով:

Բաժին XXIII
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 89
Ընդհանուր դրույթներ

1. Անդամ պետությունները համագործակցում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության ու պաշտպանության ոլորտում և իրենց տարածքում ապահովում են դրանց նկատմամբ իրավունքների պահպանությունն ու պաշտպանությունը՝ Միության իրավունքը կազմող միջազգային իրավունքի նորմերին, միջազգային պայմանագրերին ու ակտերին և անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Անդամ պետությունների համագործակցությունն իրականացվում է հետևյալ հիմնական խնդիրները լուծելու համար՝

անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության ու պաշտպանության ոլորտում,

անդամ պետությունների՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունք ունեցող անձանց շահերի պաշտպանություն:

2. Անդամ պետությունների համագործակցությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) գիտական և նորարարական զարգացմանն աջակցություն,

2) մտավոր սեփականության օբյեկտների առևտրայնացման և օգտագործման մեխանիզմների կատարելագործում,

3) անդամ պետությունների՝ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերերի համար բարենպաստ պայմանների ստեղծում,

4) Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանների ու սպասարկման նշանների և Եվրասիական տնտեսական միության ապրանքների ծագման վայրի տեղանունների գրանցման համակարգի ներդրում,

5) մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության ապահովում, այդ թվում՝ ինտերնետ ցանցում,

6) մաքսային մարմնի կողմից՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովում, այդ թվում՝ անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստր վարելու միջոցով,

7) կեղծված արտադրանքի շրջանառությունը կանխարգելելուն և կանխելուն ուղղված համակարգված միջոցների իրականացում:

3. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների արդյունավետ պահպանություն ու պաշտպանություն ապահովելու նպատակներով անդամ պետությունների համար անցկացվում են Հանձնաժողովի կողմից կազմակերպվող խորհրդակցություններ:

Խորհրդակցությունների արդյունքների հիման վրա մշակվում են անդամ պետությունների համագործակցության ընթացքում հայտնաբերված խնդրահարույց հարցերի լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հոդված 90
Մտավոր սեփականության օբյեկտների իրավական ռեժիմը

1. Որևէ անդամ պետության անձանց մյուս անդամ պետության տարածքում տրամադրվում է ազգային ռեժիմ այն մասով, որը վերաբերում է մտավոր սեփականության օբյեկտների իրավական ռեժիմին: Դատական և վարչական ընթացակարգերի մասով անդամ պետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել ազգային ռեժիմից բացառություններ՝ ներառյալ նամակագրության համար հասցեի նշումը և ներկայացուցչի նշանակումը:

2. Անդամ պետությունները կարող են իրենց օրենսդրությամբ նախատեսել այնպիսի նորմեր, որոնք ապահովում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության ու պաշտպանության ավելի բարձր մակարդակ, քան նախատեսված է անդամ պետությունների նկատմամբ կիրառելի միջազգային իրավական ակտերով, ինչպես նաև Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով:

3. Անդամ պետությունները մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության ու պաշտպանության ոլորտում իրականացնում են գործունեություն՝ հետևյալ հիմնարար միջազգային պայմանագրերին համապատասխան՝

«Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին» 1886 թվականի սեպտեմբերի 9-ի Բեռնի կոնվենցիա (1971 թվականի խմբագրությամբ),

«Արտոնագրային գործընթացի նպատակով միկրոօրգանիզմների ավանդադրման միջազգային ճանաչման մասին» 1977 թվականի ապրիլի 28-ի Բուդապեշտի պայմանագիր,

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության՝ «Հեղինակային իրավունքի մասին» 1996 թվականի դեկտեմբերի 20-ի պայմանագիր,

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության՝ «Կատարումների և հնչյունագրերի մասին» 1996 թվականի դեկտեմբերի 20-ի պայմանագիր,

«Արտոնագրային իրավունքի մասին» 2000 թվականի հունիսի 1-ի պայմանագիր,

«Արտոնագրային համագործակցության մասին» 1970 թվականի հունիսի 19-ի պայմանագիր,

«Հնչյունագրեր արտադրողների իրավունքները իրենց հնչյունագրերի անօրինական պատճենահանումից պաշտպանելու մասին» 1971 թվականի հոկտեմբերի 29-ի կոնվենցիա,

«Նշանների միջազգային գրանցման մասին» 1891 թվականի ապրիլի 14-ի Մադրիդյան համաձայնագիր և «Նշանների միջազգային գրանցման մասին» Մադրիդյան համաձայնագրի 1989 թվականի հունիսի 28-ի արձանագրություն,

«Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին» 1961 թվականի հոկտեմբերի 26-ի միջազգային կոնվենցիա,

«Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1883 թվականի մարտի 20-ի Փարիզյան կոնվենցիա,

«Ապրանքային նշանների վերաբերյալ օրենքների մասին» 2006 թվականի մարտի 27-ի Սինգապուրի պայմանագիր:

Նշված միջազգային պայմանագրերի մասնակից չհանդիսացող անդամ պետություններն ստանձնում են դրանց միանալու պարտավորություն:

4. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության ու պաշտպանության ոլորտում հարաբերությունների կարգավորումը, այդ թվում՝ մտավոր սեփականության օբյեկտների առանձին տեսակների նկատմամբ կիրառող իրավական ռեժիմի առանձնահատկությունների սահմանումն իրականացվում են սույն Պայմանագրի 26-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 91
Իրավունքի կիրառությունը

1. Անդամ պետություններն իրավակիրառ միջոցներ են իրականացնում՝ ապահովելու համար մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

2. Անդամ պետություններն իրականացնում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողություններ, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին, ինչպես նաև Միության իրավունքը կազմող այն միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան, որոնցով կարգավորվում են մաքսային իրավահարաբերությունները:

3. Անդամ պետությունների՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության ոլորտում լիազորություններով օժտված լիազորված մարմինները համագործակցում և փոխգործակցում են՝ անդամ պետությունների տարածքներում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների խախտումները կանխարգելելուն, հայտնաբերելուն և կանխելուն ուղղված գործողությունները համակարգելու նպատակով:

Բաժին XXIV
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 92
Արդյունաբերական քաղաքականությունը և համագործակցությունը

1. Անդամ պետություններն ինքնուրույն մշակում, ձևավորում և իրականացնում են ազգային արդյունաբերական քաղաքականություն, այդ թվում՝ ձեռնարկում են արդյունաբերության զարգացման ազգային ծրագրեր և արդյունաբերական քաղաքականության այլ միջոցներ, ինչպես նաև սահմանում են արդյունաբերական սուբսիդիաների տրամադրման այնպիսի եղանակներ, ձևեր և ուղղություններ, որոնք չեն հակասում սույն Պայմանագրի 93-րդ հոդվածին:

Միության շրջանակներում անդամ պետությունները ձևավորում են արդյունաբերական քաղաքականություն՝ ըստ արդյունաբերական համագործակցության՝ Միջկառավարական խորհրդի կողմից հաստատվող հիմնական ուղղությունների, և իրականացնում են այն

Հանձնաժողովի կողմից տրամադրվող խորհրդատվական աջակցության և իրականացվող համակարգման միջոցով:

2. Միության շրջանակներում անդամ պետություններն արդյունաբերական քաղաքականությունն իրականացնում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) իրավահավասարություն և անդամ պետությունների ազգային շահերի հաշվի առնում,

2) փոխշահավետություն,

3) բարեխիղճ մրցակցություն,

4) անխտրականություն,

5) թափանցիկություն:

3. Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման նպատակներն են արդյունաբերական զարգացման արագացումը և կայունության բարձրացումը, անդամ պետությունների արդյունաբերական համալիրների մրցունակության բարձրացումը, նորարարական ակտիվության բարձրացմանն ուղղված արդյունավետ համագործակցության իրականացումը, արդյունաբերական ոլորտում, այդ թվում՝ անդամ պետությունների արդյունաբերական ապրանքների տեղաշարժման ճանապարհին խոչընդոտների վերացումը:

4. Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման նպատակներն իրագործելու համար անդամ պետությունները կարող են՝

1) միմյանց տեղեկացնել արդյունաբերության զարգացման պլանների մասին,

2) կազմակերպել անդամ պետությունների՝ ազգային արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու լիազորված մարմինների ներկայացուցիչների կանոնավոր հանդիպումներ (խորհրդակցություններ), այդ թվում՝ Հանձնաժողովի շրջանակներում,

3) մշակել և իրականացնել տնտեսական գործունեության՝ արդյունաբերական համագործակցության համար առաջնահերթ տեսակների զարգացման համատեղ ծրագրեր,

4) մշակել և համաձայնեցնել զգայուն ապրանքների ցանկը,

5) իրականացնել համատեղ նախագծեր, այդ թվում՝ անդամ պետությունների արդյունաբերական համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու և արդյունաբերական կոոպերացիան խորացնելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքի զարգացման ուղղությամբ,

6) զարգացնել տեխնոլոգիական և տեղեկատվական ռեսուրսներն արդյունաբերական համագործակցության նպատակների համար,

7) իրականացնել գիտահետազոտական և փորձակոնստրուկտորային համատեղ աշխատանքներ՝ բարձր տեխնոլոգիական արտադրությունները խթանելու նպատակով,

8) իրականացնել խոչընդոտների վերացմանը և փոխշահավետ համագործակցության զարգացմանն ուղղված այլ միջոցներ:

5. Անհրաժեշտության դեպքում սույն հոդվածի 4-րդ կետում նշված միջոցների իրականացման համապատասխան կարգեր են մշակվում՝ համաձայն Միջկառավարական խորհրդի որոշման:

6. Անդամ պետությունները մշակում են Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունները (այսուհետ՝ Հիմնական ուղղություններ), որոնք հաստատվում են Միջկառավարական խորհրդի կողմից, և որոնցում, ի թիվս այլոց, ներառված են տնտեսական գործունեության՝ արդյունաբերական համագործակցության համար առաջնահերթ տեսակները և զգայուն ապրանքները:

Հանձնաժողովը կատարում է Հիմնական ուղղությունների իրականացման տարեկան դիտանցում ու վերլուծություն և, անհրաժեշտության դեպքում, անդամ պետությունների հետ համաձայնեցնելով, պատրաստում է Հիմնական ուղղությունները ճշգրտելու վերաբերյալ առաջարկություններ:

7. Առևտրային, մաքսասակագնային, մրցակցային, պետական գնումների, տեխնիկական կանոնակարգման, ձեռնարկատիրական գործունեության, տրանսպորտի ու ենթակառուցվածքի և այլ ոլորտներում քաղաքականություն մշակելիս ու իրականացնելիս հաշվի են առնվում անդամ պետությունների արդյունաբերության զարգացման շահերը:

8. Նախքան արդյունաբերական քաղաքականության շրջանակներում միջոցներ ձեռնարկելը՝ անդամ պետությունները զգայուն ապրանքների մասով խորհրդակցություններ են անցկացնում՝ միմյանց դիրքորոշումները հաշվի առնելու նպատակով:

Անդամ պետությունները, զգայուն ապրանքների հաստատված ցանկի համաձայն, նախապես միմյանց տեղեկացնում են ազգային արդյունաբերական քաղաքականության իրականացման նախանշվող ուղղությունների մասին:

Անդամ պետությունները Հանձնաժողովի հետ մշակում են նշված խորհրդակցություններն անցկացնելու և (կամ) միմյանց տեղեկացնելու կարգը, որը հաստատվում է Հանձնաժողովի Խորհրդի կողմից:

9. Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցություն իրականացնելու նպատակով անդամ պետությունները Հանձնաժողովի կողմից տրամադրվող խորհրդատվական աջակցության և համակարգման միջոցով կարող են մշակել և կիրառել հետևյալ գործիքները՝

1) փոխշահավետ արդյունաբերական կոոպերացիայի խթանում բարձր տեխնոլոգիական, նորարարական և մրցունակ արտադրանք ստեղծելու նպատակով,

2) համատեղ ծրագրեր և նախագծեր անդամ պետությունների՝ փոխշահավետ հիմունքներով մասնակցությամբ,

3) համատեղ տեխնոլոգիական հարթակներ և արդյունաբերական համախմբեր,

4) այլ գործիքներ, որոնք նպաստում են արդյունաբերական համագործակցության զարգացմանը:

10. Սույն հոդվածը կատարելու համար անդամ պետությունները Հանձնաժողովի մասնակցությամբ կարող են մշակել լրացուցիչ փաստաթղթեր և մեխանիզմներ:

11. Հանձնաժողովն արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններով անդամ պետություններին տրամադրում է խորհրդատվական աջակցություն և համակարգում է նրանց գործունեությունը սույն Պայմանագրով սահմանված լիազորությունների շրջանակներում՝ համաձայն սույն Պայմանագրի 27-րդ հավելվածի:

Սույն հոդվածի նպատակների համար հասկացություններն օգտագործվում են սույն Պայմանագրի 27-րդ հավելվածին համապատասխան:

Հոդված 93
Արդյունաբերական սուբսիդիաները

1. Անդամ պետությունների տնտեսությունների կայուն և արդյունավետ զարգացման համար պայմաններ, ինչպես նաև անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի զարգացմանը և բարեխիղճ մրցակցությանը նպաստող պայմաններ ապահովելու նպատակներով անդամ պետությունների տարածքներում գործում են արդյունաբերական ապրանքների համար, այդ թվում՝ սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի համաձայն՝ արդյունաբերական ապրանքների արտադրության, իրացման և սպառման հետ անմիջականորեն կապված ծառայությունների մատուցման կամ ստացման դեպքում սուբսիդիաների տրամադրման միասնական կանոններ:

2. Սույն հոդվածից և սույն Պայմանագրի 28-րդ հավելվածից բխող՝ անդամ պետությունների պարտավորությունները չեն տարածվում անդամ պետությունների՝ երրորդ երկրների հետ իրավահարաբերությունների վրա:

3. Սույն հոդվածի նպատակներով՝ սուբսիդիա ասելով ենթադրվում է՝

ա) անդամ պետության սուբսիդիա տրամադրող մարմնի (կամ անդամ պետության կողմից լիազորված կառույցի) կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը, որի արդյունքում առավելություններ են ստեղծվում (ապահովվում), և որն իրականացվում է՝

դրամական միջոցների ուղղակի փոխանցման (օրինակ՝ անվերադարձ տրամադրվող փոխատվությունների, վարկերի) կամ կանոնադրական կապիտալում մասնաբաժին ձեռք բերելու կամ այն մեծացնելու կամ այդպիսի միջոցներ փոխանցելու պարտավորության (օրինակ՝ վարկային երաշխիքների) միջոցով,

այն վճարների գանձումից ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու միջոցով, որոնք պետք է մուտքագրվեին անդամ պետության եկամուտների կազմի մեջ (օրինակ՝ հարկային արտոնություններ, պարտքի դուրսգրում): Ընդ որում, արտահանվող արդյունաբերական ապրանքն այն տուրքերից և հարկերից ազատելը, որոնք գանձվում են ներքին սպառման համար

նախատեսված նույնանման ապրանքի համար, կամ այդպիսի տուրքերը և հարկերը նվազեցնելը, կամ այդպիսի տուրքերը և հարկերը փաստացի հաշվեգրված գումարը չգերազանցող չափով վերադարձնելը չի դիտարկվում որպես սուբսիդիա,

ապրանքների կամ ծառայությունների տրամադրման միջոցով (բացառությամբ ընդհանուր ենթակառուցվածքի պահպանման և զարգացման համար նախատեսված ապրանքների կամ ծառայությունների),

արդյունաբերական ապրանքներ ձեռք բերելու միջոցով.

բ) եկամուտների կամ գների պահպանման ցանկացած այլ ձև, որն (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) ազդում է ցանկացած անդամ պետության տարածքից արդյունաբերական ապրանքի ներմուծման ծավալների կրճատման կամ ցանկացած անդամ պետության տարածք արդյունաբերական ապրանքի արտահանման ծավալների մեծացման վրա, որի արդյունքում առավելություն է տրամադրվում:

Սուբսիդիաների տեսակները նախատեսվում են սույն Պայմանագրի 28-րդ հավելվածով:

4. Սուբսիդիա տրամադրող մարմինը ցանկացած այլ կազմակերպության կարող է հանձնարարել կամ պատվիրակել իրեն վերապահված մեկ կամ մի քանի՝ սուբսիդիաների տրամադրման հետ կապված գործառույթների իրականացումը: Այդպիսի կազմակերպության գործողությունները դիտարկվում են որպես սուբսիդիա տրամադրող մարմնի գործողություններ:

Անդամ պետության ղեկավարի՝ սուբսիդիաների տրամադրման վերաբերյալ ակտերը դիտարկվում են որպես սուբսիդիա տրամադրող մարմնի գործողություններ:

5. Անդամ պետության տարածքում տրամադրվող սուբսիդիաների՝ սույն հոդվածի և սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի դրույթների հետ համապատասխանության վերլուծության նպատակով ուսումնասիրությունն իրականացվում է սույն Պայմանագրի 28-րդ հավելվածով նախատեսված կարգով:

6. Հանձնաժողովն ապահովում է սույն հոդվածի և սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի դրույթների կատարման նկատմամբ հսկողությունը, և դրան վերապահվում են հետևյալ լիազորությունները՝

1) անդամ պետությունների օրենսդրության՝ սուբսիդիաների տրամադրման առնչությամբ սույն Պայմանագրի դրույթներին համապատասխանության մասով դիտանցման իրականացում և համեմատական-իրավական վերլուծության անցկացում, ինչպես նաև անդամ պետությունների կողմից սույն հոդվածի և սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի դրույթների պահպանման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների կազմում.

2) սուբսիդիաների տրամադրման բնագավառում անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման և միասնականացման հարցերի շուրջ անդամ պետությունների համար խորհրդակցությունների կազմակերպման գործընթացում աջակցության տրամադրում.

3) անդամ պետությունների կողմից պարտադիր կատարման ենթակա՝ սույն Պայմանագրի 28-րդ հավելվածով նախատեսված որոշումների ընդունում՝ տրամադրման համար նախատեսվող և տրամադրված հատուկ սուբսիդիաների կամավոր համաձայնեցման գործընթացի արդյունքների համաձայն, այդ թվում՝

հատուկ սուբսիդիաների թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ որոշման ընդունում՝ սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի 6-րդ կետին համապատասխան սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի 7-րդ կետով նախատեսված՝ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով սահմանված չափորոշիչների հիման վրա,

քննության անցկացում հատուկ սուբսիդիաների տրամադրման փաստերի հիման վրա և դրանց վերաբերյալ պարտադիր որոշումների ընդունում՝ սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի 7-րդ կետով նախատեսված՝ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում,

սույն հոդվածի և սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի դրույթների կատարման հետ կապված հարցերի շուրջ տարաձայնությունների լուծում և դրանց կիրառման վերաբերյալ պարզաբանումների տրամադրում.

4) սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի 7-րդ կետով նախատեսված՝ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով սահմանվող կարգով ու պայմաններով տրամադրվող սուբսիդիաների վերաբերյալ հարցումների ուղարկում և տեղեկությունների ստացում:

Սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը կիրառվում են՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անցումային դրույթները:

7. Սույն հոդվածի և սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի դրույթների հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցությունների ու խորհրդակցությունների միջոցով: Եթե վեճը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով չի կարգավորվում դրանց անցկացման վերաբերյալ՝ վեճն սկսած անդամ պետության կողմից պատասխանող պետությանը հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում, ապա հայցվոր պետությունն իրավունք ունի այդ վեճը հանձնելու Միության դատարանի քննությանը:

Եթե Միության դատարանի որոշումները սահմանված ժամկետում չեն կատարվում, կամ եթե Միության դատարանը որոշում է, որ այն միջոցները, որոնց մասին տեղեկացրել է պատասխանող պետությունը, չեն համապատասխանում սույն հոդվածի և սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի դրույթներին, ապա հայցվոր պետությունն իրավունք ունի ձեռնարկելու համաչափ պատասխան միջոցներ:

8. Այն ժամկետը, որի ընթացքում անդամ պետությունները կարող են վիճարկել սույն Պայմանագրի 28-րդ հավելվածի խախտմամբ տրամադրված հատուկ սուբսիդիան, հատուկ սուբսիդիայի տրամադրման ամսաթվից հաշվարկված 5 տարի է:

Բաժին XXV
ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Հոդված 94
Համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության նպատակներն ու խնդիրները

1. Ագրոարդյունաբերական համալիրը և գյուղական տարածքներն ի նպաստ յուրաքանչյուր անդամ պետության և ընդհանրապես Միության բնակչության շահերի զարգացնելու, ինչպես նաև Միության շրջանակներում տնտեսական ինտեգրումն ապահովելու նպատակներով իրականացվում է համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականություն, ինչը ենթադրում է նաև սույն Պայմանագրով և ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում Միության շրջանակներում կնքվող միջազգային այլ պայմանագրերով նախատեսված կարգավորման մեխանիզմների կիրառում, անդամ պետությունների կողմից միմյանց և Հանձնաժողովին այն «զգայուն» գյուղատնտեսական ապրանքներից յուրաքանչյուրի արտադրության զարգացման պլանների (ծրագրերի) տրամադրում, որոնց ցանկը կազմվում է անդամ պետությունների առաջարկությունների հիման վրա և հաստատվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

2. Համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության հիմնական նպատակը մրցունակ գյուղատնտեսական արտադրանքի և պարենի արտադրության ծավալների օպտիմալացման համար անդամ պետությունների ռեսուրսային ներուժի արդյունավետ իրացումը, ընդհանուր ագրարային շուկայի կարիքների բավարարումը, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի և պարենի արտահանման ավելացումն է:

3. Համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության իրականացմամբ ապահովվում է հետևյալ խնդիրների լուծումը՝

1) գյուղատնտեսական արտադրանքի և պարենի արտադրության ու շուկաների հավասարակշռված զարգացում,

2) անդամ պետությունների սուբյեկտների միջև արդար մրցակցության, այդ թվում՝ ագրարային շուկայի հասանելիության հավասար պայմանների ապահովում,

3) գյուղատնտեսական արտադրանքի և պարենի շրջանառության հետ կապված պահանջների միասնականացում,

4) ներքին և արտաքին շուկաներում անդամ պետությունների արտադրողների շահերի պաշտպանություն:

Հոդված 95

Համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության հիմնական ուղղությունները և գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցները

1. Համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության խնդիրների լուծումը ենթադրում է միջպետական փոխգործակցության մեխանիզմների կիրառում հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) ագրոարդյունաբերական համալիրում կանխատեսումների իրականացում,

2) գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցություն,

3) ընդհանուր ագրարային շուկայի կարգավորում,

4) արտադրանքի արտադրության և շրջանառության ոլորտում միասնական պահանջների մշակում,

5) գյուղատնտեսական արտադրանքի և պարենի արտահանման զարգացում,

6) ագրոարդյունաբերական համալիրի գիտական ու նորարարական գործունեության զարգացում,

7) ագրոարդյունաբերական համալիրի ինտեգրացված տեղեկատվական ապահովում:

2. Համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության շրջանակներում միջոցների իրականացման նպատակով տարին մեկ անգամից ոչ պակաս անդամ պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվում են Հանձնաժողովի կողմից կազմակերպվող կանոնավոր խորհրդակցություններ, այդ թվում՝ «զգայուն» գյուղատնտեսական ապրանքների վերաբերյալ: Խորհրդակցությունների արդյունքների հիման վրա սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմնական ուղղությունների շրջանակներում մշակվում են համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության իրականացման հետ կապված առաջարկություններ:

3. Համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականությունն իրականացնելիս անդամ պետությունները հաշվի են առնում գյուղատնտեսության ոլորտի գործունեության առանձնահատուկ բնույթը, որը պայմանավորված է ոչ միայն ճյուղի արդյունաբերական, տնտեսական, այլ նաև դրա սոցիալական նշանակությամբ, անդամ պետությունների տարածաշրջանների ու տարածքների միջև կառուցվածքային ու բնակլիմայական պայմանների տարբերություններով:

4. Ինտեգրացիոն փոխգործակցության այլ ոլորտներում, այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի և պարենի նկատմամբ սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) միջոցառումների ապահովման ոլորտում քաղաքականությունն իրականացվում է՝ հաշվի առնելով համաձայնեցված (համակարգված) քաղաքականության ագրոարդյունաբերական նպատակները, խնդիրներն ու ուղղությունները:

5. Միության շրջանակներում գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցությունն իրականացվում է սույն Պայմանագրի 29-րդ հավելվածով սահմանված մոտեցումներին համապատասխան:

6. Սույն հոդվածի և սույն Պայմանագրի 29-րդ հավելվածի հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, Հանձնաժողովի մասնակցությամբ անցկացվող բանակցությունների ու խորհրդակցությունների միջոցով: Եթե վեճը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով չի կարգավորվում դրանց անցկացման վերաբերյալ՝ վեճն սկսած անդամ պետության կողմից որպես պատասխանող պետությանը հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում, ապա հայցվոր պետությունն իրավունք ունի այդ վեճը հանձնելու Միության դատարանի քննությանը:

Բանակցություններ և խորհրդակցություններ անցկացնելու վերաբերյալ պաշտոնական գրավոր դիմում ներկայացնելու դեպքում հայցվոր անդամ պետությունն այդպիսի դիմումը ներկայացնելու օրվանից 10 օրացուցային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է Հանձնաժողովին:

7. Համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության իրականացման համար Հանձնաժողովը՝

1) անդամ պետությունների հետ, վերապահված լիազորությունների շրջանակներում, մշակում, համակարգում և իրականացնում է համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության հիմնական ուղղությունները,

2) համակարգում է անդամ պետությունների կողմից՝ ագրոարդյունաբերական համալիրի զարգացման, գյուղատնտեսական արտադրանքի և պարենի պահանջարկի ու առաջարկի վերաբերյալ համատեղ կանխատեսումներ պատրաստելու ժամանակ իրականացվող գործունեությունը,

3) համակարգում է անդամ պետությունների կողմից ագրոարդյունաբերական համալիրի և դրա առանձին ճյուղերի զարգացման ծրագրերը միմյանց տրամադրելու գործընթացը,

4) դիտանցում է անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրների զարգացման, անդամ պետությունների կողմից ագրոարդյունաբերական համալիրների պետական կարգավորման միջոցների, այդ թվում՝ գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցների կիրառումը,

5) անցկացնում է արտադրվող արտադրանքի գնի դիտարկում և մրցունակության վերլուծություն՝ ըստ անդամ պետությունների կողմից համաձայնեցված անվանացանկի,

6) աջակցում է ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում անդամ պետությունների օրենսդրության, այդ թվում՝ գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ոլորտում օրենսդրության ներդաշնակեցմանը, ինչպես նաև գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ոլորտում պարտավորությունների պահպանման հետ կապված վեճերի կարգավորման հարցերով խորհրդակցությունների և բանակցությունների կազմակերպմանը,

7) իրականացնում է գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ոլորտում անդամ պետությունների օրենսդրության դիտանցում և համեմատական-իրավական վերլուծություն՝ Միության շրջանակներում ստանձնված պարտավորություններին դրա համապատասխանության մասով,

8) պատրաստում և անդամ պետություններին է տրամադրում ագրոարդյունաբերության համալիրի և անդամ պետություններում գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ոլորտում պետական քաղաքականության վերաբերյալ համառոտ ակնարկներ, այդ թվում՝ գյուղատնտեսական աջակցության արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ,

9) աջակցություն է ցուցաբերում անդամ պետություններին գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծավալների հաշվարկման հետ կապված հարցերում,

10) անդամ պետությունների հետ մշակում է ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում արտահանման ներուժի զարգացմանն ուղղված համաձայնեցված գործողությունների իրականացման վերաբերյալ առաջարկություններ,

11) համակարգում է ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում անդամ պետությունների կողմից համատեղ գիտանորարարական գործունեության իրականացման ժամանակ, այդ թվում՝ անդամ պետությունների կողմից միջպետական ծրագրերի իրագործման շրջանակներում կատարվող գործողությունները,

12) համակարգում է անդամ պետությունների կողմից՝ տոհմային կենդանիներից ստացվող արտադրանքի ներմուծման, արտահանման և Միության մաքսային տարածքով տեղափոխման պայմանների, տոհմային կենդանիների տոհմային արժեքի սահմանման մեթոդների, ինչպես նաև տոհմային վկայականների (հավաստագրերի, անձնագրերի) ձևերի հետ կապված միասնականացված պահանջների մշակման և կատարման գործընթացը,

13) համակարգում է գյուղատնտեսական բույսերի սորտափորձարկման և սերմնաբուծության, ինչպես նաև անդամ պետությունների կողմից՝ սերմերի սորտային ու ցանքային որակը հաստատող փաստաթղթերի փոխադարձ ճանաչման ոլորտում միասնականացված պահանջների մշակման և կատարման գործընթացը,

14) աջակցություն է ցուցաբերում համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում հավասար մրցակցային պայմանների ապահովման հարցում:

Բաժին XXVI
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ

Հոդված 96
Աշխատանքային միգրացիայի ոլորտում անդամ պետությունների համագործակցությունը

1. Անդամ պետությունները համագործակցում են՝ Միության շրջանակներում աշխատանքային միգրացիայի կարգավորման ոլորտում քաղաքականությունը համաձայնեցնելու, ինչպես նաև անդամ պետություններում աշխատանքային գործունեություն իրականացնելու համար անդամ պետությունների աշխատավորների կազմակերպված հավաքագրման և ներգրավման հարցում աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. Աշխատանքային միգրացիայի ոլորտում անդամ պետությունների համագործակցությունն իրականացվում է անդամ պետությունների այն պետական մարմինների փոխգործակցության միջոցով, որոնց իրավասության շրջանակներում են համապատասխան հարցերը:

3. Միության շրջանակներում անդամ պետությունների՝ աշխատանքային միգրացիայի ոլորտում համագործակցությունն իրականացվում է հետևյալ եղանակներով՝

1) աշխատանքային միգրացիայի ոլորտում ընդհանուր մոտեցումների և սկզբունքների համաձայնեցում,

2) նորմատիվ իրավական ակտերի փոխանակում,

3) տեղեկությունների փոխանակում,

4) ոչ հավաստի տեղեկությունների տարածումը կանխարգելելուն ուղղված միջոցների իրականացում,

5) փորձի փոխանակում, ստաժավորումների, սեմինարների և վերապատրաստման դասընթացների անցկացում,

6) խորհրդատվական մարմինների շրջանակներում համագործակցություն:

4. Միգրացիայի ոլորտում անդամ պետությունների համաձայնեցմամբ կարող են համագործակցության այլ ձևեր սահմանվել:

5. Սույն բաժնում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

մուտքի պետություն՝ անդամ պետություն, որի տարածք մեկնում է մյուս անդամ պետության քաղաքացին,

մշտական բնակության պետություն՝ անդամ պետություն, որի քաղաքացին է համարվում անդամ պետության աշխատավորը,

աշխատանքի տեղավորման պետություն՝ անդամ պետություն, որի տարածքում աշխատանքային գործունեություն է իրականացվում,

կրթության մասին փաստաթղթեր՝ կրթության մասին պետական նմուշի փաստաթղթեր, ինչպես նաև կրթության մասին փաստաթղթեր, որոնք ճանաչվում են կրթության մասին պետական փաստաթղթերին համարժեք,

աշխատանքի (ծառայությունների) պատվիրատու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն անդամ պետության աշխատավորին տրամադրում է աշխատանք նրա հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա՝ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և պայմաններով,

միգրացիոն քարտ (թերթիկ)՝ փաստաթուղթ, որը տեղեկություններ է պարունակում մյուս անդամ պետության տարածք մուտք գործող անդամ պետության քաղաքացու մասին, և օգտագործվում է նրան հաշվառելու ու մուտքի պետության տարածքում նրա ժամանակավոր գտնվելու ընթացքում հսկողություն իրականացնելու համար,

գործատու՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն անդամ պետության աշխատավորին աշխատանք է տրամադրում նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա՝ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և պայմաններով,

սոցիալական ապահովություն (սոցիալական ապահովագրություն)՝ ժամանակավոր անաշխատունակության և մայրանալու դեպքում պարտադիր ապահովագրություն, արտադրական դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրություն ու պարտադիր բժշկական ապահովագրություն,

աշխատանքային գործունեություն՝ աշխատանքային պայմանագրի հիման վրա իրականացվող գործունեություն կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) հետ կապված գործունեություն, որն իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության տարածքում՝ տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան,

անդամ պետության աշխատավոր՝ անդամ պետության քաղաքացի հանդիսացող անձ, որն օրինական հիմքով գտնվում և օրինական հիմքով աշխատանքային գործունեություն է իրականացնում աշխատանքի տեղավորման պետության տարածքում, սակայն այդ պետության քաղաքացին չէ և այդ պետությունում մշտական բնակություն չի հաստատել,

ընտանիքի անդամ՝ անձ, որն ամուսնացած է անդամ պետության աշխատավորի հետ, ինչպես նաև նրա խնամքի տակ գտնվող երեխաները և այլ անձինք, որոնք աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը համապատասխան համարվում են ընտանիքի անդամներ:

Հոդված 97
Անդամ պետությունների աշխատավորների աշխատանքային գործունեությունը

1. Անդամ պետության գործատուները և (կամ) աշխատանքների (ծառայությունների) պատվիրատուներն իրավունք ունեն անդամ պետությունների աշխատավորներին ներգրավելու աշխատանքային գործունեության մեջ՝ առանց հաշվի առնելու աշխատանքի ազգային շուկայի պաշտպանության մասով առկա սահմանափակումները: Ընդ որում, անդամ պետությունների աշխատավորները կարող են աշխատանքային գործունեություն իրականացնել աշխատանքի տեղավորման պետությունում առանց աշխատանքի թույլտվության:

2. Անդամ պետությունները չեն սահմանում և չեն կիրառում աշխատանքի ազգային շուկայի պաշտպանության նպատակով իրենց օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումները՝ բացառությամբ անդամ պետության աշխատավորների կողմից իրականացվող աշխատանքային գործունեության, գործունեության տեսակի և գտնվելու տարածքի առնչությամբ սույն Պայմանագրով և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների, որոնք ուղղված են ազգային անվտանգության (այդ թվում՝ ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսության ճյուղերում) և հասարակական կարգի ապահովմանը:

3. Աշխատանքի տեղավորման պետությունում անդամ պետությունների աշխատավորների կողմից աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով անդամ պետությունների կրթական կազմակերպությունների (կրթական հաստատությունների, կրթության ոլորտում գործող կազմակերպությունների) կողմից տրված՝ կրթության մասին փաստաթղթերը ճանաչվում են՝ առանց աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ սահմանված՝ կրթության մասին փաստաթղթերի ճանաչման ընթացակարգերի անցկացման:

Որևէ անդամ պետության աշխատավորները, որոնք մյուս անդամ պետությունում հավակնում են զբաղվել մանկավարժական, իրավաբանական, բժշկական կամ դեղագործական գործունեությամբ, անցնում են աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ սահմանված կրթության մասին փաստաթղթերի ճանաչման ընթացակարգը, և արդյունքում նրանց կարող է թույլատրվել զբաղվել համապատասխանաբար մանկավարժական, իրավաբանական, բժշկական կամ դեղագործական գործունեությամբ՝ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը համապատասխան:

Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տրված գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին փաստաթղթերը ճանաչվում են աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը համապատասխան:

Գործատուները (աշխատանքների (ծառայությունների) պատվիրատուները) իրավունք ունեն պահանջելու կրթության մասին փաստաթղթերի՝ աշխատանքի տեղավորման պետության լեզվով՝ նոտարական կարգով վավերացված թարգմանությունը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, անդամ պետության աշխատավորի կրթության մասին փաստաթղթերի ստուգման նպատակներով հարցումներ ուղարկելու կրթության մասին փաստաթուղթ տրամադրած կրթական կազմակերպություններ (կրթական հաստատություններ, կրթության ոլորտում գործող կազմակերպություններ), այդ թվում՝ տեղեկատվական տվյալների բազայից օգտվելու միջոցով, և ստանալու համապատասխան պատասխաններ:

4. Անդամ պետության աշխատավորի աշխատանքային գործունեությունը կարգավորվում է աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի դրույթները:

5. Աշխատանքի տեղավորման պետության տարածքում անդամ պետության աշխատավորի և ընտանիքի անդամների ժամանակավոր գտնվելու (բնակության) ժամկետը որոշվում է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի գործողության ժամկետով, որն անդամ պետության աշխատավորը կնքել է գործատուի կամ աշխատանքների (ծառայությունների) պատվիրատուի հետ:

6. Որևէ անդամ պետության՝ աշխատանքային գործունեություն իրականացնելու կամ աշխատանքի տեղավորվելու նպատակներով մյուս անդամ պետության տարածք ժամանած քաղաքացիները և նրանց ընտանիքների անդամները մուտք գործելու ամսաթվից հաշվարկված 30 օր ազատվում են գրանցման (հաշվառման կանգնելու) պարտավորությունից:

Եթե անդամ պետության քաղաքացիները մյուս անդամ պետության տարածքում գտնվում են մուտք գործելու ամսաթվից հաշվարկված 30 օրից ավելի ժամկետով, ապա այդ քաղաքացիները պետք է գրանցվեն (հաշվառման կանգնեն) մուտքի պետության օրենսդրությանը համապատասխան, եթե մուտքի պետության օրենսդրությամբ այդպիսի պարտավորություն է սահմանվում:

7. Անդամ պետության քաղաքացիները մուտքի պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մյուս անդամ պետության տարածք մուտք գործելիս միգրացիոն քարտեր (թերթիկներ) են օգտագործում, եթե այլ բան նախատեսված չէ անդամ պետությունների առանձին միջազգային պայմանագրերով:

8. Եթե անդամ պետության քաղաքացիները մյուս անդամ պետության տարածք մուտք են գործում սահմանային վերահսկողության մարմնի կողմից պետական սահմանը հատելու վերաբերյալ նշում կատարելու իրավունք տվող վավեր փաստաթղթերից որևէ մեկով, ապա նրանք ազատվում են միգրացիոն քարտ (թերթիկ) օգտագործելուց, եթե նման պարտավորություն սահմանված է մուտքի պետության օրենսդրությամբ՝ պայմանով, որ նրանց գտնվելու ժամկետը չի գերազանցում մուտք գործելու ամսաթվից հաշվարկված 30 օրը:

9. Եթե աշխատանքի տեղավորման պետության տարածք մուտք գործելու ամսաթվից հաշվարկված 90 օրը լրանալուց հետո աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է, ապա անդամ պետության աշխատավորն իրավունք ունի 15 օրվա ընթացքում կնքելու նոր աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր՝ առանց աշխատանքի տեղավորման պետության տարածքից դուրս գալու:

Հոդված 98
Անդամ պետության աշխատավորի իրավունքներն ու պարտականությունները

1. Անդամ պետության աշխատավորն իրավունք ունի զբաղվելու մասնագիտական գործունեությամբ՝ սույն Պայմանագրի և աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը համապատասխան ճանաչվող՝ կրթության մասին փաստաթղթերում, գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում շնորհելու մասին փաստաթղթերում նշված մասնագիտությանը և որակավորմանը համապատասխան:

2. Անդամ պետության աշխատավորը և նրա ընտանիքի անդամներն աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են՝

1) իրենց պատկանող գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը,

2) սեփականության պաշտպանության իրավունքը,

3) դրամական միջոցներն անարգել փոխանցելու իրավունքը:

3. Անդամ պետությունների աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը (սոցիալական ապահովագրությունը) (բացի կենսաթոշակային ապահովությունից) իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների նկատմամբ կիրառվող նույն պայմաններով և նույն կարգով:

Անդամ պետությունների աշխատավորների աշխատանքային (ապահովագրական) ստաժը հաշվարկվում է ընդհանուր աշխատանքային (ապահովագրական) ստաժում՝ սոցիալական ապահովության (սոցիալական ապահովագրության) նպատակներով՝ բացի կենսաթոշակային ապահովությունից՝ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը համապատասխան:

Անդամ պետությունների աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովությունը կարգավորվում է մշտական բնակության պետության օրենսդրությամբ, ինչպես նաև անդամ պետությունների միջև կնքվող առանձին միջազգային պայմանագրին համապատասխան:

4. Անդամ պետությունների աշխատավորների և նրանց ընտանիքների անդամների՝ շտապ բժշկական օգնություն (արտակարգ և անհետաձգելի վիճակներում) և այլ բժշկական օգնություն ստանալու իրավունքը կարգավորվում է 30-րդ հավելվածով, ինչպես նաև աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ և այն միջազգային պայմանագրերով սահմանված կարգով, որոնց մասնակիցն է այդ պետությունը:

5. Անդամ պետությունների աշխատավորն իրավունք ունի անդամագրվելու արհեստակցական միություններին՝ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների հետ հավասար հիմունքներով:

6. Անդամ պետության աշխատավորն ունի աշխատանքի տեղավորման պետության պետական մարմինների (որոնց իրավասության շրջանակում են համապատասխան հարցերը) և գործատուի (աշխատանքների (ծառայությունների) պատվիրատուի) կողմից այնպիսի տեղեկություններ ստանալու իրավունք, որոնք վերաբերում են իր կացության կարգին, աշխատանքային գործունեության իրականացման պայմաններին, ինչպես նաև աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ նախատեսված իրավունքներին ու պարտականություններին:

7. Անդամ պետության աշխատավորի (այդ թվում՝ նախկին աշխատավորի) պահանջով գործատուն (աշխատանքների (ծառայությունների) պատվիրատուն) պարտավոր է նրան անհատույց տրամադրել տեղեկանք (տեղեկանքներ) և (կամ) տեղեկանքի (տեղեկանքների) հաստատված պատճենը՝ նշելով մասնագիտության (մասնագիտացման, որակավորման և պաշտոնի), աշխատանքի ժամանակահատվածի և աշխատավարձի չափի մասին՝ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

8. Անդամ պետության աշխատավորի երեխաները, որոնք նրա հետ բնակվում են աշխատանքի տեղավորման պետության տարածքում, իրավունք ունեն հաճախելու նախադպրոցական հաստատություններ, ստանալու կրթություն՝ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը համապատասխան:

9. Անդամ պետության աշխատավորները և նրանց ընտանիքների անդամները պարտավոր են պահպանել աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությունը, հարգել աշխատանքի տեղավորման պետության ժողովրդների մշակույթն ու ավանդույթները, պատասխանատվություն կրել իրավախախտումներ կատարելու համար՝ աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը համապատասխան:

10. Անդամ պետության աշխատավորի եկամուտները, որոնք նա ստացել է աշխատանքի տեղավորման պետության տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնելու համար, ենթակա են հարկման միջազգային պայմանագրերի և աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի դրույթները:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԲԱԺԻՆ XXVII
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 99
Ընդհանուր անցումային դրույթներ

1. Անդամ պետությունների միջազգային պայմանագրերը, որոնք կնքվել են Մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում և գործում են սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ, կազմում են Միության իրավունքի մաս՝ որպես Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրեր և կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Պայմանագրին:

2. Պետությունների ղեկավարների մակարդակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի ընդունած որոշումները, կառավարությունների ղեկավարների մակարդակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ընդունած որոշումները, որոնք գործում են սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ, պահպանում են իրենց իրավաբանական ուժը և կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Պայմանագրին:

3. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից՝

պետությունների ղեկավարների մակարդակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և կառավարությունների ղեկավարների մակարդակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի գործառույթներն ու լիազորությունները, որոնք գործում էին «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրին համապատասխան, իրականացվում են համապատասխանաբար սույն Պայմանագրին համապատասխան գործող Բարձրագույն խորհրդի և Միջկառավարական խորհրդի կողմից,

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրին համապատասխան ստեղծված Եվրասիական տնտեսական հանձնաժողովն իրականացնում է իր գործունեությունը՝ սույն Պայմանագրին համապատասխան,

Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, որոնք նշանակվել են սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց առաջ, շարունակում են իրականացնել իրենց գործառույթները մինչև իրենց լիազորությունների այն ժամկետի ավարտը, որով նրանք նշանակվել են,

դեպարտամենտների տնօրենները և տնօրենների տեղակալները, որոնց հետ աշխատանքային պայմանագրերը կնքվել են մինչև սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը, շարունակում են կատարել իրենց վերապահված պարտականությունները մինչև աշխատանքային պայմանագրերով նախատեսված ժամկետի ավարտը,

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներում թափուր հաստիքների համալրումն իրականացվում է սույն Պայմանագրով նախատեսված կարգով:

4. Միության շրջանակներում գործում են նաև սույն Պայմանագրի 31-րդ հավելվածում նշված միջազգային պայմանագրերը:

Հոդված 100
VII բաժնին առնչվող անցումային դրույթներ

1. Միության շրջանակներում դեղամիջոցների ընդհանուր շուկան սկսում է գործել 2016 թվականի հունվարի 1-ից Միության շրջանակներում կնքվող՝ դեղամիջոցների շրջանառության միասնական սկզբունքներ և կանոններ սահմանող միջազգային պայմանագրին համապատասխան, որը պետք է կնքվի անդամ պետությունների կողմից ոչ ուշ, քան 2015 թվականի հունվարի 1-ը:

2. Միության շրջանակներում բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) ընդհանուր շուկան սկսում է գործել 2016 թվականի հունվարի 1-ից Միության շրջանակներում կնքվող՝ բժշկական ապրանքների (բժշկական նշանակության ապրանքների և բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքներ և կանոններ սահմանող միջազգային պայմանագրին համապատասխան, որը պետք է կնքվի անդամ պետությունների կողմից ոչ ուշ, քան 2015 թվականի հունվարի 1-ը:

Հոդված 101
VIII բաժնին առնչվող անցումային դրույթներ

1. Նախքան Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ Միությունում մաքսային կարգավորումն իրականացվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրին և անդամ պետությունների՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող այլ միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնք կնքվել են Մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում և որոնք, սույն

Պայմանագրի 99-րդ հոդվածին համապատասխան, կազմում են Միության իրավունքի մաս՝ հաշվի առնելով սույն հոդվածի դրույթները:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված միջազգային պայմանագրերի կիրառման նպատակներով դրանցում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

Մաքսային միության անդամ պետություններ՝ անդամ պետություններ՝ սույն Պայմանագրով սահմանված իմաստով,

Մաքսային միության միասնական մաքսային տարածք (Մաքսային միության մաքսային տարածք)՝ Միության մաքսային տարածք,

Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկ (Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ)՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ,

Մաքսային միության միասնական մաքսային սակագին՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագին,

Մաքսային միության հանձնաժողով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողով,

Մաքսային միության անդամ պետությունների կողմից կնքվող միջազգային պայմանագրեր՝ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրեր, այդ թվում՝ անդամ պետությունների կողմից կնքվող միջազգային պայմանագրեր, որոնք, սույն Պայմանագրի 99-րդ հոդվածին համապատասխան, կազմում եմ Միության իրավունքի մասը,

Մաքսային միության մաքսային սահման (մաքսային սահման)՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահման,

Մաքսային միության ապրանք՝ Եվրասիական տնտեսական միության ապրանք:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված միջազգային պայմանագրերի կիրառման նպատակներով ոչ սակագնային կարգավորման միջոցները (այդ թվում՝ ընդհանուր բացառությունների, արտաքին ֆինանսական վիճակի պաշտպանության և վճարային հաշվեկշռի հավասարակշռության միակողմանիորեն ապահովման նպատակներով ներմուծվող միջոցները), տեխնիկական կանոնակարգման միջոցները, արտահանման վերահսկողության միջոցներն ու ռազմական նշանակության արտադրանքի նկատմամբ կիրառվող միջոցները, ինչպես նաև սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներն ու ճառագայթային անվտանգության պահանջները համարվում են Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ կիրառվող արգելքներ և սահմանափակումներ:

Ընդ որում, ոչ սակագնային կարգավորման միջոցների, այդ թվում՝ ընդհանուր բացառությունների, արտաքին ֆինանսական վիճակի պաշտպանության և վճարային հաշվեկշռի հավասարակշռության միակողմանիորեն ապահովման նպատակներով ներմուծվող միջոցներին են դասվում սույն Պայմանագրի 46-րդ և 47-րդ հոդվածներով սահմանված միջոցները:

Սույն հոդվածի 1-ին կետում նշված միջազգային պայմանագրերի դրույթները չեն կիրառվում՝ բացառությամբ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի, որոնք վերաբերում են արգելքներ և սահմանափակումներ սահմանելուն և կիրառելուն (չկիրառելուն):

Միության մաքսային սահմանով ապրանքների, այդ թվում՝ անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման դեպքում և (կամ) ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս արգելքների ու սահմանափակումների պահպանումը հաստատվում է Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում և կարգով կամ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով՝ սույն Պայմանագրին համապատասխան կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված դեպքերում և կարգով արգելքների ու սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ ներկայացնելու միջոցով:

Միության մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական, սանիտարահամաճարակային, ճառագայթային և պետական հսկողության (վերահսկողության) մյուս եղանակներն իրականացվում և ձևակերպվում են՝ սույն Պայմանագրին կամ Պայմանագրին համապատասխան ընդունված՝ Հանձնաժողովի ակտերին կամ անդամ պետությունների

նորմատիվ իրավական ակտերին կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը վարելու մասով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 51-րդ հոդվածը կիրառվում է՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 45-րդ հոդվածի դրույթները:

5. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 7-րդ գլուխը կիրառվում է՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 37-րդ հոդվածի դրույթները:

6. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ կետը չի կիրառվում:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը սահմանվում են սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան և գանձվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքով նախատեսված կարգով ներմուծման մաքսատուրք գանձելու նպատակով՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 48-րդ և 49-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև հաշվի առնելով հետևյալը՝

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս, որոնց պայմաններով, սույն հոդվածի 1-ին կետում նշված միջազգային պայմանագրերին համապատասխան, սահմանափակումներ են նախատեսվում հատուկ պաշտպանական, հակագնագցման, փոխհատուցման միջոցներ կիրառելիս,

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկը, այդ տուրքերի վճարման պարտավորությունների առաջացումը և դադարումը, դրանց վճարման կարգի և ժամկետների սահմանումն իրականացվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքով ներմուծման մաքսատուրքերի համար նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն Պայմանագրով սահմանված առանձնահատկությունները:

«Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների կիրառման մասին» արձանագրության 104-րդ և 169-րդ կետերին համապատասխան (սույն Պայմանագրի 8-րդ հավելված) հակագնագցման կամ փոխհատուցման տուրքեր կիրառելիս հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման «Հակագնագցման կամ փոխհատուցման տուրքերի կիրառման մասին» Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 30 աշխատանքային օրվանից ոչ ուշ, ինչպես նաև հաշվեգրման ու բաշխման՝ նշված Արձանագրության հավելվածով սահմանված կարգով:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ժամկետների փոփոխություն՝ վճարումը երկարաձգելու կամ տարաժամկետ կատարելու ձևով, չի թույլատրվում:

Սահմանված ժամկետներում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը չվճարելու կամ ոչ ամբողջությամբ վճարելու դեպքում դրանց գանձումն իրականացվում է այն անդամ պետության՝ ներմուծման մաքսատուրքերի գանձման համար օրենսդրությամբ նախատեսված կարգով, որի մաքսային մարմինն իրականացնում է մաքսատուրքերի, հարկերի գանձում՝ տույժերի հավելագրմամբ: Ընդ որում, տույժերի հաշվարկման, վճարման, գանձման և վերադարձման կարգը նույնանման է այն կարգին, որը սահմանված է ներմուծման մաքսատուրքերը չվճարելու կամ ոչ ամբողջությամբ վճարելու հետ կապված վճարվող, գանձվող տույժերի համար:

Սույն կետի դրույթները տարածվում են նախնական հատուկ, նախնական հակագնագցման, նախնական փոխհատուցման տուրքերի հաշվարկման, վճարման և գանձման վրա:

7. Սակագնային արտոնությունների մասով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 74-րդ հոդվածը կիրառվում է՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 43-րդ հոդվածի դրույթները:

8. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ մասը չի կիրառվում:

Արտահանման մաքսատուրքերի հաշվարկման նպատակով կիրառվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերը, որի տարածքում ապրանքները ձևակերպվում են մաքսային ընթացակարգով, կամ որի տարածքում հայտնաբերվել է Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման փաստ, եթե այլ բան սահմանված չէ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների միջև կնքվող երկկողմ միջազգային պայմանագրերով:

Հոդված 102
IX բաժնին առնչվող անցումային դրույթներ

1. Անկախ սույն Պայմանագրի 35-րդ հոդվածի դրույթներից՝ անդամ պետություններն իրավունք ունեն երրորդ կողմի հետ առևտրում միակողմանիորեն առանձնաշնորհումներ տրամադրելու՝ այդ անդամ պետության կողմից այդպիսի երրորդ կողմի հետ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը կնքվող միջազգային պայմանագրի կամ այն միջազգային պայմանագրի հիման վրա, որի մասնակիցներ են բոլոր անդամ պետությունները:

Անդամ պետություններն իրականացնում են այն պայմանագրերի միասնականացումը, որոնց հիման վրա առանձնաշնորհումներ են տրամադրվում:

2. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան գործող հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների վերանայման միջոցով Միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների նկատմամբ սահմանված հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցները կիրառվում են նախքան նշված միջոցների՝ Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ սահմանված գործողության ժամկետի ավարտը և կարող են վերանայվել սույն Պայմանագրի IX բաժնի դրույթներին և Պայմանագրին կից 8-րդ հավելվածին համապատասխան:

3. Սույն Պայմանագրի 36-րդ հոդվածի դրույթները կատարելու նպատակներով, նախքան զարգացող երկրների և (կամ) առավել թույլ զարգացած երկրների ծագման ապրանքների նկատմամբ Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգերի կիրառման պայմաններն ու կարգը սահմանող՝ Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելը, կիրառվում է «Մաքսային միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրությունը:

4. Նախքան սույն Պայմանագրի 37-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվող՝ ապրանքների ծագումը որոշելու կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելը՝ կիրառվում է «Ապրանքների ծագման երկիրը որոշելու միասնական կանոնների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիրը:

5. Նախքան սույն Պայմանագրի 37-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ապրանքների ծագումը որոշելու կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելը՝ կիրառվում է «Զարգացող և առավել թույլ զարգացած երկրներից ապրանքների ծագումը որոշելու կանոնների մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիրը:

Հոդված 103
XVI բաժնին առնչվող անցումային դրույթներ

1. Սույն Պայմանագրի 70-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված նպատակներն իրագործելու համար անդամ պետությունները մինչև 2025 թվականը կներդաշնակեցնեն ֆինանսական շուկայի ոլորտում իրենց օրենսդրությունը՝ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին և «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրությանը համապատասխան (սույն Պայմանագրի 17-րդ հավելված):

2. Ֆինանսական շուկաների ոլորտում օրենսդրության ներդաշնակեցումն ավարտելուց հետո անդամ պետությունները որոշում կկայացնեն ֆինանսական շուկայի կարգավորման հարցերով զբաղվող վերազգային մարմնի լիազորությունների ու գործառույթների մասին, 2025 թվականին այն կստեղծեն, և դրա գտնվելու վայրը կլինի Ալմաթա քաղաքը:

Հոդված 104
XX բաժնին առնչվող անցումային դրույթներ

1. Միասնական էներգետիկ ներուժի արդյունավետ օգտագործմանը և ջերմաէներգետիկական ռեսուրսների միջպետական մատակարարումների օպտիմալացմանը նպաստող՝ Միության գազի, նավթի և նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների մշակումն ապահովելու նպատակներով անդամ պետությունների լիազորված

մարմինները մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը մշակում և հաստատում են գազի, նավթի և նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների կազմման մեթոդաբանությունը:

2. Միության՝ ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի ձևավորման նպատակներով Բարձրագույն խորհուրդը մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը կհաստատի հայեցակարգ, իսկ մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը՝ Միության ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի ձևավորման ծրագիր՝ սահմանելով ծրագրի միջոցառումների իրականացման ժամկետը մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

3. Միության՝ ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի ձևավորման ծրագրի միջոցառումների իրականացումն ավարտվելուն պես անդամ պետությունները Միության շրջանակներում կկնքեն «Միության ընդհանուր էլեկտրաէներգետիկ շուկայի ձևավորման մասին» Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիր, որը կներառի նաև էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիությունն ապահովող կանոններ, և կապահովեն դրա ուժի մեջ մտնելը ոչ ուշ, քան 2019 թվականի հուլիսի 1-ը:

4. Միության՝ գազի ընդհանուր շուկայի ձևավորման նպատակով Բարձրագույն խորհուրդը մինչև 2016 թվականի հունվարի 1-ը կհաստատի հայեցակարգը, իսկ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը՝ Միության՝ գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագիրը՝ սահմանելով ծրագրի միջոցառումների իրականացման ժամկետը մինչև 2024 թվականի հունվարի 1-ը:

5. Միության՝ գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրի միջոցառումների իրականացումն ավարտելուն պես անդամ պետությունները Միության շրջանակներում կկնքեն «Միության՝ գազի ընդհանուր շուկայի ձևավորման մասին» Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիր, որը կներառի նաև անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի հասանելիությունն ապահովող կանոններ, և կապահովեն դրա ուժի մեջ մտնելը ոչ ուշ, քան 2025 թվականի հունվարի 1-ը:

6. Նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման նպատակով Բարձրագույն խորհուրդը մինչև 2016 թվականի հունվարի 1-ը կհաստատի հայեցակարգը, իսկ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը՝ Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկայի ձևավորման ծրագիրը՝ սահմանելով ծրագրի միջոցառումների իրականացման ժամկետը մինչև 2024 թվականի հունվարի 1-ը:

7. Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման ծրագրի միջոցառումների իրականացումն ավարտելուն պես անդամ պետությունները կկնքեն «Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկայի ձևավորման մասին» միջազգային պայմանագիր, որը կներառի նաև անդամ պետությունների տարածքներում տեղակայված նավթի և նավթամթերքների փոխադրման համակարգերի հասանելիությունն ապահովող միասնական կանոններ, և կապահովեն դրա ուժի մեջ մտնելը ոչ ուշ, քան 2025 թվականի հունվարի 1-ը:

8. «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքների մասին» արձանագրությունը (սույն Պայմանագրի 21-րդ հավելված) գործում է մինչև սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելը:

9. «Գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության կանոնների, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքների մասին» արձանագրությունը (սույն Պայմանագրի 22-րդ հավելված), գործում է մինչև սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելը:

10. «Նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների կազմակերպման, կառավարման, գործունեության և զարգացման կարգի մասին» արձանագրությունը (սույն Պայմանագրի 23-րդ հավելված) գործում է մինչև սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելը:

Հոդված 105
XXIV բաժնին առնչվող անցումային դրույթներ

1. Անդամ պետությունները 2017 թվականի հունվարի 1-ից կապահովեն «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» արձանագրության (սույն Պայմանագրի 28-րդ հավելված) 7-րդ կետով նախատեսված՝ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելը:

Նշված միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից ուժի մեջ են մտնում սույն Պայմանագրի 93-րդ հոդվածի 6-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի, «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» արձանագրության (սույն Պայմանագրի 28-րդ հավելված) 6-րդ, 15-րդ, 20-րդ, 87-րդ և 97-րդ կետերի դրույթները:

2. Սույն Պայմանագրի 93-րդ հոդվածի և «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» արձանագրության (սույն Պայմանագրի 28-րդ հավելված) դրույթները չեն տարածվում անդամ պետությունների տարածքներում մինչև 2012 թվականի հունվարի 1-ը տրամադրվող սուբսիդիաների վրա:

Հոդված 106
XXV բաժնին առնչվող անցումային դրույթներ

1. «Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցների մասին» արձանագրության (սույն Պայմանագրի 29-րդ հավելված) 8-րդ կետի առաջին պարբերության դրույթների մասով Բելառուսի Հանրապետության համար մինչև 2016 թվականը անցումային ժամանակաշրջան է սահմանվում, որի ընթացքում Բելառուսի Հանրապետությունը պարտավորվում է նվազեցնել գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության թույլատրելի ծավալը հետևյալ չափով՝

2015 թվականին՝ 12 տոկոսով,

2016 թվականին՝ 10 տոկոսով:

2. Առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցների թույլատրված մակարդակի հաշվարկման մեթոդաբանությունը, որը նախատեսված է «Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցների մասին» արձանագրության (սույն Պայմանագրի 29-րդ հավելված) 8-րդ կետի երկրորդ պարբերությամբ, մշակվում և հաստատվում է մինչև 2016 թվականի հունվարի 1-ը:

3. «Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցների մասին» արձանագրության (սույն Պայմանագրի 29-րդ հավելված) 8-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված պարտավորությունները Բելառուսի Հանրապետության համար ուժի մեջ են մտնում ոչ ուշ, քան 2025 թվականի հունվարի 1-ը:

Բաժին XXVIII
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 107
Սոցիալական երաշխիքները, արտոնություններն ու անձեռնմխելիությունները

Անդամ պետություններից յուրաքանչյուրի տարածքում Միությունը, Հանձնաժողովի խորհրդի և Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Միության դատարանի դատավորները, Հանձնաժողովի և Միության դատարանի պաշտոնատար անձինք և աշխատակիցներն օգտվում են իրենց վերապահված լիազորություններն ու պաշտոնական (ծառայողական) պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ սոցիալական երաշխիքներից, արտոնություններից և անձեռնմխելիություններից: Նշված սոցիալական երաշխիքների, արտոնությունների և անձեռնմխելիությունների ծավալը որոշվում է սույն Պայմանագրի 32-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 108
Միությանն անդամակցելը

1 Միությանը կարող է անդամակցել Միության նպատակները և սկզբունքները կիսող ցանկացած պետություն՝ անդամ պետությունների կողմից համաձայնեցված պայմաններով:

2. Միությանն անդամակցելու համար թեկնածու պետության կարգավիճակ ստանալու համար շահագրգիռ պետությունը Բարձրագույն խորհրդի նախագահի անունով համապատասխան դիմում է ուղարկում:

3. Միությանն անդամակցելու համար պետությանը թեկնածու պետության կարգավիճակ տալու մասին որոշումն ընդունվում է Բարձրագույն խորհրդի կողմից՝ ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

4. Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա ձևավորվում է թեկնածու պետության, անդամ պետությունների և Միության մարմինների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ)՝ Միության իրավունքից բխող պարտավորություններն ստանձնելու մասով թեկնածու պետության պատրաստվածության աստիճանն ուսումնասիրելու, թեկնածու պետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուն ուղղված գործողությունների ծրագրի նախագիծը, ինչպես նաև համապատասխան պետության՝ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրի նախագիծը մշակելու համար, որով սահմանվում են թեկնածու պետության իրավունքների ու պարտականությունների ծավալը, այդ թվում՝ Միության մարմինների աշխատանքում դրա մասնակցության ձևաչափը:

5. Թեկնածու պետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուն ուղղված գործողությունների ծրագիրը հաստատվում է Բարձրագույն խորհրդի կողմից:

6. Աշխատանքային խումբը կանոնավոր կերպով Բարձրագույն խորհրդի քննարկմանն է ներկայացնում հաշվետվություն՝ թեկնածու պետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուն ուղղված գործողությունների ծրագրի՝ թեկնածու պետության կողմից իրականացման ընթացքի մասին: Աշխատանքային խմբի այն եզրակացության հիման վրա, համաձայն որի թեկնածու պետությունն ամբողջությամբ կատարել է Միության իրավունքից բխող պարտավորությունները, Բարձրագույն խորհուրդն ընդունում է Միությանն անդամակցելու մասին թեկնածու պետության հետ միջազգային պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում: Նշված միջազգային պայմանագիրը ենթակա է վավերացման:

Հոդված 109
Դիտորդ պետությունները

1. Ցանկացած պետություն իրավասու է դիմելու Բարձրագույն խորհրդի նախագահին՝ իրեն Միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակ տալու խնդրանքով:

2. Միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակ տալու կամ նման կարգավիճակ տալը մերժելու մասին որոշումն ընդունվում է Բարձրագույն խորհրդի կողմից՝ հաշվի առնելով ինտեգրացիայի զարգացման շահերը և սույն Պայմանագրի նպատակների իրագործումը:

3. Միությանն առընթեր դիտորդ պետության լիազորված ներկայացուցիչները կարող են հրավերի հիման վրա ներկա գտնվել Միության մարմինների նիստերին, ստանալ Միության մարմինների կողմից ընդունվող՝ գաղտնի չհամարվող փաստաթղթերը:

4. Միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակը չի տալիս Միության մարմիններում որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցելու իրավունք:

5. Միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակ ստացող պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ ցանկացած այնպիսի գործողությունից, որը կարող է վնասել Միության և անդամ պետությունների շահերին, սույն Պայմանագրի առարկային և նպատակներին:

Հոդված 110
Միության մարմինների աշխատանքային լեզուն: Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի և Հանձնաժողովի որոշումների լեզուն

1. Միության մարմինների աշխատանքային լեզուն ռուսերենն է:

2. Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը և Հանձնաժողովի որոշումները, որոնք պարտադիր են անդամ պետությունների համար, ընդունվում են ռուսերենով՝

հետագայում թարգմանվելով անդամ պետությունների պետական լեզուներով, եթե դա նախատեսված է դրանց օրենսդրությամբ Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով:

Անդամ պետությունների պետական լեզուներով թարգմանությունն իրականացվում է այդ նպատակի համար Միության բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված միջազգային պայմանագրերի և որոշումների մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալիս կիրառվում է ռուսերենով կազմված տեքստը:

Հոդված 111
Հասանելիությունը և հրապարակումը

1. Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը, երրորդ կողմի հետ կնքվող՝ միջազգային պայմանագրերը և Միության մարմինների որոշումները ենթակա են ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում պաշտոնական հրապարակման Միջկառավարական խորհրդի կողմից սահմանված կարգով:

Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում Միության մարմնի որոշումը հրապարակելու ամսաթիվը համարվում է տվյալ որոշման պաշտոնական հրապարակման ամսաթիվը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ոչ մի որոշում չի կարող ուժի մեջ մտնել՝ մինչև այն պաշտոնապես չհրապարակվի:

3. Միության մարմինների որոշումներն ուղարկվում են անդամ պետություններին ոչ ուշ, քան որոշումը կայացնելու օրվանից հաշվարկված 3 օրացուցային օրվա ընթացքում:

4. Միության մարմինները ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում ապահովում են որոշումների նախագծերի նախնական հրապարակումը տվյալ որոշումն ընդունելու ամսաթվից առնվազն 30 օրացուցային օր առաջ: Միության մարմինների որոշումների նախագծերը, որոնք ընդունվում են բացառիկ դեպքերում և պահանջում են օպերատիվ արձագանք, կարող են հրապարակվել այլ ժամկետներում:

Շահագրգիռ անձինք կարող են տվյալ մարմին ներկայացնել իրենց մեկնաբանություններն ու առաջարկությունները:

Այդպիսի մեկնաբանություններն ու առաջարկությունները հավաքելու, վերլուծելու և հաշվառելու կարգը սահմանվում է Միության համապատասխան մարմնի աշխատանքային կանոնակարգով:

5. Միության մարմինների՝ այնպիսի տեղեկություններ պարունակող որոշումները, որոնց տարածումը սահմանափակված է, և այդ որոշումների նախագծերը ենթակա չեն պաշտոնական հրապարակման:

6. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում Միության դատարանի այն որոշումների նկատմամբ, որոնց ուժի մեջ մտնելու և հրապարակվելու կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնադրությամբ (սույն Պայմանագրի 2-րդ հավելված):

7. Սույն հոդվածի 4-րդ կետի դրույթները չեն կիրառվում Միության մարմինների որոշումների նկատմամբ, եթե այդ որոշումների նախագծերի նախնական հրապարակումը կարող է խոչընդոտել դրանց կատարումը կամ այլ կերպ հակասել հանրային շահերին:

Հոդված 112
Վեճերի կարգավորումը

Սույն Պայմանագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով:

Խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման վերաբերյալ վեճի մի կողմից վեճի մյուս կողմին հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում, եթե Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտով (սույն Պայմանագրի 2-րդ հավելված) այլ ժամկետ նախատեսված չէ, վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Միության

դատարանի քննությանը, եթե վեճի կարգավորման եղանակների վերաբերյալ կողմերի միջև այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել:

Հոդված 113
Պայմանագիրն ուժի մեջ մտնելը

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու դեպքում դադարեցվում է Մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի ձևավորման շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի գործողությունը՝ սույն Պայմանագրի 33-րդ հավելվածի համաձայն:

Հոդված 114
Սույն Պայմանագրի փոխադարձ կապը միջազգային այլ պայմանագրերի հետ

1. Սույն Պայմանագիրը չի խոչընդոտում անդամ պետությունների կողմից միջազգային այնպիսի պայմանագրեր կնքելը, որոնք չեն հակասում սույն Պայմանագրի նպատակներին և սկզբունքներին:

2. Անդամ պետությունների միջև երկկողմ միջազգային պայմանագրերը, որոնցով սույն Պայմանագրի կամ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի դրույթների հետ համեմատությամբ նախատեսվում է ինտեգրման ավելի խոր մակարդակ, կամ որոնցով հօգուտ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց ապահովվում են լրացուցիչ առավելություններ, կիրառվում են դրանք կնքած պետությունների միջև հարաբերություններում և կարող են կնքվել՝ պայմանով, որ դրանք չեն տարածվելու այդ և մյուս անդամ պետությունների կողմից սույն Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված իրենց իրավունքների ու պարտավորությունների կատարման վրա:

Հոդված 115
Պայմանագրում փոփոխություններ կատարելը

Սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և կազմում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Հոդված 116
Պայմանագրի գրանցումը Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում

Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Պայմանագիրը ենթակա է Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում գրանցման:

Հոդված 117
Վերապահումները

Սույն Պայմանագրի մասով վերապահումներ չեն թույլատրվում:

Հոդված 118
Պայմանագրից դուրս գալը

1. Ցանկացած անդամ պետություն իրավունք ունի դուրս գալու սույն Պայմանագրից՝ դիվանագիտական ուղիներով սույն Պայմանագրի ավանդապահին ուղարկելով գրավոր ծանուցում սույն Պայմանագրից դուրս գալու իր մտադրության մասին: Այդ պետության մասով

սույն Պայմանագրի գործողությունը դադարում է սույն Պայմանագրի ավանդապահի կողմից այդ ծանուցումն ստանալու օրվանից 12 ամիս հետո:

2. Անդամ պետությունը, որը սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ծանուցել է սույն Պայմանագրից դուրս գալու իր մտադրության մասին, պարտավոր է կարգավորել սույն Պայմանագրին իր մասնակցության առնչությամբ ծագած ֆինանսական պարտավորությունները: Տվյալ պարտավորությունն ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ այդ պարտավորությունն ամբողջովին չի կատարվել՝ անկախ սույն Պայմանագրից պետության դուրս գալու հանգամանքից:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ծանուցման հիման վրա Բարձրագույն խորհուրդը որոշում է ընդունում սույն Պայմանագրին անդամ պետության մասնակցության առնչությամբ ծագած ֆինանսական պարտավորությունները կարգավորելու գործընթացն սկսելու մասին:

4. Սույն Պայմանագրից դուրս գալն ինքնաբերաբար հանգեցնում է Միության անդամակցության դադարմանը և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերից դուրս գալուն:

Կատարված է Աստանա քաղաքում, 2014 թվականի մայիսի 29-ին, մեկ օրինակից՝ բելառուսերենով, ղազախերենով և ռուսերենով, ընդ որում, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Պայմանագրի մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալիս կիրառվում է ռուսերենով կազմված տեքստը:

Սույն Պայմանագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Պայմանագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի Հանրապետության կողմից	Ղազախստանի Հանրապետության կողմից	Ռուսաստանի Դաշնության կողմից
/ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/

ՀԱՎԵԼՎԱԾ 1
«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 18-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Հանձնաժողովը Միության մշտապես գործող կարգավորող մարմինն է:

Հանձնաժողովի հիմնական խնդիրները Միության գործունեության և զարգացման պայմանների ապահովումն է, ինչպես նաև Միության շրջանակներում տնտեսական ինտեգրման ոլորտում առաջարկների մշակումը:

2. Հանձնաժողովն իրականացնում է իր գործունեությունը՝ հիմնվելով հետևյալ սկզբունքների վրա.

1) անդամ պետությունների ազգային շահերը հաշվի առնելու, իրավահավասարության և փոխշահավետության ապահովում,

2) ընդունվող որոշումների տնտեսական հիմնավորվածություն,

3) բաց լինելը, հրապարակայնություն և օբյեկտիվություն:

3. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Միության շրջանակներում կնքված Պայմանագրով և միջազգային պայմանագրերով նախատեսված լիազորությունների սահմաններում՝ հետևյալ ոլորտներում.

1) մաքսասակագնային և ոչ սակագնային կանոնակարգում,

2) մաքսային կանոնակարգում,

3) տեխնիկական կանոնակարգում,

4) սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ,
5) ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրում ու բաշխում,
6) երրորդ երկրների նկատմամբ առևտրային ռեժիմի սահմանում,
7) արտաքին ու փոխադարձ առևտրի վիճակագրություն,
8) մակրոտնտեսական քաղաքականություն,
9) մրցակցային քաղաքականություն,
10) արդյունաբերական և գյուղատնտեսական սուբսիդիաներ,
11) էներգետիկ քաղաքականություն,
12) բնական մենաշնորհներ,
13) պետական և (կամ) մունիցիպալ գնումներ,
14) ծառայությունների փոխադարձ առևտուր և ներդրումներ,
15) տրանսպորտ և փոխադրումներ,
16) արժութային քաղաքականություն,
17) մտավոր սեփականություն,
18) աշխատանքային միգրացիա,
19) ֆինանսական շուկաներ (բանկային ոլորտ, ապահովագրության ոլորտ, արժութային շուկա, արժեթղթերի շուկա),
20) Միության շրջանակներում կնքված Պայմանագրով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ ոլորտներ:
4. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ապահովում է Միության իրավունքում ներառված միջազգային պայմանագրերի կիրարկումը:
5. Հանձնաժողովն իրականացնում է Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի, Բարձրագույն խորհրդի և Միջկառավարական խորհրդի որոշումների ավանդապահի գործառույթները:
6. Բարձրագույն խորհուրդը կարող է Հանձնաժողովին իրավունք վերապահել ստորագրելու վերջինիս իրավասության սահմաններում գտնվող հարցերին առնչվող միջազգային պայմանագրեր:
7. Միության արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով Հանձնաժողովն իրավունք ունի ստեղծելու խորհրդատվական մարմիններ այն առանձին հարցերի մասով խորհրդատվություն տրամադրելու համար, որոնց վերաբերյալ որոշումներ ընդունելը Հանձնաժողովի իրավասության սահմաններում է:
8. Հանձնաժողովն իրավունք ունի անդամ պետություններից պահանջելու Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ իրենց դիրքորոշումը: Դիրքորոշումը ներկայացնելու վերաբերյալ հարցումն ուղարկվում է անդամ պետությունների կառավարություններ: Հանձնաժողովը նաև իրավունք ունի անդամ պետությունների գործադիր իշխանության մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ: Հանձնաժողովի՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց հասցեագրված հարցումների պատճենները, բացառությամբ գաղտնի տեղեկություններ պարունակող հարցումների, միաժամանակ ուղարկվում են անդամ պետության գործադիր իշխանության լիազոր մարմին: Դիրքորոշումը ներկայացնելու կամ տեղեկություններ տրամադրելու մասին հարցումը Հանձնաժողովի անունից ուղարկվում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կամ Հանձնաժողովի կոլեգիայի անդամի կողմից, եթե Պայմանագրով այլ բան սահմանված չէ:
Անդամ պետությունների գործադիր իշխանության մարմիններն ապահովում են պահանջվող տեղեկությունների տրամադրումը Հանձնաժողովի աշխատանքի Կանոնակարգով սահմանված ժամկետում՝ պայմանով, որ այդ տեղեկությունները չեն պարունակում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պետական գաղտնիք համարվող կամ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկություններ:
Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ պետական գաղտնիք համարվող տեղեկություններ կամ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկություններ պարունակող տեղեկատվություն փոխանակելու կարգը սահմանվում է Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով:

9. Հանձնաժողովը պատասխանատու է Միության բյուջեն կազմելու և դրա կատարողականի մասին հաշվետվություն պատրաստելու համար, այն Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի միջոցների կարգադրիչն է:

10. Հանձնաժողովն օգտվում է իրավաբանական անձի իրավունքներից:

11. Հանձնաժողովը բաղկացած է Հանձնաժողովի խորհրդից ու Հանձնաժողովի կոլեգիայից: Հանձնաժողովի խորհրդի և Հանձնաժողովի կոլեգիայի գործունեության կարգը կարգավորվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատակարգով, որը հաստատվում է Բարձրագույն խորհրդի կողմից (այսուհետ՝ Աշխատակարգ):

12 Հանձնաժողովի խորհուրդն իրավունք ունի ստեղծելու կառուցվածքային ստորաբաժանումներ (այսուհետ՝ Հանձնաժողովի դեպարտամենտներ):

13. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է նորմատիվ իրավական բնույթի և անդամ պետությունների համար պարտադիր որոշումներ, կազմակերպչական ու կարգադրիչային բնույթի կարգադրություններ և ոչ պարտադիր բնույթի հանձնարարականներ:

Հանձնաժողովի որոշումներն ընդգրկվում են Միության իրավունքի մեջ և ենթակա են անմիջական կիրառության անդամ պետությունների տարածքներում:

14. Հանձնաժողովի որոշումները, կարգադրությունները և հանձնարարականներն ընդունվում են Հանձնաժողովի խորհրդի և Հանձնաժողովի կոլեգիայի կողմից՝ Պայմանագրով ու Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված լիազորությունների սահմաններում և Պայմանագրով ու Կանոնակարգով նախատեսված կարգով:

Հանձնաժողովի խորհրդի և Հանձնաժողովի կոլեգիայի լիազորությունների ու գործառույթների սահմանագծումը սահմանվում է Կանոնակարգով:

15. Հանձնաժողովի այն որոշումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանների վրա, ընդունվում են՝ հաշվի առնելով այդ որոշումների նախագծերի կարգավորող ազդեցության գնահատման անցկացման արդյունքները:

Հանձնաժողովի՝ նշված որոշումների նախագծերի կարգավորող ազդեցությունը գնահատելու ընթացակարգի իրականացման կարգը սահմանվում է Կանոնակարգով:

16. Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակումից ոչ շուտ, քան 30 օրացուցային օրը լրանալուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով և Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով:

Հանձնաժողովի՝ սույն Կանոնակարգի 18-րդ կետում նշված որոշումներով, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից բացառիկ դեպքերում ընդունվող և արագ արձագանք պահանջող որոշումներով կարող է նախատեսվել ուժի մեջ մտնելու այլ ժամկետ, սակայն դրանց պաշտոնական հրապարակումից ոչ շուտ, քան 10 օրացուցային օր հետո:

Հանձնաժողովի՝ սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված որոշումների ընդունման և դրանց ուժի մեջ մտնելու կարգը սահմանվում է Կանոնակարգով:

Հանձնաժողովի՝ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկություններ պարունակող որոշումներն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետում:

Հանձնաժողովի հանձնարարականներն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետում:

17. Հանձնաժողովի այն որոշումները, որոնցով վատթարացվում է ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց կարգավիճակը, հետադարձ ուժ չունեն:

18. Հանձնաժողովի այն որոշումները, որոնցով բարելավվում է ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց կարգավիճակը, կարող են հետադարձ ուժ ունենալ, եթե դա ուղղակիորեն նախատեսված է այդ որոշումներով:

19. Հանձնաժողովի որոշումների հրապարակումը և դրանց մատչելիության ապահովումն իրականացվում է Պայմանագրի 111-րդ հոդվածով սահմանված կարգով:

20. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են Պայմանագրի 18-րդ հոդվածին և սույն Կանոնակարգին համապատասխան՝ Հանձնաժողովի խորհրդի անդամների կամ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների քվեարկության միջոցով:

21. Հանձնաժողովում ձայները բաշխվում են հետևյալ կերպ.

1) Հանձնաժողովի խորհրդում՝ Հանձնաժողովի խորհրդի անդամի մեկ ձայնը համարվում է մեկ ձայն,

2) Հանձնաժողովի կոլեգիայում՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամի մեկ ձայնը համարվում է մեկ ձայն:

II. Հանձնաժողովի Խորհուրդը

22. Հանձնաժողովի խորհուրդն իրականացնում է Միությունում ինտեգրացիոն գործընթացների ընդհանուր կարգավորումը, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումը:

23. Հանձնաժողովի խորհրդի կազմում ընդգրկվում է յուրաքանչյուր անդամ պետությունից՝ կառավարության ղեկավարի տեղակալի մակարդակով և իր պետության օրենսդրությանը համապատասխան անհրաժեշտ լիազորություններով օժտված մեկական ներկայացուցիչ:

Անդամ պետությունները Կանոնակարգով սահմանված կարգով տեղեկացնում են միմյանց, ինչպես նաև Հանձնաժողովի կոլեգիային՝ Հանձնաժողովի խորհրդի կազմում ընդգրկված ներկայացուցչի մասին:

24. Հանձնաժողովի խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթներն ու լիազորությունները.

1) կազմակերպում է Միության գործունեության իրավական կարգավորման բարելավմանն ուղղված աշխատանքներ,

2) Բարձրագույն խորհրդի հաստատմանն է ներկայացնում Միության շրջանակներում ինտեգրման հիմնական ուղղությունները,

3) քննարկում է Հանձնաժողովի կոլեգիայի կողմից ընդունված Հանձնաժողովի որոշումները սույն Պայմանագրի 30-րդ կետով նախատեսված կարգով չեղյալ հայտարարելու կամ դրանցում փոփոխություններ կատարելու հարցը,

4) քննարկում է Միության իրավունքում ներառված միջազգային պայմանագրերի կիրարկման մոնիթորինգի և վերահսկողության արդյունքները,

5) Միջկառավարական խորհրդի քննարկմանն է ներկայացնում կարգավորող ազդեցության գնահատման ընթացակարգի իրականացման մոնիթորինգի մասին տարեկան հաշվետվություն,

6) հաստատում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից ներկայացվող՝ Հանձնաժողովի դեպարտամենտների ցանկը, դրանց կառուցվածքը և հաստիքների թիվը, ինչպես նաև դրանց բաշխումը Հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջև,

7) հաստատում է Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցներին ներկայացվող որակավորման պահանջները,

8) ընդունում է Հանձնաժողովի աշխատակիցներին արտոնություններից և անձեռնմխելիությունից զրկելու մասին որոշում՝ Եվրասիական տնտեսական միությունում սոցիալական երաշխիքների, արտոնությունների ու անձեռնմխելիության մասին Կանոնակարգով նախատեսված հիմքերով (Պայմանագրի 32-րդ հավելված),

9) հաստատում է Միության բյուջեի նախագիծը,

10) հաստատում է Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցների աշխատանքի վարձատրության կարգը,

11) հաստատում է Հանձնաժողովի դեպարտամենտների հաստիքների ընդհանուր առավելագույն թիվը,

12) հաստատում է Միության ինտեգրացված տեղեկատվական համակարգի ստեղծման և զարգացման ծրագիրը,

13) անդամ պետությունների քաղաքացիների՝ Հանձնաժողովի դեպարտամենտներում աշխատանքի տեղավորվելու՝ Պայմանագրով նախատեսված իրավունքների պահպանումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի խորհրդին կից ստեղծում է էթիկայի հանձնաժողով և հաստատում է դրա վերաբերյալ կանոնակարգը,

14) հանձնարարություններ է տալիս Հանձնաժողովի կոլեգիային,

15) իրականացնում է այլ գործառույթներ և լիազորություններ՝ Պայմանագրին, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերին և Կանոնակարգին համապատասխան:

25. Հանձնաժողովի խորհուրդն իրավունք ունի սահմանելու այն հարցերը, որոնց մասով Հանձնաժողովի կոլեգիան պարտավոր է խորհրդատվություններ անցկացնելու սույն Կանոնակարգի 44-րդ կետին համապատասխան ստեղծված խորհրդատվական մարմնի շրջանակներում՝ Հանձնաժողովի խորհրդի կամ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումն ընդունելուց առաջ:

26. Հանձնաժողովի խորհրդի նիստերն անցկացվում են Կանոնակարգին համապատասխան: Հանձնաժողովի խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է նախաձեռնել Հանձնաժողովի խորհրդի նիստի անցկացում, ինչպես նաև ներկայացնել Հանձնաժողովի խորհրդի նիստի օրակարգին վերաբերող առաջարկություններ:

Հանձնաժողովի խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի խորհրդի բոլոր անդամները:

27. Հանձնաժողովի խորհրդի նիստերին մասնակցում են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը, ինչպես նաև Հանձնաժողովի կոլեգիայի անդամները՝ Հանձնաժողովի խորհրդի հրավերով: Հանձնաժողովի խորհրդի անդամները Հանձնաժողովի խորհրդի նիստերին կարող են հրավիրել անդամ պետությունների ներկայացուցիչներին և այլ անձանց:

Հանձնաժողովի խորհրդի նիստերին կարող են մասնակցել երրորդ երկրների ներկայացուցիչներ՝ Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

28. Հանձնաժողովի խորհրդում նախագահությունն իրականացվում է Պայմանագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Հանձնաժողովի խորհրդի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում նախագահող անդամ պետությունը ներկայացնող՝ Հանձնաժողովի խորհրդի նոր անդամն իրականացնում է Հանձնաժողովի խորհրդի նախագահի լիազորությունները մնացած ժամանակահատվածում:

Հանձնաժողովի խորհրդի նախագահը.

իրականացնում է Հանձնաժողովի խորհրդի հերթական նիստում քննարկման ներկայացվող հարցերի մասով նախապատրաստական աշխատանքների ընդհանուր ղեկավարումը,

սահմանում է օրակարգը,

բացում, վարում և փակում է Հանձնաժողովի խորհրդի նիստերը:

29. Հանձնաժողովի խորհուրդը որոշումները, կարգադրությունները և հանձնարարականներն ընդունում է իր լիազորությունների շրջանակներում:

Հանձնաժողովի խորհուրդը որոշումները, կարգադրությունները և հանձնարարականներն ընդունում է ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) հիման վրա:

Ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) չհասնելու դեպքում Հանձնաժողովի խորհրդի ցանկացած անդամի առաջարկով հարցը քննարկման է ներկայացվում Բարձրագույն խորհուրդ կամ Միջկառավարական խորհուրդ:

30. Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը հրապարակելու օրվանից հետո՝ 15 օրացուցային օրվա ընթացքում, անդամ պետությունը կամ Հանձնաժողովի խորհրդի անդամն իրավունք ունի այն չեղյալ հայտարարելու կամ դրանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելու Հանձնաժողովի կոլեգիա:

Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը նշված առաջարկությունն ստանալու օրը Հանձնաժողովի խորհրդի անդամներին ուղարկում է համապատասխան որոշմանն առնչվող նյութեր:

Այդ նյութերն ստանալուց հետո Հանձնաժողովի խորհուրդը քննարկում է դրանք և որոշում է կայացնում 10 օրացուցային օրվա ընթացքում:

Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը չեղյալ հայտարարելու կամ դրանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցի քննարկման արդյունքներով Հանձնաժողովի խորհրդի կողմից կայացված որոշման հետ չհամաձայնելու դեպքում կամ սույն կետի երրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետն ավարտվելու դեպքում անդամ պետությունը Հանձնաժողովի խորհրդի որոշման պաշտոնական հրապարակումից ոչ ուշ, քան 30 օրացուցային օր հետո կարող է կառավարության ղեկավարի ստորագրությամբ նամակ ուղարկել Հանձնաժողով՝ համապատասխան հարցը Միջկառավարական խորհրդի և (կամ) Բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացնելու առաջարկով:

Անդամ պետության կառավարության ղեկավարն իրավունք ունի դիմելու Հանձնաժողով սույն Կանոնակարգի 16-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված՝ Հանձնաժողովի որոշումների վերաբերյալ հարցը Միջկառավարական խորհրդի և (կամ) Բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացնելու առաջարկով՝ ցանկացած փուլում՝ նախքան դրանց ուժի մեջ մտնելը:

Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը սույն կետին համապատասխան չեղյալ հայտարարելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկ ներկայացնելու դեպքում այդ որոշումը ուժի մեջ չի մտնում և կասեցվում է Միջկառավարական խորհրդի և (կամ) Բարձրագույն խորհրդի կողմից որոշման վերաբերյալ հարցը քննարկելու և այդ քննարկման արդյունքներով համապատասխան որոշում կայացնելու համար անհրաժեշտ ժամկետով:

III. Հանձնաժողովի Կոլեգիան

31. Հանձնաժողովի կոլեգիան հանդիսանում է Հանձնաժողովի գործադիր մարմինը:

Հանձնաժողովի կոլեգիան բաղկացած է Կոլեգիայի անդամներից, որոնցից մեկը Հանձնաժողովի կոլեգիայի նախագահն է:

Հանձնաժողովի կոլեգիան կազմավորվում է անդամ պետությունների ներկայացուցիչներից՝ ելնելով անդամ պետությունների հավասար ներկայացուցչության սկզբունքից:

Հանձնաժողովի կոլեգիայի քանակական կազմը և Հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջև պարտականությունների բաշխումը սահմանում է Բարձրագույն խորհուրդը:

Հանձնաժողովի կոլեգիան իրականացնում է Հանձնաժողովի դեպարտամենտների ղեկավարում:

32. Հանձնաժողովի կոլեգիայի անդամը պետք է լինի իր կողմից ներկայացվող անդամ պետության քաղաքացի:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամները պետք է բավարարեն հետևյալ պահանջները. ունենան պաշտոնեական պարտականություններին համապատասխանող մասնագիտական պատրաստվածություն (որակավորում), ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների գծով առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ, այդ թվում՝ առնվազն 1 տարի ղեկավար պաշտոն զբաղեցնեն անդամ պետությունների պետական մարմիններում:

33. Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին նշանակում է Բարձրագույն խորհուրդը՝ 4 տարի ժամկետով, լիազորությունների ժամկետի հնարավոր երկարաձգմամբ:

Հանձնաժողովի կոլեգիայի նախագահին նշանակում է Բարձրագույն խորհուրդը՝ 4 տարի ժամկետով, ռոտացիոն հիմունքով, առանց երկարաձգման իրավունքի: Ռոտացիան իրականացվում է հերթականությամբ՝ ռուսերենի այբբենական կարգով՝ ըստ անդամ պետության անվանման:

34. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները Հանձնաժողովում աշխատում են մշտական հիմունքներով: Հանձնաժողովի կոլեգիայի անդամներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են անդամ պետությունների պետական մարմիններից ու պաշտոնատար անձանցից և չեն կարող պահանջել կամ ստանալ ցուցումներ անդամ պետությունների իշխանության մարմիններից կամ պաշտոնատար անձանցից:

Միջազգային գործունեության հարցերով անդամ պետությունների հետ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների փոխգործակցության մեխանիզմը սահմանվում է Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող՝ Եվրասիական տնտեսական միության կողմից միջազգային համագործակցություն իրականացնելու Կարգին համապատասխան:

35. Հանձնաժողովի կոլեգիայի անդամներն իրենց լիազորությունների գործողության ամբողջ ժամկետի ընթացքում իրավունք չունեն Հանձնաժողովի կոլեգիայում աշխատանքը համատեղելու այլ աշխատանքի հետ կամ զբաղվելու մեկ այլ վարձատրվող գործունեությամբ՝ բացի մանկավարժական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեությունից:

36. Հանձնաժողովի կոլեգիայի անդամներն իրավունք չունեն.

1) վճարովի հիմունքներով մասնակցելու առևտրային կազմակերպության կառավարման մարմնի գործունեությանը,

2) իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն,

3) լիազորությունների իրականացման հետ կապված՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից ստանալու փոխհատուցումներ (նվերներ, դրամական փոխհատուցում,

փոխատվություններ, ծառայություններ, ժամանցի, հանգստի, տրանսպորտային ծախսերի վճարում և այլ փոխհատուցումներ). Հանձնաժողովի կոլեգիայի անդամի կողմից արարողակարգային միջոցառումների, ծառայողական գործողումների և այլ պաշտոնական միջոցառումների առթիվ ստացված նվերները (խորհրդանշական նվերներից բացի) համարվում են Հանձնաժողովի սեփականությունը և ակտի հիման վրա փոխանցվում են Հանձնաժողովին: Հանձնաժողովի կոլեգիայի այն անդամը, որն այդպիսի նվեր է փոխանցել, կարող է այն հետ գնել Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատված կարգով,

4) ուղևորություններ կատարելու ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջոցների հաշվին՝ պաշտոնեական պարտականությունների կատարման նպատակով,

5) լիազորությունների իրականացման հետ կապ չունեցող նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական և այլ ապահովման միջոցներ, Հանձնաժողովի այլ գույք, ինչպես նաև դրանք փոխանցելու այլ անձանց,

6) լիազորությունների իրականացման հետ կապ չունեցող նպատակներով հրապարակելու կամ օգտագործելու գաղտնի բնույթի տվյալներ կամ լիազորությունների իրականացման առնչությամբ իրեն հայտնի դարձած ծառայողական տեղեկություններ,

7) Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորություններն օգտագործելու հօգուտ քաղաքական կուսակցությունների, հասարակական միավորումների, կրոնական միավորումների և այլ կազմակերպությունների շահերի, ինչպես նաև որպես Հանձնաժողովի կոլեգիայի անդամ հրապարակայնորեն արտահայտելու իր վերաբերմունքը նշված միավորումների ու կազմակերպությունների նկատմամբ (եթե դա իր լիազորությունների մեջ ներառված չէ),

8) Հանձնաժողովում ստեղծելու քաղաքական կուսակցությունների, այլ հասարակական միավորումների (բացառությամբ արհմիությունների, վետերանների և հասարակական ինքնագործունեության այլ մարմինների) և կրոնական միավորումների կառույցներ կամ նպաստելու նշված կառույցների ստեղծմանը:

37. Եթե Հանձնաժողովի կոլեգիայի անդամի տնօրինության տակ գտնվում են եկամուտ բերող արժեթղթեր և (կամ) բաժնետոմսեր (կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցության բաժնեմասեր), ապա նա պարտավոր է ողջամիտ ժամկետներում իրեն պատկանող արժեթղթերը և (կամ) բաժնետոմսերը (կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցության բաժնեմասերը) փոխանցել հավատարմագրային կառավարման:

38. Սույն Կանոնակարգի 35-ից 37-րդ կետերով սահմանված սահմանափակումները կիրառվում են նաև Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցների նկատմամբ:

39. Սույն Կանոնակարգի 35-ից 37-րդ կետերով սահմանված սահմանափակումների ցանկացած խախտում Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, Հանձնաժողովի պաշտոնատար անձի, աշխատակցի հետ աշխատանքային պայմանագիրը խզելու հիմք է:

40. Յուրաքանչյուր անդամ պետություն Բարձրագույն խորհուրդ է ներկայացնում Հանձնաժողովի կոլեգիայի անդամի պաշտոնի թեկնածուներին:

Բարձրագույն խորհուրդը, անդամ պետությունների ներկայացմամբ, հաստատում է Հանձնաժողովի կոլեգիայի անհատական կազմը՝ ներառյալ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը:

Եթե Բարձրագույն խորհուրդը չի հաստատում Հանձնաժողովի կոլեգիայի անդամի թեկնածությունը, ապա անդամ պետությունը 30 օրացուցային օրվա ընթացքում առաջադրում է նոր թեկնածություն:

41. Անդամ պետություններն իրավունք չունեն Հանձնաժողովի կոլեգիայի անդամին հետ կանչելու՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս անբարեխղճորեն է կատարում իր պաշտոնեական պարտականությունները, կամ սույն Կանոնակարգի 35-ից 37-րդ կետերում նշված դեպքերի:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը (բացառությամբ կամավոր հրաժարականի) իրականացվում է Բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա՝ անդամ պետության ներկայացմամբ:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Հանձնաժողովի կոլեգիայի նախկին անդամի լիազորությունների մնացած

ժամանակահատվածի համար Հանձնաժողովի կոլեգիայի նոր անդամը նշանակվում է այն նույն անդամ պետության ներկայացմամբ, որի կողմից ներկայացվել էր լիազորությունները դադարեցրած Հանձնաժողովի կոլեգիայի անդամը:

42. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջև պարտականությունների բաշխումը, ինչպես նաև Հանձնաժողովի դեպարտամենտների հաստիքների ընդհանուր առավելագույն թիվը և Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Հանձնաժողովի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների աշխատանքի վարձատրության կարգը (այդ թվում՝ դրանց դրամական պարունակությունը) հաստատում է Բարձրագույն խորհուրդը:

43. Հանձնաժողովի կոլեգիան ապահովում է հետևյալ գործառույթների ու լիազորությունների իրականացումը.

1) իրականացնում է Միության շրջանակներում ինտեգրման ոլորտում առաջարկությունների մշակում և անդամ պետությունների կողմից ներկայացված առաջարկությունների ամփոփում (ներառյալ ինտեգրման հիմնական ուղղությունների մշակումն ու իրականացումը),

2) ընդունում է որոշումներ, կարգադրություններ և հանձնարարականներ,

3) կատարում է Բարձրագույն խորհրդի և Միջկառավարական խորհրդի կողմից ընդունված որոշումներն ու կարգադրությունները և Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունված որոշումները,

4) իրականացնում է Միության իրավունքում ներառված միջազգային պայմանագրերի և Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ մոնիթորինգ և հսկողություն, ինչպես նաև տեղեկացնում է անդամ պետություններին դրանց կատարման անհրաժեշտության մասին,

5) յուրաքանչյուր տարի կատարված աշխատանքի մասին հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողովի խորհրդի ուսումնասիրմանը,

6) մշակում է հանձնարարականներ՝ Միության ձևավորմանը, գործունեությանը և զարգացմանն առնչվող հարցերի վերաբերյալ,

7) պատրաստում է փորձագիտական (գրավոր) եզրակացություններ՝ անդամ պետությունների կողմից Հանձնաժողով ներկայացված առաջարկների վերաբերյալ,

8) աջակցում է անդամ պետություններին Միության շրջանակներում վեճերի կարգավորման հարցում՝ նախքան Միության դատարան դիմելը,

9) ապահովում է Հանձնաժողովի շահերը ներկայացնելը դատական ատյաններում, այդ թվում՝ Միության դատարանում,

10) իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է համագործակցություն անդամ պետությունների պետական իշխանության մարմինների հետ,

11) ուսումնասիրում է Հանձնաժողով ներկայացվող հարցումները,

12) Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի ներկայացմամբ՝ հաստատում է Կոլեգիայի անդամների, Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցների արտասահմանյան գործողությունների հերթական տարվա ծրագիրը,

13) Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի ներկայացմամբ՝ հաստատում է հերթական տարվա գիտահետազոտական աշխատանքների ծրագիրը՝ խորհրդատվական կոմիտեներում այն քննարկելուց հետո, տեղեկացնում է Հանձնաժողովի խորհրդին նշված ծրագրի մասին,

14) իրականացնում է Միության բյուջեի նախագծի մշակումը և դրա կատարողականի մասին հաշվետվության նախագծերի պատրաստումը, ապահովում է Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի կատարումը,

15) մշակում է միջազգային պայմանագրերի և Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունվող՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերը, ինչպես նաև Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

16) սահմանված կարգով իրականացնում է կարգավորող ազդեցության գնահատման ընթացակարգը և ապահովում է այդ ընթացակարգի իրականացման մոնիթորինգի մասին տարեկան հաշվետվության պատրաստումը,

17) ապահովում է Հանձնաժողովի խորհրդի, Միջկառավարական խորհրդի և Բարձրագույն խորհրդի, ինչպես նաև Պայմանագրի 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ստեղծվող օժանդակ մարմինների նիստերի անցկացումը,

18) Հանձնաժողովի պաշտոնտար անձանց և աշխատակիցներին արտոնություններից ու անձեռնմխելիությունից զրկելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը,

19) տեղաբաշխում է պատվերներ և կնքում պայմանագրեր Հանձնաժողովի կարիքներից բխող ապրանքների մատակարարման, աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման վերաբերյալ՝ Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանված կարգով,

20) ապահովում է սահմանափակ հասանելիություն ունեցող (գաղտնի և ծառայողական օգտագործման) փաստաթղթերի հետ աշխատելու կարգի պահպանումը, որը հաստատվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

44. Հանձնաժողովի կոլեգիան իրավունք ունի Հանձնաժողովի կոլեգիային կից ստեղծելու խորհրդատվական մարմիններ, որոնց գործունեությունն ու աշխատանքի կարգը սահմանվում է Հանձնաժողովի կոլեգիայի կողմից հաստատվող համապատասխան կանոնակարգերով: Ընդ որում, Հանձնաժողովի կոլեգիայի կողմից սահմանված հարցերի քննարկման համար Հանձնաժողովի կոլեգիան պարտադիր կարգով ստեղծում է համապատասխան խորհրդատվական մարմին:

45. Հանձնաժողովի կոլեգիային կից խորհրդատվական մարմինների կազմում ընդգրկված են անդամ պետությունների պետական իշխանության մարմինների լիազոր ներկայացուցիչները:

Անդամ պետությունների առաջարկով Հանձնաժողովի կոլեգիային կից խորհրդատվական մարմինների կազմում ընդգրկվում են գործարար համայնքի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ անկախ փորձագետներ:

46. Հանձնաժողովի կոլեգիային կից խորհրդատվական մարմիններն իրենց լիազորությունների սահմաններում Հանձնաժողովի համար հանձնարարականներ են պատրաստում իրենց իրավասությանը վերաբերող հարցերի մասով: Խորհրդատվական մարմինների նիստերին ներկայացված՝ խորհրդատվական մարմինների անդամների առաջարկությունները չեն կարող դիտարկվել որպես անդամ պետությունների վերջնական դիրքորոշում:

47. Հանձնաժողովի կոլեգիային կից խորհրդատվական մարմինների գործունեության կազմակերպչական և տեխնիկական ապահովումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովի կոլեգիային կից խորհրդատվական մարմինների աշխատանքին անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների լիազոր ներկայացուցիչների մասնակցության հետ կապված ծախսերը հոգում են ուղարկող անդամ պետությունները: Հանձնաժողովի կոլեգիային կից խորհրդատվական մարմինների աշխատանքում գործարար համայնքի, գիտական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, այլ անկախ փորձագետների մասնակցության հետ կապված ծախսերը նշված անձինք հոգում են ինքնուրույն:

48. Հանձնաժողովի կոլեգիան իր լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ, կարգադրություններ և հանձնարարականներ:

Հանձնաժողովի կոլեգիայի կողմից ընդունված՝ Հանձնաժողովի որոշումները, կարգադրությունները և հանձնարարականները ստորագրում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը:

49. Հանձնաժողովի կոլեգիայի նիստերը, որպես կանոն, անցկացվում են առնվազն շաբաթական մեկ անգամ:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամները Հանձնաժողովի կոլեգիայի նիստին մասնակցում են անձամբ՝ առանց փոխարինման իրավունքի:

Եթե Հանձնաժողովի կոլեգիայի անդամի մասնակցությունը Հանձնաժողովի կոլեգիայի նիստին օբյեկտիվորեն անհնար է, ապա Կանոնակարգով սահմանված կարգով Հանձնաժողովի կոլեգիայի անդամն իրավունք ունի գրավոր ներկայացնելու իր դիրքորոշումը կամ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի լիազորագրով և համաձայնությամբ իր դիրքորոշումը ներկայացնելու իրավունքը պատվիրակելու Հանձնաժողովի այն դեպարտամենտի տնօրենին, որի իրավասության սահմաններում է գտնվում քննարկվող հարցը: Ընդ որում, Հանձնաժողովի դեպարտամենտի տնօրենը քվեարկելիս ձայնի իրավունք չունի:

Կոլեգիայի նիստերին կարող են մասնակցել անդամ պետություններից մեկական ներկայացուցիչ:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամներից նույնիսկ մեկի խնդրանքով Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի որոշման հիման վրա կարող են անցկացվել արտահերթ նիստեր: Հանձնաժողովի կոլեգիայի նիստերի անցկացման կարգը և քվեարկության ընթացակարգը սահմանվում են Կանոնակարգով:

50. Հանձնաժողովի կոլեգիայի նիստերի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերից յուրաքանչյուրին առնչվող փաստաթղթերի և նյութերի փաթեթը պարտադիր կարգով ուղարկվում է անդամ պետություններ՝ Կանոնակարգին համապատասխան, սակայն ոչ ուշ, քան Հանձնաժողովի կոլեգիայի նիստից 30 օրացուցային օր առաջ:

51. Հանձնաժողովի խորհրդի նախագահը.

1) կազմակերպում է Հանձնաժողովի կոլեգիայի գործունեությունը և պատասխանատվություն է կրում վերջինիս վրա դրված գործառույթների իրականացման համար,

2) սահմանված կարգով կազմում է Հանձնաժողովի կոլեգիայի և Հանձնաժողովի խորհրդի նիստերի ծրագրերի նախագծերը հերթական ժամանակահատվածի համար և Հանձնաժողովի կոլեգիայի, Հանձնաժողովի խորհրդի նիստերի օրակարգերի նախագծերը, ինչպես նաև Բարձրագույն խորհրդի և Միջկառավարական խորհրդի նիստերի օրակարգերի այն նախագծերը, որոնք ենթակա են հաստատման Հանձնաժողովի խորհրդի նիստում և ուղարկվում են անդամ պետություններին համապատասխան նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օր առաջ՝ անհրաժեշտ նյութերի կցմամբ,

3) Հանձնաժողովի խորհրդին, Միջկառավարական խորհրդին և Բարձրագույն խորհրդին զեկուցում է վերջիններիս կողմից լուծում պահանջող հարցերի վերաբերյալ, ինչպես նաև այլ փաստաթղթերի վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան առաջարկներ՝ ըստ Հանձնաժողովի կոլեգիայի նիստում դրանց քննարկման արդյունքների,

4) սահմանում է Հանձնաժողովի դեպարտամենտների աշխատանքի կարգը, ինչպես նաև Հանձնաժողովի դեպարտամենտների կառավարմանն առնչվող հարցերը,

5) կազմակերպում է Հանձնաժողովի կոլեգիայի, Հանձնաժողովի խորհրդի, Միջկառավարական խորհրդի և Բարձրագույն խորհրդի նիստերի նախապատրաստման աշխատանքը,

6) վարում է Հանձնաժողովի կոլեգիայի նիստերը,

7) մասնակցում է Հանձնաժողովի խորհրդի նիստերին,

8) Հանձնաժողովի խորհրդում ներկայացնում է Հանձնաժողովի կոլեգիան,

9) Հանձնաժողովի կոլեգիայի անդամների հետ համաձայնեցմամբ՝ Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը ներկայացնում է առաջարկներ Հանձնաժողովի դեպարտամենտները Հանձնաժողովի անդամներին կցելու վերաբերյալ,

10) սահմանում է զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ փոխգործակցության կարգը, Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցների հրապարակային ելույթների ու ծառայողական տեղեկությունների տրամադրման կանոնները,

11) Հանձնաժողովի անունից ներկայանում է որպես Միության բյուջեի կառավարիչ, Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի միջոցների կարգադրիչ է, տնօրինում է Հանձնաժողովի նյութական միջոցները, կնքում է քաղաքացիաիրավական պայմանագրեր և հանդես է գալիս դատարանում,

12) ըստ մրցույթի արդյունքների՝ նշանակում է Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրեններին և նրանց տեղակալներին ու նրանց հետ պայմանագրեր կնքում,

13) ըստ մրցույթի արդյունքների՝ Հանձնաժողովի անունից աշխատանքային պայմանագրեր է կնքում Հանձնաժողովի աշխատակիցների հետ,

14) հաստատում է Հանձնաժողովի դեպարտամենտների վերաբերյալ կանոնակարգերը,

15) նշանակում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների թվից,

16) Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցների նկատմամբ իրականացնում է գործատիրոջ ներկայացուցչի լիազորությունները, հաստատում է պաշտոնեական պարտականությունները (պաշտոնի անձնագրերը), արձակուրդների տրամադրման ժամանակացույցը, տրամադրում է արձակուրդներ և որոշումներ է ընդունում գործողումների վերաբերյալ,

17) ապահովում է այն փաստերի ստուգումը, որոնք ներկայացված են սույն Կանոնակարգի 35-ից 37-րդ կետերում նշված հիմքերով Հանձնաժողովի կոլեգիայի անդամին հետ կանչելու մասին անդամ պետության դիմումի մեջ՝ Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատված կարգով,

18) իրականացնում է Հանձնաժողովի կոլեգիայի և Հանձնաժողովի դեպարտամենտների՝ Կանոնակարգին համապատասխան գործունեություն ապահովելու համար անհրաժեշտ այլ գործառույթներ:

52. Պարտականությունների բաշխմանը համապատասխան՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամը.

1) իրականացնում է իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի վերաբերյալ առաջարկությունների պատրաստում,

2) Հանձնաժողովի կոլեգիայի և Հանձնաժողովի խորհրդի նիստերին ներկայացնում է զեկույցներ՝ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի վերաբերյալ,

3) համակարգում և հսկում է Հանձնաժողովի կողմից վերահսկվող դեպարտամենտների գործունեությունը,

4) պատրաստում է Հանձնաժողովի կոլեգիայի որոշումների, կարգադրությունների և հանձնարարականների նախագծերն այն հարցերի վերաբերյալ, որոնք գտնվում են իր իրավասության սահմաններում,

5) իրականացնում է անդամ պետությունների կողմից Միության իրավունքում ներառված միջազգային պայմանագրերի կատարման մոնիթորինգ՝ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի մասով,

6) իրականացնում է անդամ պետությունների կողմից Հանձնաժողովի՝ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի վերաբերյալ որոշումների կատարման մոնիթորինգ,

7) պատրաստում է փորձագիտական (գրավոր) եզրակացությունների նախագծեր անդամ պետությունների կողմից Հանձնաժողով ներկայացված՝ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերին առնչվող առաջարկների վերաբերյալ,

8) Հանձնաժողովի կոլեգիայի լիազորությունների շրջանակներում իրականացնում է փոխգործակցություն անդամ պետությունների պետական իշխանության մարմինների հետ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի մասով (այդ թվում՝ անդամ պետությունների պետական իշխանության մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջում է իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ),

9) ապահովում է միջազգային պայմանագրերի և Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունվող՝ Հանձնաժողովի որոշումների, կարգադրությունների և հանձնարարականների նախագծերի, ինչպես նաև Հանձնաժողովի՝ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերին առնչվող լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի մշակումը,

10) ապահովում է Հանձնաժողովի վերահսկվող դեպարտամենտների մասնակցությունը կարգավորող ազդեցության գնահատման ընթացակարգը սահմանված կարգով անցկացնելուն,

11) Հանձնաժողովի կոլեգիայի քննարկմանը առաջարկություններ է ներկայացնում Հանձնաժողովի կոլեգիային կից՝ վերջինիս իրավասության սահմաններում գտնվող հարցերի գծով խորհրդատվական մարմիններ ստեղծելու վերաբերյալ:

53. Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին արտոնություններ ու անձեռնմխելիություն, սոցիալական երաշխիքներ տրամադրելու հետ կապված հարցերը, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների և պարտադիր պետական սոցիալական ու կենսաթոշակային ապահովման հետ կապված հարցերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միությունում սոցիալական երաշխիքների, արտոնությունների և անձեռնմխելիության մասին» Կանոնակարգին համապատասխան (Պայմանագրի 32-րդ հավելված):

IV. Հանձնաժողովի դեպարտամենտները

54. Հանձնաժողովի խորհրդի և Հանձնաժողովի կոլեգիայի գործունեության ապահովումն իրականացնում են Հանձնաժողովի դեպարտամենտները:

Հանձնաժողովի դեպարտամենտների կազմի մեջ են մտնում պաշտոնատար անձինք և աշխատակիցները:

Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցների աշխատանքի ընդունումն իրականացվում է Պայմանագրի 9-րդ հոդվածին համապատասխան:

Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենները և նրանց տեղակալները նշանակվում են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից 4 տարի ժամկետով՝ մրցութային հանձնաժողովի առաջարկի հիման վրա:

Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենները և նրանց տեղակալները պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

ունենան անդամ պետություններից մեկի քաղաքացիությունը,

ունենան պաշտոնեական պարտականություններին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն (որակավորում), ինչպես նաև առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

Հանձնաժողովի դեպարտամենտները մրցույթային հիմունքներով համալրվում են անդամ պետությունների այն քաղաքացիների թվից, որոնք համապատասխանում են զբաղեցվող հաստիքին ներկայացվող՝ Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող որակավորման պահանջներին:

Հանձնաժողովի աշխատակիցներն աշխատանքի ընդունվում են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի հիման վրա:

Աշխատանքային պայմանագիր կնքելու, դրա գործողության ժամկետի երկարաձգելու կարգը և լուծարման հիմքերը հաստատվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից:

Թեկնածուներին կարող են ներկայացվել հավելյալ պահանջներ, որոնք նշվում են մրցույթի անցկացման կարգում:

Հանձնաժողովի աշխատակիցներն անցնում են ատեստավորում՝ Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանված կարգով:

55. Հանձնաժողովի դեպարտամենտներն իրականացնում են հետևյալ գործառույթները.

1) իրականացնում են Միության գործունեության հարցերով նյութերի, որոշումների, կարգադրությունների և հանձնարարականների նախագծերի պատրաստում (այդ թվում՝ միջազգային պայմանագրեր կնքելու և դրանցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ)՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների քննարկմանը ներկայացնելու նպատակով,

2) իրականացնում են անդամ պետությունների կողմից Միության իրավունքում ներառված միջազգային պայմանագրերի, Հանձնաժողովի կոլեգիայի, Հանձնաժողովի խորհրդի, Միջկառավարական խորհրդի և Բարձրագույն խորհրդի որոշումների և կարգադրությունների կատարման մոնիթորինգ՝ արդյունքները Հանձնաժողովի կոլեգիայի անդամների քննարկմանը ներկայացնելու նպատակով,

3) իրականացնում են Միության իրավունքով կարգավորվող ոլորտներում անդամ պետությունների օրենսդրությունների մոնիթորինգի և վերլուծության արդյունքների հիման վրա առաջարկությունների պատրաստում՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների քննարկմանը ներկայացնելու համար,

4) իրականացնում են Միության գործունեության համար անհրաժեշտ միջազգային պայմանագրերի և այլ փաստաթղթերի նախագծերի պատրաստումը,

5) փոխգործակցում են անդամ պետությունների պետական իշխանության մարմինների հետ,

6) իրականացնում են Միության բյուջեի նախագծերի և դրա կատարողականի վերաբերյալ հաշվետվության պատրաստում, մշակում են Հանձնաժողովի բյուջեի նախահաշվի նախագիծը և ապահովում դրա կատարումը,

7) ապահովում են Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի ավանդապահի գործառույթների իրականացումը Հանձնաժողովի կողմից,

8) սահմանված կարգով մասնակցում են կարգավորող ազդեցության գնահատման ընթացակարգի անցկացմանը և իրականացնում են այդ ընթացակարգի անցկացման մոնիթորինգ,

9) իրականացնում են Միության իրավունքում ներառված միջազգային պայմանագրերով, Բարձրագույն խորհրդի, Միջկառավարական խորհրդի և Հանձնաժողովի որոշումներով սահմանված այլ գործառույթներ (այդ թվում՝ Միության մարմինների աշխատանքի

կազմակերպմանը և Հանձնաժողովի գործունեության տեղեկատվական-տեխնիկական ապահովմանն ուղղված գործառույթներ):

56. Հանձնաժողովի պաշտոնատար անձինք և աշխատակիցները միջազգային ծառայողներ են:

Իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս Հանձնաժողովի պաշտոնատար անձինք և աշխատակիցներն անկախ են անդամ պետությունների պետական մարմիններից ու պաշտոնատար անձանցից և չեն կարող պահանջել կամ ստանալ ցուցումներ անդամ պետությունների իշխանության մարմիններից կամ պաշտոնատար անձանցից:

Յուրաքանչյուր անդամ պետություն պարտավորվում է հարգել Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցների կարգավիճակն ու նրանց վրա ազդեցություն չգործել ծառայողական պարտականությունները կատարելիս:

Հանձնաժողովի կազմում աշխատելու ժամանակահատվածում Հանձնաժողովի պաշտոնատար անձինք և աշխատակիցներն իրենց պաշտոնեական և ծառայողական պարտականությունների գործողության ամբողջ ժամկետի ընթացքում իրավունք չունեն Հանձնաժողովում աշխատանքը համատեղելու այլ աշխատանքի հետ կամ զբաղվելու մեկ այլ վարձատրվող գործունեությամբ՝ բացի մանկավարժական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեությունից:

57. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Հանձնաժողովի պաշտոնատար անձինք և աշխատակիցները յուրաքանչյուր տարի, Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամկետներում, Հանձնաժողով են ներկայացնում իրենց եկամուտների, գույքի և գույքային բնույթի պարտավորությունների, ինչպես նաև իրենց ընտանիքի անդամների եկամուտների, գույքի և գույքային բնույթի պարտավորությունների մասին տեղեկություններ (ամուսնու (կնոջ) և անչափահաս երեխաների):

58. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, ինչպես նաև Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից եկամուտների, գույքի և գույքային բնույթի պարտավորությունների մասին սույն Կանոնակարգին համապատասխան տրամադրվող տեղեկությունները համարվում են գաղտնի:

59. Սույն Կանոնակարգի 57-րդ և 58-րդ կետերում նշված տեղեկությունների հրապարակման մեջ մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

60. Սույն Կանոնակարգի 57-րդ և 58-րդ կետերում նշված տեղեկությունների հավաստիության ու ամբողջականության ստուգումն իրականացվում է Միջկառավարական խորհրդի կողմից հաստատված կարգով:

61. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Հանձնաժողովի պաշտոնատար անձինք և աշխատակիցները պարտավոր են միջոցներ ձեռնարկել կարգավորելու կամ կանխելու համար շահերի բախումը, որը կարող է առաջանալ Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Հանձնաժողովի պաշտոնատար անձի կամ աշխատակցի անձնական շահագրգռվածության առկայության պատճառով:

62. Հանձնաժողովի պաշտոնատար անձանց և աշխատակիցներին արտոնություններ ու անձեռնմխելիություն, սոցիալական երաշխիքներ տրամադրելու հետ կապված հարցերը, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների և պարտադիր պետական սոցիալական ու կենսաթոշակային ապահովման հետ կապված հարցերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միությունում սոցիալական երաշխիքների, արտոնությունների և անձեռնմխելիության մասին» Կանոնակարգին համապատասխան (Պայմանագրի 32-րդ հավելված):

ՀԱՎԵԼՎԱԾ 2
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ՍՏԱՏՈՒՏ
Եվրասիական տնտեսական միության դատարանի

ԳԼՈՒԽ I. Ընդհանուր դրույթներ

Դատարանի իրավական կարգավիճակը

1. Եվրասիական տնտեսական միության դատարանը (այսուհետ՝ Դատարան) Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) դատական մարմինն է, որը կազմավորվում և գործում է մշտական հիմունքներով՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին (այսուհետ՝ Պայմանագիր) և սույն Կանոնադրությանը համապատասխան:

2. Դատարանի գործունեության նպատակը, սույն Կանոնադրության դրույթների համաձայն, Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերի և Միության մարմինների որոշումների միատեսակ կիրառությունն ապահովելն է անդամ պետությունների և Միության մարմինների կողմից:

Սույն Կանոնադրության նպատակների համար Միության մարմիններ ասելով՝ ենթադրվում են Միության մարմինները՝ բացի Դատարանից:

3. Դատարանն օժտված է իրավաբանական անձի համար նախատեսված իրավունքներով:

4. Դատարանն իրականացնում է սեփական փաստաթղթաշրջանառությունը, ունի սեփական կնիք ու ձևաթուղթ՝ իր անվամբ, ստեղծում է պաշտոնական համացանցային կայք ու պաշտոնական տեղեկագիր:

5. Դատարանը մշակում է Դատարանի գործունեության ֆինանսավորման առաջարկներ և տնօրինում է այն միջոցները, որոնք «Միության բյուջեի մասին» Կանոնակարգի համաձայն տրամադրվում են Դատարանի գործունեության ապահովման համար:

6. Դատավորների, պաշտոնատար անձանց և Դատարանի աշխատակիցների վարձատրության պայմանները սահմանվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

ԳԼՈՒԽ II. Դատարանի կազմը

7. Դատարանի կազմում յուրաքանչյուր անդամ պետությունից ընդգրկվում է երկու դատավոր:

8. Դատավորի լիազորությունների ժամկետն ինը տարի է:

9. Դատավորները պետք է ունենան բարձր բարոյական հատկանիշներ, լինեն միջազգային և ներպետական իրավունքի ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչպես նաև, որպես կանոն, պետք է համապատասխանեն անդամ պետությունների բարձրագույն դատական մարմիններին ներկայացվող պահանջներին:

10. Դատավորները նշանակվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից՝ անդամ պետությունների ներկայացմամբ: Դատավորը պաշտոնը ստանձնելիս երդում է տալիս:

11. Դատավորները պաշտոնից ազատվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

12. Դատավորի լիազորությունները կարող են դադարեցվել հետևյալ հիմքերով՝

1) Դատարանի գործունեության դադարեցումը.

2) դատավորի լիազորությունների ժամկետը լրանալը.

3) դատավորի գրավոր դիմումի առկայությունը՝ իր լիազորությունները վայր դնելու մասին՝ կապված այլ աշխատանքի անցնելու հետ կամ այլ պատճառներով.

4) առողջական վիճակի կամ այլ հարգելի պատճառներով դատավորի լիազորությունների կատարման անընդունակությունը.

5) դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի գործունեությամբ զբաղվելը.

6) Միությունում այն պետության անդամակցության դադարեցումը, որի կողմից ներկայացված է դատավորը.

7) դատավորի կողմից այն անդամ պետության քաղաքացիությունը կորցնելը, որի կողմից նա ներկայացված է.

8) դատավորի կողմից այնպիսի լուրջ իրավախախտում կատարելը, որն անհամատեղելի է դատավորի բարձր կարգավիճակի հետ.

9) դատավորի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն ուժի մեջ մտնելը կամ դատավորի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշման առկայությունը.

10) դատավորի գործունակությունը սահմանափակելու կամ նրան անգործունակ ճանաչելու մասին դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելը.

11) դատավորի մահը կամ նրան մահացած հայտարարելու կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելը:

13. Սույն Կանոնադրության 12-րդ կետում նշված հիմքերով դատավորի լիազորությունների դադարեցման նախաձեռնությամբ կարող է հանդես գալ դատավորին ներկայացրած անդամ պետությունը, Դատարանը կամ ինքը՝ դատավորը:

Դատավորի լիազորությունները դադարեցնելու նախաձեռնությամբ հանդես գալու հարցերը սահմանվում են Եվրասիական տնտեսական միության դատարանի աշխատակարգով (այսուհետ՝ Աշխատակարգ), որը հաստատվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

14. Դատարանի գործունեության ղեկավարումն իրականացնում է Դատարանի նախագահը: Դատարանի նախագահն ունի տեղակալ:

Դատարանի գործունեությանը Դատարանի նախագահի մասնակցության ժամանակավոր անհնարինության դեպքում այդ պարտականությունները կատարում է Դատարանի նախագահի տեղակալը:

15. Դատարանի նախագահը և նրա տեղակալն ընտրվում են Դատարանի կազմից՝ Աշխատակարգի համաձայն և հաստատվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

Դատարանի նախագահը և նրա տեղակալը չեն կարող լինել միևնույն անդամ պետության քաղաքացի:

Լիազորությունների դադարեցման դեպքում Դատարանի նախագահը և նրա տեղակալն ընտրվում են այլ անդամ պետությունների կողմից ներկայացված դատավորներից՝ բացառությամբ այն անդամ պետությունների, որոնց կողմից ներկայացվել են համապատասխանաբար Դատարանի նախորդ նախագահը և նրա տեղակալը:

16. Դատարանի նախագահի և նրա տեղակալի լիազորությունների իրականացման ժամկետը երեք տարի է:

17. Դատարանի նախագահը՝

1) հաստատում է դատավորների և դատարանի գործունեության ու կազմավորման կարգը.

2) կազմակերպում է Դատարանի գործունեությունը.

3) լիազորությունների սահմաններում ապահովում է Դատարանի համագործակցությունն անդամ պետությունների լիազորված մարմինների, օտարերկրյա և միջազգային դատական մարմինների հետ.

4) սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով Դատարանի աշխատակիցներին ու պաշտոնատար անձանց նշանակում է պաշտոնի և ազատում է պաշտոնից.

5) կազմակերպում է Դատարանի գործունեության մասին տեղեկությունների տրամադրումը զանգվածային լրատվության միջոցներին.

6) սույն Կանոնադրության սահմաններում իրականացնում է այլ լիազորություններ:

18. Դատավորները չեն կարող ներկայացնել պետական կամ միջպետական մարմինների կամ կազմակերպությունների, առևտրային կառույցների, քաղաքական կուսակցությունների և շարժումների, ինչպես նաև տարածքների, ազգերի, ժողովուրդների, սոցիալական կամ կրոնական խմբերի ու առանձին անհատների շահեր:

Դատավորներն իրավունք չունեն զբաղվելու ցանկացած այնպիսի գործունեությամբ, որը կապված է շահույթ ստանալու հետ՝ բացի գիտական, ստեղծագործական և մանկավարժական գործունեությունից:

19. Դատավորը չի կարող մասնակցել որևէ այնպիսի գործի լուծմանը, որին նա ավելի վաղ մասնակցել է որպես վեճի կողմերից մեկի ներկայացուցիչ, լիազորված անձ կամ փաստաբան, ազգային կամ միջազգային դատարանի, քննչական հանձնաժողովի անդամ կամ որևէ այլ կարգավիճակով:

20. Դատավորները արդարադատություն իրականացնելիս հավասար են և օժտված են միևնույն կարգավիճակով: Դատարանի նախագահը և նրա տեղակալն իրավասու չեն ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են այլ դատավորների նկատմամբ ցանկացած ոչ իրավաչափ առավելություն ձեռք բերելուն:

21. Ինչպես իր լիազորություններն իրականացնելիս, այնպես էլ արտածառայողական հարաբերություններում դատավորը պետք է խուսափի շահերի բախումից, ինչպես նաև այն ամենից, ինչը կարող է նսեմացնել դատական իշխանության հեղինակությունը, դատավորի արժանապատվությունը կամ կասկածի տակ դնել իր անկողմնակալությունը, արդարությունն ու անաչառությունը:

ԳԼՈՒԽ III. Դատարանի աշխատակազմը Պաշտոնատար անձանց և աշխատակիցների կարգավիճակը

22. Դատարանի գործունեությունն ապահովում է Դատարանի աշխատակազմը:

23. Դատարանի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկվում են դատավորների քարտուղարությունները և Դատարանի քարտուղարությունը:

24. Դատավորի քարտուղարությունը կազմված է դատավորի խորհրդականից և դատավորի օգնականից:

25. Դատարանի քարտուղարության կողմից իրականացվում է իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և Դատարանի գործունեության այլ ապահովում:

26. Դատարանի քարտուղարության կառուցվածքն ու թվակազմը հաստատվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

27. Դատարանի քարտուղարությունը ղեկավարում է Դատարանի քարտուղարության ղեկավարը: Դատարանի քարտուղարության ղեկավարն ունի երկու տեղակալ: Դատարանի քարտուղարության ղեկավարն ու նրա տեղակալները համարվում են Դատարանի պաշտոնատար անձինք, որոնք նշանակվում են պաշտոնի և ազատվում են պաշտոնից սույն Կանոնադրությանը և Պայմանագրին համապատասխան: Դատարանի քարտուղարության ղեկավարն ու նրա տեղակալները չեն կարող լինել միևնույն անդամ պետության քաղաքացիներ:

28. Աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվում են Պայմանագրով, Միության շրջանակներում կնքվող կիրառելի միջազգային պայմանագրերով և Դատարանի գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ:

29. Դատավորի խորհրդականը համարվում է Դատարանի պաշտոնատար անձ, որը նշանակվում է պաշտոնի և ազատվում է պաշտոնից Դատարանի նախագահի կողմից համապատասխան դատավորի առաջարկով:

30. Դատավորի խորհրդականն իրականացնում է դատավորի գործունեության տեղեկատվական և վերլուծական ապահովումը:

31. Դատավորի խորհրդականը պետք է ունենա բարձր բարոյական հատկանիշներ, լինի միջազգային իրավունքի և (կամ) արտաքին տնտեսական գործունեության ոլորտներում փորձառու մասնագետ:

32. Դատավորի օգնականը Դատարանի աշխատակից է, որը Դատարանի նախագահի կողմից նշանակվում է պաշտոնի և ազատվում է պաշտոնից համապատասխան դատավորի առաջարկով:

33. Դատավորի օգնականն իրականացնում է դատավորի գործունեության կազմակերպական ապահովում:

34. Դատարանի քարտուղարության ղեկավարի և նրա տեղակալների պաշտոնը զբաղեցնելու համար թեկնածուների ընտրությունը Դատարանի մրցութային հանձնաժողովի կողմից իրականացվում է մրցութային հիմունքներով՝ հաշվի առնելով անդամ պետությունների հավասար ներկայացվածության սկզբունքը:

Նշված պաշտոնները զբաղեցնելու մրցույթին մասնակցության համար նախատեսված թեկնածությունները ներկայացվում են անդամ պետությունների կողմից:

35. Դատարանի քարտուղարությունը մրցութային հիմունքներով կազմավորվում է անդամ պետությունների քաղաքացիներից՝ հաշվի առնելով Միության բյուջեում անդամ պետությունների մասնաբաժինը:

Դատարանի քարտուղարության աշխատակիցներն աշխատանքի են ընդունվում իրենց հետ կնքվող աշխատանքային պայմանագրի հիման վրա:

36. Դատարանի քարտուղարությունում պաշտոն զբաղեցնելու համար թեկնածուների ընտրության հարցերով Դատարանի մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Դատարանի բոլոր դատավորները՝ բացառությամբ Դատարանի նախագահի:

Մրցութային հանձնաժողովի անդամներն ընտրում են Մրցութային հանձնաժողովի նախագահ:

Մրցութային հանձնաժողովն իր որոշումներն ընդունում է ձայների մեծամասնությամբ հանձնարարականների տեսքով և ներկայացնում է դրանք Դատարանի նախագահին՝ նշանակման համար:

37. Դատարանի քարտուղարությունում թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցույթի անցկացման կարգը սահմանվում է Դատարանի կողմից և հաստատվում է Դատարանի նախագահի կողմից՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից սահմանվող մրցույթի անցկացման հիմնական կանոնների համաձայն:

38. Դատարանի քարտուղարության տեխնիկական անձնակազմն աշխատանքի է ընդունվում Դատարանի քարտուղարության ղեկավարի կողմից՝ նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի հիման վրա:

ԳԼՈՒԽ IV. Դատարանի իրավասությունը

39. Դատարանը քննում է այն վեճերը, որոնք ծագում են Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի և (կամ) Միության մարմինների որոշումների կիրարկման հարցերի շուրջ.

1) անդամ պետության դիմումի համաձայն՝

Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիրը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին համապատասխանելու մասին,

այլ անդամ պետության (այլ անդամ պետությունների) կողմից Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը և (կամ) Միության մարմինների որոշումները, ինչպես նաև նշված միջազգային պայմանագրերի և (կամ) որոշումների առանձին դրույթները պահպանելու մասին,

Հանձնաժողովի որոշումների կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին և (կամ) Միության մարմինների որոշումներին համապատասխանելու մասին,

Հանձնաժողովի գործողությունը (անգործությունը) վիճարկելու մասին.

2) տնտեսավարող սուբյեկտի դիմումի համաձայն՝

ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության ոլորտում անմիջականորեն տնտեսավարող սուբյեկտի իրավունքներին և օրինական շահերին առնչվող Հանձնաժողովի որոշումը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխանելու մասին, եթե այդպիսի որոշումը կամ դրա առանձին դրույթները հանգեցրել են Պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով տնտեսավարող սուբյեկտի համար նախատեսված իրավունքների և օրինական շահերի խախտմանը,

Հանձնաժողովի՝ ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության ոլորտում անմիջականորեն տնտեսավարող սուբյեկտի իրավունքներին և օրինական շահերին առնչվող գործողությունը (անգործությունը) վիճարկելու մասին, եթե այդպիսի գործողությունը (անգործությունը) հանգեցրել է Պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով տնտեսավարող սուբյեկտի համար նախատեսված իրավունքների և օրինական շահերի խախտմանը:

Սույն Կանոնադրության նպատակների համար տնտեսավարող սուբյեկտ ասելով՝ ենթադրվում է իրավաբանական անձ, որը գրանցված է անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրության համաձայն, կամ ֆիզիկական անձ, որը գրանցված է որպես անհատ ձեռնարկատեր՝ անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրության համաձայն:

40. Անդամ պետությունները կարող են Դատարանի իրավասությանը վերապահել այլ վեճեր, որոնց լուծումը Դատարանի կողմից անմիջականորեն նախատեսված է Պայմանագրով, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերով կամ անդամ պետությունների միջև կնքվող այլ միջազգային պայմանագրերով:

41. Վեճի լուծման մասով Դատարանի իրավասության առկայության հարցը որոշվում է Դատարանի կողմից: Դատարանը վեճի քննության համար իր կողմից իրավասություններով օժտված լինելու հարցը որոշելիս առաջնորդվում է Պայմանագրով, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով և (կամ) երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերով:

42. Դատարանի իրավասության մեջ չի մտնում Միության մարմիններին Պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով ուղղակիորեն նախատեսված իրավասություններից բացի լրացուցիչ իրավասություններով օժտելը:

43. Վեճը Դատարանի կողմից վարույթ չի ընդունվում առանց Պայմանագրով և Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված խորհրդատվությունների, բանակցությունների կամ այլ եղանակներով հարցը նախադատական կարգով կարգավորելու համար հայտատուի կողմից անդամ պետությանը կամ Հանձնաժողովին դիմելու՝ բացառությամբ Պայմանագրով ուղղակիորեն սահմանված դեպքերի:

44. Եթե անդամ պետությունը կամ Հանձնաժողովը հայտատուի դիմումն ընդունելու պահից 3 ամսվա ընթացքում համապատասխան միջոցներ չի ձեռնարկում հարցը նախադատական կարգով կարգավորելու համար, ապա վեճը քննելու վերաբերյալ դիմումը կարող է ուղարկվել Դատարան:

45. Վեճի կողմերի փոխադարձ համաձայնությամբ վեճը կարող է հանձնվել Դատարանի քննությանը՝ մինչև սույն Կանոնադրության 44-րդ կետում նշված ժամկետը լրանալը:

46. Դատարանը, անդամ պետության կամ Միության մարմնի դիմումի համաձայն, իրականացնում է Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի և Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանում, ինչպես նաև, Միության մարմինների և Դատարանի աշխատակիցների և պաշտոնատար անձանց դիմումի համաձայն, աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված՝ Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի և Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանում (այսուհետ՝ պարզաբանում):

47. Դատարանի կողմից պարզաբանում իրականացնելը ենթադրում է խորհրդատվական եզրակացության ներկայացում և անդամ պետություններին չի զրկում միջազգային պայմանագրերը համատեղ մեկնաբանելու իրավունքից:

48. Դատարանն իրականացնում է երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերի դրույթների պարզաբանում, եթե դա նախատեսված է այդպիսի միջազգային պայմանագրերով:

49. Վեճի քննության կամ պարզաբանման համար անդամ պետության անունից Դատարան դիմելն իրականացվում է անդամ պետության լիազորված մարմինների և կազմակերպությունների կողմից, որոնց ցանկը սահմանվում է յուրաքանչյուր անդամ պետության կողմից և դիվանագիտական ուղիներով ուղարկվում է Դատարան:

50. Դատարանն արդարադատություն իրականացնելիս կիրառում է՝

1) միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքները և նորմերը.

2) Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը և այլ միջազգային պայմանագրեր, որոնց մասնակիցները վեճի կողմ հանդիսացող պետություններն են.

3) Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները.

4) միջազգային սովորույթը՝ որպես համընդհանուր գործելակերպի ապացույց, որը ճանաչված է որպես իրավական նորմ:

51. Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի և երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերի դրույթները, կապված վեճերի կարգավորման, պարզաբանման և մեկնաբանման հետ, կիրառվում են սույն Կանոնադրությանը չհակասող մասում:

ԳԼՈՒԽ V. Վարույթը

Բաժին 1
Վեճերի կարգավորման գործերով վարույթը

52. Դատարանում վեճերի կարգավորման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Աշխատակարգով:

53. Դատարանը վարույթն իրականացնում է՝ հիմնվելով հետևյալ սկզբունքների վրա՝

դատավորների անկախություն.

քննության հրապարակայնություն.

հրապարակայնություն.

վեճի կողմերի հավասարություն.

մրցակցություն.

կոլեգիալություն:

Վարույթի իրականացման սկզբունքների կիրարկման կարգը սահմանվում է Աշխատակարգով:

54. Միության շրջանակներում կնքվող որևէ միջազգային պայմանագրի և (կամ) Հանձնաժողովի որոշման կապակցությամբ դիմումը Դատարանի կողմից ընդունելը հիմք չէ այդ միջազգային պայմանագրի և (կամ) որոշման և (կամ) դրա առանձին դրույթների գործողության դադարեցման համար՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք ուղղակիորեն նախատեսված են Պայմանագրով:

55. Դատարանը կարող է Դատարան դիմում ներկայացրած տնտեսավարող սուբյեկտներից, անդամ պետությունների լիազորված մարմիններից կամ կազմակերպություններից, ինչպես նաև Միության մարմիններից պահանջել գործի քննության համար անհրաժեշտ նյութերը:

56. Սահմանափակ տարածման տեղեկությունները կարող են ընդունվել Դատարանի կողմից կամ ներկայացվել գործին մասնակցող անձի կողմից՝ Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի, Աշխատակարգի և անդամ պետությունների օրենսդրության համաձայն: Դատարանը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ այդպիսի տեղեկությունների պաշտպանության համար:

57. Դատարանում վարույթն իրականացվում է վեճի կողմերի, հայտատուի, նրանց ներկայացուցիչների, փորձագետների, այդ թվում՝ մասնագիտացված խմբերի փորձագետների, մասնագետների, վկաների և թարգմանիչների մասնակցությամբ:

58. Գործին մասնակցող անձինք օգտվում են դատավարական իրավունքներից և կրում են դատավարական պարտականություններ՝ Աշխատակարգի համաձայն:

59. Մասնագիտացված խմբերի փորձագետներին շնորհվում է անձեռնմխելիություն վարչական, քաղաքացիական և քրեական իրավազորությունից, ամբողջ ասվածի և գրածի առնչությամբ՝ կապված Դատարանի կողմից գործի քննության գործընթացում նրանց մասնակցության հետ: Այս անձինք անձեռնմխելիությունը կորցնում են Աշխատակարգով սահմանված սահմանափակ տարածման տեղեկատվության օգտագործման և պաշտպանության կարգի խախտման դեպքում:

60. Եթե անդամ պետությունը կամ Հանձնաժողովը գտնում են, որ վեճի առնչությամբ որոշումը կարող է վնաս հասցնել իրենց շահերին, ապա այդ անդամ պետությունը կամ Հանձնաժողովը կարող է ներկայացնել միջնորդություն՝ գործում որպես վեճի շահագրգիռ մասնակից հանդես գալը թույլատրելու մասին:

61. Դատարանն առանց քննության է թողնում վնասների փոխհատուցման կամ այլ գույքային բնույթի պահանջները:

62. Տնտեսավարող սուբյեկտի կողմից Դատարան դիմելու դեպքում գանձվում է տուրք:

63. Տուրքը տնտեսավարող սուբյեկտի կողմից վճարվում է նախքան Դատարան դիմում ներկայացնելը:

64. Դատարանի կողմից տնտեսավարող սուբյեկտի դիմումի մեջ ներկայացված պահանջները բավարարելու դեպքում տուրքը վերադարձվում է:

65. Տուրքի չափը, վճարման արժույթը, հաշվեգրման, օգտագործման և վերադարձնելու կարգը սահմանվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

66. Գործի քննության ընթացքում յուրաքանչյուր կողմ ինքնուրույն է կրում իր դատական ծախսերը:

67. Գործի քննության ցանկացած փուլում կողմերը կարող են վեճը կարգավորել հաշտության համաձայնության կնքմամբ՝ հայտատուի կողմից իր պահանջներից հրաժարվելու կամ դիմումը հետ վերցնելու միջոցով:

Բաժին 2
Պարզաբանման գործերով վարույթը

68. Պարզաբանման գործերով քննության կարգը սահմանվում է Աշխատակարգով:

69. Դատարանն իրականացնում է պարզաբանման գործերով վարույթ՝ դատավորների անկախության և կոլեգիալության սկզբունքների հիման վրա:

Բաժին 3
Դատարանի կազմը

70. Դատարանը գործը քննում է Դատարանի մեծ կոլեգիայի, Դատարանի կոլեգիայի և Դատարանի բողոքարկման պալատի կազմով:

71. Դատարանը վեճերի լուծման վերաբերյալ գործերը քննում է Դատարանի մեծ կոլեգիայի նիստերին սույն Կանոնադրության 39-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերում:

72. Մեծ կոլեգիան քննում է Աշխատակարգով նախատեսված ընթացակարգային հարցեր:

73. Դատարանը պարզաբանման մասին գործեր է քննում Դատարանի մեծ կոլեգիայի նիստերին:

74. Դատարանի մեծ կոլեգիայի կազմում ընդգրկվում են Դատարանի բոլոր դատավորները:

75. Դատարանի մեծ կոլեգիայի դատական նիստը իրավազոր է համարվում այն դեպքում, երբ նիստին ներկա են Դատարանի բոլոր դատավորները:

76. Դատարանը նիստ է գումարում Դատարանի կոլեգիայի կազմով սույն Կանոնադրության 39-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում:

77. Դատարանի կոլեգիայի կազմում ընդգրկվում է յուրաքանչյուր անդամ պետությունից մեկ դատավոր՝ ըստ դատավորների ազգանունների հերթականության՝ ռուսերենի այբուբենի առաջին տառից սկսած:

78. Դատարանի կոլեգիայի դատական նիստը իրավազոր է համարվում այն դեպքում, երբ նիստին ներկա է յուրաքանչյուր անդամ պետությունից մեկ դատավոր:

79. Դատարանի կոլեգիայի որոշումների բողոքարկման մասին դիմումներ քննելիս Դատարանը նիստ է գումարում Դատարանի բողոքարկման պալատի կազմով:

80. Դատարանի բողոքարկման պալատի կազմում ընդգրկվում են Դատարանի՝ անդամ պետությունների կողմից ներկայացված դատավորները, որոնք մասնակցություն չեն ունեցել այն գործի քննությանը, որի առնչությամբ Դատարանի կոլեգիայի կայացրած որոշումը բողոքարկվում է:

81. Դատարանի բողոքարկման պալատի դատական նիստն իրավազոր է համարվում, եթե դրան յուրաքանչյուր անդամ պետությունից մասնակցում է մեկ դատավոր:

ԳԼՈՒԽ VI. Մասնագիտացված խմբերը

82. Կոնկրետ վեճի քննության ընթացքում, որի առարկան արդյունաբերական լրավճարների, գյուղատնտեսության պետական աջակցության միջոցների, հատուկ պաշտպանողական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների տրամադրման հարցերն են, ստեղծվում է մասնագիտացված խումբ:

83. Մասնագիտացված խումբը կազմված է երեք փորձագետից՝ յուրաքանչյուր ցուցակից մեկ փորձագետ՝ ներկայացված յուրաքանչյուր անդամ պետության կողմից՝ ըստ համապատասխան վեճի տեսակի:

84. Մասնագիտացված խմբի կազմը հաստատվում է Դատարանի կողմից:

85. Գործի քննությունն իրականացնելուց հետո մասնագիտացված խումբը կազմալուծվում է:

86. Անդամ պետությունները Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 60 օրացուցային օր հետո Դատարան են ուղարկում նվազագույնը երեք այնպիսի փորձագետից կազմված ցանկ, ըստ սույն Կանոնադրության 82-րդ կետով նախատեսված վեճի յուրաքանչյուր տեսակի, որոնք պատրաստ են և կարող են հանդես գալ որպես մասնագիտացված խմբերի անդամներ:

Անդամ պետությունները կանոնավոր հիմունքներով, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ թարմացնում են փորձագետների ցանկը:

87. Որպես փորձագետներ հանդես են գալիս ֆիզիկական անձինք, որոնք բարձր որակավորման մասնագետներ են և ունեն հատուկ գիտելիքներ ու փորձ սույն Կանոնադրության 82-րդ կետում նշված՝ վեճերի առարկան կազմող հարցերում:

88. Փորձագետները հանդես են գալիս որպես անհատներ, գործում են անկախ, ինչպես նաև կապված չեն վեճի կողմերից որևէ մեկի հետ և նրանցից որևէ ցուցում չեն կարող ստանալ:

89. Փորձագետը շահերի բախման առկայության դեպքում չի կարող հանդես գալ որպես մասնագիտացված խմբի անդամ:

90. Մասնագիտացված խումբը պատրաստում է եզրակացություն, որը պարունակում է գործի փաստական հանգամանքների անկողմնակալ գնահատականը, և Աշխատակարգով սահմանված ժամկետներում այն ներկայացնում է Դատարան:

91. Մասնագիտացված խմբի եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ, բացառությամբ սույն Կանոնադրության 92-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի, և Դատարանի կողմից գնահատվում է սույն Կանոնադրության 104-110-րդ կետերով նախատեսված որոշումներից մեկն ընդունելիս:

92. Մասնագիտացված խմբի կողմից վեճի վերաբերյալ պատրաստած եզրակացությունը, որի առարկան արդյունաբերական լրավճարների կամ գյուղատնտեսության պետական աջակցության միջոցների տրամադրման հարցերն են, պետք է պարունակի խախտման առկայության կամ բացակայության մասին եզրահանգումներ, ինչպես նաև խախտման առկայության դեպքում՝ համապատասխան փոխհատուցման միջոցների կիրառման մասին եզրահանգումներ:

Եզրահանգումների՝ խախտման առկայության կամ բացակայության մասով մասնագիտացված խմբի եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ և Դատարանի կողմից գնահատվում է սույն Կանոնադրության 104-110-րդ կետերով նախատեսված որոշումներից մեկն ընդունելիս:

Մասնագիտացված խմբի՝ եզրահանգումների համապատասխան փոխհատուցման միջոցների կիրառման մասով եզրակացությունը պարտադիր է Դատարանի համար որոշումներ ընդունելիս:

93. Մասնագիտացված խմբերի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է Աշխատակարգով:

94. Մասնագիտացված խմբերի փորձագետների ծառայությունների վճարման կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

ԳԼՈՒԽ VII. Դատարանի ակտերը

95. Դատարանը Աշխատակարգով սահմանված ժամկետներում ընդունում է Դատարանի գործունեության ընթացակարգային հարցերով որոշումներ՝ ներառյալ որոշումներ՝

1) դիմումը վարույթ ընդունելու կամ ընդունելը մերժելու մասին.

2) գործով վարույթը կասեցնելու կամ վերականգնելու մասին.

3) գործով վարույթը դադարեցնելու մասին:

96. Դիմումն ընդունելու օրվանից ոչ ուշ, քան 90 օրվա ընթացքում Դատարանը վեճի քննության արդյունքներով ընդունում է որոշում, իսկ պարզաբանման մասին դիմումի դեպքում ներկայացնում է խորհրդատվական եզրակացություն:

97. Աշխատակարգով նախատեսված դեպքերում որոշում ընդունելու ժամկետը կարող է երկարաձգվել:

98. Պարզաբանման մասին դիմումի համաձայն տրամադրված խորհրդատվական եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ:

99. Սույն Կանոնադրության 39-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված վեճերի քննության արդյունքներով Դատարանն ընդունում է որոշում, որը վեճի կողմերի կողմից կատարման համար պարտադիր է:

100. Սույն Կանոնադրության 39-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված վեճերի քննության արդյունքներով Դատարանն ընդունում է որոշում, որը Հանձնաժողովի կողմից կատարման համար պարտադիր է:

101. Դատարանի որոշումը չի կարող դուրս գալ դիմումի մեջ նշված հարցերի շրջանակից:

102. Դատարանի որոշումը չի փոփոխում և (կամ) չի վերացնում Միության գործող իրավունքի նորմերը, անդամ պետությունների օրենսդրությունները և չի ստեղծում նորը:

103. Առանց սույն Կանոնադրության 111-113-րդ կետերի դրույթներին հակասելու՝ վեճի կողմերը կարող են ինքնուրույն սահմանել Դատարանի որոշման կատարման ձևն ու եղանակը:

104. Անդամ պետության դիմումի համաձայն Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիրը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին համապատասխանելու վերաբերյալ գործի քննության արդյունքներով Դատարանի մեծ կոլեգիան ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիրը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին չհամապատասխանելու մասին.

2) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիրը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին համապատասխանելու մասին:

105. Անդամ պետության դիմումի համաձայն Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը և (կամ) Միության մարմինների որոշումները, ինչպես նաև նշված միջազգային պայմանագրերի և (կամ) որոշումների առանձին դրույթներն այլ անդամ պետության (այլ անդամ պետությունների) կողմից պահպանելու վերաբերյալ գործի քննության արդյունքներով Դատարանի մեծ կոլեգիան ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը և (կամ) Միության մարմինների որոշումները, ինչպես նաև նշված միջազգային պայմանագրերի և (կամ) որոշումների առանձին դրույթներն անդամ պետության (անդամ պետությունների) կողմից պահպանելու փաստն արձանագրելու մասին.

2) Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը և (կամ) Միության մարմինների որոշումները, ինչպես նաև նշված միջազգային պայմանագրերի և (կամ) որոշումների առանձին դրույթներն անդամ պետության (անդամ պետությունների) կողմից չպահպանելու փաստն արձանագրելու մասին:

106. Անդամ պետության դիմումի համաձայն Հանձնաժողովի որոշումը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին և (կամ) Միության մարմինների որոշումներին համապատասխանելու վերաբերյալ գործի քննության արդյունքներով Դատարանի մեծ կոլեգիան ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) Հանձնաժողովի որոշման կամ դրա առանձին դրույթների՝ Պայմանագրին, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին և (կամ) Միության մարմինների որոշումներին չհամապատասխանելու մասին.

2) Հանձնաժողովի որոշման կամ դրա առանձին դրույթների՝ Պայմանագրին, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին և (կամ) Միության մարմինների որոշումներին համապատասխանելու մասին:

107. Անդամ պետության դիմումի համաձայն Հանձնաժողովի գործողության (անգործության) բողոքարկման վերաբերյալ գործի քննության արդյունքներով Դատարանի մեծ կոլեգիան ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) բողոքարկվող գործողությունը (անգործությունը) Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին չհամապատասխանող ճանաչելու մասին.

2) բողոքարկվող գործողությունը (անգործությունը) Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխանող ճանաչելու մասին:

108. Տնտեսավարող սուբյեկտի դիմումի համաձայն ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության ոլորտում անմիջականորեն տնտեսավարող սուբյեկտի իրավունքներին ու օրինական շահերին առնչվող Հանձնաժողովի որոշումը կամ դրա առանձին դրույթները

Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխանելու վերաբերյալ գործի քննության արդյունքներով Դատարանի կոլեգիան, եթե տվյալ որոշումը կամ դրա առանձին դրույթները հանգեցրել են Պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված՝ տնտեսավարող սուբյեկտի իրավունքների ու օրինական շահերի խախտմանը, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) Հանձնաժողովի որոշումը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխանող ճանաչելու մասին.

2) Հանձնաժողովի որոշումը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին չհամապատասխանող ճանաչելու մասին:

109. Տնտեսավարող սուբյեկտի դիմումի համաձայն Հանձնաժողովի գործողության (անգործության) բողոքարկման վերաբերյալ գործի քննության արդյունքներով Դատարանի մեծ կոլեգիան ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) Հանձնաժողովի բողոքարկվող գործողությունը (անգործությունը) Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին չհամապատասխանող ու ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության ոլորտում տնտեսավարող սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը խախտող ճանաչելու մասին.

2) Հանձնաժողովի բողոքարկվող գործողությունը (անգործությունը) Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխանող ու ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության ոլորտում տնտեսավարող սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը չխախտող ճանաչելու մասին:

110. Տնտեսավարող սուբյեկտի դիմումի համաձայն Դատարանի կոլեգիայի որոշման բողոքարկման վերաբերյալ գործի քննության արդյունքներով Դատարանի բողոքարկման պալատն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) Դատարանի կոլեգիայի որոշումն անփոփոխ թողնելու, իսկ բողոքարկման մասին դիմումը չբավարարելու մասին.

2) Դատարանի կոլեգիայի որոշումն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելու կամ այն փոփոխելու, սույն Կանոնադրության 108-րդ և 109-րդ կետերին համապատասխան նոր որոշում կայացնելու մասին:

111. Հանձնաժողովի որոշումը կամ դրա առանձին դրույթները, որոնք Դատարանի կողմից ճանաչվել են Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին չհամապատասխանող, շարունակում են գործողության մեջ մնալ Դատարանի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ նախքան Հանձնաժողովի կողմից տվյալ որոշումը կատարելը:

Հանձնաժողովի որոշումը կամ դրա առանձին դրույթները, որոնք Դատարանի կողմից ճանաչվել են Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին չհամապատասխանող, Հանձնաժողովի կողմից համապատասխանեցվում են Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին ողջամիտ, սակայն Դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում, եթե այլ ժամկետ սահմանված չէ Դատարանի որոշմամբ:

Դատարանը, հաշվի առնելով Պայմանագրի և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի դրույթները, իր որոշման մեջ կարող է Հանձնաժողովի որոշումը Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխանեցնելու համար սահմանել այլ ժամկետ:

112. Վեճի կողմերից մեկի հիմնավորված միջնորդության առկայության դեպքում Հանձնաժողովի որոշման կամ դրա առանձին դրույթների գործողությունը, որոնք Դատարանի կողմից ճանաչվել են Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին չհամապատասխանող, կարող է Դատարանի որոշմամբ կասեցվել այդպիսի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

113. Դատարանի որոշմամբ այլ ժամկետ սահմանված չլինելու դեպքում Հանձնաժողովը պարտավոր է ողջամիտ, սակայն Դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում կատարել Դատարանի ուժի մեջ մտած այն

որոշումը, որով Դատարանը սահմանել է, որ Հանձնաժողովի բողոքարկվող գործողությունը (անգործությունը) չի համապատասխանում Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին և որ Հանձնաժողովի այդպիսի գործողությամբ (անգործությամբ) խախտվել են տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը, որոնք նախատեսված են Պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

114. Դատարանի որոշումը չկատարելու դեպքում անդամ պետությունն իրավասու է դիմել Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդ՝ դրա կատարման հետ կապված անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

115. Հանձնաժողովի կողմից Դատարանի որոշումը չկատարելու դեպքում տնտեսավարող սուբյեկտն իրավասու է Դատարան դիմել դրա կատարման համար միջոցներ ձեռնարկելու միջնորդությամբ:

Դատարանը, տնտեսավարող սուբյեկտի միջնորդությամբ, այն ստանալու օրվանից 15 օրացուցային օրվա ընթացքում դիմում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդ՝ տվյալ հարցով որոշում ընդունելու համար:

116. Դատարանի ակտերը ենթակա են հրապարակման Դատարանի պաշտոնական տեղեկագրում և Դատարանի պաշտոնական համացանցային կայքում:

117. Դատարանի որոշումը գործի կողմերի հիմնավորված միջնորդության առկայության դեպքում կարող է պարզաբանվել միայն Դատարանի կողմից՝ առանց դրա էության և բովանդակության փոփոխման:

ԳԼՈՒԽ VIII. Եզրափակիչ դրույթներ

118. Դատավորները, պաշտոնատար անձինք, Դատարանի աշխատակիցները, գործին մասնակցող անձինք, մասնագիտացված խմբերի փորձագետները գործի քննության ընթացքում իրենց կողմից ստացված տեղեկությունները չեն հրապարակում և երրորդ կողմին չեն փոխանցում առանց տվյալ տեղեկությունները տրամադրած անձի գրավոր համաձայնության:

119. Սահմանափակ տարածման տեղեկություններն օգտագործելու ու պաշտպանելու կարգը սահմանվում է Աշխատակարգով:

120. Դատարանն իր գործունեության մասին յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների և տեղեկատվական փոխգործակցության մասին

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 23-րդ հոդվածին համապատասխան՝ տեղեկատվական փոխգործակցության հիմնարար սկզբունքները սահմանելու և Միության շրջանակներում դրա իրագործումը համակարգելու, ինչպես նաև ինտեգրված տեղեկատվական համակարգը ստեղծելու և զարգացման կարգը սահմանելու նպատակներով:

2. Սույն Արձանագրության մեջ գործածվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«էլեկտրոնային փաստաթղթի թղթային օրինակ»՝ թղթային կրիչով էլեկտրոնային փաստաթղթի օրինակը, որը հաստատվել է անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով.

«վստահված երրորդ կողմ»՝ կազմակերպություն, որին անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան վերապահված է էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրած անձի առնչությամբ ժամանակի ֆիքսված պահին էլեկտրոնային փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրությունը (էլեկտրոնային ստորագրությունը) ստուգելու մասով գործունեություն իրականացնելու իրավունք.

«անդամ պետության ազգային հատվածի պատվիրատու»՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող՝ անդամ պետության պետական մարմին, որն իրականացնում է անդամ պետության ազգային հատվածի ձևավորման, զարգացման և շահագործման աշխատանքների պատվիրատուի ու կազմակերպչի գործառույթներ.

«տեղեկությունների պաշտպանություն»՝ տեղեկությունների և դրանց մշակման միջոցների գաղտնիությունը, ամբողջականությունն ու հասանելիությունը սահմանելու, դրանց հասնելու և պահպանելու վերաբերյալ իրավական, կազմակերպական և տեխնիկական միջոցների ամբողջության ընդունումը և իրագործումը՝ սուբյեկտների տեղեկատվական փոխգործակցության համար անթույլատրելի ռիսկերի բացառման կամ նվազեցման նպատակով.

«Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ»՝ անդամ պետությունների ազգային հատվածներով և Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածով միավորված, ըստ տարածքների տեղաբաշխված՝ լիազոր մարմինների պետական տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվական համակարգերի, Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվական համակարգերի կազմակերպական ամբողջություն.

«տեղեկատվական համակարգ»՝ տեղեկատվական ռեսուրսների մշակումն ապահովող տեղեկատվական տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների ամբողջություն.

«տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ»՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության գործընթացների իրագործման մեթոդների ու միջոցների ամբողջություն.

«տեղեկատվական տեխնոլոգիաներ»՝ տեղեկություններ փնտրելու, հավաքագրելու, կուտակելու, համակարգելու, պահպանելու, ճշտելու, մշակելու, տրամադրելու, տարածելու և վերացնելու (ոչնչացնելու) գործընթացները, մեթոդները, ինչպես նաև այդ գործընթացներն ու մեթոդներն իրականացնելու եղանակները.

«տեղեկատվական ռեսուրս»՝ տեղեկատվական համակարգերում ընդգրկված փաստաթղթավորված տեղեկությունների (տվյալների բազաներ, տեղեկությունների այլ զանգվածներ) կանոնակարգված ամբողջություն.

«դասակարգիչ»՝ դասակարգման օբյեկտների անվանումների համակարգված, կառուցվածքավորված և կոդիֆիկացված ցանկ.

«անդամ պետության ազգային հատված, Հանձնաժողովի ինտեգրացիոն հատված»՝ տեղեկատվական համակարգեր, որոնցով ապահովվում է լիազոր մարմինների տեղեկատվական համակարգերի և Հանձնաժողովի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվական փոխգործակցությունը Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի շրջանակներում.

«նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ»՝ լիազոր մարմինների միջև տեղեկատվական փոխանակումն իրականացնելու ժամանակ օգտագործվող տեղեկագրքերի և դասակարգիչների ամբողջություն.

«տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածք»՝ Միության շրջանակներում օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերին իրավաբանական ուժ տալու նպատակներով իրականացվող տեղեկատվական-տեխնոլոգիական և կազմակերպաիրավական միջոցառումների, կանոնների ու որոշումների ամբողջություն.

«ընդհանուր տեղեկատվական ռեսուրս»՝ Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրս, որը ձևավորվում է կենտրոնացված վարման միջոցով կամ անդամ պետությունների տեղեկատվական փոխգործակցության հիման վրա.

«Միության շրջանակներում ընդհանուր գործընթաց»՝ անդամ պետություններից մեկի տարածքում սկսվող, իսկ մեկ այլ անդամ պետության տարածքում ավարտվող (փոփոխվող) գործառնություններ և ընթացակարգեր, որոնք կանոնակարգված (սահմանված) են Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով ու անդամ պետությունների օրենսդրությամբ.

«տեղեկագիրք»՝ համակարգված, կառուցվածքավորված և կոդիֆիկացված ցանկ, որն իր բովանդակությամբ կամ տեղեկությունների բնույթով համանման է.

«էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտներ»՝ պետական մարմիններ, ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք փոխգործակցում են էլեկտրոնային փաստաթղթեր,

ինչպես նաև էլեկտրոնային տեսքով տեղեկություններ կազմելիս, ուղարկելիս, փոխանցելիս, ստանալիս, պահպանելիս և օգտագործելիս ծագող հարաբերությունների շրջանակներում.

«վստահության անդրսահմանային տարածք»՝ անդամ պետությունների կողմից՝ լիազոր մարմինների միջև տվյալների և էլեկտրոնային փաստաթղթերի միջպետական փոխանակման ժամանակ վստահության ապահովման նպատակով համաձայնեցված իրավական, կազմակերպական և տեխնոլոգիական պայմանների ամբողջություն.

«տեղեկությունների դասակարգման և ծածկագրման միասնականացված համակարգ»՝ նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների տեղեկագրքերի, դասակարգիչների, ինչպես նաև դրանց մշակման, վարման և կիրառման կարգի ու մեթոդաբանության ամբողջություն.

«լիազոր մարմին»՝ անդամ պետության պետական մարմին կամ դրա կողմից սահմանված կազմակերպություն, որն օժտված է առանձին ոլորտներում պետական քաղաքականություն իրականացնելու լիազորություններով.

«հաշվառման համակարգ»՝ տեղեկատվական համակարգ, որը տեղեկություններ է պարունակում էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների իրավահաստատող փաստաթղթերից, և որի օգտագործման միջոցով կազմվում կամ տրվում են իրավաբանական նշանակությամբ էլեկտրոնային փաստաթղթեր.

«փոխգործակցության էլեկտրոնային ձև»՝ տեղեկատվական փոխգործակցության եղանակ, որը հիմնված է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման վրա.

«փաստաթղթի էլեկտրոնային տեսք»՝ տեղեկություններ, տեղեկույթ, տվյալներ, որոնք ներկայացված են էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգտագործմամբ մարդու կողմից ընկալելի, ինչպես նաև տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ դրանց փոխանցման և մշակման համար պիտանի տարբերակով՝ պահպանելով ձևաչափի և կառուցվածքի սահմանված պահանջները.

«էլեկտրոնային փաստաթուղթ»՝ էլեկտրոնային տեսքով փաստաթուղթ, որը հաստատված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ (էլեկտրոնային ստորագրությամբ), և որը համապատասխանում է տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի պահանջներին:

3. Արտաքին և փոխադարձ առևտրի՝ ինտեգրված տեղեկատվական համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման հիման վրա աշխատանքներ են իրականացվում Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ ինտեգրված համակարգ) ստեղծելու, դրա գործունեությունն ու զարգացումն ապահովելու նպատակով, որը տեղեկատվական աջակցություն է ապահովում հետևյալ հարցերով՝

1) մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորում,

2) մաքսային կարգավորում,

3) սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների տեխնիկական կանոնակարգում, կիրառում,

4) ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրում ու բաշխում,

5) հակագնագցման և փոխհատուցման տուրքերի հաշվեգրում ու բաշխում,

6) վիճակագրություն,

7) մրցակցային քաղաքականություն,

8) էներգետիկ քաղաքականություն,

9) արժութային քաղաքականություն,

10) մտավոր սեփականություն,

11) ֆինանսական շուկաներ (բանկային ոլորտ, ապահովագրական ոլորտ, արժութային շուկա, արժեթղթերի շուկա),

12) Միության մարմինների գործունեության ապահովում,

13) մակրոտնտեսական քաղաքականություն,

14) արդյունաբերական և ագրոարդյունաբերական քաղաքականություն,

15) դեղամիջոցների և բժշկական արտադրատեսակների շրջանառություն,

16) Միության լիազորությունների սահմաններում այլ հարցեր (իր զարգացմանը զուգահեռ ինտեգրված համակարգի ընդգրկման տիրույթում ներառվող):

4. Ինտեգրված համակարգի ձևավորման հիմնական խնդիրներն են՝

1) Միության նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների միասնական համակարգ ստեղծելն ու վարելը դասակարգման և ծածկագրման միասնականացված համակարգի հիման վրա,

2) Միության շրջանակներում տվյալների և էլեկտրոնային փաստաթղթերի միջպետական փոխանակման ինտեգրված տեղեկատվական կառուցվածք ստեղծելը,

3) անդամ պետությունների համար ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներ ստեղծելը,

4) ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների ձևավորումն ապահովելու, պետական հսկողություն իրականացնող լիազոր մարմինների տեղեկատվական ապահովումն իրականացնելու, ինչպես նաև Միության շրջանակներում ընդհանուր գործընթացներն իրականացնելու համար Պայմանագրի դրույթների հիման վրա տեղեկատվական փոխգործակցություն ապահովելը,

5) Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի և ակտերի ու Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի և ակտերի նախագծերի տեքստերին, ինչպես նաև ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներին ու անդամ պետությունների տեղեկատվական ռեսուրսներին հասանելիություն ապահովելը,

6) տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածք ստեղծելը և դրա գործունեությունն ապահովելը:

5. Ինտեգրված համակարգի շրջանակներում ձևավորվում են ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներ, որոնք պարունակում են՝

1) անդամ պետությունների օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտեր, Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրեր և ակտեր,

2) նորմատիվ-տեղեկատվական տեղեկություններ, որոնք կազմվում են տվյալների բազայի կենտրոնացված վարման միջոցով կամ անդամ պետությունների տեղեկատվական փոխգործակցության հիման վրա,

3) անդամ պետությունների և Հանձնաժողովի տեղեկատվական փոխգործակցության հիման վրա ձևավորվող ռեեստրներ,

4) պաշտոնական վիճակագրական տեղեկություններ,

5) անդամ պետությունների տեղեկատվական-մեթոդական, գիտական, տեխնիկական և այլ տեղեկատվական-վերլուծական նյութեր,

6) ինտեգրված համակարգի զարգացմանը զուգահեռ ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների կազմում ներառվող այլ տեղեկություններ:

6. Ինտեգրված համակարգ ձևավորելիս անդամ պետությունները ելնում են հետևյալ սկզբունքներից՝

1) շահերի ընդհանրություն և փոխշահավետություն,

2) ինտեգրված համակարգի համար տեղեկությունների նախապատրաստման վերաբերյալ միասնական մեթոդաբանական մոտեցումների կիրառում տվյալների ընդհանուր մոդելի հիման վրա,

3) տեղեկությունների մատչելիություն, հավաստիություն և ամբողջականություն,

4) տեղեկությունները ժամանակին ներկայացնելը,

5) ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների մակարդակին համապատասխանություն,

6) անդամ պետությունների տեղեկատվական համակարգերին ինտեգրում,

7) ինտեգրված համակարգում առկա տեղեկատվական ռեսուրսներին անդամ պետությունների հավասար հասանելիության ապահովում,

8) ներկայացված տեղեկությունները միայն հայտարարված նպատակներով օգտագործելն առանց այն տրամադրած անդամ պետությանը վնաս հասցնելու,

9) ինտեգրված համակարգի բաց լինելը օգտվողների բոլոր կատեգորիաների համար՝ հաշվի առնելով տեղեկությունների օգտագործմանը ներկայացվող պահանջի պահպանումը՝ հայտարարված նպատակներին համապատասխան,

10) լիազոր մարմինների, լիազոր մարմինների և Հանձնաժողովի միջև ինտեգրված համակարգի օգտագործմամբ տեղեկությունների փոխանակման իրականացում անհատույց հիմքով:

7. Նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների կազմի մեջ մտնող տեղեկագրքերի և դասակարգիչների կազմն ու բովանդակությունը, Պայմանագրին և Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին համապատասխան, սահմանվում են Հանձնաժողովի կողմից լիազոր մարմինների հետ համաձայնեցմամբ:

8. Ինտեգրված համակարգ ձևավորելիս անդամ պետություններն առաջնորդվում են միջազգային ստանդարտներով և առաջարկություններով:

9. Ընդհանուր տեղեկատվական ռեսուրսներ ձևավորելու, Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների իրականացումը ապահովելու և ինտեգրված համակարգի միջոցների օգտագործմամբ պետական հսկողության տարբեր տեսակներն արդյունավետ իրականացնելու նպատակներով ապահովվում է լիազոր մարմինների, լիազոր մարմինների և Հանձնաժողովի, ինչպես նաև Հանձնաժողովի ու ինտեգրացիոն միավորումների, միջազգային կազմակերպությունների միջև փոխգործակցության էլեկտրոնային ձև: Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկը, Միության շրջանակներում ընդհանուր գործընթացներն իրականացնելու տեխնոլոգիան, փոխգործակցության ընթացքում հաղորդագրություններ (հարցումներ) ուղարկելու և ստանալու կարգն ու կանոնակարգը, փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակին (էլեկտրոնային փաստաթուղթ) ներկայացվող պահանջները սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ Պայմանագրով սահմանված կարգով:

10. էլեկտրոնային ձևով փոխգործակցության ընթացքում ներկայացվող տեղեկությունների ցանկը սահմանվում է Պայմանագրով կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով:

11. Լիազոր մարմիններին տեղեկություններ ներկայացնելու առնչությամբ տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց համար հավասար պայմաններ ստեղծելու, լիազոր մարմինների, տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց միջև փոխգործակցության էլեկտրոնային ձևերը համաձայնեցված կերպով զարգացնելու նպատակով Հանձնաժողովն իրավասու է փոխգործակցության նշված տեսակների համար Միության շրջանակներում փաստաթղթերի, էլեկտրոնային տարբերակի (էլեկտրոնային փաստաթղթերի), փոխգործակցության ընթացքում հաղորդագրություններ (հարցումներ) ուղարկելու և ստանալու կարգի նկատմամբ սահմանելու միասնական, միասնականացված պահանջներ կամ երաշխավորելու դրանց կիրառումը:

12. էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործմամբ փոխգործակցության էլեկտրոնային ձևի դեպքում, ինչպես նաև տեղեկատվական համակարգերում դրանց մշակման դեպքում պահպանվում են հետևյալ սկզբունքները՝

1) եթե անդամ պետության օրենսդրությամբ պահանջվում է փաստաթուղթը ձևակերպել թղթային կրիչով, ապա Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող՝ փաստաթղթավորման կանոնների և պահանջների համաձայն ձևակերպված էլեկտրոնային փաստաթուղթը համարվում է այդ կանոններին և պահանջներին համապատասխանող.

2) Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող՝ փաստաթղթավորման կանոնների և պահանջների համաձայն ձևակերպված էլեկտրոնային փաստաթուղթն ըստ իրավաբանական ուժի հավասարազոր է ճանաչվում ստորագրությամբ կամ ստորագրությամբ և կնիքով հաստատված՝ թղթային կրիչով համանման փաստաթղթին.

3) փաստաթուղթը չի կարող զրկվել իրավաբանական ուժից միայն այն հիմքով, որ այն կազմված է էլեկտրոնային փաստաթղթի ձևով.

4) էլեկտրոնային փաստաթղթերից տեղեկություններ վերցնելու դեպքում, այդ թվում՝ ձևաչափերը և կառուցվածքները վերափոխելու դեպքում դրանց մշակման նպատակով տեղեկատվական համակարգերում ապահովվում է դրանց նույնականությունն էլեկտրոնային փաստաթղթերում նշված համանման տեղեկություններին.

5) Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով կամ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հաշվառման համակարգի օգտագործմամբ հնարավոր է ապահովել էլեկտրոնային փաստաթղթերի թղթային օրինակների ձևակերպումը:

13. Վստահության անդրսահմանային տարածքի զարգացումն իրականացվում է Հանձնաժողովի և անդամ պետությունների կողմից՝ միջպետական տեղեկատվական

փոխգործակցության ժամանակ իրավաբանական ուժ ունեցող էլեկտրոնային փաստաթղթերի և ծառայությունների օգտագործման ռազմավարությանն ու հայեցակարգին համապատասխան:

14. Տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքը բաղկացած է պետական բաղադրիչներից և ինտեգրացիոն բաղադրիչից:

15. Տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի ինտեգրացիոն բաղադրիչի օպերատորը Հանձնաժողովն է:

16. Տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի պետական բաղադրիչների օպերատորները լիազոր մարմիններն են կամ դրանց կողմից սահմանված կազմակերպությունները՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

17. Տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի ինտեգրացիոն բաղադրիչը հանդիսանում է վստահության անդրսահմանային տարածքի տարրերի ամբողջություն, որոնք ապահովում են անդրսահմանային էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության իրականացումը՝ համաձայնեցված ստանդարտների և ենթակառուցվածքային որոշումների հիման վրա:

18. Վստահության անդրսահմանային տարածքի ստեղծմանը, զարգացմանը և գործունեությանն ուղղված պահանջները մշակվում են Հանձնաժողովի կողմից՝ լիազոր մարմինների հետ փոխգործակցությամբ և հաստատվում են Հանձնաժողովի կողմից: Տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի բաղադրիչների ստուգումը նշված պահանջներին համապատասխանության վերաբերյալ իրականացվում է անդամ պետությունների և Հանձնաժողովի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի մասին դրույթը, որը ներառում է դրա ձևավորման և գործունեության իրականացման կարգը, սահմանվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

19. էլեկտրոնային փաստաթղթերի պաշտպանության տարբեր մեխանիզմներ օգտագործող էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների միջև էլեկտրոնային փաստաթղթերով տեղեկատական փոխանակումն ապահովվում է տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի օպերատորների կողմից տրամադրվող ծառայությունների, այդ թվում՝ վստահված երրորդ կողմի ծառայությունների օգտագործմամբ:

20. Վստահված երրորդ կողմի ծառայությունները տրամադրվում են անդամ պետությունների և Հանձնաժողովի կողմից: Անդամ պետությունների վստահված երրորդ կողմի ծառայությունների օպերատորները լիազոր մարմիններն են կամ դրանց կողմից սահմանված (հավատարմագրված) կազմակերպությունները: Հանձնաժողովի վստահված երրորդ կողմի ծառայությունների օպերատորը Հանձնաժողովն է: Անդամ պետություններն ապահովում են վստահված երրորդ կողմերի ծառայություններից օգտվելու՝ էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների իրավունքը:

21. Վստահված երրորդ կողմի հիմնական խնդիրներն են՝

1) էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների (էլեկտրոնային ստորագրությունների) օրինականացման իրականացում (իսկության հաստատում)՝ ժամանակի ֆիքսված պահին,

2) էլեկտրոնային փաստաթղթերի միջազգային (անդրսահմանային) փոխանակման ժամանակ վստահության երաշխիքների ապահովում,

3) ելից և (կամ) մտից էլեկտրոնային փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրությունների (էլեկտրոնային ստորագրությունների) կիրառման իրավաչափության ապահովում՝ անդամ պետությունների օրենսդրությանը և Հանձնաժողովի ակտերին համապատասխան:

22. Հաշվառման համակարգի շրջանակներում տեղեկատվական ռեսուրսների վարման և օգտագործման կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

23. էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործմամբ փոխգործակցության էլեկտրոնային ձևի ապահովման առնչությամբ Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում տեղեկությունների պաշտպանության՝ անդամ պետությունների համար փոխընդունելի մակարդակի ապահովում,

2) հաշվառման համակարգերում տեղեկությունների և տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի, այդ թվում՝ տեղեկատվական

փոխգործակցության սուբյեկտների հասանելիության միջոցների պաշտպանության ապահովման նպատակով որոշումների մշակում,

3) տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի բաղադրիչների կազմի սահմանում անդամ պետությունների միջպետական ստանդարտների, միջազգային ստանդարտների և առաջարկությունների հիման վրա,

4) տիպային տեղեկատվական-տեխնոլոգիական որոշումների և ծրագրա-ապարատային համալիրների մշակման ու փորձարկումների համակարգում՝ տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի շրջանակներում,

5) տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու կանոնների, տեղեկություններն էլեկտրոնային տեսքով փաստաթղթավորելու ընդհանուր ենթակառուցվածքի առանձին բաղադրիչների և ծառայությունների աշխատանքի կանոնակարգերի, ինչպես նաև էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների համար դրանց կիրառման վերաբերյալ առաջարկությունների մշակման համակարգում,

6) Միության շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության ընթացքում էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործման դեպքում անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման, ինչպես նաև հաշվառման համակարգերի միջև տեղեկատվական փոխգործակցության միջերեսների միասնականացման համար առաջարկությունների նախապատրաստում,

7) վստահության անդրսահմանային տարածքի ձևավորման առանձին հարցերով անդամ պետությունների՝ երրորդ կողմի հետ փոխգործակցության համակարգում:

24. Անդամ պետություններն ապահովում են լիազոր մարմինների տեղեկատվական ռեսուրսներում, տեղեկատվական համակարգերում և տեղեկատվահեռահաղորդակցական ցանցերում առկա տեղեկությունների պաշտպանությունը՝ անդամ պետությունների օրենսդրության պահանջներին համապատասխան:

25. Անդամ պետությունների օրենսդրությամբ պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) կամ սահմանափակ տարածում (հասանելիություն) ունեցող տեղեկատվություն համարվող տեղեկությունների փոխանակումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրության՝ դրանց պաշտպանությանը վերաբերող պահանջների պահպանմամբ:

26. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ պետական գաղտնիք կամ սահմանափակ տարածում (հասանելիություն) ունեցող տեղեկատվություն համարվող տվյալներ պարունակող տեղեկությունների փոխանակման կարգը սահմանվում է Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով:

27. Ինտեգրված համակարգի ստեղծումը համակարգվում է Հանձնաժողովի կողմից, որն ապահովում է դրա գործունեությունն ու զարգացումը անդամ պետությունների ազգային հատվածի պատվիրատուների հետ փոխգործակցության արդյունքում՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից մշակվող և Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող ինտեգրված համակարգի զարգացման ռազմավարությունը: Ինտեգրված համակարգի ստեղծման, դրա գործունեության ապահովման և զարգացման աշխատանքներն իրականացվում են Հանձնաժողովի՝ լիազոր մարմինների հետ փոխգործակցության արդյունքում մշակող և Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող ծրագրերի հիման վրա (նշելով Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ստեղծման, գործունեության ապահովման և զարգացման աշխատանքների ժամկետներն ու արժեքները):

28. Հանձնաժողովը սեփականատիրոջ իր իրավունքներն իրականացնում և պարտականությունները կատարում է ինտեգրման համակարգի այնպիսի բաղադրիչների առնչությամբ, ինչպիսիք Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածը, Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսներն ու տեղեկատվական համակարգերն են, ինչպես նաև կազմակերպում է դրանց նախագծումը, մշակումը, ներդնումը, աշխատանքների արդյունքների ընդունումն ու հետագա պահպանումը:

29. Հանձնաժողովն իրականացնում է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվերներ (գնումներ), ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվերներ (գնումներ) կատարելու ժամանակ ներկայացված մրցույթային առաջարկների գնահատում և սույն Արձանագրության 28-րդ կետում նշված ինտեգրված համակարգի բաղկացուցիչների առնչությամբ գույքային իրավունքների ձեռքբերում:

30. Ինտեգրված համակարգի հատվածների ստեղծման, զարգացման և գործունեության ժամանակ կազմակերպական ու տեխնիկական որոշումների կիրառման միասնականացումն ապահովելու, տեղեկությունների պաշտպանության պատշաճ մակարդակը պահպանելու նպատակներով Հանձնաժողովը համակարգում է տեխնիկական, տեխնոլոգիական, մեթոդական և կազմակերպչական փաստաթղթերի նախագծերի մշակումն ու հաստատում դրանք:

31. Անդամ պետությունը սահմանում է անդամ պետության ազգային հատվածի պատվիրատուին, որն իրականացնում է իրավունքներ և կատարում պարտականություններ՝ այն ստեղծելու, գործունեությունն ու զարգացումն ապահովելու մասով:

32. Անդամ պետություններն ունեն ինտեգրված համակարգից օգտվելու հավասար իրավունքներ:

33. Սույն Արձանագրության 28-րդ կետում նշված ինտեգրված համակարգի բաղկացուցիչների ստեղծման, զարգացման և գործունեության ապահովման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է Միության բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում, դրանց ստեղծման և զարգացման աշխատանքների առնչությամբ՝ ելնելով սույն Արձանագրության 27-րդ կետում նշված ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ ծավալներից:

34. Պետական տեղեկատվական ռեսուրսների և լիազոր մարմինների տեղեկատվական համակարգերի, ինչպես նաև անդամ պետությունների ազգային հատվածների ստեղծման, զարգացման և գործունեության ապահովման աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է անդամ պետությունների բյուջեի՝ լիազոր մարմինների գործունեության ապահովման համար նախատեսված միջոցների հաշվին:

ՀԱՎԵԼՎԱԾ 4
«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձևավորման և տարածման կարգի մասին

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 23-րդ հոդվածի համաձայն՝ Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձևավորման և տարածման կարգը սահմանելու նպատակով:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկություններ»՝ վիճակագրական տեղեկություններ, որոնք ձևավորվում են լիազոր մարմինների կողմից վիճակագրական աշխատանքների ազգային ծրագրերի շրջանակներում և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

«Միության պաշտոնական վիճակագրական տեղեկություններ»՝ վիճակագրական տեղեկություններ, որոնք ձևավորվում են Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների, միջազգային կազմակերպությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների և անդամ պետությունների օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից ստացված այլ տեղեկությունների հիման վրա.

«լիազոր մարմիններ»՝ անդամ պետությունների պետական մարմիններ, այդ թվում՝ ազգային (կենտրոնական) բանկեր, որոնց վերապահված են անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունները ձևավորելու գործառույթները:

3. Անդամ պետություններին և Հանձնաժողովին փոխադարձ առևտրում անդամ պետությունների միջև փոխադրվող ապրանքների վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տեղեկություններ ապահովելու նպատակով լիազոր մարմիններն իրականացնում են այլ անդամ պետությունների հետ ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության վարում:

4. Ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության վարումն իրականացվում է լիազոր մարմինների հետ՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող մեթոդաբանությանը համապատասխան:

5. Լիազոր մարմինները Հանձնաժողով են ներկայացնում անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունները՝ վիճակագրական ցուցանիշների ցանկի համաձայն:

6. Վիճակագրական ցուցանիշների ցանկը, անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունները ներկայացնելու ժամկետները և ձևաչափերը հաստատվում են Հանձնաժողովի կողմից՝ լիազոր մարմինների համաձայնությամբ:

7. Հանձնաժողովն իրավունք ունի լիազոր մարմիններից պահանջելու անդամ պետությունների այլ պաշտոնական վիճակագրական տեղեկություններ, որոնք ներառված չեն վիճակագրական ցուցանիշների ցանկում:

8. Լիազոր մարմինները ձեռնարկում են միջոցներ՝ ապահովելու անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ամբողջականությունը, հավաստիությունը և Հանձնաժողովին ժամանակին ներկայացնելը, տեղեկացնում են Հանձնաժողովին պաշտոնական վիճակագրական տեղեկությունները սահմանված ժամկետներում ներկայացնելու անհնարինության մասին:

9. Սույն Արձանագրության դրույթները չեն տարածվում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պետական գաղտնիք կամ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկություն համարվող՝ անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների վրա:

10. Հանձնաժողովն իրականացնում է Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների հավաքագրում, կուտակում, համակարգում, վերլուծություն և տարածում, լիազոր մարմինների հարցումների հիման վրա նշված տեղեկությունների տրամադրում, ինչպես նաև վիճակագրության ոլորտում լիազոր մարմինների տեղեկատվական և մեթոդաբանական փոխգործակցության համակարգում սույն Արձանագրության շրջանակներում:

11. Հանձնաժողովը մշակում և հաստատում է Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձևավորման մեթոդաբանությունը, որը կազմվում է Հանձնաժողովին տրամադրվող՝ անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների հիման վրա:

12. Հանձնաժողովը ձեռնարկում է միջոցներ՝ ուղղված անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների համադրելիությունն ապահովելուն՝ լիազոր մարմինների կողմից միջազգային մակարդակում միասնական, համադրելի ստանդարտների, այդ թվում՝ դասակարգումների և մեթոդաբանության կիրառման առնչությամբ համապատասխան առաջարկություններ ընդունելու միջոցով:

13. Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների տարածումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ վերջինիս հաստատած վիճակագրական աշխատանքների ծրագրին համապատասխան Հանձնաժողովի պաշտոնական հրատարակություններում հրապարակելու և ինտերնետ ցանցում Միության պաշտոնական կայքում տեղադրելու միջոցով:

14. Հանձնաժողովը լիազոր մարմինների հետ համատեղ մշակում և հաստատում է վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման ծրագրեր:

ՀԱՎԵԼՎԱԾ 5
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 26-րդ հոդվածին համապատասխան և սահմանում է անդամ պետությունների միջև այն ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման ու բաշխման կարգը, որոնց

վճարման պարտավորությունը Միության տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Սույն Արձանագրությունը կիրառվում է նաև այն տույժերի (տոկոսների) գումարների նկատմամբ, որոնք հաշվեգրվել են ներմուծման մաքսատուրքերի գումարներին՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով ու ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով:

2. Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«լիազոր մարմնի միասնական հաշիվ»՝ լիազոր մարմնի համար ազգային (կենտրոնական) բանկում կամ ազգային (կենտրոնական) բանկում թղթակցային հաշիվ ունեցող լիազոր մարմնում բացված հաշիվ՝ տվյալ անդամ պետության բյուջեների միջև մուտքերի հաշվեգրման և բաշխման համար.

«հաշվետու օր»՝ անդամ պետության այն աշխատանքային օրը, որի ընթացքում կատարվում է ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրում լիազոր մարմնի միասնական հաշվին.

«կետանցի դիմաց տոկոս»՝ գումար, որն անդամ պետությունը մյուս անդամ պետություններին պետք է փոխանցի սույն Արձանագրության դրույթների այնպիսի խախտման համար, որի հետևանքով անդամ պետության՝ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված գումարները փոխանցելու մասով պարտավորությունները չեն կատարվել, ամբողջությամբ չեն կատարվել և (կամ) ժամանակին չեն կատարվել.

«արտարժութային հաշիվ»՝ մեկ անդամ պետության լիազոր մարմնի համար ազգային (կենտրոնական) բանկում մյուս անդամ պետության արժույթով բացված հաշիվ՝ այդ մյուս անդամ պետության կողմից ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված մուտքերը հաշվեգրելու համար.

«ընթացիկ օր»՝ անդամ պետության այն աշխատանքային օրը, որը հաջորդում է հաշվետու օրվան և որի ընթացքում իրականացվում են հաշվետու օրվա համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման հետ կապված գործառնությունները.

«լիազոր մարմին»՝ անդամ պետության այն պետական մարմինը, որն իրականացնում է տվյալ անդամ պետության բյուջեի կատարման դրամարկղային սպասարկումը:

Սույն Արձանագրության մեջ օգտագործվող մյուս հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով և Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքով սահմանված իմաստներով:

II. Անդամ պետությունների միջև ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրման և բաշխման կարգը

3. Ներմուծման մաքսատուրքերի գումարները ենթակա են ազգային արժույթով հաշվեգրման այն անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք ենթակա են վճարման՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան, այդ թվում՝ ներմուծման մաքսատուրքերի գանձման դեպքում:

Վճարողները լիազոր մարմնի միասնական հաշվին ներմուծման մաքսատուրքերը փոխանցում են առանձին հաշվարկային (վճարային) փաստաթղթերով (հանձնարարականներով):

Ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց կարող են հաշվանցվել անդամ պետության օրենսդրությանը համապատասխան վճարման ենթակա հարկերը և տուրքերը, ինչպես նաև այլ վճարներ (բացառությամբ հատուկ, հակագնագցման և փոխհատուցման տուրքերի), որոնք մուտքագրվել են լիազոր մարմնի միասնական հաշիվ:

«Հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման տուրքերի հաշվեգրման ու բաշխման մասին» Կանոնակարգին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 8-րդ հավելվածի հավելված)՝ կարող են գանձվել հատուկ, հակագնագցման և փոխհատուցման տուրքեր՝ ներմուծման մաքսատուրքերի վճարման մասով վճարողների պարտքի մարման դիմաց:

Ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, եթե մաքսային

իրավահարաբերությունները կարգավորող և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով ու ակտերով այլ բան նախատեսված չէ, հաշվի առնելով սույն Արձանագրության դրույթները:

Ներմուծման մաքսատուրքերի գումարները չեն կարող հաշվանցվել այլ վճարների կատարման դիմաց՝ բացառությամբ այնպիսի հաշվանցման, որը կատարվում է մաքսավճարների, հատուկ, հակագնագցման և փոխհատուցման տուրքերի, ինչպես նաև տույժերի (տոկոսների) վճարման մասով վճարողների պարտքի մարման դիմաց (այսուհետ՝ պարտքի մարման դիմաց հաշվանցում):

4. Լիազոր մարմնի միասնական հաշվին գտնվող դրամական միջոցների վրա չի կարող բռնագանձում տարածվել դատական ակտերի կատարման կարգով կամ որևէ այլ ձևով՝ բացառությամբ մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման և փոխհատուցման տուրքերի, ինչպես նաև տույժերի (տոկոսների) վճարման մասով վճարողների պարտքի մարման դեպքերի:

5. Անդամ պետությունների լիազոր մարմիններն առանձին-առանձին հաշվառում են հետևյալ մուտքերը՝

լիազոր մարմնի միասնական հաշվին գտնվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի (վերադարձի, պարտքի մարման դիմաց հաշվանցումների) գումարները.

ներմուծման մաքսատուրքերի բաշխված գումարները, որոնք փոխանցվել են մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին.

անդամ պետության բյուջե տվյալ անդամ պետության կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման արդյունքում հաշվեգրված եկամտի գումարները.

ներմուծման մաքսատուրքերի այն գումարները, որոնք անդամ պետության բյուջե մուտքագրվել են մյուս անդամ պետությունների կողմից.

կետանցի դիմաց անդամ պետության բյուջե մուտքագրված տոկոսագումարները, որոնք սահմանված են սույն Արձանագրությամբ.

բաշխված ներմուծման մաքսատուրքերի այն գումարները, որոնց փոխանցումը մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին կասեցվել է:

Մուտքագրվող նշված գումարներն առանձին արտացոլվում են յուրաքանչյուր անդամ պետության բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

6. Անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշիվ օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն արտացոլվում են տվյալ անդամ պետության հաշվետու տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Անդամ պետության օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրը բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները փոխանցվում են տվյալ անդամ պետության բյուջե և մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին՝ ոչ ուշ, քան անդամ պետության ընթացիկ տարվա երկրորդ աշխատանքային օրը, ինչպես նաև արտացոլվում են հաշվետու տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Մյուս անդամ պետությունների օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մյուս անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից տվյալ անդամ պետության բյուջե մուտքագրված՝ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտների գումարներն արտացոլվում են ընթացիկ տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

7. Վճարողին ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձը, պարտքի մարման դիմաց դրանց հաշվանցումն իրականացվում են ընթացիկ օրը լիազոր մարմնի միասնական հաշվից լիազոր մարմնի միասնական հաշիվ մուտքագրված, ինչպես նաև հաշվետու օրը ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց հաշվանցված ներմուծման մաքսատուրքերի գումարների սահմաններում՝ հաշվի առնելով վերադարձման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարները, որոնք հաշվետու օրը կատարման համար չեն ընդունվել ազգային (կենտրոնական) բանկի կողմից:

Վճարողին ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձը, պարտքի մարման դիմաց դրանց հաշվանցումն իրականացվում են հաշվետու օրը Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի միասնական հաշվից վերադարձը (հաշվանցումը)

իրականացնելու օրը՝ այդ լիազոր մարմնի միասնական հաշիվ մուտքագրված (հաշվեգրված) ներմուծման մաքսատուրքերի գումարների սահմաններում:

8. Վերադարձի և (կամ) պարտքի մարման դիմաց հաշվանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների սահմանումն ընթացիկ օրվա ընթացքում իրականացվում է մինչև մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարները անդամ պետությունների միջև բաշխելը:

9. Սույն Արձանագրության 7-րդ կետին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի վերադարձ և (կամ) պարտքի մարման դիմաց հաշվանցում իրականացնելու համար բավարար միջոցների բացակայության դեպքում անդամ պետությունը տվյալ վերադարձը (հաշվանցումը) իրականացնում է հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարողին ներմուծման մաքսատուրքերի գումարները ժամանակին չվերադարձնելու համար տույժերը (տոկոսները) վճարողին վճարվում են այդ անդամ պետության բյուջեից և չեն ներառվում ներմուծման մաքսատուրքերում:

10. Անդամ պետության լիազոր մարմնի կողմից անդամ պետությունների միջև ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումն իրականացվում է անդամ պետության հաշվետու օրվան հաջորդող այն աշխատանքային օրը, որի ընթացքում ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրվել են լիազոր մարմնի միասնական հաշվին:

Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից անդամ պետությունների միջև ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումն իրականացվում է լիազոր մարմնի միասնական հաշվին ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման հաշվետու օրը:

11. Անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշվից տվյալ անդամ պետության բյուջե, ինչպես նաև մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարի հաշվարկն իրականացվում է անդամ պետությունների միջև բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի ընդհանուր գումարը տոկոսներով սահմանվող բաշխման նորմատիվներով բազմապատկելու միջոցով:

Ընդ որում՝ անդամ պետությունների միջև բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի ընդհանուր գումարը որոշվում է հաշվետու օրը մուտքագրված (հաշվանցման միջոցով լիազոր մարմնի կողմից կատարված) ներմուծման մաքսատուրքերի գումարից հանելով հաշվետու օրը վճարողներին վերադարձման և պարտքի մարման դիմաց հաշվանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարները՝ հաշվի առնելով հաշվետու օրը ազգային (կենտրոնական) բանկի կողմից կատարման համար չընդունված՝ ներմուծման մաքսատուրքերի վերադարձի գումարների փոխանցման մասին հաշվարկային (վճարման) փաստաթղթերը (հանձնարարականները):

Այն դեպքում, եթե ընթացիկ օրը կատարման ենթակա՝ վճարողին ներմուծման մաքսատուրքի գումարի վերադարձման վերաբերյալ հաշվարկային (վճարման) փաստաթուղթը (հանձնարարականը) կատարման համար չի ընդունվել ազգային (կենտրոնական) բանկի կողմից, տվյալ գումարը ենթակա է անդամ պետությունների միջև բաշխման հաջորդ աշխատանքային օրը: Ընդ որում՝ ներմուծման մաքսատուրքերի այն գումարը, որը սույն կետին համապատասխան չի փոխանցվել մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին, ճանաչվում է մեկ օրով ժամկետանց:

12. Յուրաքանչյուր անդամ պետության համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները սահմանվում են հետևյալ չափերով՝

Հայաստանի Հանրապետություն՝ 1,13%,

Բելառուսի Հանրապետություն՝ 4,65%,

Ղազախստանի Հանրապետություն՝ 7,25%,

Ռուսաստանի Դաշնություն՝ 86,97%:

(12-րդ կետը խմբ. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

13. Անդամ պետություններին ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումն իրականացվում է անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին անդամ պետության՝ լիազոր մարմնի միասնական հաշվին հաշվեգրման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Յուրաքանչյուր օր՝ ոչ ուշ, քան մինչև տեղական ժամանակով ժամը 14-ը, անդամ պետություններին ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցման վերաբերյալ

հաշվարկային (վճարման) փաստաթուղթը (հանձնարարականը) լիազոր մարմնի կողմից ուղարկվում է ազգային (կենտրոնական) բանկ՝ մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին հետագա փոխանցման համար: Նշված հաշվարկային (վճարման) փաստաթղթում (հանձնարարականում) նշվում է այն ամսաթիվը, որի համար իրականացվում է ներմուծման մաքսատուրքերի բաշխումը, ինչպես նաև անդամ պետությունների միջև բաշխման ենթակա գումարը՝ ազգային արժույթով:

Եթե նշված հաշվարկային (վճարման) փաստաթուղթը (հանձնարարականը) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկ ուղարկվել է ընթացիկ օրը՝ տեղական ժամանակով ժամը 14-ից հետո, ապա համապատասխան վճարումը համարվում է մեկ օրով ժամկետանց:

14. Անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից արտարժութային հաշիվներ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն անդամ պետության բյուջե որպես եկամուտ փոխանցելու կարգը կարգավորվում է սույն Արձանագրության III մասով:

15. Բաշխված և անդամ պետությունների բյուջեներ փոխանցված ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվառումն իրականացվում է անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից:

16. Հերթական օրացուցային տարվա սկզբից ոչ ուշ, քան տասն օրացուցային օր առաջ անդամ պետության լիազոր մարմինը մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին տեղեկացնում է տվյալ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային օրերի մասին:

Ոչ աշխատանքային օրերի փոփոխության դեպքում այն անդամ պետության լիազոր մարմինը, որտեղ տեղի են ունենալու նման փոփոխություններ, մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին տեղեկացնում է նշված փոփոխությունների մասին՝ դրանք ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան երկու օրացուցային օր առաջ:

17. Այն արտարժութային հաշվի վավերապայմանների փոփոխման դեպքում, որին պետք է փոխանցվեն ներմուծման մաքսատուրքերի գումարները, այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան տասն օրացուցային օր առաջ տվյալ անդամ պետության լիազոր մարմինը մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին ծանուցում է հաշվի ճշգրտված վավերապայմանների մասին:

Սույն Արձանագրության կատարման համար անհրաժեշտ այլ տվյալների փոփոխման դեպքում լիազոր մարմինն այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 3 օրացուցային օր առաջ մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին տեղեկացնում է նշված փոփոխությունների մասին:

18. Անդամ պետությունների միջև բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բացակայության դեպքում մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին դրամական միջոցներ փոխանցելու վերաբերյալ հաշվարկային (վճարման) փաստաթուղթը (հանձնարարականը) ազգային (կենտրոնական) բանկ ուղարկելու համար անդամ պետության լիազոր մարմինը սույն Արձանագրությամբ սահմանված ժամկետում համապատասխան տեղեկությունները մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններ է ուղարկում էլեկտրոնային եղանակով՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ, իսկ մինչև նշված համակարգի ներմուծումը՝ կապի էլեկտրոնային ուղիներով՝ այդ տեղեկությունները պարունակող փաստաթղթի գրաֆիկական էլեկտրոնային պատճենների տեսքով:

19. Անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմիններն ապահովում են ներմուծման մաքսատուրքերի հաշվառումը հաշվեգրման մեթոդով իրականացնելու միասնական սկզբունքների կիրառումը՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող կանոններին համապատասխան:

20. Սույն բաժնով սահմանված ժամկետներում որևէ անդամ պետության արտարժութային հաշվին դրամական միջոցներ չփոխանցելու կամ ոչ ամբողջությամբ փոխանցելու և այդ անդամ պետության լիազոր մարմնից բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բացակայության մասին տեղեկություններ չստանալու դեպքում այն անդամ պետության լիազոր մարմինը, որի արտարժութային հաշիվ դրամական միջոցներ չեն մուտքագրվել, դրամական միջոցները չփոխանցելու կամ ոչ ամբողջությամբ փոխանցելու մասին տեղեկացնում է անդամ պետությունների լիազոր մարմիններին և Հանձնաժողովին:

21. Այն անդամ պետությունը, որը մյուս անդամ պետություններին չի փոխանցել ներմուծման մաքսատուրքերի բաշխված գումարները, այդ մյուս անդամ պետություններին կետանցի համար գոյացած պարտքի ամբողջ գումարի դիմաց վճարում է տոկոսներ՝ կետանցի յուրաքանչյուր օրացուցային օրվա համար 0,1 տոկոս դրույքաչափով՝ ներառյալ այն օրը, երբ ներմուծման մաքսատուրքի բաշխումից ստացված գումարը չի փոխանցվել մյուս անդամ պետությանը (անդամ պետություններին):

22. Եթե նշված գումարների փաստացի առկայության դեպքում անդամ պետությունը տեղեկացնում է բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բացակայության մասին և եթե լիազոր մարմնի միասնական հաշվից դրամական միջոցները ոչ ամբողջությամբ են փոխանցվում մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին, ապա նման խախտում կատարած անդամ պետությունը պարտավոր է ոչ ուշ, քան անդամ պետության հաջորդ աշխատանքային օրը մյուս անդամ պետություններին փոխանցել ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված գումարները, որոնք սույն բաժնին համապատասխան ենթակա են մյուս անդամ պետությունների բյուջեներ հաշվեգրման՝ հիմք ընդունելով այն գումարը, որը չէր փոխանցվել մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին:

Ընդ որում՝ նման խախտում կատարած անդամ պետությունը կետանցի համար տոկոսներ է վճարում սույն Արձանագրության 21-րդ կետով սահմանված չափով կետանցի յուրաքանչյուր օրացուցային օրվա համար, որը համարվում է խախտման օրվանից հաշվարկված ժամանակահատվածը՝ չներառելով այն օրը, երբ դրամական միջոցները սույն կետին համապատասխան փոխանցվել են անդամ պետություններին:

23. Եթե որևէ անդամ պետությունից դրամական միջոցներ չեն մուտքագրվել (ոչ ամբողջությամբ են մուտքագրվել) և այդ անդամ պետության լիազոր մարմինը չի տեղեկացրել անդամ պետությունների միջև բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների բացակայության մասին, ապա այն անդամ պետության լիազոր մարմինը, որի արտարժութային հաշիվ դրամական միջոցներ չեն մուտքագրվել, չմուտքագրելու (ոչ ամբողջությամբ մուտքագրելու) օրվանից հետո անդամ պետության երրորդ աշխատանքային օրն իրավասու է կասեցնել իր միասնական հաշվից առաջին անդամ պետության արտարժութային հաշվին կատարվող ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը:

24. Եթե անդամ պետությունը որոշում է կայացնում ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը կասեցնելու մասին, ապա այն դրամական միջոցները, որոնք ենթակա են փոխանցման մյուս անդամ պետության արտարժութային հաշվին, ենթակա են առաջին անդամ պետության բյուջեի եկամուտներին հաշվեգրման մինչև փոխանցումները կասեցնելու մասին որոշումը չեղյալ հայտարարելը, և դրանք առանձին-առանձին հաշվառվում են այդ անդամ պետության բյուջեում:

Այն անդամ պետության լիազոր մարմինը, որը կասեցրել է ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը մյուս անդամ պետության արտարժութային հաշվին, ընդունված որոշման մասին անհապաղ տեղեկացնում է մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին և Հանձնաժողովին:

25. Հանձնաժողովը ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը կասեցնելու մասին որոշումը կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների հետ խորհրդակցություններ է անցկացնում՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման մեխանիզմի աշխատանքները հնարավորինս շուտ ամբողջությամբ վերականգնելու համար:

26. Այն դեպքում, երբ սույն Արձանագրության 25-րդ կետում նշված խորհրդակցությունների արդյունքում ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման մեխանիզմի աշխատանքները վերականգնելու մասին որոշում չի ընդունվում, այդ հարցը ներկայացվում է Հանձնաժողովի քննարկմանը:

Հանձնաժողովի կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման մեխանիզմի աշխատանքները վերականգնելու մասին որոշումն ընդունելու անհնարինության դեպքում այդ հարցը ներկայացվում է Միջկառավարական խորհրդի քննարկմանը:

27. Ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցումը վերականգնելու դեպքում սույն Արձանագրության 24-րդ կետում նշված գումարները ենթակա են փոխանցման այն անդամ պետությունների արտարժութային հաշիվներին, որոնց համար դրանք նախատեսված էին սույն

Արձանագրությանը համապատասխան, ոչ ուշ, քան անդամ պետության՝ որոշում կայացնելու մասին ծանուցումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ընդ որում՝ նշված գումարի համար կետանցի դեպքում տոկոսներ չեն հաշվարկվում:

28. Անդամ պետություններից որևէ մեկի կողմից արտարժութային հաշիվներին չփոխանցված՝ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները, ինչպես նաև ԱՄՆ դոլարով դրամական միջոցների փոխանցման մասով սույն Արձանագրության III բաժնով նախատեսված՝ անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի կողմից չկատարված պարտավորությունների գումարներն ավելացվում են պետական պարտքին:

III. Անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից արտարժութային հաշիվներ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն անդամ պետության բյուջե որպես եկամուտ փոխանցելու կարգը

29. Մեկ (առաջին) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկը պարտավոր է մյուս (երկրորդ) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառել առաջին անդամ պետության ազգային արժույթի գումարի դիմաց, որը հավասար է առաջին անդամ պետության ազգային արժույթի այն գումարին, որը սույն Արձանագրությանը համապատասխան փոխանցվել է երկրորդ անդամ պետության լիազոր մարմնի արտարժութային հաշվին: Վաճառվող ԱՄՆ դոլարի գումարը որոշվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ առաջին անդամ պետության ազգային արժույթի պաշտոնական փոխարժեքով, որը սահմանվում է առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից երկրորդ անդամ պետության արտարժութային հաշվին առաջին անդամ պետության ազգային արժույթով դրամական միջոցների փոխանցման ամսաթվին հաջորդող աշխատանքային օրվա համար:

ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու պարտավորությունը պետք է կատարվի առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից ոչ ուշ, քան երկրորդ անդամ պետության արտարժութային հաշվին առաջին անդամ պետության ազգային արժույթով համարժեք գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Ընդ որում՝ ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու պարտավորությունը յուրաքանչյուր անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից պետք է կատարվի մյուս անդամ պետությունների միջև հարաբերություններում նմանատիպ իրավունքների իրականացումից և պարտավորությունների կատարումից անկախ:

Երկու անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերը կարող են առանձին պայմանագրով սահմանել, որ ԱՄՆ դոլարով դրամական միջոցների փոխանցման մասով հանդիպակաց պարտավորության, այդ թվում՝ սույն կետի երկրորդ պարբերության մեջ սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունների և սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան տույժերի վճարման պարտավորությունների կատարումն ապահովվում է այն ազգային (կենտրոնական) բանկի կողմից, որի պարտավորության չափն ԱՄՆ դոլարով գերազանցում է մյուս ազգային (կենտրոնական) բանկի հանդիպակաց պարտավորությունների չափն ԱՄՆ դոլարով, մյուս ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով նշված հանդիպակաց պարտավորությունների չափերի տարբերությանը հավասար գումարին համարժեք դրամական միջոցներ փոխանցելու միջոցով:

ԱՄՆ դոլարով դրամական պարտավորությունների մասով սույն կետում նշված պահանջների կատարումն ապահովվում է հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին բավարարվում են սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան տույժերի վճարման մասով պահանջները.

երկրորդ հերթին բավարարվում են այն պարտավորությունների մասով պահանջները, որոնց կատարման ժամկետը լրացել է և որոնք ժամկետանց չեն համարվում.

երրորդ հերթին բավարարվում են այն պարտավորությունների մասով պահանջները, որոնք չեն կատարվել սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետում:

Առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի՝ երկրորդ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու՝ սույն կետում նշված պարտավորության առնչությամբ առաջին անդամ պետությունն առաջին անդամ

պետության ազգային (կենտրոնական) բանկի հետ համապարտ պատասխանատվություն է կրում երկրորդ անդամ պետության նկատմամբ:

30. Առաջին և երկրորդ անդամ պետությունների միջև հետագա փոխհաշվարկներ իրականացնելու նպատակով առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի՝ երկրորդ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու՝ սույն Արձանագրության 29-րդ կետում նշված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճորեն կատարելու դեպքում առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկին ներկայացվող պահանջները սահմանվում են ԱՄՆ դոլարով՝ առաջին անդամ պետության ազգային արժույթով երկրորդ անդամ պետության արտարժութային հաշվին դրամական միջոցներ փոխանցելու օրվան հաջորդող օրվա համար առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

31. Առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի՝ երկրորդ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկին ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու՝ սույն Արձանագրության 29-րդ կետում նշված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճորեն կատարելու համար առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկը կամ առաջին անդամ պետությունը վճարում է տույժեր, որոնց չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Տույժ} = \textit{Գումար}_{USD} \times \frac{\textit{LIBOR}_{USD,\ o/n} + 2\%}{360} \times \text{Օրեր}$$

որտեղ՝

Գումար $_{USD}$՝ առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից երկրորդ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկին փոխանցման ենթակա գումար (ԱՄՆ դոլարով).

LIBOR $_{USD,\ o/n}$՝ Բրիտանական բանկային ասոցիացիայի կողմից (British Bankers Association, BBA) պարտավորությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կերպով կատարելն սկսելու օրվա համար սահմանված մեկօրյա LIBOR դրույքը՝ ԱՄՆ դոլարի համար (տարեկան տոկոսադրույքով).

Օրեր՝ օրացուցային օրերի քանակը, որոնք հաշվարկվում են պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու օրվանից (ներառյալ) մինչև պարտավորությունը պատշաճ կերպով կատարելու օրը (բացառելով պարտավորությունը պատշաճ կերպով կատարելու օրը):

32. Սույն Արձանագրության 29-րդ կետում նշված՝ առաջին անդամ պետության պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու դեպքում երկրորդ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկը, որի նկատմամբ պարտավորությունը չի կատարվել կամ ոչ պատշաճ կերպով է կատարվել, իրավասու է չկատարված կամ ոչ պատշաճ կերպով կատարված պարտավորության վերաբերյալ պահանջը՝ ներառյալ սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան տույժերի վճարման պահանջը հատուցման հիմունքներով փոխանցելու երկրորդ անդամ պետությանը՝ առանց առաջին անդամ պետության և առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի համաձայնության կամ դրանց նախապես ծանուցելու:

33. Անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկը անդամ պետության Կառավարության կամ լիազոր մարմնի առջև պատասխանատվություն չի կրում մյուս անդամ պետության կողմից պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճորեն կատարելու համար, այդ թվում՝ մյուս անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճորեն կատարելու համար:

34. Առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կրած ծախսերն ու վնասները՝ կապված իր կողմից սույն բաժնով նախատեսված հաշվարկների իրականացման հետ՝ ներառյալ այն ծախքերն ու վնասները, որոնք առաջացել են արժույթների փոխարժեքների փոփոխության, մյուս անդամ պետությունների և մյուս անդամ պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի կողմից պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով

կատարելու հետևանքով, մյուս անդամ պետությունների կողմից ենթակա չեն փոխհատուցման: Առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկին նշված ծախսերի ու վնասների փոխհատուցման պայմաններն ու կարգը սահմանվում են առաջին անդամ պետության կողմից:

35. Սույն մասի նպատակներից ելնելով՝ երկու անդամ պետությունների միջև հաշվարկների (այդ թվում՝ երկու անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի միջև հաշվարկների) իրականացման աշխատանքային օր է համարվում այն օրը, որը միաժամանակ աշխատանքային օր է համարվում այդ երկու անդամ պետությունների և Ամերիկայի Միացյալ Նահանգների համար:

36. Սույն Արձանագրությանը համապատասխան հաշվարկներ իրականացնելու նպատակով մեկ (առաջին) անդամ պետության կենտրոնական (ազգային) բանկի՝ մյուս (երկրորդ) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկում բացված թղթակցային հաշվի, ինչպես նաև այդ թղթակցային հաշվին գտնվող դրամական միջոցների նկատմամբ երկրորդ անդամ պետության դատական ու իշխանության մյուս մարմինները չեն կարող կիրառել արգելանք, արգելափակում, հայցի ապահովման, արգելման կամ սահմանափակման այլ միջոցներ, որոնց արդյունքում թղթակցային հաշվին գտնվող դրամական միջոցների օգտագործումն անհնար է դառնում:

37. Սույն Արձանագրությանը համապատասխան հաշվարկներ իրականացնելու նպատակով մեկ (առաջին) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի՝ մյուս (երկրորդ) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկում բացված թղթակցային հաշվին գտնվող դրամական միջոցների դուրսգրումն առանց առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի համաձայնության չի թույլատրվում, եթե թղթակցային հաշվի պայմանագրի պայմաններով այլ բան նախատեսված չէ:

38. Եթե առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից ԱՄՆ դոլարով դրամական միջոցներ վաճառելու՝ սույն Արձանագրության 29-րդ կետում նշված պարտավորությունը 30 օրացուցային օրվա ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի կատարվում, ապա նախքան առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից այդ պարտավորության լիարժեք կատարումը երկրորդ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկն իրավասու է առանց սահմանափակումների օգտագործելու առաջին անդամ պետության ազգային արժույթով այն դրամական միջոցները, որոնք գտնվում են երկրորդ անդամ պետության կենտրոնական (ազգային) բանկի՝ սույն Արձանագրությանը համապատասխան հաշվարկների իրականացման համար նախատեսված թղթակցային հաշվին, որը բացված է առաջին անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկում:

39. Մեկ (առաջին) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկն անհատույց հիմունքներով իրականացնում է իրավունքներ և կատարում պարտավորություններ, որոնք նախատեսված են մյուս (երկրորդ) անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի հետ իր կնքած պայմանագրերով՝ ի կատարումն սույն Արձանագրության և դրան համապատասխան:

IV. Անդամ պետությունների լիազոր մարմինների միջև տեղեկությունների փոխանակման կարգը

40. Անդամ պետության լիազոր մարմինը յուրաքանչյուր օր՝ ոչ ուշ, քան տեղական ժամանակով ընթացիկ օրվա ժամը 16:00-ը (Հայաստանի Հանրապետության համար՝ Երևան քաղաքի ժամանակով, Բելառուսի Հանրապետության համար՝ Մինսկ քաղաքի ժամանակով, Ղազախստանի Հանրապետության համար՝ Աստանա քաղաքի ժամանակով, Ռուսաստանի Դաշնության համար՝ Մոսկվա քաղաքի ժամանակով), մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններ է ուղարկում հետևյալ տեղեկությունները՝ հաշվետու օրվա դրությամբ՝

1) ներմուծման մաքսատուրքերի գումարները, որոնք հաշվեգրվել են անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշվին.

2) հաշվետու օրը լիազոր մարմնի կողմից ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց հաշվանցված գումարները.

3) ներմուծման մաքսատուրքերի գումարները, որոնք հաշվանցվել են հաշվետու օրը պարտքի մարման դիմաց, և առանձին՝ ներմուծման մաքսատուրքերի գումարները, որոնք հաշվանցվել են ընթացիկ օրը պարտքի մարման դիմաց.

4) ներմուծման մաքսատուրքերի այն գումարները, որոնք վերադարձվել են հաշվետու օրը, և առանձին՝ ընթացիկ օրը վերադարձման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարները.

5) հաշվետու օրն ազգային (կենտրոնական) բանկի կողմից կատարման համար չընդունված՝ ներմուծման մաքսատուրքերի վերադարձվելիք գումարները.

6) անդամ պետությունների միջև բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարները.

7) բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները, որոնք փոխանցվել են մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին.

8) անդամ պետության բյուջե մուտքագրված եկամտի այն գումարները, որոնք ստացվել են այդ անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշվից փոխանցված ներմուծման մաքսատուրքերի բաշխումից.

9) անդամ պետության բյուջե մուտքագրված եկամտի այն գումարները, որոնք ստացվել են լիազոր մարմնի արտարժութային հաշիվներ մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի բաշխումից.

10) բաշխված ներմուծման մաքսատուրքերի այն գումարները, որոնց փոխանցումը մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին կասեցվել է.

11) անդամ պետությանը մյուս անդամ պետությունների կողմից սույն Արձանագրությամբ նախատեսված պահանջները խախտելու դեպքում կետանցի դիմաց փոխանցված տոկոսագումարները:

(40-րդ կետը փոփ. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

41. Յուրաքանչյուր ամիս՝ հաշվետու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը, անդամ պետության լիազոր մարմինը մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին, ինչպես նաև Հանձնաժողով է ուղարկում սույն Արձանագրության 40-րդ կետով նախատեսված տեղեկությունները՝ աճողական կարգով՝ սկսած օրացուցային տարվա սկզբից՝ էլեկտրոնային տարբերակով, Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործմամբ, իսկ մինչև նշված համակարգի ներմուծումը՝ կապի էլեկտրոնային ուղիներով՝ այդ տեղեկությունները պարունակող փաստաթղթերի գրաֆիկական էլեկտրոնային պատճենների տեսքով:

42. Սույն Արձանագրության 40-րդ և 41-րդ կետերով նախատեսված տեղեկությունների տրամադրման կարգը համաձայնեցվում է լիազոր մարմինների կողմից և հաստատվում է Հանձնաժողովի կողմից:

43. Անդամ պետությունների լիազոր մարմիններն իրականացնում են սույն Արձանագրության 40-րդ և 41-րդ կետերին համապատասխան ստացված տեղեկությունների օպերատիվ ստուգում:

Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում կազմվում է արձանագրություն, և անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ՝ անհամապատասխանությունները կարգավորելու նպատակով:

44. Մեկ անդամ պետության լիազոր մարմնի կողմից մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին սույն Արձանագրության 40-րդ և 41-րդ կետերին համապատասխան ուղարկվող տեղեկությունները ստորագրվում են տվյալ լիազոր մարմնի ղեկավարի կամ իր կողմից լիազորված անձի կողմից:

V. Ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունների փոխանակման կարգը

45. Անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները միմյանց, ինչպես նաև Հանձնաժողովին էլեկտրոնային տարբերակով պարբերաբար տրամադրում են ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունները, որոնք չեն առնչվում պետական գաղտնիք կազմող տվյալներին (պետական գաղտնիքներ):

46. Ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունները ձևավորվում են հետևյալ առկա աղբյուրներից՝

1) անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից ապրանքների մասին կազմված հայտարարագրերի էլեկտրոնային պատճենների տվյալների բազայից.

2) անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից մաքսային մուտքի օրդերների էլեկտրոնային պատճենների տվյալների բազայից, եթե անդամ պետությունը մաքսային մուտքի օրդերն օգտագործում է ներմուծման մաքսատուրքերի վճարումն արտացոլելու համար.

3) անձնական հաշիվների, ռեեստրների և այլ փաստաթղթերի բազայից, որոնք պարունակում են փաստացի վճարված և անդամ պետությունների բյուջեներ որպես եկամուտ փոխանցված ներմուծման մաքսատուրքերի գումարների մասին տվյալներ և որոնք կազմվել են անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից՝ ներմուծման մաքսատուրքերի հաշվառման իրականացման միասնական սկզբունքներին համապատասխան, Հանձնաժողովի կողմից հաստատված կանոնների վրա հիմնված հաշվեգրման մեթոդով:

47. Սույն Արձանագրության 46-րդ կետում նշված տեղեկությունները չեն ներառում անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների ներմուծման և մաքսային վճարների կատարման մասին տվյալներ:

48. Ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունները (չափման միավորը՝ ԱՄՆ դոլար, ազգային արժույթով գումարները ԱՄՆ դոլարով վերահաշվարկի համար կիրառվում է անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի ազգային արժույթի նկատմամբ հաշվետու ամսվա համար ԱՄՆ դոլարի միջին ամսական փոխարժեքը) տրամադրվում են անհատույց հիմունքներով ռուսերենով (առանձին կետերի համար թույլատրվում է լատինական այբուբենի գործածումը) և պարունակում են հետևյալ տվյալները հաշվետու ժամանակահատվածի համար՝

1) ներմուծման մաքսատուրքերի տեղափոխվող մնացորդների գումարները՝ հաշվետու ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ.

2) ներմուծման մաքսատուրքերի վճարման (գանձման) մասին ձևակերպված մաքսային փաստաթղթերում ներմուծման մաքսատուրքերի՝ փաստաթղթերով արտացոլված գումարները.

3) պարտքի մարման դիմաց հաշվանցված ներմուծման մաքսատուրքերի գումարները.

4) վճարողներին վերադարձված ներմուծման մաքսատուրքերի գումարները.

5) հետաձգված կամ տարաժամկետ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարները.

6) այլ տվյալներ, որոնք կապված են ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ:

49. Ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունների փոխանակման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերը մշակվում և հաստատվում են Հանձնաժողովի կողմից:

Նշված տեխնիկական կանոնակարգերով սահմանվում են սույն Արձանագրության 48-րդ կետում նշված տեղեկությունների կառուցվածքն ու ձևաչափը, ինչպես նաև դրանց փոխանակման կարգը, ժամկետները և միջոցները:

50. Անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկությունների փոխանակումը, ինչպես նաև Հանձնաժողովին դրանց տրամադրումն իրականացվում են այդ մաքսային մարմինների և Հանձնաժողովի տեխնիկական պատրաստվածությունն ապահովելուց հետո, ինչի մասին նրանք գրավոր տեղեկացնում են միմյանց: Միության ինտեգրված տեղեկատվական համակարգը ներմուծելուց հետո անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների միջև տեղեկությունների փոխանակումը և դրանց տրամադրումը Հանձնաժողովին իրականացվում են էլեկտրոնային եղանակով՝ նշված համակարգի օգտագործմամբ:

51. Մինչև ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունների փոխանակման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի հաստատումը անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները ոչ ուշ, քան հաշվետու ամսին հաջորդող ամսվա վերջին օրը միմյանց, ինչպես նաև Հանձնաժողովին են տրամադրում սույն Արձանագրության 48-րդ կետում նշված տեղեկությունները՝ Հանձնաժողովի կողմից հաստատված ձևով:

52. Անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները, ինչպես նաև Հանձնաժողովը ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ սույն բաժնին համապատասխան ստացվող տեղեկությունների անօրինական տարածումը կանխելու նպատակով:

Անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմիններն ապահովում են այն անձանց շրջանակի սահմանափակումը, որոնց հասանելի են նշված տեղեկությունները, ինչպես նաև դրանց պաշտպանությունը՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հանձնաժողովը սույն բաժնին համապատասխան ստացված տեղեկություններն օգտագործում է սույն Արձանագրության 54-րդ կետի պահանջների կատարման նպատակով:

VI. Դիտանցումը և հսկողությունը

53. Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատը, Բելառուսի Հանրապետության պետական հսկողության կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեն, Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատը համատեղ հսկողական միջոցառումների շրջանակներում յուրաքանչյուր տարի ստուգում են անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից սույն Արձանագրության դրույթների կատարումը:

(53-րդ կետը փոփ. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

54. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի Միջկառավարական կոմիտե հաշվետվություն է ներկայացնում ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման և բաշխման վերաբերյալ:

55. Հանձնաժողովի որոշմամբ անդամ պետությունների լիազոր, մաքսային և այլ պետական մարմինների աշխատողներից, ինչպես նաև այլ ներգրավված մասնագետներից կարող է ստեղծվել հատուկ կոմիտե՝ անդամ պետությունների կողմից ներմուծման մաքսատուրքերի մուտքագրված գումարների հաշվեգրման և բաշխման կարգի պահպանումը հսկելու (աուդիտ իրականացնելու) համար:

(հավելվածը խմբ., փոփ. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ 6
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի IX բաժնի համաձայն, և դրանով սահմանվում են Միության մաքսային տարածքում մաքսասակագնային կարգավորման միջոցների կիրառման սկզբունքներն ու կարգը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«նույնանման ապրանք»՝ ապրանք, որն իր գործառական նշանակությամբ, կիրառությամբ, որակական և տեխնիկական հատկանիշներով ամբողջությամբ նույնական է սակագնային քվոտայի շրջանակներում Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքին, կամ (ամբողջությամբ նույնական այդպիսի ապրանքի բացակայության դեպքում) այն ապրանքը, որն ունի սակագնային քվոտայի շրջանակներում Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի հատկանիշներին նման հատկանիշներ, որոնք հնարավորություն են տալիս այդ ապրանքն օգտագործելու սակագնային քվոտայի շրջանակներում Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի գործառական նշանակությանը նույնանման նշանակությամբ, և որը առևտրային տեսանկյունից կարող է դրանով փոխարինվել.

«երրորդ երկրներից նշանակալից մատակարարներ»՝ ապրանքների մատակարարներ, որոնք Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծումից ունեն 10 և ավելի տոկոս բաժին.

«սակագնային քվոտայի ծավալ»՝ բնաիրային կամ դրամական արտահայտությամբ ապրանքի քանակ՝ սահմանված ներմուծման համար սակագնային քվոտայի շրջանակներում.

«նախորդող ժամանակահատված»՝ ժամանակահատված, որի համար կատարվում է Միության մաքսային տարածքում ապրանքների սպառման ծավալների և Միության մաքսային տարածքում նույնանման ապրանքների արտադրության ծավալների վերլուծություն.

«ներմուծման իրական ծավալ»՝ ներմուծման ծավալ՝ դրա սահմանափակումների բացակայության պայմաններում.

«գյուղատնտեսական ապրանքներ»՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1-24-րդ խմբերում դասակարգվող ապրանքներ, ինչպես նաև այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են մաննիտը, D-գլյուցիտը (սորբիտ), եթերայուղերը, կազեինը, ալբումինները, դոնդողանյութը, դեքստրինները, վերափոխված օսլաները, սորբիտը, մորթիները, կաշին, մուշտակամորթ հումքը, մետաքս-հումքը, մետաքսե թափոնները, կենդանիների բուրդը, բամբակ-հումքը, բամբակի թափոնները, բամբակի մանրաթելը՝ սանդրքած, վուշ-հումքը և կանեփաթել-հումքը.

«սակագնային քվոտա»՝ Միության մաքսային տարածք երրորդ երկրներից ծագող գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակների ներմուծումը կարգավորող միջոց, որով նախատեսվում է կիրառել ԵԱՏՄ ՄՄՍ ներմուծման մաքսատուրքերի տարբերակված դրույքաչափեր՝ որոշակի ժամանակահատվածում սահմանված քանակությամբ (բնաիրային կամ դրամական արտահայտությամբ) և այդ քանակից ավելի ներմուծվող ապրանքների դեպքում:

II. Սակագնային արտոնություններ

3. Ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատելու հնարավորություն նախատեսող սակագնային արտոնությունները տրվում են երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) հետևյալ ապրանքների դեպքում՝

1) ապրանքներ՝ որպես օտարերկրյա հիմնադրի ներդրում կանոնադրական (պահուստային) կապիտալում (ֆոնդում)՝ այդ կապիտալի (ֆոնդի) ձևավորման համար հիմնադիր փաստաթղթերում նախատեսված ժամկետների սահմաններում: Այդպիսի ապրանքների դեպքում սակագնային արտոնությունների կիրառման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից.

2) ապրանքներ, որոնք ներմուծվում են տիեզերական տարածքի հետազոտման և օգտագործման, այդ թվում՝ տիեզերական ապարատները տիեզերք բաց թողնելու առնչությամբ ծառայությունների մատուցման բնագավառում միջազգային համագործակցության շրջանակներում՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող ցանկի համաձայն.

3) անդամ պետությունների նավերի, ինչպես նաև անդամ պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից վարձակալված (վարձված) նավերի՝ խորջրյա գոտիներում արդյունագործական ձկնորսության արտադրանք.

4) անդամ պետությունների արժույթ, երրորդ երկրների արժույթ (բացառությամբ դրամագիտական նպատակներով օգտագործվող արժույթի), ինչպես նաև արժեթղթերի արժույթ՝ անդամ պետությունների օրենսդրության համաձայն.

5) մարդասիրական օգնության շրջանակներում և (կամ) տարերային աղետների, վթարների և աղետների հետևանքները վերացնելու նպատակով ներմուծվող ապրանքներ.

6) երրորդ երկրների, միջազգային կազմակերպությունների, կառավարությունների գծով բարեգործական նպատակներով ներմուծվող և (կամ) անդամ պետությունների օրենսդրություններին համապատասխան որպես անհատույց օգնություն (աջակցություն), այդ թվում՝ տեխնիկական օգնություն (աջակցություն) ճանաչվող ապրանքներ՝ բացի ենթաակցիզային ապրանքներից (բացառությամբ թեթև մարդատար մեքենաների, որոնք հատուկ նախատեսված են բժշկական նպատակների համար):

4. Երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների դեպքում սակագնային արտոնություններ կարող են տրվել նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերով, Հանձնաժողովի որոշումներով սահմանված այլ դեպքերում:

III. Սակագնային քվոտաները կիրառելու պայմաններն ու մեխանիզմը

5. Երրորդ երկրներից ծագող և Միության մաքսային տարածք ներմուծվող գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակի համար սակագնային քվոտայի ծավալը սահմանվում է Հանձնաժողովի կողմից և չի կարող գերազանցել Միության մաքսային տարածքում այդպիսի ապրանքի սպառման ծավալի և Միության մաքսային տարածքում նույնանման ապրանքի արտադրության ծավալի միջև եղած տարբերությունը:

Ընդ որում, եթե մի անդամ պետության դեպքում նույնանման ապրանքի արտադրության ծավալը հավասար է այդ ապրանքի սպառման ծավալին կամ գերազանցում է այդ ապրանքի սպառման ծավալը, ապա այդ տարբերությունը կարող է հաշվի չառնվել Միության մաքսային տարածքի համար սակագնային քվոտայի ծավալը հաշվարկելիս:

6. Եթե Միության մաքսային տարածքում նույնանման ապրանքի արտադրության ծավալը հավասար է Միության մաքսային տարածքում այդ ապրանքի սպառման ծավալին կամ գերազանցում է այդ ապրանքի սպառման ծավալը, ապա սակագնային քվոտա սահմանել չի թույլատրվում:

7. Սակագնային քվոտա սահմանելու մասին որոշում ընդունելիս պետք է պահպանվեն հետևյալ պայմանները.

1) սակագնային քվոտա սահմանելը որոշակի ժամկետով (անկախ երրորդ երկրների միջև սակագնային քվոտայի ծավալի բաշխման հարցի քննարկման արդյունքներից).

2) բոլոր շահագրգիռ երրորդ երկրներին սակագնային քվոտայի՝ իրենց հատկացված ծավալի վերաբերյալ տեղեկացնելը (երրորդ երկրների միջև սակագնային քվոտայի ծավալի բաշխման մասին որոշում կայացնելու դեպքում).

3) սակագնային քվոտայի սահմանման, դրա գործողության ժամկետի ու ծավալի, այդ թվում՝ երրորդ երկրներին հատկացված՝ սակագնային քվոտայի ծավալի (երրորդ երկրների միջև սակագնային քվոտայի ծավալի բաշխման մասին որոշում կայացնելու դեպքում), ինչպես նաև սակագնային քվոտայի ծավալի սահմաններում ներմուծվող ապրանքների դեպքում կիրառվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելը:

8. Անդամ պետության արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև սակագնային քվոտայի ծավալի բաշխումն իրականացվում է սակագնային քվոտա ստանալու հարցում նրանց իրավահավասարության և սեփականության ձևի, գրանցման վայրի կամ շուկայում ունեցած դիրքի հիմքով խտրականության բացառման հիման վրա:

9. Սակագնային քվոտայի ծավալն անդամ պետությունների միջև բաշխվում է Միության մաքսային տարածքի համար, սույն Արձանագրության 5-րդ և 6-րդ կետերին համապատասխան, սակագնային քվոտայի ծավալը հաշվարկելիս հաշվի առնված՝ յուրաքանչյուր անդամ պետությունում սպառման և արտադրության ծավալների միջև տարբերության սահմաններում:

Ընդ որում, Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ հանդիսացող անդամ պետության դեպքում սակագնային քվոտայի ծավալը կարող է սահմանվել՝ հաշվի առնելով այդ անդամ պետության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության նկատմամբ ունեցած պարտավորությունները:

10. Երրորդ երկրների միջև սակագնային քվոտայի ծավալի բաշխումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից կամ Հանձնաժողովի որոշման համաձայն՝ անդամ պետության կողմից երրորդ երկրներից բոլոր նշանակալից մատակարարների հետ խորհրդակցությունների արդյունքների հիման վրա, եթե այլ բան սահմանված չէ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերով կամ Բարձրագույն խորհրդի որոշումներով:

Երրորդ երկրներից բոլոր նշանակալից մատակարարների հետ խորհրդակցությունների արդյունքների հիման վրա սակագնային քվոտայի ծավալը բաշխելու անհնարինության դեպքում երրորդ երկրների միջև սակագնային քվոտայի ծավալը բաշխելու վերաբերյալ որոշումն ընդունվում է՝ հաշվի առնելով նախորդող ժամանակահատվածում այդ երկրներից ապրանքի մատակարարման ծավալը:

Որպես կանոն՝ նախորդող ժամանակահատված են համարվում նախորդող այն երեք տարիները, որոնց վերաբերյալ առկա են ներմուծման իրական ծավալներն արտացոլող տեղեկություններ:

Այդպիսի նախորդող ժամանակահատված ընտրելու անհնարինության դեպքում սակագնային քվոտայի ծավալը բաշխվում է ներմուծման իրական ծավալի առավել հավանական բաշխումը գնահատելու հիման վրա:

11. Սակագնային քվոտայի գործողության ժամկետի ընթացքում ապրանքի մատակարարման դեպքում այնպիսի պայմաններ և (կամ) ձևական պահանջներ չեն սահմանվում, որոնք խոչընդոտում են ցանկացած երրորդ երկրի՝ իրեն հատկացված սակագնային քվոտայի ծավալն ամբողջությամբ օգտագործելու հարցում:

12. Ապրանքի մատակարարման հարցում շահագրգռված երրորդ երկրի խնդրանքով Հանձնաժողովն անցկացնում է խորհրդակցություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

1) հատկացված սակագնային քվոտայի ծավալի վերաբաշխման անհրաժեշտությունը.

2) ընտրված նախորդող ժամանակահատվածի փոփոխությունը.

3) սակագնային քվոտայի բաշխված ծավալի կամ դրա անսահմանափակ օգտագործման հետ կապված՝ միակողմանիորեն սահմանված պայմանները, ձևական պահանջները կամ ցանկացած այլ դրույթ վերացնելու անհրաժեշտությունը:

13. Սակագնային քվոտաների սահմանման առնչությամբ Հանձնաժողովը.

1) ապրանքի մատակարարման հարցում շահագրգռված երրորդ երկրի խնդրանքով տրամադրում է տեղեկություններ՝ արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև սակագնային քվոտայի ծավալի բաշխման մեթոդի ու կարգի, ինչպես նաև սակագնային քվոտայի այն ծավալի վերաբերյալ, որի համար տրամադրվել են լիցենզիաներ.

2) հրապարակում է տեղեկություններ՝ հատկացված սակագնային քվոտայի ծավալի շրջանակներում մատակարարման համար նախատեսված ապրանքի ընդհանուր քանակի կամ արժեքի, սակագնային քվոտայի գործողության ժամկետի սկզբի ու ավարտի ու դրանց ցանկացած փոփոխության վերաբերյալ:

14. Բացի երրորդ երկրների միջև սակագնային քվոտայի ծավալը բաշխելու դեպքերից՝ Հանձնաժողովն իրավասու չէ պահանջելու, որ լիցենզիաներն օգտագործվեն որևէ սահմանված երրորդ երկրից ապրանք ներմուծելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 7
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի IX բաժնի համաձայն, և դրանով սահմանվում են երրորդ երկրների առնչությամբ Միության կողմից ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման կարգն ու դեպքերը:

Սույն Արձանագրության գործողությունը չի տարածվում տեխնիկական կանոնակարգման, սանիտարական, անասնաբուժական ու բուսասանիտարական պահանջների, արտահանումը վերահսկելու և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում ձեռնարկվող միջոցների կիրառման հետ կապված հարցերին առնչվող հարաբերությունների վրա:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«ավտոմատ լիցենզավորում (հսկողություն)»՝ ժամանակավոր միջոց, որը սահմանվում է ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման դինամիկան դիտանցելու նպատակով.

«հիմնական լիցենզիա»՝ լիցենզիա, որն արտաքին առևտրային գործունեության մասնակցին լիցենզիայով սահմանված քանակությամբ լիցենզավորման ենթակա ապրանքի առանձին տեսակի արտահանման և (կամ) ներմուծման իրավունք է տալիս.

«արգելք»՝ ապրանքների առանձին տեսակների ներմուծումը և (կամ) արտահանումն արգելող միջոց.

«ներմուծում»՝ երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ապրանքի ներսբերում առանց հետադարձ արտահանման պարտավորության.

«բացառիկ լիցենզիա»՝ լիցենզիա, որն արտաքին առևտրային գործունեության մասնակցին ապրանքի առանձին տեսակի արտահանման և (կամ) ներմուծման բացառիկ իրավունք է տալիս.

«բացառիկ իրավունք»՝ արտաքին առևտրային գործունեության մասնակիցների կողմից ապրանքների առանձին տեսակների արտահանում և (կամ) ներմուծում իրականացնելու իրավունք, որը տրվում է բացառիկ լիցենզիայի հիման վրա.

«քանակական սահմանափակումներ»՝ ապրանքների արտաքին առևտրի քանակական սահմանափակմանն ուղղված միջոցներ, որոնք սահմանվում են քվոտաների սահմանման միջոցով.

«լիցենզավորում»՝ վարչական միջոցների ամբողջություն, որով սահմանվում է լիցենզիայի և (կամ) թույլտվության տրամադրման կարգը.

«լիցենզիա»՝ ապրանքների արտահանումը և (կամ) ներմուծումն իրականացնելու իրավունքը հավաստող հատուկ փաստաթուղթ.

«միանգամյա լիցենզիա»՝ լիցենզիա, որը տրամադրվում է արտաքին առևտրային գործունեության մասնակցին արտաքին առևտրային այնպիսի գործարքի հիման վրա, որի առարկան լիցենզավորման ենթակա ապրանքն է, և որը տվյալ ապրանքի որոշակի քանակության արտահանման և (կամ) ներմուծման իրավունք է տալիս.

«թույլտվություն»՝ հատուկ փաստաթուղթ, որը տրամադրվում է արտաքին առևտրային գործունեության մասնակցին արտաքին առևտրային այնպիսի գործարքի հիման վրա, որի առարկան այն ապրանքն է, որի համար սահմանված է ավտոմատ լիցենզավորում (հսկողություն).

«թույլատրման փաստաթուղթ»՝ փաստաթուղթ, որով արտաքին առևտրային գործունեության մասնակցին կամ ֆիզիկական անձին տրվում է Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման իրավունք.

«լիազորված մարմին»՝ անդամ պետության գործադիր իշխանության մարմին, որին վերապահված է լիցենզիա և (կամ) թույլտվություն տրամադրելու իրավունք.

«արտաքին առևտրային գործունեության մասնակիցներ»՝ իրավաբանական անձինք և իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություններ, որոնք գրանցված են անդամ պետություններից որևէ մեկում և ստեղծվել են այդ պետության օրենսդրությանը համապատասխան, ֆիզիկական անձինք, որոնց մշտապես կամ առավելապես բնակվելու վայրը անդամ պետություններից մեկի տարածքում է, որոնք այդ պետության քաղաքացի են կամ այդ պետությունում մշտական բնակության իրավունք ունեն կամ, այդ պետության օրենսդրությանը համապատասխան, գրանցված են որպես անհատ ձեռնարկատերեր.

«արտահանում»՝ Միության մաքսային տարածքից ապրանքի դուրսհանումը երրորդ երկրների տարածք առանց հետադարձ ներմուծման պարտավորության:

II. Ոչ սակագնային կարգավորման միջոցների սահմանումն ու կիրառումը

3. Միության տարածքում երրորդ երկրների հետ առևտուր իրականացնելիս կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցներ (այսուհետ՝ միջոցներ):

4. Միջոցների սահմանման, կիրառման, երկարաձգման և վերացման մասին որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից:

Այն ապրանքները, որոնց առնչությամբ միջոցներ կիրառելու որոշում է ընդունվել, ներառվում են այն ապրանքների միասնական ցանկում, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ (այսուհետ՝ ապրանքների միասնական ցանկ):

Ապրանքների միասնական ցանկում ներառվում են նաև այն ապրանքները, որոնց առնչությամբ Հանձնաժողովը սակագնային կամ ներմուծման քվոտա՝ որպես հատուկ պաշտպանական միջոց, սահմանելու և լիցենզիա տրամադրելու որոշում է ընդունել:

5. Միջոցների սահմանման կամ վերացման վերաբերյալ առաջարկները կարող են ներկայացվել ինչպես անդամ պետության, այնպես էլ Հանձնաժողովի կողմից:

6. Միջոցների սահմանման, կիրառման, երկարաձգման կամ վերացման վերաբերյալ Հանձնաժողովի որոշում նախապատրաստելիս Հանձնաժողովն անդամ պետությունների արտաքին առևտրային գործունեության այն մասնակիցներին, որոնց տնտեսական շահերի վրա կարող է անդրադառնալ նման որոշման ընդունումը, տեղեկացնում է Հանձնաժողով տվյալ հարցի վերաբերյալ առաջարկներ ու դիտողություններ ներկայացնելու և խորհրդակցություններ անցկացնելու հնարավորության մասին:

7. Հանձնաժողովը որոշում է խորհրդակցություններ անցկացնելու եղանակը և ձևաչափը, ինչպես նաև առաջարկներ և դիտողություններ ներկայացրած շահագրգիռ անձանց

խորհրդակցությունների ընթացքի ու արդյունքների մասին տեղեկություններ տրամադրելու եղանակն ու ձևը:

Խորհրդակցություններ չանցկացնելը չի կարող հիմք ծառայել Հանձնաժողովի՝ արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու իրավունքին առնչվող որոշումն անվավեր ճանաչելու համար:

8. Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել խորհրդակցություն չանցկացնելու մասին՝ հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում.

1) արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու իրավունքին առնչվող՝ Հանձնաժողովի որոշման նախագծով նախատեսված միջոցները չպետք է հայտնի լինեն մինչև որոշումն ուժի մեջ մտնելու օրը, իսկ խորհրդակցության անցկացումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել այդպիսի որոշմամբ նախատեսված նպատակների չիրագործմանը.

2) խորհրդակցությունների անցկացումը հանգեցնելու է արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու իրավունքին առնչվող՝ Հանձնաժողովի որոշման ընդունման հետաձգմանը, ինչը կարող է զգալի վնաս հասցնել անդամ պետությունների շահերին.

3) արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու իրավունքին առնչվող՝ Հանձնաժողովի որոշման նախագծով նախատեսվում է բացառիկ իրավունքի տրամադրում:

9. Միջոցների սահմանման ու վերացման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

10. Միջոցներ սահմանելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշմամբ կարող են սահմանվել մաքսային ընթացակարգեր, որոնցով ապրանքների ձևակերպման դեպքում մաքսային մարմինների կողմից վերահսկվում է այդ միջոցի պահպանումը, ինչպես նաև մաքսային ընթացակարգեր, որոնցով չի թույլատրվում ձևակերպել այն ապրանքները, որոնց նկատմամբ սահմանվում է միջոցը:

III. Ապրանքների արտահանման ու ներմուծման արգելքներն ու քանակական սահմանափակումները

11. Ապրանքների արտահանումն ու ներմուծումն իրականացվում է առանց արգելքների ու քանակական սահմանափակումների կիրառման՝ բացառությամբ սույն Արձանագրության 12-րդ կետով նախատեսված դեպքերի:

12. Բացառիկ դեպքերում կարող են սահմանվել.

1) արտահանման ժամանակավոր արգելքներ կամ ժամանակավոր քանակական սահմանափակումներ՝ ներքին շուկայում պարենային կամ Միության ներքին շուկայի համար զգալի նշանակություն ունեցող այլ ապրանքների խիստ պակասը կանխելու կամ նվազեցնելու համար.

2) արտահանման ու ներմուծման արգելքներ կամ քանակական սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ են միջազգային առևտրում ապրանքների դասակարգման, տեսակավորման և վաճառքի չափանիշների ու կանոնների կիրառման առնչությամբ.

3) ջրային կենսաբանական պաշարների ներմուծման սահմանափակումներ՝ ցանկացած տեսքով դրանք ներմուծելու դեպքում, եթե անհրաժեշտ է.

սահմանափակել Միության տարածքից ծագող նույնանման ապրանքի արտադրությունը կամ վաճառքը.

սահմանափակել Միության տարածքից ծագող այն նույնանման ապրանքի արտադրությունը կամ վաճառքը, որը կարող է ուղղակիորեն փոխարինվել ներկրվող ապրանքով, եթե Միությունում նույնանման ապրանքը բավարար ծավալով չի արտադրվում.

շուկայից հանել Միության տարածքից ծագող նույնանման ապրանքի ժամանակավոր ավելցուկը՝ սպառողների որոշ խմբերի այդ ավելցուկն անվճար կամ շուկայական գներից ավելի ցածր գներով տրամադրելու միջոցով.

շուկայից հանել Միության տարածքից ծագող այն ապրանքի ժամանակավոր ավելցուկը, որը կարող է ուղղակիորեն փոխարինվել ներկրվող ապրանքով, եթե Միությունում նույնանման ապրանքը բավարար ծավալով չի արտադրվում՝ սպառողների որոշ խմբերի այդ ավելցուկն անվճար կամ շուկայական գներից ավելի ցածր գներով տրամադրելու միջոցով:

13. Հանձնաժողովի կողմից Միության տարածքում քանակական սահմանափակումներ սահմանելիս կիրառվում են արտահանման և (կամ) ներմուծման քվոտաներ:

Քանակական սահմանափակումներ կիրառվում են՝

արտահանման ժամանակ՝ միայն այն ապրանքների նկատմամբ, որոնք ծագում են անդամ պետությունների տարածքից,

ներմուծման ժամանակ՝ միայն այն ապրանքների նկատմամբ, որոնք ծագում են երրորդ երկրներից:

Քանակական սահմանափակումներ չեն կիրառվում որևէ երրորդ երկրի տարածքից ապրանքի ներմուծման կամ որևէ երրորդ երկրի համար նախատեսված ապրանքի արտահանման ժամանակ, եթե այդ քանակական սահմանափակումները չեն կիրառվում բոլոր երրորդ երկրներից ներմուծման կամ բոլոր երրորդ երկրներ արտահանման դեպքում: Սույն դրույթը չի խոչընդոտում, միջազգային պայմանագրերին համապատասխան, անդամ պետությունների պարտավորությունների կատարումը:

14. Արտահանման արգելքներն ու քանակական սահմանափակումները կարող են սահմանվել միայն Միության ներքին շուկայի համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների ցանկում ներառված ապրանքների դեպքում, որոնց նկատմամբ բացառիկ դեպքերում կարող են սահմանվել արտահանման ժամանակավոր արգելքներ կամ քանակական սահմանափակումներ, որոնք հաստատվում են Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների առաջարկների հիման վրա:

15. Սույն Արձանագրության 12-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Միության ներքին շուկայի համար զգալի նշանակություն ունեցող գյուղատնտեսական ապրանքների արտահանման արգելքի կամ քանակական սահմանափակման սահմանման դեպքում Հանձնաժողովը՝

հաշվի է առնում արգելքի կամ քանակական սահմանափակման հետևանքները՝ Միության տարածքից այդպիսի գյուղատնտեսական ապրանքներ ներմուծող երրորդ երկրների պարենային անվտանգության համար,

նախօրոք տեղեկացնում է Առևտրի համաշխարհային կազմակերպության՝ գյուղատնտեսական հարցերով կոմիտեին արտահանման արգելքի կամ քանակական սահմանափակման կիրառման բնույթի և տևողության մասին,

ցանկացած ներմուծող երկրի խնդրանքով կազմակերպում է խորհրդակցություններ կամ տրամադրում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները՝ քննարկվող միջոցին առնչվող հարցերի վերաբերյալ:

Սույն կետում օգտագործվող «ներմուծող երկիր» հասկացությունը նշանակում է երկիր, որի ներմուծման ծավալում անդամ պետությունների տարածքից ծագող այն գյուղատնտեսական ապրանքի մասնաբաժինը, որի արտահանման համար նախատեսվում է սահմանել արգելք կամ քանակական սահմանափակում, կազմում է 5 տոկոսից ոչ պակաս:

16. Հանձնաժողովը բաշխում է արտահանման և (կամ) ներմուծման քվոտաների ծավալը անդամ պետությունների միջև և սահմանում է անդամ պետությունների արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև արտահանման և (կամ) ներմուծման քվոտաների մասնաբաժինների բաշխման մեթոդը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում բաշխում է ներմուծման քվոտայի ծավալը երրորդ երկրների միջև:

Անդամ պետությունների միջև արտահանման և (կամ) ներմուծման քվոտաների ծավալների բաշխումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ կախված այն խնդիրներից, որոնք նախատեսվում է լուծել քանակական սահմանափակումներ սահմանելու միջոցով՝ հաշվի առնելով անդամ պետությունների առաջարկները և ելնելով յուրաքանչյուր անդամ պետությունում ապրանքների արտադրության և (կամ) սպառման ծավալներից:

17. Արտահանման և (կամ) ներմուծման քվոտաներ կիրառելու մասին որոշում ընդունելիս Հանձնաժողովը՝

1) արտահանման և (կամ) ներմուծման քվոտաները սահմանում է որոշակի ժամկետով (անկախ այն հանգամանքից՝ դրանք բաշխվելու են երրորդ երկրների միջև, թե՝ ոչ),

2) բոլոր շահագրգիռ երրորդ երկրներին տեղեկացնում է իրենց հատկացված ներմուծման քվոտայի ծավալի մասին (այն դեպքում, երբ ներմուծման քվոտան բաշխվում է երրորդ երկրների միջև),

3) հրապարակում է տեղեկություններ արտահանման և (կամ) ներմուծման քվոտաների կիրառման, դրանց ծավալի և գործողության ժամկետների, ինչպես նաև երրորդ երկրների միջև ներմուծման քվոտայի բաշխման մասին:

18. Երրորդ երկրների միջև ներմուծման քվոտաների բաշխումը, որպես կանոն, իրականացվում է Հանձնաժողովի կողմից երրորդ երկրներից բոլոր նշանակալից մատակարարների հետ խորհրդակցությունների արդյունքների հիման վրա:

Ընդ որում, «երրորդ երկրից նշանակալից մատակարար» հասկացությունը նշանակում է մատակարար, որը Միության տարածք տվյալ ապրանքի ներմուծումից ունի 5 և ավելի տոկոս բաժին:

19. Այն դեպքում, երբ ներմուծման քվոտաների բաշխում հնարավոր չէ իրականացնել երրորդ երկրներից բոլոր նշանակալից մատակարարների հետ խորհրդակցության արդյունքների հիման վրա, երրորդ երկրների միջև քվոտաների բաշխման մասին Հանձնաժողովի որոշումն ընդունվում է՝ հաշվի առնելով նախորդող ժամանակահատվածում այդ երկրներից ապրանքի մատակարարման ծավալը:

20. Հանձնաժողովը չի սահմանում այնպիսի պայմաններ կամ ձևական պահանջներ, որոնք կարող են խոչընդոտել ցանկացած երրորդ երկրի՝ իրեն հատկացված ներմուծման քվոտան ամբողջությամբ օգտագործելու հարցում՝ պայմանով, որ համապատասխան ապրանքի մատակարարումն իրականացվելու է ներմուծման քվոտայի գործողության ժամկետի ընթացքում:

21. Նախորդող ժամանակահատվածի ընտրությունն այն ապրանքի մատակարարման ծավալը որոշելու համար, որի առնչությամբ սահմանվում են արտահանման և (կամ) ներմուծման քվոտաներ, իրականացվում է Հանձնաժողովի կողմից: Ընդ որում, որպես կանոն, այդպիսի ժամանակահատված են համարվում նախորդող այն երեք տարիները, որոնց վերաբերյալ առկա են արտահանման և (կամ) ներմուծման իրական ծավալներն արտացոլող տեղեկություններ: Նախորդող ժամանակահատված ընտրելու անհնարինության դեպքում արտահանման և (կամ) ներմուծման քվոտաները բաշխվում են արտահանման և (կամ) ներմուծման իրական ծավալների առավել հավանական բաշխումը գնահատելու հիման վրա:

Սույն կետում օգտագործվող «արտահանման և (կամ) ներմուծման իրական ծավալներ» հասկացությունը նշանակում է արտահանման և (կամ) ներմուծման ծավալներ՝ դրանց սահմանափակումների բացակայության պայմաններում:

22. Ապրանքի մատակարարման հարցում շահագրգռված ցանկացած երրորդ երկրի խնդրանքով Հանձնաժողովն այդ երկրի հետ անցկացնում է խորհրդակցություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

1) սահմանված ներմուծման քվոտայի վերաբաշխման անհրաժեշտությունը,

2) ընտրված նախորդող ժամանակահատվածի փոփոխությունը,

3) ներմուծման քվոտայի բաշխման կամ դրա անսահմանափակ օգտագործման հետ կապված՝ միակողմանիորեն սահմանված պայմանները, ձևական պահանջները կամ ցանկացած այլ դրույթ վերացնելու անհրաժեշտությունը:

23. Արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև արտահանման և (կամ) ներմուծման քվոտաների մասնաբաժինների բաշխումն իրականացվում է անդամ պետությունների կողմից Հանձնաժողովի սահմանած մեթոդով՝ արտահանման և (կամ) ներմուծման քվոտայի մասնաբաժին ստանալու հարցում արտաքին առևտրային գործունեության մասնակիցների իրավահավասարության, ինչպես նաև սեփականության ձևի, գրանցման վայրի կամ շուկայում ունեցած դիրքի հիմքով խտրականության բացառման հիման վրա:

24. Բացի երրորդ երկրների միջև ներմուծման քվոտաներ բաշխելու դեպքերից՝ որևէ սահմանված երկիր կամ որևէ սահմանված երկրից համապատասխան ապրանքի արտահանման և (կամ) ներմուծման համար լիցենզիաներն օգտագործելու պահանջ չի թույլատրվում ներկայացնել:

25. Արտահանման և (կամ) ներմուծման քվոտաներ կիրառելիս Հանձնաժողովը՝

1) ապրանքի որոշակի տեսակի առևտրով շահագրգռված երրորդ երկրի պահանջով տրամադրում է տեղեկություններ՝ արտահանման և (կամ) ներմուծման քվոտաների բաշխման կարգի, արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև դրանց բաշխման մեխանիզմի և քվոտաների այն ծավալների վերաբերյալ, որոնց համար տրամադրվել են լիցենզիաներ.

2) հրապարակում է տեղեկություններ այն ապրանքի ընդհանուր քանակի և արժեքի մասին, որի արտահանումը և (կամ) ներմուծումը թույլատրվելու է որոշակի ապագա ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաև արտահանման և (կամ) ներմուծման քվոտաների գործողության ժամկետի սկզբի և ավարտի ու դրանց ցանկացած փոփոխության վերաբերյալ:

III. Բացառիկ իրավունք

26. Արտաքին առևտրային գործունեության իրականացումը կարող է սահմանափակվել բացառիկ իրավունք շնորհելու միջոցով:

27. Այն ապրանքները, որոնց արտահանման և (կամ) ներմուծման համար շնորհվում է բացառիկ իրավունք, ինչպես նաև այդպիսի բացառիկ իրավունք ստացող՝ արտաքին առևտրային գործունեության մասնակիցներին անդամ պետությունների կողմից որոշելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Արտաքին առևտրային գործունեության այն մասնակիցների ցանկը, որոնց անդամ պետությունների կողմից շնորհվել է բացառիկ իրավունք՝ Հանձնաժողովի որոշման հիման վրա, ենթակա է հրապարակման ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում:

28. Բացառիկ իրավունք շնորհելու միջոցով արտաքին առևտրային գործունեության իրականացման սահմանափակումներ սահմանելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից՝ անդամ պետության առաջարկությամբ:

Բացառիկ իրավունք սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը պետք է ներառի ֆինանսատնտեսական հաշվարկներ և տվյալ միջոցի կիրառման նպատակահարմարությունը հաստատող այլ տեղեկություններ:

29. Արտաքին առևտրային գործունեության այն մասնակիցները, որոնց Հանձնաժողովի որոշման հիման վրա անդամ պետությունների կողմից շնորհվել է բացառիկ իրավունք, կատարում են համապատասխան ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման հետ կապված գործարքներ՝ հիմք ընդունելով խտրականության բացառման սկզբունքը և առաջնորդվելով միայն առևտրային նկատառումներով՝ ներառյալ գնման կամ վաճառքի պայմանները, և երրորդ երկրների կազմակերպություններին տրամադրում են պատշաճ հնարավորություն (գործարար շրջանառության սովորույթներին համապատասխան)՝ այդպիսի գնումներին կամ վաճառքներին մասնակցելու հարցում մրցակցելու համար:

30. Այն ապրանքների արտահանումը և (կամ) ներմուծումը, որոնց մասով արտաքին առևտրային գործունեության մասնակիցներին շնորհվել է բացառիկ իրավունք, իրականացվում է լիազորված մարմնի կողմից տրամադրվող բացառիկ լիցենզիաների հիման վրա:

IV. Ավտոմատ լիցենզավորումը (հսկողությունը)

31. Ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման դինամիկան դիտանցելու նպատակով Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու ավտոմատ լիցենզավորում (հսկողություն):

32. Ավտոմատ լիցենզավորում (հսկողություն) սահմանվում է ինչպես անդամ պետության, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:

Ավտոմատ լիցենզավորում (հսկողություն) սահմանելու անհրաժեշտության հիմնավորումը պետք է ներառի տեղեկություններ՝ այլ եղանակներով ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման քանակական ցուցանիշներին ու դրանց փոփոխություններին հետևելու անհնարինության մասին:

33. Այն ապրանքների առանձին տեսակների ցանկը, որոնց նկատմամբ սահմանվում է ավտոմատ լիցենզավորում (հսկողություն), ինչպես նաև ավտոմատ լիցենզավորման (հսկողության) ժամկետները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Այն ապրանքները, որոնց նկատմամբ սահմանված է ավտոմատ լիցենզավորում (հսկողություն), ներառվում են ապրանքների միասնական ցանկում:

34. Այն ապրանքների արտահանումը և (կամ) ներմուծումը, որոնց նկատմամբ սահմանված է ավտոմատ լիցենզավորում (հսկողություն), իրականացվում է լիազորված մարմնի կողմից

տրամադրված թույլտվությունների առկայության դեպքում՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

35. Ապրանքների միասնական ցանկում ներառված ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման թույլտվությունների տրամադրումն իրականացվում է՝ հավելվածով նախատեսված կանոնների համաձայն:

V. Թույլատրման կարգը

36. Ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման թույլատրման կարգն իրագործվում է լիցենզավորման սահմանման կամ արտաքին առևտրային գործունեության կարգավորման այլ վարչական միջոցների կիրառման միջոցով:

37. Թույլատրման կարգի սահմանման, կիրառման և վերացման վերաբերյալ որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից:

VI. Ընդհանուր բացառությունները

38. Միջոցներ կարող են սահմանվել ապրանքների առանձին տեսակների ներմուծման և (կամ) արտահանման դեպքում, այդ թվում՝ սույն Արձանագրության III և IV բաժիններում նշվածներից տարբերվող հիմքերով, եթե այդ միջոցները՝

1) անհրաժեշտ են հասարակության բարոյական արժեքների կամ իրավակարգի պահպանման համար.

2) անհրաժեշտ են մարդու կյանքի և առողջության, շրջակա միջավայրի, կենդանիների և բույսերի պաշտպանության համար.

3) վերաբերում են ոսկու կամ արծաթի արտահանմանը և (կամ) ներմուծմանը.

4) կիրառվում են մշակութային արժեքների և մշակութային ժառանգության պաշտպանության համար.

5) անհրաժեշտ են չվերականգնվող բնական ռեսուրսների սպառումը կանխելու համար և կիրառվում են չվերականգնվող բնական ռեսուրսների օգտագործման հետ կապված ներքին արտադրության կամ սպառման սահմանափակումների հետ միաժամանակ.

6) կապված են անդամ պետությունների տարածքներից ծագող ապրանքների արտահանումը սահմանափակելու հետ՝ այն ժամանակահատվածում ներքին մշակող արդյունաբերության այդ ապրանքների բավարար քանակ ապահովելու նպատակով, երբ կառավարության կողմից իրականացվող կայունացման ծրագրի արդյունքում այդ ապրանքների ներքին գինն ավելի ցածր է դրանց համաշխարհային գնից.

7) անհրաժեշտ են ապրանքների ձեռքբերման կամ բաշխման համար դրանց՝ ընդհանուր կամ տեղական պակասուրդի դեպքում.

8) անհրաժեշտ են միջազգային պարտավորությունների կատարման համար.

9) անհրաժեշտ են պաշտպանության և անվտանգության ապահովման համար.

10) անհրաժեշտ են միջազգային պարտավորություններին չհակասող՝ մաքսային օրենսդրության կիրառմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, մտավոր սեփականության պաշտպանությանն առնչվող իրավական ակտերի և այլ իրավական ակտերի կատարումն ապահովելու համար:

39. Սույն Արձանագրության 38-րդ կետում նշված միջոցները սահմանվում են Հանձնաժողովի որոշման հիման վրա և չեն կարող ծառայել որպես երրորդ երկրների նկատմամբ կամայական կամ չհիմնավորված խտրականություն ցուցաբերելու, ինչպես նաև ապրանքների արտաքին առևտրի քողարկված սահմանափակման միջոց:

40. Սույն Արձանագրության 38-րդ կետով նախատեսված հիմքերով ապրանքի առանձին տեսակի նկատմամբ միջոցների սահմանման կամ վերացման նպատակով անդամ պետությունը Հանձնաժողով է ներկայացնում փաստաթղթեր, որոնք տեղեկություններ են պարունակում ապրանքի անվանման, դրա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի, առաջարկվող միջոցների բնույթի և դրանց գործողության ենթադրվող ժամկետի մասին, ինչպես նաև միջոցների սահմանման կամ վերացման անհրաժեշտության հիմնավորում:

41. Եթե Հանձնաժողովը չի ընդունում սույն Արձանագրության 38-րդ կետով նախատեսված հիմքերով միջոցների սահմանման վերաբերյալ անդամ պետության առաջարկը, ապա դրանց սահմանումը նախաձեռնած անդամ պետությունը կարող է միակողմանիորեն սահմանել այդպիսի միջոցներ սույն Արձանագրության X բաժնում սահմանված կարգով:

VIII. Արտաքին ֆինանսական վիճակի պաշտպանությունը և վճարային հաշվեկշռի հավասարակշռության ապահովումը

42. Ապրանքների առանձին տեսակների ներմուծման դեպքում միջոցներ կարող են սահմանվել նաև սույն Արձանագրության III և IV բաժիններում նշվածներից տարբերվող հիմքերով, եթե դա անհրաժեշտ է արտաքին ֆինանսական վիճակի պաշտպանության և վճարային հաշվեկշռի հավասարակշռության ապահովման համար:

Այդպիսի միջոցներ կարող են սահմանվել միայն այն դեպքում, երբ վճարային հաշվեկշռի կրիտիկական վիճակից ելնելով՝ այլ միջոցներով հնարավոր չէ կանխել արտաքին հաշիվների հետ կապված իրավիճակի կտրուկ վատթարացումը:

43. Միջոցները, որոնք սահմանվում են այդ թվում սույն Արձանագրության III և IV բաժիններում նշված հիմքերից տարբերվող հիմքերով, կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների մատակարարման համար վճարները կատարվում են այն արժույթով, որով ձևավորվում են անդամ պետությունների՝ սույն Արձանագրության 44-րդ կետում նշված արժութային պահուստները:

44. Ներմուծման հետ կապված սահմանափակումները չպետք է լինեն ավելի խիստ, քան անհրաժեշտ է՝ անդամ պետությունների արժութային պահուստների կտրուկ կրճատման անխուսափելի վտանգը կանխելու կամ անդամ պետությունների արժութային պահուստների խելամիտ աճի տեմպը վերականգնելու համար:

45. Հանձնաժողովն ուսումնասիրում է սույն Արձանագրության 42-րդ կետում նշված միջոցների սահմանման վերաբերյալ անդամ պետության առաջարկը:

46. Եթե Հանձնաժողովը չի ընդունում միջոցների սահմանման վերաբերյալ անդամ պետության առաջարկը, ապա անդամ պետությունը կարող է որոշում ընդունել սույն Արձանագրության 42-րդ կետում նշված միջոցները միակողմանիորեն սահմանելու վերաբերյալ՝ սույն Արձանագրության X բաժնի համաձայն:

IX. Լիցենզավորումը ապրանքների արտաքին առևտրի ոլորտում

47. Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում լիցենզավորում կիրառվում է ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման պարագայում, եթե այդ ապրանքների նկատմամբ սահմանված են.

քանակական սահմանափակումներ,

բացառիկ իրավունք,

թույլատրման կարգ,

սակագնային քվոտա,

ներմուծման քվոտա՝ որպես հատուկ պաշտպանական միջոց:

Լիցենզավորումն իրագործվում է լիազորված մարմնի կողմից արտաքին առևտրային գործունեության մասնակցին ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիա տրամադրելու միջոցով:

Մի անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրամադրված լիցենզիաները ճանաչվում են մյուս բոլոր անդամ պետությունների կողմից:

48. Ապրանքների միասնական ցանկում ներառված ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզավորումն իրականացվում է սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կանոնների համաձայն:

49. Լիազորված մարմինների կողմից տրամադրվում են լիցենզիաների հետևյալ տեսակները.

մեկանգամյա լիցենզիա,

հիմնական լիցենզիա,

բացառիկ լիցենզիա:

Հիմնական և բացառիկ լիցենզիաների տրամադրումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում:

X. Միակողմանիորեն միջոցների կիրառումը

50. Բացառիկ դեպքերում սույն Արձանագրության VII և VIII բաժիններով նախատեսված հիմքերով անդամ պետությունները երրորդ երկրների հետ առևտրում կարող են միակողմանիորեն սահմանել ժամանակավոր միջոցներ, այդ թվում՝ սույն Արձանագրության III և IV բաժիններում նշվածներից տարբերվող հիմքերով:

51. Ժամանակավոր միջոց սահմանող անդամ պետությունը նախօրոք, սակայն ոչ ուշ, քան միջոցի սահմանման օրվանից 3 օրացուցային օր հետո, Հանձնաժողովին ծանուցում է դրա մասին և Միության մաքսային տարածքում այդ միջոցի սահմանման վերաբերյալ առաջարկ է ներկայացնում:

52. Հանձնաժողովն ուսումնասիրում է ժամանակավոր միջոց սահմանելու վերաբերյալ անդամ պետության առաջարկը և անդամ պետության առաջարկի ուսումնասիրման արդյունքների հիման վրա կարող է Միության մաքսային տարածքում այդ միջոցի սահմանման վերաբերյալ որոշում ընդունել:

53. Այդպիսի միջոցի գործողության ժամկետը տվյալ դեպքում սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

54. Եթե Միության մաքսային տարածքում ժամանակավոր միջոց սահմանելու մասին որոշում չի ընդունվում, ապա Հանձնաժողովը ժամանակավոր միջոցը սահմանած անդամ պետությանը և անդամ պետությունների մաքսային մարմիններին տեղեկացնում է, որ ժամանակավոր միջոցը գործում է այն սահմանելու օրվանից հետո՝ առավելագույնը 6 ամսվա ընթացքում:

55. Ժամանակավոր միջոց սահմանելու վերաբերյալ անդամ պետությունից ստացված ծանուցման հիման վրա Հանձնաժողովն անհապաղ տեղեկացնում է անդամ պետությունների մաքսային մարմիններին անդամ պետություններից մեկի կողմից ժամանակավոր միջոցի սահմանման մասին՝ նշելով.

1) անդամ պետության այն նորմատիվ իրավական ակտի անվանումը, որի համաձայն սահմանվում է ժամանակավոր միջոցը,

2) ապրանքի անվանումը և դրա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը,

3) ժամանակավոր միջոցի սահմանման ամսաթիվը և դրա գործողության ժամկետը:

56. Սույն Արձանագրության 55-րդ կետում նշված տեղեկություններն ստանալուց հետո անդամ պետությունների մաքսային մարմինները չեն թույլատրում.

ժամանակավոր միջոցը կիրառած անդամ պետության տարածքից ծագող համապատասխան այն ապրանքների արտահանումը, որոնց վերաբերյալ տվյալները ներառված են տվյալ տեղեկություններում՝ առանց այդ անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի,

ժամանակավոր միջոցը կիրառած անդամ պետության համար նախատեսված համապատասխան այն ապրանքների ներմուծումը, որոնց վերաբերյալ տվյալները ներառված են տվյալ տեղեկություններում՝ առանց այդ անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի: Ընդ որում, ժամանակավոր միջոցը չկիրառող անդամ պետություններն անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում՝ ժամանակավոր միջոցը կիրառած անդամ պետության տարածք համապատասխան ապրանքների ներմուծումը չթույլատրելու համար:

Հավելված
Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին արձանագրության

Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կանոնները

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոններով սահմանվում է այն ապրանքների միասնական ցանկում ներառված ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կարգը, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

2. Սույն Կանոններում օգտագործվում են Երրորդ երկրների առնչությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին արձանագրությամբ սահմանված հասկացությունները («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 7-րդ հավելված), ինչպես նաև հետևյալ հասկացությունները.

«հայտատու»՝ արտաքին առևտրային գործունեության մասնակից, որը լիցենզիայի կամ թույլտվության ձևակերպման նպատակով լիազորված մարմին է ներկայացնում փաստաթղթեր.

«լիցենզիայի կատարում»՝ Միության մաքսային տարածք այն ապրանքների փաստացի ներմուծում կամ Միության մաքսային տարածքից այն ապրանքների փաստացի արտահանում, որոնց բացթողումն իրականացվել է մաքսային մարմինների կողմից՝ տրամադրված (ձևակերպված) լիցենզիայի հիման վրա:

3. Լիցենզիա կամ լիցենզիայի կրկնօրինակ տրամադրելու (ձևակերպելու) համար լիազորված մարմնի կողմից գանձվում է պետական տուրք (լիցենզավորման վճար)՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և չափով:

4. Լիցենզիաներ ու թույլտվություններ տրամադրվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերով դասակարգվող յուրաքանչյուր այն ապրանքի համար, որի առնչությամբ սահմանված է լիցենզավորում կամ ավտոմատ լիցենզավորում (հսկողություն):

5. Լիցենզիաներն ու թույլտվությունները ստորագրելու իրավունք ունեցող՝ լիազորված մարմինների պաշտոնատար անձանց ստորագրությունների նմուշները, ինչպես նաև լիազորված մարմինների կնիքների դրոշմների նմուշներն ուղարկվում են Հանձնաժողով՝ անդամ պետությունների մաքսային մարմիններին տեղեկացնելու համար:

6. Լիցենզիան կամ թույլտվությունը ձևակերպելու համար ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև լիցենզիայի կատարումը հավաստող փաստաթղթերը պետք է պահվեն լիազորված մարմիններում լիցենզիայի կամ թույլտվության գործողության ժամկետի ավարտի օրվանից կամ լիցենզիայի գործողությունը դադարեցնելու կամ կասեցնելու մասին որոշումն ընդունելու օրվանից հետո՝ 3 տարվա ընթացքում:

Նշված ժամկետը լրանալուց հետո փաստաթղթերը ոչնչացվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որտեղ տրամադրվել է այդ լիցենզիան կամ թույլտվությունը:

7. Լիազորված մարմինները վարում են տրամադրված լիցենզիաների և թույլտվությունների վերաբերյալ տվյալների շտեմարան ու Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում նշված տեղեկությունները տրամադրում են Հանձնաժողովին: Հանձնաժողովը տրամադրված լիցենզիաների մասին տվյալները տրամադրում է անդամ պետությունների մաքսային մարմիններին:

II. Լիցենզիաների տրամադրման կարգը

8. Լիցենզիա ստանալու համար հայտի ձևակերպումն ու լիցենզիայի ձևակերպումն իրականացվում են՝ ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիա ստանալու համար հայտի ձևակերպման և Հանձնաժողովի կողմից հաստատվող այդպիսի լիցենզիայի ձևակերպման վերաբերյալ հրահանգների համաձայն:

Լիցենզիա կարող է տրամադրվել (ձևակերպվել) էլեկտրոնային փաստաթղթի ձևով՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով, իսկ մինչև դրա սահմանումը՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսվող կարգով:

Էլեկտրոնային փաստաթղթի ձևով լիցենզիայի կառուցվածքն ու ձևաչափը հաստատվում են Հանձնաժողովի կողմից, իսկ մինչև դրանց հաստատումը՝ անդամ պետության օրենսդրության համաձայն:

9. Մեկանգամյա լիցենզիայի գործողության ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարին՝ դրա գործողության մեջ մտնելու օրվանից հաշվարկված: Մեկանգամյա լիցենզիայի գործողության ժամկետը կարող է սահմանափակվել արտաքին առևտրային պայմանագրի

գործողության ժամկետով կամ լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացող փաստաթղթի գործողության ժամկետով:

Այն ապրանքների դեպքում, որոնց նկատմամբ սահմանվել են արտահանման և (կամ) ներմուծման քանակական սահմանափակումներ կամ ներմուծման քվոտա՝ որպես հատուկ պաշտպանական միջոց, կամ սակագնային քվոտաներ, լիցենզիայի գործողության ժամկետն ավարտվում է այն օրացուցային տարվա ընթացքում, որի համար սահմանվել է քվոտան:

Հիմնական լիցենզիայի գործողության ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարին՝ դրա գործողության մեջ մտնելու օրվանից հաշվարկված, իսկ այն ապրանքների դեպքում, որոնց նկատմամբ սահմանվել են արտահանման և (կամ) ներմուծման քանակական սահմանափակումներ կամ սակագնային քվոտաներ, այդ ժամկետն ավարտվում է այն օրացուցային տարվա ընթացքում, որի համար սահմանվել է քվոտան, եթե այլ բան նախատեսված չէ Հանձնաժողովի կողմից:

Բացառիկ լիցենզիայի գործողության ժամկետը Հանձնաժողովի կողմից սահմանվում է յուրաքանչյուր առանձին դեպքում:

10. Հայտատուի կամ համապատասխան լիազորությունների գրավոր հաստատում ունեցող՝ նրա ներկայացուցչի կողմից լիցենզիայի ձևակերպման համար լիազորված մարմին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) լիցենզիա ստանալու համար հայտը՝ լրացված և ձևակերպված ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիա ստանալու համար հայտի ձևակերպման և այդպիսի լիցենզիայի ձևակերպման համար սահմանված հրահանգներին համապատասխան (այսուհետ՝ հայտ),

2) հայտի էլեկտրոնային պատճենը՝ Հանձնաժողովի կողմից հաստատված ձևաչափով, իսկ մինչև դրա հաստատումը՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

3) արտաքին առևտրային պայմանագրի պատճենը, դրա հավելվածները և (կամ) լրացումները (մեկանգամյա լիցենզիայի համար), իսկ արտաքին առևտրային պայմանագրի բացակայության դեպքում՝ Կողմերի մտադրությունների մասին վկայող այլ փաստաթղթի պատճենը,

4) հարկային մարմնում հաշվառման կամ պետական գրանցման մասին փաստաթղթի պատճենը (տեղեկություններ, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ),

5) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացման համար տրամադրված լիցենզիայի պատճենը կամ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացման համար լիցենզիայի առկայության մասին տեղեկությունները (եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ), եթե գործունեության այդ տեսակը կապված է այն ապրանքի շրջանառության հետ, որի համար Միության մաքսային տարածքում սահմանվել է լիցենզավորման պահանջ,

6) այլ փաստաթղթեր (տեղեկություններ), եթե դրանք սահմանվել են Հանձնաժողովի այն որոշմամբ, որի հիման վրա նախատեսվել է համապատասխան ապրանքի լիցենզավորում:

11. Փաստաթղթերի ներկայացված պատճենների յուրաքանչյուր թերթ պետք է հաստատված լինի հայտատուի ստորագրությամբ և կնիքով, կամ փաստաթղթերի պատճենները պետք է կարված լինեն, իսկ դրանց վերջին էջերը հաստատված լինեն հայտատուի ստորագրությամբ և կնիքով:

Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը պետք է հաշվառվեն լիազորված մարմնում:

Հայտն ու փաստաթղթերը (տեղեկությունները) կարող են ներկայացվել էլեկտրոնային փաստաթղթի ձևով՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով: Թույլատրվում է փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացնել նաև հայտատուի էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված տեսագրված փաստաթղթերի ձևով, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ:

Լիցենզիան տրամադրվում է այն պետական տուրքի (լիցենզավորման վճարի) վճարումը հաստատող փաստաթուղթը հայտատուի կողմից ներկայացվելուց հետո, որը գանձվում է լիցենզիայի տրամադրման (ձևակերպման) համար անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով ու չափով:

12. Հանձնաժողովի որոշմամբ նախատեսված դեպքերում մինչև լիազորված մարմին հայտ ներկայացնելը հայտատուն կամ լիազորված մարմինը համաձայնեցման նպատակով այն ուղարկում են անդամ պետության գործադիր իշխանության՝ անդամ պետության կողմից սահմանված համապատասխան մարմին, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ:

13. Լիցենզիան տրամադրվում է կամ լիցենզիայի տրամադրումը մերժվում է լիազորված մարմնի կողմից սույն Կանոնների 10-րդ կետով նախատեսված փաստաթղթերի հիման վրա փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հանձնաժողովի որոշմամբ այլ ժամկետներ սահմանված չեն:

14. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերով՝

1) լիցենզիա ստանալու համար հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերում թերի կամ անարժանահավատ տեղեկությունների առկայությունը.

2) սույն Կանոնների 10-12 կետերով նախատեսված պահանջները չկատարելը.

3) լիցենզիայի տրամադրման համար հիմք ծառայող մեկ կամ մի քանի փաստաթղթերի գործողության դադարեցումը կամ կասեցումը.

4) անդամ պետությունների միջազգային պարտավորությունների խախտումը, որը կարող է տեղի ունենալ այն պայմանագրի կատարման հետևանքով, որի իրագործման համար հայցվում է լիցենզիան.

5) քվոտայի, ինչպես նաև սակագնային քվոտայի սպառումը կամ դրանց բացակայությունը (քվոտավորման ենթակա ապրանքների համար լիցենզիայի ձևակերպման դեպքում).

6) Հանձնաժողովի ակտով նախատեսված այլ հիմքերով:

15. Լիցենզիայի տրամադրումը մերժելու վերաբերյալ որոշումը պետք է լինի հիմնավորված և հայտատուին տրամադրվի գրավոր կամ էլեկտրոնային փաստաթղթի ձևով, եթե դա նախատեսված է Հանձնաժողովի որոշմամբ, իսկ նշված որոշման բացակայության դեպքում՝ անդամ պետության օրենսդրությամբ:

16. Լիազորված մարմինը ձևակերպում է լիցենզիայի բնօրինակը, որը տրամադրվում է հայտատուին: Նախքան ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ հայտատուն ներկայացնում է լիցենզիայի բնօրինակը համապատասխան մաքսային մարմին, որը լիցենզիան վերահսկողության վերցնելիս հայտատուին է տրամադրում դրա պատճենը՝ այն վերահսկողության վերցնելու մասին մաքսային մարմնի կողմից կատարված նշումով:

Եթե լիազորված մարմնի կողմից լիցենզիան տրամադրվում (ձևակերպվում) է էլեկտրոնային փաստաթղթի ձևով, ապա հայտատուից չի պահանջվում իր պետության մաքսային մարմին ներկայացնել լիցենզիայի բնօրինակը՝ թղթային կրիչով:

Էլեկտրոնային փաստաթղթի ձևով տրամադրված լիցենզիաների կատարումը վերահսկելու հարցում լիազորված մարմինների ու մաքսային մարմինների համագործակցության կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

17. Տրամադրված լիցենզիաների մեջ փոփոխությունների կատարում, այդ թվում՝ տեխնիկական բնույթի պատճառներով, չի թույլատրվում:

18. Այն դեպքում, երբ որպես իրավաբանական անձ գրանցված հայտատուի հիմնադիր փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ (կազմակերպաիրավական ձևի, անվանման կամ գտնվելու վայրի փոփոխություն) կամ փոխվել են ֆիզիկական անձ հանդիսացող հայտատուի անձնագրային տվյալները, հայտատուն պարտավոր է տրամադրված լիցենզիայի գործողությունը դադարեցնելու և նոր լիցենզիա ձևակերպելու դիմում ներկայացնել՝ կցելով հայտը և նշված փոփոխությունները հավաստող փաստաթղթերը:

19. Լիազորված մարմինը լիցենզիայի գործողությունը դադարեցնելու կամ կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավունք ունի հետևյալ դեպքերում.

1) հայտատուի կողմից գրավոր կամ էլեկտրոնային փաստաթղթի միջոցով դիմումի ներկայացում, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ,

2) որպես իրավաբանական անձ գրանցված հայտատուի հիմնադիր փաստաթղթերում փոփոխությունների կատարում (կազմակերպաիրավական ձևի, անվանման կամ գտնվելու վայրի փոփոխությունը) կամ ֆիզիկական անձ հանդիսացող հայտատուի անձնագրային տվյալների փոփոխություն,

3) լիցենզիա ստանալու նպատակով հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերում անարժանահավատ տեղեկությունների հայտնաբերում,

4) լիցենզիայի տրամադրման համար հիմք ծառայած մեկ կամ մի քանի փաստաթղթերի գործողության դադարեցում կամ կասեցում,

5) անդամ պետության միջազգային պարտավորությունների խախտում այն պայմանագրի կատարման ժամանակ, որի հիման վրա տրամադրվել է լիցենզիան,

6) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացման համար տրամադրված լիցենզիայի անվավեր ճանաչում, եթե գործունեության այդ տեսակը կապված է այն ապրանքի շրջանառության հետ, որի համար լիցենզավորում է նախատեսվել,

7) լիցենզիայի տրամադրման ժամանակ թույլ տրված այնպիսի խախտումների հայտնաբերում, որոնց հետևանքով տրամադրվել է լիցենզիան, որը չէր կարող տրամադրվել սահմանված կարգը պահպանելու դեպքում,

8) լիցենզառուի կողմից միջազգային նորմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ լիցենզիայի տրամադրման պայմանների չկատարում,

9) դատական որոշման առկայություն,

10) լիցենզառուի կողմից սույն Կանոնների 22-րդ կետի չկատարում:

20. Լիցենզիայի գործողությունը կասեցվում է դրա մասին լիազորված մարմնի կողմից որոշում կայացնելու օրվանից:

Կասեցված լիցենզիայի գործողությունը կարող է վերականգնվել լիազորված մարմնի կողմից դրա գործողության կասեցմանը հանգեցրած պատճառների վերացումից հետո: Ընդ որում, լիցենզիայի գործողության կասեցումը հիմք չէ դրա երկարաձգման համար:

Լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

21. Լիցենզիայի կորստի դեպքում լիազորված մարմինը, հայտատուի գրավոր դիմումի հիման վրա և անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով ու չափով պետական տուրքի (լիցենզավորման վճար) վճարումից հետո, տրամադրում է լիցենզիայի կրկնօրինակը, որը ձևակերպվում է այնպես, ինչպես բնօրինակը, և պարունակում է «Կրկնօրինակ» գրառումը:

Դիմումը, որով պարզաբանվում են լիցենզիայի կորստի պատճառները և հանգամանքները, շարադրվում է ազատ ձևով:

Լիցենզիայի կրկնօրինակը լիազորված մարմնի կողմից տրամադրվում է դիմումը ներկայացնելու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

22. Հիմնական և բացառիկ լիցենզիա ունեցողները պարտավոր են եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, լիազորված մարմին ներկայացնել հաշվետվություն՝ լիցենզիայի կատարման ընթացքի վերաբերյալ:

Մեկանգամյա լիցենզիա ունեցողները պարտավոր են լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրացուցային օրվա ընթացքում, լիազորված մարմին ներկայացնել լիցենզիայի կատարման մասին տեղեկանք:

23. Լիցենզիան վերահսկողությունից հանելու դեպքում անդամ պետության համապատասխան լիազորված մարմինը հայտատուին տրամադրում է լիցենզիայի կատարման մասին տեղեկանք նրա գրավոր դիմումի հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Տեղեկանքի ձևը և տրամադրման կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

24. Մաքսային մարմինները լիցենզիաների կատարման վերաբերյալ տեղեկություններն էլեկտրոնային տարբերակով ուղղակիորեն ներկայացնում են լիազորված մարմին, եթե այդ տեղեկությունների տրամադրումը մաքսային մարմինների կողմից նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

Եթե լիցենզիաների կատարման վերաբերյալ տեղեկությունները մաքսային մարմինների կողմից էլեկտրոնային տարբերակով ուղղակիորեն ներկայացվում են լիազորված մարմին, ապա լիցենզիա ունեցողները լիցենզիաների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ ու լիցենզիաների կատարման վերաբերյալ տեղեկանքներ չեն ներկայացնում լիազորված մարմիններ:

III. Թույլտվությունների տրամադրման կարգը

25. Թույլտվության ձևակերպումն իրականացվում է ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման թույլտվության ձևակերպման վերաբերյալ Հանձնաժողովի կողմից հաստատվող հրահանգների համաձայն:

Թույլտվությունը կարող է տրամադրվել (ձևակերպվել) էլեկտրոնային փաստաթղթի ձևով՝ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգով, իսկ մինչև դրա հաստատումը՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Էլեկտրոնային փաստաթղթի ձևով թույլտվության կառուցվածքն ու ձևաչափը հաստատվում են Հանձնաժողովի կողմից, իսկ մինչև դրանց հաստատումը՝ անդամ պետության օրենսդրության համաձայն:

Մի անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրամադրված թույլտվությունները ճանաչվում են մյուս բոլոր անդամ պետությունների կողմից:

26. Թույլտվությունների տրամադրման ժամկետը չի կարող գերազանցել հայտը ներկայացնելու օրվանից հաշվարկված 3 աշխատանքային օրը:

Թույլտվությունները տրամադրվում են արտաքին առևտրային գործընթացի բոլոր մասնակիցներին՝ առանց սահմանափակումների, լիազորված մարմին ներկայացվող հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

գրավոր դիմում,

թույլտվության նախագիծ՝ թղթային կրիչի վրա,

թույլտվության նախագծի էլեկտրոնային պատճենն այն ձևաչափով, որը հաստատվում է Հանձնաժողովի կողմից, իսկ մինչև դրա հաստատումը՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

27. Թույլտվության գործողության ժամկետը սահմանափակվում է այն օրացուցային տարով, որի ընթացքում տրամադրվել է թույլտվությունը:

28. Լիազորված մարմինը ձևակերպում է թույլտվության բնօրինակը, որը տրամադրվում է արտաքին առևտրային գործունեության մասնակցին կամ նրա՝ թույլտվության բնօրինակը ստանալու համար գրավոր լիազորագիր ունեցող ներկայացուցչին:

Նախքան ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ արտաքին առևտրային գործունեության մասնակիցը ներկայացնում է թույլտվության բնօրինակը համապատասխան մաքսային մարմին, որը թույլտվությունը վերահսկողության վերցնելիս արտաքին առևտրային գործունեության մասնակցին է տրամադրում դրա պատճենը՝ այն վերահսկողության վերցնելու մասին մաքսային մարմնի կողմից կատարված նշումով:

Եթե լիազորված մարմնի կողմից թույլտվությունը տրամադրվել (ձևակերպվել) է էլեկտրոնային փաստաթղթի ձևով, ապա արտաքին առևտրային գործունեության մասնակցից չի պահանջվում իր պետության մաքսային մարմին ներկայացնել թույլտվության բնօրինակը՝ թղթային կրիչով:

Էլեկտրոնային փաստաթղթի ձևով տրամադրված թույլտվությունների կատարումը վերահսկելու հարցում լիազորված մարմինների ու մաքսային մարմինների համագործակցության կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

29. Տրամադրված թույլտվությունները չեն կարող վերաձևակերպվել արտաքին առևտրային գործունեության այլ մասնակիցների անունով:

Տրամադրված թույլտվությունների մեջ փոփոխությունների կատարում չի թույլատրվում:

30. Տրամադրված թույլտվության կորստի դեպքում լիազորված մարմինը կարող է 3 աշխատանքային օրվա ընթացքում արտաքին առևտրային գործունեության մասնակցի գրավոր դիմումի հիման վրա տրամադրել թույլտվության կրկնօրինակը, որը ձևակերպվում է այնպես, ինչպես բնօրինակը, և պարունակում է «Կրկնօրինակ» գրառումը: Ընդ որում, դիմումի մեջ պետք է պարզաբանվեն թույլտվության կորստի պատճառներն ու հանգամանքները: Դիմումը շարադրվում է ազատ ձևով:

ՀԱՎԵԼՎԱԾ 8
«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների կիրառման մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 48-րդ և 49-րդ հոդվածներին համապատասխան և դրանով սահմանվում է Միությունում ապրանքներ արտադրողների տնտեսական շահերի պաշտպանության նպատակով երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառումը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«նույնանման ապրանք»՝ ապրանք, որն ամբողջությամբ նույնական է այն ապրանքի հետ, որն ուսումնասիրության (կրկնակի ուսումնասիրության) առարկա է կամ կարող է դառնալ ուսումնասիրության առարկա, կամ այդպիսի ապրանքի բացակայության դեպքում՝ այլ ապրանք, որն իր հատկանիշներով մոտ է այն ապրանքի հատկանիշներին, որն ուսումնասիրության առարկա է կամ կարող է դառնալ ուսումնասիրության առարկա.

«հակագնագցման (հակադեմփինգային) միջոց»՝ գնագցող ներմուծմանը հակազդելու միջոց, որը կիրառվում է Հանձնաժողովի որոշմամբ՝ հակագնագցման տուրք, այդ թվում՝ նախնական հակագնագցման տուրք սահմանելու կամ արտահանողի կողմից ընդունված կամավոր գնային պարտավորությունները հաստատելու միջոցով.

«հակագնագցման տուրք»՝ տուրք, որը կիրառվում է հակագնագցման միջոցի սահմանման դեպքում և որը գանձվում է անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից՝ ներմուծման մաքսատուրքից անկախ.

«գնագցման չափ»՝ ապրանքի սովորական արժեքի և այդ ապրանքի արտահանման գնի՝ տոկոսներով արտահայտված հարաբերակցությունը՝ առանց այդ ապրանքի արտահանման գնի, կամ ապրանքի սովորական արժեքի և դրա արտահանման գնի՝ բացարձակ ցուցանիշներով արտահայտված տարբերությունը.

«ներմուծման քվոտա»՝ Միության մաքսային տարածք ապրանքի ներմուծման սահմանափակում՝ վերջինիս քանակի և (կամ) արժեքի առումով.

«փոխհատուցման միջոց»՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղի վրա՝ արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիաների (լրավճարների) ունեցած ազդեցությունը չեզոքացնելու միջոց, որը կիրառվում է Հանձնաժողովի որոշմամբ՝ փոխհատուցման տուրք (այդ թվում՝ նախնական փոխհատուցման տուրք) սահմանելու կամ սուբսիդավորող երրորդ երկրի լիազոր մարմնի կամ արտահանողի կողմից ընդունված կամավոր պարտավորությունները հաստատելու միջոցով.

«փոխհատուցման տուրք»՝ տուրք, որը կիրառվում է փոխհատուցման միջոց սահմանելու դեպքում և գանձվում է անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից՝ ներմուծման մաքսատուրքից անկախ.

«անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնաս»՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղի վիճակի՝ ապացույցներով հաստատված վատթարացում, որը, մասնավորապես, կարող է արտահայտվել անդամ պետություններում նույնանման ապրանքի արտադրության ծավալի և անդամ պետությունների շուկայում դրա իրացման ծավալի կրճատմամբ, այդ ապրանքի արտադրության եկամտաբերության նվազեցմամբ, ինչպես նաև անդամ պետությունների տնտեսության տվյալ ճյուղում ապրանքային պաշարների, զբաղվածության, աշխատավարձի մակարդակի և անդամ պետությունների տնտեսության տվյալ ճյուղում ներդրումների կատարման մակարդակի վրա ունեցած բացասական ազդեցությամբ.

«ուղղակիորեն մրցակցող ապրանք»՝ ապրանք, որը համադրելի է այն ապրանքի հետ, որն ուսումնասիրության (կրկնակի ուսումնասիրության) առարկա է կամ կարող է դառնալ ուսումնասիրության առարկա՝ իր նշանակությամբ, կիրառմամբ, որակական և տեխնիկական հատկանիշներով, նաև՝ այլ հիմնական հատկություններով այնպես, որ գնորդն սպառման ընթացքում փոխարինում է կամ պատրաստ է դրանով փոխարինել այն ապրանքը, որը ուսումնասիրության (կրկնակի ուսումնասիրության) առարկա է կամ կարող է դառնալ ուսումնասիրության առարկա.

«առևտրի բնականոն ընթացք»՝ արտահանող երրորդ երկրի շուկայում նույնանման ապրանքի առքուվաճառքը՝ վերջինիս ինքնարժեքի կշռված միջինից ոչ ցածր այնպիսի գնով, որը սահմանվում է արտադրության ծախքերի կշռված միջինի և առևտրային, վարչական ու ընդհանուր ծախքերի կշռված միջինի հիման վրա.

«վճարողներ»՝ Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքին համապատասխան որոշված անձինք.

«նախնական հակազնազգման տուրք»՝ տուրք, որը կիրառելի է Միության մաքսային տարածք այնպիսի ապրանք ներմուծելիս, որի մասով ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ուսումնասիրությունն իրականացնելու ընթացքում կազմվել է նախնական եզրակացություն՝ գնագցող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի, վնաս հասցնելու վտանգի առկայության կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման մասին.

«նախնական փոխհատուցման տուրք»՝ տուրք, որը կիրառելի է Միության մաքսային տարածք այնպիսի ապրանք ներմուծելիս, որի մասով ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ուսումնասիրությունն իրականացնելու ընթացքում կազմվել է նախնական եզրակացություն՝ սուբսիդավորվող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի, վնաս հասցնելու վտանգի առկայության կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման մասին.

«նախնական հատուկ տուրք»՝ տուրք, որը կիրառելի է Միության մաքսային տարածք այնպիսի ապրանք ներմուծելիս, որի մասով ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ուսումնասիրությունն անցկացնելու ընթացքում կազմվել է նախնական եզրակացություն ներմուծման այն ավելացած ծավալի առկայության մասին, որը լուրջ վնաս է հասցրել կամ սպառնում է այդպիսի վնաս հասցնել անդամ պետությունների տնտեսության ճյուղին.

«նախորդող ժամանակահատված»՝ ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումը ներկայացնելու օրվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարի, որի համար առկա են անհրաժեշտ վիճակագրական տվյալներ.

«փոխկապակցված անձինք»՝ անձինք, որոնք համապատասխանում են հետևյալ չափորոշիչներից մեկին կամ մի քանիսին՝

այս անձանցից յուրաքանչյուրը հանդիսանում է մյուս անձի մասնակցությամբ ստեղծված կազմակերպության աշխատակիցը կամ ղեկավարը.

անձինք հանդիսանում են աշխատանքային գործընկերներ, այսինքն՝ կապված են միմյանց հետ պայմանագրային հարաբերություններով, գործում են եկամուտ ստանալու նպատակով և համատեղ են կրում համատեղ գործունեության իրականացման հետ կապված ծախսերն ու կորուստները.

անձինք հանդիսանում են մեկ կազմակերպության գործատուներ և աշխատողներ.

անձանցից որևէ մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում, վերահսկում է երկու անձանց քվեարկող բաժնետոմսերի կամ մասնաբաժինների 5 և ավելի տոկոսը կամ հանդիսանում է դրանց անվանատերը.

անձանցից մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է մյուս անձին.

երկու անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են երրորդ անձի կողմից.

երկու անձինք միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են երրորդ անձին.

անձինք գտնվում են ամուսնական հարաբերությունների մեջ, հանդիսանում են արյունակիցներ կամ մերձավորներ, որդեգրող և որդեգրված, ինչպես նաև՝ խնամակալ և խնամարկյալ:

Ընդ որում, ուղղակի վերահսկողություն ասելով ենթադրվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձի՝ իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները ներքոնշյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի իրականացման միջոցով սահմանելու հնարավորությունը,

վերջինիս գործադիր մարմնի գործառույթների իրականացում.

իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանները սահմանելու իրավունքի ձեռքբերում.

իրավաբանական անձի կանոնադրական (պահուստային) կապիտալը (ֆոնդը) կազմող բաժնետոմսերով (բաժնեմասերով) ապահովվող ձայների ընդհանուր թվի 5-ից ավելի տոկոսի տնօրինում:

Անուղղակի վերահսկողություն ասելով ենթադրվում է իրավաբանական կամ ֆիզիկական անձի՝ իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները սահմանելու հնարավորությունը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի միջոցով կամ մի քանի իրավաբանական անձանց միջոցով, որոնց միջև առկա է ուղղակի վերահսկողություն.

«անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնաս»՝ անդամ պետություններում նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի արտադրության հետ կապված իրավիճակի՝ ապացույցներով հաստատված ընդհանուր վատթարացում, որն արտահայտվում է, որպես կանոն, նախորդող ժամանակահատվածում անդամ պետությունների տնտեսության ճյուղի արտադրական, առևտրային և ֆինանսական դրության էական վատթարացմամբ.

«հատուկ պաշտպանական միջոց»՝ Միության մաքսային տարածք ներմուծման ավելացած ծավալը սահմանափակելու միջոց, որը կիրառվում է Հանձնաժողովի որոշմամբ՝ ներմուծման քվոտա, հատուկ քվոտա կամ հատուկ տուրք, այդ թվում՝ նախնական հատուկ տուրք սահմանելու միջոցով.

«հատուկ քվոտա»՝ Միության մաքսային տարածք ապրանքի ներմուծման որոշակի ծավալի սահմանում, որի շրջանակներում ապրանքը մատակարարվում է Միության մաքսային տարածք առանց հատուկ տուրքի վճարման, իսկ այն գերազանցելու դեպքում՝ հատուկ տուրքի վճարմամբ.

«հատուկ տուրք»՝ տուրք, որը կիրառվում է հատուկ պաշտպանական միջոց սահմանելու դեպքում և գանձվում է անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից՝ ներմուծման մաքսատուրքից անկախ.

«սուբսիդավորվող ներմուծում»՝ ապրանքի ներմուծում Միության մաքսային տարածք, որի արտադրության, արտահանման կամ տրանսպորտային փոխադրման համար օգտագործվել է արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիա.

«երրորդ երկրներ»՝ Պայմանագրի մասնակից չհանդիսացող պետություններ և (կամ) երկրների միություն, ինչպես նաև այն տարածքը, որն ընդգրկված է Հանձնաժողովի կողմից հաստատվող Աշխարհի երկրների դասակարգչի մեջ.

«սուբսիդավորող մարմին»՝ արտահանող երրորդ երկրի պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ անձ, որը գործում է համապատասխան պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի հանձնարարությամբ, կամ որը լիազորված է համապատասխան պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ իրավական ակտին համապատասխան կամ ելնելով փաստացի հանգամանքներից».

«անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգ»՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու՝ ապացույցներով հաստատված անխուսափելիությունը.

«անդամ պետությունների տնտեսության ճյուղին լուրջ վնաս հասցնելու վտանգ»՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին լուրջ վնաս հասցնելու՝ ապացույցներով հաստատված անխուսափելիությունը.

«արտահանման գին»՝ գին, որը վճարվել է կամ պետք է վճարվի ապրանքը Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում:

II. Ուսումնասիրություն

1. Ուսումնասիրության իրականացման նպատակները

3. Ապրանքի ներմուծման դեպքում հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց սահմանելուն նախորդում է ուսումնասիրություն, որի նպատակն է հաստատել հետևյալը՝

Միության մաքսային տարածք ներմուծման ավելացած ծավալի և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայությունը.

Միության մաքսային տարածք գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայությունը կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցումը:

2. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը

4. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը գործում է Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

5. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ուսումնասիրության արդյունքների հիման վրա Հանձնաժողով է ներկայացնում հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու կամ հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցը վերանայելու կամ չեղյալ հայտարարելու նպատակահարմարության մասին առաջարկություններ պարունակող զեկույց՝ դրան կցելով Հանձնաժողովի համապատասխան որոշման նախագիծը:

6. Հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի վերանայմամբ նախատեսվում է դրա փոփոխությունը, չեղյալ հայտարարումը կամ ազատականացումը՝ կրկնակի ուսումնասիրության արդյունքներին համապատասխան:

7. Սույն Արձանագրության 15-22-րդ, 78-89-րդ, 143-153-րդ կետերով նախատեսված դեպքերում ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան ուսումնասիրության ավարտը, Հանձնաժողով է ներկայացնում նախնական հատուկ պաշտպանական, նախնական հակագնագցման կամ նախնական փոխհատուցման միջոց սահմանելու և կիրառելու նպատակահարմարության մասին առաջարկություններ պարունակող զեկույց՝ դրան կցելով Հանձնաժողովի համապատասխան որոշման նախագիծը:

8. Ուսումնասիրություն իրականացնող մարմնին ապացույցների և տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև ուսումնասիրություն իրականացնող մարմնի հետ նամակագրությունն իրականացվում են ռուսերենով, իսկ օտար լեզվով կազմված փաստաթղթերի բնօրինակներին պետք է կցված լինի դրանց ռուսերեն թարգմանությունը (այդ թարգմանության հաստատմամբ):

III. Հատուկ պաշտպանական միջոցներ

1. Հատուկ պաշտպանական միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները

9. Հատուկ պաշտպանական միջոցը կիրառվում է արտահանող երրորդ երկրից Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքի նկատմամբ՝ անկախ վերջինիս ծագման երկրից, բացառությամբ՝

1) այն ապրանքի, որը ծագում է Միության սակագնային առանձնաշնորհումների համակարգից օգտվող զարգացող կամ առավել թույլ զարգացած երկրից, եթե այդպիսի երկրից ծագող տվյալ ապրանքի ներմուծման մասնաբաժինը չի գերազանցում Միության մաքսային տարածք այդ ապրանքի ներմուծման ամբողջ ծավալի 3 տոկոսը՝ պայմանով, որ զարգացող և առավել թույլ զարգացած այն երրորդ երկրներից տվյալ ապրանքի ներմուծման ընդհանուր մասնաբաժինը, որոնցից յուրաքանչյուրի մասնաբաժինը կազմում է Միության մաքսային տարածք այդ ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 3 տոկոսից ոչ ավելին, չի գերազանցում Միության մաքսային տարածք տվյալ ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 9 տոկոսը.

2) այն ապրանքի, որը ծագում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից, «Ազատ առևտրի գոտու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագրի կողմ հանդիսացող պետությունից՝ նշված պայմանագրի 8-րդ հոդվածով սահմանված պայմանները կատարելու դեպքում:

10. Հանձնաժողովը զարգացող կամ առավել թույլ զարգացած երրորդ երկրից ծագող և սույն Արձանագրության 9-րդ կետին համապատասխան հատուկ պաշտպանական միջոցի գործողության շրջանակից բացառված ապրանքի նկատմամբ հատուկ պաշտպանական միջոց կիրառելու վերաբերյալ որոշում է կայացնում այն դեպքում, եթե սույն Արձանագրության 31-րդ, 33-րդ կամ 34-րդ կետերին համապատասխան ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից իրականացված կրկնակի ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ այդ զարգացող կամ առավել թույլ զարգացած երրորդ երկրից ապրանքի ներմուծման մասնաբաժինը գերազանցում է սույն Արձանագրության 9-րդ կետով սահմանված ցուցանիշները:

11. Հանձնաժողովը Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից, «Ազատ առևտրի գոտու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագրի կողմ հանդիսացող պետությունից ծագող, սույն Արձանագրության 9-րդ կետին համապատասխան հատուկ պաշտպանական միջոցի գործողության շրջանակից բացառված ապրանքի նկատմամբ հատուկ պաշտպանական միջոց կիրառելու վերաբերյալ որոշում է կայացնում այն դեպքում, եթե սույն Արձանագրության 31-րդ, 33-րդ կամ 34-րդ կետերին համապատասխան ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից իրականացված կրկնակի ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ նշված պայմանագրի 8-րդ հոդվածում նշված պայմաններն այլևս չեն պահպանվում:

2. Ներմուծման ավելացած ծավալի հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգը որոշելը

12. Միության մաքսային տարածք ներմուծման ավելացած ծավալի հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգը որոշելու նպատակով ուսումնասիրություն իրականացնող մարմինը ուսումնասիրության ընթացքում գնահատում է այն օբյեկտիվ գործոնները, որոնք կարող են արտահայտված լինել քանակական ցուցանիշներով և որոնք ազդեցություն են թողնում անդամ պետությունների տնտեսության ճյուղի տնտեսական վիճակի վրա, այդ թվում՝

1) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման աճի՝ բացարձակ ցուցանիշներով և հարաբերական ցուցանիշներով արտահայտված տեմպերը և ծավալը՝ անդամ պետություններում նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի արտադրության կամ սպառման ընդհանուր ծավալի հետ համեմատած.

2) ուսումնասիրության առարկա հանդիսացող ներմուծվող ապրանքի մասնաբաժինը՝ անդամ պետությունների շուկայում տվյալ ապրանքի և նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի վաճառքի ընդհանուր ծավալի մեջ.

3) ուսումնասիրության առարկա հանդիսացող ներմուծվող ապրանքի գների մակարդակը՝ անդամ պետություններում արտադրվող նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի գների մակարդակի հետ համեմատությամբ.

4) անդամ պետություններում արտադրվող նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի՝ անդամ պետությունների շուկայում վաճառքի ծավալի փոփոխությունը.

5) նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի արտադրության ծավալի, արտադրողականության, արտադրական կարողությունների օգտագործման, շահույթների և վնասների չափի, ինչպես նաև զբաղվածության մակարդակի փոփոխությունը անդամ պետությունների տնտեսության ճյուղում:

13. Ներմուծման ավելացած ծավալի հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասը կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգը որոշվում է գործին առնչվող և ուսումնասիրություն իրականացնող մարմնի ունեցած բոլոր ապացույցների և տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա:

14. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ներմուծման ավելացած ծավալից բացի՝ վերլուծում է այնպիսի հայտնի գործոններ, որոնց հետևանքով միևնույն ժամանակահատվածում անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցվում է լուրջ վնաս կամ առաջանում է այդպիսի վնաս հասցնելու վտանգ: Տվյալ վնասը չպետք է համարվի Միության մաքսային տարածք ներմուծման ավելացած ծավալի հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնաս կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգ:

3. Նախնական հատուկ տուրք սահմանելը

15. Ծայրահեղ դեպքերում, երբ հատուկ պաշտպանական միջոցի կիրառումն ուշացնելն այնպիսի լուրջ վնաս կհասցներ անդամ պետությունների տնտեսության ճյուղին, որը հետագայում դժվար կլիներ վերացնել, Հանձնաժողովը, նախքան համապատասխան ուսումնասիրության ավարտը, կարող է 200 օրացուցային օրը չգերազանցող ժամկետով նախնական հատուկ տուրք սահմանելու և կիրառելու մասին որոշում կայացնել՝ հիմք ընդունելով ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախնական եզրակացությունը, համաձայն որի առկա են ակնհայտ ապացույցներ, որ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ավելացած ծավալը հասցրել կամ կարող է լուրջ վնաս հասցնել անդամ պետությունների տնտեսության ճյուղին: Ուսումնասիրությունը պետք է շարունակվի ուսումնասիրություն իրականացնող մարմնի վերջնական եզրակացությունն ստանալու նպատակով:

16. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը գրավոր տեղյակ է պահում արտահանող երրորդ երկրի լիազոր մարմնին, ինչպես նաև իրեն հայտնի այլ շահագրգիռ անձանց նախնական հատուկ միջոցի հնարավոր սահմանման մասին:

17. Նախնական հատուկ տուրք սահմանելու վերաբերյալ խորհրդակցություն անցկացնելու մասին արտահանող երրորդ երկրի լիազոր մարմնի կողմից հարցում ներկայացվելու դեպքում այդ խորհրդակցությունները պետք է սկսվեն Հանձնաժողովի կողմից նախնական հատուկ տուրք սահմանելու մասին որոշումն ընդունելուց հետո:

18. Այն դեպքում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի ուսումնասիրության արդյունքներով որոշվել է, որ հատուկ պաշտպանական միջոց սահմանելու հիմքերը բացակայում են կամ սույն Արձանագրության 272-րդ կետին համապատասխան՝ կայացվել է հատուկ պաշտպանական միջոց չկիրառելու մասին որոշում, ապա նախնական հատուկ տուրքի գումարները ենթակա են վճարողին վերադարձման՝ սույն Արձանագրության հավելվածին համապատասխան կարգով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ժամանակին տեղեկացնում է անդամ պետությունների մաքսային մարմիններին հատուկ պաշտպանական միջոց սահմանելու հիմքերի բացակայության կամ հատուկ պաշտպանական միջոց չկիրառելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու վերաբերյալ:

19. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով հատուկ պաշտպանական միջոցի կիրառման մասին որոշում է ընդունվել (այդ թվում՝ ներմուծման կամ հատուկ քվոտա սահմանելու միջոցով), նախնական հատուկ տուրքի գործողության ժամկետն ընդգրկվում է հատուկ պաշտպանական միջոցի գործողության ընդհանուր ժամկետի մեջ, իսկ նախնական հատուկ տուրքի գումարները հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին՝ ուսումնասիրության արդյունքներով ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ենթակա են հաշվեգրման և բաշխման սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 20-րդ և 21-րդ կետերի դրույթները:

20. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվում սահմանել հատուկ տուրքի՝ նախնական հատուկ տուրքի դրույքաչափից ավելի ցածր դրույքաչափ, ապա նախնական հատուկ տուրքի գումարները, որոնք համապատասխանում են հատուկ տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված հատուկ տուրքի գումարին, ենթակա են հաշվեգրման և բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով սահմանված կարգով:

Նախնական հատուկ տուրքի գումարները, որոնք գերազանցում են հատուկ տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված հատուկ տուրքի գումարը, ենթակա են վճարողին վերադարձման՝ սույն Արձանագրության հավելվածով սահմանված կարգով:

21. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվում սահմանել հատուկ տուրքի՝ նախնական հատուկ տուրքի դրույքաչափը գերազանցող դրույքաչափ, ապա հատուկ տուրքի և նախնական հատուկ տուրքի գումարների միջև տարբերությունը չի գանձվում:

22. Նախնական հատուկ տուրք սահմանելու մասին որոշումն ընդունվում է, որպես կանոն, ուսումնասիրությունն սկսելու ամսաթվից սկսած 6 ամսից ոչ ուշ:

4. Հատուկ պաշտպանական միջոցի կիրառումը

23. Հատուկ պաշտպանական միջոցը կիրառվում է Հանձնաժողովի որոշմամբ այն չափով և ժամկետով, որոնք անհրաժեշտ են՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասը կանխարգելելու կամ վերացնելու, ինչպես նաև անդամ պետությունների տնտեսության ճյուղը՝ փոփոխվող տնտեսական պայմաններին հարմարեցնելու գործընթացը հեշտացնելու համար:

24. Այն դեպքում, եթե հատուկ պաշտպանական միջոցը կիրառվում է ներմուծման քվոտա սահմանելու միջոցով, ապա այդ ներմուծման քվոտայի չափը չպետք է պակաս լինի ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման միջին տարեկան ծավալից (քանակական կամ արժեքային արտահայտությամբ) նախորդող ժամանակահատվածի կտրվածքով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է սահմանել ներմուծման քվոտայի ավելի փոքր չափ՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասը կամ այդ վնասը հասցնելու վտանգը վերացնելու համար:

25. Արտահանող երրորդ երկրների միջև ներմուծման քվոտան բաշխելիս Միության մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մատակարարում իրականացնելու հարցում շահագրգիռ երկրներին տրվում է ներմուծման քվոտան իրենց միջև բաշխելու հարցի վերաբերյալ խորհրդակցություններ անցկացնելու հնարավորություն:

26. Այն դեպքում, եթե հնարավոր չէ անցկացնել սույն Արձանագրության 25-րդ կետով նախատեսված խորհրդակցությունները կամ դրա անցկացման ընթացքում այդպիսի բաշխման վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա ներմուծման քվոտան բաշխվում է ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի՝ Միության մաքսային տարածք արտահանելու հարցում շահագրգիռ արտահանող երրորդ երկրների միջև այն համամասնությամբ, որը ձևավորվել է նախորդող ժամանակահատվածում այդ ապրանքն այդպիսի արտահանող երրորդ երկրներից ներմուծելիս՝ այդ ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի հիման վրա՝ քանակական կամ արժեքային արտահայտությամբ:

Ընդ որում, հաշվի է առնվում ցանկացած հատուկ գործոն, որը կարող էր կամ կարող է ազդել տվյալ ապրանքի առևտրի ընթացքի վրա:

27. Այն դեպքում, եթե ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի առանձին արտահանող երրորդ երկրներից ներմուծման ծավալի աճը՝ տոկոսային հարաբերությամբ ոչ համամասնորեն ավելացել է այդ ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի աճի նկատմամբ ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմում ներկայացնելու օրվան նախորդող 3 տարվա ընթացքում, Հանձնաժողովը կարող է բաշխել ներմուծման քվոտան այդպիսի արտահանող երրորդ երկրների միջև՝ հաշվի առնելով այդպիսի արտահանող երրորդ երկրներից այդ ապրանքի՝ Միության մաքսային տարածք ներմուծման ծավալի աճի բացարձակ և հարաբերական ցուցանիշները:

Սույն կետի դրույթները կիրառելի են բացառապես այն դեպքում, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի առկայությունը:

28. Ներմուծման քվոտայի ձևով հատուկ պաշտպանական միջոցի կիրառման կարգը հաստատվում է Հանձնաժողովի որոշմամբ: Այն դեպքում, եթե այդ որոշմամբ նախատեսվում է ներմուծման լիցենզավորում, ապա լիցենզիաները տրամադրվում են Պայմանագրի 46-րդ հոդվածով սահմանված կարգով:

29. Այն դեպքում, եթե հատուկ պաշտպանական միջոցը կիրառվում է հատուկ քվոտա սահմանելու միջոցով, ապա այդպիսի քվոտայի չափի որոշումը, բաշխումը և կիրառումն իրականացվում են սույն Արձանագրության 24-28-րդ կետերով ներմուծման քվոտայի համար նախատեսված կարգով:

5. Հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետն ու վերանայումը

30. Հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 4 տարին՝ բացառությամբ այն դեպքի, երբ տվյալ միջոցի գործողության ժամկետը երկարաձգվում է սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան:

31. Սույն Արձանագրության 30-րդ կետում նշված հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել Հանձնաժողովի որոշմամբ այն դեպքում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա որոշվել է, որ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասը կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգը վերացնելու համար անհրաժեշտ է երկարաձգել հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը, և առկա են ապացույցներ այն մասին, որ անդամ պետությունների տնտեսության համապատասխան ճյուղում ձեռնարկվում են այդ ճյուղը փոփոխվող տնտեսական պայմաններին հարմարեցնելու գործընթացը խթանող միջոցառումներ:

32. Հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետի երկարաձգման մասին Հանձնաժողովի կողմից որոշում ընդունվելու դեպքում տվյալ միջոցը չի կարող լինել ավելի սահմանափակող, քան այդ որոշումն ընդունելու օրվա դրությամբ գործող հատուկ պաշտպանական միջոցը:

33. Այն դեպքում, եթե հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը գերազանցում է 1 տարին, ապա Հանձնաժողովն աստիճանաբար մեղմացնում է այդ հատուկ պաշտպանական միջոցը՝ դրա գործողության ժամկետի ընթացքում ժամանակային հավասար դադարներով:

Այն դեպքում, եթե հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետը գերազանցում է 3 տարին, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինն այդ միջոցի գործողության ժամկետի կեսը լրանալուց ոչ ուշ անցկացնում է կրկնակի ուսումնասիրություն, որի արդյունքներով հատուկ պաշտպանական միջոցը կարող է պահպանվել, մեղմացվել կամ չեղյալ հայտարարվել:

Սույն կետի նպատակներով հատուկ պաշտպանական միջոցի մեղմացում ասելով ենթադրվում է ներմուծման քվոտայի կամ հատուկ քվոտայի ծավալի ավելացում կամ հատուկ տուրքի դրույքաչափի նվազեցում:

34. Բացի սույն Արձանագրության 33-րդ կետում նշված կրկնակի ուսումնասիրությունից՝ ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կարող է անցկացվել կրկնակի ուսումնասիրություն հետևյալ նպատակներով՝

1) հատուկ պաշտպանական միջոցի փոփոխման, ազատականացման կամ չեղյալ հայտարարման նպատակահարմարությունը որոշելու նպատակով, ինչը կապված է փոփոխված հանգամանքների, այդ թվում՝ հատուկ պաշտպանական միջոցի առարկա հանդիսացող ապրանքի ճշգրտման հետ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ այդպիսի ապրանքը չի կարող արտադրվել Միությունում տվյալ հատուկ պաշտպանական միջոցի կիրառման ընթացքում.

2) Միության մաքսային տարածք ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ զարգացող կամ առավել թույլ զարգացած երրորդ երկրների մասնաբաժինը սահմանելու նպատակով.

3) Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից, «Ազատ առևտրի գոտու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագրի կողմ հանդիսացող պետության համար նշված պայմանագրի 8-րդ հոդվածով սահմանված չափորոշիչների պահպանման փաստը հաստատելու նպատակով:

35. Սույն Արձանագրության 34-րդ կետի 1-ին ենթակետում նշված նպատակներով կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումը կարող է ընդունվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, եթե հատուկ պաշտպանական միջոցը սահմանելուց հետո անցել է առնվազն 1 տարի:

36. Կրկնակի ուսումնասիրություն իրականացնելիս, համապատասխան տարբերությունները հաշվի առնելով, կիրառվում են ուսումնասիրության իրականացմանը վերաբերող դրույթները:

37. Հատուկ պաշտպանական միջոցի գործողության ընդհանուր ժամկետը՝ ներառյալ նախնական հատուկ տուրքի գործողության ժամկետը և այն ժամկետը, որով երկարաձգվում է հատուկ պաշտպանական միջոցի գործողությունը, չպետք է գերազանցի 8 տարին:

38. Այն ապրանքի նկատմամբ, որի համար ավելի վաղ արդեն կիրառվել է հատուկ պաշտպանական միջոց, չի կարող կրկնակի անգամ կիրառվել հատուկ պաշտպանական միջոցը՝

նախորդ հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետին հավասար ժամանակահատվածի ընթացքում: Ընդ որում, այն ժամկետը, որի ընթացքում հատուկ պաշտպանական միջոցը չի կիրառվում, չի կարող 2 տարուց պակաս լինել:

39. Հատուկ պաշտպանական միջոցը, որի գործողության ժամկետը կազմում է 180-ից ոչ ավելի օրացուցային օր, անկախ սույն Արձանագրության 38-րդ կետով սահմանված դրույթներից, կարող է կրկին կիրառվել միևնույն ապրանքի նկատմամբ, եթե նախորդ հատուկ պաշտպանական միջոցի սահմանման օրվանից անցել է ոչ պակաս, քան 1 տարի, և նոր հատուկ պաշտպանական միջոց սահմանելու օրվան նախորդող 5 տարվա ընթացքում այդ ապրանքի նկատմամբ հատուկ պաշտպանական միջոցը 2 անգամից ավելի չի կիրառվել:

IV. Հակագնագցման միջոցներ

1. Հակագնագցման միջոցների կիրառման ընդհանուր սկզբունքները

40. Ապրանքը գնագցող ներմուծման առարկա է այն դեպքում, եթե այդ ապրանքի արտահանման գինը ցածր է դրա սովորական արժեքից:

41. Ուսումնասիրության ժամանակահատվածը, որի ընթացքում գնագցող ներմուծման առկայությունը որոշելու նպատակով վերլուծվում են տվյալներ, սահմանվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից: Ընդ որում, այդ ժամանակահատվածը սահմանվում է, որպես կանոն, ուսումնասիրության անցկացման մասին դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 12 ամիսներին հավասար ժամկետով, որոնց համար առկա են վիճակագրական տվյալներ, սակայն ցանկացած պարագայում այդ տևողությունը չպետք է 6 ամսից պակաս լինի:

2. Գնագցման չափի որոշումը

42. Գնագցման չափը որոշվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ հիմք ընդունելով հետևյալ համադրությունները՝

1) ապրանքի միջին կշռված սովորական արժեքը՝ ապրանքի միջին կշռված արտահանման գնի հետ.

2) առանձին գործարքներով ապրանքի սովորական արժեքը՝ առանձին գործարքներով ապրանքի արտահանման գների հետ.

3) ապրանքի միջին կշռված սովորական արժեքը՝ առանձին գործարքներով ապրանքի արտահանման գների հետ այն դեպքում, երբ ապրանքի գնի մեջ առկա են էական տարբերություններ՝ կախված գնորդներից, տարածաշրջաններից կամ ապրանքի մատակարարման տևողությունից:

43. Ապրանքի արտահանման գնի համադրումը դրա սովորական արժեքի հետ իրականացվում է առևտրային գործառնության միևնույն փուլում և, հնարավորինս՝ միևնույն ժամանակ իրականացված ապրանքի վաճառքի դեպքերի մասով:

44. Ապրանքի արտահանման գինը դրա սովորական արժեքի հետ համադրելիս իրականացվում է դրանց ճշգրտում՝ հաշվի առնելով գների համադրելիության վրա ազդող տարբերությունները, այդ թվում՝ մատակարարումների պայմանները և առանձնահատկությունները, հարկման, առևտրային գործառնությունների փուլերը, քանակական ցուցանիշները, ֆիզիկական առանձնահատկությունները, ինչպես նաև ցանկացած այլ տարբերություն, որի մասով ներկայացվում են դրանց՝ գների համադրելիության վրա ունեցած ազդեցության ապացույցներ:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հավաստիանում է, որ նշված տարբերությունները հաշվի առնելով կատարվող ճշգրտումները չեն կրկնօրինակում մեկը մյուսին և այդպիսով չեն խեղաթյուրում ապրանքի արտահանման գինը դրա սովորական արժեքի հետ համադրելու արդյունքը:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինն իրավունք ունի շահագրգիռ անձանցից պահանջելու այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է ապրանքի արտահանման գնի՝ դրա սովորական արժեքի հետ պատշաճ կերպով համադրումն ապահովելու համար:

45. Արտահանող երրորդ երկրի շուկայում առևտրի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի առքուվաճառքի գործարքների բացակայության դեպքում, կամ այն դեպքում, եթե առևտրի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի վաճառքի փոքր ծավալի կամ արտահանող երրորդ երկրի շուկայում հատուկ դրության պատճառով հնարավոր չէ իրականացնել ապրանքի արտահանման գնի և նույնանման ապրանքի արժեքի պատշաճ համադրում՝ արտահանող երրորդ երկրի շուկայում վաճառք իրականացնելու ընթացքում, ապա ապրանքի արտահանման գինը կամ համադրվում է արտահանող երրորդ երկրից այլ երրորդ երկիր ներմուծվող նույնանման ապրանքի համեմատելի գնի հետ (այն պայմանով, որ նույնանման ապրանքի գինը ներկայացուցչական է), կամ ապրանքի արտադրության ծախքերի հետ վերջինիս ծագման երկրում՝ հաշվի առնելով անհրաժեշտ վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերն ու շահույթը:

46. Այն դեպքում, եթե ապրանքը ներմուծվում է Միության մաքսային տարածք երրորդ այն երկրից, որը վերջինիս ծագման երկիրը չէ, այդ ապրանքի արտահանման գինը համադրվում է երրորդ երկրի շուկայում նույնանման ապրանքի համեմատելի գնի հետ:

Ապրանքի արտահանման գինը կարող է համադրվել նույնանման ապրանքի համեմատելի գնի հետ վերջինիս ծագման երկրում, եթե այդ ապրանքը միայն ուղարկվում է այն երրորդ երկրի տարածքով, որտեղից այն արտահանվում է Միության մաքսային տարածք, կամ դրա արտադրությունը չի իրականացվում այդ երրորդ երկրում, կամ այդ երկրում գոյություն չունի նույնանման ապրանքի համեմատելի գին:

47. Այն դեպքում, եթե ապրանքի արտահանման գինը դրա սովորական արժեքի հետ համադրելիս անհրաժեշտ է վերահաշվարկել դրանց արժեքները՝ մի արժույթից մյուսը փոխարկելու համար, ապա այդպիսի հաշվարկն իրականացվում է՝ կիրառելով ապրանքի վաճառքի օրվա դրությամբ գործող արժույթի պաշտոնական փոխարժեքը:

Այն դեպքում, եթե արտարժույթի վաճառքն անմիջականորեն կապված է եղել ապրանքի՝ համապատասխան արտահանման ռեժիմով մատակարարման հետ և իրականացվել է որոշակի ժամկետով, ապա օգտագործվում է արժույթի այն փոխարժեքը, որը կիրառվում էր արժույթի վաճառքն այդ ժամկետում իրականացնելու ժամանակ:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի չի առնում արժույթի փոխարժեքների տատանումները և ուսումնասիրության ընթացքում արտահանողներին տրամադրում է 60 օրացուցային օրվանից ոչ պակաս ժամկետ՝ իրենց արտահանման գները ճշգրտելու համար՝ հաշվի առնելով ուսումնասիրության ընթացքում արժույթի փոխարժեքների հաստատուն փոփոխությունները:

48. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, որպես կանոն, սահմանում է առանձին գնագցման չափ՝ ապրանքի յուրաքանչյուր հայտնի արտահանողի և (կամ) արտադրողի համար, որը ներկայացրել է առանձին գնագցման չափ սահմանելու համար անհրաժեշտ տեղեկություններ:

49. Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է այն եզրակացության, որ ապրանքի յուրաքանչյուր հայտնի արտահանողի և (կամ) արտադրողի համար առանձին գնագցման չափի սահմանումն անընդունելի է ապրանքն արտահանողների, արտադրողների կամ ներմուծողների ընդհանուր թվի, ապրանքի բազմազանության կամ որևէ այլ պատճառով, ապա նա կարող է սահմանափակում կիրառել առանձին գնագցման չափ սահմանելու առումով՝ ելնելով շահագրգիռ անձանց ընդունելի թվից, կամ սահմանել գնագցման չափ յուրաքանչյուր արտահանող երրորդ երկրից ապրանքի նմուշի մասով, որը ուսումնասիրություն իրականացնող մարմնի տրամադրության տակ եղած տեղեկությունների համաձայն՝ վիճակագրական առումով ներկայացուցչական է և կարող է քննության առնվել՝ չխաթարելով ուսումնասիրության ընթացքը:

Առանձին գնագցման չափի սահմանումը սահմանափակելու նպատակով շահագրգիռ անձանց ընտրությունն իրականացվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, նախընտրելիորեն՝ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի համապատասխան օտարերկրյա արտահանողների, արտադրողների ու ներմուծողների հետ խորհրդակցության հիման վրա և նրանց համաձայնությամբ:

Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը, սույն կետին համապատասխան, սահմանափակում է կիրառում, ապա այն նաև որոշում է գնագցման առանձին չափ՝ յուրաքանչյուր այն օտարերկրյա արտահանողի կամ օտարերկրյա արտադրողի համար, որն ի

սկզբանե չէր ընտրվել, սակայն ներկայացրել էր անհրաժեշտ այնպիսի տեղեկություններ, որոնց միջոցով հնարավոր էր որոշել առանձին գնագցման չափը դրանք քննության առնելու համար սահմանված ժամկետում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օտարերկրյա արտահանողների և (կամ) օտարերկրյա արտադրողների թիվն այնքան մեծ է, որ դրանք առանձին քննության առնելը կարող է հանգեցնել համապատասխան ուսումնասիրություն իրականացնելու ժամկետի՝ ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից խախտման:

Այդ օտարերկրյա արտահանողների և (կամ) օտարերկրյա արտադրողների կողմից կամավոր ներկայացված պատասխանները չպետք է մերժվեն ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից:

50. Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը, սույն Արձանագրության 49-րդ կետին համապատասխան, գնագցման առանձին չափ որոշելու մասով սահմանափակում է կիրառում, ապա գնագցման չափը, որը հաշվարկվում է գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի այն օտարերկրյա արտահանողների կամ օտարերկրյա արտադրողների համար, որոնք չեն ընտրվել գնագցման առանձին չափ որոշելու համար, սակայն համաձայնվել են ընտրությանը մասնակցելուն և ուսումնասիրության ընթացքում նախատեսված ժամկետում դրա համար անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացրել, չպետք է գերազանցի գնագցման այն միջին կշռված չափը, որը որոշվել է գնագցման առանձին չափ որոշելու համար ընտրված՝ գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի օտարերկրյա արտահանողների կամ օտարերկրյա արտադրողների համար:

51. Եթե ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արտահանողները կամ արտադրողները համապատասխան տեղեկատվությունը պահանջվող ձևով և սահմանված ժամկետում չեն ներկայացնում ուսումնասիրություն իրականացնող մարմին, կամ նրանց կողմից ներկայացված տեղեկատվությունը չի կարող ստուգվել կամ չի համապատասխանում իրականությանը, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է որոշել գնագցման չափը՝ հիմք ընդունելով իր տրամադրության տակ եղած այլ տեղեկատվություն:

52. Գնագցման առանձին չափ որոշելու համար անհրաժեշտ տեղեկություններ ներկայացրած՝ ապրանքի յուրաքանչյուր հայտնի արտահանողի և (կամ) արտադրողի համար գնագցման առանձին չափ որոշելուց բացի՝ ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է գնագցման չափ որոշել ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մյուս բոլոր արտահանողների և (կամ) արտադրողների համար՝ ուսումնասիրության ընթացքում սահմանված գնագցման ամենաբարձր չափի հիման վրա:

3. Ապրանքի սովորական արժեքը որոշելը

53. Ապրանքի սովորական արժեքը որոշվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ հիմք ընդունելով նույնանման ապրանքի այն գները, որոնք գործում են ուսումնասիրությունն իրականացնելու ժամանակահատվածում արտահանող երրորդ երկրի ներքին շուկայում առևտրի բնականոն ընթացքի դեպքում այդ ապրանքն արտահանող երրորդ երկրի մաքսային տարածքում օգտագործելու նպատակով այն գնորդներին վաճառելիս, որոնք այդ երրորդ երկրի ռեզիդենտ հանդիսացող արտադրողների կամ արտահանողների հետ չփոխկապակցված անձինք են:

Սովորական արժեքը որոշելու նպատակով կարող են հաշվի առնվել նույնանման ապրանքի այն գները, որոնք գործում են այդ ապրանքն արտահանող երրորդ երկրի ներքին շուկայում այն գնորդներին վաճառելիս, որոնք այդ երրորդ երկրի ռեզիդենտ հանդիսացող արտադրողների և արտահանողների հետ փոխկապակցված անձինք են, այն դեպքում, երբ հաստատվում է, որ նշված փոխկապակցվածությունը չի ազդում օտարերկրյա արտադրողի և (կամ) արտահանողի գնային քաղաքականության վրա:

54. Արտահանող երրորդ երկրի ներքին շուկայում առևտրի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի վաճառքի ծավալը դիտարկվում է որպես բավարար՝ ապրանքի սովորական արժեքը որոշելու համար, եթե այդ ծավալը կազմում է ոչ պակաս, քան արտահանող երրորդ երկրից Միության մաքսային տարածք ապրանքի արտահանման ընդհանուր ծավալի 5 տոկոսը:

Առևտրի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի վաճառքի ավելի փոքր ծավալը համարվում է ընդունելի՝ ապրանքի սովորական արժեքը որոշելու համար, եթե առկա են ապացույցներ, որ այդպիսի ծավալը բավարար է՝ առևտրի բնականոն ընթացքի պայմաններում ապրանքի արտահանման գնի և նույնանման ապրանքի գնի պատշաճ համադրումն ապահովելու համար:

55. Սույն Արձանագրության 53-րդ կետին համապատասխան ապրանքի սովորական արժեքը որոշելիս՝ արտահանող երրորդ երկրի ներքին շուկայում ապրանքը գնորդներին վաճառելու ժամանակ ապրանքի գին է համարվում այն միջին կշռված գինը, որով նույնանման ապրանքը գնորդներին վաճառվել է ուսումնասիրության ժամանակահատվածում կամ ապրանքի այն գինը, որով այդ ժամանակահատվածում իրականացվել է դրա ցանկացած առանձին վաճառք գնորդներին:

56. Նույնանման ապրանքի վաճառքն արտահանող երրորդ երկրի շուկայում կամ արտահանող երրորդ երկրից մեկ այլ երրորդ երկիր՝ նույնանման ապրանքի մեկ միավորի արտադրության ինքնարժեքից ցածր գներով՝ հաշվի առնելով վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերը, կարող է հաշվի չառնվել ապրանքի սովորական արժեքը որոշելիս միայն այն դեպքում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաստատի, որ այդպիսի վաճառքն իրականացվում է ուսումնասիրության ժամանակահատվածում զգալի ծավալով և այնպիսի գներով, որոնցով չի ապահովվում այդ ժամանակահատվածում առաջացած բոլոր ծախքերի փոխհատուցումը:

57. Եթե նույնանման ապրանքի գինը, որը վաճառքի պահին ցածր է նույնանման ապրանքի միավորի արտադրության ինքնարժեքից՝ հաշվի առնելով վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերը, գերազանցում է ապրանքի միավորի արտադրության միջին կշռված ինքնարժեքը՝ հաշվի առնելով վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերը ուսումնասիրության ժամանակահատվածում, ապա այդ գինը դիտարկվում է որպես ուսումնասիրության ժամանակահատվածում բոլոր ծախքերի փոխհատուցումն ապահովող գին:

58. Նույնանման ապրանքի վաճառքը նույնանման ապրանքի միավորի արտադրության ինքնարժեքից ցածր գներով՝ հաշվի առնելով վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերը, համարվում է զգալի ծավալով իրականացվող այն դեպքում, եթե ապրանքի սովորական արժեքը որոշելիս հաշվի առնվող գործարքներով նույնանման ապրանքի միջին կշռված գինը ցածր է նույնանման ապրանքի միավորի արտադրության միջին կշռված ինքնարժեքից՝ հաշվի առնելով վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերը, կամ այդ ինքնարժեքից ցածր գներով վաճառքի ծավալը կազմում է ոչ պակաս, քան ապրանքի սովորական արժեքը որոշելիս հաշվի առնվող գործարքներով վաճառքի ծավալի 20 տոկոսը:

59. Նույնանման ապրանքի միավորի արտադրության ինքնարժեքը, հաշվի առնելով վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերը, հաշվարկվում է ապրանքն արտահանողի կամ արտադրողի կողմից տրամադրված տվյալների հիման վրա՝ պայմանով, որ այդ տվյալները համապատասխանում են արտահանող երրորդ երկրի հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության համընդհանուր սկզբունքներին ու կանոններին և լիովին արտացոլում են ապրանքի արտադրության ու վաճառքի հետ կապված ծախքերը:

60. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի է առնում իր տրամադրության տակ եղած՝ արտադրության, վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերը ճիշտ բաշխելու ապացույցները՝ ներառյալ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողի կամ արտադրողի կողմից տրամադրված տվյալները՝ պայմանով, որ ծախքերի այդպիսի բաշխումը սովորաբար կիրառվում է ապրանքի այդ արտահանողի կամ արտադրողի կողմից՝ մասնավորապես մաշվածության համապատասխան ժամանակահատվածը սահմանելու, կապիտալի ներդրումների գծով մասնահանումների և արտադրության զարգացմանն ուղղված այլ ծախքեր ծածկելու մասով:

61. Արտադրության, վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերը ճշգրտվում են՝ հաշվի առնելով արտադրության զարգացման հետ կապված մեկանգամյա ծախսերը, կամ այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում ուսումնասիրությունն անցկացնելու ընթացքում ծախքերի վրա ազդեցություն են թողնում արտադրությունը կազմակերպելու ժամանակահատվածում իրականացվող գործողությունները: Այդպիսի ճշգրտումները պետք է արտացոլեն ծախքերը՝ արտադրությունը կազմակերպելու ժամանակահատվածի ավարտի

դրությամբ, իսկ այն դեպքում, եթե արտադրությունը կազմակերպելու ժամանակահատվածը գերազանցում է ուսումնասիրության ժամանակահատվածը՝ արտադրությունը կազմակերպելու ամենավերջին փուլի դրությամբ, որի ընթացքում իրականացվել է ուսումնասիրությունը:

62. Վարչական, առևտրային և ընդհանուր ծախքերի ու շահույթի՝ տնտեսության տվյալ ճյուղի համար բնորոշ գումարային քանակական ցուցանիշները որոշվում են՝ հիմք ընդունելով առևտրի բնականոն ընթացքի պայմաններում նույնանման ապրանքի արտադրության և վաճառքի մասին փաստացի տվյալները, որոնք ներկայացվում են գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքն արտահանողի կամ արտադրողի կողմից: Եթե այդպիսի գումարային քանակական ցուցանիշները հնարավոր չէ որոշել նշված եղանակով, ապա դրանք կարող են որոշվել՝ հիմք ընդունելով՝

1) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողի կամ արտադրողի կողմից՝ միևնույն կատեգորիայի ապրանքի արտադրության և արտահանող երրորդ երկրի ներքին շուկայում դրա վաճառքի առնչությամբ ստացված և ծախսված փաստացի գումարները.

2) նույնանման ապրանքի արտադրության և արտահանող երրորդ երկրի ներքին շուկայում դրա վաճառքի առնչությամբ՝ նույնանման ապրանքի այլ արտահանողների կամ արտադրողների կողմից ստացված ու ծախսված փաստացի գումարների կշռված միջինը.

3) որևէ այլ մեթոդ՝ պայմանով, որ այդ կերպով սահմանված շահույթի գումարը չի գերազանցում միևնույն կատեգորիայի ապրանքի այլ արտահանողների կամ արտադրողների կողմից՝ արտահանող երրորդ երկրի ներքին շուկայում դրա վաճառքից սովորաբար ստացվող շահույթը:

63. Այն դեպքում, եթե գնագցող ներմուծումն իրականացվում է այն արտահանող երրորդ երկրից, որտեղ ներքին շուկայում գները կարգավորվում են անմիջապես պետության կողմից կամ առկա է արտաքին առևտրի պետական մենաշնորհ, ապա ապրանքի սովորական արժեքը կարող է որոշվել՝ հիմք ընդունելով համապատասխան երրորդ երկրում նույնանման ապրանքի գինը կամ հաշվարկված արժեքը (որն ուսումնասիրության նպատակով համեմատելի է նշված արտահանող երրորդ երկրի հետ) կամ նույնանման ապրանքի արտահանման գինը՝ այդ երրորդ երկրից դրա մատակարարման ժամանակ:

Այն դեպքում, եթե ապրանքի սովորական արժեքը հնարավոր չէ որոշել սույն կետին համապատասխան, ապա ապրանքի սովորական արժեքը կարող է որոշվել՝ հիմք ընդունելով Միության մաքսային տարածքում նույնանման ապրանքի համար վճարված կամ վճարման ենթակա և շահույթի հիման վրա ճշգրտված գինը:

4. Ապրանքի արտահանման գինը որոշելը

64. Ապրանքի արտահանման գինը որոշվում է դրա՝ ուսումնասիրության ընթացքում վաճառքի տվյալների հիման վրա:

65. Գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի արտահանման գնի մասին տվյալների բացակայության դեպքում, կամ եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հիմնավոր կասկածներ ունի այդ ապրանքի արտահանման գնի մասին տեղեկությունների արժանահավատության վերաբերյալ այն պատճառով, որ ապրանքն արտահանողը և ներմուծողը փոխկապակցված անձինք են (այդ թվում՝ երրորդ անձի հետ նրանցից յուրաքանչյուրի փոխկապակցվածության պատճառով) կամ եթե այդ ապրանքի արտահանման գնի մասով իրականացվում են սահմանափակող բնույթի գործողություններ՝ գաղտնի համաձայնության ձևով, ապա այդ ապրանքի արտահանման գինը կարող է հաշվարկվել՝ հիմք ընդունելով այն գինը, որով ներմուծված ապրանքն առաջին անգամ վերավաճառվում է անկախ գնորդի, կամ այլ եղանակով, որը կարող է որոշվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, եթե ներմուծված ապրանքը չի վերավաճառվում անկախ գնորդի կամ չի վերավաճառվում այն տեսքով, որով ներմուծվել է Միության մաքսային տարածք: Ընդ որում, ապրանքի արտահանման գինը դրա սովորական արժեքի հետ համադրելու նպատակով հաշվի են առնվում նաև ապրանքի ներմուծման և վերավաճառքի միջև ընկած ժամանակահատվածում կատարված ծախսերը (այդ թվում՝ վճարված մաքսատուրքերը և հարկերը), ինչպես նաև՝ շահույթը:

5. Գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը որոշելը

66. Սույն բաժնի նպատակներով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնաս ասելով՝ ենթադրվում է անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը, այդպիսի վնաս հասցնելու վտանգը կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցումը:

67. Գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը որոշվում է՝ հիմք ընդունելով գնագցող ներմուծման ծավալի վերլուծության արդյունքները և անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների և անդամ պետություններում նույնանման ապրանքն արտադրողների վրա այդ ներմուծման ազդեցությունը:

68. Ուսումնասիրության այն ժամանակահատվածը, որի ընթացքում վերլուծվում են տեղեկությունները՝ գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայությունը որոշելու նպատակով, սահմանվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից:

69. Գնագցող ներմուծման ծավալը վերլուծելիս ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ուսումնասիրություն առարկա հանդիսացող ապրանքի գնագցող ներմուծման ծավալի զգալի աճ (բացարձակ ցուցանիշներով կամ անդամ պետություններում նույնանման ապրանքի արտադրության կամ սպառման ծավալի հետ համեմատած):

70. Անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների վրա գնագցող ներմուծման ունեցած ազդեցությունը վերլուծելիս ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է՝

1) արդյոք գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի գներն էականորեն ցածր են եղել անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գներից.

2) արդյոք գնագցող ներմուծումը հանգեցրել է անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների էական նվազեցման.

3) արդյոք գնագցող ներմուծումն էականորեն խոչընդոտել է անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների աճը, որը տեղի կունենար այդպիսի ներմուծման բացակայության դեպքում:

71. Եթե միաժամանակ իրականացվող ուսումնասիրությունների առարկան Միության մաքսային տարածք ապրանքի ներմուծումն է մեկից ավելի արտահանող երրորդ երկրներից, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է գնահատել այդպիսի ներմուծման ընդհանուր ազդեցությունը միայն այն դեպքում, եթե որոշվում է, որ.

1) յուրաքանչյուր արտահանող երրորդ երկրից ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման համար սահմանված գնագցման չափը գերազանցում է նվազագույն թույլատրելի գնագցման չափը, իսկ այդ ապրանքի ներմուծման ծավալը յուրաքանչյուր արտահանող երրորդ երկրից աննշան չէ՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 223-րդ կետի դրույթները,

2) ապրանքի ներմուծման ընդհանուր ազդեցության գնահատումը հնարավոր է՝ ելնելով ներմուծվող ապրանքների միջև մրցակցության պայմաններից, ինչպես նաև ներմուծվող ապրանքի և անդամ պետություններում արտադրված նույնանման ապրանքի միջև մրցակցության պայմաններից:

72. Անդամ պետությունների տնտեսության ճյուղի վրա գնագցող ներմուծման ունեցած ազդեցության վերլուծությունը անդամ պետությունների տնտեսության ճյուղի վիճակի հետ կապված բոլոր տնտեսական գործոնների գնահատումն է՝ ներառյալ.

անդամ պետությունների տնտեսության ճյուղի տնտեսական դրությունը վերականգնելու մակարդակը՝ դրա վրա նախկինում իրականացված գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման ունեցած ազդեցությունից հետո.

ապրանքի արտադրության, վաճառքի, անդամ պետությունների շուկայում դրա մասնաբաժնի, շահույթի, արտադրողականության, ներգրավված ներդրումներից կամ արտադրական հզորությունների օգտագործումից ստացված եկամտի՝ տեղի ունեցած կամ հետագայում հնարավոր կրճատումը.

անդամ պետությունների շուկայում ապրանքի գների վրա ազդող գործոնները.

գնագցման չափը.

ապրանքի արտադրության աճի տեմպերի, ապրանքի պաշարների, զբաղվածության մակարդակի, աշխատավարձի, ներդրումներ ներգրավելու հնարավորության և ֆինանսական դրության վրա տեղի ունեցած կամ հետագայում հնարավոր բացասական ազդեցությունը:

Ընդ որում, այս գործոններից ոչ մեկը, ոչ մի քանիսը չեն կարող վճռորոշ նշանակություն ունենալ գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը որոշելու համար:

73. Անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի և գնագցող ներմուծման միջև պատճառահետևանքային կապի առկայության մասին եզրակացությունը պետք է հիմնված լինի ուսումնասիրություն իրականացնող մարմնի տրամադրության տակ եղած՝ գործին վերաբերող բոլոր ապացույցների և տեղեկությունների վերլուծության վրա:

74. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, գնագցող ներմուծումից բացի, վերլուծում է նաև հայտնի այլ գործոններ, որոնց հետևանքով միևնույն ժամանակահատվածում անդամ պետությունների տնտեսության ճյուղին վնաս է հասցվում:

Այն գործոնները, որոնք դիտարկվում են որպես գործին առնչվող գործոններ, ներառում են, մասնավորապես, գնագցման գներով չվաճառված ներմուծվող ապրանքի ծավալն ու գները, պահանջարկի կրճատումը կամ սպառման կառուցվածքի փոփոխությունը, առևտրի ոլորտում սահմանափակող գործողությունները, տեխնոլոգիական նվաճումները, ինչպես նաև անդամ պետությունների տնտեսության ճյուղի արտադրողականությունը և արտահանման ցուցանիշները:

Այս գործոնների հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը չպետք է համարվի Միության մաքսային տարածք գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնաս:

75. Անդամ պետությունների տնտեսության ճյուղի վրա գնագցող ներմուծման ունեցած ազդեցությունը գնահատվում է անդամ պետություններում նույնանման ապրանքի արտադրության մասով, եթե առկա տվյալներով հնարավոր է առանձին հատկորոշել նույնանման ապրանքի արտադրությունն այնպիսի չափորոշիչների հիման վրա, ինչպիսիք են արտադրական գործընթացը, նույնանման ապրանքի վաճառքը՝ դրա արտադրողների կողմից և շահույթը:

Եթե առկա տվյալներով հնարավոր չէ առանձին հատկորոշել նույնանման ապրանքի արտադրությունը, ապա գնագցող ներմուծման ունեցած ազդեցությունը անդամ պետությունների տնտեսության ճյուղի վրա գնահատվում է ապրանքների հնարավոր այն ամենանեղ խմբի արտադրության կամ անվանացանկի մասով, որոնք ներառում են նույնանման ապրանքը և որոնց մասին առկա են անհրաժեշտ տվյալներ:

76. Գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայությունը որոշելու դեպքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի է առնում բոլոր առկա գործոնները, այդ թվում՝

1) գնագցող ներմուծման ծավալի աճի տեմպերը, որոնք վկայում են այդ ներմուծման ծավալի հետագա աճի իրական հնարավորության մասին.

2) գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի արտահանման համար արտահանողի ունեցած բավարար հնարավորությունները կամ դրանց ընդլայնման ակնհայտ անխուսափելիությունը, որոնք վկայում են տվյալ ապրանքի գնագցող ներմուծման ծավալի աճի իրական հնարավորության մասին՝ հաշվի առնելով այլ արտահանման շուկաների՝ տվյալ ապրանքի արտահանման ցանկացած հավելյալ ծավալ ընդունելու հնարավորությունը.

3) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գների մակարդակը, եթե գների այդ մակարդակը կարող է հանգեցնել անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների նվազմանը կամ զսպմանը և ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի պահանջարկի հետագա աճին.

4) արտահանողի մոտ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի պաշարների առկայությունը:

77. Անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության մասին որոշումն ընդունվում է այն դեպքում, եթե սույն Արձանագրության 76-րդ կետում նշված գործոնների վերլուծության արդյունքներով իրականացված ուսումնասիրության

ընթացքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգել է այն եզրակացության, որ գնագցող ներմուծումն անխուսափելիորեն շարունակվելու է, և հակագնագցման միջոց չկիրառելու դեպքում այդ ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելն անխուսափելի կլինի:

6. Նախնական հակագնագցման տուրքի սահմանումը

78. Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից նախքան ուսումնասիրության ավարտն ստացված տեղեկությունները վկայում են գնագցող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին, ապա սույն Արձանագրության 7-րդ կետում նշված զեկույցի հիման վրա Հանձնաժողովն ընդունում է որոշում նախնական հակագնագցման տուրք սահմանելու միջոցով հակագնագցման միջոցի կիրառման մասին՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին՝ ուսումնասիրությունն անցկացնելու ընթացքում գնագցող ներմուծման հետևանքով հասցվող վնասը կանխելու նպատակով:

79. Նախնական հակագնագցման տուրքը չի կարող սահմանվել ուսումնասիրությունն սկսելու ամսաթվից հետո 60 օրացուցային օրվանից շուտ:

80. Նախնական հակագնագցման տուրքի դրույքաչափը պետք է բավարար լինի անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար, սակայն չպետք է գերազանցի նախապես հաշվարկված գնագցման չափը:

81. Այն դեպքում, եթե նախնական հակագնագցման տուրքի դրույքաչափը հավասար է նախապես հաշվարկված գնագցման չափին, ապա նախնական հակագնագցման տուրքի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 4 ամիսը՝ բացառությամբ այն դեպքի, եթե այդ ժամկետը երկարաձգվում է մինչև 6 ամսով այն արտահանողների խնդրանքով, որոնց մասնաբաժինն ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գնագցող ներմուծման ծավալի մեծ մասն է կազմում:

82. Այն դեպքում, եթե նախնական հակագնագցման տուրքի դրույքաչափը փոքր է նախապես հաշվարկված գնագցման չափից, ապա նախնական հակագնագցման տուրքի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 6 ամիսը՝ բացառությամբ այն դեպքի, եթե այդ ժամկետը երկարաձգվում է մինչև 9 ամսով այն արտահանողների խնդրանքով, որոնց մասնաբաժինն ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գնագցող ներմուծման ծավալի մեծ մասն է կազմում:

83. Այն դեպքում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի ուսումնասիրության արդյունքներով որոշվել է, որ հակագնագցման միջոց սահմանելու հիմքերը բացակայում են կամ սույն Արձանագրության 272-րդ կետին համապատասխան հակագնագցման միջոց չկիրառելու մասին որոշում է կայացվել, ապա նախնական հակագնագցման տուրքի գումարները ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ժամանակին տեղեկացնում է անդամ պետությունների մաքսային մարմիններին հակագնագցման միջոց սահմանելու հիմքերի բացակայության կամ հակագնագցման միջոց չկիրառելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու վերաբերյալ:

84. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման հիման վրա ընդունված է հակագնագցման միջոցի կիրառման մասին որոշում, ապա նախնական հակագնագցման տուրքի գումարները ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

85. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այն հասցնելու վտանգի առկայության հիման վրա ընդունված է հակագնագցման միջոցի կիրառման մասին որոշում (պայմանով, որ նախնական հակագնագցման տուրք չսահմանելը կհանգեցներ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի առկայությունը որոշելուն), ապա նախնական հակագնագցման տուրքի գումարները, սկսած հակագնագցման միջոցը կիրառելու մասին

որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից, ենթակա են հաշվեգրման և բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 86-րդ և 87-րդ կետերի դրույթները:

86. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվում սահմանել հակագնազցման տուրքի՝ նախնական հակագնազցման տուրքի դրույքաչափից ավելի ցածր դրույքաչափ, ապա նախնական գնագցման տուրքի գումարները, որոնք համապատասխանում են հակագնազցման տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված հակագնազցման տուրքի գումարին, ենթակա են հաշվեգրման և բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

Նախնական հակագնազցման տուրքի գումարները, որոնք գերազանցում են հակագնազցման տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված հակագնազցման տուրքի գումարը, պետք է վերադարձվեն վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

87. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվում սահմանել հակագնազցման տուրքի՝ նախնական հակագնազցման տուրքի դրույքաչափից ավելի բարձր դրույքաչափ, ապա հակագնազցման տուրքի և նախնական հակագնազցման տուրքի գումարների միջև տարբերությունը չի գանձվում:

88. Նախնական հակագնազցման տուրքը կիրառվում է՝ ուսումնասիրությունը միաժամանակ շարունակելու պայմանով:

89. Նախնական հակագնազցման տուրք սահմանելու մասին որոշումն ընդունվում է, որպես կանոն, ուսումնասիրությունն սկսելու ամսաթվից հետո 7 ամսից ոչ ուշ:

7. Ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողի կողմից գնային պարտավորությունների ստանձնումը

90. Ուսումնասիրությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ առանց նախնական հակագնազցման տուրք կամ հակագնազցման տուրք սահմանելու, այն դեպքում, եթե նշված մարմինն ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողից ստանում է գնային պարտավորություններ ստանձնելու մասին գրավոր տեղեկություններ՝ այդ ապրանքի գները վերանայելու կամ Միության մաքսային տարածք այդ ապրանքի՝ դրա սովորական արժեքից ցածր գներով արտահանումը դադարեցնելու առումով (անդամ պետություններում արտահանողի հետ փոխկապակցված անձանց առկայության դեպքում անհրաժեշտ է նաև այդ անձանց՝ այդպիսի պարտավորություններին կողմ լինելու մասին հայտարարությունները), եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգի այն եզրակացության, որ նշված պարտավորություններն ստանձնելու արդյունքում կվերանա գնագցող ներմուծման հետևանքով հասցված վնասը, և Հանձնաժողովը դրանք հավանության արժանացնելու մասին որոշում ընդունի:

Այս պարտավորությունների համաձայն՝ ապրանքի գների մակարդակը պետք է չլինի ավելի բարձր, քան անհրաժեշտ է՝ գնագցման չափը վերացնելու համար:

Ապրանքի գնի բարձրացումը կարող է գնագցման չափից ավելի պակաս լինել, եթե այդ բարձրացումը բավարար է անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

91. Գնային պարտավորությունները հավանության արժանացնելու մասին որոշումը Հանձնաժողովը չի ընդունում այնքան ժամանակ, քանի դեռ ուսումնասիրություն իրականացնող մարմինը չի հանգում գնագցող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին նախնական եզրակացությանը:

92. Գնային պարտավորությունները հավանության արժանացնելու մասին որոշումը Հանձնաժողովը չի ընդունում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է այն եզրակացության, որ դրանք հավանության արժանացնելն անընդունելի է՝ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մեծ թվով իրական կամ հավանական արտահանողների առկայության կամ այլ պատճառներով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, հնարավորության դեպքում, արտահանողներին հայտնում է այն պատճառների մասին, որոնց հիման վրա նրանց գնային պարտավորությունները հավանության արժանացնելը համարվել է անընդունելի, և նրանց ընձեռում է դրա հետ կապված մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն:

93. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը դրանց ոչ գաղտնի տարբերակը տրամադրելու մասին հարցում է ուղարկում գնային պարտավորություններն ստանձնած յուրաքանչյուր արտահանողի, որպեսզի այն շահագրգիռ անձանց տրամադրելու հնարավորություն ունենա:

94. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է առաջարկել արտահանողներին ստանձնել գնային պարտավորություններ, սակայն չի կարող պահանջել դրանց ստանձնումը:

95. Գնային պարտավորությունները հավանության արժանացնելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում ընդունելու դեպքում հակագնագցման ուսումնասիրությունը կարող է շարունակվել ապրանքն արտահանողի խնդրանքով կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի որոշմամբ:

Եթե ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է գնագցող ներմուծման կամ դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնելու բացակայության մասին եզրակացությանը, ապա գնային պարտավորություններ ստանձնած արտահանողն ինքնաբերաբար ազատվում է այդպիսի պարտավորություններից՝ բացառությամբ այն դեպքի, երբ նշված եզրակացությունը գլխավորապես այդպիսի պարտավորությունների առկայության արդյունք է: Այն դեպքում, եթե արված եզրակացությունը գլխավորապես գնային պարտավորությունների առկայության արդյունք է, ապա Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել այն մասին, որ այդպիսի պարտավորությունները պետք է ուժի մեջ մնան անհրաժեշտ ժամկետով:

96. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է գնագցող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին եզրակացությանը, ապա արտահանողի կողմից ստանձնած գնային պարտավորությունները շարունակում են գործել՝ դրանց պայմանների և սույն Արձանագրության դրույթներին համապատասխան:

97. Ուսումնասիրություն իրականացնող մարմինն իրավունք ունի այն արտահանողին, որի գնային պարտավորությունները հավանության են արժանացել Հանձնաժողովի կողմից, դիմելու դրանց կատարմանը վերաբերող տեղեկություններ տրամադրելու, ինչպես նաև այդ տեղեկություններն ստուգելու համար նրա համաձայնությունն ստանալու հարցմամբ:

Ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից սահմանված ժամկետում պահանջվող տեղեկությունները չներկայացնելը, ինչպես նաև այդ տեղեկություններն ստուգելու համար համաձայնություն չտալը համարվում են արտահանողի կողմից ստանձնած գնային պարտավորությունների խախտում:

98. Եթե արտահանողը խախտում կամ չեղարկում է գնային պարտավորությունները, ապա Հանձնաժողովը կարող է հակագնագցման միջոցի կիրառման մասին որոշում ընդունել՝ նախնական հակագնագցման տուրք սահմանելու միջոցով (եթե ուսումնասիրությունը դեռ չի ավարտվել) կամ հակագնագցման տուրք սահմանելու միջոցով (եթե ուսումնասիրության վերջնական արդյունքները վկայում են դա սահմանելու հիմքերի առկայության մասին):

Ստանձնած գնային պարտավորություններն արտահանողի կողմից խախտելու դեպքում վերջինիս տրվում է այդ խախտման հետ կապված մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն:

99. Գնային պարտավորությունները հավանության արժանացնելու մասին Հանձնաժողովի որոշման մեջ պետք է սահմանված լինի նախնական հակագնագցման տուրքի կամ հակագնագցման տուրքի դրույքաչափը, որը կարող է սահմանվել՝ սույն Արձանագրության 98-րդ կետին համապատասխան:

8. Հակագնագցման տուրքի սահմանումը և կիրառումը

100. Հակագնագցման տուրքը կիրառվում է բոլոր արտահանողների կողմից մատակարարվող և անդամ պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնող՝ գնագցող

ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի նկատմամբ (բացառությամբ ապրանքի, որը մատակարարվում է այն արտահանողների կողմից, որոնց գնային պարտավորությունները հավանության են արժանացել Հանձնաժողովի կողմից՝ սույն Արձանագրության 90-99-րդ կետերին համապատասխան):

101. Հակագնագցման տուրքի չափը պետք է բավարար լինի՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար, սակայն չպետք է գերազանցի հաշվարկված գնագցման չափը:

Հանձնաժողովը կարող է հաշվարկված գնագցման չափից ավելի փոքր չափով հակագնագցման տուրք սահմանելու մասին որոշում ընդունել այն դեպքում, եթե այդ չափը բավարար է անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

102. Հանձնաժողովը սահմանում է հակագնագցման տուրքի առանձին դրույքաչափ այն ապրանքի համար, որը մատակարարվում է գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի յուրաքանչյուր այն արտահանողի կամ արտադրողի կողմից, որի համար հաշվարկվել է գնագցման առանձին չափ:

103. Բացի սույն Արձանագրության 102-րդ կետում նշված հակագնագցման տուրքի առանձին դրույքաչափից՝ Հանձնաժողովն ուսումնասիրության ընթացքում հաշվարկված ամենաբարձր գնագցման չափի հիման վրա սահմանում է հակագնագցման տուրքի միասնական դրույքաչափ այն ապրանքի համար, որը մատակարարվում է արտահանող երրորդ երկրից մյուս բոլոր այն արտահանողների կամ արտադրողների կողմից, որոնց համար գնագցման առանձին չափ չի հաշվարկվել:

104. Հակագնագցման տուրքը կարող է կիրառվել նախնական հակագնագցման տուրք սահմանելու ամսաթվից ոչ շուտ, քան 90 օր առաջ մաքսային այնպիսի ընթացակարգերով ձևակերպված ապրանքների նկատմամբ, որոնցով ձևակերպելու պայման է համարվում հակագնագցման տուրքերի վճարումը, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի ուսումնասիրության արդյունքներով այդ ապրանքի մասով միաժամանակ հաստատվել է, որ՝

1) նախկինում իրականացվել է գնագցող ներմուծում, որը վնաս է հասցրել, կամ ներմուծողը իմացել է կամ պետք է իմանար, որ արտահանողն ապրանքը մատակարարում է դրա սովորական գնից ավելի ցածր գնով, և որ ապրանքի այդպիսի ներմուծումը կարող է վնաս հասցնել անդամ պետությունների տնտեսության ճյուղին.

2) անդամ պետությունների տնտեսության ճյուղին վնասը հասցվել է գլխավորապես գնագցող ներմուծման ավելացած ծավալի հետևանքով համեմատաբար կարճ ժամանակահատվածի ընթացքում, որը, հաշվի առնելով տևողությունն ու ծավալները, ինչպես նաև այլ հանգամանքներ (այդ թվում՝ ներմուծվող ապրանքի պահուստային պաշարների արագ աճը), կարող է էապես նվազեցնել հակագնագցման տուրքի սահմանման վերականգնողական ազդեցությունը՝ պայմանով, որ տվյալ ապրանքի ներմուծողներին մինչև ուսումնասիրության ավարտն ընձեռվել է մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն:

105. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ուսումնասիրությունն սկսելուց ամսաթվից հետո Պայմանագրով նախատեսված պաշտոնական աղբյուրներում հրապարակում է ծանուցում, որը պարունակում է նախազգուշացում՝ ուսումնասիրության առարկան հանդիսացող ապրանքի նկատմամբ սույն Արձանագրության 104-րդ կետին համապատասխան հակագնագցման տուրքի հնարավոր կիրառման մասին:

Այդ ծանուցումը հրապարակելու մասին որոշումն ընդունվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից անդամ պետությունների տնտեսության ճյուղի մասով՝ սույն Արձանագրության 104-րդ կետում նշված պայմանները կատարելու վերաբերյալ բավարար ապացույցներ պարունակող հարցման հիման վրա, կամ սեփական նախաձեռնությամբ՝ ուսումնասիրություն իրականացնող մարմնի տրամադրության տակ այդպիսի ապացույցների առկայության դեպքում:

Հակագնագցման տուրք չի կարող կիրառվել մինչև սույն կետում նշված ծանուցման պաշտոնական հրապարակման ամսաթիվը՝ մաքսային այնպիսի ընթացակարգերով ձևակերպված ապրանքների նկատմամբ, որոնցով ձևակերպելու պայման է համարվում հակագնագցման տուրքերի վճարումը:

106. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն Արձանագրության 104-րդ կետին համապատասխան հակագնագցման տուրքի հնարավոր կիրառման մասին շահագրգիռ անձանց ծանուցելու լրացուցիչ եղանակներ:

9. Հակագնագցման միջոցի գործողության ժամկետը և դրա վերանայումը

107. Հակագնագցման միջոցը կիրառվում է Հանձնաժողովի որոշմամբ այնպիսի չափով և ժամկետով, որոնք անհրաժեշտ են գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

108. Հակագնագցման միջոցի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 5 տարին՝ այդ միջոցի կիրառումն սկսելու ամսաթվից կամ կրկնակի ուսումնասիրությունն ավարտելու ամսաթվից սկսած, որն անցկացվել է փոփոխված հանգամանքների պատճառով և, միաժամանակ, վերաբերել է գնագցող ներմուծման և դրա հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի վերլուծությանը, կամ որն անցկացվել է հակագնագցման միջոցի գործողության ժամկետը լրանալու պատճառով:

109. Հակագնագցման միջոցի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է սույն Արձանագրության 186-198-րդ կետերին համապատասխան ներկայացված գրավոր դիմումի հիման վրա կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի սեփական նախաձեռնությամբ:

Հակագնագցման միջոցի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է այն դեպքում, եթե դիմումի մեջ առկա են տեղեկություններ այն մասին, որ գնագցող ներմուծումը հնարավոր է՝ վերսկսվի կամ շարունակվի, և հակագնագցման միջոցի գործողությունը դադարեցնելու դեպքում հնարավոր է՝ վնաս հասցվի անդամ պետությունների տնտեսության ճյուղին:

Հակագնագցման միջոցի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումը ներկայացվում է ոչ ուշ, քան հակագնագցման միջոցի գործողության ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ:

Կրկնակի ուսումնասիրությունը պետք է սկսվի նախքան հակագնագցման միջոցի գործողության ժամկետը լրանալը և ավարտվի դրա սկսելու ամսաթվից սկսած 12 ամսվա ընթացքում:

Նախքան սույն կետին համապատասխան անցկացվող կրկնակի ուսումնասիրության ավարտը՝ հակագնագցման միջոցի կիրառումը երկարաձգվում է Հանձնաժողովի որոշմամբ: Այն ժամկետի ընթացքում, որով երկարաձգվում է համապատասխան հակագնագցման միջոցի կիրառումը, նախնական հակագնագցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով վճարվում են հակագնագցման տուրքեր՝ հակագնագցման տուրքերի այնպիսի դրույքաչափերով, որոնք սահմանվել են այն հակագնագցման միջոցը կիրառելու մասով, որի գործողության ժամկետը կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու հետ կապված երկարաձգվում է:

Այն դեպքում, եթե հակագնագցման միջոցի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է, որ հակագնագցման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են, կամ սույն Արձանագրության 272-րդ կետին համապատասխան՝ կայացվել է հակագնագցման միջոցը չկիրառելու մասին որոշում, ապա նախնական հակագնագցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով գանձվող հակագնագցման տուրքի գումարները հակագնագցման միջոցի կիրառումը երկարաձգելու ժամկետի ընթացքում ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ժամանակին տեղեկացնում է անդամ պետությունների մաքսային մարմիններին հակագնագցման միջոց կիրառելու հիմքերի բացակայության կամ հակագնագցման միջոց չկիրառելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու վերաբերյալ:

Հակագնագցման միջոցի գործողությունը երկարաձգվում է Հանձնաժողովի կողմից այն դեպքում, եթե հակագնագցման միջոցի գործողության ժամկետը լրանալու հետ կապված անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշի, որ առկա է գնագցող ներմուծումը վերսկսելու կամ շարունակելու և անդամ

պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնելու հավանականություն: Հակագնագցման միջոցը երկարածգելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած նախնական հակագնագցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով գանձվող հակագնագցման տուրքի գումարները հակագնագցման միջոցի կիրառումը երկարածգելու ժամկետի ընթացքում ենթակա են հաշվեգրման և բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

110. Շահագրգիռ անձի դիմումի հիման վրա այն դեպքում, եթե հակագնագցման միջոց սահմանելուց հետո անցել է առնվազն 1 տարի, կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կարող է անցկացվել կրկնակի ուսումնասիրություն՝ փոփոխված հանգամանքների կապակցությամբ հակագնագցման միջոցի կիրառումը շարունակելու և (կամ) դա վերանայելու նպատակահարմարությունը որոշելու համար (այդ թվում՝ հակագնագցման տուրքի առանձին դրույքաչափը վերանայելը):

Կախված կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումը ներկայացնելու նպատակներից՝ այդպիսի դիմումը պետք է պարունակի ապացույցներ այն մասին, որ փոփոխված հանգամանքների կապակցությամբ՝

չի պահանջվում շարունակել հակագնագցման միջոցի կիրառումը՝ գնագցող ներմուծմանը հակազդելու և գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու նպատակով.

հակագնագցման միջոցի գոյություն ունեցող չափը գերազանցում է այն չափը, որը բավարար է՝ գնագցող ներմուծմանը հակազդելու և գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար.

գոյություն ունեցող հակագնագցման միջոցը բավարար չէ՝ գնագցող ներմուծմանը հակազդելու և գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

Սույն կետին համապատասխան անցկացվող կրկնակի ուսումնասիրությունը պետք է ավարտվի այն սկսելու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

111. Կրկնակի ուսումնասիրությունը կարող է նաև անցկացվել այն արտահանողի կամ արտադրողի համար առանձին գնագցման չափ սահմանելու նպատակով, որը ուսումնասիրության ընթացքում չէր իրականացնում գնագցող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի մատակարարում: Այդպիսի կրկնակի ուսումնասիրությունը կարող է սկսվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից այն դեպքում, եթե նշված արտահանողը կամ արտադրողը այն անցկացնելու մասին դիմում է ներկայացրել, որը պարունակում է ապացույցներ այն մասին, որ ապրանքն արտահանողը կամ արտադրողը փոխկապակցված չէ այն արտահանողների և արտադրողների հետ, որոնց նկատմամբ կիրառվում է հակագնագցման միջոցը, և որ այդ արտահանողը կամ արտադրողն իրականացնում է ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մատակարարում Միության մաքսային տարածք կամ ունի Միության մաքսային տարածք այդպիսի ապրանքի զգալի ծավալներ մատակարարելու պայմանագրային պարտավորություններ, որոնց դադարեցումը կամ չեղյալ հայտարարումը ապրանքի այդպիսի արտահանողի կամ արտադրողի համար կառաջացնի զգալի վնասներ կամ էական տուգանքային պատժամիջոցներ:

Կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու ընթացքում Միության մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մատակարարման նկատմամբ արտահանողի կամ արտադրողի համար գնագցման առանձին չափ սահմանելու նպատակով այդ արտահանողի կամ արտադրողի կողմից հակագնագցման տուրք չի վճարվում՝ մինչև նշված կրկնակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա որոշում կայացնելը: Ընդ որում, կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու ընթացքում Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) այդ ապրանքի համար տրամադրվում է հակագնագցման տուրքի վճարման ապահովում Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքով նախատեսված կարգով՝ ներմուծման մաքսատուրքերի ապահովման նպատակով՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված առանձնահատկությունները:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ժամանակին տեղեկացնում է անդամ պետությունների մաքսային մարմիններին կրկնակի ուսումնասիրությունն սկսելու ամսաթվի վերաբերյալ:

Հակագնագցման տուրքի վճարման ապահովումը տրամադրվում է դրամական միջոցներով (դրամական գումարներով)՝ հակագնագցման տուրքի գումարի չափով, որը հաշվարկվում է սույն Արձանագրության 103-րդ կետին համապատասխան սահմանված հակագնագցման տուրքի միասնական դրույքաչափով:

Այն դեպքում, եթե կրկնակի ուսումնասիրության արդյունքներով կայացվել է հակագնագցման միջոց կիրառելու վերաբերյալ որոշում, ապա հակագնագցման տուրքը այդ կրկնակի ուսումնասիրությունն անցկացնելու ժամանակահատվածի ընթացքում ենթակա է վճարման: Կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ընդունված՝ հակագնագցման միջոցի կիրառման մասին որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած ապահովման գումարը ենթակա է հաշվանցման հակագնագցման տուրքի վճարման դիմաց՝ հակագնագցման տուրքի սահմանված դրույքաչափի համաձայն որոշված չափով, և հաշվեգրման ու բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն կետի դրույթները:

Այն դեպքում, եթե կրկնակի ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվում սահմանել հակագնագցման տուրքի ավելի բարձր դրույքաչափ, քան այն դրույքաչափը, որի համաձայն որոշվել է հակագնագցման տուրքի վճարումն ապահովելու չափը, ապա հակագնագցման տուրքի այն գումարների միջև տարբերությունը, որոնք հաշվարկվել են կրկնակի ուսումնասիրության արդյունքներով սահմանված դրույքաչափով և հակագնագցման տուրքի միասնական դրույքաչափով, չի գանձվում:

Հակագնագցման տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված հակագնագցման տուրքի գումարը գերազանցող ապահովման գումարը ենթակա է վերադարձման վճարողին՝ Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքով նախատեսված կարգով:

Սույն կետով նախատեսված կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է հնարավորինս կարճ ժամկետում, որը չի կարող գերազանցել 12 ամիսը:

112. Ապացույցներ ներկայացնելուն և հակագնագցման ուսումնասիրություն անցկացնելուն վերաբերող՝ սույն Արձանագրության VI բաժնի դրույթները կիրառվում են սույն Արձանագրության 107-113-րդ կետերով նախատեսված կրկնակի ուսումնասիրությունների նկատմամբ՝ հաշվի առնելով համապատասխան տարբերությունները:

113. Սույն Արձանագրության 107-112-րդ կետերի դրույթները կիրառվում են արտահանողի կողմից սույն Արձանագրության 90-99-րդ կետերին համապատասխան ստանձնած պարտավորությունների նկատմամբ՝ հաշվի առնելով համապատասխան տարբերությունները:

10. Հակագնագցման միջոցի շրջանցումը որոշելը

114. Սույն բաժնի նպատակներով հակագնագցման միջոցի շրջանցում ասելով՝ ենթադրվում է ապրանքի մատակարարման եղանակի փոփոխումը՝ հակագնագցման տուրք վճարելուց կամ արտահանողի կողմից ստանձնած գնային պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակով:

115. Հակագնագցման միջոցի շրջանցումը որոշելու նպատակով կրկնակի ուսումնասիրությունը կարող է սկսվել շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի սեփական նախաձեռնությամբ:

116. Սույն Արձանագրության 115-րդ կետում նշված դիմումը պետք է պարունակի հետևյալ ապացույցները՝

1) հակագնագցման միջոցի շրջանցում.

2) հակագնագցման միջոցի ազդեցության չեզոքացում՝ դա շրջանցելու հետևանքով և այդ գործոնի ազդեցությունը նույնանման ապրանքի արտադրության և (կամ) վաճառքի ծավալների և (կամ) անդամ պետությունների շուկայում դրա գների վրա.

3) հակագնագցման միջոցի շրջանցման հետևանքով ապրանքի (այդ ապրանքի բաղկացուցիչ մասերի և (կամ) ածանցյալների) գնագցող ներմուծման առկայություն: Ընդ որում, որպես ապրանքի, դրա բաղկացուցիչ մասերի կամ ածանցյալների սովորական արժեք ընդունվում է դրանց՝ այն ուսումնասիրության ընթացքում որոշված սովորական արժեքը, որի արդյունքներով Հանձնաժողովը սահմանել է հակագնագցման միջոց՝ հաշվի առնելով համադրման նպատակով կատարված համապատասխան ճշգրտումները:

117. Հակագնագցման միջոցի շրջանցումը որոշելու նպատակով կրկնակի ուսումնասիրությունը պետք է ավարտվի՝ այն սկսվելու ամսաթվից հետո 9 ամսվա ընթացքում:

118. Սույն Արձանագրության 115-120-րդ կետերին համապատասխան անցկացվող կրկնակի ուսումնասիրության ժամանակահատվածի համար Հանձնաժողովը կարող է նախնական հակագնագցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով գանձվող հակագնագցման տուրք սահմանել գնագցող ներմուծման առարկա եղած ապրանքի այն բաղկացուցիչ մասերի և (կամ) ածանցյալների համար, որոնք Միության մաքսային տարածք են ներմուծվում արտահանող երրորդ երկրից, ինչպես նաև գնագցող ներմուծման առարկա եղած ապրանքի և (կամ) դրա բաղկացուցիչ մասերի և (կամ) ածանցյալների համար, որոնք Միության մաքսային տարածք են ներմուծվում այլ արտահանող երրորդ երկրից:

119. Այն դեպքում, եթե սույն Արձանագրության 115-120-րդ կետերին համապատասխան անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը չի որոշում, որ հակագնագցման միջոցը շրջանցվել է, ապա հակագնագցման տուրքի գումարները, որոնք վճարվել են սույն Արձանագրության 118-րդ կետին համապատասխան և նախնական հակագնագցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով, ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ժամանակին տեղեկացնում է անդամ պետությունների մաքսային մարմիններին այն մասին, որ հակագնագցման միջոցը չի շրջանցվել:

120. Այն դեպքում, եթե սույն Արձանագրության 115-120-րդ կետերին համապատասխան անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ հակագնագցման միջոցը շրջանցվել է, ապա հակագնագցման միջոցը Հանձնաժողովի կողմից կարող է տարածվել գնագցող ներմուծման առարկա եղած ապրանքի այն բաղկացուցիչ մասերի և (կամ) ածանցյալների վրա, որոնք Միության մաքսային տարածք են ներմուծվում արտահանող երրորդ երկրից, ինչպես նաև գնագցող ներմուծման առարկա եղած ապրանքի և (կամ) դրա բաղկացուցիչ մասերի և (կամ) ածանցյալների վրա, որոնք Միության մաքսային տարածք են ներմուծվում այլ արտահանող երրորդ երկրից: Սույն կետում նշված հակագնագցման միջոց սահմանելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած նախնական հակագնագցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով վճարված հակագնագցման տուրքերի գումարները ենթակա են հաշվեգրման և բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

V. Փոխհատուցման միջոցները

121. Սույն Արձանագրության մեջ սուբսիդիա ասելով ենթադրվում է՝

1) սուբսիդավորող մարմնի կողմից իրականացված ֆինանսական օժանդակությունը, որը սուբսիդիա ստացողին տալիս է լրացուցիչ առավելություններ, և որը ցուցաբերվում է արտահանող երրորդ երկրի տարածքում, այդ թվում՝ հետևյալ ձևերով՝

դրամական միջոցների ուղղակի փոխանցման (այդ թվում՝ դոտացիաների, փոխառությունների և բաժնետոմսերի գնման տեսքով) կամ այդպիսի միջոցներ փոխանցելու պարտավորությունների ձևով (այդ թվում՝ փոխառությունների դիմաց տրված երաշխիքների տեսքով),

միջոցներ դուրս գրելու կամ այն միջոցների գանձումից լրիվ կամ մասնակիորեն հրաժարվելու ձևով, որոնք պետք է մուտքագրվեին արտահանող երրորդ երկրի եկամուտների մասով (այդ թվում՝ հարկային վարկերի տրամադրման միջոցով)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արտահանվող ապրանքն ազատվում է ներքին սպառման համար նախատեսված նույնանման ապրանքի համար գանձվող հարկերից կամ տուրքերից, կամ այդ հարկերի կամ տուրքերի՝ փաստացի վճարված գումարները չգերազանցող չափով նվազեցման կամ վերադարձման դեպքերի,

ապրանքները կամ ծառայությունները արտոնյալ պայմաններով կամ անհատույց տրամադրելու ձևով՝ բացառությամբ այն ապրանքների կամ ծառայությունների, որոնք նախատեսված են ընդհանուր ենթակառուցվածքի պահպանման և զարգացման համար, այսինքն՝ այն ենթակառուցվածքի, որը կապված չէ կոնկրետ արտադրողի և (կամ) արտահանողի հետ,

ապրանքներն արտոնյալ պայմաններով ձեռքբերելու ձևով.

2) ցանկացած ձևով արտահայտված եկամտային կամ գնային օժանդակություն, որը սուբսիդիա ստացողին տալիս է լրացուցիչ առավելություններ, որոնց արդյունքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղի է ունենում արտահանող երրորդ երկրից ապրանքի արտահանման ծավալի ավելացում կամ այդ երրորդ երկիր նույնանման ապրանքի ներմուծման ծավալի կրճատում:

1. Արտահանող երրորդ երկրի սուբսիդիան հատուկ սուբսիդիա համարելու սկզբունքները

122. Արտահանող երրորդ երկրի սուբսիդիան համարվում է հատուկ սուբսիդիա, եթե սուբսիդավորող մարմնի կողմից կամ արտահանող երրորդ երկրի օրենսդրությամբ սուբսիդիայի թույլատրելիությունը միայն հատկորոշված կազմակերպությունների համար է:

123. Սույն բաժնում հատկորոշված կազմակերպություններ ասելով՝ ենթադրվում է կոնկրետ արտադրողը և (կամ) արտահանողը, կամ արտահանող երրորդ երկրի տնտեսության կոնկրետ ճյուղը, կամ արտադրողների և (կամ) արտահանողների կամ արտահանող երրորդ երկրի տնտեսության ճյուղերի խումբը (միությունը, միավորումը):

124. Սուբսիդիան համարվում է հատուկ, եթե այդ սուբսիդիայի թույլատրելիությունը սուբսիդավորող մարմնի իրավասությանը ենթակա որոշակի աշխարհագրական տարածքում գտնվող սահմանափակ թվով հատկորոշված կազմակերպությունների համար է:

125. Սուբսիդիան չի համարվում հատուկ, եթե արտահանող երրորդ երկրի օրենսդրությամբ կամ սուբսիդավորող մարմնի կողմից սահմանվում են սուբսիդիա ստանալու անվերապահ իրավունքը և դրա չափը որոշող ընդհանուր օբյեկտիվ չափորոշիչներ կամ պայմաններ (այդ թվում՝ արտադրանքի արտադրության մեջ զբաղված աշխատողների թվից կամ արտադրանքի բացթողման ծավալից կախված), որոնք խստորեն պահպանվում են:

126. Ցանկացած դեպքում արտահանող երրորդ երկրի սուբսիդիան համարվում է հատուկ, եթե այդ սուբսիդիայի տրամադրմանը զուգորդում է՝

1) սուբսիդիայի համար թույլատրելիություն ունեցող հատկորոշված կազմակերպությունների թիվը սահմանափակելը,

2) հատկորոշված կազմակերպությունների կողմից առավելապես սուբսիդիան օգտագործելը,

3) հատկորոշված կազմակերպություններին անհամաչափ մեծ գումարներ տրամադրելը,

4) սուբսիդավորող մարմնի կողմից հատկորոշված կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու արտոնյալ (պրեֆերենցիալ) եղանակ ընտրելը:

127. Արտահանող երրորդ երկրի ցանկացած սուբսիդիա համարվում է հատուկ, եթե՝

1) սուբսիդիան՝ որպես միակ պայման կամ որպես մի քանի պայմաններից մեկը, արտահանող երրորդ երկրի օրենսդրությանը համապատասխան կամ փաստացիորեն կապված է ապրանքի արտահանման հետ: Սուբսիդիան համարվում է ապրանքի արտահանման հետ փաստացիորեն կապված, եթե արտահանող երրորդ երկրի օրենսդրությանը համապատասխան ապրանքի արտահանման հետ առնչություն չունեցող դրա տրամադրումը գործնականում կապված է ապրանքի՝ տեղի ունեցած կամ հետագայում հնարավոր արտահանման կամ արտահանումից ստացվող հասույթների հետ: Արտահանող ձեռնարկություններին սուբսիդիա տրամադրելու փաստն ինքնին չի նշանակում ապրանքի արտահանման հետ կապված սուբսիդիայի տրամադրում՝ սույն կետի իմաստով,

2) սուբսիդիան՝ որպես միակ պայման կամ որպես մի քանի պայմաններից մեկը, արտահանող երրորդ երկրի օրենսդրությանը համապատասխան կամ փաստացիորեն կապված է արտահանող երրորդ երկրում արտադրված ապրանքների օգտագործման հետ՝ ներմուծված ապրանքների փոխարեն:

128. Արտահանող երրորդ երկրի սուբսիդիան հատուկ սուբսիդիա համարելու մասին ուսումնասիրություն իրականացնող մարմնի որոշումը պետք է հիմնված լինի ապացույցների վրա:

2. Հատուկ սուբսիդիայի չափը որոշելու սկզբունքները

129. Հատուկ սուբսիդիայի չափը որոշվում է այդպիսի սուբսիդիա ստացողի կողմից ստացված օգուտի չափի հիման վրա:

130. Սուբսիդիա ստացողի կողմից ստացված օգուտի չափը հաշվարկվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) սուբսիդավորող մարմնի մասնակցությունը կազմակերպության կապիտալում չի դիտարկվում որպես օգուտ ստանալու հնարավորության ընձեռում, եթե այդ մասնակցությունը չի կարող գնահատվել որպես արտահանող երրորդ երկրի տարածքում ընդունված սովորական ներդրումային գործելակերպին չհամապատասխանող (ներառյալ ռիսկային կապիտալի տրամադրումը).

2) սուբսիդավորող մարմնի տրամադրած վարկը չի դիտարկվում որպես օգուտ ստանալու հնարավորության ընձեռում, եթե պետությունից ստացվող վարկերի դիմաց վարկ ստացող կազմակերպության կողմից վճարվող գումարի չափը չի տարբերվում այն գումարի չափից, որը կազմակերպությունը կվճարեր համարժեք այնպիսի առևտրային վարկի դիմաց, որը տվյալ կազմակերպությունը կարող է ստանալ արտահանող երրորդ երկրի վարկային շուկայում: Հակառակ դեպքում օգուտ է համարվում այդ գումարների միջև եղած տարբերությունը.

3) սուբսիդավորող մարմնի կողմից վարկի երաշխավորումը չի դիտարկվում որպես օգուտ ստանալու հնարավորության ընձեռում, եթե սուբսիդավորող մարմնի կողմից երաշխավորված վարկի դիմաց երաշխիք ստացող կազմակերպության կողմից վճարվող գումարի չափը չի տարբերվում այն գումարի չափից, որը կազմակերպությունը կվճարեր համարժեք առևտրային վարկի դիմաց՝ առանց պետական երաշխիքի: Հակառակ դեպքում օգուտ է համարվում այդ գումարների միջև եղած տարբերությունը՝ միջնորդավճարների տարբերությամբ ճշգրտված.

4) սուբսիդավորող մարմնի կողմից ապրանքների կամ ծառայությունների տրամադրումը կամ ապրանքների գնումը չի դիտարկվում որպես օգուտ ստանալու հնարավորության ընձեռում, եթե միայն ապրանքները կամ ծառայությունները մատակարարվում են համարժեքից ավելի ցածր վարձատրության դիմաց, կամ գնումները չեն կատարվում համարժեքից ավելի բարձր վարձատրության դիմաց: Վարձատրության համարժեքությունը որոշվում է՝ ելնելով այդպիսի ապրանքների և ծառայությունների գնման և վաճառքի համար արտահանող երրորդ երկրի շուկայում առկա պայմաններից՝ ներառյալ գինը, որակը, մատչելիությունը, շուկայում իրացվելիությունը, տրանսպորտային փոխադրումը և ապրանքի գնման կամ վաճառքի հետ կապված այլ պայմաններ:

3. Սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը որոշելը

131. Սույն բաժնի նպատակներով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնաս ասելով՝ ենթադրվում է անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը, այդպիսի վնաս հասցնելու վտանգը կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցումը:

132. Սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը որոշվում է՝ հիմք ընդունելով սուբսիդավորվող ներմուծման ծավալի վերլուծության և անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների և անդամ պետություններում նույնանման ապրանքն արտադրողների վրա սուբսիդավորվող ներմուծման ունեցած ազդեցության վերլուծության արդյունքները:

133. Ուսումնասիրության այն ժամանակահատվածը, որի ընթացքում վերլուծվում են տեղեկությունները՝ սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայությունը որոշելու նպատակով, սահմանվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից:

134. Սուբսիդավորվող ներմուծման ծավալը վերլուծելիս ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի սուբսիդավորվող ներմուծման ծավալի զգալի աճ (բացարձակ ցուցանիշներով կամ անդամ պետություններում նույնանման ապրանքի արտադրության կամ սպառման ծավալի մասով):

135. Եթե միաժամանակ իրականացվող ուսումնասիրությունների առարկան Միության մաքսային տարածք մեկից ավելի արտահանող երրորդ երկրից որևէ ապրանքի սուբսիդավորվող ներմուծումն է, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է գնահատել այդպիսի ներմուծման ընդհանուր ազդեցությունը միայն այն դեպքում, եթե որոշի, որ՝

1) տվյալ ապրանքի համար սուբսիդիայի չափը յուրաքանչյուր արտահանող երրորդ երկրում կազմում է դրա արժեքի 1 տոկոսից ավելին, իսկ սուբսիդավորվող ներմուծման ծավալը յուրաքանչյուր արտահանող երրորդ երկրից աննշան չէ՝ սույն Արձանագրության 228-րդ կետին համապատասխան.

2) սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ազդեցության գնահատումը հնարավոր է՝ ելնելով ներկրված ապրանքների միջև մրցակցության պայմաններից ու ներկրված ապրանքի և անդամ պետություններում արտադրված նույնանման ապրանքի միջև մրցակցության պայմաններից:

136. Անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների վրա սուբսիդավորվող ներմուծման ազդեցությունը վերլուծելիս ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է՝

1) արդյոք սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի գները զգալիորեն ցածր են եղել անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գներից.

2) արդյոք սուբսիդավորվող ներմուծումը հանգեցրել է անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների զգալի նվազեցման.

3) արդյոք սուբսիդավորվող ներմուծումը զգալիորեն խոչընդոտել է անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների աճը, որը տեղի կունենար այդպիսի ներմուծման բացակայության դեպքում:

137. Անդամ պետությունների տնտեսության ճյուղի վրա սուբսիդավորվող ներմուծման ունեցած ազդեցության վերլուծությունը անդամ պետությունների տնտեսության ճյուղի վիճակին առնչվող տնտեսական գործոնների գնահատումն է, այդ թվում՝

1) ապրանքի արտադրության, վաճառքի, անդամ պետությունների շուկայում ապրանքի մասնաբաժնի, շահույթի, արտադրողականության, ներգրավված ներդրումներից կամ արտադրական հզորությունների օգտագործումից ստացված եկամուտների՝ տեղի ունեցած կամ մոտ ապագայում հնարավոր կրճատումը.

2) անդամ պետությունների շուկայում ապրանքի գների վրա ազդող գործոնները.

3) դրամական հոսքերի շարժի, ապրանքի պաշարների, զբաղվածության մակարդակի, աշխատավարձի, արտադրության աճի տեմպերի և ներդրումներ ներգրավելու հնարավորության վրա տեղի ունեցած կամ հետագայում հնարավոր բացասական ազդեցությունը:

138. Անդամ պետությունների տնտեսության ճյուղի վրա սուբսիդավորվող ներմուծման ունեցած ազդեցությունը գնահատվում է անդամ պետություններում նույնանման ապրանքի արտադրության մասով, եթե առկա տվյալներով հնարավոր է առանձին հատկորոշել նույնանման ապրանքի արտադրությունն այնպիսի չափորոշիչների հիման վրա, ինչպիսիք են արտադրական գործընթացը, նույնանման ապրանքի վաճառքը՝ դրա արտադրողների կողմից և շահույթը:

Եթե առկա տվյալներով հնարավոր չէ առանձին հատկորոշել նույնանման ապրանքի արտադրությունը, ապա սուբսիդավորվող ներմուծման ունեցած ազդեցությունն անդամ պետությունների տնտեսության ճյուղի վրա կարող է գնահատվել ապրանքների հնարավոր այն ամենանեղ խմբի արտադրության կամ անվանացանկի մասով, որոնք ներառում են նույնանման ապրանքը և որոնց մասին առկա են անհրաժեշտ տվյալներ:

139. Սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայությունը որոշելու դեպքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի է առնում բոլոր առկա գործոնները, այդ թվում՝

1) սուբսիդիայի կամ սուբսիդիաների բնույթը, չափը և առևտրի վրա դրանց հնարավոր ազդեցությունը.

2) սուբսիդավորվող ներմուծման ծավալի աճի տեմպերը, որոնք վկայում են այդ ներմուծման ծավալի հետագա աճի իրական հնարավորության մասին.

3) սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի արտահանման համար արտահանողի ունեցած բավարար հնարավորությունները կամ դրանց ընդլայնման ակնհայտ անխուսափելիությունը, որոնք վկայում են այդ ապրանքի սուբսիդավորվող ներմուծման ծավալի

աճի իրական հնարավորության մասին՝ հաշվի առնելով այլ արտահանման շուկաների՝ տվյալ ապրանքի արտահանման ցանկացած հավելյալ ծավալ ընդունելու հնարավորությունը.

4) սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի գների մակարդակը, եթե գների այդ մակարդակը կարող է հանգեցնել անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների նվազեցմանը կամ դրանց աճի զսպմանը և սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի պահանջարկի հետագա աճին.

5) արտահանողի մոտ սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի պաշարները:

140. Անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության մասին որոշումն ընդունվում է այն դեպքում, եթե սույն Արձանագրության 139-րդ կետում նշված գործոնների վերլուծության արդյունքներով իրականացված ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգել է այն եզրակացությանը, որ սուբսիդավորվող ներմուծումն անխուսափելիորեն շարունակվելու է, և փոխհատուցման միջոցներ չկիրառելու դեպքում այդ ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելն անխուսափելի կլինի:

141. Անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի և սուբսիդավորվող ներմուծման միջև պատճառահետևանքային կապի առկայության մասին եզրակացությունը պետք է հիմնված լինի ուսումնասիրություն իրականացնող մարմնի տրամադրության տակ եղած՝ գործին վերաբերող բոլոր ապացույցների և տեղեկությունների վերլուծության վրա:

142. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, սուբսիդավորվող ներմուծումից բացի, վերլուծում է նաև հայտնի այլ գործոններ, որոնց հետևանքով միևնույն ժամանակահատվածում անդամ պետությունների տնտեսության ճյուղին վնաս է հասցվում:

Այս գործոնների պատճառով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը չպետք է դասակարգվի որպես Միության մաքսային տարածք սուբսիդավորվող ներմուծում իրականացնելու հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնաս:

4. Նախնական փոխհատուցման տուրք սահմանելը

143. Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից նախքան ուսումնասիրության ավարտն ստացված տեղեկությունները վկայում են սուբսիդավորվող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին, ապա սույն Արձանագրության 7-րդ կետում նշված զեկույցի հիման վրա՝ Հանձնաժողովն ընդունում է որոշում մինչև 4 ամիս ժամկետով նախնական փոխհատուցման տուրք սահմանելու միջոցով փոխհատուցման միջոցի կիրառման մասին՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին՝ ուսումնասիրությունն անցկացնելու ընթացքում սուբսիդավորվող ներմուծման հետևանքով հասցվող վնասը կանխելու նպատակով:

144. Նախնական փոխհատուցման տուրքը չի կարող սահմանվել ուսումնասիրությունն սկսելու ամսաթվից հետո 60 օրացուցային օրվանից շուտ:

145. Նախնական փոխհատուցման տուրքը սահմանվում է սուբսիդավորվող և արտահանվող ապրանքի մեկ միավորի համար արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիայի՝ նախապես հաշվարկված մեծությանը հավասար չափով:

146. Այն դեպքում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի ուսումնասիրության արդյունքներով որոշվել է, որ փոխհատուցման միջոց սահմանելու հիմքերը բացակայում են կամ սույն Արձանագրության 272-րդ կետին համապատասխան փոխհատուցման միջոց չկիրառելու մասին որոշում է կայացվել, ապա նախնական փոխհատուցման տուրքի գումարները ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ժամանակին տեղեկացնում է անդամ պետությունների մաքսային մարմիններին փոխհատուցման միջոց սահմանելու հիմքերի բացակայության կամ փոխհատուցման միջոց չկիրառելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու վերաբերյալ:

147. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության կամ անդամ

պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման հիման վրա ընդունված է փոխհատուցման միջոցի կիրառման մասին որոշում, ապա նախնական փոխհատուցման տուրքի գումարները ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

148. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այն հասցնելու վտանգի առկայության հիման վրա ընդունված է փոխհատուցման միջոցի կիրառման մասին որոշում (պայմանով, որ նախնական փոխհատուցման տուրք չսահմանելը կհանգեցներ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի առկայությունը որոշելուն), ապա նախնական փոխհատուցման տուրքի գումարները, սկսած փոխհատուցման միջոցի կիրառման մասին որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից, ենթակա են հաշվեգրման և բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 86-րդ և 87-րդ կետերի դրույթները:

149. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվում սահմանել փոխհատուցման տուրքի՝ նախնական փոխհատուցման տուրքի դրույքաչափից ավելի ցածր դրույքաչափ, ապա նախնական փոխհատուցման տուրքի գումարները, որոնք համապատասխանում են փոխհատուցման տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված փոխհատուցման տուրքի գումարին, ենթակա են հաշվեգրման և բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

Նախնական փոխհատուցման տուրքի գումարները, որոնք գերազանցում են փոխհատուցման տուրքի սահմանված դրույքաչափով հաշվարկված փոխհատուցման տուրքի գումարը, պետք է վերադարձվեն վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով սահմանված կարգով:

150. Այն դեպքում, եթե ուսումնասիրության արդյունքներով նպատակահարմար է համարվում սահմանել փոխհատուցման տուրքի՝ նախնական փոխհատուցման տուրքի դրույքաչափից ավելի բարձր դրույքաչափ, ապա փոխհատուցման տուրքի և նախնական փոխհատուցման տուրքի գումարների միջև տարբերությունը չի գանձվում:

151. Նախնական փոխհատուցման տուրքը կիրառվում է՝ ուսումնասիրությունը միաժամանակ շարունակելու պայմանով:

152. Նախնական փոխհատուցման տուրքը կիրառվում է սույն Արձանագրության 164-168-րդ հոդվածներին համապատասխան:

153. Նախնական փոխհատուցման տուրք սահմանելու մասին որոշումն ընդունվում է, որպես կանոն, ուսումնասիրությունն սկսելու ամսաթվից հետո 7 ամսից ոչ ուշ:

5. Սուբսիդավորող երրորդ երկրի կամ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողի կողմից կամավոր պարտավորությունների ստանձնումը

154. Ուսումնասիրությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել՝ առանց փոխհատուցման տուրք սահմանելու, եթե Հանձնաժողովը որոշում է ընդունում ուսումնասիրություն իրականացնող մարմնի ստանձնած հետևյալ կամավոր պարտավորություններից որևէ մեկին հավանություն տալու մասին (գրավոր)՝

արտահանող երրորդ երկիրը համաձայնում է չեղյալ համարել կամ կրճատել սուբսիդավորումը կամ ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ սուբսիդավորման հետևանքները վերացնելու նպատակով,

ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողը համաձայնում է վերանայել իր կողմից այդ ապրանքի համար սահմանված գները (անդամ պետություններում արտահանողի հետ փոխկապակցված անձանց առկայության դեպքում՝ ապահովել, որ այդ անձինք միանան գների վերանայմանն առնչվող արտահանողի պարտավորություններին), այնպես, որ արտահանողի կողմից ստանձնվող պարտավորությունները վերլուծելու արդյունքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է այն եզրակացությանը, որ այդպիսի կամավոր պարտավորություններ ստանձնելու արդյունքում կվերանա անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը:

Այդպիսի պարտավորությունների համաձայն՝ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գնի ավելացումը չպետք է գերազանցի արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիայի չափը, որը հաշվարկվել է սուբսիդավորվող և արտահանվող ապրանքի մեկ միավորի համար:

Ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի գնի ավելացումը կարող է պակաս լինել արտահանող երրորդ երկրի այն հատուկ սուբսիդիայի չափից, որը հաշվարկվել է սուբսիդավորվող և արտահանվող ապրանքի մեկ միավորի համար, եթե այդպիսի ավելացումը բավարար է անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

155. Կամավոր պարտավորությունները հավանության արժանացնելու մասին որոշումը Հանձնաժողովը չի ընդունում այնքան ժամանակ, քանի դեռ ուսումնասիրություն իրականացնող մարմինը չի հանգում սուբսիդավորվող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին նախնական եզրակացությանը: Ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողի կամավոր պարտավորությունները հավանության արժանացնելու մասին որոշումը Հանձնաժողովը չի ընդունում, քանի դեռ չի ստացել արտահանողների կողմից սույն Արձանագրության 154-րդ կետի երրորդ պարբերության մեջ նշված պարտավորություններն ստանձնելու համար արտահանող երրորդ երկրի լիազոր մարմնի համաձայնությունը:

156. Կամավոր պարտավորությունները հավանության արժանացնելու մասին որոշումը Հանձնաժողովը չի ընդունում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է այն եզրակացությանը, որ դրանք հավանության արժանացնելն անընդունելի է՝ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մեծ թվով իրական կամ հավանական արտահանողների առկայության կամ այլ պատճառներով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, հնարավորության դեպքում, արտահանողներին հայտնում է այն պատճառների մասին, որոնց հիման վրա նրանց կամավոր պարտավորությունները հավանության արժանացնելը համարվել է անընդունելի, և նրանց ընձեռում է դրա հետ կապված մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն:

157. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը դրանց ոչ գաղտնի տարբերակը տրամադրելու մասին հարցում է ուղարկում կամավոր պարտավորություններն ստանձնած յուրաքանչյուր արտահանողի և արտահանող երրորդ երկրի լիազոր մարմնին, որպեսզի այն շահագրգիռ անձանց տրամադրելու հնարավորություն ունենա:

158. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է առաջարկել արտահանող երրորդ երկրին կամ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողին ստանձնել կամավոր պարտավորությունները, սակայն չի կարող պահանջել դրանց ստանձնումը:

159. Կամավոր պարտավորությունները հավանության արժանացնելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում ընդունելու դեպքում փոխհատուցման ուսումնասիրությունը կարող է շարունակվել արտահանող երրորդ երկրի խնդրանքով կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի որոշմամբ:

Եթե ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է սուբսիդավորվող ներմուծման կամ դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնելու բացակայության մասին եզրակացությանը, ապա կամավոր պարտավորություններ ստանձնած արտահանող երրորդ երկիրը կամ արտահանողներն ինքնաբերաբար ազատվում են այդպիսի պարտավորություններից՝ բացառությամբ այն դեպքի, երբ նշված եզրակացությունը գլխավորապես այդպիսի պարտավորությունների առկայության արդյունքն է: Այն դեպքում, եթե արված եզրակացությունը գլխավորապես կամավոր պարտավորությունների առկայության արդյունքն է, ապա Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել այն մասին, որ այդպիսի պարտավորությունները պետք է ուժի մեջ մնան անհրաժեշտ ժամկետով:

160. Այն դեպքում, երբ ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգում է սուբսիդավորվող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության մասին եզրակացությանը, ապա ստանձնած կամավոր պարտավորությունները շարունակում են գործել՝ դրանց պայմանների և սույն Արձանագրության դրույթներին համապատասխան:

161. Ուսումնասիրություն իրականացնող մարմինն իրավունք ունի այն արտահանող երրորդ երկրին կամ արտահանողին, որի կամավոր պարտավորությունները հավանության են արժանացել Հանձնաժողովի կողմից, դիմելու դրանց կատարմանը վերաբերող տեղեկություններ տրամադրելու, ինչպես նաև այդ տեղեկություններն ստուգելու համար նրա համաձայնությունն ստանալու հարցմամբ:

Ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից սահմանված ժամկետում պահանջվող տեղեկությունները չներկայացնելը, ինչպես նաև այդ տեղեկություններն ստուգելու համար համաձայնություն չտալը համարվում են արտահանող երրորդ երկրի կամ արտահանողի կողմից ստանձնած կամավոր պարտավորությունների խախտում:

162. Եթե արտահանող երրորդ երկիրը կամ արտահանողը խախտում կամ չեղարկում է կամավոր պարտավորությունները, ապա Հանձնաժողովը կարող է փոխհատուցման միջոցի կիրառման մասին որոշում ընդունել՝ նախնական փոխհատուցման տուրք սահմանելու միջոցով (եթե ուսումնասիրությունը դեռ չի ավարտվել) կամ փոխհատուցման տուրք սահմանելու միջոցով (եթե ուսումնասիրության վերջնական արդյունքները վկայում են դա սահմանելու հիմքերի առկայության մասին):

Ստանձնած կամավոր պարտավորություններն արտահանող երրորդ երկրի կամ արտահանողի կողմից խախտելու դեպքում նրան տրվում է այդ խախտման հետ կապված մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն:

163. Կամավոր պարտավորությունները հավանության արժանացնելու մասին Հանձնաժողովի որոշման մեջ պետք է սահմանված լինի նախնական փոխհատուցման տուրքի կամ փոխհատուցման տուրքի դրույքաչափը, որոնք կարող են սահմանվել՝ սույն Արձանագրության 162-րդ կետին համապատասխան:

6. Փոխհատուցման տուրք սահմանելն ու կիրառելը

164. Փոխհատուցման տուրք սահմանելու մասին որոշումը չի ընդունվում Հանձնաժողովի կողմից արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիայի հետևանքի դեպքում:

165. Փոխհատուցման տուրք սահմանելու մասին որոշումն ընդունվում է այն բանից հետո, երբ հատուկ սուբսիդիա տրամադրող արտահանող երրորդ երկրին առաջարկվել է անցկացնել խորհրդակցություններ, որոնցից այդ երկիրը հրաժարվել է կամ որոնց անցկացման ընթացքում փոխադարձաբար ընդունելի որոշում չի կայացվել:

166. Փոխհատուցման տուրքը կիրառվում է բոլոր արտահանողների կողմից մատակարարվող և անդամ պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնող՝ սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի նկատմամբ (բացառությամբ այն արտահանողների կողմից մատակարարվող ապրանքի, որոնց կամավոր պարտավորությունները հավանության են արժանացել Հանձնաժողովի կողմից):

Հանձնաժողովը կարող է սահմանել փոխհատուցման տուրքի առանձին դրույքաչափ՝ առանձին արտահանողների կողմից մատակարարվող ապրանքների նկատմամբ:

167. Փոխհատուցման տուրքի դրույքաչափը չպետք է գերազանցի սուբսիդավորվող և արտահանվող ապրանքի մեկ միավորի համար հաշվարկված՝ արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիայի չափը:

Այն դեպքում, եթե սուբսիդիաները տրամադրվում են սուբսիդավորման տարբեր ծրագրերի համաձայն, հաշվի է առնվում դրանց հանրագումարային չափը:

Փոխհատուցման տուրքի դրույքաչափը կարող է պակաս լինել արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիայի չափից այն դեպքում, եթե այդ դրույքաչափը բավարար է անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

168. Փոխհատուցման տուրքի դրույքաչափը որոշելիս հաշվի են առնվում ուսումնասիրություն իրականացնող մարմին ներկայացված անդամ պետությունների այն սպառողների գրավոր կարծիքները, որոնց տնտեսական շահերի վրա կարող է ազդել փոխհատուցման տուրքի սահմանումը:

169. Փոխհատուցման տուրքը կարող է կիրառվել նախնական փոխհատուցման տուրք սահմանելու ամսաթվից ոչ շուտ, քան 90 օր առաջ մաքսային այնպիսի ընթացակարգերով ձևակերպված ապրանքների նկատմամբ, որոնցով ձևակերպելու պայման է համարվում

փոխհատուցման տուրքի վճարումը, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի ուսումնասիրության արդյունքներով այդ ապրանքի մասով միաժամանակ հաստատվել է, որ՝

2) վնասը, որը հետագայում դժվար կլինի վերացնել, հասցվել է գլխավորապես համեմատաբար կարճ ժամանակահատվածի ընթացքում այն ապրանքի ներմուծման ծավալի զգալի ավելացման հետևանքով, որի համար վճարվում կամ տրամադրվում են հատուկ սուբսիդիաներ.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված ներմուծվող ապրանքի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել փոխհատուցման տուրք՝ վնասի կրկնությունը կանխելու նպատակով:

170. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ուսումնասիրությունն սկսելու ամսաթվից հետո Պայմանագրով նախատեսված պաշտոնական աղբյուրներում հրապարակում է ծանուցում, որը պարունակում է նախազգուշացում՝ ուսումնասիրության առարկան հանդիսացող ապրանքի նկատմամբ սույն Արձանագրության 169-րդ կետին համապատասխան հակագնագցման տուրքի հնարավոր կիրառման մասին:

Այդ ծանուցումը հրապարակելու մասին որոշումն ընդունվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից անդամ պետությունների տնտեսության ճյուղի մասով՝ սույն Արձանագրության 169-րդ կետում նշված պայմանները կատարելու վերաբերյալ բավարար ապացույցներ պարունակող հարցման հիման վրա, կամ սեփական նախաձեռնությամբ՝ ուսումնասիրություն իրականացնող մարմնի տրամադրության տակ այդպիսի ապացույցների առկայության դեպքում:

Փոխհատուցման տուրք չի կարող կիրառվել մինչև սույն կետում նշված ծանուցման պաշտոնական հրապարակման ամսաթիվը՝ մաքսային այնպիսի ընթացակարգերով ձևակերպված ապրանքների նկատմամբ, որոնցով ձևակերպելու պայման է համարվում փոխհատուցման տուրքի վճարումը:

171. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն Արձանագրության 169-րդ կետին համապատասխան փոխհատուցման տուրքի հնարավոր կիրառման մասին շահագրգիռ անձանց ծանուցելու լրացուցիչ եղանակներ:

7. Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը և դրա վերանայումը

172. Փոխհատուցման միջոցը կիրառվում է Հանձնաժողովի որոշմամբ այնպիսի չափով և ժամկետով, որոնք անհրաժեշտ են սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

173. Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը չպետք է գերազանցի 5 տարին՝ այդ միջոցի կիրառումն սկսելու ամսաթվից կամ կրկնակի ուսումնասիրությունն ավարտելու ամսաթվից սկսած, որն անցկացվել է փոփոխված հանգամանքների պատճառով և, միաժամանակ, վերաբերել է սուբսիդավորվող ներմուծման և դրա հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասի վերլուծությանը, կամ որն անցկացվել է փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը լրանալու պատճառով:

174. Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է սույն Արձանագրության 186-198-րդ կետերին համապատասխան ներկայացված դիմումի (գրավոր) հիման վրա կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի սեփական նախաձեռնությամբ:

Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ կրկնակի ուսումնասիրությունն անցկացվում է այն դեպքում, եթե դիմումի մեջ առկա են տեղեկություններ այն մասին, որ սուբսիդավորվող ներմուծումը հնարավոր է՝ վերսկսվի կամ շարունակվի, և փոխհատուցման միջոցի գործողությունը դադարեցնելու դեպքում հնարավոր է՝ վնաս հասցվի անդամ պետությունների տնտեսության ճյուղին:

Փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումը ներկայացվում է ոչ ուշ, քան փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ:

Կրկնակի ուսումնասիրությունը պետք է սկսվի նախքան փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը լրանալը և ավարտվի դրա սկսելու ամսաթվից սկսած 12 ամսվա ընթացքում:

Նախքան սույն կետին համապատասխան անցկացվող կրկնակի ուսումնասիրության ավարտը՝ փոխհատուցման միջոցի կիրառումը երկարաձգվում է Հանձնաժողովի որոշմամբ: Այն ժամկետի ընթացքում, որով երկարաձգվում է համապատասխան փոխհատուցման միջոցի կիրառումը, նախնական փոխհատուցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով վճարվում են փոխհատուցման տուրքեր՝ փոխհատուցման տուրքերի այնպիսի դրույքաչափերով, որոնք սահմանվել են այն փոխհատուցման միջոցը կիրառելու մասով, որի գործողության ժամկետը կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու հետ կապված երկարաձգվում է:

Այն դեպքում, եթե փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է, որ փոխհատուցման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են, կամ սույն Արձանագրության 272-րդ կետին համապատասխան՝ կայացվել է փոխհատուցման միջոցը չկիրառելու մասին որոշում, ապա նախնական փոխհատուցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով գանձվող փոխհատուցման տուրքի գումարները փոխհատուցման միջոցի կիրառումը երկարաձգելու ժամկետի ընթացքում ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ժամանակին տեղեկացնում է անդամ պետությունների մաքսային մարմիններին փոխհատուցման միջոց կիրառելու հիմքերի բացակայության կամ փոխհատուցման միջոց չկիրառելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու վերաբերյալ:

Փոխհատուցման միջոցի գործողությունը երկարաձգվում է Հանձնաժողովի կողմից այն դեպքում, եթե փոխհատուցման միջոցի գործողության ժամկետը լրանալու հետ կապված անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշի, որ առկա է սուբսիդավորվող ներմուծումը վերսկսելու կամ շարունակելու և անդամ պետությունների տնտեսության ճյուղին վնաս հասցնելու հավանականություն: Փոխհատուցման միջոցը երկարաձգելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած նախնական փոխհատուցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով գանձվող փոխհատուցման տուրքի գումարները փոխհատուցման միջոցի կիրառումը երկարաձգելու ժամկետի ընթացքում ենթակա են հաշվեգրման և բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

175. Շահագրգիռ անձի դիմումի հիման վրա այն դեպքում, եթե փոխհատուցման միջոց սահմանելուց հետո անցել է առնվազն մեկ տարի, կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կարող է անցկացվել կրկնակի ուսումնասիրություն՝ փոփոխված հանգամանքների կապակցությամբ փոխհատուցման միջոցի կիրառումը շարունակելու և (կամ) դա վերանայելու նպատակահարմարությունը որոշելու համար (այդ թվում՝ փոխհատուցման տուրքի առանձին դրույքաչափը վերանայելը):

Կախված փոփոխված հանգամանքների առնչությամբ կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու մասին դիմումը ներկայացնելուց՝ այդպիսի դիմումը պետք է պարունակի ապացույցներ այն մասին, որ՝

չի պահանջվում շարունակել փոխհատուցման միջոցի կիրառումը՝ սուբսիդավորվող ներմուծմանը հակազդելու և սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու նպատակով,

փոխհատուցման միջոցի գոյություն ունեցող չափը գերազանցում է այն չափը, որը բավարար է՝ սուբսիդավորվող ներմուծմանը հակազդելու և սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար,

գոյություն ունեցող փոխհատուցման միջոցը բավարար չէ՝ սուբսիդավորվող ներմուծմանը հակազդելու և սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված վնասը վերացնելու համար:

Փոփոխված հանգամանքների հետ կապված անցկացվող կրկնակի ուսումնասիրությունը պետք է ավարտվի՝ այն սկսելու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

176. Ապացույցներ ներկայացնելուն և ուսումնասիրություն անցկացնելուն վերաբերող՝ սույն Արձանագրության VI բաժնի դրույթները կիրառվում են սույն Արձանագրության 172-178-րդ կետերով նախատեսված կրկնակի ուսումնասիրությունների նկատմամբ՝ հաշվի առնելով համապատասխան տարբերությունները:

177. Սույն Արձանագրության 172-178-րդ կետերի դրույթները կիրառվում են արտահանող երրորդ երկրի կամ արտահանողի՝ սույն Արձանագրության 154-163-րդ կետերին համապատասխան ստանձնած պարտավորությունների նկատմամբ՝ հաշվի առնելով համապատասխան տարբերությունները:

178. Կրկնակի ուսումնասիրությունը կարող է նաև անցկացվել այն արտահանողի համար փոխհատուցման տուրքի առանձին դրույքաչափ սահմանելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է փոխհատուցման միջոցը, սակայն համագործակցությունից հրաժարվելուց տարբեր այլ պատճառներով ուսումնասիրություն չի անցկացվել: Այսպիսի կրկնակի ուսումնասիրությունը կարող է սկսվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ նշված արտահանողի դիմումի համաձայն:

8. Փոխհատուցման միջոցի շրջանցումը որոշելը

179. Սույն բաժնի նպատակներով փոխհատուցման միջոցի շրջանցում ասելով՝ ենթադրվում է ապրանքի մատակարարման եղանակի փոփոխումը՝ փոխհատուցման տուրք վճարելուց կամ ստանձնած կամավոր պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակով:

180. Փոխհատուցման միջոցի շրջանցումը որոշելու նպատակով կրկնակի ուսումնասիրությունը կարող է սկսվել շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի սեփական նախաձեռնությամբ:

181. Սույն Արձանագրության 180-րդ կետում նշված դիմումը պետք է պարունակի հետևյալ ապացույցները՝

1) փոխհատուցման միջոցի շրջանցումը.

2) փոխհատուցման միջոցի՝ նույնանման ապրանքի արտադրության և (կամ) վաճառքի ծավալի և (կամ) անդամ պետությունների շուկայում նույնանման ապրանքի գների վրա ունեցած ազդեցության չեզոքացումը (դա շրջանցելու հետևանքով).

3) հատուկ սուբսիդիայի տրամադրումից ստացված օգուտի պահպանումն ապրանքը (այդպիսի ապրանքի բաղադրիչ մասերը և (կամ) ածանցյալները) արտադրողի և (կամ) արտահանողի կողմից:

182. Սույն Արձանագրության 179-185-րդ կետերին համապատասխան անցկացվող կրկնակի ուսումնասիրության ժամանակահատվածի համար Հանձնաժողովը կարող է նախնական փոխհատուցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով գանձվող փոխհատուցման տուրք սահմանել սուբսիդավորվող ներմուծման առարկա եղած ապրանքի այն բաղկացուցիչ մասերի և (կամ) ածանցյալների համար, որոնք Միության մաքսային տարածք են ներմուծվում արտահանող երրորդ երկրից, ինչպես նաև սուբսիդավորվող ներմուծման առարկա եղած ապրանքի և (կամ) դրա բաղկացուցիչ մասերի և (կամ) ածանցյալների համար, որոնք մաքսային տարածք են ներմուծվում այլ արտահանող երրորդ երկրից:

183. Այն դեպքում, եթե սույն Արձանագրության 179-185-րդ կետերին համապատասխան անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը չի որոշում, որ փոխհատուցման միջոցը շրջանցվել է, ապա փոխհատուցման տուրքի գումարները, որոնք վճարվել են սույն Արձանագրության 182-րդ կետին համապատասխան և նախնական փոխհատուցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով, ենթակա են վերադարձման վճարողին՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ժամանակին տեղեկացնում է անդամ պետությունների մաքսային մարմիններին այն մասին, որ փոխհատուցման միջոցը չի շրջանցվել:

184. Այն դեպքում, եթե սույն Արձանագրության 179-185-րդ կետերին համապատասխան անցկացված կրկնակի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ փոխհատուցման միջոցը շրջանցվել է, ապա փոխհատուցման միջոցը կարող է տարածվել սուբսիդավորվող ներմուծման առարկա եղած ապրանքի այն բաղկացուցիչ մասերի և (կամ) ածանցյալների վրա, որոնք Միության մաքսային տարածք են ներմուծվում արտահանող երրորդ երկրից, ինչպես նաև սուբսիդավորվող ներմուծման առարկա եղած ապրանքի և (կամ) դրա բաղկացուցիչ մասերի և (կամ) ածանցյալների վրա, որոնք Միության մաքսային տարածք են ներմուծվում այլ արտահանող երրորդ երկրից: Սույն կետում նշված փոխհատուցման միջոց սահմանելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ նախնական փոխհատուցման

տուրքերի գանձման համար սահմանված կարգով վճարված փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են հաշվեգրման և բաշխման՝ սույն Արձանագրության հավելվածով նախատեսված կարգով:

185. Փոխհատուցման միջոցի շրջանցումը որոշելու նպատակով կրկնակի ուսումնասիրությունը պետք է ավարտվի՝ այն սկսելու ամսաթվից հետո 9 ամսվա ընթացքում:

VI. Ուսումնասիրությունների իրականացումը

1. Ուսումնասիրություն իրականացնելու հիմքերը

186. Ներմուծման ավելացած ծավալի և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայությունը որոշելու նպատակով, ինչպես նաև գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասը, այդպիսի վնաս հասցնելու վտանգը կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցումը որոշելու նպատակով ուսումնասիրությունն իրականացվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ գրավոր դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ:

187. Սույն Արձանագրության 186-րդ կետում նշված դիմումը ներկայացվում է՝

1) անդամ պետություններում նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքն արտադրողի (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքն արտադրողի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից (հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում).

2) արտադրողների միության կողմից, որի մասնակիցների թվում են անդամ պետություններում նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) արտադրության ընդհանուր ծավալի զգալի մասի՝ առնվազն 25 տոկոսի արտադրողները, կամ այդպիսի միության լիազոր ներկայացուցչի կողմից:

188. Սույն Արձանագրության 187-րդ կետում նշված արտադրողների և միությունների լիազոր ներկայացուցիչները պետք է ունենան պատշաճորեն ձևակերպված լիազորություններ՝ հաստատված այնպիսի փաստաթղթերով, որոնց բնօրինակները դիմումի հետ միասին ներկայացվում են ուսումնասիրություն իրականացնող մարմին:

189. Սույն Արձանագրության 186-րդ կետում նշված դիմումին կցվում են անդամ պետություններում նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքը կամ նույնանման ապրանքը արտադրողների՝ դիմումին կողմ արտահայտվելու մասին ապացույցները: Դիմումին կողմ արտահայտվելու համար բավարար ապացույցներ են համարվում՝

1) դիմումատուի հետ միասին անդամ պետություններում նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի զգալի մասը՝ առնվազն 25 տոկոսն արտադրող՝ անդամ պետություններում նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի այլ արտադրողների՝ դիմումին միանալու մասին փաստաթղթերը (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում),

2) այն փաստաթղթերը, որոնցով հաստատվում է, որ դիմումին կողմ արտահայտված արտադրողների կողմից (այդ թվում՝ դիմումատուի կողմից) անդամ պետություններում իրականացվող նույնանման ապրանքի արտադրության մասնաբաժինը կազմում է անդամ պետություններում նույնանման ապրանքի արտադրության ընդհանուր ծավալի առնվազն 25 տոկոսը՝ պայմանով, որ դիմումին կողմ արտահայտված արտադրողների կողմից (այդ թվում՝ դիմումատուի կողմից) անդամ պետություններում իրականացվող նույնանման ապրանքի արտադրության ծավալը կազմում է դիմումի վերաբերյալ (հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) իրենց կարծիքն արտահայտած (համաձայնված կամ չհամաձայնված) արտադրողների կողմից անդամ պետություններում իրականացվող նույնանման ապրանքի արտադրության ծավալի 50 տոկոսից ավելին:

190. Սույն Արձանագրության 186-րդ կետում նշված դիմումը պետք է պարունակի՝

1) տեղեկություններ՝ դիմումատուի մասին, անդամ պետությունների տնտեսության ճյուղի կողմից իրականացվող նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում), նույնանման ապրանքի (հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) արտադրության ծավալի մասին՝ քանակական և արժեքային արտահայտությամբ՝ դիմումը ներկայացնելու ամսաթվին անմիջապես նախորդող 3 տարվա ընթացքում, ինչպես նաև դիմումին միացած արտադրողների կողմից անդամ պետություններում իրականացվող նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում), կամ նույնանման ապրանքի (հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) արտադրության ծավալի մասին՝ քանակական և արժեքային արտահայտությամբ, ինչպես նաև անդամ պետություններում նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում), կամ նույնանման ապրանքի (հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) արտադրության ընդհանուր ծավալի մեջ նրանց մասնաբաժնի մասին.

2) Միության մաքսային տարածք ներմուծվող այն ապրանքի բնութագիր, որի նկատմամբ առաջարկվում է սահմանել հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց՝ նշելով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքի ծագման կամ ուղարկող արտահանող երրորդ երկրների անվանումներ՝ մաքսային վիճակագրության տվյալների հիման վրա.

4) սույն կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքի՝ արտահանող երրորդ երկրում հայտնի արտադրողների և (կամ) արտահանողների մասին և անդամ պետություններում տվյալ ապրանքի հայտնի ներմուծողների ու հիմնական հայտնի սպառողների մասին տեղեկություններ.

5) տեղեկություններ՝ Միության մաքսային տարածք այն ապրանքի ներմուծման ծավալի փոփոխության մասին, որի նկատմամբ առաջարկվում է սահմանել հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց՝ նախորդող ժամանակահատվածի համար, ինչպես նաև հաջորդող այն ժամանակահատվածի համար, որի համար դիմումը ներկայացնելու ամսաթվի դրությամբ առկա են վիճակագրական ներկայացուցչական տվյալներ.

6) տեղեկություններ՝ Միության մաքսային տարածքից նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) արտահանման ծավալի փոփոխության մասին՝ նախորդող ժամանակահատվածի համար, ինչպես նաև հաջորդող այն ժամանակահատվածի համար, որի համար դիմումը ներկայացնելու ամսաթվի դրությամբ առկա են վիճակագրական ներկայացուցչական տվյալներ:

191. Սույն Արձանագրության 190-րդ կետում նշված տեղեկությունների հետ մեկտեղ՝ կախված դիմումի մեջ առաջարկվող միջոցից, դիմումատուն նշում է՝

1) ապրանքի ներմուծման ավելացած ծավալի առկայության ապացույցները, ապրանքի ներմուծման ավելացած ծավալի հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայության ապացույցները, հատուկ պաշտպանական միջոց սահմանելու մասին առաջարկը՝ նշելով այդպիսի միջոցի չափն ու գործողության ժամկետը, և դիմումատուի կողմից առաջարկվող հատուկ պաշտպանական միջոցի գործողության ժամկետի ընթացքում անդամ պետությունների տնտեսության ճյուղը՝ օտարերկրյա մրցակցության պայմաններում աշխատելուն հարմարեցնելու համար նախատեսված միջոցառումների նախագիծը (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում).

2) ապրանքի արտահանման գնի և սովորական արժեքի մասին տեղեկությունները, գնագցող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայության, կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման մասին ապացույցները, ինչպես նաև հակագնագցման միջոց սահմանելու մասին առաջարկը՝ նշելով այդպիսի միջոցի չափն ու

գործողության ժամկետը (հակագնագցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում).

3) արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիայի առկայության և բնույթի, և հնարավորության դեպքում՝ նաև դրա չափի մասին տեղեկությունները, ապրանքի սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայության, կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման մասին ապացույցները, ինչպես նաև փոխհատուցման միջոց սահմանելու մասին առաջարկը՝ նշելով այդպիսի միջոցի չափն ու գործողության ժամկետը (փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում):

192. Գնագցող ներմուծման կամ սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայության ապացույցները (հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) և անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայության կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման մասին ապացույցները (հակագնագցման միջոց կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում ներկայացնելու դեպքում) պետք է հիմնվեն օբյեկտիվ այնպիսի գործոնների վրա, որոնք բնութագրում են անդամ պետությունների տնտեսության ճյուղի տնտեսական դրությունը, և պետք է արտահայտվեն քանակական և (կամ) արժեքային ցուցանիշներով՝ նախորդող ժամանակահատվածի համար, ինչպես նաև՝ հաջորդող այն ժամանակահատվածի համար, որի համար դիմումը ներկայացնելու ամսաթվի դրությամբ առկա են վիճակագրական ներկայացուցչական տվյալներ (այդ թվում՝ տվյալներ՝ ապրանքի արտադրության ծավալի և դրա իրացման ծավալի, անդամ պետությունների շուկայում ապրանքի մասնաբաժնի, ապրանքի արտադրության ինքնարժեքի, ապրանքի գնի, արտադրական հզորությունների օգտագործման մակարդակի, զբաղվածության, աշխատանքի արտադրողականության, շահույթի չափի, արտադրության եկամտաբերության, ապրանքի իրացման ծավալի, անդամ պետությունների տնտեսության ճյուղում ներդրումների ծավալի մասին):

193. Դիմումի մեջ ներկայացված տեղեկություններին կից պետք է լինի հղում՝ դրանց ստացման աղբյուրին:

194. Դիմումի մեջ պարունակվող ցուցանիշները նշելիս համադրելիության նպատակով պետք է օգտագործվեն դրամական և քանակական միասնական միավորներ:

195. Դիմումի մեջ պարունակվող տեղեկությունները պետք է հաստատվեն այդպիսի տեղեկություններ ներկայացրած արտադրողների ղեկավարների կողմից, ինչպես նաև նրանց՝ հաշվապահական հաշվառում վարելու և հաշվապահական հաշվետվություններ կազմելու համար պատասխանատու աշխատակիցների կողմից՝ անմիջապես տվյալ արտադրողներին վերաբերող տեղեկությունների մասով:

196. Դիմումը՝ դրա ոչ գաղտնի տարբերակի հետ կցված (դիմումի մեջ գաղտնի տեղեկությունների առկայության դեպքում), ներկայացվում է ուսումնասիրություն իրականացնող մարմին՝ սույն Արձանագրության 8-րդ կետին համապատասխան, և ենթակա է գրանցման այդ մարմնում մուտքագրվելու օրը:

197. Դիմումը ներկայացնելու ամսաթիվ է համարվում դրա՝ ուսումնասիրություն իրականացնող մարմնում գրանցվելու ամսաթիվը:

198. Հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմումը մերժվում է հետևյալ հիմքերով՝

դիմումը ներկայացնելիս սույն Արձանագրության 189-191-րդ կետերում նշված նյութերը չներկայացնելը.

դիմումատուի կողմից ներկայացված՝ սույն Արձանագրության 189-191-րդ կետերով նախատեսված նյութերի ոչ հավաստի լինելը.

դիմումի ոչ գաղտնի տարբերակը չներկայացնելը:

Այլ հիմքերով դիմումի մերժումը չի թույլատրվում:

2. Ուսումնասիրություն սկսելը և դրա իրականացումը

199. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելը, սույն Արձանագրության 187-196-րդ կետերին համապատասխան պատրաստված՝ հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման մասին դիմում ստանալու վերաբերյալ գրավոր տեղյակ է պահում արտահանող երրորդ երկրին:

200. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելը, դիմումի գրանցման ամսաթվից սկսած 30 օրացուցային օրվա ընթացքում ստուգում է այդ դիմումի մեջ պարունակվող ապացույցների և տեղեկությունների բավարար ու հավաստի լինելը՝ սույն Արձանագրության 189-191-րդ կետերին համապատասխան: Այդ ժամկետը կարող է երկարաձգվել, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնին անհրաժեշտ է ստանալ լրացուցիչ տեղեկություններ, սակայն այդ ժամկետը չպետք է գերազանցի 60 օրացուցային օրը:

201. Դիմումը կարող է հետ կանչվել դիմումատուի կողմից՝ նախքան ուսումնասիրությունն սկսելը կամ դրա իրականացման ընթացքում:

Դիմումը համարվում է չներկայացված, եթե այն հետ է կանչվում նախքան ուսումնասիրությունն սկսելը:

Եթե դիմումը հետ է կանչվում ուսումնասիրությունն իրականացնելու ընթացքում, ուսումնասիրությունը դադարեցվում է՝ առանց հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց սահմանելու:

202. Նախքան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման ընդունումը՝ դիմումի մեջ ներառված տեղեկությունները ենթակա չեն հրապարակման:

203. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան սույն Արձանագրության 200-րդ կետում նշված ժամկետը լրանալը, որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու կամ դրա անցկացումը մերժելու վերաբերյալ:

204. Ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելու դեպքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը գրավոր տեղյակ է պահում արտահանող երրորդ երկրի լիազոր մարմնին, ինչպես նաև իրեն հայտնի մյուս շահագրգիռ անձանց՝ ընդունված որոշման մասին և, նշված որոշումն ընդունելու ամսաթվից սկսած առնվազն 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է ուսումնասիրությունն սկսելու մասին ծանուցման հրապարակումը Պայմանագրով նախատեսված պաշտոնական աղբյուրներում:

205. Ուսումնասիրությունն սկսելու ամսաթիվ է համարվում Միության պաշտոնական համացանցային կայքում ուսումնասիրությունն սկսելու մասին ծանուցման հրապարակման ամսաթիվը:

206. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է ուսումնասիրությունն սկսելու մասին որոշում ընդունել (այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ) միայն այն դեպքում, եթե իր տրամադրության տակ առկա են ապացույցներ ներմուծման ավելացած ծավալի և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայության մասին, կամ գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման և դրանով պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայության կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման մասին:

Այն դեպքում, եթե առկա ապացույցները բավարար չեն, այդ ուսումնասիրությունը չի կարող սկսվել:

207. Ուսումնասիրության անցկացումը մերժելու մասին որոշումը կայացվում է այն դեպքում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը դիմումը քննության առնելու արդյունքների հիման վրա պարզում է, որ սույն Արձանագրության 190-191-րդ կետերի համաձայն ներկայացված տեղեկություններով չի հաստատվում Միության մաքսային տարածք ներմուծման ավելացած ծավալի, գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման և (կամ) դրանցով պայմանավորված, անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի, կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայությունը կամ գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցումը, կամ Միության մաքսային տարածք ներմուծման ավելացած ծավալի հետևանքով

անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայությունը:

208. Ուսումնասիրության անցկացումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում ուսումնասիրություն իրականացնող մարմինն այդպիսի որոշում ընդունելու ամսաթվից սկսած առնվազն 10 օրացուցային օրվա ընթացքում տեղյակ է պահում դիմումատուին ուսումնասիրության անցկացումը մերժելու պատճառի մասին:

209. Շահագրգիռ անձինք իրավունք ունեն գրավոր և սույն Արձանագրությամբ սահմանված ժամկետում հայտնելու ուսումնասիրությանը մասնակցելու իրենց մտադրության մասին: Նրանք համարվում են ուսումնասիրության մասնակիցներ՝ ուսումնասիրությանը մասնակցելու մտադրության մասին դիմումը ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից գրանցելու ամսաթվից:

Դիմումատուն և անդամ պետություններում դիմումին կողմ արտահայտված արտադրողները համարվում են ուսումնասիրության մասնակիցներ ուսումնասիրությունն սկսելու ամսաթվից:

210. Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ուսումնասիրության ընթացքը չխախտող ժամկետում ներկայացնելու ուսումնասիրության անցկացման համար անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ գաղտնի տեղեկատվությունը)՝ նշելով այդպիսի տեղեկությունների ստացման աղբյուրը:

211. Ուսումնասիրություն իրականացնող մարմինն իրավունք ունի շահագրգիռ անձին դիմելու ուսումնասիրության նպատակով լրացուցիչ տեղեկություններ ստանալու հարցմամբ:

Հարցումները կարող են նաև ուղարկվել անդամ պետությունների այլ կազմակերպությունների:

Նշված հարցումներն ուղարկվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կողմից:

Հարցումը համարվում է շահագրգիռ անձի կողմից ստացված՝ շահագրգիռ անձի լիազոր ներկայացուցչին այն փոխանցելու պահից կամ հարցումը փոստային կապի միջոցով ուղարկելու ամսաթվից հետո 7 օրացուցային օրը լրանալուն պես:

Շահագրգիռ անձի պատասխանը պետք է ներկայացվի ուսումնասիրություն իրականացնող մարմին հարցումն ստանալու ամսաթվից սկսած 30 օրացուցային օրվանից ոչ ուշ:

Պատասխանը համարվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ստացված, եթե այն ուսումնասիրություն իրականացնող մարմինն ստացել է սույն կետի հինգերորդ պարբերության մեջ նշված ժամկետը լրանալու ամսաթվից ոչ ուշ, քան 7 օրացուցային օր հետո:

Նշված ժամկետը լրանալուն պես շահագրգիռ անձի կողմից ներկայացված տեղեկությունները կարող են հաշվի չառնվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից:

Շահագրգիռ անձի հիմնավորված և գրավոր ներկայացված խնդրանքով պատասխանի տրամադրման ժամկետը կարող է երկարաձգվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից:

212. Այն դեպքում, եթե շահագրգիռ անձը հրաժարվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնին անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելուց, այդ տեղեկությունները չի ներկայացնում սահմանված ժամկետում կամ ներկայացնում է ոչ հավաստի տեղեկություններ՝ այդպիսով զգալիորեն դժվարացնելով ուսումնասիրության իրականացումը, ապա այդպիսի շահագրգիռ անձը համարվում է չհամագործակցող, և ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ վերջինիս ունեցած տեղեկությունների հիման վրա, կարող են կայացվել նախնական կամ վերջնական եզրակացություններ:

Պահանջվող տեղեկություններն էլեկտրոնային եղանակով կամ ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցման մեջ սահմանված ձևաչափով չտրամադրելը ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից չպետք է դիտարկվի որպես համագործակցությունից հրաժարում՝ պայմանով, որ համապատասխան շահագրգիռ անձը կարող է ապացուցել, որ ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցման մեջ սահմանված՝ տեղեկությունները ներկայացնելու չափորոշիչները լիովին բավարարելն անհնար է կամ կապված է զգալի նյութական ծախքերի հետ:

Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հաշվի չի առնում շահագրգիռ անձի կողմից ներկայացված տեղեկությունները սույն կետի առաջին պարբերության մեջ նշված

պատճառներից տարբեր այլ պատճառներով, ապա տվյալ անձը պետք է տեղեկացվի այդպիսի որոշում կայացնելու պատճառների և հիմքերի մասին, և նրան պետք է տրվի դրա կապակցությամբ իր մեկնաբանությունները ներկայացնելու հնարավորություն՝ ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից սահմանվող ժամկետում:

Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախնական կամ վերջնական եզրակացությունը նախապատրաստելիս՝ ներառյալ ապրանքի սովորական արժեքը որոշելիս (հակագնագցման ուսումնասիրությունն անցկացնելիս) կիրառվել են սույն կետի առաջին պարբերության դրույթները, և օգտագործվել են տեղեկություններ (այդ թվում՝ դիմումատուի կողմից տրամադրված տեղեկությունները), ապա այդպիսի եզրակացությունները նախապատրաստելիս օգտագործվող տեղեկությունները պետք է ստուգվեն՝ կիրառելով երրորդ աղբյուրներից կամ շահագրգիռ անձանցից ստացվող հասանելի տեղեկությունները՝ պայմանով, որ այդպիսի ստուգում անցկացնելը չի դժվարացնի ուսումնասիրության ընթացքը և չի հանգեցնի դրա անցկացման ժամկետների խախտմանը:

213. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրությունն սկսելու մասին որոշումն ընդունելու ամսաթվից հետո հնարավորինս կարճ ժամկետում արտահանող երրորդ երկրի լիազոր մարմին և իրեն հայտնի արտահանողներին է ուղարկում դիմումի կամ դրա ոչ գաղտնի տարբերակի (եթե դիմումը պարունակում է գաղտնի տեղեկություններ) պատճենները, ինչպես նաև տրամադրում է այդ պատճենները այլ շահագրգիռ անձանց՝ վերջիններիս հարցմամբ:

Այն դեպքում, եթե հայտնի արտահանողների թիվը մեծ է, ապա դիմումի կամ դրա ոչ գաղտնի տարբերակի պատճենն ուղարկվում է միայն արտահանող երրորդ երկրի լիազոր մարմին:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հատուկ պաշտպանական ուսումնասիրության մասնակիցներին՝ վերջիններիս հարցմամբ, տրամադրում է դիմումի կամ դրա ոչ գաղտնի տարբերակի (եթե դիմումի մեջ առկա են գաղտնի տեղեկություններ) պատճենները:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, հաշվի առնելով գաղտնի տեղեկությունները պաշտպանելու անհրաժեշտությունը, ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրության մասնակիցներին՝ վերջիններիս հարցմամբ, հնարավորություն է ընձեռում ծանոթանալու ցանկացած շահագրգիռ անձի կողմից գրավոր ներկայացված տեղեկություններին՝ որպես ուսումնասիրության առարկային առնչվող ապացույցներ:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ուսումնասիրության մասնակիցներին ուսումնասիրության ընթացքում հնարավորություն է ընձեռում ծանոթանալու ուսումնասիրությանն առնչվող և ուսումնասիրության ընթացքում իր կողմից օգտագործվող այլ տեղեկությունների հետ, որոնք, սակայն, չեն համարվում գաղտնի տեղեկություններ:

214. Շահագրգիռ անձանց հարցմամբ՝ ուսումնասիրություն իրականացնող մարմինն անցկացնում է խորհրդակցություն՝ իրականացվող ուսումնասիրության առարկայի վերաբերյալ:

215. Ուսումնասիրության ընթացքում բոլոր շահագրգիռ անձանց իրենց շահերը պաշտպանելու հնարավորություն է տրվում: Այդ նպատակով ուսումնասիրություն իրականացնող մարմինը բոլոր շահագրգիռ անձանց՝ վերջիններիս հարցման հիման վրա, հանդիպելու հնարավորություն է տալիս այն նպատակով, որ նրանք կարողանան ներկայացնել հակադիր տեսակետներ և առաջարկել հերքումներ: Այդպիսի հնարավորությունն ընձեռվում է՝ հաշվի առնելով տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունը: Բոլոր շահագրգիռ անձանց ներկայությունը հանդիպմանը պարտադիր չէ, և որևէ շահագրգիռ անձի բացակայությունը վերջինիս շահերին վնաս չի հասցնում:

216. Այն սպառողները, որոնք արտադրանքի արտադրության մեջ օգտագործում են ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքը, սպառողների հասարակական միավորումների ներկայացուցիչները, պետական իշխանության (կառավարման) մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև այլ անձինք իրավունք ունեն ուսումնասիրություն իրականացնող մարմին ներկայացնելու ուսումնասիրությանն առնչվող տեղեկություններ:

217. Ուսումնասիրությունն իրականացնելու ժամկետը չպետք է գերազանցի՝

1) հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մասին դիմումի հիման վրա ուսումնասիրությունն սկսելու ամսաթվից հետո 9 ամիսը: Այս ժամկետը կարող է երկարաձգվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, բայց ոչ ավելի, քան 3 ամսով.

2) հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմումի հիման վրա ուսումնասիրությունն սկսելու ամսաթվից հետո 12 ամիսը: Այս ժամկետը կարող է երկարաձգվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, բայց ոչ ավելի, քան 6 ամսով:

218. Ուսումնասիրության իրականացումը չպետք է խոչընդոտի ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի մասով մաքսային ձևակերպումների կատարումը:

219. Ուսումնասիրությունն ավարտելու ամսաթիվ է համարվում սույն Արձանագրության 5-րդ կետում նշված՝ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյունքների մասին զեկույցի և Հանձնաժողովի ակտի նախագծի ուսումնասիրման ամսաթիվը:

Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցը կիրառելու, վերանայելու կամ չեղյալ հայտարարելու հիմքերի բացակայության մասին հանգել է վերջնական եզրակացության, ապա ուսումնասիրությունն ավարտելու ամսաթիվ է համարվում ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից համապատասխան ծանուցումը հրապարակելու ամսաթիվը:

Նախնական հատուկ տուրք, նախնական հակագնագցման տուրք կամ նախնական փոխհատուցման տուրք սահմանելու դեպքում ուսումնասիրությունը պետք է ավարտվի՝ նախքան համապատասխան նախնական տուրքի գործողության ժամկետի ավարտը:

220. Այն դեպքում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը ուսումնասիրության ընթացքում հաստատում է սույն Արձանագրության 3-րդ կետի երկրորդ կամ երրորդ պարբերությամբ նախատեսված հիմքերի բացակայությունը, ապա ուսումնասիրությունն ավարտվում է առանց հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց սահմանելու:

221. Այն դեպքում, եթե ուսումնասիրություն սկսելու ամսաթվին անմիջապես նախորդող 2 օրացուցային տարիների ընթացքում սույն Արձանագրության 186-րդ կետում նշված դիմումին կողմ արտահայտված մեկ արտադրողին (հաշվի առնելով վերջինիս՝ Պայմանագրի XIII բաժնի իմաստով անձանց խմբի մեջ մտնելը) բաժին է ընկնում Միության մաքսային տարածքում նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական միջոցի կիրառմանը նախորդող ուսումնասիրության անցկացման դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառմանը նախորդող ուսումնասիրության անցկացման դեպքում) արտադրության այնպիսի մաս, որի դեպքում Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ մրցակցության վիճակը գնահատելու մեթոդաբանությանը համապատասխան, տվյալ արտադրողի դիրքը (հաշվի առնելով նրա՝ անձանց խմբի մեջ մտնելը) Միության համապատասխան ապրանքային շուկայում կարող է ճանաչվել գերիշխող, ապա Հանձնաժողովի՝ միջսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնները պահպանելու նկատմամբ վերահսկողության ոլորտում լիազորված կառուցվածքային ստորաբաժանումը, ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցման հիման վրա, անցկացնում է հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի՝ Միության համապատասխան ապրանքային շուկայում մրցակցության վրա ունեցած ազդեցության հետևանքների գնահատում:

3. Հակագնագցման ուսումնասիրությունն իրականացնելու առանձնահատկությունները

222. Հակագնագցման ուսումնասիրությունը դադարեցվում է առանց հակագնագցման միջոց սահմանելու, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է, որ գնագցման չափը նվազագույն թույլատրելի գնագցման չափից պակաս է, կամ իրականացված կամ հնարավոր գնագցող ներմուծման ծավալը կամ այդպիսի ներմուծմամբ պայմանավորված նյութական վնասի չափը կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգը կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցումն աննշան է:

Ընդ որում, նվազագույն թույլատրելի գնագցման չափ ասելով՝ ենթադրվում է գնագցման այն չափը, որը չի գերազանցում 2 տոկոսը:

223. Որոշակի արտահանող երրորդ երկրից գնագցող ներմուծման ծավալն աննշան է, եթե այն Միության մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 3 տոկոսից պակաս է՝ պայմանով, որ այն արտահանող երրորդ երկրներին, որոնցից յուրաքանչյուրի առանձին մասնաբաժինը Միության մաքսային տարածք

ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ 3 տոկոսից պակաս է, հանրագումարային բաժին է ընկնում Միության մաքսային տարածք ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 7 տոկոսից ոչ ավելին:

224. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան հակագնագցման ուսումնասիրության արդյունքներով որոշում կայացնելը, շահագրգիռ անձանց տեղեկացնում է ուսումնասիրության արդյունքների հիման վրա արված հիմնական եզրակացությունների մասին՝ հաշվի առնելով տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունը, և նրանց՝ իրենց մեկնաբանությունները ներկայացնելու հնարավորություն է ընձեռում:

Շահագրգիռ անձանց մեկնաբանություններ ներկայացնելու ժամկետը սահմանվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, սակայն չի կարող 15 օրացուցային օրվանից պակաս լինել:

4. Փոխհատուցման ուսումնասիրությունն իրականացնելու առանձնահատկությունները

225. Դիմումը քննելու համար ընդունելուց հետո և, նախքան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման ընդունումը, ուսումնասիրություն իրականացնող մարմինը պետք է առաջարկի արտահանող այն երրորդ երկրի լիազոր մարմնին, որտեղից արտահանվում է այն ապրանքը, որի նկատմամբ առաջարկվում է սահմանել փոխհատուցման միջոց, անցկացնել խորհրդակցություններ՝ ենթադրվող հատուկ սուբսիդիայի առկայության, չափի ու տրամադրման հետևանքների հետ կապված իրադրությունը ճշտելու և փոխադարձաբար ընդունելի որոշում կայացնելու նպատակով:

Այդ խորհրդակցությունները կարող են շարունակվել նաև ուսումնասիրության ընթացքում:

226. Սույն Արձանագրության 225-րդ կետում նշված խորհրդակցությունների անցկացումը չի խոչընդոտում ուսումնասիրությունն սկսելու և փոխհատուցման միջոցը կիրառելու մասին որոշումն ընդունելը:

227. Փոխհատուցման ուսումնասիրությունը դադարեցվում է առանց փոխհատուցման միջոց սահմանելու, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է, որ արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիայի չափը նվազագույն է, կամ իրականացված կամ հնարավոր սուբսիդավորվող ներմուծման ծավալը կամ այդպիսի ներմուծմամբ պայմանավորված՝ անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի չափը կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգը կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցումն աննշան են:

228. Հատուկ սուբսիդիայի չափը համարվում է նվազագույն, եթե այն ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի արժեքի 1 տոկոսից պակաս է:

Սուբսիդավորվող ներմուծման ծավալը, որպես կանոն, համարվում է աննշան, եթե այն Միության մաքսային տարածք նույնանման ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 1 տոկոսից պակաս է՝ պայմանով, որ այն արտահանող երրորդ երկրներին, որոնցից յուրաքանչյուրի առանձին մասնաբաժինը Միության մաքսային տարածք նույնանման ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ 1 տոկոսից պակաս է, հանրագումարային բաժին է ընկնում Միության մաքսային տարածք նույնանման ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 3 տոկոսից ոչ ավելին:

229. Սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող և Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող զարգացող կամ առավել թույլ զարգացած երկրից ծագող ապրանքի մասով փոխհատուցման ուսումնասիրությունը դադարեցվում է այն դեպքում, եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշում է, որ այդ ապրանքի մասով տրամադրված արտահանող երրորդ երկրի հատուկ սուբսիդիաների ընդհանուր չափը չի գերազանցում դրա արժեքի 2 տոկոսը՝ ապրանքի մեկ միավորի հաշվով, կամ այդպիսի երրորդ երկրից այդ ապրանքի ներմուծման մասնաբաժինը Միության մաքսային տարածք այդ ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի մեջ 4 տոկոսից պակաս է՝ պայմանով, որ Միության մաքսային տարածք զարգացող և առավել թույլ զարգացած այն երկրներից այդպիսի ապրանքի ներմուծման ծավալի մեջ ընդհանուր մասնաբաժինը, որոնցից յուրաքանչյուրին բաժին ընկնող մասը Միության մաքսային տարածք այդ ապրանքի ներմուծման

ընդհանուր ծավալի 4 տոկոսից պակաս է, չի գերազանցում Միության մաքսային տարածք այդպիսի ապրանքի ներմուծման ընդհանուր ծավալի 9 տոկոսը:

230. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը, նախքան փոխհատուցման ուսումնասիրության արդյունքներով որոշում կայացնելը, բոլոր շահագրգիռ անձանց տեղեկացնում է ուսումնասիրության ընթացքում արված հիմնական եզրակացությունների մասին՝ հաշվի առնելով տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունը, և նրանց մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն է ընձեռում:

Շահագրգիռ անձանց մեկնաբանություններ ներկայացնելու ժամկետը սահմանվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից, սակայն չի կարող 15 օրացուցային օրվանից պակաս լինել:

5. Գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման դեպքում անդամ պետությունների տնտեսության ճյուղը որոշելու առանձնահատկությունները

231. Հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն իրականացնելիս «անդամ պետությունների տնտեսության ճյուղ» հասկացությունն օգտագործվում է Պայմանագրի 49-րդ հոդվածով սահմանված իմաստով՝ բացառությամբ սույն Արձանագրության 232-րդ և 233-րդ կետերում նշված դեպքերի:

232. Այն դեպքում, եթե անդամ պետություններում նույնանման ապրանքն արտադրողները միևնույն ժամանակ ենթադրաբար գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքը ներմուծողներն են կամ փոխկապակցված են ենթադրաբար գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքն արտահանողների կամ ներմուծողների հետ, ապա անդամ պետությունների տնտեսության ճյուղ ասելով պետք է հասկանալ միայն անդամ պետություններում նույնանման ապրանքի մնացած արտադրողներին:

Անդամ պետություններում նույնանման ապրանքն արտադրողները դիտարկվում են որպես փոխկապակցված՝ ենթադրաբար գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքն արտահանողների կամ ներմուծողների հետ այն դեպքում, եթե՝

նույնանման ապրանքի առանձին արտադրողներն անդամ պետություններում ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողներին կամ ներմուծողներին.

ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի առանձին արտահանողները կամ ներմուծողներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են անդամ պետություններում նույնանման ապրանքն արտադրողներին.

նույնանման ապրանքի առանձին արտադրողներն անդամ պետություններում և ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողները կամ ներմուծողներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են երրորդ անձի կողմից.

նույնանման ապրանքի առանձին արտադրողներն անդամ պետություններում և ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի օտարերկրյա արտադրողները, արտահանողները կամ ներմուծողներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են երրորդ անձին՝ պայմանով, որ ուսումնասիրություն իրականացնող մարմինը հիմքեր ունի ենթադրելու, որ այդպիսի փոխկապակցվածությամբ է պայմանավորված այդ արտադրողների՝ չփոխկապակցված անձանցից տարբերվող վարքագիծը:

233. Բացառիկ դեպքերում, անդամ պետությունների տնտեսության ճյուղը որոշելիս այդ պետությունների տարածքը կարող է դիտարկվել որպես տարածք, որտեղ գործում են 2 կամ ավելի՝ տարածքային առումով առանձնացված մրցակցող շուկաներ, իսկ անդամ պետություններում արտադրողները՝ նշված շուկաներից մեկի սահմաններում կարող են դիտարկվել որպես անդամ պետությունների տնտեսության առանձին ճյուղ, եթե այդ արտադրողներն այդպիսի շուկայում սպառման կամ վերամշակման նպատակով վաճառում են իրենց կողմից արտադրվող նույնանման ապրանքի առնվազն 80 տոկոսը, և նույնանման ապրանքի պահանջարկն այսպիսի շուկայում զգալի չափով չի բավարարվում այդ ապրանքի այն արտադրողների կողմից, որոնք գտնվում են անդամ պետությունների մնացած տարածքում:

Այդպիսի դեպքերում գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման հետևանքով անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի, այդպիսի վնաս հասցնելու

վտանգի առկայությունը կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցումը կարող է հաստատվել նույնիսկ այն դեպքում, եթե անդամ պետությունների տնտեսության ճյուղի հիմնական մասին վնաս չի հասցվել՝ պայմանով, որ գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի վաճառքը կենտրոնացված է նշված մրցակցող շուկաներից մեկում, և գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման հետևանքով վնաս է հասցվում նույնանման ապրանքի բոլոր կամ գրեթե բոլոր արտադրողներին անդամ պետություններում՝ այդպիսի մեկ շուկայի սահմաններում:

234. Եթե «անդամ պետությունների տնտեսության ճյուղ» հասկացությունն օգտագործվում է սույն Արձանագրության 233-րդ կետով սահմանված իմաստով, և ուսումնասիրության արդյունքներով հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին որոշում է կայացվում, ապա այդ միջոցը կարող է կիրառվել Միության մաքսային տարածք ապրանքի ներմուծման ամբողջ ծավալի նկատմամբ:

Նշված դեպքում հակագնագցման կամ փոխհատուցման տուրքը սահմանվում է միայն այն բանից հետո, երբ ուսումնասիրություն իրականացնող մարմինն ապրանքն արտահանողներին հնարավորություն է ընձեռում դադարեցնելու տվյալ տարածք այդպիսի ապրանքի արտահանումը գնագցող գներով (գնագցող ներմուծման դեպքում) կամ սուբսիդավորվող գներով (սուբսիդավորվող ներմուծման դեպքում) կամ ստանձնելու Միության մաքսային տարածք արտահանման պայմանների մասով համապատասխան պարտավորություններ՝ պայմանով, որ այդ հնարավորությունն արտահանողների կողմից չի օգտագործվել:

6. Հանրային լսումները

235. Ուսումնասիրության ցանկացած մասնակցի կողմից գրավոր և սույն Արձանագրությամբ սահմանված ժամկետում ներկայացված միջնորդության հիման վրա ուսումնասիրություն իրականացնող մարմինն ապահովում է հանրային լսումների անցկացում:

236. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը պարտավոր է ուսումնասիրության մասնակիցներին ուղարկել ծանուցում հանրային լսումների անցկացման ժամի և վայրի մասին, ինչպես նաև հանրային լսումների անցկացման ընթացքում քննարկվող հարցերի ցանկը:

Հանրային լսումների անցկացման ամսաթիվը նշանակվում է ոչ շուտ, քան համապատասխան ծանուցումն ուղարկելու ամսաթվից սկսած 15 օրացուցային օր հետո:

237. Հանրային լսումներին իրավունք ունեն մասնակցելու ուսումնասիրության մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև այն անձինք, որոնք ներգրավվել են մասնակիցների կողմից՝ ուսումնասիրությանն առնչվող, իրենց մոտ եղած տեղեկությունները ներկայացնելու նպատակով:

Հանրային լսումների ընթացքում ուսումնասիրության մասնակիցները կարող են հայտնել իրենց կարծիքը և ներկայացնել ուսումնասիրությանն առնչվող ապացույցներ: Ուսումնասիրություն իրականացնող մարմնի ներկայացուցիչն իրավունք ունի հանրային լսումների մասնակիցներին՝ նրանց կողմից ներկայացվող փաստերի էությանը վերաբերող հարցեր հղելու: Ուսումնասիրության մասնակիցները նաև իրավունք ունեն հարցեր հղելու միմյանց և պարտավոր են պատասխանել այդ հարցերին: Հանրային լսումների մասնակիցները պարտավոր չեն բացահայտել գաղտնի համարվող տեղեկությունները:

238. Հանրային լսումների ընթացքում բանավոր ներկայացված տեղեկությունները հաշվի են առնվում ուսումնասիրության ընթացքում, եթե դրանք ուսումնասիրության մասնակիցների կողմից գրավոր ներկայացվել են ուսումնասիրություն իրականացնող մարմին՝ հանրային լսումներ անցկացնելու ամսաթվից հետո 15 օրացուցային օրվա ընթացքում:

7. Ուսումնասիրության ընթացքում տեղեկություններ հավաքելը

239. Հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն սկսելու մասին որոշում ընդունելուց հետո ուսումնասիրություն իրականացնող մարմինը ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի՝ իրեն հայտնի արտահանողներին և (կամ) արտադրողներին ուղարկում է այն հարցերի ցանկը, որոնց նրանք պետք է պատասխանեն:

Հարցերի ցանկն ուղարկվում է նաև նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքը (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն անցկացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքն արտադրողներին (հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն անցկացնելու դեպքում) անդամ պետություններում:

Հարցերի ցանկն անհրաժեշտության դեպքում կարող է ուղարկվել նաև ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքը ներմուծողներին և սպառողներին:

240. Սույն Արձանագրության 239-րդ կետում նշված անձինք, որոնց ուղարկվել է հարցերի ցանկը, պարտավոր են նշված ցանկն ստանալու ամսաթվից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում իրենց պատասխանները ներկայացնել ուսումնասիրություն իրականացնող մարմին:

Սույն Արձանագրության 239-րդ կետում նշված անձանց՝ հիմնավորված և գրավոր շարադրված խնդրանքի հիման վրա, տվյալ ժամկետը կարող է երկարաձգվել ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից առավելագույնը 14 օրացուցային օրով:

241. Հարցերի ցանկը համարվում է արտահանողի և (կամ) արտադրողի կողմից ստացված՝ այն արտահանողի և (կամ) արտադրողի ներկայացուցչին անմիջապես փոխանցելու ամսաթվից կամ այն փոստով ուղարկելու ամսաթվից 7 օրացուցային օր հետո:

Ցանկում ներառված հարցերի պատասխանները համարվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ստացված, եթե դրանք՝ գաղտնի և ոչ գաղտնի տարբերակներով, ուսումնասիրություն իրականացնող մարմին մուտք են եղել սույն Արձանագրության 240-րդ կետում նշված 30-օրյա ժամկետը լրանալու ամսաթվից կամ երկարաձգված ժամկետը լրանալու ամսաթվից հետո 7 օրացուցային օրվանից ոչ ուշ:

242. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը հավաստիանում է, որ ուսումնասիրության ընթացքում շահագրգիռ անձանց կողմից ներկայացված տեղեկությունները ճշգրիտ և արժանահավատ են:

Ուսումնասիրության ընթացքում ներկայացված տեղեկություններն ստուգելու կամ անցկացվող ուսումնասիրության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով ուսումնասիրություն իրականացնող մարմինը, անհրաժեշտության դեպքում, կարող է ստուգում անցկացնել՝

երրորդ երկրի տարածքում՝ պայմանով, որ ստանում է ուսումնասիրության առարկան հանդիսացող ապրանքի համապատասխան օտարերկրյա արտահանողների և (կամ) արտադրողների համաձայնությունը, և որ նախատեսվող ստուգման մասին պաշտոնապես ծանուցված երրորդ երկրի կողմից չկան առարկություններ.

անդամ պետության տարածքում՝ պայմանով, որ ստանում է ուսումնասիրության առարկան հանդիսացող ապրանքի համապատասխան ներմուծողների և (կամ) նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքն արտադրողների համաձայնությունը:

Ստուգումն իրականացվում է սույն Արձանագրության 239-րդ կետին համապատասխան ուղարկված հարցերի ցանկերի պատասխաններն ստանալուց հետո՝ բացառությամբ այն դեպքերի, եթե օտարերկրյա արտադրողը կամ արտահանողը կամավոր համաձայնում է ստուգում անցկացնելուն՝ նախքան այդպիսի պատասխաններ ուղարկելը և համապատասխան երրորդ երկրի կողմից առարկություն չլինելու դեպքում:

Ուսումնասիրության համապատասխան մասնակիցների համաձայնությունն ստանալուց հետո և նախքան ստուգումն սկսելը՝ նրանց է ուղարկվում այն փաստաթղթերի և նյութերի ցանկը, որոնք պետք է ներկայացվեն ստուգում անցկացնելու համար նշանակված աշխատակիցներին: Ուսումնասիրություն իրականացնող մարմինը ծանուցում է երրորդ երկրին օտարերկրյա այն արտահանողների կամ արտադրողների հասցեների և անվանումների մասին, որոնց նախատեսվում է ստուգել, ինչպես նաև այդ ստուգումներն անցկացնելու ամսաթվերի մասին:

Ստուգման ընթացքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր և նյութեր, որոնք անհրաժեշտ են հարցերի ցանկի պատասխաններում ներկայացված տեղեկությունների արժանահավատությունը հաստատելու համար:

Եթե ստուգումն անցկացնելու ընթացքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը մտադրվում է այդ ստուգման նպատակով ներգրավել տվյալ մարմնի աշխատակիցներ չհանդիսացող փորձագետների, ապա ուսումնասիրության այն մասնակիցները, որոնց նկատմամբ նախատեսվում է իրականացնել ստուգման աշխատանքները, պետք է նախապես ծանուցվեն ուսումնասիրություն իրականացնող մարմնի այդ որոշման մասին: Այդպիսի

փորձագետների մասնակցությունն ստուգմանը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե առկա է ստուգմանն առնչվող ստացված տեղեկությունների գաղտնիությունը նրանց կողմից խախտելու համար պատժամիջոցներ կիրառելու հնարավորություն:

243. Ուսումնասիրության ընթացքում ներկայացված տեղեկություններն ստուգելու կամ իրականացվող ուսումնասիրության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով ուսումնասիրություն իրականացնող մարմինն իրավունք ունի իր ներկայացուցիչներին ուղարկելու շահագրգիռ անձանց գտնվելու վայր, հավաքելու տեղեկություններ, անցկացնելու խորհրդակցություններ և բանակցություններ շահագրգիռ անձանց հետ, ծանոթանալու ապրանքի նմուշների հետ և կատարելու ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

8. Անդամ պետությունների լիազոր մարմինների, անդամ պետությունների դիվանագիտական և առևտրային ներկայացուցչությունների կողմից տեղեկությունների տրամադրումը

244. Սույն ենթաբաժնի նպատակով «անդամ պետությունների լիազոր մարմիններ» ասելով պետք է հասկանալ անդամ պետությունների պետական իշխանության (կառավարման) մարմինները և պետական իշխանության (կառավարման) տարածքային (տեղական) մարմինները, որոնք լիազորված են մաքսային գործի, վիճակագրության, հարկման, իրավաբանական անձանց գրանցման և այլ ոլորտներում:

245. Անդամ պետությունների լիազոր մարմինները, անդամ պետությունների դիվանագիտական և առևտրային ներկայացուցչությունները երրորդ երկրներում ուսումնասիրություն իրականացնող մարմնին վերջինիս հարցմամբ տրամադրում են սույն Արձանագրությամբ նախատեսված բոլոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման ուսումնասիրությունները (այդ թվում՝ կրկնակի ուսումնասիրությունները) սկսելու և անցկացնելու, անցկացված ուսումնասիրությունների արդյունքներով առաջարկներ նախապատրաստելու, հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման սահմանված միջոցների արդյունավետության մոնիթորինգ և Հանձնաժողովի կողմից հավանության արժանացած պարտավորությունները կատարելու նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

246. Անդամ պետությունների լիազոր մարմինները, երրորդ երկրներում անդամ պետությունների դիվանագիտական և առևտրային ներկայացուցչությունները պարտավոր են՝

1) ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցումն ստանալու պահից 30 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել իրենց տրամադրության տակ եղած տեղեկությունները կամ նախազգուշացնել տեղեկությունները տրամադրելու անհնարինության մասին՝ նշելով մերժելու պատճառը: Ուսումնասիրություն իրականացնող մարմնի հիմնավորված խնդրանքով պահանջվող տեղեկությունները պետք է տրամադրվեն ավելի կարճ ժամկետներում.

2) ապահովել տրամադրվող տեղեկությունների ամբողջականությունն ու արժանահավատությունը և անհրաժեշտության դեպքում օպերատիվ կերպով ներկայացնել համապատասխան լրացումներ և փոփոխություններ:

247. Անդամ պետությունների լիազոր մարմինները, երրորդ երկրներում անդամ պետությունների դիվանագիտական և առևտրային ներկայացուցչություններն իրենց իրավասության շրջանակներում ուսումնասիրություն իրականացնող մարմնին տրամադրում են տեղեկություններ՝ ըստ հարցվող ժամանակահատվածների՝ ներառյալ

1) արտաքին առևտրի մասին վիճակագրական տվյալները,

2) ապրանքների մասին հայտարարագրերի տվյալները՝ մաքսային ընթացակարգերի բացվածքով՝ նշելով ապրանքի ներմուծման (արտահանման) բնաիրային և արժեքային ցուցանիշները, ապրանքի առևտրային անվանումը, մատակարարման պայմանները, ծագման երկիրը (ուղարկող երկիրը, նշանակման երկիրը), ուղարկողի և ստացողի անվանումներն ու հաշվառման այլ վավերապայմաններ,

3) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ներքին շուկայի և անդամ պետությունների տնտեսության համապատասխան ճյուղի մասին տեղեկությունները (այդ թվում՝ տվյալներ՝ ապրանքի արտադրության ծավալների, արտադրական հզորությունների օգտագործման, ապրանքի իրացման, ապրանքի ինքնարժեքի, անդամ պետությունների

ազգային ձեռնարկությունների շահույթների ու կորուստների, անդամ պետությունների ներքին շուկայում ապրանքի գների, արտադրության եկամտաբերության, անձնակազմի թվի, ներդրումների, ապրանքն արտադրողների ցանկի մասին),

4) անդամ պետությունների՝ ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի շուկայի համապատասխան ուսումնասիրության արդյունքներով հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցը սահմանելու կամ չսահմանելու հնարավորության հետևանքների գնահատման մասին տեղեկությունները, ինչպես նաև անդամ պետությունների ազգային ձեռնարկությունների արտադրական գործունեության կանխատեսումը:

248. Սույն Արձանագրության 247-րդ կետում նշված տեղեկությունների ցանկն ամբողջական չէ: Անհրաժեշտության դեպքում, ուսումնասիրություն իրականացնող մարմինն իրավունք ունի ներկայացնելու այլ տեղեկություններ ստանալու հարցում:

249. Սույն ենթաբաժնի կատարման հարցերով գրագրությունը և ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցումներով տեղեկությունների տրամադրումն իրականացվում են ռուսերենով: Օտարերկրյա անվանումներ պարունակող առանձին վավերապայմանների (ցուցանիշների) դեպքում թույլատրվում է փոխանցել տեղեկությունները՝ գործածելով լատինական այբուբենի տառերը:

250. Տեղեկությունների տրամադրումն իրականացվում է առավելապես էլեկտրոնային կրիչների միջոցով: Տեղեկություններն էլեկտրոնային կրիչով տրամադրելու հնարավորության բացակայության դեպքում դրանք փոխանցվում են թղթային կրիչով: Այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ է ներկայացնել աղյուսակով (վիճակագրական և մաքսային տեղեկություններ), տրամադրվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցման մեջ նշված ձևաչափով: Այն դեպքում, եթե այդպիսի ձևաչափով տեղեկությունների տրամադրումը հնարավոր չէ, անդամ պետությունների լիազոր մարմինները, երրորդ երկրներում անդամ պետությունների դիվանագիտական և առևտրային ներկայացուցչությունները դրա մասին ծանուցում են ուսումնասիրություն իրականացնող մարմնին և հարցվող տեղեկությունները ներկայացնում այլ ձևաչափով:

251. Անդամ պետությունների լիազոր մարմիններ, երրորդ երկրներում անդամ պետությունների դիվանագիտական և առևտրային ներկայացուցչություններ ներկայացվող տեղեկություններ տրամադրելու մասին հարցումները գրավոր ձևակերպվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի ձևաթղթի վրա՝ նշելով տեղեկությունների տրամադրման նպատակը, իրավական հիմքերն ու տրամադրման ժամկետը, և ստորագրվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) կողմից:

252. Ուսումնասիրություն իրականացնող մարմնի հարցումներով տեղեկություններն անհատույց տրամադրվում են անդամ պետությունների լիազոր մարմինների, երրորդ երկրներում անդամ պետությունների դիվանագիտական և առևտրային ներկայացուցչությունների կողմից:

253. Տեղեկությունների փոխանցումն իրականացվում է տեղեկությունները փոխանակող մարմինների միջև համաձայնեցված այն միջոցների օգտագործմամբ, որոնք հասանելի են փոխանցման պահին և ապահովում են տեղեկությունների պահպանվածությունն ու պաշտպանությունը՝ դրանց չթույլատրված հասանելիությունից: Տեղեկությունները ֆաքսիմիլային կապի միջոցով ուղարկելու դեպքում փաստաթղթի բնօրինակը նույնպես պետք է ուղարկվի փոստային կապի միջոցով:

9. Գաղտնի տեղեկությունները

254. Այն տեղեկությունները, որոնք անդամ պետության օրենսդրությամբ համարվում են գաղտնի տեղեկություններ (ներառյալ առևտրային, հարկային և այլ գաղտնի տեղեկություններ)՝ բացառությամբ պետական գաղտնիքի (պետական գաղտնիքների) կամ տարածման սահմանափակում ունեցող ծառայողական տեղեկությունների, ներկայացվում են ուսումնասիրություն իրականացնող մարմին՝ անդամ պետության օրենսդրությամբ այդպիսի տեղեկությունների մասով սահմանված պահանջների պահպանմամբ:

Ուսումնասիրություն իրականացնող մարմինն ապահովում է այդպիսի տեղեկությունների պաշտպանության անհրաժեշտ մակարդակը:

255. Շահագրգիռ անձի կողմից ուսումնասիրություն իրականացնող մարմին ներկայացվող տեղեկությունները քննվում են որպես գաղտնի տեղեկություններ այն դեպքում, եթե այդ անձը ներկայացնում է հիմնավորումներ, որոնք վկայում են նաև այն մասին, որ այդ տեղեկությունների բացահայտումը մրցակցային առավելություն կտա երրորդ անձին կամ կհանգեցնի անբարենպաստ հետևանքների այդպիսի տեղեկություններ տրամադրած անձի կամ այն անձի համար, որից նա ստացել է այդպիսի տեղեկություններ:

256. Գաղտնի տեղեկություններ ներկայացնող շահագրգիռ անձինք պարտավոր են դրանց հետ միասին տրամադրել այդ տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը:

Ոչ գաղտնի տարբերակը պետք է լինի բավարար չափով մանրամասն՝ գաղտնի տարբերակով ներկայացված տեղեկությունների էությունը հասկանալու համար:

Բացառիկ դեպքերում, երբ շահագրգիռ անձը չի կարող տրամադրել գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը, ապա նա պետք է ներկայացնի հիմնավորում՝ մանրամասն նշելով այն պատճառները, որոնց հիման վրա ոչ գաղտնի տարբերակի տրամադրումը հնարավոր չէ:

257. Եթե ուսումնասիրություն իրականացնող մարմինը որոշի, որ շահագրգիռ անձի կողմից ներկայացված հիմնավորումներով հնարավոր չէ ներկայացված տեղեկությունները որակել որպես գաղտնի տեղեկություններ, կամ եթե գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը չներկայացրած շահագրգիռ անձը չի ներկայացնում գաղտնի տեղեկությունները ոչ գաղտնի տարբերակով ներկայացնելու անհնարինության հիմնավորում կամ ներկայացնում է այդպիսի հիմնավորում չհանդիսացող տեղեկություններ, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինը կարող է հաշվի չառնել այդ տեղեկությունները:

258. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը պարտավոր է չհրապարակել և երրորդ անձանց չփոխանցել գաղտնի տեղեկությունները՝ առանց այդպիսի տեղեկություններ տրամադրած շահագրգիռ անձի կամ սույն Արձանագրության 244-րդ կետում նշված անդամ պետությունների լիազոր մարմինների և երրորդ երկրներում անդամ պետությունների դիվանագիտական ու առևտրային ներկայացուցչությունների գրավոր համաձայնության:

Դիմումատուների, ուսումնասիրության մասնակիցների, շահագրգիռ անձանց կամ սույն Արձանագրության 244-րդ կետում նշված անդամ պետությունների լիազոր մարմինների և երրորդ երկրներում անդամ պետությունների դիվանագիտական ու առևտրային ներկայացուցչությունների կողմից ուսումնասիրությունն իրականացնելու նպատակով ուսումնասիրություն իրականացնող մարմին ներկայացված գաղտնի տեղեկությունները հրապարակելու, անձնական օգուտ ստանալու, դրանք այլ ոչ նպատակային օգտագործելու համար ուսումնասիրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձինք և աշխատակիցները կարող են զրկվել Միության շրջանակներում արտոնությունների և անձեռնմխելիության մասին միջազգային պայմանագրով նախատեսված արտոնություններից և անձեռնմխելիությունից ու Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով ենթարկվել պատասխանատվության:

Սույն Արձանագրությունը խոչընդոտ չէ, որպեսզի ուսումնասիրություն իրականացնող մարմինը բացահայտի այնպիսի տեղեկություններ, որոնք պարունակում են Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման հիմքում ընկած պատճառները կամ այն ապացույցները, որոնց վրա Հանձնաժողովը հիմնվել է այնքանով, որքանով դա անհրաժեշտ է՝ այդ պատճառները կամ ապացույցները Միության դատարանում պարզաբանելու համար:

Ուսումնասիրություն իրականացնող մարմնում գաղտնի տեղեկությունների օգտագործման և պաշտպանության կարգը հաստատվում է Հանձնաժողովի կողմից:

10. Շահագրգիռ անձինք

259. Ուսումնասիրության իրականացման ընթացքում շահագրգիռ անձինք են համարվում՝

1) նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) արտադրողներն անդամ պետություններում.

2) անդամ պետություններում արտադրողների միությունները, որոնց մասնակիցների մեծամասնությունը նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) արտադրողներ են.

3) արտադրողների միությունները, որոնց մասնակիցներն իրականացնում են նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքի (հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն իրականացնելու դեպքում) արտադրության ընդհանուր ծավալի ավելի, քան 25 տոկոսի արտադրությունը անդամ պետություններում.

4) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողը, օտարերկրյա արտադրողը կամ ներմուծողը և ապրանքների օտարերկրյա արտադրողների, արտահանողների կամ ներմուծողների միությունը, որի մասնակիցների զգալի մասն արտահանող երրորդ երկրից կամ ապրանքի ծագման երկրից տվյալ ապրանքի արտադրողներ, արտահանողներ կամ ներմուծողներ են.

5) արտահանող երրորդ երկրի կամ ապրանքի ծագման երկրի լիազոր մարմինը.

6) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն սպառողները, եթե նրանք օգտագործում են այդ ապրանքն արտադրանքի արտադրության մեջ և այդպիսի սպառողների միավորումները՝ անդամ պետություններում.

7) սպառողների հասարակական միավորումները (եթե ապրանքն առավելապես ֆիզիկական անձանց կողմից սպառման առարկա է):

260. Ուսումնասիրության ընթացքում շահագրգիռ անձինք գործում են ինքնուրույն կամ իրենց այն ներկայացուցիչների միջոցով, որոնք ունեն պատշաճորեն ձևակերպված լիազորություններ:

Եթե շահագրգիռ անձն ուսումնասիրության ընթացքում գործում է լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա ուսումնասիրություն իրականացնող մարմինն ուսումնասիրության առարկայի մասին բոլոր տեղեկությունները շահագրգիռ անձին փոխանցում է միայն այդ ներկայացուցչի միջոցով:

11. Ուսումնասիրության հետ կապված ընդունվող որոշումների մասին ծանուցումները

261. Ուսումնասիրություն իրականացնող մարմինը համացանցում՝ Միության պաշտոնական կայքում հրապարակում է ուսումնասիրության հետ կապված ընդունվող որոշումների մասին հետևյալ ծանուցումները՝

ուսումնասիրությունն սկսելու մասին.

նախնական հատուկ, նախնական հակագնագցման կամ նախնական փոխհատուցման տուրք սահմանելու մասին.

սույն Արձանագրության 104-րդ կետին համապատասխան հակագնագցման տուրքի հնարավոր կիրառման կամ սույն Արձանագրության 169-րդ կետին համապատասխան փոխհատուցման տուրքի հնարավոր կիրառման մասին.

հատուկ պաշտպանական ուսումնասիրության ավարտի մասին.

ուսումնասիրության ավարտի մասին, որի արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգել է հակագնագցման կամ փոխհատուցման տուրք սահմանելու համար հիմքերի առկայության կամ համապատասխան պարտավորությունները հավանության արժանացնելու նպատակահարմարության մասին եզրակացությանը.

համապատասխան պարտավորությունները հավանության արժանացնելու առնչությամբ ուսումնասիրության ավարտի կամ կասեցման մասին.

ուսումնասիրության ավարտի մասին, որի արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգել է հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման տուրք սահմանելու համար հիմքերի բացակայության մասին եզրակացությանը.

ուսումնասիրության առնչությամբ ընդունվող այլ որոշումների մասին:

Այդպիսի ծանուցումներն ուղարկվում են արտահանող երրորդ երկրի լիազոր մարմին և ուսումնասիրություն իրականացնող մարմնին հայտնի այլ շահագրգիռ անձանց:

262. Ուսումնասիրություն սկսելու մասին ծանուցումը հրապարակվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ուսումնասիրությունն սկսելու մասին որոշումն ընդունվելու ամսաթվից սկսած 10 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում և պետք է պարունակի՝

1) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի ամբողջական նկարագիրը.

2) արտահանող երրորդ երկրի անվանումը.

3) Միության մաքսային տարածք ներմուծման ավելացած ծավալի առկայության և անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայության մասին վկայող փաստերի համառոտ շարադրանքը (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն սկսելու մասին որոշում ընդունելու դեպքում).

4) այն տեղեկությունների համառոտ շարադրանքը, որոնք վկայում են գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման առկայության և անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի կամ այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայության կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման մասին (հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն սկսելու մասին որոշում ընդունելու դեպքում).

5) այն հասցեն, որին շահագրգիռ անձինք կարող են ուղարկել իրենց կարծիքը և ուսումնասիրությանն առնչվող տեղեկությունները.

6) 25 օրացուցային օր տևողությամբ ժամկետը, որի ընթացքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը շահագրգիռ անձանցից ընդունում է ուսումնասիրությանը մասնակցելու մտադրության մասին դիմումները.

7) 45 օրացուցային օր տևողությամբ ժամկետը, որի ընթացքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը ուսումնասիրության մասնակիցներից ընդունում է հանրային լսումներ անցկացնելու մասին միջնորդությունները.

8) 60 օրացուցային օր տևողությամբ ժամկետը, որի ընթացքում ուսումնասիրություն իրականացնող մարմինը շահագրգիռ անձանցից ընդունում է գրավոր մեկնաբանությունները և ուսումնասիրությանն առնչվող տեղեկությունները:

263. Նախնական հատուկ, նախնական հակագնագցման կամ նախնական փոխհատուցման տուրք սահմանելու մասին ծանուցումը հրապարակվում է Հանձնաժողովի կողմից այդպիսի որոշում ընդունվելու ամսաթվից սկսած 3 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում և պետք է պարունակի նաև հետևյալ տեղեկությունները՝

1) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողի անվանումը կամ արտահանող երրորդ երկրի անվանումը (եթե արտահանողի անվանումը հնարավոր չէ տրամադրել).

2) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի՝ մաքսային հսկողություն իրականացնելու համար բավարար նկարագիրը.

3) գնագցող ներմուծման առկայության մասին դրական եզրակացության համար հիմքերը՝ նշելով գնագցման չափը և հաշվարկի մեթոդաբանությունն ընտրելու համար հիմքերի ու ապրանքի սովորական արժեքի և դրա արտահանման գնի համեմատության նկարագիրը (նախնական հակագնագցման տուրք սահմանելու դեպքում).

4) սուբսիդավորվող ներմուծման առկայության մասին դրական եզրակացության համար հիմքերը՝ սուբսիդիայի առկայության փաստի նկարագրով և ապրանքի մեկ միավորի համար սուբսիդիայի հաշվարկված չափի մասին նշումով (նախնական փոխհատուցման տուրք սահմանելու դեպքում).

5) անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ կամ նյութական վնասի, այդպիսի վնաս հասցնելու վտանգի առկայությունը կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցումը որոշելու համար հիմքերը.

6) ներմուծման ավելացած ծավալի, գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման և, համապատասխանաբար, անդամ պետությունների տնտեսության ճյուղին հասցված լուրջ կամ նյութական վնասի, այդպիսի վնաս հասցնելու վտանգի կամ անդամ պետությունների տնտեսության ճյուղի ստեղծման էական կասեցման միջև պատճառահետևանքային կապը որոշելու համար հիմքերը.

7) ներմուծման ավելացած ծավալի առկայության մասին դրական եզրակացության համար հիմքերը (նախնական հատուկ տուրք սահմանելու դեպքում):

264. Սույն Արձանագրության 104-րդ կետին համապատասխան՝ հակագնագցման տուրքի հնարավոր կիրառման մասին ծանուցումը կամ սույն Արձանագրության 169-րդ կետին համապատասխան փոխհատուցման տուրքի հնարավոր կիրառման մասին ծանուցումը պետք է պարունակի՝

1) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքի՝ մաքսային հսկողություն իրականացնելու համար բավարար նկարագիրը.

2) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողի անվանումը, կամ արտահանող երրորդ երկրի անվանումը (եթե արտահանողի անվանումը հնարավոր չէ տրամադրել).

3) սույն Արձանագրության 104-րդ կամ 169-րդ կետերում նշված պայմանների կատարումը վկայող տեղեկությունների համառոտ շարադրանքը:

265. Հատուկ պաշտպանական ուսումնասիրության ավարտի մասին ծանուցումը հրապարակվում է ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից ուսումնասիրության ավարտի ամսաթվից սկսած 3 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում և պետք է պարունակի ուսումնասիրություն իրականացնող մարմնի կողմից՝ իր տրամադրության տակ եղած տեղեկությունների վերլուծության հիման վրա արված հիմնական եզրակացությունները:

266. Ուսումնասիրությունն ավարտվելու մասին ծանուցումը, որի արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգել է հակագնագցման կամ փոխհատուցման տուրք սահմանելու համար հիմքերի առկայության կամ համապատասխան պարտավորությունները հավանության արժանացնելու նպատակահարմարության մասին եզրակացությանը, հրապարակվում է ուսումնասիրությունն ավարտվելու ամսաթվից սկսած 3 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում և պետք է պարունակի՝

1) ուսումնասիրություն իրականացնող մարմնի վերջնական եզրակացության պարզաբանումը՝ ուսումնասիրության արդյունքների մասին.

2) այն փաստերի մատնանշումը, որոնց հիման վրա արվել է այդպիսի եզրակացություն.

3) սույն Արձանագրության 263-րդ կետում նշված տեղեկությունները.

4) ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն արտահանողների և ներմուծողների փաստարկներն ու պահանջներն ուսումնասիրության ընթացքում ընդունելու կամ չընդունելու պատճառների մատնանշումը.

5) որոշումներ ընդունելու պատճառների մատնանշումը՝ սույն Արձանագրության 48- 51-րդ կետերին համապատասխան:

267. Համապատասխան պարտավորությունները հավանության արժանացնելու առնչությամբ ուսումնասիրությունն ավարտվելու կամ կասեցվելու մասին ծանուցումը հրապարակվում է ուսումնասիրությունն ավարտվելու կամ կասեցվելու ամսաթվից սկսած 3 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում և պետք է պարունակի այդ պարտավորությունների ոչ գաղտնի տարբերակը:

268. Ուսումնասիրությունն ավարտվելու մասին ծանուցումը, որի արդյունքներով ուսումնասիրություն իրականացնող մարմինը հանգել է հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց սահմանելու համար հիմքերի բացակայության մասին եզրակացությանը, հրապարակվում է ուսումնասիրությունն ավարտվելու ամսաթվից սկսած 3 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում և պետք է պարունակի՝

1) ուսումնասիրություն իրականացնող մարմնի վերջնական եզրակացության պարզաբանումը՝ ուսումնասիրության արդյունքների մասին.

2) այն փաստերի մատնանշումը, որոնց հիման վրա արվել է սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված եզրակացությունը:

269. Ուսումնասիրությունն ավարտվելու մասին ծանուցումը, որի արդյունքներով սույն Արձանագրության 272-րդ կետին համապատասխան՝ կայացվել է միջոց չկիրառելու մասին որոշում, հրապարակվում է այդ որոշումը կայացնելու ամսաթվից սկսած 3 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում և պետք է պարունակի հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց չկիրառելու մասին Հանձնաժողովի կողմից որոշում կայացվելու պատճառների պարզաբանումը՝ նշելով այն փաստերն ու եզրակացությունները, որոնց հիման վրա կայացվել է այդ որոշումը:

270. Ուսումնասիրություն իրականացնող մարմինն ապահովում է իրականացվող ուսումնասիրությունների և կիրառվող միջոցների մասով՝ «Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման» մասին 1994 թվականի ապրիլի 15-ի Մարաքեշի համաձայնագրով նախատեսված բոլոր ծանուցումները սահմանված կարգով Առևտրի համաշխարհային կազմակերպության իրավասու մարմիններ ուղարկելը:

271. Սույն Արձանագրության 261-270-րդ կետերի դրույթները, հաշվի առնելով համապատասխան տարբերությունները, կիրառվում են կրկնակի ուսումնասիրություններ սկսելու և ավարտելու մասին ծանուցումների նկատմամբ:

VII. Հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոց չկիրառելը

272. Հանձնաժողովը ուսումնասիրության արդյունքներով կարող է հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց չկիրառելու մասին որոշում կայացնել նույնիսկ այն դեպքում, եթե այդպիսի միջոցի կիրառումը համապատասխանում է սույն Արձանագրությամբ սահմանված չափորոշիչներին:

Նշված որոշումը կարող է ընդունվել Հանձնաժողովի կողմից այն դեպքում, եթե շահագրգիռ անձանց կողմից ներկայացված բոլոր տեղեկությունների վերլուծության արդյունքների հիման վրա ուսումնասիրություն իրականացնող մարմինը նախապատրաստել է եզրակացություն այն մասին, որ այդպիսի միջոցի կիրառումը կարող է վնաս հասցնել անդամ պետությունների շահերին: Այդ որոշումը կարող է վերանայվել այն դեպքում, եթե դա ընդունելու համար հիմք հանդիսացած պատճառները փոփոխվել են:

273. Սույն Արձանագրության 272-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված եզրակացությունը պետք է հիմնված լինի անդամ պետությունների տնտեսության ճյուղի, ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն սպառողների (եթե նրանք այդ ապրանքն օգտագործում են արտադրանք արտադրելիս), և անդամ պետություններում այդ սպառողների միավորումների, սպառողների հասարակական միավորումների (եթե ապրանքն առավելապես ֆիզիկական անձանց կողմից սպառման ենթակա առարկա է) և տվյալ ապրանքը ներմուծողների շահերի ընդհանուր գնահատման արդյունքների վրա: Ընդ որում, այդպիսի եզրակացություն կարող է արվել միայն այն բանից հետո, երբ նշված անձանց ընձեռվել է նշված հարցի շուրջ իրենց մեկնաբանությունները ներկայացնելու հնարավորություն՝ սույն Արձանագրության 274-րդ կետին համապատասխան:

Այդ եզրակացությունը նախապատրաստելիս հատուկ նշանակություն պետք է տալ անդամ պետությունների համապատասխան ապրանքային շուկայում առևտրի բնականոն ընթացքի և մրցակցության վիճակի ու անդամ պետությունների տնտեսության ճյուղի դրության վրա ներմուծման ավելացած ծավալի, գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման ունեցած խաթարող ազդեցությունը վերացնելու անհրաժեշտությանը:

274. Սույն Արձանագրության 272-րդ կետի դրույթների կիրառման նպատակով նույնանման կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքի (հատուկ պաշտպանական ուսումնասիրություն անցկացնելու դեպքում) կամ նույնանման ապրանքը (հակագնագցման կամ փոխհատուցման ուսումնասիրություն անցկացնելու դեպքում) արտադրողներն անդամ պետություններում, դրանց միությունները, ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքը ներմուծողները և ներմուծողների միությունները, ուսումնասիրության առարկա հանդիսացող ապրանքն սպառողները (եթե նրանք այդ ապրանքն օգտագործում են արտադրանք արտադրելիս) և անդամ պետություններում այդ սպառողների միավորումները, սպառողների հասարակական միավորումները (եթե ապրանքն առավելապես ֆիզիկական անձանց կողմից սպառման ենթակա առարկա է) իրավունք ունեն սույն Արձանագրության 262-րդ կետին համապատասխան հրապարակվող ծանուցման մեջ սահմանված ժամկետում ներկայացնելու իրենց մեկնաբանությունները և տեղեկությունները նշված հարցի շուրջ: Այդ մեկնաբանությունները և տեղեկությունները կամ դրանց ոչ գաղտնի տարբերակը համապատասխան դեպքերում պետք է ներկայացվեն սույն կետում նշված այլ շահագրգիռ անձանց՝ դրանց հետ ծանոթանալու նպատակով, որոնք իրավունք ունեն ներկայացնելու իրենց պատասխան մեկնաբանությունները:

Սույն կետին համապատասխան տրամադրվող տեղեկությունները պետք է հաշվի առնվեն անկախ դրանց աղբյուրից՝ դրանց հավաստիությունը հաստատող օբյեկտիվ փաստերի առկայության դեպքում:

VIII. Եզրափակիչ դրույթներ

1. Հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման մասին որոշումները դատական կարգով բողոքարկելու առանձնահատկությունները

275. Հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման հետ կապված Հանձնաժողովի որոշումները և (կամ) գործողությունները (անգործությունը) վիճարկելու մասին գործերը քննելու կարգը և առանձնահատկությունները որոշվում են Միության դատարանի կանոնադրությամբ (Պայմանագրի 2-րդ հավելված) և Միության դատարանի աշխատակարգով:

2. Միության դատարանի որոշումների կատարումը

276. Հանձնաժողովն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում հատուկ, պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառմանը վերաբերող Միության դատարանի որոշումները կատարելու համար: Միության դատարանի կողմից Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին անհամապատասխան ճանաչված Հանձնաժողովի որոշումը Հանձնաժողովի կողմից համապատասխանեցվում է Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին՝ ուսումնասիրություն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ Միության դատարանի որոշումը կատարելու համար անհրաժեշտ կրկնակի ուսումնասիրություն իրականացնելու միջոցով:

Կրկնակի ուսումնասիրություն իրականացնելիս, հաշվի առնելով համապատասխան տարբերությունները, կիրառվում են ուսումնասիրության իրականացմանն առնչվող դրույթները:

Սույն կետով նախատեսված կրկնակի ուսումնասիրություն իրականացնելու ժամկետը, որպես կանոն, չի գերազանցում 9 ամիսը:

3. Ուսումնասիրության ընթացակարգերի վարչարարությունը

277. Սույն Արձանագրության կատարման նպատակով Հանձնաժողովը որոշումներ է ընդունում ուսումնասիրություն սկսելու, իրականացնելու, ավարտելու և (կամ) կասեցնելու ընթացակարգերի վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների արդյունքում չպետք է փոփոխվեն Պայմանագրի դրույթները, կամ դրանք չպետք է հակասեն այդ դրույթներին:

Հավելված
Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների կիրառման մասին Արձանագրության

Կանոնակարգ
հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվեգրման և բաշխման մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոնակարգով սահմանվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) IX բաժնին համապատասխան սահմանված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներն անդամ պետությունների միջև հաշվեգրելու և բաշխելու կարգը: Նշված կարգը կիրառվում է նաև հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներին հավելագրված տույժերի (տոկոսների) գումարների մասով՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին համապատասխան նախատեսված դեպքերում և կարգով:

2. Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարների հաշվեգրման ու բաշխման, դրանց՝ անդամ պետությունների բյուջեներ որպես եկամուտ փոխանցման կարգի մասին» արձանագրությամբ (Պայմանագրի 5-րդ հավելված), «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման մասին» արձանագրությամբ (Պայմանագրի 8-րդ հավելված) և Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով սահմանված իմաստներով:

II. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների հաշվեգրումն ու հաշվառումը

3. Հատուկ պաշտպանական, հակագնագցման, փոխհատուցման միջոցի կիրառման մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարները (բացառությամբ նախնական հատուկ, նախնական հակագնագցման, նախնական փոխհատուցման տուրքերի), որոնց վճարման պարտավորությունը Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասով ծագել է համապատասխան միջոցի կիրառումն սկսելու ամսաթվից, ենթակա են հաշվեգրման, բաշխման և անդամ պետությունների բյուջեներ փոխանցման՝ «Ներմուծվող մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարների հաշվեգրման և բաշխման, դրանց՝ անդամ պետությունների բյուջեներ որպես եկամուտ փոխանցման կարգի մասին» արձանագրությամբ (Պայմանագրի 5-րդ հավելված) սահմանված կարգով և նորմատիվներով՝ հաշվի առնելով սույն Կանոնակարգով սահմանված առանձնահատկությունները:

4. Սահմանված ժամկետներում բաշխված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները մյուս անդամ պետությունների բյուջեներ չփոխանցելու կամ ոչ ամբողջությամբ փոխանցելու և հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների բացակայության մասին այդ անդամ պետության լիազոր մարմնից տեղեկություններ չստանալու դեպքերում կիրառվում են «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարների հաշվեգրման և բաշխման, դրանց՝ անդամ պետությունների բյուջեներ որպես եկամուտ փոխանցման կարգի մասին» արձանագրության 20-28-րդ կետերի դրույթները (Պայմանագրի 5-րդ հավելված), որոնք սահմանվել են անդամ պետությունների միջև ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրման և բաշխման համար:

5. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են հաշվեգրման ազգային արժույթով այն անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք ենթակա են վճարման՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին համապատասխան, այդ թվում՝ այդպիսի տուրքերի գանձման դեպքում:

6. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարվում են վճարողների կողմից այն անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք ենթակա են վճարման՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին, առանձին հաշվարկային (վճարման) փաստաթղթերին (հանձնարարականներին) համապատասխան:

7. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները չեն կարող հաշվանցվել այլ վճարների կատարման դիմաց՝ բացի մաքսավճարների, ինչպես նաև տույժերի (տոկոսների) վճարման գծով վճարողների պարտքի մարման դիմաց հաշվանցումից (այսուհետ՝ պարտքի մարման դիմաց հաշվանցում):

8. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման դիմաց կարող են հաշվանցվել հարկեր ու հավաքագրումներ, այլ վճարներ (բացառությամբ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանվող հում նավթի և նավթից (նավթամթերքից) ստացված ապրանքների առանձին կատեգորիաների նկատմամբ կիրառվող ներմուծման մաքսատուրքերի, ինչպես նաև արտահանման մաքսատուրքերի), որոնք մուտքագրվել են այն անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք ենթակա են վճարման՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին համապատասխան:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման գծով վճարողների պարտքի մարման դիմաց կարող են հաշվանցվել ներմուծման մաքսատուրքեր:

9. Լիազոր մարմիններն առանձին հաշվի են առնում՝

1) լիազոր մարմնի միասնական հաշվին հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի մուտքերի գումարները (վերադարձվող գումարները, պարտքի մարման դիմաց հաշվանցումները),

2) բաշխված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները, որոնք փոխանցվել են մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին,

3) անդամ պետության բյուջե հաշվեգրված մուտքերի գումարները, որոնք առաջացել են այդ անդամ պետության կողմից հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բաշխելու արդյունքում,

4) մյուս անդամ պետություններից անդամ պետության բյուջե մուտքագրված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները,

5) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բաշխելու արդյունքում առաջացած գումարների փոխանցման գծով անդամ պետության պարտավորությունները չկատարելուն, ոչ ամբողջությամբ կատարելուն և (կամ) ոչ ժամանակին կատարելուն հանգեցրած սույն Կանոնակարգի խախտման համար անդամ պետությունների բյուջեներ մուտքագրված տոկոսները,

6) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարները, որոնց փոխանցումը մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին կասեցվել է:

10. Սույն Կանոնակարգի 9-րդ կետում նշված մուտքերի գումարները յուրաքանչյուր անդամ պետության կողմից առանձին արտացոլվում են բյուջեի կատարողականի մասին հաշվետվություններում:

11. Լիազոր մարմնի միասնական հաշվին անդամ պետության օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրը մուտքագրված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներն արտացոլվում են հաշվետու տարվա համար բյուջեի կատարողականի մասին հաշվետվության մեջ:

12. Անդամ պետության օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում բաշխված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները փոխանցվում են այդ անդամ պետության բյուջե և մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին անդամ պետության ընթացիկ տարվա երկրորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ, ինչպես նաև արտացոլվում են հաշվետու տարվա համար բյուջեի կատարողականի մասին հաշվետվության մեջ:

13. Մյուս անդամ պետությունների օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում անդամ պետության բյուջե մուտքագրված՝ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բաշխումից առաջացած եկամուտների՝ մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններից ստացված գումարներն արտացոլվում են ընթացիկ տարվա համար բյուջեի կատարողականի մասին հաշվետվության մեջ:

14. Լիազոր մարմնի միասնական հաշվի վրա գտնվող դրամական միջոցների նկատմամբ բռնագանձում չի կարող տարածվել դատական ակտերի կատարման կարգով կամ որևէ այլ եղանակով՝ բացառությամբ մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, ինչպես նաև տույժերի (տոկոսների) վճարման գծով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին համապատասխան պարտքի բռնագանձման դեպքերի:

15. Նախնական հատուկ, նախնական հակագնագցման, նախնական փոխհատուցման տուրքերը վճարվում են (գանձվում են) ազգային արժույթով այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված հաշվին, որի մաքսային մարմինները գանձում են նախնական հատուկ, նախնական հակագնագցման, նախնական փոխհատուցման տուրքերը:

16. «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման մասին» արձանագրությամբ (Պայմանագրի 8-րդ հավելված) սահմանված դեպքերում նախնական հատուկ, նախնական հակագնագցման, նախնական փոխհատուցման տուրքի վճարված (գանձված) գումարները, ինչպես նաև նախնական տուրքերի համապատասխան տեսակների գանձման համար սահմանված կարգով վճարված հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են հաշվանցման հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դիմաց և հաշվեգրման այն անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք վճարվել են «Հատուկ պաշտպանական, հակագնագցման,

փոխհատուցման միջոց կիրառելու (դրա գործողության ժամկետը երկարաձգելու, ապրանքի բաղադրիչ մասերի և (կամ) դրա ածանցյալների վրա տարածելու) մասին» Հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո 30 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

«Երրորդ երկրների նկատմամբ հատուկ, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին» արձանագրությամբ (Պայմանագրի 8-րդ հավելված) սահմանված դեպքերում հակագնագցման տուրքերի վճարման ապահովման գումարները ենթակա են հաշվանցման հակագնացման տուրքերի դիմաց և հաշվեգրման այն անդամ պետության լիազոր մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք վճարվել են «Հակագնագցման միջոցի կիրառման մասին» Հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո 30 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

III. Հատուկ հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները վերադարձնելը

17. Նախնական հատուկ, նախնական հակագնագցման, նախնական փոխհատուցման տուրքերի, ինչպես նաև նախնական հակագնագցման, նախնական փոխհատուցման տուրքերի գանձման համար սահմանված կարգով գանձվող հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները վճարողին են վերադարձվում «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման մասին» արձանագրությամբ (Պայմանագրի 8-րդ հավելված) սահմանված դեպքերում՝ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որտեղ վճարվել են (գանձվել են) նշված տուրքերը (եթե Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով այլ բան սահմանված չէ):

18. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները վերադարձվում են այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որտեղ վճարվել են (գանձվել են) նշված տուրքերը (եթե Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով այլ բան սահմանված չէ)՝ հաշվի առնելով սույն Կանոնակարգը:

19. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները վճարողին վերադարձվում են և պարտքի մարման դիմաց հաշվանցվում են ընթացիկ օրվա ընթացքում՝ լիազոր մարմնի միասնական հաշվից լիազոր մարմնի միասնական հաշվին մուտք եղած, ինչպես նաև հաշվետու օրվա ընթացքում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման դիմաց հաշվանցված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների սահմաններում՝ հաշվի առնելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարները վերադարձնելը, որոնք հաշվետու օրվա ընթացքում անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից չեն ընդունվել վճարման համար՝ բացառությամբ սույն Կանոնակարգի 20-րդ կետով սահմանված դեպքերի:

20. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները վճարողին վերադարձվում են և պարտքի մարման դիմաց հաշվանցվում են հաշվետու օրվա ընթացքում Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի միասնական հաշվից՝ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարների սահմաններում, որոնք մուտքագրվել են (հաշվանցվել են) Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմնի միասնական հաշվին՝ գումարները վերադարձնելու (հաշվանցելու) օրը:

21. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ վերադարձմանը և (կամ) պարտքի մարման դիմաց հաշվանցմանը ենթակա գումարները սահմանվում են ընթացիկ օրվա ընթացքում՝ նախքան հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի մուտքագրված գումարները անդամ պետությունների միջև բաշխելը:

22. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վերադարձնելու և (կամ) դրանք պարտքի մարման դիմաց հաշվանցելու համար միջոցների անբավարար լինելու դեպքում սույն Կանոնակարգի 19-րդ և 20-րդ կետերին համապատասխան, գումարների նշված վերադարձը (հաշվանցումը) իրականացնում է անդամ պետությունը հետագա աշխատանքային օրերի ընթացքում:

Վճարողին հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ժամանակին չվերադարձնելու համար տույժերը (տոկոսները) վճարողին են վճարվում համապատասխան

անդամ պետության բյուջեից և չեն ներառվում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի մեջ:

IV. Լիազոր մարմինների միջև տեղեկությունների փոխանակումը

23. Սույն Կանոնակարգը կատարելու համար անհրաժեշտ տեղեկությունների փոխանակումը լիազոր մարմինների միջև իրականացվում է Հանձնաժողովի՝ այդպիսի տեղեկությունների փոխանակման կարգը, ձևերը և ժամկետները սահմանող որոշմանը համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ 9
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի X բաժնին համապատասխան, և դրանով սահմանվում են Միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման կարգը, կանոններն ու ընթացակարգերը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«հավատարմագրում»՝ համապատասխանության գնահատման մարմնի (այդ թվում՝ սերտիֆիկացման մարմնի, փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի))՝ որոշակի ոլորտում համապատասխանության գնահատման աշխատանքներ կատարելու իրավասությունների պաշտոնապես ճանաչումը հավատարմագրման մարմնի կողմից.

«անվտանգություն»՝ վնաս հասցնելու և (կամ) կորուստներ պատճառելու հնարավորության հետ կապված անթույլատրելի ռիսկի բացակայությունը.

«արտադրանքը շրջանառության մեջ դնելը»՝ արտադրանքի մատակարարումը կամ ներմուծումը (այդ թվում՝ արտադրողի պահեստից ուղարկումը կամ առանց պահեստավորման բեռնումը)՝ Միության տարածքում առևտրային գործունեության ընթացքում վճարովի կամ անհատույց հիմքով տարածելու նպատակով.

«Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջները կատարելու նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն)»՝ անդամ պետությունների լիազոր մարմինների գործունեությունը, որն ուղղված է իրավաբանական անձանց, դրանց ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց, որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց, նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջները խախտելու դեպքերի կանխարգելմանը, հայտնաբերմանը ու կանխմանը, ինչն իրականացվում է իրավաբանական անձանց և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց ստուգումներ անցկացնելու և բացահայտված խախտումների կանխման և (կամ) վերացման նպատակով անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված միջոցների ձեռնարկման միջոցով, ինչպես նաև նշված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը, իրավաբանական անձանց և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց կողմից գործունեություն իրականացնելիս Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման վերլուծությունն ու կանխատեսումը.

«Միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության մասին հայտարարագիր»՝ փաստաթուղթ, որով հայտատուն հաստատում է շրջանառության մեջ դրվող արտադրանքի համապատասխանությունը Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին.

«համապատասխանության հայտարարագրում»՝ շրջանառության մեջ դրվող արտադրանքի՝ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության պարտադիր հավաստման ձև.

«Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշան»՝ նշում, որը ծառայում է շրջանառության մեջ դրվող արտադրանքը ձեռք բերողներին և սպառողներին այդ

արտադրանքի՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության մասին տեղեկացնելու համար.

«արտադրանքի նույնականացում»՝ արտադրանքը Միության տեխնիկական կանոնակարգի կիրառության ոլորտին դասելու և տվյալ արտադրանքի տեխնիկական փաստաթղթերին արտադրանքի համապատասխանությունը սահմանելու ընթացակարգը.

«արտադրող»՝ իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ, այդ թվում՝ օտարերկրյա արտադրող, որոնք իրենց անունից իրականացնում են արտադրանքի արտադրություն կամ արտադրություն ու իրացում և պատասխանատու են Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրա համապատասխանության համար.

«միջպետական ստանդարտ»՝ տարածաշրջանային ստանդարտ, որն ընդունվել է Անկախ պետությունների համագործակցության ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի կողմից.

«միջազգային ստանդարտ»՝ ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից ընդունված ստանդարտը.

«ազգային (պետական) ստանդարտ»՝ անդամ պետության ստանդարտացման մարմնի կողմից ընդունված ստանդարտը.

«տեխնիկական կանոնակարգման օբյեկտ»՝ արտադրանք կամ արտադրանք և արտադրանքին ներկայացվող պահանջների հետ կապված նախագծման (ներառյալ հետազննության), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացները.

«համապատասխանության պարտադիր հավաստում»՝ արտադրանքի և նախագծման (ներառյալ հետազննության), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացների՝ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության փաստաթղթային հաստատումը.

«պարտադիր սերտիֆիկացում»՝ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության՝ սերտիֆիկացման մարմնի կողմից պարտադիր հավաստման ձևը.

«հավատարմագրման մարմին»՝ մարմին կամ իրավաբանական անձ, որն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված է հավատարմագրում իրականացնելու.

«համապատասխանության գնահատում»՝ տեխնիկական կանոնակարգման օբյեկտին ներկայացվող պահանջների պահպանման ուղղակի կամ անուղղակի սահմանումը.

«արտադրանք»՝ նյութաիրային ձևով արտահայտված ու տնտեսական և այլ նպատակներով հետագա օգտագործման համար նախատեսված գործունեության արդյունքը.

«տարածաշրջանային ստանդարտ»՝ ստանդարտացման տարածաշրջանային կազմակերպության կողմից ընդունված ստանդարտը.

«գրանցում (պետական գրանցում)»՝ տեխնիկական կանոնակարգման օբյեկտների՝ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման ձևը, որն իրականացվում է անդամ պետության լիազոր մարմնի կողմից.

«ռիսկ»՝ վնաս հասցնելու հավանականության և այդ վնասի՝ մարդու կյանքի կամ առողջության, գույքի, շրջակա միջավայրի, բույսերի և կենդանիների կյանքի կամ առողջության վրա հետևանքների համադրությունը.

«գրանցման (պետական գրանցման) վկայական»՝ փաստաթուղթ, որով հավաստվում է տեխնիկական կանոնակարգման օբյեկտի համապատասխանությունը Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին.

«Միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության սերտիֆիկատ»՝ փաստաթուղթ, որով սերտիֆիկացման մարմինը հաստատում է շրջանառության մեջ դրվող արտադրանքի համապատասխանությունը Միության տեխնիկական կանոնակարգի (Միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին.

«ստանդարտ»՝ փաստաթուղթ, որով բազմակի օգտագործման նպատակներով սահմանվում են արտադրանքի բնութագրերը, նախագծման (ներառյալ հետազննության), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և

ուտիլիզացման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացների իրականացման կանոններն ու բնութագրերը, հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններն ու մեթոդները, նմուշառման կանոնները, եզրաբանությանը, պայմանանշաններին, փաթեթավորմանը, մակնշմանը կամ պիտակներին և դրանց փակցման կանոններին ներկայացվող պահանջները.

«Միության տեխնիկական կանոնակարգ»՝ փաստաթուղթ, որն ընդունվել է Հանձնաժողովի կողմից, և որով սահմանվում են տեխնիկական կանոնակարգման օբյեկտներին ներկայացվող՝ Միության տարածքում կիրառման և կատարման համար պարտադիր պահանջները.

«տեխնիկական կանոնակարգում»՝ արտադրանքին կամ արտադրանքին և արտադրանքին ներկայացվող պահանջների հետ կապված նախագծման (ներառյալ հետազննության), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պարտադիր պահանջների սահմանման, կիրառման և կատարման ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորումը, ինչպես նաև համապատասխանության գնահատման ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորումը.

«արտադրողի կողմից լիազորված անձ»՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրա տարածքում գրանցված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ, որոնք արտադրողի, այդ թվում՝ օտարերկրյա արտադրողի հետ կնքված պայմանագրի հիման վրա այդ արտադրողի անունից գործողություններ են իրականացնում համապատասխանությունը գնահատելիս և արտադրանքը Միության տարածքում շրջանառության մեջ դնելիս, ինչպես նաև պատասխանատվություն են կրում Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի անհամապատասխանության համար:

3. Տեխնիկական կանոնակարգման այն օբյեկտների համար, որոնց նկատմամբ ուժի մեջ չեն մտել Միության տեխնիկական կանոնակարգերը, գործում են անդամ պետությունների օրենսդրության կամ Հանձնաժողովի ակտերի նորմերը:

Պետական պաշտպանական պատվերով մատակարարվող պաշտպանական արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների), պետական գաղտնիք կազմող կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պահպանվող սահմանափակ հասանելիություն ունեցող այլ տեղեկություններին դասվող տվյալների պաշտպանության նպատակներով օգտագործվող արտադրանքի (աշխատանքի, ծառայությունների), այն արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների), որի վերաբերյալ տվյալները կազմում են պետական գաղտնիք, այն արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) և օբյեկտների նկատմամբ, որոնց համար սահմանվում են ատոմային էներգիայի օգտագործման ոլորտում անվտանգության ապահովման հետ կապված պահանջներ, ինչպես նաև նախագծման (ներառյալ հետազննությանը), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման, ուտիլիզացման, արտադրանքի և նշված օբյեկտների թաղման գործընթացների նկատմամբ տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, ստանդարտացման և հավատարմագրման առանձնահատկությունները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Միության տեխնիկական կանոնակարգերով սահմանվում են տեխնիկական կանոնակարգման օբյեկտներին ներկայացվող պարտադիր պահանջները, ինչպես նաև արտադրանքի նույնականացման կանոնները, համապատասխանության գնահատման ձևերը, սխեմաները և ընթացակարգերը:

Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման համար որպես հիմք կիրառվում են համապատասխան միջազգային ստանդարտները (ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված կանոնները, հրահանգները, հանձնարարականները և այլ փաստաթղթեր)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան փաստաթղթերը բացակայում են կամ չեն համապատասխանում Միության տեխնիկական կանոնակարգերի ընդունման նպատակներին, այդ թվում՝ կլիմայական և աշխարհագրական գործոնների կամ տեխնոլոգիական ու այլ առանձնահատկությունների հետևանքով: Անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության դեպքում կիրառվում են տարածաշրջանային փաստաթղթերը (կանոնակարգերը, հրահանգները, որոշումները, ստանդարտները, կանոնները և այլ

փաստաթղթեր), ազգային (պետական) ստանդարտները, ազգային տեխնիկական կանոնակարգերը կամ դրանց նախագծերը:

Միության տեխնիկական կանոնակարգերը կարող են նաև ներառել եզրաբանությանը, փաթեթավորմանը, մակնշմանը, պիտակներին և դրանց փակցման կանոններին ներկայացվող պահանջներ, սանիտարական պահանջներ ու ընթացակարգեր, ինչպես նաև ընդհանուր բնույթ ունեցող անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական պահանջներ:

Միության տեխնիկական կանոնակարգերը կարող են ներառել առանձնահատուկ պահանջներ, որոնք արտացոլում են անդամ պետություններին բնորոշ կլիմայական ու աշխարհագրական գործոնների հետ կապված առանձնահատկությունները կամ տեխնոլոգիական առանձնահատկությունները, և որոնք գործում են միայն անդամ պետությունների տարածքներում:

Հաշվի առնելով վնաս հասցնելու ռիսկի աստիճանը՝ Միության տեխնիկական կանոնակարգերում կարող են ներառվել արտադրանքին ներկայացվող հատուկ պահանջներ կամ արտադրանքին և արտադրանքին ներկայացված պահանջների հետ կապված նախագծման (ներառյալ հետազոտության), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման և ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պահանջներ, եզրաբանությանը, փաթեթավորմանը, մակնշմանը, պիտակներին ու դրանց փակցման կանոններին ներկայացվող պահանջներ, որոնք ապահովում են քաղաքացիների առանձին կատեգորիաների (անչափահասների, հղի կանանց, կերակրող մայրերի, հաշմանդամների) պաշտպանությունը:

Միության տեխնիկական կանոնակարգը մշակվում է՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից հաստատվող Միության տեխնիկական կանոնակարգի բովանդակության և տիպային կառուցվածքի վերաբերյալ առաջարկությունները:

Միության տեխնիկական կանոնակարգերի մշակումը, ընդունումը, փոփոխումը և վերացումն իրականացվում են Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով:

4. Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման նպատակներով Հանձնաժողովը հաստատում է միջազգային և տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկը, որոնց կիրառման արդյունքում կամավոր հիմքով ապահովվում է Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

Նշված ցանկում ներառված համապատասխան ստանդարտների կամավոր հիմքով կիրառումը հանդիսանում է Միության համապատասխան տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման բավարար պայման:

Նշված ցանկում ներառված ստանդարտները չկիրառելը չի կարող դիտարկվել որպես Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների չպահպանում:

Նշված ցանկում ներառված ստանդարտները չկիրառելու դեպքում համապատասխանության գնահատումն իրականացվում է ռիսկերի վերլուծության հիման վրա:

Տեխնիկական կանոնակարգման օբյեկտների՝ Միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը գնահատելիս հետազոտություններ (փորձարկումներ) և չափումներ անցկացնելու նպատակներով Հանձնաժողովը հաստատում է միջազգային ու տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկը, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններն ու մեթոդները, այդ թվում՝ Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման և կատարման պահանջների և տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ նմուշառման կանոնները:

Ստանդարտների նշված ցանկերի մշակումը և ընդունումն իրականացվում են Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով:

Մինչ համապատասխան միջպետական ստանդարտների մշակումը, միջազգային և տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկում, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) և չափումների, այդ թվում՝ Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման և կատարման պահանջների և տեխնիկական կանոնակարգման

օբյեկտների համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ նմուշառման կանոնները, կարող են ներառվել հետազոտությունների (փորձարկումների) և չափումների մեթոդիկաներ, որոնք ատեստավորված (վալիդացված) և հաստատված են անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Հետազոտությունների (փորձարկումների) և չափումների նշված մեթոդիկաների ցանկը Հանձնաժողով է ներկայացվում անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից:

Միջազգային և տարածաշրջանային ստանդարտները կիրառվում են որպես միջպետական կամ ազգային (պետական) ստանդարտներ դրանց ընդունվելուց հետո:

5. Միության տեխնիկական կանոնակարգերով սահմանվող տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատումն անցկացվում է գրանցման (պետական գրանցման), փորձարկումների, համապատասխանության հավաստման, փորձաքննության ձևերով և (կամ) այլ ձևով:

Համապատասխանության պարտադիր հավաստումն իրականացվում է համապատասխանության հայտարարագրման և սերտիֆիկացման ձևերով:

Համապատասխանության գնահատման ձևերը, սխեմաները և ընթացակարգերը սահմանվում են Միության տեխնիկական կանոնակարգերով՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող համապատասխանության գնահատման տիպային սխեմաների հիման վրա:

Շրջանառության մեջ դրվող արտադրանքի՝ Միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատումն իրականացվում է մինչև դրա շրջանառության մեջ դրվելը:

Համապատասխանության պարտադիր հավաստումն իրականացվում է միայն Միության համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված դեպքերում և բացառապես Միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության մասով:

Համապատասխանությունը գնահատելիս հայտատու կարող են լինել անդամ պետության տարածքում դրա օրենսդրությանը համապատասխան գրանցված իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը, որոնք հանդիսանում են արտադրող կամ վաճառող կամ արտադրողի կողմից լիազորված անձ:

Հայտատուների շրջանակը սահմանվում է Միության տեխնիկական կանոնակարգին համապատասխան:

Համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերի միասնական ձևերը և դրանց ձևակերպման կանոնները հաստատվում են Հանձնաժողովի կողմից:

Համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրները տեղադրվում են համացանցում՝ Միության պաշտոնական կայքում: Նշված միասնական ռեեստրների ստեղծումը և վարումն իրականացվում են Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով:

Միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման աշխատանքներ իրականացնող համապատասխանության գնահատման հավատարմագրված մարմինները (այդ թվում՝ սերտիֆիկացման մարմինները, փորձարկման լաբորատորիաները (կենտրոնները)) պետք է ընդգրկվեն Միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում: Այդ ռեեստրում համապատասխանության գնահատման մարմինների ընդգրկումը, ինչպես նաև դրա ստեղծումը և վարումն իրականացվում են Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով:

Տեխնիկական կանոնակարգման օբյեկտների գրանցումը (պետական գրանցումը) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան իրականացնում են անդամ պետության՝ նշված աշխատանքների կատարման համար լիազորված մարմինները:

6. Արտադրանքը, որը համապատասխանում է այդ արտադրանքի վրա տարածվող Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին և անցել է Միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված համապատասխանության գնահատման ընթացակարգերը, ենթակա է Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով պարտադիր մակնշմանը:

Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի պատկերումը և դրա կիրառման կարգը հաստատվում են Հանձնաժողովի կողմից:

Միության տարածքում արտադրանքը շրջանառելիս արտադրանքի մակնշումը պետք է կատարվի ռուսերենով և անդամ պետությունների օրենսդրության համապատասխան պահանջների առկայության դեպքում՝ այն անդամ պետության պետական լեզվով (լեզուներով), որի տարածքում իրացվում է արտադրանքը:

7. Մինչ Միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը, այն արտադրանքը, որի նկատմամբ անդամ պետությունների կողմից սահմանվել են միատեսակ պարտադիր պահանջներ, համապատասխանության հավաստման միատեսակ ձևեր ու սխեմաներ, համապատասխանության պարտադիր հավաստումն անցկացնելիս կիրառվում են արտադրանքի հետազոտությունների (փորձարկումների) և չափումների միատեսակ կամ համադրելի մեթոդներ, և որն ընդգրկված է միասնական ձևով համապատասխանության սերտիֆիկատների ու համապատասխանության մասին հայտարարագրերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի միասնական ցանկում, թույլատրվում է Միության տարածքում շրջանառության մեջ դնել, եթե այն անցել է անդամ պետության տարածքում համապատասխանության հավաստման սահմանված ընթացակարգերը՝ հետևյալ պայմանների պահպանմամբ.

Միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում ընդգրկված համապատասխանության գնահատման մարմնի կողմից սերտիֆիկացման անցկացում,

Միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում ընդգրկված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում) փորձարկումների անցկացում,

համապատասխանության սերտիֆիկատների ու համապատասխանության մասին հայտարարագրերի միասնական ձևով ձևակերպում:

Արտադրանքի նշված միասնական ցանկը, նշված համապատասխանության սերտիֆիկատի և համապատասխանության մասին հայտարարագրի միասնական ձևերը ու դրանց ձևակերպման կանոնները հաստատվում են Հանձնաժողովի կողմից:

8. Միության մաքսային տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման ենթակա արտադրանքի ներմուծումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով:

9. Անդամ պետությունը, ղեկավարվելով իր օրինական շահերի պաշտպանությամբ, կարող է ձեռնարկել արտակարգ միջոցներ՝ վտանգավոր արտադրանքը շրջանառության մեջ դնելը կանխելու նպատակով: Անդամ պետությունն այդ դեպքում անհապաղ տեղեկացնում է մյուս անդամ պետություններին ձեռնարկված արտակարգ միջոցների մասին և սկսում է տվյալ հարցի շուրջ խորհրդակցությունների ու բանակցությունների գործընթացը:

10. Հանձնաժողովը տեխնիկական կանոնակարգման ոլորտում ստեղծում է տեղեկատվական համակարգ, որը հանդիսանում է Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի մասը:

ՀԱՎԵԼՎԱԾ 10
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի X բաժնին համապատասխան և սահմանում է անդամ պետությունների կողմից չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու սկզբունքները՝ չափումների արդյունքների և Միության տեխնիկական կանոնակարգերին արտադրանքի համապատասխանության գնահատման (հաստատման) արդյունքների ու արտադրանքի քանակական ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակներով:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«չափումների մեթոդիկայի (մեթոդների) վկայագրում»՝ չափումների չափագիտական պահանջներին չափումների մեթոդիկայի (մեթոդների) համապատասխանության ուսումնասիրություն և հաստատում.

«մեծության միավոր»՝ ֆիքսված չափի մեծություն, որին պայմանականորեն տրված է միավորին համարժեք թվային արժեք, և որը կիրառվում է համանման մեծությունների քանակական արտահայտության համար.

«չափումների միասնականություն»՝ չափումների այնպիսի վիճակ, որի պայմաններում այդ չափումների արդյունքներն արտահայտված են անդամ պետություններում կիրառման համար թույլատրված մեծության միավորներով, իսկ չափումների ճշգրտության ցուցանիշները դուրս չեն գալիս սահմանված տիրույթից.

«չափում»՝ մեծության մեկ կամ ավելի քանակական այնպիսի արժեքների փորձարարական եղանակով ստացման գործընթաց, որոնք կարող են հիմնավորված կերպով վերագրվել մեծությանը.

«չափումների միջոցի տրամաչափարկում (կալիբրավորում)»՝ գործառնությունների ամբողջություն, որոնցով սահմանվում է չափումների միջոցի օգնությամբ ստացված մեծության արժեքի և մեծության միավորի նմանատիպ չափանմուշով վերարտադրված մեծության արժեքի միջև հարաբերակցությունը՝ չափումների միջոցի չափագիտական իրական բնութագրերը որոշելու նպատակով.

«Միավորների միջազգային համակարգ (ՄՀ)»՝ Չափի և կշռի գլխավոր համաժողովի կողմից ընդունված միավորների համակարգ, որը հիմնված է Մեծությունների միջազգային համակարգի վրա և ներառում է անվանումներ ու պայմանանշաններ, նախածանցների հավաքակազմեր, դրանց անվանումները, պայմանանշաններն ու կիրառման կանոնները.

«չափումների մեթոդիկա (մեթոդ)» չափման այնպիսի կոնկրետ նկարագրված գործառնությունների ամբողջություն, որոնց իրականացումն ապահովում է ճշգրտության սահմանված ցուցանիշներով չափումների արդյունքների ստացում.

«չափագիտական հետևելիություն (հետագծելիություն)»՝ չափման արդյունքի հատկություն, որին համապատասխան արդյունքը կարող է հարաբերակցվել ազգային (առաջնային) չափանմուշի հետ՝ ստուգաչափման և տրամաչափարկման փաստաթղթավորված անքակտելի շղթայի միջոցով.

«չափագիտական փորձաքննություն»՝ չափումների միասնականությանն առնչվող չափագիտական պահանջների, կանոնների և նորմերի ճիշտ ու լիարժեք կիրառման վերլուծություն և գնահատում.

«ազգային (առաջնային) չափանմուշ»՝ մեծության միավորի չափանմուշ, որը անդամ պետության կողմից ճանաչվել է որպես հիմք այլ նմանատիպ միավորների չափանմուշներին մեծության արժեք վերագրելու համար՝ պետական կամ տնտեսական գործունեության մեջ օգտագործվելու նպատակով.

«չափումների միջոցների ստուգաչափում»՝ այնպիսի գործառնությունների ամբողջություն, որոնք իրականացվում են չափագիտական պարտադիր պահանջներին չափումների միջոցների համապատասխանությունը հաստատելու նպատակներով.

«չափումների հղումային մեթոդիկա (մեթոդ)»՝ չափումների մեթոդիկա (մեթոդ), որն օգտագործվում է չափումների այնպիսի արդյունքներ ստանալու համար, որոնք կարող են կիրառվել նմանատիպ մեծությունների՝ չափումների այլ մեթոդիկայի (մեթոդների) օգնությամբ ստացված մեծության չափված արժեքների ճշտության գնահատման համար, ինչպես նաև օգտագործվում է չափումների միջոցների տրամաչափարկման կամ ստանդարտ նմուշների բնութագրերը սահմանելու համար.

«չափանմուշների համեմատում»՝ չափման միավորի վերարտադրման և փոխանցման ժամանակ չափումների արդյունքների ու ճշտության մեկ մակարդակի մեծությունների միավորների չափանմուշների միջև հարաբերակցության սահմանում.

«չափումների միջոց»՝ չափումների համար նախատեսված և չափագիտական բնութագրեր ունեցող տեխնիկական միջոց.

«ստանդարտ նմուշ»՝ չափումների ճշգրտության սահմանված ցուցանիշներով և չափագիտական հետևելիությամբ նյութ՝ ենթադրվող նշանակությանը համապատասխան

որակական հատկությունների չափումների կամ գնահատման ժամանակ օգտագործվելու համար որոշակի հատկությունների նկատմամբ բավականաչափ համանման և կայուն.

«չափումների միջոցի տեսակի հաստատում»՝ չափումների միասնականության ոլորտում անդամ պետության պետական իշխանության (կառավարման) մարմնի որոշում՝ փորձարկումների դրական արդյունքների հիման վրա անդամ պետության տարածքում հաստատված տեսակի չափման միջոց կիրառելու թույլտվության մասին.

«ստանդարտ նմուշի տեսակի հաստատում»՝ չափումների միասնականության ոլորտում անդամ պետության պետական իշխանության (կառավարման) մարմնի որոշում՝ փորձարկումների դրական արդյունքների հիման վրա անդամ պետության տարածքում հաստատված տեսակի ստանդարտ նմուշ կիրառելու թույլտվության մասին.

«մեծության սանդղակ»՝ մեծության արժեքների աստիճանակարգված ամբողջություն, որը ծառայում է որպես ելակետային հիմք՝ համապատասխան մեծության չափման համար.

«մեծության միավորի չափանմուշ»՝ տեխնիկական միջոց (միջոցների համալիր), որը նախատեսված է մեծության միավորի կամ մեծության սանդղակի վերարտադրման, պահպանման և փոխանցման համար:

3. Անդամ պետությունները չափումների միասնականության ապահովման ոլորտում անցկացնում են համաձայնեցված քաղաքականություն՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման և հետևյալն ապահովող համաձայնեցված գործողություններ անցկացնելու միջոցով՝

1) չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոնների հաստատման միջոցով չափումների միասնականության ապահովման ոլորտում աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման մեխանիզմների ստեղծում.

2) մեծությունների միավորների չափանմուշների, չափումների միջոցների, ստանդարտ նմուշների և չափումների վկայագրված մեթոդիկայի (մեթոդների) օգտագործում, որոնց համար Միավորների միջազգային համակարգի (ՄՀ), ազգային (առաջնային) չափանմուշի և (կամ) մեծությունների միավորների միջազգային չափանմուշների մասով անդամ պետությունների կողմից ապահովվում է դրանց օգնությամբ ստացված արդյունքների չափագիտական հետևելիությունը.

3) անդամ պետությունների համապատասխան տեղեկատվական ֆոնդերում առկա, չափումների միասնականության ապահովման ոլորտում տեղեկությունների փոխադարձ տրամադրում.

4) չափումների միասնականության ապահովման ոլորտում աշխատանքների իրականացման համաձայնեցված կարգի կիրառում:

4. Անդամ պետությունները ձեռնարկում են չափումներին, մեծությունների միավորներին, մեծությունների միավորների չափանմուշներին և մեծությունների սանդղակին, չափումների միջոցներին, ստանդարտ նմուշներին, չափումների մեթոդիկային (մեթոդներին) ներկայացվող պահանջների սահմանման մասով չափումների միասնականության ապահովման ոլորտում անդամ պետությունների օրենսդրությունը ներդաշնակեցնելուն ուղղված միջոցներ՝ չափագիտության և ստանդարտացման միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների կողմից ընդունված փաստաթղթերի հիման վրա:

5. Անդամ պետություններն իրականացնում են չափումների միասնականության ապահովման ոլորտում աշխատանքներ կատարելու համար իրենց պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված (հայտագրված) անդամ պետությունների պետական իշխանության (կառավարման) մարմինների կամ իրավաբանական անձանց կողմից չափումների միասնականության ապահովման ոլորտում կատարված աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչում՝ այդ աշխատանքների կատարման հաստատված կարգերի և չափումների միասնականության ապահովմանն ուղղված աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոնների համաձայն:

Չափումների միասնականության ապահովման ոլորտում աշխատանքների արդյունքների ճանաչումը կիրառվում է անդամ պետությունների տարածքներում պատրաստված չափումների միջոցների նկատմամբ:

6. Ազգային (առաջնային) չափանմուշների և Միավորների միջազգային համակարգի (ՄՀ) նկատմամբ անդամ պետությունների չափումների արդյունքների, մեծությունների միավորների չափանմուշների, ստանդարտ նմուշների չափագիտական հետևելիության ապահովման նպատակով անդամ պետությունները կազմակերպում են մեծությունների միավորների չափանմուշների ստեղծման և կատարելագործման, ստանդարտ նմուշների անվանացանկի որոշման ու մշակման, պարբերաբար համեմատելու եղանակով անդամ պետությունների մեծությունների միավորների չափանմուշների համարժեքության հաստատման մասով աշխատանքների կատարում:

7. Անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերը, նորմատիվ և միջազգային փաստաթղթերը, անդամ պետությունների՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում միջազգային պայմանագրերը, չափումների վկայագրված մեթոդիկան (մեթոդները), անդամ պետությունների կողմից կարգավորվող ոլորտներում չափումների միջոցները, մեծությունների միավորների չափանմուշների և մեծությունների սանդղակների, ստանդարտ նմուշների հաստատված տեսակների և չափումների միջոցների հաստատված տեսակների մասին տեղեկությունները ձևավորում են չափումների միասնականության ապահովման ոլորտում անդամ պետությունների տեղեկատվական ֆոնդերը:

Տեղեկատվական ֆոնդերի վարումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, տեղեկատվական ֆոնդերում պարունակվող տեղեկությունների փոխադարձ տրամադրումը կազմակերպվում է սույն Արձանագրության 5-րդ կետում նշված՝ անդամ պետությունների պետական իշխանության (կառավարման) մարմինների կողմից՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով:

8. Անդամ պետությունները համապատասխան լիազորություններով են օժտում չափումների միասնականության ապահովման ոլորտում պետական իշխանության (կառավարման) մարմիններին, որոնք անցկացնում են անդամ պետությունների դիրքորոշումների համապատասխանեցմանն ուղղված խորհրդակցություններ և իրականացնում են չափումների միասնականության ապահովման ոլորտում աշխատանքների համակարգում ու կատարում:

9. Հանձնաժողովը հաստատում է հետևյալ փաստաթղթերը՝

1) Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակ կիրառվող մեծությունների արտահամակարգային միավորների ցանկը՝ ներառյալ դրանց հարաբերակցությունը Միավորների միջազգային համակարգի (ՄՀ) հետ.

2) չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոնները.

3) չափումների միասնականության ապահովման ոլորտում աշխատանքների կատարման կարգը, այդ թվում՝

Միության տեխնիկական կանոնակարգի նախագիծը, այն ստանդարտների ցանկի նախագիծը, որոնց կամավոր հիմունքներով կիրառման արդյունքում ապահովվում է Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարում, ուսումնասիրությունների (փորձարկումների) և չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման և կատարման ու տեխնիկական կարգավորման համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտների ցանկի նախագիծը չափագիտական փորձաքննության ենթարկելու կարգը.

միջլաբորատոր համեմատական փորձարկումների (միջլաբորատոր համեմատությունների) անցկացման կազմակերպման կարգը.

չափումների մեթոդիկայի (մեթոդների) չափագիտական վկայագրման կարգը.

որպես չափումների հղումային մեթոդիկա (մեթոդներ) ընդունվող չափումների մեթոդիկայի (մեթոդների) վկայագրման կարգը.

չափումների միջոցի տեսակի հաստատման կարգը.

ստանդարտ նմուշի տեսակի հաստատման կարգը.

չափումների միջոցի ստուգաչափման և տրամաչափարկման կազմակերպման կարգը.

4) անդամ պետությունների տեղեկատվական ֆոնդերում պարունակվող՝ չափումների միասնականության ապահովման ոլորտում տեղեկությունների փոխադարձ տրամադրման կարգը:

ՀԱՎԵԼՎԱԾ 11
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման աշխատանքների արդյունքները ճանաչելու մասին

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի X բաժնի համաձայն (այսուհետ՝ Պայմանագիր) և սահմանում է համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման պայմանները:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«բողոքարկում»՝ համապատասխանության գնահատման մարմնի դիմելը հավատարմագրման մարմին՝ համապատասխանության գնահատման տվյալ մարմնի վերաբերյալ հավատարմագրման մարմնի կողմից ընդունված որոշումը վերանայելու հարցով.

«հավատարմագրման փորձագետի ատեստավորում»՝ սահմանված պահանջներին ֆիզիկական անձի համապատասխանության հաստատում և հավատարմագրման աշխատանքների անցկացման համար նրա կոմպետենտության ճանաչում.

«բողոք»՝ դիմում, որով արտահայտվում է ցանկացած անձի դժգոհությունը համապատասխանության գնահատման մարմնի կամ հավատարմագրման մարմնի գործողությունների (անգործության) նկատմամբ, և որը պահանջում է պատասխան.

«հավատարմագրման համար դիմող»՝ իրավաբանական անձ, որը գրանցված է անդամ պետության օրենսդրության համաձայն և որպես համապատասխանության գնահատման մարմին հավակնում է ստանալ հավատարմագիր.

«հավատարմագրման մարմին»՝ մարմին կամ իրավաբանական անձ, որն անդամ պետության օրենսդրության համաձայն լիազորված է իրականացնելու հավատարմագրում.

«տեխնիկական փորձագետ»՝ հավատարմագրման որոշակի բնագավառում հատուկ գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձ, որը հավատարմագրման մարմնի կողմից ներգրավվում և նշանակվում է համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար և ներառված է տեխնիկական փորձագետների ռեեստրում.

«հավատարմագրման փորձագետ»՝ ֆիզիկական անձ, որն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորված և նշանակված է հավատարմագրման մարմնի կողմից համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումն իրականացնելու համար, և որը ներառված է հավատարմագրման փորձագետների ռեեստրում:

3. Անդամ պետությունները հավատարմագրման բնագավառում օրենսդրության ներդաշնակեցումն իրականացնում են՝

հավատարմագրման միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից ընդունված միջազգային ստանդարտների ու այլ փաստաթղթերի հիման վրա հավատարմագրման բնագավառում կանոններ ընդունելու միջոցով.

միջազգային ստանդարտների հիման վրա մշակված՝ հավատարմագրման բնագավառում միջպետական ստանդարտներ կիրառելու միջոցով.

միջլաբորատոր համեմատական փորձարկումների (միջլաբորատոր համեմատությունների) անցկացումն ապահովելու և կազմակերպելու միջոցով.

հավատարմագրման բնագավառում տեղեկություններ փոխանակելու միջոցով՝ տեղեկությունների հրապարակայնության, դրանք անհատույց և ժամանակին տրամադրելու սկզբունքների հիման վրա:

Անդամ պետությունները փոխադարձ ճանաչում են համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) հավատարմագրումն անդամ պետությունների հավատարմագրման ազգային համակարգերում՝ հավատարմագրման մարմինների կողմից Պայմանագրի 54-րդ հոդվածի դրույթների պահանջները կատարելու դեպքում:

4. Հավատարմագրման մարմիններն իրականացնում են հետևյալ լիազորությունները՝

1) իրականացնում են հետևյալի կազմավորումն ու վարումը՝
համապատասխանության գնահատման հավատարմագրված մարմինների ռեեստր.
հավատարմագրման փորձագետների ռեեստր.
տեխնիկական փորձագետների ռեեստր.
Միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրի ազգային մաս.

2) Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ են ներկայացնում տվյալներ՝ համապատասխանության գնահատման հավատարմագրված մարմինների, հավատարմագրման փորձագետների և տեխնիկական փորձագետների ռեեստրներից, ինչպես նաև հավատարմագրմանն առնչվող և Պայմանագրով նախատեսված այլ տվյալներ ու փաստաթղթեր.

3) հավատարմագրման մարմինների ներկայացուցիչներին ընձեռում են փոխադարձ համեմատելի գնահատումներ կատարելու հնարավորություն՝ անդամ պետություններում կիրառվող ընթացակարգերի հավասարազորությունն ապահովելու նպատակով.

4) քննարկում և կայացնում են որոշումներ համապատասխանության գնահատման մարմինների ներկայացրած այն բողոքարկումների վերաբերյալ, որոնք կապված են համապատասխանության գնահատման այդ մարմինների վերաբերյալ հավատարմագրման մարմնի կայացրած որոշումները վերանայելու հարցի հետ.

5) քննարկում և կայացնում են որոշումներ այն բողոքների վերաբերյալ, որոնք ստացվում են անդամ պետությունների ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից՝ հավատարմագրման մարմինների, ինչպես նաև իրենց կողմից հավատարմագրված՝ համապատասխանության գնահատման մարմինների գործունեության վերաբերյալ:

5. Հավատարմագրման մարմինն իր մասին արդի տեղեկությունները ներկայացնում է Հանձնաժողով՝ համացանցում Միության պաշտոնական կայքում տեղադրելու համար:

6. Հավատարմագրման փորձագետների և տեխնիկական փորձագետների կոմպետենտության համարժեք մակարդակ ապահովելու նպատակով հավատարմագրման մարմիններն ապահովում են հավատարմագրման փորձագետների և տեխնիկական փորձագետների կոմպետենտությանը ներկայացվող պահանջների ներդաշնակեցումը:

ՀԱՎԵԼՎԱԾ 12
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի XI բաժնին համապատասխան, և դրանով սահմանվում է սանիտարական, անասնաբուժասանիտարական ու կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման կարգը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«վերահսկողության արտասահմանյան պաշտոնական համակարգի աուդիտ»՝ վերահսկողության արտասահմանյան պաշտոնական համակարգի՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների անվտանգության մակարդակն ապահովելու հնարավորությունը որոշելու ընթացակարգ, որն առնվազն համարժեք է միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին.

«անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն)»՝ անասնաբուժության ոլորտի լիազոր մարմինների գործունեություն, որն ուղղված է կենդանիների, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների հարուցիչների և անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին չհամապատասխանող ապրանքների ներմուծման ու տարածման կանխմանը, ինչպես նաև Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերի ու ակտերի և անասնաբուժության ոլորտին առնչվող՝ անդամ

պետությունների օրենսդրության պահանջների խախտումների կանխարգելմանը, հայտնաբերմանն ու կանխմանը.

«անասնաբուժասանիտարական միջոցառումներ»՝ կատարման համար պարտադիր պահանջներ ու ընթացակարգեր, որոնք կիրառվում են կենդանիների հիվանդությունները կանխարգելելու և մարդու ու կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների առաջացման ռիսկերից բնակչությանը պաշտպանելու նպատակով, այդ թվում՝ կենդանիների, կերի, կենդանական ծագում ունեցող հումքի և արտադրանքի, ինչպես նաև Միության մաքսային տարածքի սահմաններում դրանք փոխադրող տրանսպորտային միջոցներով այդ հիվանդությունների փոխանցման կամ տարածման դեպքում.

«անասնաբուժական սերտիֆիկատ»՝ փաստաթուղթ, որն անասնաբուժության ոլորտի լիազոր մարմնի կողմից տրվում է անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների համար, որոնք պետք է տեղափոխվեն (փոխադրվեն), և հավաստում է դրանց անվտանգությունը՝ անասնաբուժասանիտարական առումով և (կամ) այդպիսի ապրանքների արտադրության վայրերի վարչական տարածքների ապահով վիճակը՝ կենդանիների, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների նկատմամբ.

«պետական գրանցում»՝ սանիտարահամաճարակաբանական և հիգիենայի միասնական պահանջներին կամ Միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման ընթացակարգ, որն իրականացվում է բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության հարցերով լիազոր մարմնի կողմից.

«պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողություն (հսկողություն)»՝ բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության հարցերով լիազոր մարմինների գործունեություն՝ ուղղված Հանձնաժողովի կողմից և բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտին առնչվող՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների խախտումների կանխարգելմանը, հայտնաբերմանն ու կանխմանը.

«անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) միասնական պահանջներ»՝ պահանջներ, որոնք ներկայացվում են անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքներին, դրանց շրջանառությանը և անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտներին և ուղղված են Միության մաքսային տարածքում կենդանիների, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների հարուցիչների և անասնաբուժասանիտարական առումով վտանգավոր կենդանական ծագում ունեցող ապրանքների առաջացումը, ներմուծումն ու տարածումը չթույլատրելուն.

«կարանտինային բուսասանիտարական միասնական պահանջներ»՝ պահանջներ, որոնք ներկայացվում են Միության մաքսային սահմանին և Միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքին (կարանտինային հսկողության վերցված բեռներին, կարանտինային հսկողության վերցված նյութերին, կարանտինային հսկողության վերցված ապրանքներին), դրա շրջանառությանը և կարանտինային հսկողության վերցված օբյեկտներին և ուղղված են Միության մաքսային տարածքում կարանտինային օբյեկտների առաջացումը, ներմուծումն ու տարածումը չթույլատրելուն.

«բույսերի կարանտինի ապահովման միասնական կանոններ և նորմեր»՝ կարանտինային բուսասանիտարական հետազոտությունների կանոններ, ընթացակարգեր, ցուցումներ, մեթոդիկա, Միության մաքսային սահմանին և Միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) զննման, կարանտինային օբյեկտների նույնականացման, լաբորատոր հետազոտությունների և փորձաքննության անցկացման, վարակազերծման մեթոդներ և կարևորագույն այլ միջոցառումներ, որոնք իրականացվում են բույսերի կարանտինի հարցերով լիազոր մարմինների կողմից.

«սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա արտադրանքին (ապրանքներին) ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և

հիգիենայի միասնական պահանջներ»՝ փաստաթուղթ, որը ներառում է Հանձնաժողովի կողմից սահմանված՝ կատարման համար պարտադիր պահանջներ, որոնք ներկայացվում են սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանքին (ապրանքներին) և ուղղված են մարդու օրգանիզմի վրա բնակության միջավայրի գործոնների վնասակար ազդեցության կանխարգելմանն ու մարդու կենսագործունեության բարենպաստ պայմանների ապահովմանը.

«կենդանիներ»՝ կենդանիների բոլոր տեսակները, այդ թվում՝ թռչունները, մեղուները, ջրային կենդանիները և վայրի կենդանական աշխարհի ներկայացուցիչները.

«բույսերի կարանտին»՝ իրավական ռեժիմ, որով նախատեսվում է Միության մաքսային տարածքում կարանտինային օբյեկտներից բույսերի և բուսական ծագում ունեցող արտադրանքի պահպանմանն ուղղված միջոցառումների համակարգ.

«կարանտինային օբյեկտներ»՝ անդամ պետությունների տարածքներում բացակայող կամ սահմանափակ տարածում ունեցող և Միության կարանտինային օբյեկտների միասնական ցանկում ներառված վնասակար օրգանիզմներ.

«կարանտինային բուսասանիտարական անվտանգություն»՝ կարանտինային օբյեկտների ներթափանցման և (կամ) տարածման դեպքում առաջացող ռիսկերից Միության մաքսային տարածքի պաշտպանվածության վիճակի ապահովում.

«կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն)»՝ բույսերի կարանտինի հարցերով լիազոր մարմինների գործունեություն, որն ուղղված է կարանտինային օբյեկտների հայտնաբերմանը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) կարանտինային բուսասանիտարական վիճակի որոշմանը, բույսերի կարանտինի ոլորտում միջազգային պարտավորությունների և անդամ պետությունների օրենսդրության կատարմանը.

«կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ»՝ կատարման համար պարտադիր պահանջներ, կանոններ և ընթացակարգեր, որոնք կիրառվում են կարանտինային օբյեկտների ներբերումից և տարածումից Միության մաքսային տարածքի պահպանությունն ապահովելու և դրանց պատճառած կորուստները նվազեցնելու, ինչպես նաև կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) միջազգային առևտրում եղած խոչընդոտները վերացնելու նպատակով.

«անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված օբյեկտ»՝ կազմակերպություն կամ անձ, որը մասնակցում է անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների պատրաստմանը (արտադրությանը), վերամշակմանը, տրանսպորտային փոխադրմանը և (կամ) պահպանմանը.

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) խմբաքանակ»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) քանակ, որը նախատեսված է մեկ տրանսպորտային միջոցով մեկ նշանակման կետ մեկ ստացողի ուղարկելու համար.

«անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների խմբաքանակ»՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների քանակ, որը նախատեսված է մեկ տրանսպորտային միջոցով մեկ նշանակման կետ մեկ ստացողի ուղարկելու համար և ձևակերպված է անասնաբուժական մեկ սերտիֆիկատով.

«կարանտինային հսկողության վերցված արտադրանք (կարանտինային հսկողության վերցված բեռներ, կարանտինային վերցված գտնվող նյութեր, կարանտինային վերցված գտնվող ապրանքներ)»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային վերցված գտնվող բեռների, կարանտինային վերցված գտնվող նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) ցանկում ներառված բույսեր, բուսական ծագում ունեցող արտադրանք, բեռներ, հող, օրգանիզմներ, նյութեր, տարա, փաթեթվածք, որոնք Միության

մաքսային սահմանին և Միության մաքսային տարածքում ենթակա են կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության), որոնք տեղափոխվում են Միության մաքսային սահմանով ու Միության մաքսային տարածքով և կարող են լինել կարանտինային օբյեկտների կրողներ և (կամ) նպաստել դրանց տարածմանը, և որոնց նկատմամբ անհրաժեշտ է ձեռնարկել կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ.

«կարանտինային հսկողության վերցված օբյեկտներ»՝ ցանկացած նպատակային նշանակության հողեր, շենքեր, շինություններ, կառույցներ, ամբարներ, պահեստավորման վայրեր, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, բեռնարկղեր և այլ օբյեկտներ, որոնք կարող են Միության մաքսային տարածք կարանտինային օբյեկտների ներթափանցման և (կամ) այդտեղ դրանց տարածման աղբյուր լինել.

«պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանք (ապրանքներ)»՝ ապրանքներ, քիմիական, կենսաբանական և ռադիոակտիվ նյութեր, այդ թվում՝ մարդու համար վտանգ ներկայացնող իոնացնող ճառագայթման աղբյուրներ, թափոններ և այլ բեռներ, սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանքի (ապրանքների) միասնական ցանկում ներառված սննդամթերք, նյութեր ու արտադրատեսակներ, որոնք տեղափոխվում են Միության մաքսային սահմանով և Միության մաքսային տարածքով.

«անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքներ»՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկում ներառված ապրանքներ.

«պետական գրանցման ենթակա արտադրանք»՝ արտադրանքի առանձին տեսակներ, որոնք շրջանառության ժամանակ կարող են վնասակար ազդեցություն ունենալ մարդու կյանքի ու առողջության վրա, և որոնց անվտանգությունը հաստատվում է պետական գրանցման առկայության փաստով.

«անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների ներմուծման (արտահանման) կամ տարանցման համար թույլտվություն»՝ փաստաթուղթ, որով սահմանվում են անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների օգտագործման կարգն ու պայմանները՝ հիմք ընդունելով անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների ներմուծման և տարանցման ժամանակ արտահանող երկրների անասնահամաճարակային իրավիճակը, և որը տրվում է անասնաբուժության ոլորտի լիազոր մարմնի՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված պաշտոնատար անձի կողմից.

«սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ»՝ կատարման համար պարտադիր սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական պահանջներ ու ընթացակարգեր, որոնք կիրառվում են հետևյալ նպատակներով՝

մարդու և կենդանիների կյանքի ու առողջության պաշտպանություն՝ սննդամթերքի, խմիչքի, կերերի և այլ արտադրանքում եղած հավելումներից, աղտոտող նյութերից, տոքսիններից կամ ախտածին օրգանիզմներից առաջացող ռիսկերից,

կենդանիների և բույսերի կյանքի ու առողջության պաշտպանություն այն ռիսկերից, որոնք առաջանում են անդամ պետությունների համար կարանտինային նշանակություն ունեցող՝ բույսերի վնասատուների, բույսերի ու կենդանիների հիվանդությունների հարուցիչների, բույսերի (մոլախոտերի), հիվանդություններ փոխանցող օրգանիզմների կամ ախտածին օրգանիզմների ներթափանցումից, արմատավորումից (խորացումից) կամ տարածումից,

մարդու կյանքի և առողջության պաշտպանություն՝ կենդանիների, բույսերի կամ դրանցից պատրաստված արտադրանքի միջոցով փոխանցվող հիվանդություններից առաջացող ռիսկերից,

այլ վնասի կանխում կամ սահմանափակում, որը հասցվում է անդամ պետությունների համար կարանտինային նշանակություն ունեցող՝ բույսերի վնասատուների, բույսերի ու կենդանիների հիվանդությունների հարուցիչների, բույսերի (մոլախոտերի), ախտածին օրգանիզմների ներթափանցման, արմատավորման (խորացման) կամ տարածման հետևանքով,

այդ թվում՝ արտադրանքի, բեռների, նյութերի, տրանսպորտային միջոցների հետ կենդանիների և (կամ) բույսերի միջոցով դրանց փոխանցման կամ տարածման դեպքում.

«սանիտարական կարանտինային հսկողություն»՝ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) տեսակ՝ անձանց, տրանսպորտային միջոցների և պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանքի (ապրանքների) նկատմամբ՝ Միության մաքսային սահմանի անցման կետերում, միջպետական փոխանցման երկաթուղային կայարաններում կամ կցվանքային կայարաններում՝ մարդու առողջության համար հավանական վտանգ ներկայացնող արտադրանքի (ապրանքների) ներմուծումը, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) ներբերումը, առաջացումն ու տարածումը կանխելու նպատակով.

«սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ»՝ կազմակերպական, վարչական, ինժեներատեխնիկական, բժշկասանիտարական, կանխարգելիչ և այլ միջոցառումներ, որոնք ուղղված են մարդու վրա բնակության միջավայրի գործոնների ունեցած վնասակար ազդեցության ռիսկի գնահատմանը, այդ ռիսկի վերացմանը կամ նվազեցմանը, վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) առաջացման ու տարածման կանխմանն ու դրանց վերացմանը.

«բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցություն»՝ բնակչության առողջության, բնակության միջավայրի վիճակը, որի դեպքում բացակայում է մարդու վրա բնակության միջավայրի գործոնների ունեցած վնասակար ազդեցությունը և ապահովվում են նրա կենսագործունեության համար բարենպաստ պայմանները.

«սանիտարական միջոցառումներ»՝ կատարման համար պարտադիր պահանջներ և ընթացակարգեր, այդ թվում՝ վերջնական արտադրանքին ներկայացվող պահանջներ, մշակման, արտադրության, տրանսպորտային փոխադրման, պահպանման և ուտիլիզացման մեթոդներ, նմուշառման, հետազոտությունների (փորձարկումների) մեթոդների, ռիսկի գնահատման, պետական գրանցման ընթացակարգեր, մակնշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջներ, որոնք անմիջականորեն ուղղված են մարդու կյանքի և առողջության պաշտպանության նպատակով արտադրանքի (ապրանքների) անվտանգության ապահովմանը.

«պետական գրանցման վկայական»՝ փաստաթուղթ, որով հաստատվում է արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը, հավաստվում է սանիտարահամաճարակաբանական և հիգիենայի միասնական պահանջներին արտադրանքի (ապրանքների) համապատասխանությունը, և որը տրվում է բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտի լիազոր մարմնի կողմից՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող միասնական ձևի ու կարգի համաձայն.

«անասնաբուժության ոլորտի լիազոր մարմիններ»՝ անդամ պետությունների պետական մարմիններ ու հաստատություններ, որոնք գործունեություն են իրականացնում անասնաբուժության ոլորտում.

«բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտի լիազոր մարմիններ»՝ անդամ պետությունների պետական մարմիններ ու հաստատություններ, որոնք գործունեություն են իրականացնում բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության ոլորտին առնչվող՝ անդամ պետությունների օրենսդրությանը և Հանձնաժողովի ակտերին համապատասխան.

«բույսերի կարանտինի հարցերով լիազոր մարմիններ»՝ բույսերի կարանտինի և պաշտպանության հարցերով ազգային կազմակերպություններ.

«բուսասանիտարական հսկիչ կետ»՝ բույսերի կարանտինի համար նախատեսված կետ, որն ստեղծվում է Միության մաքսային սահմանի անցման կետերում և անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան որոշվող այլ վայրերում.

«բուսասանիտարական սերտիֆիկատ»՝ միջազգային նմուշի փաստաթուղթ, որն ուղեկցում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքը (կարանտինային հսկողության վերցված բեռները, կարանտինային հսկողության վերցված նյութերը, կարանտինային հսկողության վերցված ապրանքները) և տրվում է արտահանող (վերաարտահանող) երկրի՝ բույսերի կարանտինի հարցերով լիազոր մարմնի կողմից՝ 1951 թվականի դեկտեմբերի 6-ի Բույսերի կարանտինի և պաշտպանության միջազգային կոնվենցիայով սահմանված ձևի համաձայն, և

որով հավաստվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) համապատասխանությունը արտահանող երկրի բուսասանիտարական պահանջներին.

«անասնահամաճարակային իրավիճակ»՝ կոնկրետ նշված ժամանակ որոշակի տարածքում անասնաբուժասանիտարական այնպիսի իրադրություն, որին բնորոշ է կենդանիների հիվանդությունների առկայությունը, դրանց տարածումն ու հիվանդացության մակարդակը:

II. Սանիտարական միջոցառումները

3. Միության մաքսային սահմանին և Միության մաքսային տարածքում պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողությունը (հսկողությունը) իրականացվում է Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով:

4. Անդամ պետությունները Միության մաքսային սահմանով պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանքի (ապրանքների) տեղափոխման համար նախատեսված անցման կետերում ստեղծում են սանիտարակարանտինային կետեր և ձեռնարկում են միջոցներ՝ անհրաժեշտ սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներն իրականացնելու նպատակով:

Անդամ պետություններն իրականացնում են սանիտարակարանտինային հսկողություն սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով հատուկ սարքավորված և համալրված սանիտարակարանտինային կետերում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից հաստատվող պահանջները:

Հանձնաժողովը սահմանում է այն արտադրանքի ցանկը, որի տեղափոխումը Միության մաքսային սահմանով իրականացվում է հատուկ սարքավորված անցման կետերում, որոնք որոշվում են անդամ պետությունների օրենսդրությանը և Միության իրավունքի մաս կազմող ակտերին համապատասխան:

Հանձնաժողովի ակտերին համապատասխան պետական գրանցման ենթակա արտադրանքի շրջանառությունը Միության տարածքում իրականացվում է պետական գրանցման առկայության դեպքում:

5. Անդամ պետությունները՝

1) ձեռնարկում են համաձայնեցված միջոցառումներ, որոնք ուղղված են մարդու առողջության համար վտանգավոր վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների), արտակարգ իրավիճակների, ինչպես նաև կենսաբանական ազդակների, քիմիական և ռադիոակտիվ նյութերի կիրառմամբ ահաբեկչական գործողությունների հետևանքների՝ Միության մաքսային տարածքում ներբերման ու տարածման կանխարգելմանը և վերացմանը.

2) իրականացնում են սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ՝ մարդու կյանքի, առողջության և նրա բնակության միջավայրի համար վտանգավոր պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանքի (ապրանքների) ներմուծումը Միության մաքսային տարածք և դրա շրջանառությունը թույլ չտալու համար:

6. Անդամ պետություններն իրավունք ունեն սահմանելու ժամանակավոր սանիտարական միջոցառումներ և իրականացնելու սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ այն դեպքում, երբ՝

անդամ պետության տարածքում վատթարացել է սանիտարահամաճարակային իրավիճակը.

համապատասխան միջազգային կազմակերպություններից, անդամ պետություններից կամ երրորդ երկրներից ստացվել են իրականացվող սանիտարական միջոցառումների և (կամ) սանիտարահամաճարակային իրավիճակի վատթարացման վերաբերյալ տեղեկություններ.

սանիտարական միջոցառումների իրականացման համապատասխան գիտական հիմնավորումը բավարար չէ կամ չի կարող ներկայացվել անհրաժեշտ ժամկետներում.

հայտնաբերվել է Միության միասնական սանիտարական պահանջներին կամ տեխնիկական կանոնակարգերին չհամապատասխանող՝ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանք (ապրանքներ):

Անդամ պետությունները հնարավորինս կարճ ժամկետում միմյանց տեղեկացնում են սանիտարական միջոցառումներ սահմանելու, սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ իրականացնելու և դրանք փոփոխելու մասին:

Եթե անդամ պետությունը սահմանում է ժամանակավոր սանիտարական միջոցառումներ, ապա մյուս անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ և իրականացնում սանիտարահակահամաճարակաբանական միջոցառումներ, որոնք ապահովում են այդպիսի միջոցառումներ սահմանելու մասին որոշում ընդունած անդամ պետության պաշտպանության պատշաճ մակարդակը:

7. Բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության հարցերով լիազոր մարմինները՝

սանիտարահամաճարակաբանական վերահսկողություն (հսկողություն) են իրականացնում անձանց, տրանսպորտային միջոցների, պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանքի (ապրանքների) նկատմամբ Միության մաքսային սահմանով դրանց տեղափոխման ժամանակ, անդամ պետությունների՝ Միության մաքսային սահմանին և Միության մաքսային տարածքում տեղակայված անցման կետերում.

իրավունք ունեն պահանջելու մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններից լաբորատոր հետազոտությունների (փորձարկումների) անհրաժեշտ արձանագրությունները.

բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության հարցերում ցուցաբերում են գիտամեթոդական և տեխնիկական փոխադարձ օժանդակություն.

միմյանց տեղեկացնում են սանիտարահամաճարակաբանական և հիգիենայի միասնական պահանջներին չհամապատասխանող ապրանքների հնարավոր ստացման, միջազգային բժշկասանիտարական կանոններում նշված առանձնապես վտանգավոր վարակիչ հիվանդությունների, մարդու կյանքի ու առողջության համար վտանգավոր արտադրանքի հայտնաբերման յուրաքանչյուր դեպքի մասին.

սանիտարական միջոցառումների ոլորտին առնչվող՝ Միության իրավունքը կազմող ակտերով սահմանված պահանջները կատարելու և Միության մաքսային տարածքը վարակիչ ու զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների), սանիտարահամաճարակաբանական և հիգիենայի պահանջներին չհամապատասխանող՝ պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանքի (ապրանքների) ներմուծումից և տարածումից պաշտպանելու նպատակով, ինչպես նաև այլ հարցերի օպերատիվ լուծման համար, անհրաժեշտության դեպքում և փոխադարձ պայմանավորվածությամբ անցկացնում են համատեղ ստուգումներ (տեսչական ստուգումներ) պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության (հսկողության) ենթակա՝ հսկողության վերցված արտադրանք (ապրանքներ) արտադրող անդամ պետությունների տարածքներում:

Վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) հայտնաբերման և (կամ) Միության մաքսային տարածքում մարդու կյանքի, առողջության և նրա բնակության միջավայրի համար վտանգավոր արտադրանքի տարածման դեպքում բնակչության սանիտարահամաճարակային բարեկեցության հարցերով լիազոր մարմինները դրանց, ինչպես նաև ձեռնարկված սանիտարական միջոցառումների մասին տեղեկություններ են ուղարկում Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ:

8. Համատեղ ստուգումների (տեսչական ստուգումների) անցկացման հետ կապված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է անդամ պետությունների համապատասխան բյուջեների հաշվին, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցվի:

III. Անասնաբուժասանիտարական միջոցառումները

9. Միության մաքսային սահմանին և Միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է Հանձնաժողովի կողմից հաստատվող

«Միության մաքսային սահմանին և Միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին» կանոնակարգին համապատասխան:

10. Անդամ պետությունները Միության մաքսային սահմանով անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների տեղափոխման համար նախատեսված անցման կետերում ստեղծում են սահմանային անասնաբուժական հսկիչ կետեր և ձեռնարկում են անասնաբուժասանիտարական անհրաժեշտ միջոցառումներ:

11. Անասնաբուժության ոլորտի լիազոր մարմինները՝

1) միջոցներ են ձեռնարկում կենդանիների, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների հարուցիչների և անասնաբուժասանիտարական առումով վտանգավոր, կենդանական ծագում ունեցող ապրանքների (արտադրանքի) ներմուծումն ու տարածումը Միության մաքսային տարածքում թույլ չտալու համար.

2) անդամ պետության տարածքում կենդանիների, այդ թվում՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների և (կամ) անասնաբուժասանիտարական առումով վտանգավոր, կենդանական ծագում ունեցող ապրանքների (արտադրանքի) հայտնաբերման և տարածման դեպքում ախտորոշման պաշտոնական հաստատումից կամ ապրանքների (արտադրանքի) անվտանգ չլինելու փաստի հաստատումից հետո դրանց մասին տեղեկություններն անհապաղ ուղարկում են Հանձնաժողով, իսկ ձեռնարկված անասնաբուժասանիտարական միջոցառումների մասին տեղեկությունները՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ, ինչպես նաև այլ անդամ պետությունների լիազոր մարմիններին ծանուցելու համար.

3) ժամանակին տեղեկացնում են Հանձնաժողովին անդամ պետության կենդանիների վտանգավոր և կարանտինային հիվանդությունների ցանկում կատարվող փոփոխությունների մասին.

4) անասնաբուժության ոլորտում ցուցաբերում են գիտական, մեթոդական և տեխնիկական փոխադարձ օժանդակություն.

5) Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով իրականացնում են վերահսկողության արտասահմանյան պաշտոնական համակարգի աուդիտ:

12. Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումը (տեսչական ստուգումը) իրականացվում է «Օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու և անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների փորձանմուշներ ընտրելու միասնական կարգի մասին» կանոնակարգին համապատասխան:

Վերահսկողության արտասահմանյան պաշտոնական համակարգերի աուդիտի և համատեղ ստուգումների (տեսչական ստուգումների) անցկացման հետ կապված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է անդամ պետությունների համապատասխան բյուջեների հաշվին, եթե յուրաքանչյուր առանձին դեպքում այլ կարգ չի համաձայնեցվի:

13. Անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս լաբորատոր հետազոտությունների անցկացման կանոններն ու մեթոդաբանությունը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

14. Անասնաբուժական դեղամիջոցների, անասնաբուժական նշանակության ախտորոշիչ միջոցների, կերային հավելումների, ախտահանիչ, միջատասպան և տիզասպան միջոցների շրջանառությունը կարգավորող կանոնները սահմանվում են Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների օրենսդրությամբ:

15. Անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) միասնական պահանջների և միջազգային մակարդակում մշակված առաջարկությունների, ստանդարտների, ուղեցույցների հիման վրա անդամ պետություններն ուղարկող երկրի (երրորդ կողմի) իրավասու մարմինների հետ կարող են համաձայնեցնել Միության մաքսային տարածք ներմուծվող, անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների միասնական ցանկում ներառված՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների՝ միասնական ձևերից տարբերվող անասնաբուժական սերտիֆիկատների նմուշները՝ Հանձնաժողովի ակտերին համապատասխան:

16. «Տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքները Միության մաքսային տարածքով տեղափոխվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով:

Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ հսկողության վերցված ապրանքների ներմուծման (արտահանման) և տարանցման համար թույլտվության տրամադրումն ու անասնաբուժական սերտիֆիկատների ձևակերպումն իրականացվում են անասնաբուժության ոլորտի լիազոր մարմնի կողմից՝ տվյալ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

17. Անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձևերը հաստատվում են Հանձնաժողովի կողմից:

IV. Կարանտինային բուսասանիտարական միջոցառումները

18. Միության մաքսային սահմանին և Միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով:

19. Բույսերի կարանտինի ապահովման միասնական կանոններն ու նորմերը հաստատվում են Հանձնաժողովի կողմից:

20. Անդամ պետությունները Միության մաքսային սահմանով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի և կարանտինային հսկողության վերցված ապրանքների) տեղափոխման համար նախատեսված անցման կետերում և այլ վայրերում ստեղծում են բույսերի կարանտինի համար նախատեսված կետեր (բուսասանիտարական հսկիչ կետեր)՝ հաշվի առնելով դրանց նյութատեխնիկական հագեցվածությանն ու սարքավորվածությանը ներկայացվող՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող պահանջները:

21. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ Միության մաքսային տարածք կարանտինային օբյեկտների ներբերումը և այդտեղ դրանց տարածումը կանխելու համար:

22. Բույսերի կարանտինի հարցերով լիազոր մարմինները՝

1) Միության մաքսային սահմանով կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տեղափոխման ժամանակ իրականացնում են կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն) անցման կետերում և այլ վայրերում, որտեղ սարքավորվում և տեղակայվում են բույսերի կարանտինի համար նախատեսված կետերը (բուսասանիտարական հսկիչ կետերը).

2) մեկ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք կարանտինային հսկողության վերցված արտադրանքի տեղափոխման ժամանակ իրականացնում են կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն).

3) Միության մաքսային տարածքում կարանտինային օբյեկտների հայտնաբերման և տարածման դեպքում դրանց, ինչպես նաև ձեռնարկված կարանտինային բուսասանիտարական միջոցառումների մասին տեղեկություններ են ուղարկում Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ.

4) ժամանակին միմյանց տեղեկացնում են իրենց պետությունների տարածքում կարանտինային օբյեկտների հայտնաբերման ու տարածման դեպքերի և իրենց կողմից ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ սահմանելու մասին.

5) բույսերի կարանտինի ապահովման ոլորտում ցուցաբերում են գիտական, մեթոդական և տեխնիկական փոխադարձ օժանդակություն.

6) յուրաքանչյուր տարի փոխանակում են նախորդ տարվա վիճակագրական տեղեկությունները, որոնք վերաբերում են իրենց պետությունների տարածքներում կարանտինային օբյեկտների հայտնաբերմանն ու տարածմանը.

7) փոխանակում են անդամ պետություններում տարածքների կարանտինային բուսասանիտարական վիճակին առնչվող տեղեկություններ, անհրաժեշտության դեպքում, նաև այլ տեղեկություններ, այդ թվում՝ կարանտինային օբյեկտների դեմ պայքարի արդյունավետ մեթոդների մասին տվյալներ.

8) մշակում են կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների ցանկի, Միության կարանտինային օբյեկտների միասնական ցանկի ձևավորման առնչությամբ ներկայացվող առաջարկներ՝ վնասակար օրգանիզմների մասին տեղեկությունների հիման վրա.

9) փոխգործակցում են կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ոլորտին առնչվող հարցերով.

10) փոխադարձ պայմանավորվածությամբ՝ մասնագետներ են ուղարկում՝ երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի արտադրության (պատրաստման), տեսակավորման, վերամշակման, պահեստավորման և փաթեթավորման վայրերի համատեղ հետազոտում կատարելու նպատակով,

մասնակցում են բույսերի կարանտինի ապահովման միասնական կանոնների և նորմերի մշակմանը:

23. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) յուրաքանչյուր խմբաքանակ, որը կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկին համապատասխան դասվում է բուսասանիտարական բարձր ռիսկայնություն ունեցող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) խմբին, Միության մաքսային տարածք է ներմուծվում և (կամ) մեկ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք է տեղափոխվում արտահանման (վերաարտահանման) բուսասանիտարական սերտիֆիկատի ուղեկցությամբ:

24. Կարանտինային բուսասանիտարական միջոցառումների լաբորատոր ապահովումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգով:

25. Անդամ պետություններից յուրաքանչյուրն իրավունք ունի մշակելու և սահմանելու ժամանակավոր կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ այն դեպքում, երբ՝

1) իրենց տարածքում վատթարացել է կարանտինային բուսասանիտարական վիճակը.

2) համապատասխան միջազգային կազմակերպություններից, անդամ պետություններից և (կամ) երրորդ երկրներից ստացվել են իրականացվող կարանտինային բուսասանիտարական միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ.

3) կարանտինային բուսասանիտարական միջոցառումների իրականացման վերաբերյալ համապատասխան գիտական հիմնավորումը բավարար չէ կամ չի կարող ներկայացվել անհրաժեշտ ժամկետներում.

4) երրորդ երկրներից ներմուծվող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքում (կարանտինային հսկողության վերցված բեռներում, կարանտինային հսկողության վերցված նյութերում, կարանտինային հսկողության վերցված ապրանքներում) պարբերաբար հայտնաբերվում են կարանտինային օբյեկտներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 13
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի XII բաժնի համաձայն և սահմանում է անդամ պետությունների կողմից սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում համաձայնեցված քաղաքականության իրականացման սկզբունքները և դրա հիմնական ուղղությունները:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«սպառողների իրավունքների պաշտպանության մասին անդամ պետության օրենսդրություն»՝ իրավական այնպիսի նորմերի ամբողջություն, որոնք գործում են անդամ պետությունում և կարգավորում են հարաբերությունները սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում,

«արտադրող»՝ կազմակերպություն՝ անկախ սեփականության ձևից (տեսակից), ինչպես նաև ֆիզիկական անձ, որը գրանցված է որպես սպառողների կողմից իրացման համար նախատեսված ապրանքներ արտադրող անհատ ձեռնարկատեր,

«կատարող»՝ կազմակերպություն՝ անկախ սեփականության ձևից (տեսակից), ինչպես նաև ֆիզիկական անձ, որը գրանցված է որպես սպառողների համար աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատեր,

«անբարեխիղճ տնտեսավարող սուբյեկտներ»՝ վաճառողներ, արտադրողներ, կատարողներ, որոնք իրենց գործունեության ընթացքում թույլ են տալիս անդամ պետության՝ սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրության, գործարար շրջանառության սովորույթների խախտումներ, եթե այդ խախտումները սպառողներին և (կամ) շրջակա միջավայրին կարող են պատճառել կամ պատճառել են գույքային կամ ոչ գույքային վնաս,

«սպառողների հասարակական միություններ»՝ քաղաքացիների և (կամ) իրավական անձանց ոչ առևտրային միություններ (կազմակերպություններ), որոնք գրանցվել են անդամ պետությունների օրենսդրության համաձայն, ստեղծվել են սպառողների օրինական իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակով, ինչպես նաև միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ, որոնք գործում են բոլոր կամ մի քանի անդամ պետությունների տարածքում,

«սպառող»՝ ֆիզիկական անձ, որը բացառապես անձնական (կենցաղային) կարիքների համար մտադիր է պատվիրել (ձեռք բերել) կամ պատվիրում է (ձեռք է բերում, օգտագործում) ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ), որոնք առնչություն չունեն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հետ,

«վաճառող»՝ կազմակերպություն՝ անկախ սեփականության ձևից (տեսակից), ինչպես նաև ֆիզիկական անձ, որը գրանցված է որպես սպառողներին ապրանքներն առուվաճառքի պայմանագրով իրացնող անհատ ձեռնարկատեր,

«սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազոր մարմիններ»՝ անդամ պետությունների պետական մարմիններ, որոնք սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացնում են հսկողական (վերահսկողական) գործունեություն և (կամ) նորմատիվ-իրավական կարգավորում՝ անդամ պետությունների օրենսդրությանը, Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան:

II. Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացումը

3. Անդամ պետությունների քաղաքացիների համար սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հավասար պայմաններ ապահովելու նպատակով անդամ պետությունները սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում համաձայնեցված քաղաքականություն են իրականացնում՝ հաշվի առնելով սպառողների իրավունքների պաշտպանության մասին անդամ պետության օրենսդրությունը և միջազգային իրավունքի այդ ոլորտի նորմերը, հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) սպառողներին, պետական մարմիններին և սպառողների հասարակական միություններին ապրանքների (աշխատանքների, ծառայությունների), արտադրողների (վաճառողների, կատարողների) մասին օպերատիվ և հավաստի տեղեկություններով ապահովում,

2) անդամ պետությունների տարածքներում անբարեխիղճ տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը և անորակ ապրանքների (ծառայությունների) իրացումը կանխարգելելու համար միջոցների ձեռնարկում,

3) սպառողների համար ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ազատ ընտրությանը նպաստող պայմանների ստեղծում սպառողների իրավական գրագիտության և իրավագիտակցության զարգացման, սպառողների իրավունքների պաշտպանություն իրականացնելու բնույթի, եղանակների և վարչական ու դատական կարգով՝ օրենքով պաշտպանվող շահերի մասին նրանց իրազեկության բարձրացման միջոցով, ինչպես նաև անդամ պետությունների սպառողների համար իրավաբանական օգնության հասանելիություն,

4) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում իրազեկման ծրագրերի իրականացում՝ որպես անդամ պետությունների կրթական համակարգերում քաղաքացիների կրթության անբաժանելի մաս,

5) սպառողների իրավունքների պաշտպանության հարցերի քարոզչության և կանոնավոր իրազեկման համար զանգվածային լրատվության միջոցների, այդ թվում՝ ռադիոյի և հեռուստատեսության ներգրավում,

6) անդամ պետությունների՝ սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրության մոտարկում:

III. Սպառողների հասարակական միությունների հետ փոխգործակցությունը

4. Անդամ պետությունները նպաստում են սպառողների հասարակական միությունների անկախ գործունեության համար պայմանների ստեղծմանը, սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում համաձայնեցված քաղաքականություն ձևավորելու և իրականացնելու, սպառողների իրավունքների քարոզչության և պարզաբանման, ինչպես նաև անդամ պետությունների միջև սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում տեղեկությունների փոխանակման համակարգ ստեղծելու գործում նրանց մասնակցությանը:

IV. Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազոր մարմինների փոխգործակցությունը

5. Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազոր մարմինների փոխգործակցությունն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) տեղեկություններ փոխանակելով՝

սպառողների իրավունքների պետական և հասարակական պաշտպանության ոլորտում անդամ պետությունների գործելակերպի մասին,

սպառողների իրավունքների պաշտպանության մասին անդամ պետությունների օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգի գործունեությունը բարելավելու և ապահովելու միջոցների մասին,

անդամ պետությունների՝ սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության մեջ փոփոխությունների մասին,

2) անդամ պետության ռեզիդենտների կողմից անդամ պետության՝ սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենսդրության խախտումների դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և կանխման գործընթացում համագործակցելով՝ ներառյալ ներքին շուկայում սպառողների իրավունքների, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում իրավասու մարմինների հարցումների հիման վրա բացահայտված խախտումների մասին տեղեկություններ փոխանակելը,

3) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում անդամ պետությունների փոխադարձ շահերին առնչվող խնդիրների վերաբերյալ համատեղ վերլուծական ուսումնասիրություններ անցկացնելով,

4) համագործակցության ընթացքում առաջացող հարցերի կապակցությամբ գործնական աջակցություն ցուցաբերելով՝ ներառյալ աշխատանքային խմբերի ստեղծումը, փորձի փոխանակումը և կադրերի պատրաստումը,

5) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազոր մարմինների և սպառողների հասարակական միությունների գործունեության արդյունքների մասին վիճակագրական տեղեկությունների փոխանակում կազմակերպելով,

6) սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում այլ հարցերի շուրջ համագործակցություն իրականացնելով:

V. Հանձնաժողովի լիազորությունները

6. Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) անդամ պետությունների համար մշակում է առաջարկություններ՝ սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում լիազոր մարմինների փոխգործակցության արդյունավետությանն ուղղված միջոցների ձեռնարկման մասին,

2) անդամ պետությունների համար մշակում է առաջարկություններ՝ սույն Արձանագրության մեջ նշված դրույթների իրականացման կարգի մասին,

3) ստեղծում է խորհրդատվական մարմիններ անդամ պետությունների սպառողների իրավունքների պաշտպանության հարցերով:

ՀԱՎԵԼՎԱԾ 14
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելու մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 62-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխան (այսուհետ՝ Պայմանագիր) և սահմանում է անդամ պետությունների կողմից համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելու կարգը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«կանխատեսումների արտաքին պարամետրեր»՝ ցուցանիշներ, որոնք բնութագրում են անդամ պետությունների տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները և օգտագործվում են անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները մշակելիս.

«կանխատեսումների արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքներ»՝ կանխատեսումների արտաքին պարամետրերի միջակայքի վերին և ստորին արժեքները.

«մակրոտնտեսական ցուցանիշներ»՝ ցուցանիշներ, որոնք բնութագրում են անդամ պետության տնտեսության վիճակը, դրա զարգացումը և անբարենպաստ գործոնների ազդեցության նկատմամբ կայունությունը, ինչպես նաև ինտեգրացիոն համագործակցության աստիճանը.

«Միության տնտեսական զարգացման հիմնական ուղղություններ»՝ խորհրդատվական բնույթի փաստաթուղթ, որով սահմանվում են սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային ուղղությունները, որոնց իրականացմանն են ձգտում անդամ պետությունները՝ Միության ինտեգրացիոն ներուժի օգտագործման և անդամ պետությունների մրցակցային առավելությունների հաշվին՝ յուրաքանչյուր անդամ պետության կողմից լրացուցիչ տնտեսական արդյունավետություն ստանալու նպատակներից ելնելով.

«անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչներ»՝ ծրագրային փաստաթուղթ, որով սահմանվում են անդամ պետությունների տնտեսության համար առավել կարևոր կարճաժամկետ և միջնաժամկետ խնդիրները, որն ուղղված է Միության տնտեսական զարգացման հիմնական ուղղություններով սահմանված նպատակների իրագործմանը, ինչպես նաև ներառում է նշված խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունները:

II. Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացումը

3. Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն իրականացնելու նպատակներով անդամ պետությունները՝

1) համաձայնեցնում են Միության ինտեգրացիոն ներուժի և անդամ պետությունների մրցակցային առավելությունների օգտագործմանն ուղղված միջոցները տնտեսության այն բնագավառներում և ճյուղերում, որտեղ դա անհրաժեշտ է կամ նպատակահարմար.

2) համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելիս հաշվի են առնում Միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները, անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները.

3) մշակում են անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները՝ հաշվի առնելով կանխատեսումների արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքները.

4) Պայմանագրի 63-րդ հոդվածում նշված տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքների շրջանակներում անցկացնում են համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն.

5) Հանձնաժողովի մասնակցությամբ մշակում և իրականացնում են միջոցներ, այդ թվում՝ համատեղ միջոցներ, եթե որևէ անդամ պետության տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշները չեն համապատասխանում Պայմանագրի 63-րդ հոդվածով սահմանված քանակական արժեքներին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հաշվի են առնում Հանձնաժողովի՝ տնտեսական իրավիճակի կայունացմանն ուղղված առաջարկությունները՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող կարգին համապատասխան.

6) անդամ պետություններում առաջացած տնտեսական իրավիճակին վերաբերող հարցերի շուրջ անցկացնում են խորհրդակցություններ՝ տնտեսության կայունացմանն ուղղված առաջարկություններ մշակելու համար:

III. Հանձնաժողովի իրավասությունը

4. Հանձնաժողովը համակարգում է անդամ պետությունների կողմից համաձայնեցված քաղաքականության անցկացումը՝

1) դիտանցելով՝

Հանձնաժողովի կողմից հաստատված մեթոդիկայի համաձայն հաշվարկված՝ անդամ պետությունների տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշները և դրանց՝ Պայմանագրի 63-րդ հոդվածով սահմանված քանակական արժեքներին համապատասխանությունը,

սույն Արձանագրության IV բաժնում սահմանված տնտեսական զարգացման մակարդակի և դինամիկայի ցուցանիշները և ինտեգրման աստիճանի ցուցանիշները.

2) անդամ պետությունների հետ համաձայնեցմամբ մշակելով Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող հետևյալ փաստաթղթերը՝

Միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները,

անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները,

տնտեսական իրավիճակի կայունացմանն ուղղված համատեղ միջոցները՝ անդամ պետությունների կողմից Պայմանագրի 63-րդ հոդվածում նշված տնտեսական զարգացման կայունությունը սահմանող մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքները գերազանցելու դեպքում.

3) մշակելով՝

տնտեսական զարգացման կայունությունը որոշող՝ Պայմանագրի 63-րդ հոդվածում նշված մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքները անդամ պետությունների կողմից գերազանցելու դեպքում տնտեսական իրավիճակի կայունացմանն ուղղված առաջարկությունները,

վերլուծական (տեղեկատվական) նպատակներից ելնելով, կանխատեսումների արտաքին պարամետրերի հաստատված միջակայքային քանակական արժեքների հիման վրա՝ Միության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումները.

4) աջակցելով տնտեսության կայունացմանն ուղղված առաջարկություններ մշակելու համար անդամ պետություններում առաջացած տնտեսական իրավիճակին վերաբերող հարցերի շուրջ խորհրդատվություն անցկացնելու գործընթացին.

5) անդամ պետությունների հետ համաձայնեցնելով անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները նախապատրաստելու համար

Հանձնաժողովի կողմից հաստատված կանխատեսումների արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքները.

6) վերլուծելով՝

ընդունվող որոշումների ազդեցությունն անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության և ձեռնարկատիրական ակտիվության պայմանների վրա,

անդամ պետությունների մակրոտնտեսական հիմնական կողմնորոշիչների համապատասխանության մասով համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության միջոցները.

7) համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելու նպատակներով անդամ պետությունների լիազոր մարմինների և Հանձնաժողովի միջև տեղեկություններ փոխանակելով: Այդ փոխանակման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

IV. Ինտեգրման աստիճանի, տնտեսության զարգացման մակարդակի և դինամիկայի, կանխատեսումների արտաքին պարամետրերի ցուցանիշները

5. Ինտեգրման աստիճանը որոշելու համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝

1) յուրաքանչյուր անդամ պետության տնտեսությանն ուղղված ազգային ներդրումների, այդ թվում՝ ուղղակի ներդրումների ծավալը (ԱՄՆ դոլարով),

2) յուրաքանչյուր անդամ պետության կողմից ազգային տնտեսությունում կատարված ներդրումների, այդ թվում՝ ուղղակի ներդրումների ծավալը (ԱՄՆ դոլարով),

3) անդամ պետության արտահանման ընդհանուր ծավալում յուրաքանչյուր անդամ պետության մասնաբաժինը (տոկոսներով),

4) անդամ պետության ներմուծման ընդհանուր ծավալում յուրաքանչյուր անդամ պետության մասնաբաժինը (տոկոսներով),

5) անդամ պետության արտաքին առևտրի ընդհանուր շրջանառության մեջ յուրաքանչյուր անդամ պետության մասնաբաժինը (տոկոսներով):

6. Տնտեսության զարգացման մակարդակը և դինամիկան որոշելու համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝

1) համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը (տոկոսներով),

2) բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը՝ ըստ գնողունակության պարիտետի (ԱՄՆ դոլարով),

3) վճարային հաշվեկշռի ընթացիկ գործառնությունների հաշվի մնացորդը (ԱՄՆ դոլարով և համախառն ներքին արդյունքի տոկոսներով),

4) ազգային արժույթի իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը՝ սպառողական գների ինդեքսի հիման վրա հաշվարկված (տոկոսներով):

7. Հանձնաժողովը, անդամ պետությունների համաձայնությամբ, կարող է որոշում կայացնել անդամ պետությունների ինտեգրման աստիճանի, զարգացման մակարդակի և դինամիկայի՝ սույն Արձանագրության 5-րդ և 6-րդ կետերում համապատասխանաբար նշված ցուցանիշներից տարբերվող այլ ցուցանիշների դիտանց անցկացնելու մասին:

8. Անդամ պետությունները եռամյա ժամանակահատվածի համար համաձայնեցնում են կանխատեսումների հետևյալ արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքները՝

համաշխարհային տնտեսության զարգացման տեմպերը,

«Brent» ապրանքանիշի նավթի գինը:

Գործադիր իշխանության մարմինները, որոնք լիազորված են կազմելու անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները, փոխանակում են նաև արտաքին առևտրային գործառնությունների իրավիճակի մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ փոխադարձ առևտրի ոլորտում: Առանձին անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները ձևավորելու համար Ռուսաստանի Դաշնությունը Հանձնաժողովի կողմից հաստատված կարգով նշված լիազոր մարմիններ է ներկայացնում ներքին սպառման համար մատակարարվող բնական գազի կանխատեսվող արժեքի կողմնորոշիչ միջակայքի փոփոխության մասին տեղեկություններ:

Ռուսաստանի Դաշնության կողմից մակրոտնտեսական կանխատեսման նպատակներով տրամադրվող նշված տեղեկությունը չի հանդիսանում կանխատեսվող ժամանակահատվածում անդամ պետություններին բնական գազի մատակարարման գնի մասով Ռուսաստանի Դաշնության պարտավորությունը:

Անդամ պետությունների (ազգային) կենտրոնական բանկերը տեղեկացնում են միմյանց անցկացվող փոխարժեքային քաղաքականության մասին:

9. Մակրոտնտեսական կանխատեսման նպատակներով տեղեկատվության փոխանակումն իրականացվում է հաշվի առնելով համապատասխան տեղեկատվության գաղտնիության վերաբերյալ անդամ պետությունների պահանջները:

10. Բարձրագույն խորհուրդը կարող է որոշում կայացնել անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները մշակելու ժամանակ օգտագործվող կանխատեսումների արտաքին պարամետրերը վերանայելու մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ 15
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Համաձայնեցված արժութային քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 64-րդ հոդվածին համապատասխան և սահմանում է անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցառումները՝ ուղղված համաձայնեցված արժութային քաղաքականության իրականացմանը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«արժութային օրենսդրություն»՝ արժութային կարգավորման և արժութային վերահսկողության ոլորտում անդամ պետությունների օրենսդրական ակտերը և ի կատարումն դրանց ընդունված նորմատիվ իրավական ակտերը,

«արժութային սահմանափակումներ»՝ արժութային գործառնությունների նկատմամբ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով կամ անդամ պետությունների արժութային օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ՝ արտահայտված դրանց նկատմամբ ուղղակի արգելքի կիրառմամբ, դրանց ծավալների, քանակի և իրականացման ժամկետների, վճարման արժույթի սահմանափակմամբ, դրանց իրականացման համար հատուկ թույլտվություններ (լիցենզիաներ) ստանալու պահանջների սահմանմամբ, իրականացվող արժութային գործառնության գումարի մի մասի, ամբողջ գումարի կամ ամբողջ գումարին բազմապատիկ գումարի պահուստավորմամբ, ինչպես նաև անդամ պետությունների տարածքներում հաշիվներ բացելու և վարելու հետ կապված սահմանափակումներ և արտարժույթի պարտադիր վաճառքի վերաբերյալ պահանջներ,

«ինտեգրված արժութային շուկա»՝ անդամ պետությունների՝ գործունեության և պետական կարգավորման ընդհանուր սկզբունքներով միավորված ներքին արժութային շուկաների ամբողջություն,

«ազատականացմանն ուղղված միջոցառումներ»՝ գործողություններ՝ ուղղված անդամ պետությունների ռեզիդենտների միջև արժութային գործառնությունների, ինչպես նաև երրորդ պետությունների ռեզիդենտների հետ իրականացվող արժութային գործառնությունների նկատմամբ արժութային սահմանափակումների մեղմացմանը կամ վերացմանը,

«անդամ պետության ռեզիդենտ»՝ անձ, որը հանդիսանում է անդամ պետություններից մեկի ռեզիդենտ՝ այդ անդամ երկրի արժութային օրենսդրությանը համապատասխան,

«երրորդ պետության ռեզիդենտ»՝ անձ, որը չի հանդիսանում անդամ պետություններից որևէ մեկի ռեզիդենտ,

«լիազորված կազմակերպություններ»՝ իրավաբանական անձինք, որոնք հանդիսանում են անդամ պետությունների ռեզիդենտներ և իրենց հիմնադրման պետության օրենսդրությանը

համապատասխան լիազորված են արտարժույթով բանկային գործառնություններ իրականացնելու,

«արժութային վերահսկողության լիազորված մարմիններ»՝ արժութային վերահսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող գործադիր իշխանության մարմիններ, անդամ պետությունների այլ պետական մարմիններ, ինչպես նաև անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկեր:

Արժութային իրավահարաբերությունները կարգավորելիս անդամ պետությունները «ոչ ռեզիդենտ» հասկացությունն օգտագործում են ազգային արժութային օրենսդրությանը համապատասխան:

II. Համաձայնեցված արժութային քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումները

3. Համաձայնեցված արժութային քաղաքականության իրականացման նպատակով անդամ պետությունները ձեռնարկում են հետևյալ միջոցառումները՝

1) անդամ պետությունների ռեզիդենտների փոխադարձ հաշվարկներում անդամ պետությունների ազգային արժույթների օգտագործման ընդլայնումն ապահովելու համար ազգային արժույթների փոխարժեքի քաղաքականության համակարգում (այսուհետ՝ փոխարժեքի քաղաքականություն), այդ թվում՝ փոխադարձ խորհրդատվությունների անցկացման կազմակերպում՝ փոխարժեքային քաղաքականության միջոցառումների մշակման և համակարգման նպատակով,

2) անդամ պետությունների ռեզիդենտների կողմից անդամ պետությունների բանկերի միջոցով առանց սահմանափակումների արտարժույթի առքի ու վաճառքի հնարավորության համար պայմաններ ստեղծելու միջոցով վճարային հաշվեկշռի ընթացիկ և կապիտալ հաշիվների գծով ազգային արժույթների՝ առանց սահմանափակումների փոխարկելիության ապահովում,

3) անդամ պետությունների ազգային արժույթների փոխադարձ ուղղակի գնանշումների ապահովման համար պայմանների ստեղծում,

4) անդամ պետությունների ռեզիդենտների միջև անդամ պետությունների ազգային արժույթներով փոխադարձ հաշվարկների իրականացման ապահովում,

5) անդամ պետությունների ռեզիդենտների միջև փոխադարձ հաշվարկներում ազգային արժույթների օգտագործումն ընդլայնելու հիման վրա անդամ պետությունների միջև վճարահաշվարկային հարաբերությունների մեխանիզմի կատարելագործում,

6) անդամ պետությունների ռեզիդենտների միջև փոխադարձ առևտուրը խոչընդոտող՝ ազգային արժույթի պաշտոնական փոխարժեքների բազմակիության բացառում,

7) բորսայական շուկայում ձևավորված փոխարժեքների հիման վրա կամ ԱՄՆ դոլարի նկատմամբ անդամ պետությունների ազգային արժույթների կրոս կուրսերի հիման վրա անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի կողմից անդամ պետությունների ազգային արժույթների պաշտոնական փոխարժեքների սահմանում,

8) արժութային շուկայի վիճակի և զարգացման հեռանկարների վերաբերյալ մշտական հիմունքներով տեղեկությունների փոխանակում,

9) անդամ պետությունների ինտեգրված արժութային շուկայի ձևավորում,

10) անդամ պետությունների ռեզիդենտ հանդիսացող և, տվյալ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, արժութային գործառնություններ իրականացնելու իրավունք ունեցող բանկերի համար յուրաքանչյուր անդամ պետության կողմից իր ներքին արժութային շուկայի հասանելիության ապահովում՝ ազգային ռեժիմի տրամադրման պայմաններով միջբանկային փոխարկման գործառնություններ իրականացնելու նպատակով,

11) անդամ պետությունների բանկերին սեփական թղթակցային հաշիվներում առկա, իրենց պատկանող՝ անդամ պետությունների ազգային արժույթներով միջոցները երրորդ պետությունների արժույթներով ազատ փոխարկելու իրավունքի տրամադրում,

12) անդամ պետությունների արժութային ակտիվներն այլ անդամ պետությունների ազգային արժույթներում, այդ թվում՝ դրանց պետական արժեթղթերում տեղաբաշխելու համար պայմանների ստեղծում,

13) ներքին արժութային շուկաների հետագա զարգացում և իրացվելիության բարձրացում,

14) անդամ պետությունների կազմակերպված շուկաներում ազգային արժույթներով սակարկությունների բարելավում և անդամ պետությունների արժութային շուկայի մասնակիցների համար դրանց հասանելիության ապահովում,

15) ածանցյալ ֆինանսական գործիքների կազմակերպված շուկայի զարգացում:

4. Անդամ պետությունների՝ արժութային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունները մոտարկելու և ազատականացմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու նպատակով անդամ պետությունները՝

1) ապահովում են արդյունավետ տնտեսական համագործակցությունը խոչընդոտող՝ արժութային գործառնությունների նկատմամբ և անդամ պետությունների տարածքներում տեղակայված բանկերում անդամ պետությունների ռեզիդենտների կողմից հաշիվների բացման կամ վարման նկատմամբ արժութային սահմանափակումների աստիճանական վերացումը,

2) սահմանում են անդամ պետությունների տարածքներում տեղակայված բանկերում երրորդ երկրների ռեզիդենտների հաշիվների, ինչպես նաև երրորդ երկրների տարածքներում տեղակայված բանկերում անդամ պետությունների ռեզիդենտների հաշիվների բացման կամ վարման կարգի վերաբերյալ համաձայնեցված մոտեցումներ,

3) անդամ պետությունների ռեզիդենտների բանկային հաշիվներին պարտադիր փոխանցման ենթակա դրամական միջոցների ռեպատրիացիայի պահանջի վերաբերյալ մոտեցումների մշակման հարցում առաջնորդվում են ազգային ինքնիշխանության պահպանման սկզբունքով,

4) սահմանում են անդամ պետությունների ռեզիդենտների միջև իրականացվող այն արժութային գործառնությունների ցանկը, որոնց նկատմամբ արժութային սահմանափակումներ չեն կիրառվում,

5) սահմանում են արժութային գործառնություններ իրականացնելիս անդամ պետությունների ռեզիդենտների իրավունքների և պարտականությունների անհրաժեշտ ծավալը՝ ներառյալ առանց անդամ պետությունների տարածքներում տեղակայված բանկերում բանկային հաշիվների օգտագործման հաշվարկներն իրականացնելու իրավունքները,

6) ապահովում են անդամ պետությունների ռեզիդենտների բանկային հաշիվներին պարտադիր մուտքագրման ենթակա դրամական միջոցների ռեպատրիացիայի պահանջների ներդաշնակեցումը,

7) ապահովում են Միության մաքսային տարածքի սահմաններում անդամ պետությունների ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից կանխիկ դրամական միջոցների ու դրամական գործիքների ազատ տեղաշարժը,

8) ապահովում են արժութային գործառնությունների հաշվառման և վերահսկողության պահանջների ներդաշնակեցումը,

9) ապահովում են անդամ պետությունների արժութային օրենսդրության խախտման համար պատասխանատվության նորմերի ներդաշնակեցումը:

III. Արժութային վերահսկողության լիազորված մարմինների փոխգործակցությունը

5. Արժութային վերահսկողության լիազորված մարմինների փոխգործակցությունն իրականացվում է՝

1) տեղեկությունների փոխանակման միջոցով՝

արժութային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում անդամ պետությունների վերահսկող և իրավապահ մարմինների գործելակերպի վերաբերյալ,

արժութային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգի կատարելագործմանը և գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ,

արժութային վերահսկողության կազմակերպման հարցերի, ինչպես նաև իրավական բնույթի տեղեկությունների, այդ թվում՝ անդամ պետությունների՝ արժութային վերահսկողության ոլորտը կարգավորող օրենսդրության, անդամ պետությունների՝ արժութային վերահսկողության ոլորտը կարգավորող օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ,

2) անդամ պետությունների ռեզիդենտների կողմից արժութային գործառնություններ իրականացնելիս անդամ պետությունների օրենսդրության խախտման կանխարգելմանը, բացահայտմանը և խափանմանն ուղղված համագործակցության միջոցով՝ ներառյալ

տեղեկությունների փոխանակումը, այդ թվում՝ արժութային վերահսկողության լիազորված մարմինների հարցումների հիման վրա, արժութային օրենսդրության խախտմամբ իրականացված գործառնությունների վերաբերյալ,

3) արժութային կարգավորման և արժութային վերահսկողության բնագավառում անդամ պետությունների փոխադարձ շահերին առնչվող խնդիրների վերաբերյալ համատեղ վերլուծական հետազոտությունների անցկացման միջոցով,

4) համագործակցության ընթացքում ծագող հարցերի առնչությամբ գործնական օգնության տրամադրման միջոցով՝ ներառյալ աշխատանքային խմբերի ստեղծումը, փորձի փոխանակումը և կադրերի ուսուցումը,

5) արժութային կարգավորմանն ու արժութային վերահսկողությանն առնչվող հարցերի վերաբերյալ վիճակագրական տեղեկությունների փոխանակումը կազմակերպելու միջոցով, այդ թվում՝

անդամ պետությունների ռեզիդենտների միջև արժութային գործառնություններով կատարված վճարների և դրամական միջոցների փոխանցումների ծավալների վերաբերյալ,

մեկ անդամ պետության ռեզիդենտների կողմից մյուս անդամ պետության լիազորված կազմակերպություններում բացված հաշիվների քանակի վերաբերյալ,

6) արժութային վերահսկողության լիազորված մարմինների համագործակցության այլ հարցերի շրջանակներում համատեղ գործողությունների իրականացման միջոցով:

6. Արժութային վերահսկողության լիազորված մարմիններն արժութային վերահսկողության ոլորտում փոխգործակցություն են իրականացնում որոշակի ուղղություններով՝ ներառյալ մշտական հիմունքներով տեղեկությունների տրամադրումը՝ արժութային վերահսկողության լիազորված մարմինների միջև փոխգործակցության մասին առանձին արձանագրություններին համապատասխան:

7. Գործնական օգնությունը տրամադրվում է՝

արժութային վերահսկողության լիազորված մարմինների ներկայացուցիչների աշխատանքային այցերի կազմակերպման,

սեմինարների և խորհրդակցությունների անցկացման,

մեթոդական առաջարկությունների մշակման ու դրանց փոխանակման միջոցով:

IV. Արժութային վերահսկողության լիազորված մարմինների հարցումների հիման վրա տեղեկությունների փոխանակումը

8. Տեղեկությունների տրամադրման վերաբերյալ հարցում ներկայացնելը և կատարելն իրականացվում են հետևյալ կարգով՝

1) հարցումը փոխանցվում է գրավոր ձևով կամ տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործման, ինչպես նաև ստացված հարցման իսկության կամ բովանդակության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում հարցում ստացող արժութային վերահսկողության լիազորված մարմինը կարող է պահանջել գրավոր հաստատում,

2) վարչական իրավախախտումների գործերով վարույթների շրջանակներում տեղեկություններ ստանալու վերաբերյալ հարցումը պարունակում է՝

հարցում ուղարկող արժութային վերահսկողության լիազորված մարմնի անվանումը,

հարցում ստացող արժութային վերահսկողության լիազորված մարմնի անվանումը,

գործի փաստական հանգամանքների համառոտ նկարագիրը՝ անհրաժեշտության դեպքում կցելով հաստատող փաստաթղթերի պատճենները,

իրավախախտման որակումը՝ հարցում ուղարկող արժութային վերահսկողության լիազորված մարմնի պետության օրենսդրությանը համապատասխան,

հարցումը կատարելու համար անհրաժեշտ այլ տվյալներ,

3) հարցումը և դրա պատասխանը կազմվում են ռուսերենով:

9. Սույն Արձանագրության շրջանակներում ստացված տեղեկությունները երրորդ կողմին փոխանցելու անհրաժեշտության դեպքում պահանջվում է այդ տեղեկությունները ներկայացնող արժութային վերահսկողության լիազորված մարմնի գրավոր համաձայնությունը:

10. Հարցումը կատարվում է՝ հաշվի առնելով հարցում ուղարկող արժութային վերահսկողության լիազորված մարմնի պետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային ժամկետների՝ հարցում ուղարկող արժութային վերահսկողության լիազորված մարմնի կողմից պահպանման հնարավորությունը:

Հարցում ստացած արժութային վերահսկողության լիազորված մարմինն իրավունք ունի ճշտելու կարգով լրացուցիչ տեղեկություններ պահանջելու, եթե դա անհրաժեշտ է հարցումը կատարելու համար:

11. Հարցումը կատարելու անհնարինության դեպքում հարցում ստացած արժութային վերահսկողության լիազորված մարմինը դրա մասին ծանուցում է հարցում ուղարկած արժութային վերահսկողության մարմնին՝ նշելով պատճառները:

12. Արժութային վերահսկողության լիազորված մարմինները կրում են արժութային վերահսկողության ոլորտում փոխգործակցության շրջանակներում տեղեկությունների փոխանակման հետ կապված ծախսերը:

Լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն առաջացնող հարցումներ ստանալու դեպքում դրանց ֆինանսավորման հարցը քննարկվում է արժութային վերահսկողության լիազորված մարմինների կողմից՝ փոխադարձ համաձայնությամբ:

V. Արժութային սահմանափակումները

13. Յուրաքանչյուր անդամ պետություն բացառիկ դեպքերում (եթե իրավիճակը չի կարող կարգավորվել տնտեսական քաղաքականության այլ միջոցառումներով) իրավասու է սահմանել արժութային սահմանափակումներ՝ մեկ տարուց ոչ ավելի ժամկետով:

Ընդ որում՝ բացառիկ դեպքերին են դասվում՝

այնպիսի հանգամանքների առաջացումը, որոնց դեպքում ազատականացմանն ուղղված միջոցառումների իրականացումը կարող է վատթարացնել անդամ պետության տնտեսական և ֆինանսական վիճակը,

վճարային հաշվեկշռի վիճակի բացասական զարգացումը, որի հետևանքով անդամ պետության ոսկու և արժույթի պահուստները կարող են նվազել թույլատրելի մակարդակից,

այնպիսի հանգամանքների առաջացումը, որոնց դեպքում ազատականացմանն ուղղված միջոցառումների իրականացումը կարող է վնաս հասցնել անդամ պետության անվտանգության շահերին և խոչընդոտել հասարակական կարգի պահպանումը,

անդամ պետության ազգային արժույթի փոխարժեքի կտրուկ տատանումները:

14. Այն անդամ պետությունը, որը սահմանել է արժութային սահմանափակումներ, դրա մասին ծանուցում է մյուս անդամ պետություններին և Հանձնաժողովին՝ այդ սահմանափակումները սահմանելուց 15 օրից ոչ ուշ:

ՀԱՎԵԼՎԱԾ 16
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 65-69-րդ հոդվածներին համապատասխան (այսուհետ՝ Պայմանագիր) և սահմանում է անդամ պետություններում ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման իրավական հիմքերը:

2. Սույն Արձանագրության դրույթները կիրառվում են անդամ պետությունների կողմից իրականացվող ցանկացած միջոցի նկատմամբ, որն առնչվում է ծառայությունների տրամադրմանն ու ստացմանը, հիմնադրմանը, գործունեությանը և ներդրումների իրականացմանը:

էլեկտրակապի ծառայությունների առևտրից բխող իրավահարաբերությունների առանձնահատկությունները սահմանվում են սույն Արձանագրության 1-ին հավելվածի համաձայն:

Գործունեության բոլոր ոլորտների և տեսակների նկատմամբ անդամ պետությունների կիրառած «հորիզոնական» սահմանափակումները սահմանվում են սույն Արձանագրության 2-րդ հավելվածի համաձայն:

Սահմանափակումների, բացառումների, լրացուցիչ պահանջների և պայմանների՝ սույն Արձանագրության 15-17-րդ, 23-րդ, 26-րդ, 28-րդ, 31-րդ, 33-րդ և 35-րդ կետերով նախատեսված առանձին ազգային ցանկերը (այսուհետ՝ ազգային ցանկեր) հաստատվում են Բարձրագույն խորհրդի կողմից:

3. Սույն Արձանագրության դրույթները կիրառվում են անդամ պետությունների՝ ստեղծված, ձեռք բերված, վերահսկվող իրավաբանական անձանց, բացված մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գրանցված անհատ ձեռնարկատերերի նկատմամբ, որոնք շարունակում են գոյություն ունենալ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, ինչպես նաև անդամ պետությունների՝ ստեղծված, ձեռք բերված, վերահսկվող իրավաբանական անձանց, բացված մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գրանցված անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո:

Անկախ սույն Արձանագրության 15-17-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ և 32-րդ կետերի դրույթներից՝ անդամ պետությունները պահպանում են նոր՝ այսինքն սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գոյություն չունեցող ծառայությունների մասով ցանկացած միջոց ձեռնարկելու և կիրառելու իրավունքը:

Այն դեպքում, եթե ձեռնարկվում կամ կիրառվում է այնպիսի միջոց, որն առնչվում է նոր ծառայությանը և անհամատեղելի է նշված կետերի դրույթների հետ, ապա անդամ պետությունը մյուս անդամ պետություններին և Հանձնաժողովին տեղեկացնում է այդ միջոցի մասին՝ այն ձեռնարկելու կամ կիրառելու օրվանից ոչ ուշ, քան 1 ամիս հետո՝ կախված այն բանից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել: Այդ անդամ պետության ազգային ցանկում կատարվող համապատասխան փոփոխությունները հաստատվում են Բարձրագույն խորհրդի որոշմամբ:

4. Ինչ վերաբերում է սույն Արձանագրության 6-րդ կետի 22-րդ ենթակետի երկրորդ և երրորդ պարբերություններում նշված ծառայությունների տրամադրման միջոցներին, ապա սույն Արձանագրության դրույթները չեն կիրառվում օդային փոխադրամիջոցով փոխադրման իրավունքների և փոխադրման իրավունքներին անմիջականորեն առնչվող ծառայությունների նկատմամբ՝ բացառությամբ ինքնաթիռների վերանորոգման և շահագործման նպատակով սպասարկման, ավիատրանսպորտային ծառայությունների տրամադրման և մարքեթինգի, ինչպես նաև պահեստավորման համակարգչային համակարգի ծառայությունների:

5. Անդամ պետությունները չեն կիրառում այնպիսի պահանջների մեղմացում, որոնք նախատեսված են իրենց օրենսդրությամբ և վերաբերում են մարդկանց կյանքի և առողջության, շրջակա միջավայրի պաշտպանությանը, ազգային անվտանգությանը, ինչպես նաև աշխատանքային ստանդարտներին՝ որպես այլ անդամ պետությունների անձանց, ինչպես նաև երրորդ պետությունների անձանց՝ անդամ պետությունների տարածքում հիմնադրվելու նպատակով ներգրավելու մեխանիզմ:

II. Սահմանումները և հասկացությունները

6. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) «ստացող պետություն»՝ անդամ պետությունը, որի տարածքում այլ անդամ պետությունների ներդրողների կողմից իրականացվում են ներդրումներ,

2) «գործունեություն»՝ սույն կետի 24-րդ ենթակետի երկրորդից վեցերորդ պարբերություններում թվարկված իրավաբանական անձանց, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների կամ անհատ ձեռնարկատերերի իրականացրած ձեռնարկատիրական և այլ գործունեություն (ներառյալ ծառայությունների առևտուրը և ապրանքների արտադրությունը),

3) «ներդրումների հետ կապված գործունեություն»՝ ներդրումների տիրապետումը, օգտագործումը և (կամ) տնօրինումը,

4) «եկամուտներ»՝ ներդրումների իրականացման արդյունքում ստացվող միջոցները, մասնավորապես՝ շահաբաժինները, տոկոսները, ինչպես նաև՝ լիցենզիոն, կոմիսիոն և այլ վճարներ,

5) «անդամ պետության օրենսդրություն»՝ անդամ պետության օրենքները և նորմատիվ իրավական այլ ակտեր,

6) «հայտատու»՝ մեկ անդամ պետության այն անձը, որը թույլտվություն տրամադրելու հայտով դիմել է այդ կամ այլ անդամ պետության իրավասու մարմին,

7) «ներդրումներ»՝ նյութական և ոչ նյութական արժեքները, որոնք մեկ անդամ պետության ներդրողի կողմից ներդրվում են այլ անդամ պետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող օբյեկտներում՝ վերջինիս օրենսդրությանը համապատասխան, այդ թվում՝

դրամական միջոցները (փողը), արժեթղթերը, այլ գույք,

ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքները, որոնք տրամադրվում են անդամ պետությունների օրենսդրության հիման վրա կամ պայմանագրով՝ ներառյալ, մասնավորապես՝ բնական պաշարների հետախուզման, մշակման, արդյունահանման և շահագործման համար իրավունքները,

գույքային իրավունքները, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ,

8) «անդամ պետության ներդրող»՝ անդամ պետության ցանկացած անձ, որը ներդրումներ է կատարում այլ անդամ պետության տարածքում՝ վերջինիս օրենսդրությանը համապատասխան,

9) «իրավասու մարմին»՝ ցանկացած մարմին կամ կազմակերպություն, որն անդամ պետության կողմից իրեն պատվիրակված լիազորությունների շրջանակներում իրականացնում է հսկողական, թույլտվության կամ կարգավորիչ այլ գործառույթ՝ սույն Արձանագրությամբ ընդգրկվող հարցերի առնչությամբ, մասնավորապես՝ վարչական մարմինները, դատարանները, մասնագիտական միավորումները, ասոցիացիաները,

10) «անդամ պետության անձ»՝ անդամ պետության ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

11) «անդամ պետության միջոց»՝ անդամ պետության օրենսդրությունը, ինչպես նաև այդ անդամ պետության մարմնի կամ պաշտոնատար անձի ցանկացած որոշում, գործողություն կամ անգործություն, որ տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների կողմից ընդունվում կամ կիրառվում է պետական իշխանության մակարդակով՝ այդպիսի մարմինների կողմից իրենց պատվիրակված լիազորություններն իրականացնելիս:

Անդամ պետության մարմնի կողմից հանձնարարական բնույթ ունեցող պաշտոնական փաստաթուղթ ընդունելու (հրատարակելու) դեպքում այդպիսի հանձնարարականը կարող է ճանաչվել որպես անդամ պետության՝ սույն Արձանագրության նպատակներով կիրառվող միջոց, եթե ապացուցվի, որ գործնականում տվյալ հանձնարարականի հասցեատերերի գերակշիռ մասը (պետական, տարածքային և (կամ) համայնքային իշխանության մարմինները, ինչպես նաև տվյալ անդամ պետության անձինք, այլ անդամ պետությունների անձինք, ցանկացած երրորդ պետության անձինք) պահպանում է այն,

12) «ծառայությունն ստացող»՝ անդամ պետության ցանկացած անձ, որին տրամադրվում է ծառայությունը կամ որը մտադիր է օգտվել ծառայությունից,

13) «ծառայությունները տրամադրող»՝ անդամ պետության ցանկացած անձ, որը տրամադրում է ծառայությունը,

14) «ներկայացուցչություն»՝ իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերն ու իրականացնում դրանց պաշտպանությունը,

15) «թույլտվություն»՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված, հայտատուի դիմումի վրա հիմնված, որոշակի գործունեություն կամ որոշակի գործողություններ իրականացնելու՝ իրավասու մարմնի կողմից հաստատված տվյալ անձի իրավունքը, այդ թվում՝ ռեեստրում ներառելու, պաշտոնական փաստաթուղթ (լիցենզիայի, համաձայնեցման, եզրակացության, վկայագրի, վկայականի, հավաստագրի և նմ.) տրամադրելու միջոցով: Ընդ որում, թույլտվությունը կարող է տրամադրվել մրցութային ընտրության արդյունքներով,

16) «թույլտվության ընթացակարգեր»՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ իրավասու մարմինների կողմից իրականացվող ընթացակարգերի

ամբողջությունը, որը վերաբերում է թույլտվությունների և դրանց կրկնօրինակների տրամադրմանն ու վերաձևակերպմանը, թույլտվությունների գործողության դադարեցմանը, կասեցմանը և վերականգնմանը կամ գործողության ժամկետի երկարաձգմանը, թույլտվություններից զրկելուն (չեղյալ հայտարարելուն), թույլտվություններ տրամադրելու մերժմանը, ինչպես նաև այսպիսի հարցերով բողոքների ուսումնասիրմանը,

17) «թույլտվության պահանջներ»՝ հայտատուին, թույլտվության սեփականատիրոջը և (կամ) տրամադրվող ծառայությանը, անդամ պետության օրենսդրության համապատասխան իրականացվող գործունեությանը ներկայացվող ստանդարտների և (կամ) պահանջների (այդ թվում՝ լիցենզիոն, որակավորման) ամբողջությունը, որն ուղղված է անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգավորման նպատակների ապահովմանը:

Գործունեություն իրականացնելու թույլտվությունների մասով թույլտվության պահանջներով՝ որպես նպատակ, կարող են ապահովվել նաև հայտատուի կոմպետենտությունը և անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ ծառայությունների առևտուր և այլ գործունեություն իրականացնելու նրա ունակությունները,

18) «ռեժիմ»՝ անդամ պետությունների միջոցների ամբողջությունը,

19) «ծառայության ոլորտ»՝

սույն Արձանագրության 2-րդ հավելվածի, ինչպես նաև Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող ցանկերի առնչությամբ՝ առանձին ծառայության մեկ, մի քանի կամ բոլոր ենթաոլորտները,

այլ դեպքերում՝ ծառայության ամբողջ ոլորտը՝ ներառյալ դրա բոլոր ենթաոլորտները,

20) «անդամ պետության տարածք»՝ անդամ պետության տարածքը, ինչպես նաև դրա բացառիկ տնտեսական գոտին և մայրցամաքային շելֆը, որոնց նկատմամբ այն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավազորություն՝ միջազգային իրավունքի և իր օրենսդրությանը համապատասխան,

21) «տնտեսական նպատակահարմարության ստուգում»՝ համապատասխան թույլտվությունների տրամադրման պայմանավորումը՝ տնտեսական անհրաժեշտության կամ շուկայի պահանջարկի առկայության ապացույցով, գործունեության հնարավոր կամ գոյություն ունեցող տնտեսական ազդեցության գնահատմամբ կամ իրավասու մարմնի կողմից սահմանված տնտեսական պլանավորման նպատակներին գործունեության համապատասխանության գնահատմամբ: Սույն հասկացությունը չի ընդգրկում ոչ տնտեսական բնույթի պլանավորման հետ կապված և հանրային շահի նկատառումներով հիմնավորված պայմանները, ինչպիսիք սոցիալական քաղաքականությունը, իշխանության տեղական մարմինների կողմից իրենց իրավասության շրջանակներում հաստատվող սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կատարումը, կամ քաղաքային բնակության միջավայրի պահպանությունն են, այդ թվում՝ քաղաքաշինության պլանների կատարումը,

22) «ծառայությունների առևտուր»՝ ծառայությունների տրամադրումը, որը ներառում է ծառայությունների արտադրությունը, բաշխումը, շուկայահանումը, վաճառքն ու մատուցումը և որն իրականացվում է հետևյալ եղանակներով.

մեկ անդամ պետության տարածքից դեպի ցանկացած այլ անդամ պետության տարածք,

մեկ անդամ պետության տարածքում այդ անդամ պետության անձի կողմից՝ մյուս անդամ պետության ծառայություններն ստացողին,

մեկ անդամ պետության ծառայությունների մատակարարի կողմից՝ մյուս անդամ պետության տարածքում հաստատություն հիմնադրելու միջոցով,

մեկ անդամ պետության ծառայությունների մատակարարի կողմից՝ մյուս անդամ պետության տարածքում այդ անդամ պետության ֆիզիկական անձանց ներկայության միջոցով,

23) «երրորդ պետություն»՝ անդամ պետություն չհանդիսացող պետությունը,

24) «հիմնադրում»՝

ցանկացած կազմակերպաիրավական ձևի և սեփականության ձևի իրավաբանական անձի ստեղծումը և (կամ) ձեռքբերումը (ստեղծված կամ հիմնադրված իրավաբանական անձի մասնակցությունը կապիտալում)՝ նախատեսված այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում այդ իրավաբանական անձն ստեղծվում կամ հիմնադրվում է,

անդամ պետության իրավաբանական անձի նկատմամբ հսկողության ձեռքբերումը, որն արտահայտվում է այդ իրավաբանական անձի կողմից կայացվող որոշումներն անմիջականորեն

կամ երրորդ անձանց միջոցով սահմանելու հնարավորություն ստանալով, այդ թվում՝ քվեարկող բաժնետոմսերը (մասնաբաժինը) կազմող ձայների տնօրինման, տնօրենների խորհրդում (դիտորդ խորհրդում) մասնակցության միջոցով և այդ իրավաբանական անձի կառավարման այլ մարմիններում,

մասնաճյուղի բացումը,

ներկայացուցչության բացումը,

որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելը:

Հիմնադրումն իրականացվում է նաև ծառայությունների առևտրի և (կամ) ապրանքների արտադրության նպատակներով,

25) «անդամ պետության ֆիզիկական անձ»՝ անդամ պետության քաղաքացին անդամ պետության օրենսդրությանը համապատասխան,

26) «մասնաճյուղ»՝ իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա գործառույթները կամ դրանց մի մասը, այդ թվում՝ ներկայացուցչության գործառույթները,

27) «անդամ պետության իրավաբանական անձ»՝ ցանկացած կազմակերպահիրավական ձևի կազմակերպություն, որն ստեղծվել կամ հիմնադրվել է անդամ պետության տարածքում այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

7. Սույն Արձանագրության նպատակներով ծառայությունների ոլորտները որոշվում և դասակարգվում են հիմնական մթերքի միջազգային դասակարգչի հիման վրա, որը հաստատվել է Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարության վիճակագրական հանձնաժողովի կողմից (Cenral Products Classification):

III. Վճարումները և փոխանցումները

8. Բացառությամբ սույն Արձանագրության 11-14-րդ կետերով նախատեսված դեպքերի՝ յուրաքանչյուր անդամ պետություն չեղյալ է հայտարարում գործող սահմանափակումները և չի սահմանում նոր սահմանափակումներ՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների հետ կապված փոխանցումների ու վճարումների առումով, հատկապես՝ ստորև նշվածների նկատմամբ.

1) եկամուտների,

2) փոխառությունների և վարկերի մարման համար վճարվող միջոցների, որոնք անդամ պետությունների կողմից ճանաչվել են որպես ներդրումներ,

3) միջոցների, որոնք ստացել է ներդրողը՝ առևտրային կազմակերպության մասնակի կամ լրիվ լուծարման կամ ներդրումների վաճառքի կապակցությամբ,

4) միջոցների, որոնք ներդրողն ստացել է որպես վնասի հատուցում՝ սույն Արձանագրության 77-րդ կետին համապատասխան և որպես փոխհատուցում՝ սույն Արձանագրության 79-81-րդ կետերով նախատեսված,

5) աշխատավարձի և այլ վարձատրության, որոնք ստանում են մյուս անդամ պետությունների ներդրողներն ու քաղաքացիները, որոնց թույլատրված է աշխատել ստացող պետության տարածքում ներդրումներն իրականացնելու կապակցությամբ:

9. Սույն բաժնում ոչինչ չի առնչվում ցանկացած անդամ պետության իրավունքներին ու պարտավորություններին, որոնք բխում են Արժույթի միջազգային հիմնադրամին նրա անդամակցությունից՝ ներառյալ արժութային գործառնությունների կարգավորման միջոցներին առնչվող իրավունքները և պարտավորությունները՝ պայմանով, որ անդամ պետության այդ միջոցները համապատասխանում են Արժույթի միջազգային հիմնադրամի՝ 1944 թվականի հուլիսի 22-ի համաձայնագրի հոդվածներին և (կամ) պայմանով, որ անդամ պետությունը չի սահմանում փոխանցումների և վճարումների՝ սույն Արձանագրությամբ նախատեսված՝ այդպիսի գործառնություններին առնչվող իր պարտավորությունների հետ անհամատեղելի սահմանափակումներ՝ բացառությամբ սույն Արձանագրության 11-14-րդ կետերում նշված դեպքերի, կամ Արժույթի միջազգային հիմնադրամի պահանջի հիման վրա սահմանափակումների կիրառման դեպքերի:

10. Սույն Արձանագրության 8-րդ կետով նախատեսված փոխանցումները կարող են իրականացվել հեշտությամբ փոխարկելի ցանկացած արժույթով: Միջոցների փոխարկումն

իրականացվում է առանց փոխարժեքի տատանումներից բխող չհիմնավորված ուշացման, որը կիրառվում է անդամ պետության տարածքում՝ դրամական միջոցների փոխանցման և վճարումների իրականացման օրվա դրությամբ:

IV. Վճարումների և փոխանցումների մասով սահմանափակումները

11. Վճարային հաշվեկշռի վիճակի վատթարացման, ոսկեարժութային պահուստների էական կրճատման, ազգային արժույթի փոխարժեքի կտրուկ տատանումների կամ դրա վտանգի դեպքում անդամ պետությունը կարող է սահմանել սահմանափակումներ՝ սույն Արձանագրության 8-րդ կետով նախատեսված վճարումների և փոխանցումների մասով:

12. Սույն Արձանագրության 11-րդ կետում նշված սահմանափակումները.

1) չպետք է ստեղծեն խտրականություն անդամ պետությունների միջև,

2) պետք է համապատասխանեն Արժույթի միջազգային հիմնադրամի 1944 թվականի հուլիսի 22-ի համաձայնագրի հոդվածներին,

3) չպետք է չափից ավելի վնաս հասցնեն ցանկացած այլ անդամ պետության առևտրային, տնտեսական և ֆինանսական շահերին,

4) չպետք է լինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է՝ սույն Արձանագրության 11-րդ կետում նշված հանգամանքները հաղթահարելու համար,

5) պետք է լինեն ժամանակավոր և վերացվեն աստիճանաբար՝ այնքանով, որքանով կվերանան սույն Արձանագրության 11-րդ կետում նշված հանգամանքները:

13. Սույն Արձանագրության 11-րդ կետում նշված սահմանափակումների գործողության ոլորտը սահմանելիս անդամ պետությունները կարող են նախապատվությունը տալ այն ապրանքների մատակարարմանը կամ ծառայությունների տրամադրմանը, որոնք առավել կարևոր են իրենց տնտեսական կամ զարգացման ծրագրերի համար: Սակայն նման սահմանափակումները չեն սահմանվում և չեն պահպանվում տնտեսության որոշակի ոլորտի պաշտպանության նպատակով:

14. Սույն Արձանագրության 11-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների կողմից սահմանված կամ պահպանված ցանկացած սահմանափակման կամ դրանց ցանկացած փոփոխության մասին անհապաղ ծանուցվում է այլ անդամ պետությունների:

V. Պետության մասնակցությունը

15. Յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում սեփականաշնորհման գործընթացին մասնակցություն ունենալու առնչությամբ մյուս անդամ պետության անձանց համար ապահովում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ իր անդամ պետության անձանց համար ապահովվող ռեժիմից՝ հաշվի առնելով ազգային ցանկերում կամ սույն Արձանագրության 2-րդ հավելվածում նշված սահմանափակումները, բացառումները, լրացուցիչ պահանջներն ու պայմանները:

16. Եթե անդամ պետության տարածքում գործում են իրավաբանական անձինք, որոնց կապիտալում մասնակցություն ունի այդ անդամ պետությունը կամ որոնք վերահսկվում են վերջինիս կողմից, ապա այդ անդամ պետությունն ապահովում է, որ նշված անձինք՝

1) իրենց գործունեությունն իրականացնեն առևտրային նկատառումների հիման վրա և մասնակցեն սույն Արձանագրությամբ կարգավորվող հարաբերություններում.

այդ հարաբերությունների այլ մասնակիցների հետ հավասարության սկզբունքի հիման վրա,

այդ հարաբերությունների այլ մասնակիցների նկատմամբ խտրականության բացառման սկզբունքի հիման վրա՝ կախված նրանց քաղաքացիությունից, գրանցման (հիմնադրման) վայրից, կազմակերպաիրավական ձևից կամ սեփականության ձևից,

2) ձեռք չբերեն իրավունքներ, արտոնություններ կամ պարտականություններ՝ բացառապես պայմանավորված իրենց կապիտալում անդամ պետության ունեցած մասնակցությամբ կամ դրանց նկատմամբ այդ անդամ պետության վերահսկողությամբ:

Նշված պահանջները չեն կիրառվում այն դեպքում, եթե այդ իրավաբանական անձանց գործունեությունն ուղղված է անդամ պետության սոցիալական քաղաքականության խնդիրների

լուծմանը, ինչպես նաև՝ ազգային ցանկերում կամ սույն Արձանագրության 2-րդ հավելվածում նշված սահմանափակումների և պայմանների մասով:

17. Սույն Արձանագրության 16-րդ կետի դրույթները տարածվում են նաև այն իրավաբանական անձանց վրա, որոնց պաշտոնապես կամ փաստացի վերապահված են բացառիկ իրավունքներ կամ հատուկ արտոնություններ՝ բացառությամբ սույն Արձանագրության 30-րդ կետի 2-րդ և 6-րդ ենթակետերի հիման վրա ազգային ցանկերում կամ սույն Արձանագրության 2-րդ հավելվածում ընդգրկված այն իրավաբանական անձանց վրա, որոնց պաշտոնապես կամ փաստացի վերապահված են բացառիկ իրավունքներ կամ հատուկ արտոնություններ, և այն իրավաբանական անձանց վրա, որոնց գործունեությունը կարգավորվում է պայմանագրի XIX բաժնին համապատասխան:

18. Անդամ պետություններից յուրաքանչյուրն ապահովում է, որ այդ անդամ պետության բոլոր մարմինները պետական իշխանության ցանկացած մակարդակով կամ դրա տեղական ինքնակառավարման մարմինները լինեն անկախ, վերահսկման ոչ ենթակա և տնտեսության ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող ցանկացած անձի ոչ հաշվետու, որի գործունեության կարգավորումը գտնվում է համապատասխան մարմնի իրավասության շրջանակներում՝ չհակասելով պայմանագրի 69-րդ հոդվածի դրույթներին:

Այդ անդամ պետության միջոցները, այդ թվում՝ նշված մարմնի որոշումները, նրա կողմից սահմանվող և կիրառվող կանոններն ու ընթացակարգերը պետք է տնտեսական գործունեություն իրականացնող բոլոր անձանց նկատմամբ լինեն անկողմնակալ և օբյեկտիվ:

19. Պայմանագրի XIX բաժնից բխող պարտավորություններին համապատասխան և անկախ սույն Արձանագրության 30-րդ կետի դրույթներից՝ անդամ պետություններից յուրաքանչյուրն իր տարածքում կարող է ունենալ բնական մենաշնորհների սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձանց: Իր տարածքում այդպիսի իրավաբանական անձինք ունեցող անդամ պետությունն ապահովում է, որպեսզի իրավաբանական անձինք գործեն այդ անդամ պետության՝ պայմանագրի XIX բաժնից բխող պարտավորությունների հետ համատեղելի կերպով:

20. Եթե սույն Արձանագրության 19-րդ կետում նշված մեկ անդամ պետության իրավաբանական անձինք իրենց մենաշնորհային իրավունքների գործողության ոլորտից դուրս մյուս անդամ պետությունների անձանց հետ մրցակցում են ուղղակիորեն կամ իրենց կողմից վերահսկվող իրավաբանական անձանց միջոցով, ապա առաջին անդամ պետությունն ապահովում է, որ այդ իրավաբանական անձը չչարաշահի իր մենաշնորհային դիրքը՝ առաջին անդամ պետության տարածքում գործելով այնպես, որ դա անհամատեղելի լինի այդ առաջին անդամ պետության՝ սույն Արձանագրությունից բխող պարտավորությունների հետ:

VI. Ծառայությունների առևտուրը, հիմնադրումն ու գործունեությունը

1. Ազգային ռեժիմը՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման ու գործունեության ժամանակ

21. Ծառայությունների առևտրին առնչվող բոլոր միջոցների համար յուրաքանչյուր անդամ պետություն մյուս անդամ պետության ծառայությունների, ծառայությունների մատակարարների և ստացողների համար ապահովում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ սեփական նույն (նմանատիպ) ծառայությունների, ծառայությունների մատակարարների և ստացողների համար նույն (նմանատիպ) հանգամանքներում ապահովվող ռեժիմից:

22. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է կատարել սույն Արձանագրության 21-րդ կետում նշված պարտավորությունները՝ ցանկացած այլ անդամ պետության ծառայությունների, ծառայությունների մատակարարների և ստացողների համար ապահովելով պաշտոնապես նույն ռեժիմը կամ ռեժիմ՝ պաշտոնապես տարբեր այն ռեժիմից, որն այդ անդամ պետությունն ապահովում է սեփական նույն (նմանատիպ) ծառայությունների կամ ծառայությունների մատակարարների կամ ստացողների համար:

Պաշտոնապես նույն կամ պաշտոնապես տարբեր ռեժիմը համարվում է պակաս բարենպաստ, եթե այն փոխում է մրցակցության պայմանները՝ հօգուտ այդ անդամ պետության ծառայությունների, ծառայությունների մատակարարների և (կամ) ստացողների՝ ցանկացած այլ անդամ պետության նույն (նմանատիպ) ծառայությունների, ծառայությունների մատակարարների և (կամ) ստացողների համեմատ:

23. Անկախ սույն Արձանագրության 21-րդ կետի դրույթներից՝ յուրաքանչյուր անդամ պետություն մյուս անդամ պետության ծառայությունների, ծառայությունների մատակարարների և ստացողների մասով կարող է կիրառել ազգային ցանկերում կամ սույն Արձանագրության 2-րդ հավելվածում նշված առանձին սահմանափակումներն ու պայմանները:

24. Յուրաքանչյուր անդամ պետություն ցանկացած անդամ պետության անձանց համար հիմնադրման և գործունեության իրականացման մասով ապահովում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ սեփական տարածքում իր անձանց համար նույն (նմանատիպ) հանգամանքներում ապահովվող ռեժիմից:

25. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է կատարել սույն Արձանագրության 24-րդ կետում նշված պարտավորությունները՝ ցանկացած այլ անդամ պետության անձանց համար ապահովելով պաշտոնապես նույն ռեժիմը կամ ռեժիմ՝ պաշտոնապես տարբեր այն ռեժիմից, որն այդ անդամ պետությունն ապահովում է իր անձանց համար: Ընդ որում, այդ ռեժիմը համարվում է պակաս բարենպաստ, եթե այն փոխում է մրցակցության պայմանները՝ հօգուտ այդ անդամ պետության անձանց՝ ցանկացած այլ անդամ պետության անձանց համեմատ:

26. Անկախ սույն Արձանագրության 24-րդ կետի դրույթներից՝ յուրաքանչյուր անդամ պետություն ցանկացած անդամ պետության անձանց հիմնադրման և գործունեության մասով կարող է կիրառել ազգային ցանկերում կամ սույն Արձանագրության 2-րդ հավելվածում նշված առանձին սահմանափակումներն ու պայմանները:

2. Առավել բարենպաստության ռեժիմը՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման ու գործունեության ժամանակ

27. Յուրաքանչյուր անդամ պետություն նույն (նմանատիպ) հանգամանքներում ցանկացած այլ անդամ պետության ծառայությունների, ծառայությունների մատակարարների և ստացողների համար ապահովում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ երրորդ պետությունների նույն (նմանատիպ) ծառայությունների, ծառայությունների մատակարարների և ստացողների համար ապահովվող ռեժիմից:

28. Անկախ սույն Արձանագրության 27-րդ կետի դրույթներից՝ յուրաքանչյուր անդամ պետություն ցանկացած այլ անդամ պետության ծառայությունների, ծառայությունների մատակարարների և ստացողների մասով կարող է կիրառել ազգային ցանկում կամ սույն Արձանագրության 2-րդ հավելվածում նշված առանձին բացառումները:

29. Յուրաքանչյուր անդամ պետություն նույն (նմանատիպ) հանգամանքներում ցանկացած այլ անդամ պետության անձանց, ինչպես նաև իր կողմից հիմնադրված անձանց համար իր տարածքում հիմնադրման և գործունեության իրականացման մասով ապահովում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ երրորդ պետությունների անձանց, ինչպես նաև իր կողմից հիմնադրված անձանց համար ապահովվող ռեժիմից:

3. Քանակական և ներդրումային միջոցները

30. Անդամ պետությունները ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության իրականացման մասով չեն սահմանում և ցանկացած անդամ պետության անձանց նկատմամբ չեն կիրառում սահմանափակումներ, որոնք առնչվում են՝

1) ծառայությունների մատակարարների թվին՝ քվոտայի, տնտեսական նպատակահարմարության ստուգման կամ ցանկացած այլ քանակական ձևով,

2) ստեղծվող, ձեռք բերվող և (կամ) վերահսկվող իրավաբանական անձանց, մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների, գրանցվող անհատ ձեռնարկատերերի թվին,

3) ծառայությունների ցանկացած մատակարարի գործառնություններին՝ քվոտայի, տնտեսական նպատակահարմարության ստուգման տեսքով կամ ցանկացած այլ քանակական ձևով,

4) ստեղծված, ձեռք բերված կամ վերահսկվող իրավաբանական անձի, մասնաճյուղի, ներկայացուցչության, գրանցված անհատ ձեռնարկատիրոջ գործառնություններին՝ նրանց կողմից գործունեություն իրականացնելու ընթացքում՝ քվոտայի, տնտեսական նպատակահարմարության ստուգման կամ ցանկացած այլ քանակական ձևով,

5) հիմնադրման ձևին, այդ թվում՝ իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևին,

6) իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ձեռք բերվող մասնաբաժնին կամ իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողության աստիճանին,

7) այն ֆիզիկական անձանց ընդհանուր թվի սահմանափակմանը, որոնք ծառայությունների որոշակի ոլորտում կարող են զբաղվածություն ունենալ կամ այն ֆիզիկական անձանց թվի սահմանափակմանը, որոնց ծառայությունների մատակարարը կարող է վարձել, որոնց անհրաժեշտությունը կա և որոնք անմիջականորեն առնչվում են որոշակի ծառայության մատակարարմանը՝ քանակական քվոտաների կամ տնտեսական նպատակահարմարության ստուգման ձևով:

31. Յուրաքանչյուր անդամ պետություն ցանկացած անդամ պետության ծառայությունների, ծառայությունների մատակարարների և ստացողների մասով կարող է սահմանել և կիրառել սույն Արձանագրության 30-րդ կետում նշված սահմանափակումներն այն դեպքում, եթե այդպիսի սահմանափակումները նախատեսված են ազգային ցանկով կամ սույն Արձանագրության 2-րդ հավելվածով:

32. Անդամ պետություններից ոչ մեկը չի սահմանում և անդամ պետությունների անձանց, ինչպես նաև իր կողմից հիմնադրված անձանց նկատմամբ չի կիրառում հետևյալ լրացուցիչ պահանջները՝ որպես հիմնադրման և (կամ) գործունեության հետ կապված պայմաններ.

1) արտահանել արտադրված բոլոր ապրանքները կամ ծառայությունները կամ դրանց մի մասը,

2) ներմուծել ապրանքները կամ ծառայությունները,

3) գնել կամ օգտագործել ապրանքներ կամ ծառայություններ, որոնց ծագման պետությունն անդամ պետությունն է,

4) պահանջները, որոնք սահմանափակում են այդ անդամ պետության տարածքում ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը, այդ անդամ պետության տարածք ապրանքների ներմուծումը կամ այդ անդամ պետության տարածքից ապրանքների արտահանումը և կապված են արտադրվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) ծավալների, տեղական ապրանքների կամ ծառայությունների օգտագործման հետ, կամ սահմանափակում են ձեռնարկության հասանելիությունն այն արտարժույթին, որը սահմանված է սույն ենթակետում նշված գործառնությունների մասով,

5) փոխանցել տեխնոլոգիաները, «նոու-հաուն» և առևտրային արժեք ունեցող այլ տեղեկություններ՝ բացառությամբ դատարանի կամ մրցակցության պաշտպանության ոլորտում լիազորված մարմնի որոշման հիման վրա դրանց փոխանցման դեպքերի՝ անդամ պետությունների միջազգային այլ պայմանագրերով սահմանված մրցակցային քաղաքականությունն իրականացնելու կանոնները պահպանելիս:

33. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է սահմանել և մյուս անդամ պետությունների անձանց նկատմամբ կիրառել սույն Արձանագրության 32-րդ կետում նշված լրացուցիչ պահանջներն այն դեպքում, եթե այդպիսի սահմանափակումները նախատեսված են ազգային ցանկով կամ սույն Արձանագրության 2-րդ հավելվածով:

34. Սույն Արձանագրության 32-րդ կետում նշված պահանջների կատարումը չի կարող հիմք ծառայել, որպեսզի ցանկացած անդամ պետության անձ ստանա հիմնադրման կամ գործունեության հետ կապված առանձնաշնորհումներ:

4. Ֆիզիկական անձանց տեղափոխումը

35. Բացառությամբ ազգային ցանկում կամ սույն Արձանագրության 2-րդ հավելվածում նշված սահմանափակումների և պահանջների՝ հաշվի առնելով պայմանագրի XXVI բաժնի դրույթները՝ յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում չի սահմանում և կիրառում աշխատողներ վարձելու հետ կապված սահմանափակումներ՝ ստեղծված, ձեռքբերված կամ վերահսկվող իրավաբանական անձի, մասնաճյուղի, ներկայացուցչության, գրանցված անհատ ձեռնարկատիրոջ գործունեության մասով:

36. Սույն Արձանագրության 35-րդ կետի դրույթները չեն կիրառվում այն պահանջների նկատմամբ, որոնք ներկայացվում են աշխատողների կրթությանը, փորձառությանը, որակավորմանը, աշխատանքային հատկանիշներին այն դեպքում, եթե դրանց կիրառումը չի

հանգեցնում աշխատողների նկատմամբ փաստացի խտրականության դրսևորմանը՝ կախված քաղաքացիությունից:

37. Հաշվի առնելով պայմանագրի XXVI բաժնի դրույթները՝ յուրաքանչյուր անդամ պետություն չի սահմանում և չի կիրառում սահմանափակումներ այն ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնք ծառայությունների առևտրին մասնակցում են սույն Արձանագրության 6-րդ կետի 22-րդ ենթակետի հինգերորդ պարբերության մեջ նշված եղանակով, և որոնք գտնվում են այդ անդամ պետության տարածքում:

5. Ծառայությունների միասնական շուկայի ձևավորումը

38. Սույն բաժնի նպատակներով «ծառայությունների միասնական շուկա» ասելով պետք է հասկանալ ծառայությունների շուկայի վիճակը կոնկրետ ոլորտի շրջանակներում, որում յուրաքանչյուր անդամ պետություն ցանկացած այլ անդամ պետության անձանց տրամադրում է ստորև նշվածների իրավունքը.

1) սույն Արձանագրության 21-րդ, 24-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ և 32-րդ կետերում նշված պայմաններով ծառայությունների տրամադրման ու ստացման՝ առանց սահմանափակումների, բացառումների և լրացուցիչ պահանջների՝ բացառությամբ սույն Արձանագրության 2-րդ հավելվածով նախատեսված պայմանների և սահմանափակումների,

2) ծառայությունների տրամադրման՝ առանց որպես իրավաբանական անձ լրացուցիչ կերպով հիմնադրվելու,

3) ծառայությունների տրամադրման՝ ծառայություններ տրամադրելու համար թույլտվության հիման վրա, որը ծառայությունները տրամադրողն ստացել է իր անդամ պետության տարածքում,

4) ծառայությունները տրամադրողի անձնակազմի մասնագիտական որակավորման ճանաչման:

39. Ծառայությունների միասնական շուկայի կանոնները գործում են անդամ պետությունների նկատմամբ՝ փոխադարձության պայմանների հիման վրա:

40. Միության շրջանակներում ծառայությունների միասնական շուկան գործում է Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող ծառայությունների ոլորտներում՝ անդամ պետությունների և Հանձնաժողովի համաձայնեցված առաջարկությունների հիման վրա:

41. Անդամ պետությունները ձգտում են փոխադարձության հիմքով ծառայությունների միասնական շուկայի կանոնները հնարավորինս մեծ թվով ծառայությունների ոլորտների վրա տարածելուն, այդ թվում՝ ազգային ցանկերով նախատեսված բացառումները և սահմանափակումները փուլ առ փուլ նվազեցնելու միջոցով:

42. Ծառայությունների միասնական շուկայի ձևավորման կարգն ու փուլերը՝ ըստ առանձին ոլորտների, նախատեսվում են ազատականացման ծրագրերով, որոնք մշակվում են Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող՝ անդամ պետությունների և Հանձնաժողովի համաձայնեցված առաջարկությունների հիման վրա (այսուհետ՝ ազատականացման ծրագրեր):

43. Ազատականացման ծրագրերով առանձին անդամ պետությունների համար կարող են նախատեսվել ծառայությունների առանձին ոլորտների ազատականացման ավելի ուշ ժամկետներ, ինչը մյուս անդամ պետությունների համար խոչընդոտ չէ՝ փոխադարձության պայմանների հիման վրա ծառայությունների այդ ոլորտներում միասնական շուկա ստեղծելու գործընթացում:

44. Այն ոլորտներում, որոնց մասով չեն գործում ծառայությունների միասնական շուկայի կանոնները, կիրառվում են սույն բաժնի 1-4-րդ ենթաբաժինների դրույթները:

6. Երրորդ պետությունների հետ հարաբերությունները՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման հարցերով

45. Սույն Արձանագրության մեջ ոչինչ չի խոչընդոտում, որպեսզի անդամ պետությունները երրորդ պետությունների հետ կնքեն տնտեսական ինտեգրման մասին միջազգային համաձայնագրեր, որոնք համապատասխանում են սույն Արձանագրության 46-րդ կետի պահանջներին:

Տնտեսական ինտեգրման մասին այդպիսի միջազգային համաձայնագիր կնքած յուրաքանչյուր անդամ պետություն նույն (նմանատիպ) պայմաններով անդամ պետություններին է շնորհում զիջումներ, որոնք տվյալ անդամ պետությունն ապահովում է տնտեսական ինտեգրման մասին այդպիսի միջազգային համաձայնագրի շրջանակներում:

Սույն կետում «զիջումներ» ասելով պետք է հասկանալ անդամ պետության կողմից՝ նրա ազգային ցանկով նախատեսված մեկ կամ մի քանի սահմանափակումների չեղյալ հայտարարելը:

46. Սույն Արձանագրության նպատակներով անդամ պետության և երրորդ պետության միջև կնքված տնտեսական ինտեգրման մասին միջազգային համաձայնագրերով ճանաչվում են միջազգային այն համաձայնագրերը, որոնք համապատասխանում են հետևյալ չափորոշիչներին.

1) ընդգրկում են ծառայությունների զգալի թվով ոլորտներ, ինչպես նաև ակնհայտորեն ոչ մի դեպքում ապրիորի չեն բացառում ծառայությունների տրամադրման եղանակներից, հիմնադրմանը և գործունեությանն առնչվող հարցերից ոչ մեկը,

2) ուղղված են գոյություն ունեցող խտրական միջոցների վերացմանը և նորերի ներդրումն արգելելուն,

3) ուղղված են ծառայությունների առևտրի, հիմնադրման ու գործունեության ազատականացմանը:

Միջազգային նմանատիպ համաձայնագրերի նպատակը դրանց մասնակիցների միջև ծառայությունների առևտրի և հիմնադրման ու գործունեության պայմանների հեշտացումն է: Այդ համաձայնագիրը չպետք է հանգեցնի ցանկացած երրորդ պետության նկատմամբ որոշակի ոլորտներում կամ ենթաոլորտներում ծառայությունների առևտրի գործընթացում խոչընդոտների ընդհանուր մակարդակի ավելացմանը՝ նախքան նմանատիպ համաձայնագրի կնքումը կիրառվող մակարդակի համեմատ:

47. Երրորդ պետության հետ տնտեսական ինտեգրման մասին միջազգային համաձայնագիր կնքած անդամ պետությունը համաձայնագրի ստորագրման օրվանից սկսած 1 ամսվա ընթացքում պարտավոր է այն կնքելու մասին տեղեկացնել մյուս անդամ պետություններին:

48. Երրորդ պետությունների հետ ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման հարցերում անդամ պետություններն ինքնուրույն են որոշում իրենց արտաքին առևտրային քաղաքականությունը:

7. Ծառայություններն ստացողի լրացուցիչ իրավունքները

49. Հաշվի առնելով պայմանագրի XV բաժնի դրույթները՝ յուրաքանչյուր անդամ պետություն ծառայություններն ստացողի նկատմամբ չի սահմանում այնպիսի պահանջներ կամ հատուկ պայմաններ, որոնք սահմանափակում են մյուս անդամ պետության ծառայությունները տրամադրողի կողմից մատուցվող (մատուցված) ծառայություններն ստանալու, օգտագործելու կամ դրանց դիմաց վճարելու իրավունքը՝ ներառյալ ծառայությունները տրամադրողի ընտրությունը կամ իրավասու մարմինների թույլտվությունն ստանալու պարտականությունը:

50. Հաշվի առնելով պայմանագրի XV բաժնի դրույթները՝ յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ ծառայություններն ստացողի նկատմամբ չկիրառվեն խտրական պահանջներ կամ հատուկ պայմաններ՝ կախված նրա քաղաքացիությունից, բնակության կամ հիմնադրման կամ գործունեության վայրից:

51. Յուրաքանչյուր անդամ պետություն պարտավորեցնում է.

1) ծառայությունները տրամադրողներին՝ անհրաժեշտ տեղեկությունները տրամադրել ծառայություններն ստացողներին՝ պայմանագրի և անդամ պետության օրենսդրությանը համապատասխան,

2) իրավասու մարմիններին՝ ձեռնարկել միջոցներ՝ ծառայություններն ստացողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ուղղությամբ:

52. Սույն բաժնում ոչինչ չի առնչվում անդամ պետության՝ ցանկացած այնպիսի միջոց ձեռնարկելու իրավունքին, որն անհրաժեշտ է նրա սոցիալական քաղաքականությունն իրականացնելու համար՝ ներառյալ բնակչության կենսաթոշակային ապահովման և սոցիալական աջակցության հարցերը:

Պայմանագրի XIX, XX և XXI բաժիններով ընդգրկվող ծառայություններին՝ դրանցից օգտվողների հասանելիության և այդ ծառայություններից օգտվողների համար ապահովվող ռեժիմի հարցերը կարգավորվում են համապատասխանաբար այդ բաժինների դրույթներով:

8. Թույլտվությունների և մասնագիտական որակավորումների փոխադարձ ճանաչումը

53. Թույլտվությունների ճանաչումն այն ոլորտներում ծառայությունների տրամադրման համար, որոնց մասով իրականացվում են ազատականացման ծրագրեր, ապահովվում է սույն Արձանագրության 54-րդ և (կամ) 55-րդ կետերում նշված միջոցները ձեռնարկելուց հետո:

54. Փոխադարձ խորհրդատվությունների (այդ թվում՝ միջգերատեսչական բնույթի) հիման վրա անդամ պետությունները կարող են ընդունել որոշում՝ կոնկրետ ոլորտներում ծառայությունների տրամադրման համար թույլտվությունների փոխադարձ ճանաչման մասին՝ այդ ոլորտներում կարգավորման բովանդակային համարժեքություն ձեռք բերելու կապակցությամբ:

55. Ազատականացման ծրագրերով ապահովվում է.

1) գործունեության իրականացման (այդ թվում՝ թույլտվության պահանջների և ընթացակարգերի) համար թույլտվություն ունենալու մեխանիզմների փուլային մոտարկումը՝ անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման միջոցով՝ ըստ ծառայությունների կոնկրետ ոլորտների այդ ներդաշնակեցումը վերջնականացնելու համար ժամկետներ սահմանելով,

2) վարչական համագործակցության մեխանիզմների ստեղծումը՝ պայմանագրի 68-րդ հոդվածին համապատասխան,

3) ծառայությունները տրամադրողների աշխատողների մասնագիտական որակավորման ճանաչումը:

56. Այն դեպքում, եթե մասնագիտական ծառայությունների իրականացման նպատակով թույլտվության համար պահանջվում է մասնագիտական քննություն հանձնել, ապա յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է մասնագիտական այդպիսի քննություն հանձնելու ոչ խտրական կարգը:

9. Ներքին կարգավորումը՝ ծառայությունների առևտրի ժամանակ և հիմնադրման և (կամ) գործունեության մասով

57. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության վրա ազդող այդ անդամ պետության բոլոր միջոցները կիրառվեն ողջամիտ, օբյեկտիվ և անկողմնակալ կերպով:

58. Յուրաքանչյուր անդամ պետություն պահպանում է կամ հնարավորինս արագ ստեղծում է դատական, արբիտրաժային կամ վարչական մարմիններ կամ ընթացակարգեր, որոնք մյուս անդամ պետությունների այն անձանց պահանջի դեպքում, որոնց շահերը դիտարկվում են, ապահովում են միջոցների անհապաղ ուսումնասիրությունն ու դրանց հիմնավորված ընդունումը՝ ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության վրա ազդող վարչական որոշումները փոփոխելու նպատակով: Այն դեպքում, երբ նշված ընթացակարգերը անկախ չեն վարչական նման որոշումներ ընդունելու համար լիազորված մարմնից, անդամ պետությունն ապահովում է, որ ընթացակարգերով իսկապես ապահովվի օբյեկտիվ և անկողմնակալ ուսումնասիրություն:

59. Սույն Արձանագրության 58-րդ կետի դրույթներով պահանջներ չեն նախատեսվում անդամ պետության նկատմամբ՝ ստեղծելու սույն Արձանագրության 58-րդ կետում նշված մարմինները կամ ընթացակարգերը, եթե դա անհամատեղելի է անդամ պետության սահմանադրական կարգի կամ դատական համակարգի բնույթի հետ:

60. Ծառայությունների առևտրի, հիմնադրման և (կամ) գործունեության համար թույլտվություն ստանալու անհրաժեշտության դեպքում անդամ պետության իրավասու մարմիններն անդամ պետության օրենսդրության պահանջների և կարգավորման կանոններին համապատասխան ձևակերպված համարվող դիմումը ներկայացնելուց հետո ողջամիտ

ժամանակահատվածում տեղեկացնում են հայտատուին դիմումի ուսումնասիրության և դրա արդյունքների հիման վրա կայացված որոշման մասին:

Նշված դիմումը չի համարվում պատշաճորեն ձևակերպված այնքան ժամանակ, քանի դեռ անդամ պետության օրենսդրության պահանջներին համապատասխան, չեն ստացվել բոլոր փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները:

Ամեն դեպքում հայտատուին պետք է դիմումի մեջ տեխնիկական բնույթի ուղղումներ կատարելու հնարավորություն ընձեռվի:

Անդամ պետության իրավասու մարմինները հայտատուի պահանջով տրամադրում են տեղեկատվություն դիմումի ուսումնասիրության ընթացքի մասին՝ առանց անհարկի ուշացման:

61. Հանձնաժողովը, համաձայնեցնելով անդամ պետությունների հետ, մշակում է Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող կանոններ՝ ապահովելու համար, որ ծառայությունների առևտրի, հիմնադրման և գործունեության ժամանակ պահանջներն ու ընթացակարգերը չստեղծեն չհիմնավորված խոչընդոտներ: Այդ կանոնների նպատակն ապահովելն է, որ թույլտվության այդ պահանջներն ու ընթացակարգերը, ի թիվս այլոց.

1) հիմնված լինեն օբյեկտիվ և թափանցիկ այնպիսի չափորոշիչների վրա, ինչպիսիք ծառայությունների առևտուրն ու գործունեությունն իրականացնելու կոմպետենտությունը և ունակությունն են,

2) չլինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է՝ իրականացվող գործունեության անվտանգությունը, ինչպես նաև տրամադրվող ծառայության անվտանգությունն ու որակն ապահովելու համար,

3) չսահմանափակեն ծառայությունների առևտուրը, հիմնադրումը և (կամ) գործունեությունը:

62. Անդամ պետությունները չեն կիրառում թույլտվության այնպիսի պահանջներ և ընթացակարգեր, որոնցով չեղյալ է համարվում կամ նվազեցվում է օգուտը և որոնք.

1) չեն համապատասխանում սույն Արձանագրության 61-րդ կետում նշված չափորոշիչներին,

2) պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ սահմանված չեն եղել անդամ պետության օրենսդրությամբ և չեն կիրառվել համապատասխան անդամ պետության կողմից:

63. Սույն Արձանագրության 62-րդ կետում նշված պարտավորություններն անդամ պետության կողմից կատարելու փաստը սահմանելիս պետք է հաշվի առնվեն միջազգային այն կազմակերպությունների միջազգային ստանդարտները, որոնց անդամակցելը բաց է բոլոր անդամ պետությունների համար:

64. Այն դեպքում, եթե անդամ պետությունը ծառայությունների առևտրի, հիմնադրման և (կամ) գործունեության մասով կիրառում է թույլտվության պահանջներ և ընթացակարգեր, ապա այդ անդամ պետությունն ապահովում է, որ.

1) թույլտվությունները տրամադրելու համար պատասխանատու իրավասու մարմինների անվանումները հրապարակվեն, կամ հանրությունն այլ կերպ իրազեկվի դրանց մասին,

2) թույլտվության բոլոր պահանջներն ու ընթացակարգերը սահմանվեն անդամ պետության օրենսդրությամբ, և թույլտվության պահանջներ և ընթացակարգեր սահմանող կամ կիրառող ցանկացած ակտ հրապարակվի՝ նախքան դրա ուժի մեջ մտնելու (գործողության մեջ դնելու) օրը,

3) իրավասու մարմիններն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ողջամիտ ժամկետում կայացնեն թույլտվությունը տրամադրելու կամ թույլտվության տրամադրումը մերժելու մասին որոշում՝ որպես կանոն, թույլտվությունը տրամադրելու մասին այն դիմումն ստանալու (մուտք լինելու) ամսաթվից սկսած 30 աշխատանքային օրվանից ոչ ուշ, որը, անդամ պետության օրենսդրության պահանջներին համապատասխան, ձևակերպված է համարվում: Այդ ժամկետը սահմանվում է՝ ելնելով բոլոր այն փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստացման և մշակման համար պահանջվող նվազագույն ժամկետից, որոնք անհրաժեշտ են թույլտվության ընթացակարգի իրականացման համար,

4) դիմումը ներկայացնելու և ուսումնասիրության հետ կապված գանձվող բոլոր տուրքերը՝ բացառությամբ գործունեությունն իրականացնելու իրավունքի համար գանձվող տուրքերի, որպես այդպիսին՝ չսահմանափակեն ծառայությունների առևտուրը, հիմնադրումը, գործունեությունը և հիմնված լինեն իրավասու մարմնի՝ դիմումի ուսումնասիրության ու թույլտվության տրամադրման հետ կապված ծախսերի վրա,

5) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ժամկետը լրանալուց հետո և հայտատուի պահանջով՝ անդամ պետության իրավասու մարմինը, սույն Արձանագրության 60-րդ կետին

համապատասխան, տեղեկացնի հայտատուին՝ իր դիմումի ուսումնասիրության ընթացքի մասին, ինչպես նաև այն մասին, թե արդյոք այդ դիմումը պատշաճորեն ձևակերպված է համարվում:

Ամեն դեպքում հայտատուին պետք է տրամադրվեն սույն Արձանագրության 57-րդ, 58-րդ, 60-րդ, 62-րդ և 64-րդ կետերով նախատեսված իրավունքները,

6) այն հայտատուի գրավոր պահանջով, որը դիմումն ընդունելու հարցում մերժում է ստացել, դիմումի ընդունումը մերժած իրավասու մարմինը հայտատուին գրավոր տեղեկացնի մերժման պատճառների մասին: Ընդ որում, այդ դրույթը չպետք է մեկնաբանվի որպես տեղեկատվությունը բացահայտելու մասին իրավասու մարմնին ներկայացվող պահանջ, որի հրապարակումը խոչընդոտում է օրենքի իրականացումը կամ այլ կերպ հակասում է հանրային շահերին կամ անդամ պետության անվտանգության էական շահերին,

7) դիմումի ընդունման հարցում մերժում ստանալու դեպքում կարողանա ներկայացնել նոր դիմում, եթե իրավասու մարմինը մերժել է այդ դիմումի ընդունումը՝ դրա ոչ պատշաճ ձևակերպման պատճառով,

8) ծառայությունների տրամադրման համար տրվող թույլտվությունները գործեն անդամ պետության՝ այդ թույլտվություններում նշված ամբողջ տարածքում:

VII. Ներդրումները

1. Ընդհանուր դրույթներ

65. Սույն բաժնի դրույթները կիրառվում են անդամ պետությունների ներդրողների կողմից մյուս անդամ պետության տարածքում իրականացվող բոլոր ներդրումների նկատմամբ՝ սկսած 1991 թվականի դեկտեմբերի 16-ից:

66. Ներդրումների իրականացման ձևերից մեկը հիմնադրումն է՝ սույն Արձանագրության 2-րդ կետի 24-րդ ենթակետի իմաստով: Այդպիսի ներդրումների նկատմամբ կիրառվում են սույն Արձանագրության դրույթները՝ բացառությամբ սույն Արձանագրության 69-74-րդ կետերի դրույթների:

67. Ներդրումների իրականացման եղանակների, ինչպես նաև այն ձևերի փոփոխությունը, որոնցով իրականացվում է ներդրումը կամ վերաներդրումը, չի ազդում դրանք՝ որպես ներդրում որակելու վրա՝ պայմանով, որ այդ փոփոխությունը չի հակասում ստացող պետության օրենսդրությանը:

2. Իրավական ռեժիմը և ներդրումների պաշտպանությունը

68. Յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում ապահովում է արդար և իրավահավասար ռեժիմ՝ մյուս անդամ պետությունների ներդրողների կողմից իրականացվող ներդրումների հետ կապված ներդրումների և գործունեության առնչությամբ:

69. Սույն Արձանագրության 68-րդ կետում նշված ռեժիմը պետք է լինի այնպիսին, որը պակաս բարենպաստ չէ անդամ պետության (ազգային) ներդրողների կողմից իրականացվող ներդրումներին և այդպիսի ներդրումներին առնչվող գործունեության մասով այդ անդամ պետության կողմից ապահովվող ռեժիմից:

70. Յուրաքանչյուր անդամ պետություն նույն (նմանատիպ) հանգամանքներում ցանկացած այլ անդամ պետության ներդրողների, նրանց ներդրումների և այդպիսի ներդրումներին առնչվող գործունեության համար ապահովում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ ցանկացած երրորդ պետության ներդրողների, նրանց ներդրումների և այդպիսի ներդրումներին առնչվող գործունեության համար ապահովվող ռեժիմից:

71. Սույն Արձանագրության 69-րդ և 70-րդ կետերով նախատեսված ռեժիմներն անդամ պետությունների կողմից պետք է ապահովվեն ըստ ներդրողի ընտրության՝ կախված այն բանից, թե ռեժիմներից որն է առավել բարենպաստ:

72. Յուրաքանչյուր անդամ պետություն մյուս անդամ պետությունների ներդրողների կողմից իր տարածքում ներդրումներ իրականացնելու համար ստեղծում է բարենպաստ պայմաններ և թույլատրում այդ ներդրումներն իր օրենսդրությանը համապատասխան:

73. Յուրաքանչյուր անդամ պետություն, իր օրենսդրությանը համապատասխան, պահպանում է մյուս անդամ պետությունների ներդրողների գործունեությունը սահմանափակելու, ինչպես նաև սույն Արձանագրության 69-րդ կետում նշված ազգային ռեժիմից այլ բացառումներ սահմանելու և կիրառելու իրավունքը:

74. Սույն Արձանագրության 70-րդ կետի դրույթները չպետք է մեկնաբանվեն՝ որպես անդամ պետությանը պարտավորեցնող, որպեսզի վերջինս մյուս անդամ պետությունների ներդրողների կատարած այդպիսի ներդրումների և գործունեության վրա տարածի ցանկացած ռեժիմի, առանձնաշնորհումների կամ արտոնությունների առավելությունները, որոնք տրամադրվում են կամ հետագայում կարող են տրամադրվել այդ անդամ պետությանը՝ կրկնակի հարկումից խուսափելու մասին միջազգային պայմանագրերի կամ հարկման հարցերով այլ պայմանավորվածությունների, ինչպես նաև սույն Արձանագրության 46-րդ կետում նշված համաձայնագրերի հիման վրա:

75. Յուրաքանչյուր ստացող պետություն մյուս անդամ պետությունների ներդրողներին երաշխավորում է՝ նրանց կողմից հարկային բոլոր պարտավորությունները և ստացող պետության օրենսդրությամբ նախատեսված այլ պարտավորություններ կատարելուց հետո.

1) ներդրումների իրականացման արդյունքում ստացած, ստացող պետության օրենսդրությամբ չարգելված եկամուտները ցանկացած նպատակով օգտագործելու և դրանք տնօրինելու իրավունքը,

2) ներդրումների իրականացման արդյունքում ստացած, ստացող պետության օրենսդրությամբ չարգելված եկամուտները ցանկացած նպատակով օգտագործելու և դրանք տնօրինելու իրավունքը,

3) ներդրողի հայեցողությամբ ցանկացած երկիր սույն Արձանագրության 8-րդ կետում նշված ներդրումների հետ կապված դրամական միջոցների (փողի) և վճարումների անարգել փոխանցումներն իրականացնելու իրավունքը:

76. Յուրաքանչյուր անդամ պետություն, իր օրենսդրությանը համապատասխան, երաշխավորում և ապահովում է իր տարածքում մյուս անդամ պետությունների ներդրողների կատարած ներդրումների պաշտպանությունը:

3. Ներդրողներին հասցված վնասի և երաշխիքի հատուցումը

77. Ներդրողներն ունեն այն վնասի հատուցման իրավունքը, որն իրենց ներդրումներին է հասցվել անդամ պետության տարածքում քաղաքացիական անկարգությունների, ռազմական գործողությունների, հեղափոխության, խռովության, արտակարգ դրություն մտցնելու կամ նմանատիպ այլ իրավիճակների հետևանքով:

78. Ընդ որում, այդպիսի ներդրողների համար ապահովվում է ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ ստացող պետության կողմից իր ազգային ներդրողների կամ երրորդ պետության ներդրողների համար ապահովվող ռեժիմից՝ այն միջոցների առնչությամբ, որոնք այդ անդամ պետությունը ձեռնարկում է այդպիսի վնասի հատուցման առնչությամբ՝ կախված այն բանից, թե ռեժիմներից որն է ներդրողի համար առավել բարենպաստ:

4. Ունեզրկման դեպքում ներդրողների իրավունքների երաշխիքները

79. Մեկ անդամ պետության ներդրողների՝ մյուս անդամ պետության տարածքում իրականացրած ներդրումներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն կարող ենթարկվել ունեզրկման, ազգայնացման, ինչպես նաև այլ միջոցների, որոնց հետևանքները հավասարազոր են ունեզրկման կամ ազգայնացման (այսուհետ՝ ունեզրկում), բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցները ձեռնարկվում են՝ ելնելով հանրային շահերից՝ ստացող պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, խտրական չեն և ուղեկցվում են արագ ու համարժեք փոխհատուցման վճարմամբ:

80. Սույն Արձանագրության 79-րդ կետում նշված փոխհատուցումը պետք է համապատասխանի ներդրողների՝ ունեզրկման ենթարկվող ներդրումների շուկայական արժեքին այն օրվա դրությամբ, որն անմիջապես նախորդում է դրանց փաստացի ունեզրկման օրվան կամ առաջիկա ունեզրկման մասին հայտնի դառնալու օրվան:

81. Սույն Արձանագրության 79-րդ կետում նշված փոխհատուցումը վճարվում է առանց ստացող պետության օրենսդրությամբ նախատեսված ժամկետի ուշացման, բայց ունեզրկման օրվանից սկսած՝ 3 ամսից ոչ ուշ, և ստացող պետության տարածքից ազատ փոխարկելի արժույթով հեշտությամբ փոխանցվում է արտասահման:

Այն դեպքում, եթե փոխհատուցման վճարումն ուշացվում է, ապա ունեզրկման օրվանից մինչև փոխհատուցման փաստացի վճարման օրը փոխհատուցման գումարի վրա ավելանում են տոկոսներ, որոնք հաշվարկվում են՝ ըստ ԱՄՆ դոլարով մինչև 6 ամիս ժամկետով փաստացի տրամադրված վարկերի, ազգային միջբանկային շուկայի դրույքաչափով, որը, սակայն, ցածր չէ LIBOR-ի (London Interbank Offered Rate՝ Լոնդոնյան առաջարկվող միջբանկային դրույքաչափ) դրույքաչափից, կամ անդամ պետության և ներդրողի միջև ձեռք բերված պայմանավորվածությամբ սահմանվող կարգով:

5. Ներդրողների իրավունքների փոխանցումը

82. Անդամ պետությունը կամ վերջինիս կողմից լիազորված մարմինը, որն իրականացրել է վճարումն իր պետության ներդրողին, ստացող պետության տարածքում այդ ներդրողի ներդրումների հետ կապված ոչ առևտրային ռիսկերից պաշտպանելու երաշխիքի հիման վրա սուբրոգացիայի կարգով կարող է իրականացնել ներդրողի իրավունքները նույն ծավալով, ինչ ներդրողն ինքը:

83. Սույն Արձանագրության 82-րդ կետում նշված իրավունքներն իրականացվում են ստացող պետության օրենսդրությանը համապատասխան, սակայն չհակասելով սույն Արձանագրության 21-րդ, 24-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ և 32-րդ կետերի դրույթներին:

6. Ներդրումների հետ կապված վեճերի կարգավորման կարգը

84. Ստացող պետության և մյուս անդամ պետության ներդրողի միջև ստացող պետության տարածքում տվյալ ներդրողի ներդրումների կապակցությամբ ծագող վեճերը՝ ներառյալ սույն Արձանագրության 77-րդ կետին համապատասխան որպես վնասի հատուցում ստացած գումարների չափին, վճարման պայմաններին կամ կարգին և սույն Արձանագրության 79-81-րդ կետերով նախատեսված փոխհատուցմանը կամ սույն Արձանագրության 8-րդ կետով նախատեսված դրամական միջոցների վճարման և փոխանցման կարգին առնչվող վեճերը, հնարավորության դեպքում, կարգավորվում են բանակցություններ անցկացնելու միջոցով:

85. Եթե վեճը չի կարող կարգավորվել բանակցությունների միջոցով դրանց անցկացման մասին վեճի ցանկացած կողմի գրավոր ծանուցելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում, ապա այն ներդրողի ընտրությամբ կարող է քննելու համար ներկայացվել.

1) ստացող պետության՝ համապատասխան վեճերը քննելու համար իրավասու դատարան,

2) ցանկացած պետության Առևտրային պալատին առընթեր միջազգային առևտրային արբիտրաժ՝ վեճի մասնակիցների կողմից համաձայնեցված,

3) ad hoc արբիտրաժային դատարան, որը վեճի կողմերի՝ այլ համաձայնության չգալու դեպքում, պետք է ստեղծվի և գործի՝ Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի արբիտրաժային կանոնակարգի համաձայն (ՅՈՒՆՍԻՏՐԱԼ),

4) Ներդրումներին առնչվող վեճերի կարգավորման հարցերով միջազգային կենտրոն, որն ստեղծվել է «Պետությունների և այլ պետությունների ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ներդրումներին առնչվող վեճերի կարգավորման» 1965 թվականի մարտի 18-ի Կոնվենցիային համապատասխան՝ վեճն այդ Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարգավորելու համար (պայմանով, որ կոնվենցիան ուժի մեջ է մտել վեճի կողմ հանդիսացող երկու անդամ պետությունների համար) կամ Ներդրումներին առնչվող վեճերի կարգավորման հարցերով միջազգային կենտրոնի լրացուցիչ կանոններին համապատասխան (այն դեպքում, եթե կոնվենցիան ուժի մեջ չի մտել վեճի կողմ հանդիսացող երկու անդամ պետությունների կամ դրանցից մեկի համար):

86. Ներդրողը, որը վեճը կարգավորելու համար այն արդեն փոխանցել է ազգային դատարան կամ սույն Արձանագրության 85-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված արբիտրաժային

դատարաններից որևէ մեկը, իրավունք չունի վերահասցեավորելու այդ վեճը որևէ այլ կամ արբիտրաժային դատարան:

Դատարանի կամ սույն Արձանագրության 85-րդ կետում նշված արբիտրաժային դատարանի վերաբերյալ ներդրողի ընտրությունը վերջնական է:

87. Սույն Արձանագրության 85-րդ կետին համապատասխան քննվող վեճի մասին արբիտրաժի կայացրած ցանկացած որոշում վերջնական և պարտադիր է վեճի կողմերի համար: Յուրաքանչյուր անդամ պետություն պարտավորվում է ապահովել այդ որոշման կատարումը՝ իր օրենսդրությանը համապատասխան:

Հավելված 1
«Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» արձանագրության

էլեկտրակապի ծառայությունների առևտրի կարգը

1. Սույն Կարգը կիրառվում է անդամ պետությունների այն միջոցների մասով, որոնցով կարգավորվում է էլեկտրակապի ոլորտում գործունեության իրականացումը:

2. Սույն Կարգը չի կիրառվում փոստային կապի ոլորտում գործունեություն իրականացնելու նկատմամբ:

3. Սույն Կարգում ոչինչ չի մեկնաբանվում որպես ցանկացած անդամ պետության ներկայացվող պահանջ (կամ անդամ պետությանը ներկայացվող պահանջ, որպեսզի այն պարտավորեցնի իր իրավազորության ներքո գտնվող ծառայությունները տրամադրողներին), որպեսզի այն սահմանի հատուկ պահանջներ՝ ընդհանուր օգտագործման էլեկտրակապի ցանցին միացում չունեցող էլեկտրակապի ցանցերի մասով:

4. Սույն Կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«ընդհանուր օգտագործման էլեկտրակապի ցանց»՝ տեխնոլոգիական համակարգը, որը ներառում է կապի միջոցներն ու գծերը, նախատեսված է անդամ պետության տարածքում էլեկտրակապի ծառայություններից ցանկացած օգտվողի էլեկտրակապի փոխհատուցելի ծառայություններ մատուցելու համար՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան,

«էլեկտրակապի համընդհանուր ծառայություններ»՝ անդամ պետության կողմից սահմանված էլեկտրակապի այն ծառայությունների ցանկը, որոնց մատուցումն էլեկտրակապի ծառայություններից ցանկացած օգտվողի ցանկացած բնակավայրում այդ ծառայությունների հասանելիությունն ապահովող սահմանված որակով և գների մակարդակով պարտադիր է համընդհանուր սպասարկման օպերատորների համար,

«էլեկտրակապի ծառայություններ»՝ էլեկտրակապի հաղորդումների ընդունման, մշակման, պահպանման, փոխանցման և մատուցման գործունեությունը:

5. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ ընդհանուր օգտագործման էլեկտրակապի ցանցերին և էլեկտրակապի ծառայություններին հասանելիություն ունենալու պայմանների մասին տեղեկատվությունը լինի հանրամատչելի (ներառյալ ծառայությունների մատուցման պայմանների, այդ թվում՝ այդպիսի ցանցերի հետ տեխնիկական միացումների մասնագրերի սակագների (գների) քանակի, նշված հասանելիությանը և օգտագործմանն առնչվող ստանդարտների պատրաստման ու ընդունման համար պատասխանատու մարմինների, վերջնակետային սարքավորումների կամ այլ ապարատուրայի միացմանն առնչվող պայմանների, ինչպես նաև՝ ծանուցումներին, գրանցմանը կամ լիցենզավորմանը և թույլտվության ցանկացած այլ ընթացակարգի ներկայացվող պահանջների մասին տեղեկատվությունը, եթե դա անհրաժեշտ է):

6. էլեկտրակապի ծառայությունները մատուցելու գործունեությունն իրականացվում է անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից՝ այդ պետություններում որոշված տարածքային սահմաններում տրամադրված լիցենզիաների հիման վրա՝ պահպանելով ժամկետները և օգտագործելով այն համարակալումը, որն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով տրվել է էլեկտրակապի յուրաքանչյուր օպերատորի:

7. Ռադիոհաճախականության տիրույթի կիրառմամբ էլեկտրակապի ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնելիս անդամ պետության տարածքում գործունեությունն իրականացնելու համար լիցենզիայից բացի՝ անհրաժեշտ է ստանալ անդամ պետության լիազորված մարմնի որոշումը՝ համապատասխան ռադիոհաճախականությունների շերտի լայնությունների, ռադիոհաճախականության ալիքների կամ ռադիոէլեկտրոնային միջոցի շահագործման համար ռադիոհաճախականությունների հատկացման և համապատասխան ռադիոհաճախականությունների և (կամ) ռադիոհաճախականության ալիքների տրամադրման (սահմանման) մասին:

8. Ռադիոհաճախականությունների շերտի լայնությունների, ռադիոհաճախականության ալիքների կամ ռադիոհաճախականությունների հատկացումը, ռադիոհաճախականությունների կամ ռադիոհաճախականության ալիքների տրամադրումը (սահմանումը), ռադիոհաճախականության տիրույթի օգտագործման իրավունքի համար թույլտվությունների տրամադրումն իրականացվում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Ռադիոհաճախականության տիրույթի հատկացման և օգտագործման հետ կապված վճարումները գանձվում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով:

10. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ներառյալ իրավական և վարչական միջոցները՝ էլեկտրակապի ցանցերին և ծառայություններին ոչ խտրական, համարժեք հասանելիություն ապահովելու համար:

11. էլեկտրակապի օպերատորի ընդհանուր օգտագործման էլեկտրակապի ցանցերին միանալը՝ անկախ էլեկտրակապի ծառայությունների շուկայում նրա զբաղեցրած դիրքից, իրականացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, տեխնիկական հնարավորության առկայության դեպքում՝ այնպիսի պայմաններով, որոնք պակաս բարենպաստ չեն անդամ պետության էլեկտրակապի այլ օպերատորների համար նախատեսված, համեմատելի հանգամանքներում գործող պայմաններից:

12. Անդամ պետություններն իրավասու են սահմանելու և կիրառելու պետական կարգավորում՝ էլեկտրակապի ծառայությունների առանձին տեսակների սակագների մասով: էլեկտրակապի ծառայությունների սակագների ձևավորումը պետք է հիմնված լինի անդամ պետության օրենսդրության պահանջների վրա:

Անդամ պետությունները ցանկացած անդամ պետության անձանց երաշխավորում են ծառայությունների մատուցումը՝ գտնվելու երկրի սակագներով՝ գտնվելու երկրի օպերատորների հետ էլեկտրակապի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու պայմանով:

13. էլեկտրակապի ծառայությունների այն տեսակների վերաբերյալ, որոնց սակագները ենթակա չեն պետական կարգավորման, անդամ պետություններն ապահովում են մրցակցային օրենսդրության առկայություն և դրա արդյունավետ կիրառում, ինչը կկանխի անդամ պետությունների էլեկտրակապի ծառայությունները տրամադրողների, ինչպես նաև՝ դրանք ստացողների միջև մրցակցության պայմանների խեղաթյուրումը:

14. Մինչև 2020 թվականի հունվարի 1-ը Հանձնաժողովի խորհրդի կողմից պետք է հաստատվի երթուղու փոխանցման ծառայությունների համար անդամ պետությունների կողմից գնագոյացում սահմանելու նկատմամբ միասնական մոտեցումը:

15. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի անդամ պետությունների էլեկտրակապի օպերատորներն ապահովեն երթուղու անարգել փոխանցումը՝ ներառյալ տարանցիկը՝ օպերատորների միջև կնքված պայմանագրերի հիման վրա, նաև՝ հաշվի առնելով ցանցերի տեխնիկական հնարավորությունները:

16. Անդամ պետությունները երաշխավորում են չկիրառել տեղական և միջքաղաքային էլեկտրակապի ծառայությունների լրավճարում՝ իրենց տարածքում միջազգային կանչերի ավարտի հաշվին:

17. Ռադիոհաճախականության տիրույթի ռեսուրսների, ինչպես նաև համարակալման ռեսուրսի բաշխումը և օգտագործումն իրականացվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

18. Անդամ պետությունները երաշխավորում են իրենց տարածքում էլեկտրակապի համընդհանուր ծառայությունների մատուցումը՝ տվյալ ոլորտում միջազգային

կազմակերպությունների հանձնարարականներով նախատեսված միասնական սկզբունքների և կանոնների հիման վրա: Յուրաքանչյուր անդամ պետություն իրավասու է ինքնուրույն որոշելու համընդհանուր ծառայությունների մատուցման գծով պարտավորությունները: Այդ պարտավորությունները չեն դիտարկվի որպես հակամրցակցային՝ պայմանով, որ մրցակցության տեսանկյունից դրանք կիրականացվեն թափանցիկության, խտրականության բացառման և չեզոքության հիման վրա, և չեն լինի ավելի ծանրաբեռնող, քան այդ անդամ պետության կողմից սահմանված համընդհանուր ծառայության տվյալ տեսակի համար անհրաժեշտ է:

19. Անդամ պետությունների կարգավորող մարմիններն անկախ են էլեկտրակապի օպերատորներից և հաշվետու չեն նրանց: Այդ մարմինների որոշումները պետք է կրեն անկողմնակալ բնույթ՝ տվյալ շուկայի բոլոր մասնակիցների նկատմամբ:

Հավելված 2
«Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» արձանագրության

Գործունեության բոլոր ոլորտների և տեսակների նկատմամբ անդամ պետությունների կիրառած «հորիզոնական» սահմանափակումների ցանկը

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
I. Բելառուսի Հանրապետություն		
1. Հասանելիության պայմաններն ու կարգը՝ ներառյալ լրավճարների և պետական աջակցության այլ միջոցների հասանելիության սահմանափակումները, սահմանվում են Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառվում ամբողջ ծավալով, սակայն չհակասելով Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) XXIV և XXV բաժինների դրույթներին	23-րդ և 26-րդ կետեր	Բելառուսի Հանրապետության բյուջետային օրենսգիրքը Բելառուսի Հանրապետության հարկային օրենսգիրքը համապատասխան տարվա համար հանրապետական բյուջեի մասին Բելառուսի Հանրապետության օրենքները, «Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցություն ցուցաբերելու կարգի իրավական կարգավորումը կատարելագործելու մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի մարտի 28-ի 182-րդ հրամանագիրը Բելառուսի Հանրապետության, հանրապետական և տեղական պետական մարմինների նորմատիվ իրավական ակտերը
2. Հողատարածքներն օտարերկրյա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մոտ կարող են գտնվել միայն վարձակալության իրավունքով	23-րդ և 26-րդ կետեր	«Հողատարածքները գործածությունից հանելու և տրամադրելու մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 667 հրամանագիրը Բելառուսի Հանրապետության հողային օրենսգիրքը
3. Կոնցեսիոների ընտրության	15-17-րդ, 23-րդ, 26-	«Կոնցեսիաների մասին» Բելառուսի

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
ընթացակարգը և կոնցեսիոն համաձայնագրի հիմնական պայմանների ցանկը սահմանվում են Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Կոնցեսիոն պայմանագրի հիման վրա կոնցեսիայի առարկան տնօրինելու և այն օգտագործելու իրավունքը կամ գործունեությունը, այդ թվում՝ դրա պայմանների սահմանումը	րդ, 31-րդ և 33-րդ կետեր	Հանրապետության 2013 թվականի հուլիսի 12-ի թիվ 63-3 օրենքը «Բելառուսի Հանրապետությունում ներդրումային գործունեության համար լրացուցիչ պայմաններ ստեղծելու մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2009 թվականի օգոստոսի 6-ի թիվ 10 հրամանագիրը, «Ներդրումների մասին» Բելառուսի Հանրապետության 2013 թվականի հուլիսի 12-ի թիվ 53-3 օրենքը
4. Կենդանական աշխարհը կոնկրետ տարածքում կամ ջրային տարածքում օգտագործելու նպատակով տրամադրելու հարցում նախապատվությունը տրվում է Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձանց և քաղաքացիներին	23-րդ և 26-րդ կետեր	«Կենդանական աշխարհի մասին» Բելառուսի Հանրապետության 2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 257-3 օրենքը
5. Հողաշինարարությունը (հողերի գույքագրմանը, հողօգտագործման պլանավորմանը, սահմանմանը (վերականգնմանն) ուղղված միջոցառումները) և հողաշինարարության օբյեկտների սահմանների ամրապնդումը, հողերի օգտագործման և պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված հողաշինարարական այլ միջոցառումների անցկացումը) իրականացվում են միայն պետական կառավարման հատուկ լիազորված մարմնի ենթակայությամբ գտնվող (համակարգում ընդգրկված) պետական կազմակերպությունների կողմից	16-րդ, 17-րդ, 23-րդ, 26-րդ և 31-րդ կետեր	Բելառուսի Հանրապետության 2010 թվականի հուլիսի 15-ի թիվ 169-3 օրենքը՝ «Միայն պետության սեփականության տակ գտնվող օբյեկտների և գործունեության այն տեսակների մասին, որոնց վրա տարածվում է պետության բացառիկ իրավունքը», «Հողատարածքները գործածությունից հանելու և տրամադրելու մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 667 հրամանագիրը
6. Անշարժ գույքի, դրա նկատմամբ իրավունքների և դրա հետ իրականացվող գործարքների տեխնիկական գույքագրումը և պետական գրանցումն իրականացվում են միայն պետական կառավարման հատուկ լիազորված մարմնի ենթակայության ներքո գտնվող (համակարգում ընդգրկված) պետական կազմակերպությունների կողմից	16-րդ, 17-րդ, 23-րդ, 26-րդ և 31-րդ կետեր	Բելառուսի Հանրապետության 2010 թվականի հուլիսի 15-ի թիվ 169-3 օրենքը՝ «Միայն պետության սեփականության ներքո գտնվող օբյեկտների և գործունեության այն տեսակների մասին, որոնց վրա տարածվում է պետության բացառիկ իրավունքը», «Անշարժ գույքի, դրա նկատմամբ իրավունքների և դրա հետ իրականացվող գործարքների պետական գրանցման մասին»

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
		Բելառուսի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 22-ի թիվ 133-З օրենքը
7. Պետական գույքի գնահատումը՝ դրա հետ գործարքներ և (կամ) իրավաբանական նշանակության այլ գործողություններ կատարելու նպատակով իրականացվում է պետական կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում 50%-ից ավելի պետական մասնաբաժին ունեցող, գնահատման գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև՝ պետական կառավարման հատուկ լիազորված մարմնի ենթակայության ներքո գտնվող (համակարգում ընդգրկված) կազմակերպությունների կողմից	16-րդ, 17-րդ, 23-րդ, 26-րդ և 31-րդ կետեր	«Գնահատման գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 615 հրամանագիրը
8. Գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքները, որոնց արդյունքներն ունեն համապետական, միջոլորտային նշանակություն, իրականացվում են միայն պետական կառավարման հատուկ լիազորված մարմնի ենթակայության ներքո գտնվող (համակարգում ընդգրկված) պետական կազմակերպությունների կողմից	16-րդ, 17-րդ, 23-րդ, 26-րդ և 31-րդ կետեր	Բելառուսի Հանրապետության 2010 թվականի հուլիսի 15-ի թիվ 169-З օրենքը՝ «Միայն պետության սեփականության ներքո գտնվող օբյեկտների և գործունեության այն տեսակների մասին, որոնց վրա տարածվում է պետության բացառիկ իրավունքը»
II. Ղազախստանի Հանրապետություն		
1. Հասանելիության պայմաններն ու կարգը՝ ներառյալ լրավճարների և պետական աջակցության այլ միջոցների հասանելիության սահմանափակումները, սահմանվում են Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ ու իշխանության մարմինների կողմից և կիրառվում ամբողջ ծավալով, սակայն, չհակասելով պայմանագրի XXIV և XXV բաժինների դրույթներին	23-րդ և 26-րդ կետեր	Ղազախստանի Հանրապետության բյուջետային օրենսգիրքը համապատասխան տարվա համար հանրապետական բյուջեի մասին Ղազախստանի Հանրապետության օրենքները, Ղազախստանի Հանրապետության, հանրապետական և տեղական պետական մարմինների նորմատիվ իրավական ակտերը
2. Օտարերկրյա անձանց մասնավոր սեփականության ներքո չեն կարող գտնվել այն հողատարածքները, որոնք նախատեսված են ապրանքային գյուղատնտեսական արտադրություն և անտառաբուծություն իրականացնելու համար: Գյուղացիական կամ	23-րդ և 26-րդ կետեր	Ղազախստանի Հանրապետության հողային օրենսգիրքը

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
ֆերմերային տնտեսություն վարելու կամ ապրանքային գյուղատնտեսական արտադրություն իրականացնելու համար ժամանակավոր փոխհատուցելի հողօգտագործման իրավունքը տրվում է օտարերկրյա անձանց՝ մինչև 10 տարի ժամկետով		
3. Ղազախստանի Հանրապետության սահմանամերձ գոտում և սահմանամերձ գծում, ինչպես նաև ծովային նավահանգիստների սահմաններին տեղակայված հողատարածքները չի թույլատրվում տրամադրել օտարերկրացիների և օտարերկրյա իրավաբանական անձանց մասնավոր սեփականությանը: Ղազախստանի Հանրապետության պետական սահմանի պահպանվող գոտուն անմիջապես սահմանակից (երեք կիլոմետր երկարությամբ գոտի), գյուղատնտեսական նշանակության հողատարածքները տրամադրվում են միայն Ղազախստանի Հանրապետության քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ ժամանակավոր հողօգտագործման իրավունքի հիման վրա՝ նախքան դրանց սահմանանշումն ու սահմանազատումը, եթե Ղազախստանի Հանրապետության պետական սահմանի մասին Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ	23-րդ և 26-րդ կետեր	Ղազախստանի Հանրապետության հողային օրենսգիրքը, «Ղազախստանի Հանրապետությունում տրանսպորտի մասին» Ղազախստանի Հանրապետության 1994 թվականի սեպտեմբերի 21-ի թիվ 156-XIII օրենքը «Ղազախստանի Հանրապետության պետական սահմանի մասին» Ղազախստանի Հանրապետության 2013 թվականի հունվարի 16-ի թիվ 70-V օրենքը
4. Մշտական հողօգտագործման իրավունքը չի կարող պատկանել օտարերկրյա հողօգտագործողներին	23-րդ և 26-րդ կետեր	Ղազախստանի Հանրապետության հողային օրենսգիրքը
5. Ղազախստանի Հանրապետության կառավարության և ընդերքօգտագործողի միջև «Ընդերքի և ընդերքի օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 24-ի թիվ 291-IV օրենքին համապատասխան կնքված ընդերքի օգտագործման պայմանագրերի մասով՝ նախքան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը,	16-րդ, 17-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ, 33-րդ և 35-րդ կետեր	«Ընդերքի և ընդերքի օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 24-ի թիվ 291-IV օրենքը, «Ընդերքի և ընդերքի օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության 1996 թվականի հունվարի 27-ի օրենքը, «Նավթի մասին» Ղազախստանի Հանրապետության 1995 թվականի

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
կիրառվում են այդպիսի պայմանագրերի պայմանները[1]		հունիսի 28-ի օրենքը
6. Ղազախստանի Հանրապետության կառավարության և ընդերքօգտագործողի միջև «Ընդերքի և ընդերքի օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 24-ի թիվ 291-IV օրենքին համապատասխան կնքված ընդերքի օգտագործման պայմանագրերի մասով՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո[2]	16-րդ, 17-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ, 33-րդ և 35-րդ կետեր	«Ընդերքի և ընդերքի օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 24-ի թիվ 291-IV օրենքը, «Ընդերքի և ընդերքի օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության 1996 թվականի հունվարի 27-ի օրենքը, «Նավթի մասին» Ղազախստանի Հանրապետության 1995 թվականի հունիսի 28-ի օրենքը
6.1. Ղազախստանի Հանրապետությունը պահպանում է այն իրավունքը, որով ներդրողներից պահանջում է Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձանցից ներդրումային պայմանագրին համապատասխան գնել ծառայություններ. 6.1.1. պինդ օգտակար հանածոների հետախուզման և արդյունահանման առումով՝ այդ ներդրողի կողմից գնվող բոլոր ծառայությունների 50%-ից ոչ ավելին՝ ներդրումային պայմանագրի իրականացման հետ կապված 6.1.2. ածխաջրածնային հումքի հետախուզման և արդյունահանման առումով. 6.1.2.1. մինչև 2016 թվականի հունվարի 1-ը՝ այդ ներդրողի կողմից գնվող բոլոր ծառայությունների 70%-ից ոչ ավելին՝ ներդրումային պայմանագրի իրականացման հետ կապված 6.1.2.2. 2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ մինչև Ղազախստանի Հանրապետության՝ ԱՀԿ-ին միանալու ամսաթիվը՝ այդ ներդրողի կողմից գնվող բոլոր ծառայությունների 60%-ից ոչ ավելին՝ ներդրումային պայմանագրի իրականացման հետ կապված 6.1.2.3. Ղազախստանի Հանրապետության՝ ԱՀԿ-ին միանալու ամսաթվից սկսած՝ այդ ներդրողի կողմից գնվող բոլոր ծառայությունների 50%-ից ոչ ավելին՝ ներդրումային պայմանագրի իրականացման հետ		

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
կապված		
6.2. Ղազախստանի Հանրապետության՝ ԱՀԿ-ին միանալուց հետո 6 տարվա ընթացքում ենթակապալառուի ներգրավման նպատակով ներդրողի կողմից մրցույթն անցկացնելու ժամանակ ներդրողը Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձի կողմից ներկայացված մրցութային հայտի գինը պայմանականորեն նվազեցնում է 20%-ով, եթե այդ ենթակապալառուի որակավորված աշխատողների առնվազն 75%-ը Ղազախստանի Հանրապետության քաղաքացի է՝ պայմանով, որ Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձը համապատասխանում է մրցութային փաստաթղթերով սահմանված ստանդարտներին և որակական հատկանիշներին		
6.3. Ղազախստանի Հանրապետության՝ ԱՀԿ-ին միանալու պահից սկսած 6 տարին լրանալուց հետո ենթակապալառուի ներգրավման նպատակով ներդրողի կողմից մրցույթն անցկացնելու ժամանակ ներդրողը Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձի կողմից ներկայացված մրցութային հայտի գինը պայմանականորեն նվազեցնում է 20%-ով, եթե այդ ենթակապալառուի որակավորված աշխատողների առնվազն 50%-ը Ղազախստանի Հանրապետության քաղաքացի է՝ պայմանով, որ Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձը համապատասխանում է մրցութային փաստաթղթերով սահմանված ստանդարտներին և որակական հատկանիշներին		
6.4. ընդերքի օգտագործման համար իրավունք տրամադրելու նպատակով մրցույթի անցկացման պայմանները սահմանելիս Ղազախստանի Հանրապետությունը չի սահմանի 50%-ը գերազանցող նվազագույն		

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
ղազախստանյան ներկայություն կադրերում կամ ծառայություններում՝ հաշվի առնելով հետևյալը.		
6.4.1. ղազախստանյան ներկայությունն այն ներդրողի կողմից ներգրավվող կադրերում, որին տրամադրվել է ընդերքն օգտագործելու իրավունքը (այսուհետ՝ ներդրող), հաշվարկվելու է որպես ղեկավարների, մենեջերների և մասնագետների թվի վրա հիմնված հավասար մասերով համամասնություն՝ համապատասխան այդ եզրույթների նշանակությանը, որը սահմանվել է ներկորպորատիվ տեղափոխության շրջանակներում տեղափոխվող անձանց մուտքի և ժամանակավորապես գտնվելու նպատակով, ԱՀԿ-ի շրջանակներում Ղազախստանի Հանրապետության ունեցած առանձնահատուկ պարտավորությունների՝ ծառայությունների շուկային հասանելիության մասին ցանկում (այսուհետ՝ որակավորված աշխատողներ), որոնք Ղազախստանի Հանրապետության քաղաքացիներ են		
6.4.2. ներդրողին մատուցվող բոլոր ծառայություններում ղազախստանյան ներկայությունը սահմանվում է որպես բոլոր պայմանագրերով ծառայությունների մատուցման դիմաց վճարումների (ծախսերի) ընդհանուր տարեկան գումարի մաս, որոնք վճարվել են Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձանց:[3] Սակայն Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձին վճարված գումարը պետք է նվազեցվի ցանկացած այնպիսի գումարով, որը ենթակապալի պայմանագրի հիման վրա ծառայությունների մատուցման դիմաց ցանկացած մակարդակով վճարվել է Ղազախստանի Հանրապետության՝ իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություններին		
6.4.3. ընդերքի օգտագործման համար		

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
իրավունք տրամադրելու նպատակով մրցույթի հաղթողին որոշելիս Ղազախստանի Հանրապետությունը չպետք է հաշվի առնի այն փաստը, որ հավանական ներդրողը կարող է առաջարկել 50 %-ից ավելի ղազախստանյան ներկայության մակարդակ կադրերում և ծառայություններում		
6.5. Ղազախստանի Հանրապետությունը պահպանում է այն իրավունքը, որով ներդրողներից պահանջում է ներդրումային պայմանագրին համապատասխան գնել ապրանքներ՝ պայմանագրի 28-րդ հավելվածի ցանկի II բաժնի 5-րդ կետով նախատեսված կարգով և պայմաններով		
7. Այն գնումների մասով, որոնք իրականացվում են «Սամրուկ-Կազին» Ազգային բարեկեցության հիմնադրամի (ԱԲՀ) և այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնցում քվեարկող բաժնետոմսերի (մասնաբաժնի) 50%-ը և ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում է «Սամրուկ-Կազին» ԱԲՀ-ն, ինչպես նաև այն ընկերություններում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են պետությանը (պետության մասնաբաժինը որոնցում կազմում է 50% և ավելի)՝ «Ազգային բարեկեցության հիմնադրամի մասին» Ղազախստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 1-ի թիվ 550-IV օրենքին և «Այն ազգային կառավարող հոլդինգի, ազգային հոլդինգների, ազգային ընկերությունների և կազմակերպությունների կողմից իրականացվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման տիպային կանոնները հաստատելու մասին, որոնց բաժնետոմսերի (մասնաբաժնի) 50 տոկոսը և ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են	16-րդ, 17-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ, 33-րդ և 35-րդ կետեր	«Ազգային բարեկեցության հիմնադրամի մասին» Ղազախստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 1-ի թիվ 550-IV օրենքը, «Այն ազգային կառավարող հոլդինգի, ազգային հոլդինգների, ազգային ընկերությունների և կազմակերպությունների կողմից իրականացվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման տիպային կանոնները հաստատելու մասին, որոնց բաժնետոմսերի (մասնաբաժնի) 50 տոկոսը և ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են ազգային կառավարող հոլդինգին, ազգային հոլդինգին, ազգային ընկերությանը» Ղազախստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի մայիսի 28-ի թիվ 787 որոշումը

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
ազգային կառավարող հոլդինգին, ազգային հոլդինգին, ազգային ընկերությանը» Ղազախստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի մայիսի 28-ի թիվ 787 որոշմանը համապատասխան՝ տեղական ներկայության առնչությամբ բացառումները պահպանվում ու կիրառվում են պայմանագրի 28-րդ հավելվածի ցանկի II բաժնի 6-րդ կետով նախատեսված պայմաններով և կարգով[4]		
8. Պետական մարմինն իրավասու է մերժելու Ղազախստանի Հանրապետության ռազմավարական նշանակության պաշարների օգտագործման և (կամ) ռազմավարական նշանակության օբյեկտների օգտագործման, ձեռքբերման գործարքների իրականացման համար հայտատուին թույլտվություն տրամադրելը, եթե դա կարող է հանգեցնել մեկ երկրից մեկ անձի կամ անձանց խմբի մոտ իրավունքների կենտրոնացմանը: Տվյալ պայմանի պահպանումը պարտադիր է և առնչվում է փոխկապակցված անձանց հետ գործարքներին: Ազգային անվտանգության ապահովման նպատակներով Ղազախստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է սահմանափակումներ՝ Ղազախստանի Հանրապետության ռազմավարական նշանակության պաշարների (օբյեկտների) նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման և ծագման առնչությամբ: Ինչպես նաև՝ Ղազախստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումը (ակտը) իրականացնելու նպատակներով այն թողարկողը, որի բաժնետոմսերի հսկիչ փաթեթն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է ազգային կառավարող հոլդինգին, արժեթղթերի կազմակերպված շուկայում բաժնետոմսերի	15-րդ, 16-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ և 33-րդ կետեր	«Ազգային անվտանգության մասին» Ղազախստանի Հանրապետության 2012 թվականի հունվարի 6-ի թիվ 527-IV օրենքը, «Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության 2003 թվականի հուլիսի 2-ի թիվ 461 օրենքը

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
տեղաբաշխում իրականացնելիս չունի բաժնետոմսերն օտարերկրյա քաղաքացիներին և (կամ) իրավաբանական անձանց, ինչպես նաև՝ քաղաքացիություն չունեցող անձանց վաճառելու իրավունք		
9. Կոնցեսիոների ընտրության ընթացակարգը և կոնցեսիոն համաձայնագրի հիմնական պայմանների ցանկը սահմանվում են Ղազախստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Պահպանվում է բացառիկ կոնցեսիոներին նշանակելու իրավունքը: Կոնցեդենտի (շնորհատուի) առանձին իրավունքները և պարտականությունները կարող են իրականացվել լիազոր կոնցեդենտների կողմից	15-17-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ և 33-րդ կետեր	«Կոնցեսիաների մասին» Ղազախստանի Հանրապետության 2006 թվականի հուլիսի 7-ի թիվ 167-3 օրենքը
10. Կարող են նախատեսվել սահմանափակումներ՝ Ղազախստանի Հանրապետության մայրցամաքային շելֆի սահմաններում իրականացվող գործունեության առնչությամբ	15-17-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ և 33-րդ կետեր	«Ընդերքի և ընդերքի օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 24-ի թիվ 291-IV օրենքը
11. Կենդանական աշխարհը կոնկրետ տարածքում կամ ջրային տարածքում օգտագործելու համար տրամադրելու հարցում նախապատվությունը տրվում է Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձանց և քաղաքացիներին	23-րդ և 26-րդ կետեր	«Կենդանական աշխարհի պահպանության, վերականգնման և օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության 2004 թվականի հուլիսի 9-ի թիվ 593-II օրենքը
III. Ռուսաստանի Դաշնություն		
1. Հասանելիության պայմաններն ու կարգը՝ ներառյալ լրավճարների և պետական աջակցության այլ միջոցների հասանելիության սահմանափակումները, սահմանվում են իշխանության դաշնային, ռեգիոնալ և մունիցիպալ մարմինների կողմից և կիրառվում ամբողջ ծավալով, սակայն չհակասելով պայմանագրի XXIV և XXV բաժինների դրույթներին	23-րդ և 26-րդ կետեր	Ռուսաստանի Դաշնության բյուջետային օրենսգիրքը, համապատասխան տարվա համար դաշնային բյուջեի մասին դաշնային օրենքը, Ռուսաստանի Դաշնության, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների և մունիցիպալ կազմավորումների նորմատիվ իրավական ակտերը
2. Օտարերկրյա սեփականությունը գյուղատնտեսական հողերի և սահմանամերձ տարածքների հողերի նկատմամբ արգելվում է և կարող է սահմանափակվել հողերի այլ	23-րդ և 26-րդ կետեր	Ռուսաստանի Դաշնության հողային օրենսգիրքը, «Գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մասին» 2002 թվականի հուլիսի 24-ի թիվ 101-ԴՕ

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
տեսակների համար: Հողատարածքների վարձակալությունը թույլատրվում է մինչև 49 տարի ժամկետով		Դաշնային օրենքը
3. Ռուսաստանյան իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում օտարերկրյա անձանց մասնաբաժինը (կամ նրանց համատեղ մասնաբաժինը) կազմում է ավելի քան 50 %, գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին կարող են տիրապետել բացառապես վարձակալության իրավունքով: Այդպիսի վարձակալության ժամկետը չի կարող գերազանցել 49 տարին	23-րդ և 26-րդ կետեր	Ռուսաստանի Դաշնության հողային օրենսգիրքը, «Գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մասին» 2002 թվականի հուլիսի 24-ի թիվ 101-ԴՕ Դաշնային օրենքը
4. Բնիկ փոքրաթիվ ազգերի և փոքր էթնիկ խմբերի ավանդական բնակության և տնտեսական գործունեություն իրականացնելու համար օգտագործվող հողերի, ինչպես նաև՝ Ռուսաստանի Դաշնության սահմանամերձ տարածքներում և հատուկ առանձնացված այլ տարածքներում գտնվող հողատարածքների հետ իրականացվող գործառնությունները կարող են սահմանափակվել կամ արգելվել Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերին համապատասխան	23-րդ և 26-րդ կետեր	Ռուսաստանի Դաշնության հողային օրենսգիրքը, «Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի մասին» 1993 թվականի փետրվարի 1-ի թիվ 4730-I Դաշնային օրենքը
5. Ինչ վերաբերում է Պայմանագրի 16-րդ հավելվածի 6-րդ կետի 22-րդ ենթակետի երկրորդ և երրորդ պարբերությունների մեջ նշված ծառայությունների տրամադրման միջոցներով իրականացվող ծառայությունների առևտրին, ապա Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձինք ունեն արտոնյալ իրավունք՝ որպես կապալառուներ, մատակարարներ, փոխադրողներ կամ այլ կարգավիճակով մասնակցելու արտադրանքի բաժնի մասին համաձայնագրի իրականացման գործընթացին՝ ըստ ներդրողների հետ	23-րդ կետ	«Արտադրանքի բաժնի վերաբերյալ համաձայնագրերի մասին» 1995 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 225-ԴՕ Դաշնային օրենք

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
ունեցած համաձայնագրերի (պայմանագրերի)		
6. Ցանկացած այլ անդամ պետության անձանց կողմից իրավաբանական անձանց հիմնադրումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացումը, որպես անհատ ձեռնարկատեր գրանցումը՝ Ռուսաստանի Դաշնության վարչատարածքային փակ կազմավորման տարածքում, ցանկացած այլ անդամ պետության անձանց կողմից վարչատարածքային փակ կազմավորման տարածքում գրանցված իրավաբանական անձանց կապիտալում մասնաբաժնի ձեռքբերումը, ինչպես նաև՝ վարչատարածքային փակ կազմավորման տարածքում գրանցված իրավաբանական անձանց, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեությունը (այդ թվում՝ օտարերկրյա կապիտալով), կարող է սահմանափակվել կամ արգելվել Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերին համապատասխան	15-17-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ և 33-րդ կետեր	«Վարչատարածքային փակ կազմավորման մասին» 1992 թվականի հուլիսի 14-ի թիվ 3297-1 Դաշնային օրենքը
7. Կարող են նախատեսվել սահմանափակումներ՝ Ռուսաստանի Դաշնության մայրցամաքային շելֆի սահմաններում իրականացվող գործունեության առումով	15-17-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ և 33-րդ կետեր	«Ռուսաստանի Դաշնության մայրցամաքային շելֆի մասին» 1995 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 187-ԴՕ Դաշնային օրենքը
8. Կենդանական աշխարհը կոնկրետ տարածքում կամ ջրային տարածքում օգտագործելու համար տրամադրելու հարցում նախապատվությունը տրվում է Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձանց և քաղաքացիներին	23-րդ և 26-րդ կետեր	«Կենդանական աշխարհի մասին» 1995 թվականի ապրիլի 24-ի թիվ 52-ԴՕ Դաշնային օրենքը
9. Արտադրանքի բաժնի մասին համաձայնագրեր կնքելու առումով, որոնք կնքվել են մինչև 2012 թվականի հունվարի 1-ը (այսուհետ՝ համաձայնագրեր).[5] համաձայնագրի կնքման համար աճուրդի պայմաններով պետք է նախատեսվի ռուսաստանյան	23-րդ և 26-րդ կետեր	«Արտադրանքի բաժնի վերաբերյալ համաձայնագրերի մասին» 1995 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 225-ԴՕ Դաշնային օրենք

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
իրավաբանական անձանց մասնակցությունը համաձայնագրերի իրականացման գործընթացում՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից սահմանված մասնաբաժիններով համաձայնագրով նախատեսվում են ներդրողի պարտավորությունները՝ ստորև նշվածների համար. ռուսաստանյան իրավաբանական անձանց՝ որպես կապալառուներ, մատակարարներ, փոխադրողներ կամ այլ կարգավիճակով համաձայնագրով նախատեսված աշխատանքներին մասնակցելու արտոնյալ իրավունքի տրամադրման՝ ներդրողների հետ պայմանագրերի հիման վրա Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող այն աշխատողների ներգրավման, որոնց թիվը պետք է լինի ներգրավված բոլոր աշխատողների 80%-ից ոչ պակաս, համաձայնագրով նախատեսված աշխատանքների միայն մեկնարկային փուլերում օտարերկրյա աշխատողների և մասնագետների ներգրավման կամ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող, համապատասխան որակավորում ունեցող աշխատողների և մասնագետների բացակայության դեպքում երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների արդյունահանման, տեղափոխման և վերամշակման համար անհրաժեշտ՝ ռուսական ծագում ունեցող տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների և նյութերի ձեռքբերմանը՝ համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման համար օրացուցային յուրաքանչյուր տարում ձեռք բերված սարքավորումների, տեխնիկական միջոցների և նյութերի ընդհանուր արժեքի 70%-ից ոչ պակաս ծավալով (այդ թվում՝ վարձակալության, լիզինգի պայմանագրերով և այլ հիմքերով), որոնց ձեռքբերման և օգտագործման ծախսերը		

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
փոխհատուցման արտադրանքով հատուցվում են ներդրողին: Ընդ որում՝ սարքավորումները, տեխնիկական միջոցները և նյութերը համարվում են ռուսաստանյան ծագում ունեցող՝ այն պայմանով, որ դրանք արտադրվել են Ռուսաստանի Դաշնության տարածքում ռուսաստանյան իրավաբանական անձանց և (կամ) Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների կողմից՝ այն հանգույցներից, դետալներից, կառուցվածքներից և լրակազմերից, որոնք արժեքային արտահայտությամբ 50%-ից ոչ պակաս չափով արտադրվել են Ռուսաստանի Դաշնության տարածքում ռուսաստանյան իրավաբանական անձանց և (կամ) Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների կողմից: Անդամ պետությունները համաձայնագրի մեջ պետք է նախատեսեն պայման, ըստ որի օգտակար հանածոների արդյունահանման, դրանց տեղափոխման և վերամշակման համար համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման նպատակով ներդրողի կողմից ձեռք բերվող և (կամ) օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումների արժեքային արտահայտությամբ 70%-ից ոչ պակաս մասը (եթե դա նախատեսված է համաձայնագրով) պետք է ունենա ռուսաստանյան ծագում: Սույն դրույթը չի տարածվում մագիստրալային խողովակաշարային տրանսպորտի օբյեկտների օգտագործման վրա, որոնց շինարարությունն ու ձեռքբերումը նախատեսված չեն համաձայնագրով		
10. Կոնցեսիոների ընտրության ընթացակարգը և կոնցեսիոն համաձայնագրի հիմնական պայմանների ցանկը սահմանվում են Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան: Պահպանվում է բացառիկ	15-17-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ և 33-րդ կետեր	«Կոնցեսիոն համաձայնագրերի մասին» 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 115-ԴՕ Դաշնային օրենքը

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
կոնցեսիոներին նշանակելու իրավունքը: Կոնցեդենտի (շնորհատուի) առանձին իրավունքները և պարտականությունները կարող են իրականացվել լիազոր կոնցեդենտի կողմից		
11. Այն գործարքով, որն իրականացվում է ցանկացած այլ անդամ պետության անձի կողմից, և որի արդյունքում առաջանում է երկրի պաշտպանությունը և պետության անվտանգությունն ապահովելու համար ռազմավարական նշանակություն ունեցող, որևէ տեսակի գործունեություն ծավալող ռուսաստանյան տնտեսական ընկերությունների նկատմամբ վերահսկողություն սահմանելու անհրաժեշտություն, պահանջվում է ստանալ Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմնի թույլտվությունը՝ Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերով սահմանվող կարգով: Օտարերկրյա պետությունները, միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև դրանց վերահսկողության ներքո գտնվող անձինք, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում ստեղծվածները, իրավասու չեն կատարելու գործարքներ, որոնց արդյունքում առաջանում է երկրի պաշտպանությունը և պետության անվտանգությունն ապահովելու համար ռազմավարական նշանակություն ունեցող, որևէ տեսակի գործունեություն ծավալող ռուսաստանյան տնտեսական ընկերությունների նկատմամբ վերահսկողության սահմանելու անհրաժեշտություն: Օտարերկրյա ներդրողները կամ անձանց խումբը պարտավոր են իրավասու մարմին ներկայացնելու տեղեկատվություն այն մասին, որ ձեռք են բերել այն տնտեսական ընկերությունների կանոնադրական կապիտալը կազմող բաժնետոմսերի (մասնաբաժնի) 5 տոկոսը կամ ավելին, որոնք ծավալում են որևէ տեսակի	15-րդ, 16-րդ, 23-րդ, 26-րդ, 31-րդ և 33-րդ կետեր	«Երկրի պաշտպանությունը և պետության անվտանգությունն ապահովելու համար ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսական ընկերություններում արտասահմանյան ներդրումների իրականացման կարգի մասին» 2008 թվականի ապրիլի 29-ի թիվ 57-ԴՕ Դաշնային օրենքը

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
գործունեություն, երկրի պաշտպանությունը և պետության անվտանգությունն ապահովելու հարցում ունեն ռազմավարական նշանակություն		
12. Նավահանգստի սահմանների հողատարածքները չեն կարող գտնվել օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա կազմակերպությունների սեփականության ներքո	23-րդ և 26-րդ կետեր	«Ռուսաստանի Դաշնությունում ծովային նավահանգիստների և Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 261-ԴՕ Դաշնային օրենքը
IV. Հայաստանի Հանրապետություն		
1. Սուբսիդավորման իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հիմնադրված իրավաբանական անձինք՝ անկախ այն հանգամանքից, թե ով է կապիտալի սեփականատերը:	23-րդ և 26-րդ կետեր	«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հուլիսի 21-ի ՀՕ-137 օրենք Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշում
2. Հողի նկատմամբ սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պետական և (կամ) մունիցիպալ սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության ժամկետը չի կարող գերազանցել 99 տարին, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի:	23-րդ և 26-րդ կետեր	Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք
3. Ընդերքօգտագործող կարող է լինել միայն իրավաբանական անձը, այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը:	23-րդ և 26-րդ կետեր	Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք
4. Քարտեզագրությամբ, գեոդեզիայով, չափագրմամբ (հաշվառմամբ) և հողաշինարարությամբ կարող են զբաղվել միայն պետական լիազոր մարմնից որակավորման վկայական ստացած՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:	23-րդ և 26-րդ կետեր	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենք Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի

Սահմանափակումը	Սահմանափակումը կիրառելու հիմքերը (պայմանագրի 16-րդ հավելվածի կետերը)	Սահմանափակումը կիրառելու հիմքը (նորմատիվ իրավական ակտ)
		սեպտեմբերի 29-ի թիվ 1441-Ն որոշում

[1] Տվյալ բացառումները պահպանվում և կիրառվում են ԱՀԿ-ին Ղազախստանի Հանրապետության միանալու մասին արձանագրությամբ նախատեսված կարգով և պայմաններով:

[2] Տվյալ բացառումները պահպանվում և կիրառվում են ԱՀԿ-ին Ղազախստանի Հանրապետության միանալու մասին արձանագրությամբ նախատեսված կարգով ու պայմաններով:

[3] Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրերը հաշվի չեն առնվի, եթե այդ անձը Ղազախստանի Հանրապետության տարածքում չի իրականացնում համաձայնեցված տեսակի գործունեություն: «Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձ» հասկացությունը ներառում է նաև անհատ ձեռնարկատերերին:

[4] Տվյալ բացառումները պահպանվում և կիրառվում են ԱՀԿ-ին Ղազախստանի Հանրապետության միանալու մասին արձանագրությամբ նախատեսված կարգով և պայմաններով:

[5] Տվյալ սահմանափակումները պահպանվում և կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպությունը հիմնադրելու մասին 1994 թվականի ապրիլի 15-ի Մարաքեշյան համաձայնագրին Ռուսաստանի Դաշնության միանալու մասին 2011 թվականի դեկտեմբերի 16-ի արձանագրությամբ նախատեսված կարգով և պայմաններով:

(հավելվածը լրաց. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ 17
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական ծառայությունների մասին

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 70-րդ հոդվածի համաձայն (այսուհետ՝ Պայմանագիր) և կիրառվում է անդամ պետությունների կողմից իրականացվող՝ ֆինանսական ծառայությունների տրամադրմանը, ինչպես նաև ֆինանսական ծառայություններ տրամադրողների ստեղծմանն ու դրանց գործունեությանն առնչվող միջոցների նկատմամբ:

2. Սույն Արձանագրության դրույթները չեն կիրառվում տրամադրվող ծառայությունների և այն գործունեության նկատմամբ, որն իրականացվում է ոչ առևտրային հիմքով և ոչ մրցակցության պայմաններով՝ պետական իշխանության գործառույթների իրականացման համար, ինչպես նաև սուբսիդիաների տրամադրման նկատմամբ:

3. Սույն Արձանագրության մեջ գործածվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«պետական հիմնարկ»՝ պետական իշխանության մարմին կամ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկ, կամ անդամ պետությանը պատկանող կամ այդ անդամ պետության կողմից վերահսկվող կազմակերպություն, որն իրականացնում է բացառապես այդ անդամ պետության պետական իշխանության մարմնի կամ այդպիսի անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից վերապահված լիազորությունները.

«գործունեություն»՝ սույն Արձանագրության իմաստով ստեղծված իրավաբանական անձանց, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների գործունեություն.

«անդամ պետության օրենսդրություն»՝ անդամ պետության օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտեր, անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի նորմատիվ ակտերը.

«վարկային կազմակերպություն»՝ անդամ պետության իրավաբանական անձ, որն անդամ պետության բանկային գործունեության կարգավորման ոլորտում լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա՝ որպես իր գործունեության հիմնական նպատակ, շահույթ ստանալու համար իրավունք ունի իրականացնելու բանկային գործառնություններ՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում այն գրանցված է.

«լիցենզիա»՝ անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրամադրվող հատուկ թույլտվություն (փաստաթուղթ), որն իր տիրապետողին իրավունք է տալիս անդամ պետության տարածքում իրականացնելու որոշակի տեսակի գործունեության.

«անդամ պետության միջոց»՝ անդամ պետության օրենսդրություն, ինչպես նաև անդամ պետության լիազոր մարմնի կամ անդամ պետության լիազոր մարմնի պաշտոնատար անձի կողմից որոշում, գործողություն կամ անգործություն:

Անդամ պետության լիազոր մարմնի կողմից առաջարկության բնույթ կրող պաշտոնական փաստաթղթի ընդունման (հրապարակման) դեպքում, նման առաջարկությունը կարող է ճանաչվել որպես սույն Արձանագրության նպատակների իրականացման միջոց, եթե ապացուցվի, որ գործնականում տվյալ հանձնարարականի հասցեատերերի գերակշիռ մասը հետևում է դրան.

«ազգային ռեժիմ»՝ ֆինանսական ծառայությունների առևտրում այլ անդամ պետության անձանց և ֆինանսական ծառայությունների նկատմամբ՝ իրենց տարածքում համանման հանգամանքներում իրենց իսկ սեփական անձանց և ֆինանսական ծառայությունների նկատմամբ կիրառվող ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմ կիրառելը.

«ընդհանուր ֆինանսական շուկա»՝ անդամ պետությունների ֆինանսական շուկա, որը համապատասխանում է հետևյալ չափանիշներին՝

անդամ պետությունների ֆինանսական շուկաների ոլորտում կարգավորմանը և հսկողությանը ներկայացվող ներդաշնակեցված պահանջներ,

բանկային և ապահովագրական ոլորտներում, ինչպես նաև արժեթղթերի շուկայի ոլորտում որևէ անդամ պետության լիազոր մարմինների կողմից տրամադրված լիցենզիաների փոխադարձ ճանաչումը մյուս անդամ պետությունների տարածքներում,

ամբողջ Միության տարածքում ֆինանսական ծառայությունների տրամադրման հետ կապված գործունեության իրականացում՝ առանց որպես իրավաբանական անձ լրացուցիչ հիմնադրման,

անդամ պետությունների լիազոր մարմինների միջև վարչական համագործակցություն, այդ թվում՝ տեղեկություններ փոխանակելու միջոցով.

«ֆինանսական ծառայությունների տրամադրում/առևտուր»՝ ծառայությունների տրամադրում, որն իր մեջ ներառում է ծառայությունների ստեղծում, բաշխում, շուկայահանում, վաճառք և առաքում, և որն իրականացվում է հետևյալ եղանակներով՝

որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք,

որևէ անդամ պետության տարածքում այդ անդամ պետության անձի կողմից մյուս անդամ պետության անձին (ծառայություններից օգտվողին),

որևէ անդամ պետության ֆինանսական ծառայություններ տրամադրողի կողմից՝ մյուս անդամ պետության տարածքում հիմնադրման և գործունեության եղանակով.

«ֆինանսական ծառայություններ տրամադրող»՝ անդամ պետության ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը տրամադրում է ֆինանսական ծառայություններ՝ բացառությամբ պետական հիմնարկների.

«արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակից»՝ անդամ պետության իրավաբանական անձ, որն իրավունք ունի մասնագիտական գործունեություն իրականացնելու արժեթղթերի շուկայում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում այն գրանցված է.

«առավել բարենպաստ ռեժիմ»՝ ֆինանսական ծառայությունների առևտրում այլ անդամ պետության անձանց և ֆինանսական ծառայությունների նկատմամբ՝ համանման հանգամանքներում երրորդ երկրների անձանց և ֆինանսական ծառայությունների նկատմամբ կիրառվող ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմ կիրառելը.

«ֆինանսական ծառայության ոլորտ»՝ ֆինանսական ծառայության ամբողջ ոլորտը՝ ներառյալ դրա բոլոր ենթաոլորտները, իսկ անդամ պետության պարտավորություններից բացառումներ կատարելու, սահմանափակումներ և պայմաններ կիրառելու առնչությամբ՝ առանձին ֆինանսական ծառայության մի, մի քանի կամ բոլոր ենթաոլորտները.

«ապահովագրական կազմակերպություն»՝ անդամ պետության իրավաբանական անձ, որն իրավունք ունի իրականացնելու ապահովագրական (վերաապահովագրական) գործունեություն՝ այն անդամ պետություն օրենսդրության համաձայն, որի տարածքում այն գրանցված է.

«տնտեսական նպատակահարմարության ստուգում»՝ հիմնադրման և (կամ) գործունեության իրականացման կամ ծառայության տրամադրման թույլտվության տրամադրում՝ կախված անհրաժեշտությունից և շուկայում պահանջարկից՝ ծառայությունը տրամադրողի գործունեության

արդյունավետությունը կոնկրետ ճյուղի ֆինանսական պլանավորման նպատակներին համապատասխան լինելու վերաբերյալ տնտեսական գնահատում անցկացնելու եղանակով.

«լիազոր մարմին»՝ անդամ պետության մարմին, որն այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ֆինանսական շուկայի, ֆինանսական կազմակերպությունների (ֆինանսական շուկայի առանձին ոլորտների) կարգավորում և (կամ) վերահսկողություն ու հսկողություն իրականացնելու լիազորություն ունի.

«հիմնադրում»՝

այն ցանկացած կազմակերպաիրավական և սեփականության ձև ունեցող իրավաբանական անձի ստեղծում և (կամ) ձեռքբերում (ստեղծված կամ հիմնադրված իրավաբանական անձի կապիտալում մասնակցություն), որոնք նախատեսված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում նման իրավաբանական անձը ստեղծվում կամ հիմնադրվում է.

անդամ պետության իրավաբանական անձի նկատմամբ հսկողության ձեռքբերում, որն արտահայտվում է այդպիսի իրավաբանական անձանց կողմից ընդունվող որոշումներն անմիջականորեն կամ երրորդ անձանց միջոցով սահմանելու հնարավորության ստացմամբ, այդ թվում՝ ձայների տնօրինման միջոցով, որոնք տրամադրվում են քվեարկող բաժնետոմսերով (բաժնեմասերով), տնօրենների խորհրդում (դիտորդ խորհրդում) և իրավաբանական անձի կառավարման այլ մարմիններում մասնակցության միջոցով.

մասնաճյուղի բացում.

ներկայացուցչության բացում.

«ֆինանսական ծառայություններ»՝ ֆինանսական բնույթի ծառայություններ, որոնք ներառում են ծառայությունների հետևյալ տեսակները.

1) ապահովագրական և ապահովագրական ծառայություններին վերաբերող՝

ա) ապահովագրություն (համատեղ ապահովագրություն), կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն.

բ) վերաապահովագրություն.

գ) ապահովագրական միջնորդություն, ինչպիսիք բրոքերային և գործակալական միջնորդությունն են.

դ) ապահովագրական օժանդակ ծառայություններ, ինչպիսիք խորհրդատվական, ակտուարական ծառայությունները, ռիսկերի գնահատման ծառայությունները և պահանջների կարգավորման ծառայություններն են.

2) բանկային ծառայությունները՝

ա) բնակչությունից ավանդների (դեպոզիտների) և վճարման ենթակա այլ դրամական միջոցների ընդունում.

բ) բոլոր տեսակի փոխատվությունների, վարկերի, փոխառությունների տրամադրում, այդ թվում՝ սպառողական վարկ, գրավով ապահովված վարկ, ֆակտորինգ և առևտրային գործառնությունների ֆինանսավորում.

գ) ֆինանսական լիզինգ.

դ) վճարման ու դրամական փոխանցումների գծով բոլոր տեսակի ծառայություններ.

ե) առևտուր իր հաշվին և հաճախորդների հաշվին, բորսայում և արտաբորսայական շուկայում կամ այլ կերպ՝ արտարժույթով, ածանցյալ գործիքներով, այդ թվում՝ ֆյուչերսներով և օպցիոններով, արժույթների փոխարժեքներին և տոկոսադրույքներին վերաբերող գործիքներով՝ ներառյալ «սվոփ» գործարքները և ֆորվարդային գործարքները.

զ) խորհրդատվական, միջնորդային և այլ օժանդակ ծառայություններ սույն ենթակետում նշված գործունեության բոլոր տեսակներում՝ վարկային պայմանների ուսումնասիրության հետ կապված տեղեկատվական և վերլուծական նյութերը՝ ներառյալ

3) ծառայություններ արժեթղթերի շուկայում՝

ա) առևտուր ֆինանսական գործիքներով իր հաշվին և հաճախորդների հաշվին, բորսայում և արտաբորսայական շուկայում կամ այլ կերպ.

բ) որպես գործակալ (պետական կամ մասնավոր)՝ բոլոր տեսակի արժեթղթերի էմիսիային (թողարկմանը), այդ թվում՝ երաշխավորմանը և տեղաբաշխմանը մասնակցությունը, և այդպիսի էմիսիային (թողարկմանը) վերաբերող ծառայությունների տրամադրում.

գ) բրոքերային գործառնություններ ֆինանսական շուկայում.

դ) այնպիսի ակտիվների կառավարումը, ինչպիսիք դրամական միջոցները և արժեթղթերը, կոլեկտիվ ներդրումների կառավարման բոլոր տեսակները, կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների և ներդրումային պորտֆելների կառավարումը, հոգաբարձությունը, պահպանման ծառայությունները և տրաստային ծառայությունները.

ե) ֆինանսական ակտիվների՝ ներառյալ արժեթղթերի, ածանցյալ գործիքների և այլ ֆինանսական գործիքների հետ կապված քլիրինգային ծառայությունները.

զ) ֆինանսական տեղեկությունների տրամադրումը և փոխանցումը, ֆինանսական տվյալների մշակումը և այլ ֆինանսական ծառայություններ տրամադրողների կողմից համապատասխան ծրագրային ապահովման տրամադրումն ու փոխանցումը.

է) սույն ենթակետում նշված գործունեության բոլոր տեսակներում խորհրդատվական, միջնորդային և այլ օժանդակ ֆինանսական ծառայություններ՝ ներառյալ ուղղակի և պորտֆելային ներդրումներին առնչվող ուսումնասիրությունները և առաջարկությունները, կորպորացիաների ձեռքբերման, վերակազմակերպման և ռազմավարության վերաբերյալ առաջարկությունները:

Սույն Արձանագրության մեջ գործածվող մյուս հասկացությունները կիրառվում են Ծառայությունների առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին արձանագրությամբ նախատեսված իմաստով (Պայմանագրի 16-րդ հավելված):

4. Յուրաքանչյուր անդամ պետություն ֆինանսական ծառայություններ տրամադրողների (մյուս անդամ պետությունների իրավաբանական անձանց) նկատմամբ կիրառում է ազգային ռեժիմ և առավել բարենպաստ ռեժիմ՝ որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ինքնուրույն, միջնորդի միջոցով կամ որպես միջնորդ, սույն Արձանագրության 1-ին հավելվածում անդամ պետությունների անհատական ազգային ցանկերում նշված պայմաններին համապատասխան, ծառայությունների հետևյալ տեսակները տրամադրելու առնչությամբ՝

1) ռիսկերի ապահովագրում, որոնք վերաբերում են՝

միջազգային ծովային փոխադրումներին և առևտրային օդային փոխադրումներին, առևտրային տիեզերական արձակումներին և ֆրախտին (ներառյալ արբանյակները), որոնց նման ապահովագրումն առնչվում է ամբողջությամբ կամ մասամբ՝ փոխադրվող ապրանքներ, ապրանքը տեղափոխող փոխադրամիջոցներ և փոխադրման առնչությամբ առաջացող քաղաքացիաիրավական պատասխանատվություն.

միջազգային տարանցման շրջանակներում փոխադրվող ապրանքներին.

2) վերաապահովագրում, ինչպես նաև օժանդակ ապահովագրական ծառայություններ, ինչպիսիք խորհրդատվական ծառայությունները, ակտուարական ծառայությունները, ռիսկի գնահատումը և պահանջների կարգավորումն են.

3) ֆինանսական տեղեկությունների տրամադրում ու փոխանցում, այլ ֆինանսական ծառայություններ տրամադրողների ֆինանսական տվյալների և համապատասխան ծրագրային ապահովման մշակում.

4) խորհրդատվական և այլ օժանդակ ծառայություններ՝ ներառյալ արժեթղթերի շուկայում տրամադրվող ծառայությունների և բանկային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրումը (միջնորդությունից և վարկային պատմությունների վերլուծության հետ կապված ծառայություններից, ուղղակի ու պորտֆելային ներդրումների մասով ուսումնասիրություններից և առաջարկություններից, կորպորացիաների ձեռքբերման, վերակազմավորման ու ռազմավարության հարցերով առաջարկություններից բացի):

5. Յուրաքանչյուր անդամ պետություն թույլատրում է այդ անդամ պետության անձանց մյուս անդամ պետության տարածքում օգտվել սույն Արձանագրության 4-րդ կետի 1-4-րդ ենթակետերում նշված ֆինանսական ծառայություններից:

6. Յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում ֆինանսական ծառայություններ տրամադրողներ, ինչպես դրանք սահմանված են սույն Արձանագրության 3-րդ կետում, ստեղծելու և (կամ) գործունեություն ծավալելու նպատակով մյուս անդամ պետության անձանց նկատմամբ կիրառում է ազգային ռեժիմ՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 2-րդ հավելվածում նշված անհատական ազգային ցանկով անդամ պետություններից յուրաքանչյուրի համար նախատեսված սահմանափակումները:

7. Յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում ֆինանսական ծառայություններ տրամադրողներ, ինչպես դրանք սահմանված են սույն Արձանագրության 3-րդ կետում, ստեղծելու և (կամ) գործունեություն ծավալելու նպատակով՝ մյուս անդամ պետության անձանց նկատմամբ կիրառում է առավել բարենպաստ ռեժիմ:

8. Երրորդ պետությունների հետ ֆինանսական ծառայությունների առևտրի, այն իրավաբանական անձանց գործունեության, որոնց կապիտալում մասնակցում է պետությունը, ֆինանսական ծառայություններից օգտվողների իրավունքների, մասնավորեցմանը մասնակցելու, ներդրողների իրավունքների պաշտպանության, վճարումների ու փոխանցումների, վճարումների ու փոխանցումների վերաբերյալ սահմանափակումների, վնասի հատուցման, ներդրողների երաշխիքների, այդ թվում՝ ունեզրկման դեպքում, ներդրողների իրավունքների փոխանցման և ներդրումներին առնչվող վեճերի կարգավորման կարգի վերաբերյալ հարցերը կարգավորվում են Ծառայությունների առևտրի, ներդրումների ստեղծման, դրանց իրականացման ու ներդրումային գործունեության մասին արձանագրությամբ (Պայմանագրի 16-րդ հավելված):

9. Սույն Արձանագրության դրույթները կիրառվում են այն իրավաբանական անձանց, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների նկատմամբ, որոնք ստեղծվել են Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը և շարունակում են գոյություն ունենալ, ինչպես նաև Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ստեղծվածների նկատմամբ:

10. Սույն Արձանագրության 4-րդ կետում թվարկված ոլորտներում, բացառությամբ սույն Արձանագրության 1-ին հավելվածով նախատեսված դեպքերի, անդամ պետություններից ոչ մեկը, ծառայությունների առևտրի հետ կապված, մյուս անդամ պետության ֆինանսական ծառայությունների և ֆինանսական ծառայություններ տրամադրողների նկատմամբ չի կիրառում և չի նախատեսում սահմանափակումներ՝

քվոտայի, մենաշնորհի, տնտեսական նպատակահարմարության ստուգման կամ ցանկացած այլ քանակական եղանակով ֆինանսական ծառայություն տրամադրողների թվի նկատմամբ,

քվոտայի, տնտեսական նպատակահարմարության ստուգման կամ ցանկացած այլ քանակական եղանակով ցանկացած ֆինանսական ծառայություն տրամադրողի գործառնությունների նկատմամբ:

Սույն Արձանագրության 4-րդ կետում թվարկված ոլորտներում, բացառությամբ սույն Արձանագրության 1-ին հավելվածով նախատեսված դեպքերի, անդամ պետություններից ոչ մեկը, որպես ֆինանսական ծառայությունների առևտրի համար պայման, մյուս անդամ պետության ֆինանսական ծառայությունների և ֆինանսական ծառայություններ տրամադրողների նկատմամբ չի կիրառում և չի նախատեսում հիմնադրման պահանջներ:

11. Բացառությամբ սույն Արձանագրության 2-րդ հավելվածում նշված անհատական ազգային ցանկով անդամ պետություններից յուրաքանչյուրի համար նախատեսված սահմանափակումների՝ անդամ պետություններից ոչ մեկն իր տարածքում ֆինանսական ծառայություններ տրամադրողների հիմնադրման և (կամ) գործունեության հետ կապված մյուս անդամ պետության ֆինանսական ծառայություններ տրամադրողների նկատմամբ չի կիրառում և չի նախատեսում սահմանափակումներ՝

1) հիմնադրման ձևի, այդ թվում՝ իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևի առնչությամբ,

2) հիմնադրվող իրավաբանական անձանց, մասնաճյուղերի կամ ներկայացուցչություններին թվի նկատմամբ՝ քվոտայի, տնտեսական նպատակահարմարության ստուգման կամ ցանկացած այլ տեսքով,

3) իրավաբանական անձի կապիտալում ձեռք բերվող բաժնեմասի ծավալի կամ իրավաբանական անձի նկատմամբ հսկողության աստիճանի առնչությամբ,

4) հիմնադրված իրավաբանական անձի, մասնաճյուղի, ներկայացուցչության գործառնությունների առնչությամբ՝ դրանց կողմից գործունեության իրականացման ընթացքում քվոտայի, տնտեսական նպատակահարմարության ստուգման կամ ցանկացած այլ քանակական եղանակով:

12. Ֆիզիկական անձանց մուտքի, ելքի, ժամանման և աշխատանքային գործունեության հետ կապված հարցերը կարգավորվում են Պայմանագրի XXVI բաժնով՝ հաշվի առնելով սույն

Արձանագրության 2-րդ հավելվածում նշված անհատական ազգային ցանկով անդամ պետություններից յուրաքանչյուրի համար նախատեսված սահմանափակումները:

13. Սույն Արձանագրության 1-ին հավելվածում անհատական ազգային ցանկում նշված ֆինանսական ծառայությունների և սույն Արձանագրության 2-րդ հավելվածում անհատական ազգային ցանկում նշված՝ հիմնադրման և (կամ) գործունեության նկատմամբ սահմանափակումների առնչությամբ՝ յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ ֆինանսական ծառայությունների առևտրի վրա ազդող՝ այդ անդամ պետության բոլոր միջոցները կիրառվեն խելամիտ, օբյեկտիվ և անկողմնակալ կերպով:

14. Երբ պահանջվում է ֆինանսական ծառայություններ տրամադրելու թույլտվություն, անդամ պետությունների իրավասու մարմինները, ազգային օրենսդրության և կարգավորման կանոնների պահանջների համաձայն, ձևակերպված համարվող դիմումը ներկայացնելուց հետո խելամիտ ժամկետում, հայտատուին տեղեկացնում են դիմումի վերաբերյալ որոշման մասին: Հայտատուի հարցումով անդամ պետության իրավասու մարմիններն առանց ավելորդ ուշացման տրամադրում են տեղեկություններ դիմումի քննարկման ընթացքի մասին:

15. Այդպիսի դրույթի ապահովման համար, որպեսզի որակավորման պահանջներին և ընթացակարգերին, տեխնիկական ստանդարտներին և լիցենզավորման պահանջներին վերաբերող միջոցները չստեղծեն չարդարացված խոչընդոտներ ֆինանսական ծառայությունների առևտրում, անդամ պետություններն իրավունք ունեն մշակելու ցանկացած անհրաժեշտ կանոններ այն համապատասխան մարմինների միջոցով, որոնք նրանք կարող են ստեղծել: Այդ կանոնները պետք է ապահովեն, որպեսզի այդպիսի պահանջները, ի թիվս այլ հարցերի՝

1) հիմնվեն օբյեկտիվ և հրապարակային չափանիշների վրա, ինչպիսիք են՝ ծառայություն տրամադրելու կոմպետենտությունը և ունակությունը.

2) չլինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է ծառայության որակն ապահովելու համար.

3) լիցենզավորման ընթացակարգի դեպքում՝ չլինեն ծառայությունների տրամադրման համար ինքնին սահմանափակում:

16. Մինչև սույն Արձանագրության 1-ին հավելվածում անհատական ազգային ցանկերում նշված ֆինանսական ծառայությունների ոլորտների համար՝ սույն Արձանագրության 15-րդ կետի համաձայն մշակված կանոններն ուժի մեջ մտնելը՝ անդամ պետությունները չեն կիրառում լիցենզավորման և որակավորման պահանջներ և տեխնիկական ստանդարտներ, որոնք զրոյացնում կամ կրճատում են օգուտները, որոնք տրամադրվում են սույն Արձանագրության 1-ին հավելվածում՝ անհատական ազգային ցանկերում նշված պայմանների համաձայն:

Ընդ որում, անդամ պետության կողմից ներկայացվող լիցենզավորման կամ որակավորման պահանջները և տեխնիկական ստանդարտները պետք է համապատասխանեն սույն Արձանագրության 15-րդ կետի 1 - 3-րդ կետերում նշված չափորոշիչներին, և կարող են խելամիտ կերպով ակնկալվել այդ անդամ պետությունից Պայմանագիրն ստորագրելու օրը:

17. Եթե անդամ պետությունը ֆինանսական ծառայություններ տրամադրողների հիմնադրման և (կամ) գործունեության նկատմամբ կիրառում է լիցենզավորում, ապա այդ անդամ պետությունն ապահովում է, որպեսզի՝

1) գործունեություն իրականացնելու համար լիցենզիայի տրամադրման համար պատասխանատու՝ անդամ պետության իրավասու պետական մարմինների անվանումները հրապարակվեն կամ այլ կերպ հաղորդվեն հանրությանը.

2) լիցենզավորման ընթացակարգերն ինքնին հիմնադրման կամ գործունեության համար սահմանափակում և, որ գործունեության իրականացման իրավունքի հետ անմիջականորեն կապված լիցենզավորման պահանջներն ինքնին գործունեության համար անհիմն խոչընդոտ չլինեն.

3) լիցենզավորման բոլոր ընթացակարգերը և պահանջները սահմանված լինեն անդամ պետության օրենսդրության մեջ և, որ լիցենզավորման ընթացակարգեր կամ պահանջներ սահմանող կամ կիրառող անդամ պետության օրենսդրությունը հրապարակվի մինչև այն ուժի մեջ մտնելը.

4) լիցենզիայի տրամադրման համար դիմումը ներկայացնելու և ուսումնասիրության հետ կապված գանձվող բոլոր տուրքերը ինքնին հիմնադրման և գործունեության համար

սահմանափակում չլինեն և հիմնված լինեն իրավասու մարմնի՝ դիմումի ուսումնասիրության ու լիցենզիայի տրամադրման հետ կապված ծախսերի վրա.

5) անդամ պետության օրենսդրությամբ սահմանված՝ լիցենզիա տրամադրելու (չտրամադրելու) մասին որոշում ընդունելու համար ժամկետը լրանալուց հետո և դիմողի պահանջով անդամ պետության՝ լիցենզիաներ տրամադրելու համար պատասխանատու համապատասխան մարմինը տեղեկացնի դիմողին իր դիմումն ուսումնասիրելու ընթացքի մասին, ինչպես նաև այն մասին, թե համարվում է արդյոք այդ դիմումը պատշաճ կերպով լրացված: Ցանկացած դեպքում դիմողին դիմումի մեջ տեխնիկական ուղղումներ կատարելու հնարավորություն է տրվելու: Դիմումը չի համարվի պատշաճ կերպով լրացված, քանի դեռ չեն ստացվել անդամ պետության համապատասխան օրենսդրության մեջ նշված բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը.

6) դիմողի գրավոր պահանջի համաձայն, որին մերժվել է դիմումի ընդունումը, դիմումի ընդունումը մերժած՝ լիցենզիաների տրամադրման համար պատասխանատու անդամ պետության մարմինը գրավոր տեղեկացնի դիմողին այդպիսի մերժման պատճառների մասին: Այդ դրույթը, սակայն, չպետք է մեկնաբանվի որպես անդամ պետության լիցենզավորող մարմնից այն տեղեկությունները բացահայտել պահանջող, որոնց բացահայտումը խոչընդոտում է անդամ պետության օրենսդրության կատարումը կամ այլ կերպ հակասում է հանրային շահերին կամ անվտանգության էական շահերին.

7) այն դեպքում, երբ դիմումի ընդունումը մերժվել է, դիմողը կարողանա ներկայացնել նոր դիմում, որտեղ կփորձի վերացնել լիցենզիայի տրամադրմանը խոչընդոտող առկա բոլոր խնդիրները.

8) տրամադրվող լիցենզիան գործի անդամ պետության ամբողջ տարածքում:

18. Անդամ պետության տարածքում ֆինանսական ծառայությունների շուկաներում գործունեության իրականացման համար լիցենզիաների տրամադրման կարգը և ժամկետը սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում նախատեսվում է իրականացնել այդպիսի գործունեություն:

19. Սույն Արձանագրության մեջ ոչինչ չի խոչընդոտում անդամ պետությանը ձեռնարկել պրուդենցիալ միջոցներ՝ ներառյալ ներդրողների, ավանդատուների, ապահովադիրների, շահույթ ստացողների և այն անձանց շահերի պաշտպանությունը, որոնց նկատմամբ ծառայություններ տրամադրողն ունի ֆիդուցիար պարտականություն, կամ ֆինանսական համակարգի ամբողջականության և կայունության ապահովման համար միջոցներ: Եթե նման միջոցները չեն համապատասխանում սույն Արձանագրության դրույթներին, ապա դրանք անդամ պետության կողմից չպետք է օգտագործվեն որպես սույն Պայմանագրի համաձայն այդ անդամ պետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու միջոց:

20. Սույն Արձանագրության մեջ ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես առանձին հաճախորդների հաշիվներին վերաբերող տեղեկություններ կամ այլ գաղտնի բնույթի որևէ տեղեկություն, կամ պետական հաստատությունների տրամադրության տակ գտնվող տեղեկություններ հրապարակելու վերաբերյալ անդամ պետությանը ներկայացվող պահանջ:

21. Անդամ պետությունները միջազգային սկզբունքների և ստանդարտների կամ լավագույն միջազգային փորձի հիման վրա և անդամ պետություններում արդեն կիրառվող լավագույն ստանդարտներին ու փորձին համապատասխան իրականացնում են ֆինանսական շուկայի ոլորտում պահանջների ներդաշնակեցում՝ ծառայությունների հետևյալ ոլորտներում՝

բանկային ոլորտ,

ապահովագրական ոլորտ,

արժեթղթերի շուկայում ծառայությունների ոլորտ:

22. Անդամ պետությունները ներդաշնակեցնում են վարկային կազմակերպությունների կարգավորման և վերահսկման հետ կապված պահանջները՝ իրենց գործողություններում առաջնորդվելով լավագույն միջազգային փորձով և Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքներով, այդ թվում՝ հետևյալի առնչությամբ՝

1) «վարկային կազմակերպություն» հասկացության և վարկային կազմակերպության իրավաբանական կարգավիճակի.

2) վարկային կազմակերպությունների, բանկային խմբերի և դրանց փոխկապակցված անձանց, բանկային հոլդինգների կողմից տեղեկությունների հրապարակման կարգի ու պայմանների.

3) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների հիման վրա ֆինանսական (հաշվապահական) հաշվետվություններին ներկայացվող պահանջների.

4) վարկային կազմակերպության ստեղծման կարգի և պայմանների, մասնավորապես՝

հիմնադիր փաստաթղթերին ներկայացվող պահանջների,

իրավաբանական անձի (մասնաճյուղի) պետական գրանցման և վարկային կազմակերպության պետական գրանցման կարգի,

վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափի որոշման, դրա ձևավորման կարգի և վճարման կատարման եղանակների,

վարկային կազմակերպության ղեկավար աշխատողների մասնագիտական որակավորման և գործարար համբավին ներկայացվող պահանջների,

բանկային գործառնությունների իրականացման համար լիցենզիայի տրամադրման կարգի և պայմանների, այդ թվում՝ նաև բանկային գործառնությունների իրականացման համար լիցենզիաների ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվող պահանջների.

5) վարկային կազմակերպության ազգային գրանցման մերժման և բանկային գործառնությունների իրականացման համար դրան լիցենզիա տալու մերժման հիմքերի.

6) վարկային կազմակերպության լուծարման կամ վերակազմակերպման կարգի, ընթացակարգերի և պայմանների (այդ թվում՝ հարկադիր լուծարման).

7) բանկային գործառնություններն իրականացնելու համար վարկային կազմակերպության լիցենզիան անվավեր ճանաչելու հիմքերի.

8) միաձուլման, միավորման և վերակազմավորման ձևով վարկային կազմակերպությունների վերակազմակերպման կարգի և առանձնահատկությունների.

9) վարկային կազմակերպությունների ֆինանսական հուսալիության ապահովման, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների համար թույլատրված բանկային գործառնություններից բացի գործունեության այլ տեսակների, պրուդենցիալ նորմատիվների, պարտադիր պահուստների և հատուկ հատկացումների սահմանման.

10) անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից վարկային կազմակերպությունների, բանկային հոլդինգների և բանկային խմբերի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման կարգի.

11) վարկային կազմակերպությունների և բանկային հոլդինգների նկատմամբ պատժամիջոցների կիրառման կարգի, պայմանների և չափերի.

12) բանկային խմբերի և բանկային հոլդինգների ֆինանսական հուսալիության ապահովմանն ու գործունեությանը ներկայացվող պահանջների.

13) բնակչության ավանդների երաշխավորման համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման (ներառյալ ավանդների փոխհատուցման գծով վճարումների գումարները).

14) վարկային կազմակերպությունների ֆինանսական առողջացման և սնանկության ընթացակարգերի (ներառյալ վարկատուների իրավունքների կանոնակարգումը, պահանջների բավարարման հերթականությունը).

15) բանկային ճանաչվող գործառնությունների ցանկի.

16) այն կազմակերպությունների ցանկի և դրանց կարգավիճակի հետ, որոնք իրավունք ունեն իրականացնելու բանկային գործառնությունների առանձին տեխնոլոգիական մասերը:

23. Ապահովագրական ոլորտում անդամ պետությունները ներդաշնակեցնում են ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակիցների կարգավորմանը և վերահսկողությանը ներկայացվող պահանջներ՝ իրենց գործողություններում առաջնորդվելով լավագույն միջազգային փորձով և Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի արդյունավետ ապահովագրական վերահսկողության հիմնարար սկզբունքներով, այդ թվում՝ կապված հետևյալի հետ՝

1) «ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակից» հասկացության և ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի իրավաբանական կարգավիճակի.

2) ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի ֆինանսական կայունության ապահովման, այդ թվում՝ կապված հետևյալի հետ՝

ապահովագրության, համատեղ ապահովագրության, վերաապահովագրության, փոխադարձ ապահովագրության հետ կապված պարտավորությունների կատարման համար բավարար ապահովագրական պահուստների,

ապահովագրական պահուստները վերականգնելու համար ընդունվող ակտիվների կազմի և կառուցվածքի,

կանոնադրական և սեփական կապիտալների ձևավորման նվազագույն մակարդակի ու կարգի,

ապահովագրական պորտֆելի փոխանցման պայմանների և կարգի.

3) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների հիման վրա ֆինանսական (հաշվապահական) հաշվետվություններին ներկայացվող պահանջների,

4) ապահովագրական գործունեությունն ստեղծելու և լիցենզավորելու կարգի ու պայմանների.

5) ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի գործունեության նկատմամբ անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից վերահսկողության իրականացման կարգի.

6) ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակիցների կողմից շուկայում գործունեության իրականացման համար սահմանված կարգի խախտումների համար պատժամիջոցների կիրառման կարգի, պայմանների և չափերի.

7) ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակիցների ղեկավար աշխատողների մասնագիտական որակավորմանն ու գործարար համբավին ներկայացվող պահանջների.

8) ապահովագրական գործունեության իրականացման համար լիցենզիա տրամադրելու մերժման հիմքերի.

9) ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի լուծարման կամ վերակազմակերպման կարգի, ընթացակարգերի և պայմանների (այդ թվում՝ պարտադիր լուծարման (սնանկության).

10) ապահովագրական գործունեության իրականացման համար ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի լիցենզիան անվավեր ճանաչելու, ինչպես նաև լիցենզիայի գործողությունը չեղարկելու, սահմանափակելու կամ կասեցնելու հիմքերի.

11) միաձուլման, միավորման և վերակազմակերպման ձևով ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի վերակազմավորման կարգի ու առանձնահատկությունների.

12) ապահովագրական խմբերի ու ապահովագրական հոլդինգների կազմին և դրանց ֆինանսական հուսալիությանը ներկայացվող պահանջների:

24. Անդամ պետությունները ներդաշնակեցնում են պահանջները՝ արժեթղթերի շուկայի ծառայությունների ոլորտում գործունեության հետևյալ տեսակների մասով՝

բրոքերային գործունեություն արժեթղթերի շուկայում,

դիլերային գործունեություն արժեթղթերի շուկայում,

արժեթղթերի, ֆինանսական գործիքների կառավարման հետ կապված գործունեության, կենսաթոշակային ակտիվների և կենսաթոշակային ֆոնդերի ներդրումային պորտֆելների ու կոլեկտիվ ներդրումների կառավարում,

փոխադարձ պարտավորությունների որոշման հետ կապված գործունեություն (քլիրինգ),

պահառուական գործունեություն,

արժեթղթեր տիրապետողների ռեեստրի վարման հետ կապված գործունեություն,

արժեթղթերի շուկայում առևտրի կազմակերպման հետ կապված գործունեություն:

25. Անդամ պետությունները ներդաշնակեցնում են արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության վերաբերյալ պահանջները՝ իրենց գործողություններում առաջնորդվելով լավագույն միջազգային փորձով և Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության սկզբունքներով, այդ թվում՝ հետևյալ կետերի հետ կապված՝

1) կանոնադրական կապիտալի ձևավորման և վճարման կատարման կարգի սահմանման, ինչպես նաև սեփական կապիտալը բավարար լինելուն ներկայացվող պահանջների,

2) արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման համար լիցենզիայի տրամադրման կարգի և պայմանների, այդ թվում՝ այդպիսի լիցենզիայի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվող պահանջների,

3) արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների ղեկավար աշխատողների մասնագիտական որակավորմանը և գործարար համբավին ներկայացվող պահանջների,

4) արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման համար լիցենզիայի տրամադրումը մերժելու հիմքերի, ինչպես նաև լիցենզիայի գործողությունն անվավեր ճանաչելու, սահմանափակելու կամ կասեցնելու հիմքերի,

5) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների հիման վրա ֆինանսական (հաշվապահական) հաշվետվություններին ներկայացվող պահանջների, ինչպես նաև ներքին հաշվառման և ներքին հսկողությանը ներկայացվող պահանջների,

6) արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների լուծարման կամ վերակազմակերպման կարգի, ընթացակարգերի և պայմանների (այդ թվում՝ հարկադիր լուծարման),

7) արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման համար արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակցի լիցենզիան անվավեր ճանաչելու հիմքերի,

8) արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների կողմից ֆինանսական շուկայում գործունեության իրականացման կարգը խախտելու համար վարչական պատժամիջոցների կիրառման կարգի, պայմանների և չափերի,

9) արժեթղթերի շուկայի սուբյեկտների (մասնակիցների) գործունեության նկատմամբ անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից վերահսկողության իրականացման կարգի,

10) արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների գործունեությանը ներկայացվող պահանջների և պայմանների,

11) էմիտենտի արժեթղթերի էմիսիայի ընթացակարգին (թողարկման կարգին) ներկայացվող պահանջների,

12) անդամ պետությունների արժեթղթերի շուկաներում օտարերկրյա էմիտենտների արժեթղթերի տեղաբաշխման և շրջանառությանը ներկայացվող պահանջների,

13) տեղեկությունների ծավալի, որակի և պարբերականությանը ներկայացվող պահանջների,

14) Միության ամբողջ տարածքում անդամ պետությունների էմիտենտների արժեթղթերի տեղաբաշխման և շրջանառության ապահովմանը՝ էմիտենտի գրանցման պետության կարգավորող մարմնի կողմից արժեթղթերի էմիսիան (թողարկումը) գրանցելու պայմանով,

15) էմիտենտների կողմից տեղեկությունների բացահայտման, ներքին (ինսայդերական) տեղեկությունների անօրինական օգտագործմանը և արժեթղթերի շուկայում զեղծարարություններին հակազդելու ոլորտում ներկայացվող պահանջների:

26. Անդամ պետություններն իրականացնում են աուդիտի անցկացմանը ներկայացվող ներդաշնակեցված պահանջների մշակում՝ Աուդիտի միջազգային ստանդարտների հիման վրա:

27. Անդամ պետությունները մշակում են իրենց ֆինանսական շուկաներում գործունեության կարգավորման, վերահսկողության և հսկողության ոլորտում անդամ պետությունների լիազոր մարմինների փոխգործակցության մեխանիզմներ, այդ թվում՝ բանկային ոլորտում, ապահովագրական ոլորտում և արժեթղթերի շուկայում ծառայությունների ոլորտում:

Անդամ պետությունները փոխանակում են տեղեկություններ, այդ թվում՝ գաղտնի, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի համաձայն:

28. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որպեսզի այդ անդամ պետության օրենսդրությունը, որն առնչվում է կամ կարող է առնչվել սույն Արձանագրության մեջ ներառված հարցերին, հրապարակվի պաշտոնական աղբյուրում, իսկ հնարավորության դեպքում՝ համացանցում հատուկ առանձնացված էլեկտրոնային կայքում, որպեսզի ցանկացած անձ, որի իրավունքներին և (կամ) պարտավորություններին կարող է առնչվել անդամ պետության այդպիսի օրենսդրությունը, հնարավորություն ունենա դրանց հետ ծանոթանալու:

Այդպիսի օրենսդրության հրապարակումը պետք է այդպիսի օրենսդրության ընդունման նպատակների բացատրություն ներառի և այն պետք է հրապարակվի այն անձանց իրավական որոշակիությունը և հիմնավորված սպասումներն ապահովող ժամկետում, որոնց իրավունքներին և (կամ) պարտավորություններին կարող է առնչվել անդամ պետության այդ օրենսդրությունը, սակայն, ցանկացած դեպքում՝ մինչև այն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

29. Յուրաքանչյուր անդամ պետություն հաստատում է ցանկացած անձի այն գրավոր հարցումների պատասխանների տրամադրումն ապահովող մեխանիզմ, որոնք վերաբերում են սույն Արձանագրության մեջ ընդգրկված հարցերի շուրջ ակտերի գործող և (կամ) նախագծվող

օրենսդրությանը: Հարցումների պատասխանները պետք է տրամադրվեն այդպիսի շահագրգիռ անձին գրավոր հարցումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

30. Ֆինանսական շուկաներում համակարգային ռիսկերը կանխելու նպատակով՝ անդամ պետությունները ներդաշնակեցնում են իրենց օրենսդրությունը վարկանիշային գործակալությունների կողմից՝ թափանցիկության, հաշվետվողականության և պատասխանատվության սկզբունքներին համապատասխան գործունեություն իրականացնելու նկատմամբ պահանջների վերաբերյալ:

31. Անդամ պետությունը կարող է ճանաչել ցանկացած այլ անդամ պետության պրուդենցիալ միջոցները՝ ֆինանսական ծառայությունների տրամադրմանը վերաբերող միջոցները նրա կողմից կիրառելու հարցը որոշելիս: Այդպիսի ճանաչումը, որը կարող է իրականացվել անդամ պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցման միջոցով կամ այլ կերպ, կարող է հիմնվել շահագրգիռ անդամ պետության հետ համաձայնության կամ պայմանավորվածության վրա կամ կարող է իրականացվել միակողմանիորեն:

32. Մյուս անդամ պետության հետագա կամ գործող պրուդենցիալ միջոցների ճանաչման մասին համաձայնության կամ պայմանավորվածության մասնակից անդամ պետությունը մյուս անդամ պետություններին ընձեռում է այդպիսի համաձայնությունների կամ պայմանավորվածությունների միանալու հարցի շուրջ բանակցություններ վարելու հնարավորություն, որոնք կարող էին կանոններ ներառել, նման կանոնների նկատմամբ հսկողություն և դրանց իրականացման մեխանիզմ, իսկ հնարավորության դեպքում՝ նման համաձայնությունների և պայմանավորվածությունների մասնակիցների միջև տեղեկությունների փոխանակմանը վերաբերող ընթացակարգեր:

33. Անդամ պետությունների ֆինանսական շուկաներում գործունեության իրականացմանը ներկայացվող կոնկրետ պահանջների ներդաշնակեցումը պետք է իրականացվի այն պայմանով, որ պահպանվող տարբերությունները չեն խոչընդոտի Միության շրջանակներում ֆինանսական շուկայի արդյունավետ գործունեությունը:

34. Սույն Արձանագրությունում ոչինչ չի խոչընդոտում անդամ պետությանը ընդունել կամ կիրառել ստորև թվարկված միջոցները՝ պայմանով, որ այդ միջոցները չեն կիրառվի մի եղանակով, որը ծառայությունների առևտրի, հիմնադրման և (կամ) գործունեության առնչությամբ՝ անդամ պետությունների անձանց միջև ստեղծում է կամայական կամ չարդարացված խտրականության դրսևորման միջոցներ, մասնավորապես՝

1) որոնք անհրաժեշտ են հասարակական բարոյականության պաշտպանության կամ հասարակական կարգի պահպանման համար: Հասարակական կարգի նկատառումներով բացառությունները կարող են կիրառվել միայն այն դեպքերում, երբ հասարակության արմատական շահերից մեկի նկատմամբ իրական և բավականին լուրջ վտանգ է առաջանում.

2) որոնք անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար.

3) որոնք անհրաժեշտ են կանոնների կամ օրենքների պահպանման համար, որոնք համապատասխանում են սույն Արձանագրության դրույթներին, այդ թվում՝ այն դրույթները, որոնք վերաբերում են՝

շփոթեցնող կամ անբարեխիղճ գործելակերպի կամ քաղաքացիահիրավական պայմանագրերի խախտման հետևանքների կանխարգելմանը,

անձնական բնույթի տեղեկությունների մշակման և տարածման ու անձնական կյանքի և հաշիվների մասին տեղեկությունների գաղտնիության պաշտպանության ժամանակ առանձին անձանց մասնավոր կյանքի մեջ ներխուժելուց պաշտպանությանը.

4) որոնք ազգային ռեժիմի տրամադրման մասով սույն Արձանագրության 4-րդ և 6-րդ կետերի հետ անհամատեղելի են՝ պայմանով, որ փաստացի տրամադրվող ռեժիմում տարբերությունը պայմանավորված է ծառայությունների առևտրի առնչությամբ այլ անդամ պետության անձանցից արդար կամ արդյունավետ հարկում կամ հարկերի գանձում ապահովելու ձգտմամբ.

5) որոնք սույն Արձանագրության 4-րդ և 7-րդ կետերի հետ անհամատեղելի են՝ պայմանով, որ ռեժիմի առնչությամբ տարբերությունը հարկման հետ կապված հարցերի վերաբերյալ համաձայնագրի, այդ թվում՝ կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրի հետևանքն է, որի մասնակիցն է համապատասխան անդամ պետությունը:

35. Սույն Արձանագրության մեջ ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ անդամ պետության համար ձեռնարկելու որևէ միջոց, որն այն անհրաժեշտ է համարում երկրի պաշտպանության կամ անվտանգության ոլորտում իր կարևորագույն շահերի պաշտպանության համար:

36. Անդամ պետություններն ապահովում են սույն Արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածների անհատական ազգային ցանկերում նշված գանձումների և սահմանափակումների կրճատումը:

37. Անդամ պետությունները դադարեցնում են սույն Արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներում անհատական ազգային ցանկերում նշված միջոցների կիրառումը ֆինանսական ծառայությունների այն ոլորտների նկատմամբ, որտեղ անդամ պետությունների կողմից կատարվել են օրենսդրության ներդաշնակեցման և լիցենզիաների փոխադարձ ճանաչման հետ կապված պայմանները:

Հավելված 1
«Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության

ՑԱՆԿ

ֆինանսական ծառայությունների այն ենթաոլորտների, որտեղ անդամ պետությունների նկատմամբ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 4-րդ կետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 17-րդ հավելված) կիրառվում է ազգային ռեժիմ և Արձանագրության 10-րդ կետին համապատասխան ընդունվում են պարտավորություններ

Ոլորտ (ենթաոլորտ)	Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
I. ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
1. Ռիսկերի ապահովագրում՝ կապված միջազգային ծովային փոխադրումների հետ միջազգային առևտրային օդային փոխադրումների հետ միջազգային առևտրային տիեզերական արձակումների հետ միջազգային ապահովագրության հետ, որը մասամբ կամ ամբողջությամբ ծածկում է՝ ֆիզիկական անձանց միջազգային փոխադրումը. ներմուծվող (արտահանվող) բեռների և դրանք փոխադրող տրանսպորտային միջոցների միջազգային փոխադրումը՝ ներառյալ դրանից բխող	սահմանափակումներ չկան	–	–	–

Ոլորտ (ենթաոլորտ)	Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
պատասխանատվությունը ապրանքների փոխադրումը միջազգային տրանսպորտով անդրսահմանային տեղափոխման ժամանակ անհատական տրանսպորտային միջոցների պատասխանատվությունը միայն պայմանագրերի և ապահովագրական սերտիֆիկատների՝ «Կանաչ քարտի» միջազգային համակարգին միանալուց հետո				
2. Վերաապահովագրում և ռետրոցեսիա	սահմանափակումներ չկան	–	–	–
3. Ապահովագրական գործակալների և ապահովագրական բրոքերների ծառայություններ	սահմանափակում	Բելառուսի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովադիրների անունից ապահովագրական պայմանագրերի կնքման և բաշխման հետ կապված ապահովագրական միջնորդությունը չի թույլատրվում (բացառությամբ սույն ցանկի Ֆինանսական ծառայությունների ենթաբաժնի 1-ին կետում թվարկված ոլորտների, ինչպես նաև բացառությամբ ապահովագրական բրոքերների կողմից վերաապահովագրության հետ կապված գործունեություն իրականացնելու)	«Ապահովագրական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի օգոստոսի 25-ի թիվ 530 հրամանագիր	–
4. Օժանդակ ապահովագրական ծառայություններ, ինչպիսիք խորհրդատվական ծառայությունները,	սահմանափակումներ չկան	–	–	–

Ոլորտ (ենթաոլորտ)	Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
ակտուարային ծառայությունները, ռիսկի գնահատումը և պահանջների կարգավորումն են				
II. ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
1. Ռիսկերի ապահովագրում՝ կապված միջազգային ծովային փոխադրումների հետ միջազգային առևտրային օդային փոխադրումների հետ միջազգային առևտրային տիեզերական արձակումների հետ միջազգային ապահովագրության հետ, որը մասամբ կամ ամբողջությամբ ծածկում է՝ ֆիզիկական անձանց միջազգային փոխադրումը. ներմուծվող (արտահանվող) բեռների և դրանք փոխադրող տրանսպորտային միջոցների միջազգային փոխադրումը՝ ներառյալ դրանից բխող պատասխանատվությունը ապրանքների փոխադրումը միջազգային տրանսպորտով անդրսահմանային տեղափոխման ժամանակ անհատական տրանսպորտային միջոցների պատասխանատվությունը միայն պայմանագրերի և ապահովագրական սերտիֆիկատների՝ «Կանաչ քարտ» միջազգային համակարգին միանալուց հետո	սահմանափակում	սահմանափակումներ չկան՝ բացառությամբ Ղազախստանի Հանրապետության տարածքում տեղակայված իրավաբանական անձի կամ նրա առանձնացված ստորաբաժանումների գույքային շահերի և Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող ֆիզիկական անձի գույքային շահերի ապահովագրումը կարող է իրականացվել բացառապես Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտ-ապահովագրական կազմակերպության կողմից: Արգելվում է իրականացնել վճարումներ և փոխանցումներ՝ կապված ապահովագրական լրավճարների (վճարի) կատարման հետ՝ հօգուտ Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից: Պարտադիր ապահովագրության պայմանագրերը պետք է պահվեն Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտ	«Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 126-II օրենք	որոշված չէ

Ոլորտ (ենթաոլորտ)	Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
		ապահովագրողների կողմից:		
2. Վերաապահովագրում և ռետրոցեսիա	սահմանափակում	Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ վերաապահովագրական կազմակերպություններին՝ գործող վերաապահովագրման պայմանագրերի համաձայն փոխանցված ապահովագրական պարգևատրումների ամբողջական չափը՝ հանած կոմիսիոն վճարները, որոնք հաշվարկվել են վերաապահովագրողի (ցեդենտի) կողմից նրանից ստանալու համար, չի գերազանցում գործող ապահովագրական (վերաապահովագրական) պայմանագրերի համաձայն ստանալու համար հաշվարկված ապահովագրական պարգևատրումների ամբողջական չափի 60%-ը (ԱՀԿ-ին անդամակցելու պահից՝ 85%-ը): Պարտադիր ապահովագրության պայմանագրերը պետք է պահվեն ապահովագրողների կողմից կամ փոխանցվեն Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտ վերաապահովագրողներին՝ վերաապահովագրման համար	Ֆինանսական շուկայի և ֆինանսական կազմակերպու-թյունների կարգավորման ու վերահսկման վերաբերյալ՝ «Նորմատիվ նշանակությունների և ապահովագրական (վերաապահովագրման) կազմակերպության խելամիտ նորմատիվների հաշվարկների մեթոդի, խելամիտ նորմատիվների կատարման մասին զեկույցները ներկայացնելու ձևերի և ժամկետների մասին ցուցումների հաստատման մասին» Ղազախստանի Հանրապետության գործակալության կառավարման մարմնի 2008 թվականի օգոստոսի 22-ի թիվ 131 որոշում	որոշված չէ
3. Ապահովագրական գործակալների և ապահովագրական բրոքերների ծառայություններ	սահմանափակում	սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հետևյալ դեպքի՝ Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ	«Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 126-II օրենք	որոշված չէ

Ոլորտ (ենթաոլորտ)	Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
		ապահովագրական կազմակերպության անունից ապահովագրական պայմանագրի կնքման հետ կապված միջնորդական գործունեությունը՝ բացառությամբ Ղազախստանի Հանրապետության սահմաններից դուրս եկող ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիաիրավական ապահովագրման պայմանագրի, Ղազախստանի Հանրապետության տարածքում չի թույլատրվում, եթե Ղազախստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ		
4. Օժանդակ ծառայություններ, ինչպիսիք խորհրդատվական, ակտուարային ծառայությունները, ռիսկի գնահատումը և բողոքների կարգավորման ծառայություններն են	սահմանափակումներ չկան	–	–	–
III. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ				
1. Ռիսկերի ապահովագրում՝ կապված միջազգային ծովային փոխադրումների հետ միջազգային առևտրային օդային փոխադրումների հետ միջազգային առևտրային տիեզերական արձակումների հետ միջազգային ապահովագրության հետ,	սահմանափակումներ չկան	–	–	–

Ոլորտ (ենթաոլորտ)	Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
որը մասամբ կամ ամբողջությամբ ծածկում է՝ ֆիզիկական անձանց միջազգային փոխադրումը. ներմուծվող (արտահանվող) բեռների և դրանք փոխադրող տրանսպորտային միջոցների միջազգային փոխադրումը՝ ներառյալ դրանից բխող պատասխանատվությունը ապրանքների փոխադրումը միջազգային տրանսպորտով անդրսահմանային տեղափոխման ժամանակ անհատական տրանսպորտային միջոցների պատասխանատվությունը միայն պայմանագրերի և ապահովագրական սերտիֆիկատների՝ «Կանաչ քարտ» միջազգային համակարգին միանալուց հետո				
2. Վերաապահովագրում և ռետրոցեսիա	սահմանափակումներ չկան	–	–	–
3. Ապահովագրական գործակալների և ապահովագրական բրոքերների ծառայություններ	սահմանափակում	Ռուսաստանի Դաշնության տարածքում օտարերկրյա ապահովադիրների անունից ապահովագրական պայմանագրերի կնքման և բաշխման հետ կապված ապահովագրական միջնորդությունը չի թույլատրվում (բացառությամբ սույն ցանկի 1-ին կետում թվարկված ոլորտների)	«Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործի կազմակերպման մասին» 1992 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4015-1 Ռուսաստանի Դաշնության օրենք	–
4. Ապահովագրման օժանդակ ծառայությունները՝ ներառյալ խորհրդատվական,	սահմանափակումներ չկան	–	–	–

Ոլորտ (ենթաոլորտ)	Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
ակտուարային ծառայությունները, ռիսկի գնահատումը և բողոքների կարգավորման ծառայությունները				
IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ				
1. Ռիսկերի ապահովագրություն՝ կապված	սահմանափակումներ չկան	–	–	–
միջազգային ծովային փոխադրումների հետ միջազգային առևտրային օդային փոխադրումների հետ միջազգային առևտրային՝ դեպի տիեզերք արձակումների հետ				
միջազգային ապահովագրության հետ, որն ամբողջությամբ կամ մասամբ ծածկում է՝ ֆիզիկական անձանց միջազգային փոխադրումը, արտահանվող (ներմուծվող) բեռների և դրանք փոխադրող տրանսպորտային միջոցների միջազգային փոխադրումը՝ ներառյալ դրանից բխող պատասխանատվությունը, միջազգային տրանսպորտով ապրանքների փոխադրումը, անհատական տրանսպորտային միջոցների անդրսահմանային տեղափոխման դեպքում				

Ոլորտ (ենթաոլորտ)	Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
պատասխանատվությունը, միայն պայմանագրերի և «Կանաչ քարտ» ապահովագրական վկայականների միջազգային համակարգին միանալուց հետո:				
2. Վերաապահովագրություն և ռետրոցեսիա	սահմանափակումներ չկան	–	–	–
3. Ապահովագրական գործակալների և ապահովագրական բրոքերների ծառայություններ	սահմանափակում	չի թույլատրվում Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրողների անունից ապահովագրության պայմանագրերի կնքման և տեղաբաշխման հետ կապված ապահովագրական միջնորդություն (բացառությամբ սույն ցանկի 1-ին կետում թվարկված ոլորտների, ինչպես նաև բացառությամբ ապահովագրական բրոքերների կողմից վերաապահովագրության գծով միջնորդային գործունեություն իրականացնելու դեպքերի	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենք (հոդվածներ 89 և 91	սահմանված չէ
4. Ապահովագրության օժանդակ ծառայություններ՝ ներառյալ խորհրդատվական և ակտուարական ծառայությունները, ռիսկի գնահատումը և պահանջների կարգավորման հետ կապված ծառայությունները	սահմանափակումներ չկան	–	–	–

(հավելվածը լրաց. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

Հավելված 2
«Ֆինանսական ծառայությունների մասին»
արձանագրության

ՑԱՆԿ
հիմնադրման և (կամ) գործունեության առնչությամբ՝ անդամ պետությունների կողմից պահպանվող սահմանափակումների

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
Ի. ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ			
1. Սահմանափակում ըստ «Ֆինանսական ծառայությունների մասին» արձանագրության 6-րդ և 11-րդ կետերի (Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրի 17-րդ հավելված) (այսուհետ՝ հավելված 17)	այն դեպքում, եթե օտարերկրյա ներդրողների քվոտան Բելառուսի Հանրապետության ապահովագրական կազմակերպությունների կանոնադրական կապիտալում գերազանցում է 30%-ը՝ Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դադարեցնում է օտարերկրյա ներդրումներով ապահովագրական կազմակերպությունների գրանցումը և (կամ) այդպիսի կազմակերպություններին ապահովագրական գործունեություն իրականացնելու համար լիցենզիաների տրամադրումը ապահովագրական կազմակերպությունը պարտավոր է ստանալ Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարության նախնական թույլտվությունը՝ օտարերկրյա ներդրողների և (կամ) վերջիններիս դուստր (կախյալ) տնտեսական միություններ հանդիսացող կազմակերպությունների միջոցների հաշվին իր կանոնադրական ֆոնդի չափերն ավելացնելու համար, ապահովագրական կազմակերպության	«Ապահովագրական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի օգոստոսի 25-ի թիվ 530 հրամանագիր, «Բելառուսի Հանրապետության ապահովագրական կազմակերպությունների կանոնադրական ֆոնդերում օտարերկրյա ներդրողների քվոտան սահմանելու մասին» Բելառուսի Հանրապետության Նախարարների խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1174 որոշում «Ապահովագրական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի օգոստոսի 25-ի թիվ 530 հրամանագիր	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	կանոնադրական ֆոնդում 5% և ավելի կազմող իր կանոնադրական կապիտալում բաժնեմասերն (բաժնետոմսերը) օտարելու համար, իր կանոնադրական ֆոնդում բաժնեմասերը (բաժնետոմսերը)՝ օտարերկրյա ներդրողների և (կամ) այդ օտարերկրյա ներդրողների դուստր (կախյալ) տնտեսական միություններ հանդիսացող կազմակերպությունների օգտին օտարելու համար: Բելառուսի Հանրապետության ապահովագրական կազմակերպությունների բելառուսական մասնակիցները պարտավոր են ստանալ Ֆինանսների նախարարության նախնական թույլտվությունը կանոնադրական ֆոնդերում իրենց բաժնեմասերը (բաժնետոմսերը) օտարերկրյա ներդրողների և (կամ) այդ օտարերկրյա ներդրողների դուստր (կախյալ) տնտեսական միություններ հանդիսացող կազմակերպությունների սեփականությունն (տնտեսական վարմանը, գործառական կառավարմանը) օտարելու համար: Նախնական թույլտվություն չի տրամադրվում հետևյալ դեպքերում՝ նշված գործողությունները կատարելու դեպքում օտարերկրյա կապիտալի մասնակցության քվոտան Բելառուսի Հանրապետության ապահովագրական կազմակերպությունների	«Ապահովագրական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի օգոստոսի 25-ի թիվ 530 հրամանագիր «Ապահովագրական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի օգոստոսի 25-ի թիվ 530 հրամանագիր	

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	կանոնադրական կապիտալում կգերազանցի այն իրավաբանական անձը, որի օգտին ապահովագրողը, ապահովագրողի մասնակիցը մտադիր է օտարել կանոնադրական ֆոնդերում իրեն պատկանող բաժնեմասերը (բաժնետոմսերը), գործունեություն իրականացնում է 3 տարուց պակաս և վերջին 3 տարվա ընթացքում իր կողմից իրականացվող գործունեությունից շահույթ չի ստացել առկա է Բելառուսի Հանրապետության ազգային անվտանգությունը (այդ թվում՝ տնտեսական ոլորտում) ապահովելու, ազգային ապահովագրական կազմակերպությունների շահերը պաշտպանելու անհրաժեշտություն այն ապահովագրական կազմակերպությունները, որոնք օտարերկրյա ներդրողների դուստր (կախյալ) տնտեսական միություններ հանդիսացող կազմակերպություններ են և (կամ) որոնց կանոնադրական կապիտալի ավելի քան 49%-ը պատկանում է օտարերկրյա ներդրողներին, կարող են ստեղծել առանձնացված ենթաբաժիններ Բելառուսի Հանրապետության տարածքում, ինչպես նաև լինել այլ ապահովագրական կազմակերպությունների հիմնադիրներ (մասնակիցներ)՝ դրա վերաբերյալ Բելառուսի Հանրապետության ֆինանսների		

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	նախարարության նախնական թույլտվությունն ստանալուց հետո: Նշված նախնական թույլտվությունը չի տրամադրվում, եթե Բելառուսի Հանրապետության ապահովագրական կազմակերպություններում օտարերկրյա կապիտալի մասնակցության քվոտան գերազանցվում է այն ապահովագրական կազմակերպությունները, որոնք օտարերկրյա ներդրողների դուստր կամ կախյալ տնտեսական միություններ են, Բելառուսի Հանրապետությունում չեն կարող իրականացնել կյանքի ապահովագրություն (ֆիզիկական անձանց հետ կյանքի ապահովագրության պայմանագրեր կնքելուց բացի), պարտադիր ապահովագրություն (այդ թվում՝ պարտադիր պետական ապահովագրություն), գույքային ապահովագրություն՝ կապված պետական կարիքների համար մատակարարումների իրականացման կամ կապալային աշխատանքների կատարման հետ, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության և նրա վարչատարածքային միավորների գույքային շահերի ապահովագրություն: Օտարերկրյա ներդրողների կողմից՝ ապահովագրական կազմակերպությունների և ապահովագրական բրոքերների կանոնադրական ֆոնդում բաժնեմասերի (բաժնետոմսերի) համար		

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	վճարումը կատարվում է բացառապես դրամական միջոցներով		
2. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ապահովագրական գործակալներ, ապահովագրական բրոքերներ կարող են լինել միայն բելառուսական անձինք	«Ապահովագրական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի օգոստոսի 25-ի թիվ 530 հրամանագիր	սահմանված չէ
3. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	Բելառուսի Հանրապետության բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցությունը սահմանափակվում է 50%-ով: Օտարերկրյա ներդրումներով վարկային կազմակերպությունների ստեղծման համար անհրաժեշտ է ստանալ Բելառուսի Հանրապետության ազգային բանկի նախնական թույլտվությունը: Բելառուսի Հանրապետության Ազգային բանկը դադարեցնում է օտարերկրյա ներդրումներով բանկերի պետական գրանցումը՝ Բելառուսի Հանրապետության բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցության սահմանված չափին (քվոտային) հասնելու դեպքում: Բելառուսի Հանրապետության ազգային բանկն իրավունք ունի ձեռնարկելու ցանկացած միջոց՝ տվյալ սահմանափակումը պահպանելու համար: Թույլտվություն տրամադրելու հարցն ուսումնասիրելիս հաշվի է առնվում Բելառուսի Հանրապետության բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցության քվոտայի օգտագործման	Բելառուսի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 441-3 բանկային օրենսգիրք, «Բելառուսի Հանրապետության բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցության չափի (քվոտայի) մասին» Բելառուսի Հանրապետության Ազգային բանկի Վարչության 2008 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 129 որոշում	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	մակարդակը, ինչպես նաև ոչ ռեզիդենտ հիմնադիրների ֆինանսական դիրքն ու գործարար համբավը:		
4. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	Բելառուսի Հանրապետությունում ֆինանսական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնելու համար լիցենզիան տրամադրվում է Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կազմակերպաիրավական ձևով ստեղծված՝ Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձանց	Բելառուսի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 441-3 բանկային օրենսգիրք	սահմանված չէ
5. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ապահովագրական կազմակերպության ղեկավարի, նրա տեղակալի, գլխավոր հաշվապահի գործառույթները կարող են իրականացնել միայն Բելառուսի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները և առանց քաղաքացիության անձինք, որոնք մշտապես բնակվում են Բելառուսի Հանրապետությունում, և միայն աշխատանքային պայմանագրի հիման վրա	«Ապահովագրական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի օգոստոսի 25-ի թիվ 530 հրամանագիր	սահմանված չէ
6. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	այն գործունեությունը, որի իրականացման համար պահանջվում է լիցենզիա, կարող է իրականացվել միայն Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձանց կողմից կամ անհատ ձեռնարկատերերի կողմից, որոնք սահմանված կարգով գրանցված են Բելառուսի Հանրապետությունում: Լիցենզավորման ենթակա	«Գործունեության առանձին տեսակների լիցենզավորման մասին դրույթ» Բելառուսի Հանրապետության նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 450 հրամանագիր	որոշված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	գործունեության տեսակները սահմանվում են Բելառուսի Հանրապետության օրենսդրության համաձայն:		
II. ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ			
1. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	լիազոր մարմնի բաժնեմասը սակարկություններ կազմակերպողի կապիտալում կարող է կազմել սակարկություններ կազմակերպողի քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր քանակի 50%-ից ավելին	«Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության 2003 թվականի հուլիսի 2-ի թիվ 461-II օրենք	սահմանված չէ
2. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	այն գործունեությունը, որի իրականացման համար պահանջվում է լիցենզիա, կարող է իրականացվել միայն Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից Ղազախստանի Հանրապետության լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները սահմանվում են Ղազախստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:	«Լիցենզավորման մասին» Ղազախստանի Հանրապետության 2007 թվականի հունվարի 11-ի թիվ 214-III օրենք	սահմանված չէ
3. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	բանկերն ստեղծվում են բաժնետիրական ընկերությունների ձևով	«Բանկերի և բանկային գործունեության մասին Ղազախստանի Հանրապետությունում» Ղազախստանի Հանրապետության 1995 թվականի օգոստոսի 31-ի թիվ 2444 օրենք	սահմանված չէ
4. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ոչ ռեզիդենտ բանկերի մասնաճյուղերի բացումը Ղազախստանի Հանրապետությունում արգելվում է	«Բանկերի և բանկային գործունեության մասին Ղազախստանի Հանրապետությունում» Ղազախստանի Հանրապետության 1995 թվականի օգոստոսի 31-ի թիվ 2444 օրենք	սահմանված չէ
5. Սահմանափակում ըստ 17-րդ	ապահովագրական (վերաապահովագրական)	«Ապահովագրական գործունեության մասին»	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	կազմակերպությունը պետք է հիմնադրվի բաժնետիրական ընկերության ձևով	Ղազախստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 126-II օրենք	
6. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	Ղազախստանի Հանրապետությունում արգելվում է ոչ ռեզիդենտ ապահովագրական կազմակերպությունների մասնաճյուղերի բացումը:	«Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 126-II օրենք	սահմանված չէ
7. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ապահովագրական բրոքերի կազմակերպաիրավական ձև կարող է լինել սահմանափակ պատասխանատվությամբ բաժնետիրական ընկերակցությունը կամ բաժնետիրական ընկերությունը	«Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 126-II օրենք	սահմանված չէ
8. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդը ստեղծվում է բաժնետիրական ընկերության ձևով	«Ղազախստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության 2013 թվականի հունիսի 21-ի թիվ 105-V օրենք	սահմանված չէ
9. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	Ղազախստանի Հանրապետությունում արգելվում է Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կուտակային կենսաթոշակային ֆոնդերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների բացումը:	«Ղազախստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության 2013 թվականի հունիսի 21-ի թիվ 105-V օրենք	սահմանված չէ
10. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	Կենտրոնական դեպոզիտարիան Ղազախստանի Հանրապետության տարածքում դեպոզիտորական գործունեություն իրականացնող միակ կազմակերպությունն է: Կենտրոնական դեպոզիտարիան ստեղծվում է բաժնետիրական ընկերության ձևով:	«Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության 2003 թվականի հուլիսի 2-ի թիվ 461-II օրենք	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
11. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցն իրավաբանական անձ է, որն ստեղծվել է բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևով (բացառությամբ տրանսֆեր-գործակալի)	«Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության 2003 թվականի հուլիսի 2-ի թիվ 461-II օրենք	սահմանված չէ
12. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ֆոնդային բորսա՝ բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևով ստեղծված իրավաբանական անձ	«Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության 2003 թվականի հուլիսի 2-ի թիվ 461-II օրենք	սահմանված չէ
13. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	բանկային հոլդինգ՝ բանկի տեղաբաշխված (հանած արտոնյալ և բանկի կողմից գնվածները) բաժնետոմսերի քսանհինգ կամ ավելի տոկոսի ուղղակիորեն տիրապետող կամ բանկի քսանհինգ կամ ավելի տոկոսի քվեարկող բաժնետոմսերի ուղղակիորեն քվեարկելու հնարավորություն ունեցող կարող է լինել միայն Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի երկրում ենթակա է կոնսոլիդացված վերահսկողության	«Բանկերի և բանկային գործունեության մասին Ղազախստանի Հանրապետությունում» Ղազախստանի Հանրապետության 1995 թվականի օգոստոսի 31-ի թիվ 2444 օրենք	սահմանված չէ
14. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	միասնական կուտակային կենսաթոշակային ֆոնդը Ղազախստանի Հանրապետության տարածքում միակ կազմակերպությունն է, որն իրականացնում է պարտադիր կենսաթոշակային վճարների, պարտադիր մասնագիտական կենսաթոշակային վճարների գանձման հետ կապված գործունեություն	«Ղազախստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության 2013 թվականի հունիսի 21-ի թիվ 105-V օրենք	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
15. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	միասնական գրանցողը Ղազախստանի Հանրապետության տարածքում միակ կազմակերպությունն է, որն իրականացնում է արժեթղթերի սեփականատերերի գրանցամատյանների համակարգի վարման հետ կապված գործունեություն	«Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության 2003 թվականի հուլիսի 2-ի թիվ 461-II օրենք	սահմանված չէ
16. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ապահովագրական հոլդինգ՝ Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ, որը տիրապետում է ապահովագրական (վերաապահովագրական) կազմակերպության տեղաբաշխված բաժնետոմսերի քսանհինգ և ավելի տոկոսին (հանած արտոնյալ և ապահովագրական (վերաապահովագրական) կազմակերպության կողմից գնված բաժնետոմսերը), կամ ունի ապահովագրական (վերաապահովագրական) կազմակերպության քսանհինգ կամ ավելի տոկոսի քվեարկող բաժնետոմսերի ուղղակիորեն քվեարկելու հնարավորություն, կարող է լինել միայն ֆինանսական կազմակերպությունը	«Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 126-II օրենք	սահմանված չէ
17. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ապահովագրական վճարների երաշխավորման ֆոնդը Ղազախստանի Հանրապետությունում միակ կազմակերպությունն է, որն ապահովում է ապահովագրական վճարների կատարումը ապահովագրողներին (ապահովագրված, շահույթ ստացող), պարտադիր ապահովագրության	«Ապահովագրական վճարների երաշխավորման մասին» Ղազախստանի Հանրապետության 2003 թվականի հունիսի 3-ի թիվ 423-II օրենք	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	պայմանագրերով ապահովագրական կազմակերպության հարկադրական լուծարման դեպքում		
18. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	այն կազմակերպությունը, որն իրականացնում է ավանդների պարտադիր ապահովագրություն, ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևով: Ավանդների պարտադիր ապահովագրություն իրականացնող հիմնադիրը (կազմակերպության միակ բաժնետերը) լիազոր մարմինն է	«Ղազախստանի Հանրապետության երկրորդ մակարդակի բանկերում տեղաբաշխված ավանդների պարտադիր երաշխավորման մասին» Ղազախստանի Հանրապետության 2006 թվականի հուլիսի 7-ի թիվ 169-III օրենք	սահմանված չէ
19. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	պետական մասնակցությամբ վարկային բյուրոն միակ մասնագիտացված ոչ առևտրային կազմակերպությունն է, որն ստեղծվել է բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևով, որտեղ մատակարարները պարտադիր կարգով ներկայացնում են վարկային պատմությունների ձևավորման համար անհրաժեշտ տեղեկություններ	«Վարկային բյուրոների և վարկային պատմությունների ձևավորման մասին Ղազախստանի Հանրապետությունում» Ղազախստանի Հանրապետության 2004 թվականի հուլիսի 6-ի թիվ 573-II օրենք	սահմանված չէ
20. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ապահովագրական պայմանագրերով տվյալների բազաների ձևավորումը և վարումն իրականացնում է ոչ առևտրային կազմակերպությունը, որն ստեղծվել է բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևով՝ պետության	«Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 126-II օրենք	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	մասնակցության բաժնեմասով		
III. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ			
1. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	այն ապահովագրական կազմակերպությունները, որոնք օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպությունների) դուստր միություններ են կամ որոնց կանոնադրական կապիտալի ավելի քան 49%-ը պատկանում է օտարերկրյա ներդրողներին, Ռուսաստանի Դաշնությունում չեն կարող իրականացնել կյանքի ապահովագրություն, քաղաքացիների առողջության և գույքի ապահովագրում՝ գործադիր իշխանության դաշնային մարմինների կողմից (ապահովագրողներին) համապատասխան բյուջեից այդ նպատակով տրամադրվող միջոցների հաշվին, ապահովագրություն՝ կապված պետական և համայնքային կարիքների համար ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ գնելու գործունեության հետ, ինչպես նաև պետական և համայնքային կազմակերպությունների գույքային շահերի ապահովագրություն: Այն ապահովագրական կազմակերպությունները, որոնք օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպությունների) դուստր միություններ են կամ որոնց կանոնադրական կապիտալի ավելի քան 51%-ը պատկանում է օտարերկրյա ներդրողներին, Ռուսաստանի	«Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործի կազմակերպման մասին» 1992 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4015-1 դաշնային օրենք	սահմանված չէ մինչև 2017 թվականի օգոստոսի 22-ը

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	Դաշնությունում նույնպես չեն կարող իրականացնել գույքային շահերի ապահովագրում, որոնք կապված են քաղաքացիների՝ մինչև որոշակի տարիքը կամ ժամկետն ապրելու կամ քաղաքացիների կյանքում այլ իրադարձություններ տեղի ունենալու, ինչպես նաև նրանց մահվան հետ, և տրանսպորտային միջոցներ տիրապետողների քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրում: Այն ապահովագրական կազմակերպությունը, որն օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպության) դուստր միություն է կամ որի կանոնադրական կապիտալի ավելի քան 49%-ը պատկանում է օտարերկրյա ներդրողներին, իրավունք ունի Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործունեություն իրականացնելու, եթե օտարերկրյա ներդրողը (հիմնական կազմակերպությունը) 5 տարուց ոչ պակաս համարվում է ապահովագրական կազմակերպություն, որն իր գործունեությունն իրականացնում է համապատասխան անդամ պետության օրենսդրության համաձայն: Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված է ապահովագրական կազմակերպությունների կանոնադրական		

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	կապիտալում օտարերկրյա կապիտալի մասնակցության 50%-ին հավասար առավելագույն չափ (քվոտա): Ապահովագրական կազմակերպությունների օտարերկրյա կապիտալի մասնակցության չափի (քվոտայի), սույն կետի հինգերորդ և յոթերորդ պարբերություններով նախատեսված՝ օտարերկրյա ներդրումների վերաբերյալ սահմանափակումների կիրառման կամ դադարեցման մասին տեղեկությունները ենթակա են հրապարակման՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով: Եթե ապահովագրական կազմակերպությունների կանոնադրական կապիտալում օտարերկրյա կապիտալի մասնակցության չափը (քվոտան) գերազանցում է 50%-ը, ապա ապահովագրական վերահսկողության մարմինը դադարեցնում է այն ապահովագրական կազմակերպությունների ապահովագրական գործունեությունն իրականացնելու համար լիցենզիայի տրամադրումը, որոնք օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպության) դուստր միություններ են կամ իրենց կանոնադրական կապիտալում ունեն 49%-ից ավելի օտարերկրյա ներդրողների բաժնեմաս: Ապահովագրական կազմակերպությունը պարտավոր է ստանալ ապահովագրական		

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	վերահսկողության մարմնի նախնական թույլտվությունը՝ օտարերկրյա ներդրողների միջոցների և (կամ) նրանց դուստր միությունների միջոցների հաշվին իր կանոնադրական կապիտալի չափն ավելացնելու համար, իր բաժնետոմսերը (կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը) օտարերկրյա ներդրողի օգտին օտարելու (այդ թվում՝ օտարերկրյա ներդրողներին վաճառելու) համար, իսկ ռուսաստանյան բաժնետերերը (մասնակիցները)՝ ապահովագրական կազմակերպության՝ իրենց պատկանող բաժնետոմսերը (կանոնադրական կապիտալում բաժնեմասը) օտարերկրյա ներդրողների և (կամ) նրանց մասնաճյուղերի օգտին օտարելու համար: Եթե ապահովագրական կազմակերպությունների կանոնադրական կապիտալում օտարերկրյա կապիտալի մասնակցության չափը (քվոտան) գերազանցվում է, ապա ապահովագրական վերահսկողության մարմինը նախնական թույլտվություն չի տրամադրում այն ապահովագրական կազմակերպությանը, որն օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպության) դուստր միություն է կամ որի կանոնադրական կապիտալի ավելի քան 49%-ը պատկանում է օտարերկրյա ներդրողների կամ որոնք այդպիսին են դառնում նշված գործարքների արդյունքում:		

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	Օտարերկրյա ներդրողների կողմից ապահովագրական կազմակերպությունների՝ իրենց պատկանող բաժնետոմսերի (կանոնադրական կապիտալներում բաժնեմասերի) վճարումը կատարվում է բացառապես դրամական ձևով՝ Ռուսաստանի Դաշնության արժույթով: Անկախ սույն կետի դրույթներից՝ այն ապահովագրական ծառայությունները, որոնք ապահովագրական գործունեություն իրականացնելու համար լիցենզիա են ստացել՝ մինչև Ռուսաստանի Դաշնության ԱՀԿ-ին միանալը, կարող են շարունակել տվյալ գործունեության իրականացումը այն պայմաններին համապատասխան, որոնցով տրամադրվել է լիցենզիան		
2. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ապահովագրական գործակալներ, ապահովագրական բրոքերներ կարող են լինել բացառապես ռուսաստանյան անձինք (տվյալ սահմանափակումը չի տարածվում ապահովագրական գործակալներ - ֆիզիկական անձանց վրա, որոնք գրանցված չեն որպես անհատ ձեռնարկատեր)	«Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործի կազմակերպման մասին» 1992 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4015-1 դաշնային օրենք	սահմանված չէ
3. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	Ռուսաստանի Դաշնության բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցությունը սահմանափակվում է 50%-ով: Ռուսաստանի Դաշնության բանկային համակարգում օտարերկրյա	Ռուսաստանի Դաշնության միջազգային պարտավորությունները, որոնք վերաբերում են ծառայություններին և բխում են ««Առևտրի համաշխարհային կազմակերպության	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	մասնակցության քվոտայի վերահսկման նպատակներով՝ Կենտրոնական բանկի նախնական թույլտվություն է պահանջվում հետևյալի համար՝ օտարերկրյա մասնակցությամբ վարկային կազմակերպություն՝ ներառյալ դուստր և կախյալ միություններ ստեղծելու ոչ ռեզիդենտի (ոչ ռեզիդենտների) միջոցների հաշվին վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալը մեծացնելու վարկային կազմակերպության բաժնետոմսերը (բաժնեմասերի) ոչ ռեզիդենտների օգտին օտարելու	ստեղծման մասին» Մարաքեշի 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրին Ռուսաստանի Դաշնության միանալու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 16-ի արձանագրությունից	
4. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	Ռուսաստանի Դաշնությունում ֆինանսական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնելու համար լիցենզիան տրամադրվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կազմակերպաիրավական ձևով ստեղծված՝ Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձանց:	«Բանկերի և բանկային գործունեության մասին»1990 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 395-I դաշնային օրենք, «Արժեթղթերի շուկայի մասին» 1996 թվականի ապրիլի 22-ի թիվ 39-ԴՕ դաշնային օրենք, «Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործի կազմակերպման մասին» 1992 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4015-1 դաշնային օրենք, «Քլիրինգի և քլիրինգային գործունեության մասին» 2011 թվականի փետրվարի 7-ի թիվ 7-ԴՕ դաշնային օրենք, «Կազմակերպված սակարկությունների մասին» 2011 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 325-ԴՕ դաշնային օրենք, «Ոչ պետական կենսաթոշակային ֆոնդերի մասին» 1998 թվականի	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
		մայիսի 7-ի թիվ 75-ԴՕ դաշնային օրենք, «Ներդրումային ֆոնդերի մասին» 2001 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 156-ԴՕ դաշնային օրենք, «Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2013 թվականի մարտի 14-ի թիվ 29-ԴՕ դաշնային օրենք	
5. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	օտարերկրյա ներդրումներով վարկային կազմակերպությունների առնչությամբ գործում են սահմանափակումներ հետևյալ դեպքերում՝ եթե ռուսաստանյան վարկային կազմակերպության միանձնյա գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նման վարկային կազմակերպության գործադիր կոլեգիալ մարմինը 50%-ից ոչ պակաս պետք է ձևավորված լինի Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներից: Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող աշխատողների թիվը պետք է կազմի օտարերկրյա ներդրումներով ռուսաստանյան վարկային կազմակերպությունների աշխատողների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 75%-ը:	««Օտարերկրյա ներդրումներով վարկային կազմակերպությունների գրանցման առանձնահատկություն-ների և գրանցված վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի՝ ոչ ռեզիդենտների միջոցների հաշվին ավելացնելու համար Ռուսաստանի Բանկի նախնական թույլտվությունը ստանալու կարգի մասին» կանոնակարգը գործողության մեջ դնելու մասին» Ռուսաստանի կենտրոնական բանկի 1997 թվականի ապրիլի 23-ի թիվ 02-195 հրաման	սահմանված չէ
6. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	օտարերկրյա վարկային կազմակերպության ներկայացուցչության օտարերկրյա անձնակազմի թիվը, որպես կանոն, չպետք է գերազանցի 2 հոգին: Այն	«Ռուսաստանի Դաշնությունում օտարերկրյա վարկային կազմակերպությունների բացման և գործունեության կարգի մասին»	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	դեպքում, եթե ներկայացուցչությանը անհրաժեշտ են թվով ավելի շատ հավատարմագրված աշխատակիցներ, այդ անհրաժեշտությունը պետք է հիմնավորում ստանա Ռուսաստանի Բանկի նախագահին ուղղված դիմումի մեջ, որի հիման վրա ընդունվում է որոշումը	Ռուսաստանի բանկի 1997 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 02-437 հրաման	
7. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	ռուսաստանյան ապահովագրական գործի (իրավաբանական անձի) սուբյեկտի ղեկավարները (այդ թվում՝ միանձնյա գործադիր մարմինը) և գլխավոր հաշվապահը պետք է մշտապես բնակվեն Ռուսաստանի Դաշնության տարածքում	«Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործի կազմակերպման մասին» 1992 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4015-1 դաշնային օրենք	մինչև 2015 թվականի հունվարի 1-ը
8. Սահմանափակում՝ ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	լիցենզավորման ենթակա գործունեությունը կարող է իրականացվել բացառապես Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձանց կամ Ռուսաստանի Դաշնությունում սահմանված կարգով գրանցված անհատ ձեռնարկատերերի կողմից: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները սահմանվում են Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան	«Գործունեության առանձին տեսակների լիցենզավորման մասին դրույթ» 2011 թվականի մայիսի 4-ի թիվ 99-ԴՕ դաշնային օրենք (և նշված Դաշնային օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետում թվարկված գործունեության տեսակները կարգավորող օրենսդրություն), «Բանկերի և բանկային գործունեության մասին» 1990 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 395-I դաշնային օրենք	սահմանված չէ
9. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	յուրաքանչյուր բաժնետիրոջ (կապված անձանց խմբի) բաժնեմասը առևտուրը կազմակերպողի կանոնադրական կապիտալում չի կարող գերազանցել 10%-ը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բաժնետերը (միավորված անձանց խումբը) լիազոր մարմինն է կամ միևնույն հոլդինգային	—	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	խմբի մեջ մտնող՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսական շուկայի ենթակառուցվածքային կազմակերպությունները		
10. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական պատմությունները վարում է միայն մեկ կազմակերպություն, որը հիմնադրվել և գործունեություն է ծավալում Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան	—	սահմանված չէ
11. Սահմանափակում ըստ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի	կենտրոնական պահառուի կարգավիճակ ստացած կազմակերպությունը Ռուսաստանի Դաշնության տարածքում կենտրոնական պահառուի գործառույթներն իրականացնող միակ կազմակերպությունն է կենտրոնական պահառուն ստեղծվում է բաժնետիրական ընկերության ձևով	«Կենտրոնական պահառուի մասին» 2011 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 414-ՌՕ դաշնային օրենք	սահմանված չէ
IV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ			
1. Սահմանափակում՝ 17-րդ հավելվածի 6-րդ և 11-րդ կետերի մասով	Հայաստանի Հանրապետության տարածքում ֆինանսական ծառայություններ կարող են մատուցվել Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված ու գրանցված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կազմակերպական-իրավական ձևով հիմնադրված ֆինանսական կազմակերպությունների և (կամ) դրանց մասնաճյուղերի կողմից՝ բացառությամբ ապահովագրական գործակալների, որոնք գրանցվում և հաշվառվում են	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենք (հոդվածներ 8 և 87), «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենք (հոդվածներ 28, 103 և 175), «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության 2010	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան	թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենք (հոդված 52), «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենք (հոդված 12)	
2. Սահմանափակում՝ 17-րդ հավելվածի 6-րդ կետի մասով	Օտարերկրյա բանկը, օտարերկրյա ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերությունը և ներդրումային ֆոնդի օտարերկրյա կառավարիչը կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղ հիմնադրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մասնաճյուղի լիցենզավորման և գրանցման միջոցով	«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենք (հոդված 14), «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենք (հոդված 47), «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենք (հոդված 43), «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենք (հոդված 54), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կանոնակարգեր 1 (2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն), 03/01 (2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն), 4/01 (2008 թվականի հունվարի 15-ի	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
		թիվ 16-Ն)	
3. Սահմանափակում՝ 17-րդ հավելվածի 6-րդ կետի մասով	Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվություն կարող է տրվել Հայաստանի Հանրապետությունում ստեղծված այն կառավարչին, որն ունի՝ միջազգային ֆինանսական կազմակերպություն կամ ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի) կառավարման մեջ մասնագիտացված օտարերկրյա հեղինակավոր կազմակերպություն հանդիսացող առնվազն մեկ մասնակից (բաժնետեր): Ընդ որում, միջազգային ֆինանսական կազմակերպությանը (կազմակերպություններին) և (կամ) օտարերկրյա հեղինակավոր կազմակերպությանը (կազմակերպություններին) պետք է պատկանի Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասի 50 տոկոսից ավելին, և այդ կազմակերպությունը (կազմակերպությունները) պետք է ունենա (ունենան) որոշիչ ձայնի իրավունք պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ռազմավարությունը սահմանելիս, ինչպես նաև կառավարչի գործադիր մարմինը և ներքին հսկողության համակարգը ձևավորելիս	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կանոնակարգ 10/01 (2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն) (կետ 33)	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
4. Սահմանափակում՝ 17-րդ հավելվածի 6-րդ կետի մասով	Որպես արժեթղթերի պահառու կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության տարածքում լիցենզավորված և գրանցված ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերը և բանկերը: Որպես ներդրումային ֆոնդերի արժեթղթերի պահառու կարող է հանդես գալ միայն բանկը (Հայաստանի Հանրապետության տարածքում լիցենզավորված և գրանցված)	«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենք (հոդված 27), «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-245-Ն օրենք (հոդված 86)	սահմանված չէ
5. Սահմանափակում՝ 17-րդ հավելվածի 6-րդ կետի մասով	Կարգավորվող շուկայի օպերատորը (բորսա) և Կենտրոնական դեպոզիտարիան կարող են հիմնադրվել միայն բաժնետիրական ընկերության ձևով	«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենք (հոդվածներ 103 և 175)	սահմանված չէ
6. Սահմանափակում՝ 17-րդ հավելվածի 6-րդ կետի մասով	Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Կենտրոնական դեպոզիտարիայի կարգավիճակ ստացած կազմակերպությունը միակ կազմակերպությունն է Հայաստանի Հանրապետության տարածքում, որն իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիայի գործառույթներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության	«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենք (հոդված 175)	սահմանված չէ
7. Սահմանափակում՝ 17-րդ հավելվածի 6-րդ կետի մասով	Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող	«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
	պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ) իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոն իրավաբանական անձանց միության կազմակերպական-իրավական ձև ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է: Բյուրոյի գործունեության նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ԱՊՊԱ համակարգի կայունության ու զարգացման ապահովումը: Բյուրոն միակ ինքնակարգավորվող կազմակերպությունն է, որին, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, անդամակցում են ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեցող ապահովագրական ընկերությունները, իսկ նշված Օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:	պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի մայիսի 18-ի ՀՕ-63-Ն օրենք (հոդվածներ 3 և 28)	
8. Սահմանափակում՝ 17-րդ հավելվածի 6-րդ կետի մասով	Ավանդների պարտադիր երաշխավորում իրականացնող կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է, որի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է:	«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-142-Ն օրենք (հոդված 17)	սահմանված չէ
9. Սահմանափակում՝ 17-րդ հավելվածի 6-	Վարկային բյուրոն բաժնետիրական	«Վարկային տեղեկատվության	սահմանված չէ

Սահմանափակման առկայություն	Սահմանափակման նկարագրություն	Սահմանափակման կիրառման համար հիմք (նորմատիվ իրավական ակտ)	Սահմանափակման գործողության ժամկետ
րդ կետի մասով	ընկերության կազմակերպական-իրավական ձևով ստեղծված առևտրային մասնագիտացված կազմակերպություն է, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա իրավունք ունի իրականացնելու վարկային տեղեկատվության և դրա համար անհրաժեշտ այլ տվյալների հավաքման, վարկային պատմությունների կազմման, ձևակերպման ու պահպանման և դրանց հիման վրա վարկային զեկույցի պատրաստման գործունեություն:	շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-185-Ն օրենք (հոդված 3)	

(հավելվածը լրաց. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ 18
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի և դրանց վճարման նկատմամբ հսկողության մեխանիզմի մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 71-րդ և 72-րդ հոդվածների համաձայն: Սույնով սահմանվում են ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգը և դրանց վճարման նկատմամբ հսկողության մեխանիզմը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«աուդիտորական ծառայություններ»՝ հաշվապահական հաշվառման, հարկային և ֆինանսական հաշվետվությունների աուդիտ անցկացնելու ծառայություններ.

«հաշվապահական ծառայություններ»՝ հաշվապահական հաշվառումը կազմակերպելու, վարելու, վերականգնելու, հարկային, ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ կազմելու և (կամ) ներկայացնելու ծառայություններ.

«շարժական գույք»՝ իրեր, որոնք չեն դասվում անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների շարքին.

«դիզայներական ծառայություններ»՝ գեղարվեստական ձևավածքների, արտադրատեսակների արտաքին ձևի, շենքերի ճակատամասերի, սենքերի ինտերիերների նախագծման ծառայություններ, գեղարվեստական նախագծում.

«ապրանքների ներմուծում»՝ հարկ վճարողների (վճարողների) կողմից անդամ պետության տարածքից ապրանքների ներսբերում այլ անդամ պետության տարածք.

«ինժինիրինգային ծառայություններ»՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) արտադրության (կատարման, մատուցման) և իրացման գործընթացի նախապատրաստման, արդյունաբերական, ենթակառուցվածքային, գյուղատնտեսական և այլ օբյեկտների շինարարության և շահագործման նախապատրաստման ճարտարագիտա-խորհրդատվական ծառայություններ, ինչպես նաև մինչնախագծային և նախագծային ծառայություններ (տեխնիկատնտեսական հիմնավորումների, նախագծակոնստրուկտորային մշակումների, տեխնիկական փորձարկումների նախապատրաստումը և այդ փորձարկումների արդյունքների վերլուծություն).

«իրավասու մարմիններ»՝ անդամ պետությունների ֆինանսների, էկոնոմիկայի նախարարություններ, հարկային և մաքսային մարմիններ.

«խորհրդատվական ծառայություններ»՝ պարզաբանումներ, առաջարկություններ և այլ տեսակի խորհրդատվություն տրամադրելու ծառայություններ՝ ներառյալ խնդրի և (կամ) անձի հնարավորությունների որոշումը և (կամ) գնահատականը, այդ թվում՝ կառավարման, տնտեսական, ֆինանսական (այդ թվում՝ հարկային և հաշվապահական) հարցերով, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության ծրագրման, կազմակերպման և իրականացման, անձնակազմի կառավարման հարցերով ծառայություններ.

«անուղղակի հարկեր»՝ ավելացված արժեքի հարկ (այսուհետ՝ ԱԱՀ) և ակցիզներ (ակցիզային հարկ կամ ակցիզային տուրք).

«մարքեթինգային ծառայություններ»՝ ապրանքների (աշխատանքների ծառայությունների) արտադրության և շրջանառության ոլորտում ուսումնասիրությունների, վերլուծության և կանխատեսումների հետ կապված ծառայություններ՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) արտադրության և շրջանառության անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար միջոցներ ձեռնարկելու նպատակով՝ ներառյալ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) բնութագիրը, գնային ռազմավարության և գովազդային ռազմավարության մշակումը.

«հարկ վճարողներ (վճարողներ)»՝ անդամ պետությունների հարկեր, հավաքագրումներ և տուրքեր մուծող հարկ վճարողներ (վճարողներ) (այսուհետ՝ հարկ վճարողներ).

«գիտահետազոտական աշխատանքներ»՝ պատվիրատուի տեխնիկական առաջադրանքով նախատեսված գիտական ուսումնասիրությունների անցկացում.

«անշարժ գույք»՝ հողատարածքներ, ընդերքի հատվածներ, առանձնացված ջրային օբյեկտներ և ամեն ինչ, ինչն ամուր կապված է հողի հետ, այսինքն՝ օբյեկտներ, որոնց տեղափոխումն առանց դրանց անհամաչափ վնաս հասցնելու հնարավոր չէ, այդ թվում՝ անտառները, բազմամյա տնկարկները, շենքերը, շինությունները, խողովակաշարերը, էլեկտրահաղորդման գծերը, ձեռնարկությունները, ինչպիսիք են գույքային համալիրները և տիեզերական օբյեկտները.

«ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ»՝ ԱԱՀ-ով հարկում զրո տոկոս դրույքաչափով, ԱԱՀ-ի համապատասխան գումարների նվազեցման (հաշվանցման) իրավունքով.

«փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ»՝ նոր արտադրանքի նմուշի, դրա կոնստրուկտորական փաստաթղթերի կամ նոր տեխնոլոգիայի մշակում.

«աշխատանք»՝ գործունեություն, որի արդյունքներն ունեն նյութական արտահայտություն և կարող են իրացվել իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց կարիքների բավարարման համար.

«գովազդային ծառայություններ»՝ տեղեկությունների ստեղծման, տարածման և տեղադրման ծառայություններ, որոնք նախատեսված են անձանց անորոշ շրջանակի համար և կոչված են ցանկացած միջոցով և ցանկացած ձևով իրավաբանական կամ ֆիզիկական անձի,

ապրանքների, ապրանքային նշանների, աշխատանքների, ծառայությունների հանդեպ հետաքրքրություն ձևավորելու կամ պահպանելու համար.

«ապրանք»՝ իրացվող կամ իրացման համար նախատեսված ցանկացած շարժական և անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, էներգիայի բոլոր տեսակները.

«տրանսպորտային միջոցներ»՝ նավեր և օդանավեր, ներքին նավարկության նավեր, խառը (գետ-ծով) նավարկության նավեր, երկաթուղային կամ տրամվայի շարժակազմի միավորներ, ավտոբուսներ, ավտոմեքենաներ՝ ներառյալ կցորդները և կիսակցորդները, բեռնարկղերը, բացահանքային ինքնաթափերը.

«ծառայություն»՝ գործունեություն, որի արդյունքները չունեն նյութական արտահայտություն, իրացվում և օգտագործվում են այդ գործունեության իրականացման ընթացքում, ինչպես նաև արտոնագրերի, լիցենզիաների, առևտրային նշանների, հեղինակային իրավունքների կամ այլ իրավունքների փոխանցում, տրամադրում.

«տեղեկությունների մշակման ծառայություններ»՝ տեղեկությունների հավաքագրման և ամփոփման, տեղեկատվական պաշարների (տվյալների) համակարգման և այդ տեղեկությունների մշակման արդյունքներն օգտագործողի տնօրինմանը հանձնելու ծառայություններ.

«ապրանքների արտահանում»՝ հարկ վճարողի կողմից իրականացվող՝ որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքների դուրսբերում.

«իրավաբանական ծառայություններ»՝ իրավական բնույթի ծառայություններ, այդ թվում՝ խորհրդատվությունների ու պարզաբանումների տրամադրում, փաստաթղթերի նախապատրաստում և իրավական փորձաքննություն, դատարաններում պատվիրատուի շահերի ներկայացում:

II. Անուղղակի հարկերի գանձման կարգը ապրանքների արտահանման ժամանակ

3. Մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքներ արտահանելու դեպքում այն անդամ պետության հարկատուի կողմից, որի տարածքից դուրս են բերվել ապրանքները, կիրառվում են ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ և (կամ) ակցիզների վճարից ազատում՝ սույն Արձանագրության 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը հարկային մարմին ներկայացնելու դեպքում:

Անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքների արտահանման դեպքում հարկ վճարողն իրավունք ունի հարկի նվազեցում (հաշվանցում) իրականացնելու անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգին նույնանման ձևով, որը կիրառվում է անդամ պետության տարածքից Միության սահմաններից դուրս արտահանված ապրանքների առնչությամբ:

Ապրանքների իրացման վայրը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրության համաձայն, եթե սույն կետով այլ բան նախատեսված չէ:

Մի անդամ պետության հարկ վճարողի կողմից մյուս անդամ պետության հարկ վճարողին ապրանքներ իրացնելու դեպքում, եթե ապրանքի փոխադրումն (տրանսպորտային փոխադրումը) սկսվել է Միության սահմաններից դուրս և ավարտվել այլ անդամ պետությունում, ապրանքի իրացման վայր է ճանաչվում այն անդամ պետության տարածքը, որի տարածքում ապրանքը ձևակերպվել է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

4. ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու և (կամ) ակցիզների վճարից ազատվելու հիմնավորումը հաստատելու համար, այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածքից արտահանվում են ապրանքները, հարկային հայտարարագրի հետ միաժամանակ հարկային մարմին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը (դրանց պատճենները)՝

1) պայմանագրեր՝ կնքված մի անդամ պետության հարկ վճարողի կամ Միության անդամ չհանդիսացող պետության հարկ վճարողի միջև (այսուհետ՝ պայմանագրեր), որոնց հիման վրա իրականացվում է ապրանքների արտահանումը. ապրանքների լիզինգի կամ ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության) դեպքում՝ լիզինգի պայմանագրերը, ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության) պայմանագրերը. ապրանքների պատրաստման պայմանագրերը.

պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման [ծառայությունների վճարովի մատուցման և կապալի պայմանագրերին առնչվող իրավահարաբերություններ] պայմանագրերը.

2) բանկային քաղվածք, որով հաստատվում է արտահանված ապրանքների իրացումից ստացված հասույթի փաստացի մուտքը արտահանող հարկ վճարողի հաշվին, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է կանխիկ դրամական միջոցներով վճարում, և այդպիսի վճարումը չի հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքից արտահանվում են ապրանքները, ապա հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում բանկային քաղվածքը (քաղվածքի պատճենը), որը հաստատում է հարկ վճարողի կողմից ստացված գումարները բանկային իր հաշվին մուտքագրելը, ինչպես նաև դրամարկղային մուտքի օրդերների պատճենները, որոնք հաստատում են նշված ապրանքներից գնորդի հասույթի փաստացի մուտքը, եթե այլ բան նախատեսված չէ այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքից արտահանվում են ապրանքները:

Եթե ապրանքներն արտահանվում են ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրի համաձայն, ըստ որի նախատեսվում է դրանց սեփականության իրավունքի փոխանցումը լիզինգառուին (վարձակալ), ապա հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հարկ վճարող-արտահանողի հաշվին ֆինանսական վարձակալության վճարի (ապրանքների նախնական արժեքի փոխհատուցման մասով (ֆինանսական վարձակալության ենթակա առարկաների)) փաստացի մուտքը հաստատող բանկային քաղվածք (քաղվածքի պատճեն), եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Արտաքին առևտրային ապրանքափոխանակման կարգով (բարտեր) գործառնություններ իրականացնելու, ապրանքային վարկի տրամադրման (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության) դեպքում հարկ վճարող-արտահանողը հարկային մարմին է ներկայացնում այն ապրանքների ներկրումը (աշխատանքների իրականացումը, ծառայությունների մատուցումը) հաստատող փաստաթղթեր, որոնք նա ստացել է (ձեռք է բերել) նշված գործառնություններով:

Սույն ենթակետում նշված փաստաթղթերը հարկային մարմին չեն ներկայացվում, եթե անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված չէ դրանք հարկային մարմին ներկայացնել այն ապրանքների մասով, որոնք անդամ պետության տարածքից արտահանվել են Միության սահմաններից դուրս.

3) ապրանքների ներսբերման և անուղղակի հարկերի վճարման մասին հայտարարությունը, որը կազմված է առանձին միջազգային միջգերատեսչական պայմանագրով նախատեսված ձևով, այն անդամ պետության հարկային մարմնի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները, անուղղակի հարկերի վճարման մասին նշումով (ազատման կամ հարկային պարտավորությունների կատարման այլ կարգի) (այսուհետ՝ հայտարարություն) (բնօրինակը կամ պատճենը թղթային կրիչով՝ ըստ անդամ պետությունների հարկային մարմինների հայեցողության) կամ հայտարարությունների ցանկը (թղթային կրիչով կամ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (էլեկտրոնային թվային) ստորագրությամբ):

Հարկ վճարողը հայտարարությունների ցանկում ներառում է վավերապայմաններ և տվյալներ այն հայտարարություններից, որոնց մասին տեղեկությունները հարկային մարմին է մուտքագրվել առանձին միջազգային միջգերատեսչական պայմանագրով նախատեսված ձևով:

Հայտարարությունների ցանկի ձևը, դրա լրացնելու կարգը և ձևաչափը սահմանվում են անդամ պետությունների հարկային մարմինների նորմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետությունների այլ նորմատիվ իրավական ակտերով:

Մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք արտահանվող ապրանքների իրացման և այդ մյուս անդամ պետության տարածքում ապրանքներն «ազատ մաքսային գոտու» կամ «ազատ պահեստի» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում առաջին անդամ պետության հարկային մարմին հայտարարություն ներկայացնելու փոխարեն ներկայացվում է մյուս անդամ պետության մաքսային մարմնի կողմից վավերացված մաքսային հայտարարագրի պատճենը՝ համաձայն որի այդպիսի ապրանքները ձևակերպվել են «ազատ մաքսային գոտու» կամ «ազատ պահեստի» մաքսային ընթացակարգերով.

4) տրանսպորտային (ապրանքաուղեկցող) և (կամ) այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են անդամ պետության օրենսդրությամբ և հաստատում են ապրանքների տեղափոխումը մի

անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք: Նշված փաստաթղթերը չեն ներկայացվում, եթե ապրանքների տեղափոխման որոշ ձևերի, այդ թվում՝ առանց տրանսպորտային միջոցների օգտագործման ապրանքների տեղափոխման համար այդ փաստաթղթերի ձևակերպումը նախատեսված չէ անդամ պետության օրենսդրությամբ.

5) ԱԱՀ-ի զրոյական տոկոսադրույք կիրառելու և (կամ) ակցիզների վճարից ազատվելու հիմնավորումը հաստատող մյուս փաստաթղթերը, որոնք նախատեսված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքից արտահանվել են ապրանքները:

Սույն կետով նախատեսված փաստաթղթերը՝ բացի հայտարարությունից (հայտարարությունների ցանկից), չեն ներկայացվում հարկային մարմին, եթե ԱԱՀ-ի զրոյական տոկոսադրույք կիրառելու և (կամ) ակցիզների վճարից ազատվելու հիմնավորումը հաստատող փաստաթղթերը չներկայացնելը՝ հարկային հայտարարագրի հետ միաժամանակ, նախատեսվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքից արտահանվել են ապրանքները:

Սույն կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում ակցիզների մասով համապատասխան հարկային հայտարարագրով, եթե դրանք ներկայացվել են ԱԱՀ-ի մասով հարկային հայտարարագրի հետ, և եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Սույն կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերով և 3-րդ ենթակետի չորրորդ պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ անդամ պետությունների հարկային մարմինների նորմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետությունների այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Նշված փաստաթղթերի ձևաչափը սահմանվում է անդամ պետությունների հարկային մարմինների կողմից կամ անդամ պետությունների այլ նորմատիվ իրավական ակտերով:

5. Սույն Արձանագրության 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են հարկային մարմին՝ ապրանքները բեռնաառաքելու (փոխանցելու) ամսաթվից 180 օրացուցային օրվա ընթացքում:

Սույն փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում անուղղակի հարկերի գումարները ենթակա են բյուջե վճարման հարկային (հաշվետու) այն ժամանակահատվածում, որը համընկնում է ապրանքների բեռնաառաքման ամսաթվին, կամ մեկ այլ հարկային (հաշվետու) ժամանակահատվածում, որը սահմանված է անդամ պետության օրենսդրությամբ՝ ԱԱՀ-ի համապատասխան գումարների նվազեցման (հաշվանցման) իրավունքով՝ համաձայն այն անդամ պետության օրենսդրության, որի տարածքից արտահանվել են ապրանքները:

Ապրանքների իրացման համար ԱԱՀ-ի հաշվարկման նպատակով բեռնաառաքման ամսաթիվ է համարվում կազմման ժամանակի առումով առաջին նախնական հաշվապահական (հաշվարկային) փաստաթղթի ամսաթիվը, որը ձևակերպված է ապրանքների գնորդի (առաջին փոխադրողի) անունով, կամ այլ պարտադիր փաստաթղթի քաղվածքի ամսաթիվը, որը անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված է ԱԱՀ վճարողի համար:

Սեփական հումքից ստացված ենթաակցիզային ապրանքների առումով՝ ակցիզների հաշվարկման նպատակով, ապրանքների բեռնաառաքման ամսաթիվ է համարվում կազմման ժամանակի առումով առաջին նախնական հաշվապահական (հաշվարկային) փաստաթղթի ամսաթիվը, որը ձևակերպված է ապրանքների գնորդի (ստացողի) անունով, պատվիրատուի կողմից տրված հումքից ստացված ենթաակցիզային ապրանքների առումով, բեռնաառաքման ամսաթիվ է համարվում ենթաակցիզային ապրանքների ընդունման-հանձնման ակտի ստորագրման ամսաթիվը, եթե այլ բան նախատեսված չէ այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում արտադրվել են ենթաակցիզային ապրանքները:

Անուղղակի հարկերի չվճարման, ոչ ամբողջությամբ վճարման, սույն կետով սահմանված ժամկետի խախտմամբ այդպիսի հարկերի վճարման դեպքում, հարկային մարմինը բռնագանձում է անուղղակի հարկեր և տույժեր այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով, որի տարածքից արտահանվել են ապրանքները, ինչպես նաև կիրառում է անուղղակի հարկերի, տույժերի վճարման պարտավորությունների կատարումն ապահովող եղանակներ և այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ:

Սույն Արձանագրության 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը հարկ վճարողի կողմից ներկայացնելու դեպքում սույն կետով հաստատված ժամկետը լրանալուն պես, անուղղակի հարկերի վճարված գումարները ենթակա են նվազեցման (հաշվանցման), վերադարձման՝ համաձայն այն անդամ պետության օրենսդրության, որի տարածքից արտահանվել են ապրանքները: Անուղղակի հարկերի վճարման ժամկետները խախտելու պատճառով վճարված տույժերի, տուգանքների գումարները վերադարձման ենթակա չեն:

6. Անդամ պետություններ արտահանվող ապրանքների ծավալը, ակցիզների դրույքաչափերը, որոնք գործում են ենթաակցիզային ապրանքների բեռնառաքման ամսաթվի դրությամբ, ինչպես նաև ակցիզների գումարները ենթակա են համապատասխան հարկային հայտարարագրում արտացոլման՝ ակցիզների մասով:

7. Հարկային մարմինը ստուգում է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու և (կամ) ակցիզների վճարից, նշված հարկերի գծով հարկային նվազեցումից (հաշվանցումից) ազատվելու հիմնավորվածությունը, ինչպես նաև համապատասխան որոշում է ընդունում (կայացնում) այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքից արտահանվել են ապրանքները:

Հարկային մարմին հայտարարությունը չներկայացնելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի ընդունելու (կայացնելու) այն ապրանքների իրացման գործառնությունների առնչությամբ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու և (կամ) ակցիզների վճարից, նշված հարկերի գծով հարկային նվազեցումից (հաշվանցումից) ազատվելու հիմնավորվածությունն ապացուցող որոշում, որոնք Մաքսային միության մի անդամ պետության տարածքից արտահանվել են Մաքսային միության մյուս անդամ պետության տարածք՝ Մաքսային միության մի անդամ պետության հարկային մարմնում Մաքսային միության մյուս անդամ պետության հարկային մարմնի կողմից տրված, ամբողջական ծավալով անուղղակի հարկերի վճարման (անուղղակի հարկերի վճարումից ազատման) փաստի էլեկտրոնային տարբերակով հաստատման առկայության դեպքում:

8. Եթե ապրանքների տեղափոխման և անուղղակի հարկերի վճարման մասին հարկ վճարողի ներկայացրած տեղեկությունները չեն համապատասխանում անդամ պետությունների հարկային մարմինների միջև հաստատված տեղեկությունների փոխանակման շրջանակներում ստացված տվյալներին, ապա հարկային մարմինը բռնագանձում է անուղղակի հարկեր ու տույժեր այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և չափով, որի տարածքից արտահանվել են ապրանքները, ինչպես նաև կիրառում է անուղղակի հարկերի, տույժերի վճարման պարտավորությունների կատարումն ապահովող եղանակներ և այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ:

9. Սույն բաժնի՝ ԱԱՀ-ին առնչվող դրույթները կիրառվում են նաև դրանց պատրաստման մասին պայմանագրերով աշխատանքների կատարման արդյունք հանդիսացող այն ապրանքների նկատմամբ, որոնք մյուս անդամ պետության տարածք արտահանվում են այն անդամ պետության տարածքից, որի տարածքում իրականացվել են դրանց պատրաստման աշխատանքները: Նշված ապրանքների շարքին չեն դասվում պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման աշխատանքների կատարման արդյունք հանդիսացող ապրանքները:

10. Պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման մասին պայմանագրով աշխատանքների կատարման արդյունք հանդիսացող ապրանքները ակցիզներով հարկելու համար հարկային բազան սահմանվում է որպես ծավալ, պատվիրատուի կողմից տրված հումքից ստացված ենթաակցիզային ապրանքների քանակ (այլ ցուցանիշներ)՝ բնաիրային արտահայտությամբ, որոնց նկատմամբ սահմանված են ակցիզների հաստատագրված (հատուկ) դրույքաչափեր, կամ որպես պատվիրատուի կողմից տրված հումքից ստացված ենթաակցիզային ապրանքների արժեք, որոնց նկատմամբ սահմանված են ակցիզների ադվալորային դրույքաչափեր:

11. Ապրանքների արտահանման դեպքում իրացված ապրանքների գնի ավելացման (նվազեցման) պատճառով կամ իրացված ապրանքների քանակի (ծավալի) նվազեցման պատճառով ոչ պատշաճ որակի և (կամ) կոմպլեկտայնության հետևանքով դրանք վերադարձնելու հետ կապված ԱԱՀ-ի գծով հարկային բազայի ավելացման (նվազեցման) փոփոխության դեպքում ԱԱՀ-ի գծով հարկային բազան ուղղվում է այն հարկային (հաշվետու) ժամանակահատվածում, երբ պայմանագրի մասնակիցները փոփոխել են արտահանված

ապրանքների գինը (համաձայնեցրել են վերադարձը), եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքների (ֆինանսական վարձակալության առարկաների) արտահանման դեպքում ֆինանսական վարձակալության պայմանագրով, որով նախատեսվում է դրանց սեփականության իրավունքի փոխանցումը լիզինգառուին՝ ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերով փոխառության) մասին պայմանագրի, ապրանքների պատրաստման մասին պայմանագրի համաձայն, կիրառվում է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ և (կամ) ակցիզների վճարումից ազատում (եթե այդպիսի գործառնությունը, Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն, ենթակա է ակցիզային հարկով հարկման)՝ սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված փաստաթղթերը հարկային մարմին ներկայացնելու դեպքում:

Որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքների (ֆինանսական վարձակալության առարկաներ) արտահանման դեպքում ֆինանսական վարձակալության պայմանագրով, որով նախատեսվում է դրանց սեփականության իրավունքի փոխանցումը լիզինգառուին, ԱԱՀ-ի գծով հարկային բազան որոշվում է այն ամսաթվով, որը ֆինանսական վարձակալության պայմանագրով նախատեսված է ֆինանսական վարձակալության յուրաքանչյուր վճարում կատարելու համար, ապրանքների (ֆինանսական վարձակալության առարկաների) նախնական արժեքի՝ ֆինանսական վարձակալության յուրաքանչյուր վճարմամբ ամրագրված մասի չափով:

Հարկային նվազեցումները (հաշվանցումները) կատարվում են անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով այն մասով, որն ամրագրված է ապրանքների՝ ֆինանսական վարձակալության յուրաքանչյուր վճարմամբ սահմանված (ֆինանսական վարձակալության առարկաների) արժեքով:

Մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքներ արտահանելու դեպքում՝ ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերով փոխառության) մասին պայմանագրի համաձայն, ԱԱՀ-ի գծով հարկային բազա է համարվում փոխանցվող (տրամադրվող) ապրանքների արժեքը, որը նախատեսված է պայմանագրով, պայմանագրում արժեքի բացակայության դեպքում՝ ապրանքն ուղեկցող փաստաթղթերում նշված արժեքը, պայմանագրում և ապրանքն ուղեկցող փաստաթղթերում արժեքի բացակայության դեպքում՝ հաշվառման մեջ արտացոլված ապրանքների արժեքը:

12. Անուղղակի հարկերի վճարման ամբողջականությունն ապահովելու համար կարող է կիրառվել անդամ պետության օրենսդրությունը, որով կարգավորվում են հարկման նպատակով գինը որոշելու սկզբունքները:

III. Ապրանքների ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգը

13. Որևէ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքների առումով անուղղակի հարկերի գանձումը (բացառությամբ սույն Արձանագրության 27-րդ կետով նշված դեպքի և (կամ) ներմուծվող ապրանքներն «ազատ մաքսային գոտի» կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքի), իրականացվում է այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները՝ ըստ ապրանքների սեփականատեր հանդիսացող հարկ վճարողի հաշվառման վայրի՝ ներառյալ այն հարկ վճարողները, որոնք կիրառում են հարկման հատուկ ռեժիմներ, այդ թվում՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 13.1-13.5 կետերով նախատեսված առանձնահատկությունները:

Սույն բաժնի նպատակներով՝ ապրանքների սեփականատեր է ճանաչվում այն անձը, որն օժտված է ապրանքների նկատմամբ իրավունքով, կամ որին ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը նախատեսվում է պայմանագրով:

13.1. Եթե ապրանքները ձեռք են բերվում մի անդամ պետության հարկ վճարողի և մյուս անդամ պետության հարկ վճարողի միջև կնքված պայմանագրի հիման վրա, ապա անուղղակի հարկերի վճարումն իրականացվում է այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները, այսինքն՝ ապրանքների սեփականատիրոջ կողմից, կամ, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ՝ կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից:

13.2. Եթե ապրանքները ձեռք են բերվում մի անդամ պետության հարկ վճարողի ու մյուս անդամ պետության հարկ վճարողի միջև կնքված պայմանագրի հիման վրա և, ընդ որում, ապրանքները ներմուծվում են երրորդ անդամ պետության տարածքից, անուղղակի հարկերը վճարվում են այն անդամ պետության հարկ վճարողի՝ ապրանքի սեփականատիրոջ կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները:

13.3. Եթե ապրանքներն իրացվում են մի անդամ պետության հարկ վճարողի կողմից մյուս անդամ պետության հարկ վճարողին կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի միջոցով և ներմուծվում են առաջին կամ երրորդ անդամ պետության տարածքից, ապա անուղղակի հարկերի վճարումն իրականացվում է այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները, այսինքն՝ ապրանքների սեփականատիրոջ կողմից, կամ, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ՝ կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից:

13.4. Այն դեպքում, եթե մի անդամ պետության հարկ վճարողը ձեռք է բերում նախկինում այդ անդամ պետության տարածք մյուս անդամ պետության հարկ վճարողի կողմից ներմուծված ապրանքներ, որոնց նկատմամբ անուղղակի հարկերը չեն վճարվել, ապա անուղղակի հարկերի վճարումն իրականացվում է այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները, այսինքն՝ ապրանքների սեփականատիրոջ կողմից, կամ, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ՝ կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից (այն դեպքում, եթե ապրանքներն իրացվում են մյուս անդամ պետության հարկ վճարողի կողմից կոմիսիոների, հավատարմատարի, գործակալի միջոցով):

Այն դեպքում, եթե մի անդամ պետության հարկ վճարողը մյուս անդամ պետության հարկ վճարողի հետ հանձնաժողովի պայմանագրով, հանձնարարականով կամ գործակալական պայմանագրով ձեռք է բերում նախկինում այդ անդամ պետության տարածք կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից (այդ անդամ պետության հարկ վճարողի կողմից) ներմուծված ապրանքներ, որոնց նկատմամբ անուղղակի հարկերը չեն վճարվել, ապա անուղղակի հարկերի վճարումն իրականացվում է այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք են ներմուծվել ապրանքները, այսինքն՝ ապրանքների սեփականատիրոջ կողմից, կամ, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ՝ կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից:

13.5. Եթե ապրանքները ձեռք են բերվում անդամ պետության հարկ վճարողի և Միության անդամ չհանդիսացող պետության հարկ վճարողի միջև կնքված պայմանագրի հիման վրա և, ընդ որում, ապրանքները ներմուծվում են մյուս անդամ պետության տարածքից, ապա անուղղակի հարկերը վճարվում են այն անդամ պետության հարկ վճարողի կողմից, որի տարածք ներմուծվել են ապրանքները՝ ապրանքների սեփականատիրոջ կողմից, կամ, եթե նախատեսվում է անդամ պետության օրենսդրությամբ՝ կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից (այն դեպքում, եթե ապրանքներն իրացվում են կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի միջոցով):

14. ԱԱՀ-ի վճարման նպատակով հարկման բազան որոշվում է ներմուծված ապրանքները հարկ վճարողի մոտ հաշվառման վերցնելու ամսաթվով (սակայն ոչ ուշ, քան այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետը, որի տարածք ներմուծվում են ապրանքները)՝ հիմք ընդունելով ձեռք բերված ապրանքների (այդ թվում՝ դրանց պատրաստման մասին պայմանագրով կատարված աշխատանքների արդյունք հանդիսացող ապրանքների) արժեքը, ինչպես նաև այն ապրանքների արժեքը, որոնք ստացվել են ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերով փոխառության) մասին պայմանագրով, այն ապրանքների արժեքը, որոնք պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներ են, և հիմք ընդունելով ենթաակցիզային ապրանքների մասով վճարման ենթակա ակցիզները:

Ձեռք բերված ապրանքների (այդ թվում՝ դրանց պատրաստման մասին պայմանագրով աշխատանքների կատարման արդյունք հանդիսացող ապրանքների) արժեք է գործարքի այն գինը, որը ենթակա է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համար մատակարարին վճարմանը՝ պայմանագրի պայմանների համաձայն:

Ըստ ապրանքափոխանակման (բարտեր) մասին պայմանագրի, ինչպես նաև ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերով փոխառության) մասին պայմանագրի՝ ստացված

ապրանքների արժեք է համարվում ապրանքների այն արժեքը, որը նախատեսված է պայմանագրով, պայմանագրում արժեքի բացակայության դեպքում՝ ապրանքն ուղեկցող փաստաթղթերում նշված արժեքը, պայմանագրում և ապրանքն ուղեկցող փաստաթղթերում արժեքի բացակայության դեպքում՝ հաշվառման մեջ արտացոլված ապրանքների արժեքը:

Հարկային բազան որոշելու նպատակով ապրանքների արժեքը (այդ թվում՝ ապրանքների պատրաստման մասին պայմանագրով աշխատանքների կատարման արդյունք հանդիսացող ապրանքների արժեքը), որն արտահայտված է արտարժույթով, փոխարկվում է ազգային արժույթի՝ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի այն ամսաթվով սահմանած փոխարժեքով, որով ապրանքն ընդունել են հաշվառման:

Պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ներմուծելու դեպքում հարկային բազան սահմանվում է որպես պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման աշխատանքների կատարման և ենթաակցիզային արտադրանքի վերամշակման վճարման ենթակա ակցիզների արժեք: Ընդ որում, պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման աշխատանքների՝ արտարժույթով արտահայտված արժեքը փոխարկվում է ազգային արժույթի՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները հաշվառման ընդունելու ամսաթվի դրությամբ գործող անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի փոխարժեքով:

15. Մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքների (ֆինանսական վարձակալության առարկաների) ներմուծման դեպքում հարկային բազան՝ ըստ ֆինանսական վարձակալության պայմանագրի, որով նախատեսվում է դրանց սեփականության իրավունքի փոխանցումը լիզինգառուին, որոշվում է ապրանքների (ֆինանսական վարձակալության առարկաների) արժեքի մի մասի չափով, որը նախատեսված է ֆինանսական վարձակալության պայմանագրով՝ դրա վճարման ամսաթվով (անկախ դրա փաստացի չափից և վճարումը կատարելու ամսաթվից): Արտարժույթով արտահայտված ֆինանսական վարձակալության վճարը փոխարկվում է ազգային արժույթի՝ անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի այն ամսաթվով սահմանած փոխարժեքով, որը համապատասխանում է հարկային բազան որոշելու պահին (ամսաթվին):

16. Ակցիզային հարկով հարկման համար հարկային բազա է համարվում ներմուծված ենթաակցիզային ապրանքների, այդ թվում՝ պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակումից հետո ստացվելիք արդյունք հանդիսացող ապրանքների, այդ թվում՝ բնաիրային արտահայտությամբ ապրանքների ծավալը, քանակը (այլ ցուցանիշներ), որոնց նկատմամբ սահմանված են ակցիզների հաստատագրված (յուրահատուկ) դրույքաչափեր, կամ ներմուծված ենթաակցիզային ապրանքների, այդ թվում՝ պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակումից հետո ստացվելիք արդյունք հանդիսացող ապրանքների արժեքը, որոնց նկատմամբ սահմանված են ակցիզների ադվալորային դրույքաչափեր:

Ակցիզները հաշվելու համար հարկային բազան սահմանվում է ներմուծված ենթաակցիզային ապրանքները, այդ թվում՝ պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակումից հետո ստացվելիք արդյունք հանդիսացող ապրանքները հարկ վճարողի կողմից հաշվառման վերցնելու ամսաթվով (սակայն ոչ ուշ, քան այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետը, որի տարածք ներմուծվել են ենթաակցիզային ապրանքները):

17. Անուղղակի հարկերի գումարները, որոնք ենթակա են վճարման՝ մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ներմուծված ապրանքների մասով, հաշվարկվում են հարկ վճարողի կողմից՝ ըստ հարկի դրույքաչափերի, որոնք սահմանված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածք ներմուծվել են ապրանքները:

18. Անուղղակի հարկերի վճարման ամբողջականությունն ապահովելու համար կարող է կիրառվել անդամ պետության օրենսդրությունը, որով կարգավորվում են հարկման նպատակով գինը որոշելու սկզբունքները:

19. Անուղղակի հարկերը՝ բացառությամբ դրոշմավորման ենթակա ենթաակցիզային ապրանքների ակցիզների, վճարվում են հետևյալ ամսվան հաջորդող ամսվա 20-րդ օրվանից ոչ ուշ՝

ներմուծված ապրանքները հաշվառման վերցնելու ամիս.

ֆինանսական վարձակալության պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի ամիս:

Դրոշմավորման ենթակա ենթաակցիզային ապրանքների մասով ակցիզների վճարումը կատարվում է անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

20. Հարկ վճարողը պարտավոր է հարկային մարմին ներկայացնել համապատասխան հարկային հայտարարագիր՝ ըստ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ձևի կամ ըստ այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից հաստատված ձևի, որի տարածք են ներմուծվել ապրանքները, այդ թվում՝ համաձայն ֆինանսական վարձակալության պայմանագրի՝ ոչ ուշ, քան ներմուծված ապրանքները հաշվառման վերցնելու ամսվան (ֆինանսական վարձակալության պայմանագրով նախատեսված վճարման ժամկետին) հաջորդող ամսվա 20-ը: Հարկային հայտարարագրի հետ միաժամանակ հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտարարությունը՝ թղթային կրիչով (չորս օրինակից) և էլեկտրոնային տարբերակով կամ էլեկտրոնային տարբերակով հայտարարությունը՝ հարկ վճարողի էլեկտրոնային (էլեկտրոնային թվային) ստորագրությամբ.

2) ներմուծված ապրանքների մասով անուղղակի հարկերի փաստացի վճարումը հաստատող բանկի քաղվածքը, կամ անուղղակի հարկերի մասով հարկային պարտավորությունների կատարումը հաստատող այլ փաստաթուղթ, եթե այդպես նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ: Հարկ վճարողի մոտ հաշվարկվածից ավելի վճարված (բռնագանձված) հարկերի գումարների, հավաքագրումների կամ անուղղակի հարկերի գումարների առկայության դեպքում, որոնք ենթակա են վերադարձման (հաշվանցման), ինչպես մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ներմուծման դեպքում, այնպես էլ անդամ պետության տարածքում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման դեպքում, հարկային մարմինը՝ համաձայն այն անդամ պետության օրենսդրության, որի տարածք ներմուծվել են ապրանքները, որոշում է ընդունում (կայացնում) դրանց հաշվանցման վերաբերյալ՝ ներմուծված ապրանքների մասով անուղղակի հարկերի վճարման հաշվին: Այս դեպքում բանկի քաղվածքը (դրա պատճենը), որով հաստատվում է ներմուծված ապրանքների մասով անուղղակի հարկերի փաստացի վճարումը, չի ներկայացվում: Սույն ենթակետում նշված փաստաթղթերը՝ համաձայն ֆինանսական վարձակալության պայմանագրի, ներկայացվում են ֆինանսական վարձակալության պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի սկսվելու պահին.

3) տրանսպորտային (ապրանքներն ուղեկցող) և (կամ) այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են անդամ պետության օրենսդրությամբ, և որոնցով հաստատվում է ապրանքների տեղափոխումը մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք: Նշված փաստաթղթերը չեն ներկայացվում, եթե ապրանքների տեղափոխման որոշ ձևերի, այդ թվում՝ առանց տրանսպորտային միջոցների օգտագործման ապրանքների տեղափոխման համար այդ փաստաթղթերի ձևակերպումը նախատեսված չէ անդամ պետության օրենսդրությամբ.

4) անդամ պետության օրենսդրության համաձայն՝ ապրանքների բեռնաառաքման ժամանակ ձևակերպած հաշիվ-ապրանքագրերն այն դեպքում, եթե դրանք ներկայացնելը (դուրս գրելը) նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ:

Եթե հաշիվ-ապրանքագիրը ներկայացնելը (դուրս գրելը) նախատեսված չէ անդամ պետության օրենսդրությամբ, կամ ապրանքները ձեռք են բերվում Միության անդամ չհանդիսացող պետության հարկ վճարողից, ապա հաշիվ-ապրանքագրի փոխարեն հարկային մարմին է ներկայացվում այլ փաստաթուղթ (փաստաթղթեր)՝ ներկայացված (դուրս գրված) ներմուծվող ապրանքների արժեքը հաստատող վաճառողի կողմից.

5) պայմանագրերը, որոնց հիման վրա ձեռք են բերվել մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ներմուծված ապրանքները, ապրանքների (ֆինանսական վարձակալության առարկաների) ֆինանսական վարձակալության դեպքում՝ ֆինանսական վարձակալության պայմանագրերը, ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության) դեպքում՝ ապրանքային վարկի պայմանագրերը (ապրանքային փոխառության, իրերի տեսքով փոխառության), ապրանքների պատրաստման մասին պայմանագրերը, պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման պայմանագրերը.

6) տեղեկատվական հաղորդագրությունը (սույն Արձանագրության 13.2-13.5 կետերում նշված դեպքերում)՝ ներկայացված որևէ անդամ պետության հարկ վճարողին մյուս անդամ

պետության հարկ վճարողի կողմից կամ Միության անդամ չհանդիսացող պետության հարկ վճարողի կողմից (ղեկավարի կողմից (անհատ ձեռնարկատիրոջ կողմից) ստորագրված և կազմակերպության կնիքով վավերացված), որն իրացնում է երրորդ անդամ պետություն տարածքից ներմուծված ապրանքները, երրորդ անդամ պետության հարկ վճարողի մասին հետևյալ տեղեկությունների և այդ երրորդ անդամ պետության հարկ վճարողի հետ կնքված ներմուծված ապրանքների ձեռքբերման պայմանագրի մասին՝

անձին որպես անդամ պետության հարկ վճարող նույնականացնող համարը,

անդամ պետության հարկ վճարողի (կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ) լրիվ անվանումը,

անդամ պետության հարկ վճարողի գտնվելու (բնակության) վայրը,

պայմանագրի համարն ու ամսաթիվը,

մասնագրի համարն ու ամսաթիվը:

Եթե անդամ պետության հարկ վճարողը, որից ձեռք են բերվում ապրանքները, իրացվող ապրանքների սեփականատեր չէ (կոմիսիոներ, հավատարմատար կամ գործակալ է), ապա սույն ենթակետի երկրորդից վեցերորդ պարբերություններում նշված տեղեկությունները նույնպես ներկայացվում են իրացվող ապրանքների սեփականատիրոջ համար:

Տեղեկատվական հաղորդագրությունն օտար լեզվով ներկայացնելու դեպքում ռուսերեն թարգմանության առկայությունը պարտադիր է:

Տեղեկատվական հաղորդագրությունը չի ներկայացվում այն դեպքում, եթե սույն կետով նախատեսված տեղեկությունները ներառված են սույն կետի 5-րդ ենթակետում նշված պայմանագրում.

7) հանձնաժողովի պայմանագրերը, հանձնարարականները կամ գործակալական պայմանագիրը (դրանց կնքման դեպքում).

8) պայմանագրերը, որոնց հիման վրա ձեռք են բերվել մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ներմուծված ապրանքները՝ ըստ հանձնաժողովի պայմանագրերի, հանձնարարականի կամ գործակալական պայմանագրի (սույն Արձանագրության 13.2-13.5 կետերով նախատեսված դեպքերում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անուղղակի հարկերը վճարվում են կոմիսիոների, հավատարմատարի կամ գործակալի կողմից):

Սույն կետի 2-8-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել պատճեններով՝ վավերացված անդամ պետության օրենսդրությամբ սահմանվող կարգով, կամ էլեկտրոնային տարբերակով՝ անդամ պետությունների հարկային մարմինների նորմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետությունների այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Նշված փաստաթղթերի ձևաչափը սահմանվում է անդամ պետությունների հարկային մարմինների նորմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետությունների այլ նորմատիվ իրավական ակտերով:

Ըստ ֆինանսական վարձակալության պայմանագրի՝ առաջին անգամ ԱԱՀ-ն վճարելիս հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում սույն կետի 1-8-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը: Հետագայում հարկ վճարողը հարկային հայտարարագրի հետ միաժամանակ հարկային մարմին է ներկայացնում սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը (դրանց պատճենները):

Սույն կետում նշված փաստաթղթերը՝ բացառությամբ հայտարարության և տեղեկատվական հաղորդագրության, հարկային մարմին չեն ներկայացվում, եթե դրանք չներկայացնելը՝ հարկային հայտարարագրի հետ միաժամանակ, նախատեսվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածք են ներմուծվել ապրանքները:

21. Ճշգրտված հայտարարությունը (նախկինում ներկայացվածի փոխարեն) ներկայացվում է կամ թղթային կրիչով (չորս օրինակից) և էլեկտրոնային տարբերակով, կամ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (էլեկտրոնային թվային) ստորագրությամբ: Ճշգրտված հայտարարության (նախկինում ներկայացվածի փոխարեն) հետ միաժամանակ ներկայացվում են սույն Արձանագրության 20-րդ կետի 2-8-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը, եթե դրանք նախկինում ներկայացված չեն եղել հարկային մարմին:

Եթե ճշգրտված հայտարարություն (նախկինում ներկայացվածի փոխարեն) ներկայացնելը չի հանգեցնում նախկինում ներկայացված հարկային հայտարարագրի մեջ փոփոխություններ

կատարելուն, ապա հարկ վճարողը չի ներկայացնում ճշգրտված (լրացուցիչ) հարկային հայտարարագիր, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: Այդպիսի ճշգրտված հայտարարություն ներկայացնելը չի հանգեցնում նախկինում նվազեցման ենթակա ԱԱՀ-ի գումարների վերականգնմանը, որոնք վճարվել են ապրանքների ներմուծման ժամանակ:

Ճշգրտված հայտարարությունը (նախկինում ներկայացվածի փոխարեն) չի ներկայացվում անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

22. Ներմուծված ապրանքների մասով անուղղակի հարկերը չվճարելու, մասամբ վճարելու, այդպիսի հարկերը սույն Արձանագրության 19-րդ կետով սահմանված ժամկետից ավելի ուշ վճարելու դեպքում, ինչպես նաև հարկային հայտարարագրերը չներկայացնելու, սույն Արձանագրության 20-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ դրանք ներկայացնելու փաստեր հայտնաբերելու դեպքում, կամ հարկային հայտարարագրերում նշված տվյալների և անդամ պետությունների հարկային մարմինների միջև տեղեկությունների փոխանակման շրջանակներում ստացված տվյալների միջև անհամապատասխանության դեպքերում, հարկային մարմինն անուղղակի հարկեր և տուժանքներ է գանձում այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգին և չափին համապատասխան, որի տարածք են ներմուծվել ապրանքները, ինչպես նաև կիրառում է պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ՝ ուղղված անուղղակի հարկերի, տույժերի վճարմանը և տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ:

23. Ներմուծված ապրանքները հաշվառման ընդունելու ամսվա մեջ վերադարձնելու դեպքում հարկային հայտարարագրի մեջ այդ ապրանքների ներմուծման գործառնությունների արտացոլում չի կատարվում այն դեպքում, եթե ապրանքների վերադարձն իրականացվել է ոչ պատշաճ որակի և (կամ) կոմպլեկտայնության պատճառով:

Ոչ պատշաճ որակի և (կամ) կոմպլեկտայնության պատճառով ապրանքների վերադարձը պետք է հաստատվի պայմանագրի մասնակիցների համաձայնեցված պահանջներով, ինչպես նաև այն փաստաթղթերով, որոնք համապատասխանում են այդպիսի ապրանքների հետ հետագա գործառնություններ կատարելուն: Այդպիսի փաստաթղթերի շարքին են դասվում ապրանքների ընդունման-հանձնման ակտերը (վերադարձրած ապրանքի տրանսպորտային փոխադրման բացակայության դեպքում), տրանսպորտային (ապրանքներն ուղեկցող) փաստաթղթերը (վերադարձրած ապրանքի տրանսպորտային փոխադրման դեպքում), ոչնչացման ակտերը կամ այլ փաստաթղթեր: Այդպիսի ապրանքները մասամբ վերադարձնելու դեպքում նշված փաստաթղթերը (դրանց պատճենները) ներկայացվում են հարկային մարմին այն փաստաթղթերի հետ միաժամանակ, որոնք նախատեսված են սույն Արձանագրության 20-րդ կետում:

Նշված պատճառով ներմուծված ապրանքները հաշվառման ընդունելու ամիսը լրանալիս այդպիսի ապրանքները վերադարձնելու դեպքում հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում համապատասխան ճշգրտված (լրացուցիչ) հարկային հայտարարագիրը և սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված փաստաթղթերը (դրանց պատճենները):

Սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ անդամ պետությունների հարկային մարմինների նորմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետությունների այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Նշված փաստաթղթերի ձևաչափը սահմանվում է անդամ պետությունների հարկային մարմինների կողմից կամ անդամ պետությունների այլ նորմատիվ իրավական ակտերով:

Ոչ պատշաճ որակի և (կամ) կոմպլեկտայնության պատճառով ապրանքները մասամբ վերադարձնելու դեպքում հարկային մարմին է ներկայացվում ճշգրտված հայտարարություն (նախկինում ներկայացվածի փոխարեն)՝ առանց ապրանքները մասամբ վերադարձնելու մասին տեղեկությունների արտացոլման: Նշված հայտարարությունը ներկայացվում է կամ թղթային կրիչով (չորս օրինակից) և էլեկտրոնային տարբերակով, կամ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (էլեկտրոնային թվային) ստորագրությամբ:

Ոչ պատշաճ որակի և (կամ)) կոմպլեկտայնության պատճառով այն ապրանքներն ամբողջությամբ վերադարձնելու դեպքում, որոնց մասին տեղեկություններն արտացոլված են եղել նախկինում ներկայացված հայտարարության մեջ, ճշգրտված հայտարարությունը (նախկինում ներկայացվածի փոխարեն) հարկային մարմին չի ներկայացվում: Հարկ վճարողը

հարկային մարմնին տեղեկացնում է նախկինում ներկայացված հայտարարության վավերապայմանների մասին, որոնց մեջ արտացոլվել էին ամբողջությամբ վերադարձված ապրանքների մասին տեղեկությունները, անդամ պետությունների հարկային մարմինների ներմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետությունների այլ ներմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:

Ոչ պատշաճ որակի և (կամ) կոմպլեկտայնության պատճառով ապրանքներն ամբողջությամբ կամ մասամբ վերադարձնելու դեպքում ԱԱՀ-ի գումարների վերականգնումը, որոնք վճարվել են այդ ապրանքները ներմուծելիս և ենթակա են նվազեցման, իրականացվում է հարկային այն ժամանակահատվածում, երբ կատարվել է ապրանքների վերադարձ, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

24. Ներմուծված ապրանքների արժեքի ավելացման դեպքում մինչև ապրանքները հարկ վճարողի կողմից հաշվառման վերցնելու ամիսը դրանց արժեքի ավելացման դեպքում, ԱԱՀ-ի վճարման նպատակով հարկային բազան ավելանում է ներմուծված ապրանքների փոփոխված և նախկին արժեքների միջև եղած տարբերության չափով: ԱԱՀ-ի վճարումը և հարկային հայտարարագիրը ներկայացնելը կատարվում են ոչ ուշ, քան այն ամսվան հաջորդող ամսվա 20-րդ օրը, երբ պայմանագրի մասնակիցները փոփոխել են ներմուծված ապրանքների գինը:

Ներմուծված ձեռք բերված ապրանքների փոփոխված և նախկին արժեքի միջև տարբերությունը արտացոլվում է հարկային հայտարարագրում, որի հետ միաժամանակ հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում՝

հայտարարություն՝ թղթային կրիչով (փոփոխված և նախկին արժեքի միջև տարբերության արտացոլմամբ) (չորս օրինակից) և էլեկտրոնային տարբերակով, կամ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (էլեկտրոնային թվային) ստորագրությամբ.

պայմանագիր կամ պայմանագրի մասնակիցների կողմից նախատեսված այլ փաստաթուղթ, որով հաստատվում է ներմուծված ապրանքի գնի ավելացումը, ուղղված հաշիվ-ապրանքագիր (այն դեպքում, երբ դա ներկայացնելը (դուրս գրելը) նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ): Նշված փաստաթղթերը կարող են ներկայացվել պատճեններով՝ վավերացված անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կամ էլեկտրոնային տարբերակով՝ անդամ պետությունների հարկային մարմինների ներմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետությունների այլ ներմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Նշված փաստաթղթերի ձևաչափը սահմանվում է անդամ պետությունների հարկային մարմինների ներմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետությունների այլ ներմատիվ իրավական ակտերով:

25. Այն ապրանքներն օգտագործելու դեպքում, որոնց ներմուծումը անդամ պետության տարածք՝ վերջինիս օրենսդրության համաձայն, իրականացվել է առանց անուղղակի հարկերի վճարման այնպիսի նպատակներով, որոնք տարբերվում են այն նպատակներից, որոնց առնչությամբ տրամադրվել է վճարից ազատում կամ վճարման այլ կարգ, ապա այդպիսի ապրանքների ներմուծումը ենթակա է սույն հոդվածով սահմանված կարգին համապատասխան անուղղակի հարկերով հարկման:

26. Անուղղակի հարկերի գումարները, որոնք վճարվել են (հաշվարկվել են)՝ մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքների մասով, ենթակա են նվազեցման (հաշվանցման) այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով, որի տարածք ներմուծվել են ապրանքները:

27. Ակցիզային դրոշմանիշերով (հսկիչ դրոշմապիտակներով, նշաններով) դրոշմավորման ենթակա ապրանքների ակցիզների գանձումն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմինների կողմից, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

IV. Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգը

28. Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձումն իրականացվում է այն անդամ պետությունում, որի տարածքը ճանաչվում է աշխատանքների իրականացման, ծառայությունների մատուցման վայր (բացի սույն Արձանագրության 31-րդ կետում նշված աշխատանքներից):

Հարկային բազան, անուղղակի հարկերի դրույքաչափերը, դրանց գանձման կարգը և հարկային արտոնությունները աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դեպքում սահմանվում են այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքը ճանաչվում է աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայր, եթե սույն բաժնով այլ բան սահմանված չէ:

29. Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայր է ճանաչվում անդամ պետության տարածքը, եթե՝

1) աշխատանքները, ծառայություններն անմիջականորեն կապված են անշարժ գույքի հետ, որը գտնվում է տվյալ անդամ պետության տարածքում:

Սույն ենթակետի դրույթները կիրառվում են նաև անշարժ գույքը վարձակալելու, վարձակալության կամ այլ հիմքերով օգտագործման տրամադրելու ծառայությունների նկատմամբ.

2) աշխատանքները, ծառայություններն անմիջականորեն կապված են շարժական գույքի, տրանսպորտային միջոցների հետ, որոնք գտնվում են տվյալ անդամ պետության տարածքում.

3) մշակույթի, արվեստի, ուսուցման (կրթության), ֆիզիկական կուլտուրայի, զբոսաշրջության, հանգստի և սպորտի ոլորտի ծառայությունները մատուցվել են տվյալ անդամ պետության տարածքում.

4) տվյալ անդամ պետության հարկ վճարողների կողմից ձեռք են բերվում՝

խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժինիրինգային, գովազդային, դիզայներական, մարքեթինգային ծառայություններ, տեղեկատվության մշակման ծառայություններ, ինչպես նաև գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ.

ԷՀՄ-ի և տվյալների բազաների ծրագրերի մշակման աշխատանքներ, ծառայություններ (հաշվիչ տեխնիկայի ծրագրային միջոցների և տեղեկատվական արտադրանքի), դրանց հարմարեցման ու ձևափոխման, այդպիսի ծրագրերի և տվյալների բազայի ուղեկցման ծառայություններ.

անձնակազմի տրամադրման ծառայություններ այն դեպքում, եթե անձնակազմն աշխատում է գնորդի գործունեության վայրում:

Սույն ենթակետի դրույթները կիրառվում են նաև՝

այն արտոնագրերի, լիցենզիաների, այլ փաստաթղթերի փոխանցման, ներկայացման, զիջման դեպքում, որոնցով հաստատվում են պետության կողմից պահպանվող արդյունաբերական սեփականության օբյեկտների, առևտրային նշանների, ապրանքային նշանների, ֆիրմային անվանումների, սպասարկման նշանների նկատմամբ իրավունքները, հեղինակային, հարակից իրավունքները կամ այլ նույնանման իրավունքներ,

շարժական գույքը վարձակալության, ֆինանսական վարձակալության և այլ հիմքերով օգտագործման տրամադրելու դեպքում՝ բացառությամբ տրանսպորտային միջոցները վարձակալության, ֆինանսական վարձակալության և այլ հիմքերով օգտագործման տրամադրելու դեպքերի,

այն անձի կողմից ծառայությունների մատուցման դեպքում, որը պայմանագրի հիմնական մասնակցի համար իր անունից կամ պայմանագրի հիմնական մասնակցի անունից ներգրավում է այլ անձի՝ սույն ենթակետով նախատեսված աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար.

5) աշխատանքները կատարվում են, ծառայությունները մատուցվում են այդ անդամ պետության հարկ վճարողի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ սույն կետի 1-4-րդ ենթակետերով:

Սույն ենթակետի դրույթները կիրառվում են նաև տրանսպորտային միջոցները վարձակալության, ֆինանսական վարձակալության և այլ հիմքերով օգտագործման տրամադրելու ծառայությունների ժամանակ:

30. Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը հաստատող փաստաթղթեր են համարվում՝

անդամ պետությունների հարկ վճարողների կողմից կնքված աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագիրը.

աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փաստը հաստատող փաստաթղթերը.

անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

31. Պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման աշխատանքների ժամանակ, որը մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք է ներմուծվել՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքը հետագայում այլ անդամ պետության տարածքից արտահանելով, ԱԱՀ-ի գանձման կարգը և դրա վճարման նկատմամբ հսկողության ապահովումն իրականացվում են սույն Արձանագրության II բաժնին համապատասխան, եթե սույն բաժնով այլ բան նախատեսված չէ: Ընդ որում, ԱԱՀ-ի գծով հարկային բազան սահմանվում է որպես պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակման աշխատանքների արժեք:

32. Սույն Արձանագրության 31-րդ կետում նշված աշխատանքների իրականացման ժամանակ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու հիմնավորվածությունը հաստատելու դեպքում հարկային հայտարարագրի հետ միաժամանակ հարկային մարմին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը (դրանց պատճենները)՝ թղթային կրիչով՝

1) անդամ պետությունների հարկ վճարողների միջև կնքված պայմանագիրը.

2) աշխատանքները կատարելու փաստը հաստատող փաստաթղթերը.

3) սույն Արձանագրության 31-րդ կետում նշված ապրանքների արտահանումը (ներմուծումը) հաստատող փաստաթղթերը.

4) հայտարարությունը (բնօրինակը կամ պատճենը թղթային կրիչով՝ անդամ պետությունների հարկային մարմինների հայեցողությամբ) կամ հայտարարությունների ցանկը (թղթային կրիչով կամ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (էլեկտրոնային թվային) ստորագրությամբ):

հայտարարությունների ցանկը ներկայացվում է սույն Արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով:

Պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները Միության սահմաններից արտահանելու դեպքում հայտարարությունը (հայտարարությունների ցանկը) չի ներկայացվում հարկային մարմին:

Պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք արտահանելու և այդ մյուս անդամ պետության տարածքում դրանք «ազատ մաքսային գոտի» կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում առաջին անդամ պետության հարկային մարմին հայտարարություն (հայտարարությունների ցանկ) ներկայացնելու փոխարեն ներկայացվում է մյուս անդամ պետության մաքսային մարմնի կողմից վավերացված մաքսային հայտարարագրի պատճենը, համաձայն որի այդպիսի ապրանքները ձևակերպվել են «ազատ մաքսային գոտի» կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով.

5) պատվիրատուի կողմից տրված հումքի վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների՝ Միության սահմաններից դուրս արտահանումը հաստատող մաքսային հայտարարագիրը.

6) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

Սույն կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ ենթակետերով և 4-րդ ենթակետի չորրորդ պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ անդամ պետությունների հարկային մարմինների նորմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետությունների այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով: Նշված փաստաթղթերի ձևաչափը սահմանվում է անդամ պետությունների հարկային մարմինների կողմից կամ անդամ պետությունների այլ նորմատիվ իրավական ակտերով:

Սույն կետով նախատեսված փաստաթղթերը՝ բացի հայտարարությունից (հայտարարությունների ցանկից), չեն ներկայացվում հարկային մարմին, եթե ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ կիրառելու հիմնավորվածությունը հաստատող փաստաթղթերը հարկային հայտարարագրի հետ միաժամանակ չներկայացնելը նախատեսվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում իրականացվում է վերամշակումը:

33. Այն դեպքում, եթե հարկ վճարողի կողմից կատարվում, մատուցվում են մի քանի տեսակի աշխատանքներ, ծառայություններ, որոնց հարկման կարգը կարգավորվում է սույն բաժնով, և մի տեսակի աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը մյուս տեսակի աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման նկատմամբ կրում է օժանդակ

բնույթ, ապա օժանդակ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայր է ճանաչվում հիմնական աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 19
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Մրցակցության ընդհանուր սկզբունքների և կանոնների մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) XVIII մասին համապատասխան և դրանով սահմանվում են Արձանագրությունը կիրառելու առանձնահատկությունները, երկու և ավելի անդամ պետությունների տարածքում անդրսահմանային շուկաներում (այսուհետ՝ անդրսահմանային շուկա) մրցակցության ընդհանուր կանոնների խախտման համար նշանակվող տուգանային պատասխանատվության միջոցները, Հանձնաժողովի կողմից անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը (ներառյալ անդամ պետությունների լիազոր մարմինների հետ համագործակցությունը), մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ժամանակ անդամ պետությունների լիազոր մարմինների միջև համագործակցության կարգը, ինչպես նաև գների պետական կարգավորում սահմանելու և այն սահմանելու մասին անդամ պետությունների որոշումները բողոքարկելու կարգը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացությունները, այդ թվում՝ Պայմանագրի XVIII բաժնի նպատակներով, ունեն հետևյալ իմաստը՝

1) ««ուղղահայաց» համաձայնություն»՝ համաձայնություն տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) միջև, որոնցից մեկը ձեռք է բերում ապրանքը կամ դրա հավանական ձեռքբերողն է, իսկ մյուսը մատակարարում է ապրանքը կամ դրա հավանական վաճառողն է.

2) «փոխադարձ փոխարինելի ապրանքներ»՝ ապրանքներ, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց գործառական (ֆունկցիոնալ) նշանակության, կիրառման, որակական և տեխնիկական բնութագրերի, գնային ու այլ հատկանիշների՝ այնպես, որ օգտագործման (այդ թվում՝ արտադրական նպատակներով օգտագործման) ընթացքում գնորդն իսկապես փոխարինում է կամ պատրաստ է փոխարինելու մեկ ապրանքը մյուսով.

3) «գների պետական կարգավորում»՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով անդամ պետությունների պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գների (սակագների), գների (սակագների) հավելումների, առավելագույն կամ նվազագույն գների (սակագների), գների (սակագների) առավելագույն կամ նվազագույն հավելումների սահմանումը.

4) «պետական կամ մունիցիպալ արտոնություններ»՝ անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, նշված մարմինների գործառույթներն իրականացնող այլ մարմինների կամ կազմակերպությունների կողմից առանձին տնտեսավարող սուբյեկտներին (շուկայում գործող սուբյեկտներին) տրամադրվող արտոնություն, որը նրանց համար ապահովում է գործունեության ավելի շահավետ պայմաններ՝ պետական կամ մունիցիպալ գույքը, քաղաքացիական իրավունքի այլ օբյեկտներ փոխանցելու կամ գույքային արտոնություններ, պետական կամ մունիցիպալ (համայնքային) երաշխիքներ տրամադրելու միջոցով.

5) «անձանց խումբ»՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց համախումբ, որոնք համապատասխանում են հետևյալ հատկանիշներից մեկին կամ մի քանիսին՝

տնտեսական ընկերություն (ընկերակցություն, տնտեսական գործընկերություն) և ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե նման ֆիզիկական կամ իրավաբանական անձը տվյալ տնտեսական ընկերությունում (ընկերակցությունում, տնտեսական գործընկերությունում)

իր մասնակցության կամ այլ անձանցից, այդ թվում՝ գրավոր համաձայնությամբ ստացած լիազորությունների հիման վրա, տնօրինում է տվյալ տնտեսական ընկերության (ընկերակցության, տնտեսավարող գործընկերության) կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի) ձայների ընդհանուր թվի ավելի քան 50 տոկոսը.

տնտեսավարող սուբյեկտ (շուկայում գործող սուբյեկտ) և ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե նման ֆիզիկական կամ իրավաբանական անձն իրականացնում է այդ տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) միանձնյա գործադիր մարմնի գործառույթները.

տնտեսավարող սուբյեկտ (շուկայում գործող սուբյեկտ) և ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե նման ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդ տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) հիմնադիր փաստաթղթերի կամ այդ տնտեսավարող սուբյեկտի հետ կնքված պայմանագրի (համաձայնության) հիման վրա իրավասու է այդ տնտեսավարող սուբյեկտին տալու կատարման համար պարտադիր ցուցումներ.

տնտեսավարող սուբյեկտներ (շուկայում գործող սուբյեկտներ), որոնցում կոլեգիալ գործադիր մարմնի և (կամ) տնօրենների խորհրդի (վերահսկիչ խորհրդի, հիմնադրամի խորհրդի) քանակական կազմի 50 տոկոսից ավելին կազմում են միևնույն ֆիզիկական անձինք.

ֆիզիկական անձ, նրա ամուսինը (կինը), ծնողները (այդ թվում՝ որդեգրողները), երեխաները (այդ թվում՝ որդեգրված երեխաները), եղբայրները և քույրերը.

անձինք, որոնցից յուրաքանչյուրը սույն կետի երկրորդից վեցերորդ պարբերություններով նշված հիմքերից մեկով նույն անձի հետ ընդգրկվում է մի խմբում, ինչպես նաև այլ անձինք, որոնք նման ցանկացած անձի հետ ընդգրկվում են մի խմբում՝ սույն կետի երկրորդից վեցերորդ պարբերություններով նախատեսված որևէ հիմքով.

տնտեսական ընկերություն (ընկերակցություն, տնտեսական գործընկերություն), ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք, որոնք սույն կետի երկրորդից յոթերորդ պարբերություններով նախատեսված որևէ հիմքով ընդգրկվում են անձանց մի խմբում, եթե նման անձինք այդ տնտեսական ընկերությունում (ընկերակցությունում, տնտեսական գործընկերությունում) իրենց համատեղ մասնակցության կամ այլ անձանցից ստացած լիազորությունների հիման վրա տնօրինում են այդ տնտեսական ընկերության (ընկերակցության) կանոնադրական (պահուստային) կապիտալում քվեարկվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) ձայների ընդհանուր թվի 50 տոկոսից ավելին:

Անձանց խումբը դիտարկվում է որպես մեկ տնտեսավարող սուբյեկտ (շուկայում գործող սուբյեկտ), և Պայմանագրի XVIII մասի ու սույն Արձանագրության՝ տնտեսավարող սուբյեկտներին (շուկայում գործող սուբյեկտներին) վերաբերող դրույթները տարածվում են անձանց խմբի վրա՝ բացառությամբ սույն Արձանագրությամբ նախատեսված դեպքերի:

Անդամ պետությունների օրենսդրությամբ, անդամ պետությունների տարածքում մրցակցային (հակամենաշնորհային) քաղաքականության իրականացման նպատակներով, «անձանց խումբ» հասկացության սահմանումը կարող է որոշակիացվել, այդ թվում՝ անձանցից մեկի կողմից մյուս անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում այդ անձի բաժնետոմսերի (բաժնեմասերի) տնօրինման (դրանցում մասնակցության) այն չափերի առումով, որոնց դեպքում նման տնօրինումը (մասնակցությունը) համարվում է տնօրինում անձանց խմբի կողմից.

6) «խտրական պայմաններ»՝ ապրանքային շուկայի հասանելիության պայմաններ, արտադրության, ապրանքների փոխանակման, սպառման, ձեռքբերման, վաճառքի, դրանք այլ կերպ փոխանցելու այնպիսի պայմաններ, որոնց դեպքում տնտեսավարող սուբյեկտը (շուկայում գործող սուբյեկտը) կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտներ (շուկայում գործող սուբյեկտներ) հայտնվում են անհավասար իրավիճակում՝ այլ տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի կամ սուբյեկտի) կամ սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտի կամ սուբյեկտների) համեմատ՝ հաշվի առնելով Պայմանագրով և (կամ) անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերով նախատեսված պայմանները, սահմանափակումները և առանձնահատկությունները.

7) «գերիշխող դիրք»՝ տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) (անձանց խմբի) կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների (անձանց խմբերի) դիրքը որևէ ապրանքի շուկայում, որը նման տնտեսավարող սուբյեկտին (շուկայում գործող սուբյեկտին) (անձանց խմբին) կամ նման տնտեսավարող սուբյեկտներին (շուկայում գործող սուբյեկտներին) (անձանց

խմբերին) հնարավորություն է տալիս համապատասխան ապրանքային շուկայում որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) այդ ապրանքային շուկայից դուրս մղելու այլ տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) և (կամ) խոչընդոտելու այդ ապրանքային շուկայի հասանելիությունն այլ տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) համար.

8) «մրցակցություն»՝ տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) մրցություն, որի արդյունքում նրանցից յուրաքանչյուրի ինքնուրույն գործողությունների շնորհիվ բացառվում կամ սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա նրանցից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները.

9) «գաղտնի տեղեկություններ»՝ տեղեկությունների այն բոլոր տեսակները, որոնք պաշտպանվում են անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրության համաձայն պետական գաղտնիք համարվող տեղեկությունների.

10) «տնտեսական գործունեության համակարգում»՝ տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) գործողությունների համաձայնեցում այնպիսի երրորդ անձի կողմից, որը նման տնտեսավարող սուբյեկտներից (շուկայում գործող սուբյեկտներից) ոչ մեկի հետ չի ընդգրկվում անձանց մի խմբում և գործունեություն չի իրականացնում այն ապրանքային շուկայում (ապրանքային շուկաներում), որում (որոնցում) իրականացվում է տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) գործողությունների համաձայնեցումը.

11) «անուղղակի վերահսկողություն»՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները սահմանելու հնարավորությունը՝ իրավաբանական անձի կամ մի քանի իրավաբանական անձանց միջոցով, որոնց միջև իրականացվում է ուղղակի վերահսկողություն.

12) «մենաշնորհային բարձր գին»՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից սահմանված գին, եթե այդ գինը գերազանցում է նման ապրանքի արտադրության և իրացման համար անհրաժեշտ ծախսերի ու եկամտի գումարը, ինչպես նաև այն գինը, որը ձևավորվել է այնպիսի ապրանքային շուկայում մրցակցության պայմաններում, որը համադրելի է՝ ըստ ապրանքի գնորդների կամ վաճառողների կազմի, ապրանքի շրջանառության պայմանների, ապրանքային շուկայի հասանելիության պայմանների, պետական կարգավորման, այդ թվում՝ հարկման ու մաքսասակագնային կարգավորման (այսուհետ՝ համադրելի ապրանքային շուկա)՝ Միության տարածքում կամ դրա սահմաններից դուրս նման շուկայի առկայության դեպքում: Բնական մենաշնորհի սուբյեկտի կողմից անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան նման ապրանքի համար սահմանված սակագնի սահմաններում նշանակված բարձր գինը չի կարող համարվել մենաշնորհային բարձր գին.

13) «մենաշնորհային ցածր գին»՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից սահմանված գին, եթե այդ գինը ցածր է նման ապրանքի արտադրության և իրացման համար փաստացի կամ անհրաժեշտ ծախսերի ու եկամտի գումարից և այն գնից, որը ձևավորվել է համադրելի ապրանքային շուկայում մրցակցության պայմաններում՝ Միության տարածքում կամ դրա սահմաններից դուրս նման շուկայի առկայության դեպքում.

14) «անբարեխիղճ մրցակցություն»՝ տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) (անձանց խմբի) կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) (անձանց խմբերի)՝ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ առավելությունների ձեռքբերմանն ուղղված ցանկացած գործողություն, որը հակասում է անդամ պետությունների օրենսդրությանը, գործարար շրջանառության սովորույթներին, բարեխղճության, խելամտության ու արդարության պահանջներին և վնաս է հասցրել կամ կարող է վնաս հասցնել այլ տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտներին), կամ վնաս է հասցրել կամ կարող է վնաս հասցնել նրանց գործարար համբավին.

15) «մրցակցության սահմանափակման նշաններ»՝ ապրանքային շուկայում անձանց մեկ խմբում չընդգրկվող տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) թվի կրճատումը, ապրանքի գնի աճը կամ նվազեցումը, որոնք կապված չեն ապրանքային շուկայում ապրանքի

շրջանառության այլ ընդհանուր պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, ինչպես նաև անձանց մեկ խմբում չընդգրկվող տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) կողմից ապրանքային շուկայում ինքնուրույն գործողություններից հրաժարվելը, տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) միջև համաձայնության հիման վրա կամ նրանց կողմից կատարման համար պարտադիր՝ այլ անձի տված ցուցումներին համապատասխան կամ անձանց մեկ խմբում չընդգրկվող տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից ապրանքային շուկայում իրենց գործողությունները համաձայնեցնելու արդյունքում ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների սահմանումը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք տնտեսավարող սուբյեկտին (շուկայում գործող սուբյեկտին) կամ մի քանի տնտեսավարող սուբյեկտներին (շուկայում գործող սուբյեկտներին) հնարավորություն են տալիս միակողմանի ազդելու ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա.

16) «ուղղակի վերահսկողություն»՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձի՝ իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումները հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի միջոցով սահմանելու հնարավորությունը՝

վերջինիս գործադիր մարմնի գործառույթների կատարում.

իրավաբանական անձի ձեռնարկատիրական գործունեության իրականացման պայմանները սահմանելու իրավունքի ձեռքբերում.

կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը կազմող բաժնետոմսերով (բաժնեմասերով) տրվող ձայների ընդհանուր թվի 50 տոկոսից ավելի ձայների տնօրինում.

17) «համաձայնություն»՝ գրավոր պայմանավորվածություն՝ ամրագրված փաստաթղթով կամ մի քանի փաստաթղթերով, ինչպես նաև բանավոր պայմանավորվածություն.

18) «ապրանք»՝ քաղաքացիական իրավունքի օբյեկտ (այդ թվում՝ աշխատանք, ծառայություն՝ ներառյալ ֆինանսական ծառայությունները), որը նախատեսված է վաճառքի, փոխանակման կամ այլ ձևով շրջանառության մեջ դնելու համար.

19) «ապրանքային շուկա»՝ այն ապրանքի շրջանառության ոլորտը, որը չի կարող փոխարինվել այլ ապրանքով, կամ փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտը, որի սահմաններում, (այդ թվում՝ աշխարհագրական), ելնելով տնտեսական, տեխնիկական կամ այլ հնարավորությունից կամ նպատակահարմարությունից, գնորդը կարող է ձեռք բերել ապրանք, և որի սահմաններից դուրս նման հնարավորությունը կամ նպատակահարմարությունը բացակայում է.

20) «տնտեսավարող սուբյեկտ (շուկայում գործող սուբյեկտ)»՝ առևտրային կազմակերպություն, ոչ առևտրային կազմակերպություն, որն իրականացնում է եկամուտ բերող գործունեություն, անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև ֆիզիկական անձ, որի մասնագիտական և եկամտաբեր գործունեությունը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ենթակա է պետական գրանցման և (կամ) լիցենզավորման.

21) «տնտեսական համակենտրոնացում»՝ գործարքներ, այլ գործողություններ, որոնց իրականացումն ազդեցություն ունի կամ կարող է ազդեցություն ունենալ մրցակցության վրա:

3. Տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) գերիշխող դիրքը որոշվում է՝ հիմնվելով հետևյալ հանգամանքների վերլուծության վրա՝

1) տնտեսավարող սուբյեկտի բաժնեմասը և դրա հարաբերակցությունը մրցակիցների ու գնորդների բաժնեմասերի նկատմամբ.

2) տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից ապրանքի գնի մակարդակը միակողմանի որոշելու և համապատասխան ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա որոշիչ ազդեցություն ունենալու հնարավորությունը.

3) ապրանքային շուկայի հասանելիության համար տնտեսական, տեխնոլոգիական, վարչական կամ այլ սահմանափակումների առկայությունը.

4) ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից որոշիչ ազդեցություն ունենալու հնարավորության առկայության ժամանակահատվածը:

4. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) գերիշխող դիրքը որոշելու այլ (լրացուցիչ) պայմաններ:

Անդրսահմանային շուկայում տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) գերիշխող դիրքը որոշվում է Հանձնաժողովի կողմից՝ անդրսահմանային շուկայում մրցակցային իրավիճակի գնահատման մեթոդաբանության համաձայն, որը հաստատվում է Հանձնաժողովի կողմից:

II. Համաձայնությունների և բացառումների թույլատրելիությունը

5. Պայմանագրի 76-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված համաձայնությունները, ինչպես նաև համատեղ գործունեության վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) այն համաձայնությունները, որոնք կարող են հանգեցնել Պայմանագրի 76-րդ հոդվածի 3-րդ կետում նշված հետևանքների, կարող են թույլատրելի ճանաչվել, եթե դրանցով տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) նկատմամբ չեն սահմանվում այնպիսի սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ չեն այդ համաձայնությունների նպատակներն իրականացնելու համար և չեն ստեղծում համապատասխան ապրանքային շուկայում մրցակցության վերացման հնարավորություն, և եթե տնտեսավարող սուբյեկտները (շուկայում գործող սուբյեկտները) ապացուցում են, որ նման համաձայնությունները նպաստում են կամ կարող են նպաստել՝

1) ապրանքների արտադրության (իրացման) կատարելագործմանը կամ տեխնիկական (տնտեսական) առաջընթացը խթանելուն կամ համաշխարհային ապրանքային շուկայում անդամ պետություններում արտադրված ապրանքների մրցունակության բարձրացմանը.

2) համապատասխան անձանց կողմից նման գործողությունների իրականացման արդյունքում ձեռք բերվող առավելությունների (օգուտների) համապատասխան մասի ստացումը սպառողների կողմից:

6. «Ուղղահայաց» համաձայնությունները թույլատրվում են, եթե՝

1) նման համաձայնություններն առևտրային կոնցեսիայի պայմանագրեր [համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագրեր] են.

2) նման համաձայնության մասնակից յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) բաժնեմասը «ուղղահայաց» համաձայնության առարկա հանդիսացող ապրանքային շուկայում չի գերազանցում 20 տոկոսը:

7. Պայմանագրի 76-րդ հոդվածի 3-6-րդ կետերի դրույթները չեն տարածվում անձանց մեկ խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) միջև կնքված համաձայնությունների վրա, եթե նման տնտեսավարող սուբյեկտներից (շուկայում գործող սուբյեկտներից) մեկն ուղղակի կամ անուղղակի վերահսկողություն է սահմանել տնտեսավարող մյուս սուբյեկտի նկատմամբ, ինչպես նաև եթե այդպիսի տնտեսավարող սուբյեկտները (շուկայում գործող սուբյեկտները) գտնվում են մեկ անձի ուղղակի կամ անուղղակի վերահսկողության տակ՝ բացառությամբ այնպիսի տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) միջև կնքված համաձայնությունների, որոնք իրականացնում են գործունեության այնպիսի տեսակներ, որոնց միաժամանակ իրականացումը մեկ տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից չի թույլատրվում անդամ պետությունների օրենսդրությամբ:

III. Մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը

8. Անդամ պետությունների տարածքում անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների), ինչպես նաև ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից Պայմանագրի 76-րդ հոդվածով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների խախտումը կանխելու համար պատասխանատու են անդամ պետությունների լիազոր մարմինները:

9. Անդամ պետությունների տարածքում անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների), ինչպես նաև անդամ պետությունների՝ տնտեսավարող սուբյեկտներ չհանդիսացող ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից Պայմանագրի 76-րդ հոդվածով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների խախտումը կանխելու համար պատասխանատու է Հանձնաժողովը, եթե

նման խախտումները բացասաբար են ազդում կամ կարող են բացասաբար ազդել անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա, բացառությամբ անդրսահմանային ֆինանսական շուկաներում մրցակցության վրա բացասաբար ազդող այն խախտումների, որոնց կանխումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

10. Հանձնաժողովը՝

1) ուսումնասիրում է Պայմանագրի 76-րդ հոդվածով սահմանված մրցակցության ընդհանուր կանոնների այնպիսի խախտման նշանների առկայության վերաբերյալ դիմումները (նյութերը), որոնք բացասաբար են ազդում կամ կարող են բացասաբար ազդել անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա, ինչպես նաև իրականացնում է անհրաժեշտ քննությունները.

2) անդամ պետությունների լիազոր մարմինների, անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների), անդամ պետությունների իշխանության մարմինների, ֆիզիկական անձանց պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ հարուցում և ուսումնասիրում է Պայմանագրի 76-րդ հոդվածով սահմանված մրցակցության կանոնների այնպիսի խախտման վերաբերյալ գործեր, որոնք բացասաբար են ազդում կամ կարող են բացասաբար ազդել երկու կամ ավելի անդամ պետությունների տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության վրա.

3) ընդունում է վճիռներ, անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար կատարման համար պարտադիր որոշումներ, այդ թվում՝ Պայմանագրի XVIII մասով և սույն Արձանագրությամբ նախատեսված դեպքերում անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) նկատմամբ տուգանային պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին, ինչպես նաև այնպիսի գործողություններ ձեռնարկելու մասին, որոնք ուղղված են մրցակցության ընդհանուր կանոնների խախտումը վերացնելուն, խախտման հետևանքները վերացնելուն և մրցակցություն ապահովելուն, ինչպես նաև որոշումներ այնպիսի գործողությունների անթույլատրելիության մասին, որոնք կարող են խոչընդոտել մրցակցության առաջացումը և (կամ) կարող են հանգեցնել անդրսահմանային շուկայում մրցակցության սահմանափակմանը, վերացմանը և մրցակցության ընդհանուր կանոնների խախտմանը՝ Պայմանագրի XVIII մասով և սույն Արձանագրությամբ նախատեսված դեպքերում.

4) պահանջում և ստանում է տեղեկություններ անդամ պետությունների պետական իշխանության մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց գործառույթներն իրականացնող այլ մարմիններից կամ կազմակերպություններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից, այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնները պահպանելու նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու համար.

5) ամեն տարի ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 1-ը Բարձրագույն խորհուրդ է ներկայացնում տարեկան հաշվետվություն՝ անդրսահմանային շուկաներում մրցակցային իրավիճակի և այն միջոցների վերաբերյալ, որոնք ձեռնարկվում են դրանցում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները կանխելու նպատակով, իսկ հաստատված հաշվետվությունը տեղադրում է Միության պաշտոնական համացանցային կայքէջում.

6) մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ ուսումնասիրված գործերով ընդունված որոշումները տեղադրում են Միության պաշտոնական համացանցային կայքէջում:

7) իրականացնում է այլ լիազորություններ, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի XVIII մասի և սույն Արձանագրության դրույթների կատարման համար:

11. Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումների (նյութերի) ուսումնասիրության կարգը, անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների քննության կարգը, ինչպես նաև անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործերի ուսումնասիրության կարգը հաստատվում են Հանձնաժողովի կողմից: Մրցակցային իրավիճակի վերլուծության արդյունքները, որը Հանձնաժողովն իրականացրել է մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործն ուսումնասիրելու նպատակով, պետք է ներառվեն գործի ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից ընդունվող որոշման մեջ՝ բացառությամբ գաղտնի տեղեկությունների:

Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով, որն անհրաժեշտ է Պայմանագրի XVIII մասի և սույն Արձանագրության դրույթները կատարելու համար, Հանձնաժողովը հաստատում է՝

մրցակցային իրավիճակի գնահատման մեթոդաբանությունը,

մենաշնորհային բարձր (ցածր) գները որոշելու մեթոդաբանությունը,

տուգանքների հաշվարկման մեթոդաբանությունը և նշանակման կարգը,

տնտեսության տարբեր ճյուղերում մրցակցության ընդհանուր կանոնները կիրառելու առանձնահատկությունները (անհրաժեշտության դեպքում),

Հանձնաժողովի և անդամ պետությունների լիազոր մարմինների համագործակցության կարգը (այդ թվում՝ տեղեկատվության ոլորտում):

12. Պայմանագրի 76-րդ հոդվածով սահմանված՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործերի քննությունը և նյութերի նախապատրաստումն ապահովելու նպատակով Հանձնաժողովում գործում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում (այսուհետ՝ Հանձնաժողովի լիազորված կառուցվածքային ստորաբաժանում):

13. Հանձնաժողովի լիազորված կառուցվածքային ստորաբաժանումն անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ դիմումներն (նյութերը) ուսումնասիրելիս, անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները քննելիս, անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործերն ուսումնասիրելիս պետական իշխանության մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, անդամ պետությունների՝ դրանց գործառույթներն իրականացնող այլ մարմիններից կամ կազմակերպություններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջում է դիմումը (նյութերը) ուսումնասիրելու, քննություն իրականացնելու, գործն ուսումնասիրելու համար անհրաժեշտ տեղեկությունները:

Տնտեսավարող սուբյեկտները (շուկայում գործող սուբյեկտները), ոչ առևտրային կազմակերպությունները, պետական իշխանության մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, անդամ պետությունների՝ դրանց գործառույթներն իրականացնող այլ մարմիններ կամ կազմակերպություններ պարտավոր են Հանձնաժողովին՝ նրա պահանջով սահմանված ժամկետներում տրամադրել այն տեղեկությունները, փաստաթղթերը, տվյալները, պարզաբանումները, որոնք անհրաժեշտ են Հանձնաժողովին՝ իր վրա դրված լիազորությունների հիման վրա:

14. Տուգանք նշանակելու մասին Հանձնաժողովի որոշումները, ինչպես նաև Հանձնաժողովի այն որոշումները, որոնք իրավախախտին պարտավորեցնում են կատարելու որոշակի գործողություններ, համարվում են կատարումն ապահովող փաստաթղթեր և ենթակա են կատարման այն անդամ պետությունների դատական ակտերի, այլ մարմինների և պաշտոնատար անձանց ակտերի հարկադիր կատարման մարմինների կողմից, որոնց տարածքում գրանցված է իրավախախտում կատարած տնտեսավարող սուբյեկտը (շուկայում գործող սուբյեկտը), տնտեսավարող սուբյեկտ (շուկայում գործող սուբյեկտ) չհամարվող ոչ առևտրային կազմակերպությունը, կամ որի տարածքում մշտապես կամ ժամանակավորապես բնակվում է իրավախախտում կատարած ֆիզիկական անձը:

Մրցակցության ոլորտում Հանձնաժողովի ակտերը, գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են Միության դատարանում՝ Միության դատարանի կանոնադրությամբ նախատեսված կարգով (Պայմանագրի 2-րդ հավելված)՝ հաշվի առնելով սույն Արձանագրության դրույթները:

Միության դատարանի կողմից անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործերի վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը բողոքարկելու մասին դիմումը վարույթ ընդունելու դեպքում Հանձնաժողովի որոշման գործողությունը դադարեցվում է մինչև Միության դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրը:

Միության դատարանը վարույթ է ընդունում անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործով Հանձնաժողովի որոշումը բողոքարկելու

մասին դիմումը՝ առանց դիմումատուի կողմից հարցը մինչդատական կարգով կարգավորելու նպատակով Հանձնաժողով դիմելու անհրաժեշտության:

15. Անդամ պետությունների լիազոր մարմինների ակտերը, գործողությունները (անգործությունը) վիճարկվում են անդամ պետությունների դատական մարմիններում՝ անդամ պետությունների գործող ընթացակարգային օրենսդրությանը համապատասխան:

IV. Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների համար Հանձնաժողովի կողմից նշանակվող տուգանային պատասխանատվության միջոցները

16. Հանձնաժողովը, իր կողմից հաստատվող տուգանքների հաշվարկման մեթոդաբանությանը և նշանակման կարգին համապատասխան, նշանակում է Պայմանագրի 76-րդ հոդվածով նախատեսված տուգանքներն անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների համար, ինչպես նաև Հանձնաժողովին նրա պահանջով տվյալներ (տեղեկություններ) չտրամադրելու կամ ոչ ժամանակին տրամադրելու համար կամ Հանձնաժողովին ակնհայտ անարժանահավատ տվյալներ (տեղեկություններ) տրամադրելու համար հետևյալ չափերով՝

1) անբարեխիղճ մրցակցությունը, որն անթույլատրելի է Պայմանագրի 76-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, հանգեցնում է պաշտոնատար անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ 20000 - 110000 ռուսական ռուբլու չափով տուգանքի, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ 100000 - 1000000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը.

2) տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից այնպիսի համաձայնություն կնքելը, որն անթույլատրելի է սույն Պայմանագրի 76-րդ հոդվածի 3-5-րդ կետերի համաձայն, ինչպես նաև դրանում մասնակցությունը հանգեցնում է պաշտոնատար անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ 20000-150000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից իրավախախտի ստացած հասույթի գումարի մեկ հարյուրերորդից մինչև տասնհինգ հարյուրերորդի չափով, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, կամ այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) ձեռքբերման համար իրավախախտի կրած ծախսերի գումարի մեկ հարյուրերորդից մինչև տասնհինգ հարյուրերորդի չափով, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, բայց ոչ ավելի, քան իրավախախտի՝ բոլոր ապրանքների իրացումից ստացած հասույթի ընդհանուր գումարի մեկ հիսուներորդի չափով, և ոչ պակաս, քան 100000 ռուսական ռուբլու չափով, իսկ այն դեպքում, երբ իրավախախտի՝ այն ապրանքի ձեռքբերման համար կրած ծախսերի ընդհանուր գումարը, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, գերազանցում է իրավախախտի՝ բոլոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի ընդհանուր գումարի 75 տոկոսը, ապա այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից իրավախախտի ստացած հասույթի գումարի երեք հազարերորդից մինչև երեք հարյուրերորդի չափով, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, կամ այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) ձեռքբերման համար իրավախախտի կրած ծախսերի գումարի երեք հազարերորդից մինչև երեք հարյուրերորդի չափով, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, բայց ոչ ավելի, քան իրավախախտի՝ բոլոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի ընդհանուր գումարի մեկ հիսուներորդի չափով և ոչ պակաս, քան 100000 ռուսական ռուբլու չափով.

3) տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) տնտեսական գործունեության համակարգումը, որն անթույլատրելի է Պայմանագրի 76-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, հանգեցնում է ֆիզիկական անձանց նկատմամբ 20000-ից մինչև 75000 ռուսական ռուբլու չափով, պաշտոնատար անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ 20000-ից մինչև 15000 ռուսական ռուբլու չափով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ 200000-ից մինչև 5000000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը.

4) ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) կողմից այնպիսի գործողություններ կատարելը, որոնք համարվում են գերիշխող դիրքի չարաշահում և անթույլատրելի են Պայմանագրի 76-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, հանգեցնում է պաշտոնատար անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ

20000-150000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից իրավախախտի ստացած հասույթի գումարի մեկ հարյուրերորդից մինչև տասնհինգ հարյուրերորդի չափով, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, կամ այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) ձեռքբերման համար իրավախախտի կրած ծախսերի գումարի մեկ հարյուրերորդից մինչև տասնհինգ հարյուրերորդի չափով, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, բայց ոչ ավելի, քան իրավախախտի՝ բոլոր ապրանքների իրացումից ստացած հասույթի ընդհանուր գումարի մեկ հիսուներորդի չափով, և ոչ պակաս, քան 100000 ռուսական ռուբլու չափով, իսկ այն դեպքում, երբ իրավախախտի՝ այն ապրանքի ձեռքբերման համար կրած ծախսերի ընդհանուր գումարը, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, գերազանցում է իրավախախտի՝ բոլոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի ընդհանուր գումարի 75 տոկոսը, ապա այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից իրավախախտի ստացած հասույթի գումարի երեք հազարերորդից մինչև երեք հարյուրերորդի չափով, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, կամ այն ապրանքի (աշխատանքի, ծառայության) ձեռքբերման համար իրավախախտի կրած ծախսերի գումարի երեք հազարերորդից մինչև երեք հարյուրերորդի չափով, որի շուկայում իրավախախտումը տեղի է ունեցել, բայց ոչ ավելի, քան իրավախախտի՝ բոլոր ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացած հասույթի ընդհանուր գումարի մեկ հիսուներորդի չափով և ոչ պակաս, քան 100000 ռուսական ռուբլու չափով:

5) Հանձնաժողով Պայմանագրի XVIII մասով և սույն Արձանագրությամբ նախատեսված տվյալներ (տեղեկություններ) չներկայացնելը կամ ոչ ժամանակին ներկայացնելը, այդ թվում՝ Հանձնաժողովի պահանջով տվյալներ (տեղեկություններ) չներկայացնելը, ինչպես նաև Հանձնաժողով ակնհայտ անարժանահավատ տվյալներ (տեղեկություններ) ներկայացնելը հանգեցնում է ֆիզիկական անձանց նկատմամբ՝ 10000-ից մինչև 15000 ռուսական ռուբլու չափով, պաշտոնատար անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ՝ 10000-ից մինչև 60000 ռուսական ռուբլու, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ՝ 150000-ից մինչև 1000000 ռուսական ռուբլու չափով տուգանքի նշանակմանը:

Սույն Արձանագրության իմաստով պաշտոնական անձ է համարվում կազմակերպչակարգադրական կամ վարչատնտեսական գործառույթներ իրականացնող ղեկավար և տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների), տնտեսավարող սուբյեկտներ (շուկայում գործող սուբյեկտներ) չհամարվող ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցը, կազմակերպությունների, տնտեսավարող սուբյեկտներ չհամարվող ոչ առևտրային կազմակերպությունների՝ տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) միանձնյա գործադիր մարմինների լիազորություններն իրականացնող ղեկավարները: Սույն Արձանագրության նպատակով՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության կանոնները խախտելու համար այն ֆիզիկական անձինք, որոնց եկամուտ բերող մասնագիտական գործունեությունը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ենթակա է գրանցման և (կամ) լիցենզավորման, պատասխանատվություն են կրում այն նույն ձևով, ինչպես պաշտոնատար անձինք:

17. Սույն Արձանագրության 16-րդ կետի 1-5-րդ ենթակետերով նախատեսված տուգանքները ենթակա են փոխանցման այն անդամ պետության բյուջե, որի տարածքում իրավախախտում կատարած անձը գրանցված է, կամ որի տարածքում մշտապես կամ ժամանակավորապես բնակվում է իրավախախտում կատարած ֆիզիկական անձը:

18. Սույն Արձանագրության 16-րդ կետով նախատեսված տուգանքները տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի), ֆիզիկական անձի կամ տնտեսավարող սուբյեկտ (շուկայում գործող սուբյեկտ) չհամարվող ոչ առևտրային կազմակերպության կողմից վճարվում են այն անդամ պետության ազգային արժույթով, որի տարածքում գրանցված է տնտեսավարող սուբյեկտը (շուկայում գործող սուբյեկտը), ոչ առևտրային կազմակերպությունը, մշտապես կամ ժամանակավորապես բնակվում է ֆիզիկական անձը, որոնք խախտել են սույն Արձանագրությամբ նախատեսված մրցակցության ընդհանուր կանոնները, Հանձնաժողովի կողմից տուգանք նշանակելու մասին որոշումն ընդունելու օրվա համար նշված անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

19. Այն անձը (անձանց խումբը), որը կամավոր հայտնել է Հանձնաժողովին Պայմանագրի 76-րդ հոդվածի համաձայն անթույլատրելի համարվող համաձայնությունը կնքելու մասին, ազատվում է պատասխանատվությունից սույն Արձանագրության 16-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված իրավախախտումների համար՝ հետևյալ պայմանները կատարելու դեպքում՝

անձի կողմից հայտարարությամբ հանդես գալու պահին Հանձնաժողովը չի ունեցել կատարված իրավախախտման մասին համապատասխան տվյալներ և փաստաթղթեր.

անձը հրաժարվել է Պայմանագրի 76-րդ հոդվածի համաձայն անթույլատրելի համարվող համաձայնությունում մասնակցությունից կամ հետագա մասնակցությունից.

ներկայացված տվյալները և փաստաթղթերը բավարար են իրավախախտումը կատարելու փաստը հաստատելու համար:

Պատասխանատվությունից ազատվում է այն անձը, որն առաջինն է կատարել սույն կետով նախատեսված բոլոր պայմանները:

20. Ուսումնասիրության ենթակա չէ այն դիմումը, որը ներկայացվել է միաժամանակ մի քանի այնպիսի անձանց անունից, որոնք կնքել են սույն Պայմանագրի 76-րդ հոդվածի համաձայն անթույլատրելի համարվող համաձայնությունը:

21. Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման համար տուգանքները, որոնք սահմանված են սույն մասում, կարող են փոփոխվել Գերագույն խորհրդի որոշմամբ՝ բացառությամբ այն տուգանքների, որոնք նշանակվում են իրավաբանական անձանց նկատմամբ և հաշվարկվում են ապրանքի (աշխատանքի, ծառայության) իրացումից իրավախախտի ստացած հասույթի գումարի կամ ապրանքի (աշխատանքի, ծառայության) ձեռքբերման համար իրավախախտի կրած ծախսերի գումարի հիման վրա:

V. Անդամ պետությունների լիազոր մարմինների միջև համագործակցությունը

22. Պայմանագրի XVIII մասի և սույն Արձանագրության իրականացման նպատակով անդամ պետությունների լիազոր մարմինների միջև համագործակցությունն իրականացվում է իրավակիրառ գործունեության շրջանակներում տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ ծանուցումներ, հարցումներ ուղարկելու, առանձին ընթացակարգային գործողություններ կատարելու վերաբերյալ հարցումներ ուղարկելու և հանձնարարականներ տալու, տեղեկություններ փոխանակելու, անդամ պետությունների իրավակիրառ գործունեությունը համակարգելու, ինչպես նաև անդամ պետություններից մեկի հարցման հիման վրա իրավակիրառ գործունեություն իրականացնելու միջոցով:

Նշված համագործակցությունն ապահովվում է անդամ պետությունների լիազոր մարմինների կենտրոնական ապարատի կողմից:

23. Անդամ պետությունների լիազոր մարմինը ծանուցում է մյուս անդամ պետության լիազոր մարմնին՝ այն դեպքում, երբ իրեն հայտնի է դառնում, որ իր իրավակիրառ գործունեությունը կարող է մրցակցության պաշտպանության բնագավառում ազդել մյուս անդամ պետության շահերի վրա:

24. Սույն Արձանագրության իմաստով իրավակիրառ գործունեությունը, որը կարող է մրցակցության պաշտպանության բնագավառում ազդել մյուս անդամ պետության շահերի վրա, նշանակում է անդամ պետությունների լիազոր մարմինների այն գործունեությունը, որը՝

1) կապված է մյուս անդամ պետության իրավակիրառ գործունեության հետ.

2) կապված է հակամրցակցային գործողությունների հետ (բացառությամբ միաձուլման և ձեռքբերման գործարքների և այլ գործողությունների կատարման), որոնք իրականացվում են նաև մյուս անդամ պետությունների տարածքում.

3) կապված է այն գործարքների հետ (այլ գործողությունների), որոնցում գործարքի կողմերից մեկը կամ գործարքի կողմերից մեկին կամ մի քանիսին վերահսկող կամ նրանց առևտրատնտեսական գործունեության իրականացման պայմաններն այլ կերպ որոշող անձը համարվում է մյուս անդամ պետության օրենսդրության համաձայն գրանցված կամ հիմնադրված անձ.

4) կապված է հարկադիր ներգործության միջոցների կիրառման հետ, որոնց համար պահանջում է իրականացնել կամ արգելվում է իրականացնել որևէ գործողություն մյուս անդամ

պետության տարածքում՝ մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության պահպանումն ապահովելու շրջանակներում:

25. Գործարքների (այլ գործողությունների) մասին ծանուցումներն ուղարկվում են՝

1) ոչ ուշ, քան ծանուցող անդամ պետության լիազոր մարմնի կողմից գործարքի ուսումնասիրության ժամկետը երկարաձգելու մասին որոշումն ընդունելու օրը.

2) այն դեպքերում, երբ գործարքի վերաբերյալ որոշումներն ընդունվում են առանց դրա ուսումնասիրության ժամկետը երկարաձգելու՝ ոչ ուշ, քան գործարքի վերաբերյալ որոշումն ընդունելու օրը՝ այնպիսի ողջամիտ ժամկետում, որը հնարավորություն կտա ծանուցվող անդամ պետությանն արտահայտելու իր կարծիքը գործարքի վերաբերյալ:

26. Մյուս անդամ պետության կարծիքը հաշվի առնելու հնարավորությունն ապահովելու նպատակով սույն Արձանագրության 24-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված հարցերով ծանուցումներն ուղարկվում են այդ անդամ պետությանը գործի ուսումնասիրության փուլում՝ այնպիսի հանգամանքների հայտնաբերման դեպքում, որոնց մասին անհրաժեշտ է ծանուցել մյուս անդամ պետությանը՝ այնպիսի ժամկետներում, որոնք հնարավորություն են տալիս ծանուցվող անդամ պետությանն արտահայտելու իր կարծիքը, սակայն, ամեն դեպքում՝ նախքան գործի վերաբերյալ որոշում ընդունելը կամ հաշտության համաձայնագիր կնքելը:

27. Ծանուցումն ուղարկվում է գրավոր և պետք է պարունակի այնպիսի տեղեկություններ, որոնք բավարար են՝ ծանուցվող անդամ պետությանը ծանուցող անդամ պետության իրավակիրառ գործունեության՝ ծանուցվող անդամ պետության շահերի վրա ազդող հետևանքների նախնական վերլուծություն անցկացնելու հնարավորություն տալու համար:

28. Անդամ պետությունների լիազոր մարմիններն իրավունք ունեն տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու համար ուղարկելու հարցումներ, ինչպես նաև տալու հանձնարարականներ առանձին ընթացակարգային գործողություններ կատարելու վերաբերյալ:

29. Տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցումը, առանձին ընթացակարգային գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարարականը ձևակերպվում են գրավոր՝ անդամ պետության լիազոր մարմնի ձևաթղթի վրա և պետք է ներառեն՝

1) համապատասխան գործի համարը (առկայության դեպքում), որի վերաբերյալ տեղեկություններ են պահանջվում, իրավախախտման և դրան առնչվող այլ փաստերի մանրամասն նկարագրությունը, արարքի իրավաբանական որակումը՝ հարցում ուղարկող անդամ պետության օրենսդրության համաձայն՝ կից ներկայացնելով կիրառվող օրենքի տեքստը.

2) այն անձանց անունները, հայրանունները և ազգանունները, որոնց նկատմամբ իրականացվում է համապատասխան գործերի ուսումնասիրությունը, վկաների անունները, հայրանունները և ազգանունները, նրանց բնակության կամ գտնվելու վայրը, քաղաքացիությունը, ծննդյան վայրն ու ամսաթիվը, իրավաբանական անձանց դեպքում՝ դրանց անվանումը և գտնվելու վայրը (նման տեղեկությունների առկայության դեպքում).

3) ստացողի ճշգրիտ հասցեն և հանձնվող փաստաթղթի անվանումը՝ փաստաթուղթը հանձնելու մասին հանձնարարականում.

4) ներկայացնելու ենթակա տվյալների և կատարման ենթակա գործողությունների ցանկը (հարցում անցկացնելու համար անհրաժեշտ է նշել այն հանգամանքները, որոնք պետք է պարզվեն և ճշգրտվեն, ինչպես նաև այն հարցերի հաջորդականությունն ու ձևակերպումը, որոնք պետք է տրվեն հարցվող անձին):

30. Տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցումը, ընթացակարգային առանձին գործողություններ կատարելու վերաբերյալ հանձնարարականը կարող են նաև ներառել՝

1) պահանջվող միջոցառումների իրականացման ժամկետը,

2) հարցման մեջ նշված միջոցառումները որոշակի հերթականությամբ իրականացնելու մասին միջնորդությունը,

3) հարցում ուղարկող անդամ պետության լիազոր մարմինների ներկայացուցիչներին հարցման մեջ նշված միջոցառումների իրականացմանը ներկա գտնվելու, ինչպես նաև դրանց իրականացմանը մասնակցելու հնարավորություն ընձեռելու մասին միջնորդությունը, եթե դա չի հակասում յուրաքանչյուր անդամ պետության օրենսդրության,

դ) հարցումը, հանձնարարականը կատարելու հետ կապված այլ միջնորդություններ:

31. Տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցումը, ընթացակարգային առանձին գործողություններ իրականացնելու վերաբերյալ հանձնարարականը ստորագրվում են անդամ պետության՝ հարցում ուղարկող լիազոր մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից: Հարցմանը կամ հանձնարարականին պետք է կցվեն այն փաստաթղթերի առկա պատճենները, որոնք կատարված են հղումներ ուղարկվող հարցման կամ հանձնարարականի տեքստում, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են հարցման, հանձնարարականի պատշաճ իրականացման համար:

32. Այն փորձաքննությունների և ընթացակարգային այլ գործողությունների իրականացման վերաբերյալ հանձնարարականները, որոնց կատարման համար կատարող անդամ պետությունից պահանջվում են լրացուցիչ ծախսեր, ներկայացվում են անդամ պետությունների լիազոր մարմինների միջև ձեռք բերված նախնական համաձայնությամբ:

33. Անդամ պետությունների լիազոր մարմինները կարող են ընթացակարգային փաստաթղթերը փոստով ուղարկել անմիջապես համապատասխան գործերի այն մասնակիցներին, որոնք գտնվում են մյուս անդամ պետության տարածքում:

34. Թույլատրվում է ուղարկել տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ կրկնակի հարցում, ինչպես նաև առանձին ընթացակարգային գործողություններ իրականացնելու վերաբերյալ կրկնակի հանձնարարական՝ լրացուցիչ տվյալներ ստանալու կամ նախորդ հարցումը, հանձնարարականը կատարելու շրջանակներում ստացված տեղեկությունները ճշտելու անհրաժեշտության դեպքում:

35. Տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցումը և առանձին ընթացակարգային գործողությունների իրականացման վերաբերյալ հանձնարարականը կատարվում են 1 ամսվա ընթացքում՝ սկսած դրանք ստանալու օրվանից, կամ անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից նախօրոք համաձայնեցված այլ ժամկետում:

Անդամ պետության այլ պետական մարմնի կամ հարցումն ստացող անդամ պետության տնտեսավարող սուբյեկտին (շուկայում գործող սուբյեկտ) դիմելու անհրաժեշտության դեպքում նշված ժամկետները երկարաձգվում են նման դիմումը կատարելու համար անհրաժեշտ ժամանակով:

36. Անդամ պետության՝ հարցումն ստացող լիազոր մարմինն իրականացնում է հարցման կամ հանձնարարականի մեջ նշված գործողությունները և պատասխանում է առաջադրված հարցերին: Անդամ պետության՝ հարցումն ստացող լիազոր մարմինն իրավասու է սեփական նախաձեռնությամբ իրականացնելու հարցմամբ կամ հանձնարարականով չնախատեսված այնպիսի գործողություններ, որոնք կապված են դրանց կատարման հետ:

37. Հարցումը, հանձնարարականը կատարելու անհնարինության դեպքում կամ դրանք սույն Արձանագրության 35-րդ կետով սահմանված ժամկետներում կատարելու անհնարինության դեպքում անդամ պետության լիազոր մարմինը տեղեկացնում է հարցումն ուղարկող անդամ պետության լիազոր մարմնին հարցման, հանձնարարականի կատարման անհնարինության մասին կամ կատարման համար առաջարկվող ժամկետների մասին:

38. Անդամ պետությունների լիազոր մարմիններն ուսումնասիրում են տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ ուղարկվող հարցումները, առանձին ընթացակարգային գործողությունների իրականացման վերաբերյալ հանձնարարականները կատարելու գործելակերպը և տեղեկացնում են միմյանց դրանց պատշաճ կատարման փաստերի մասին:

39. Այն փաստաթղթերը, որոնք կազմված կամ հաստատված են որևէ հաստատության կամ դրա համար հատուկ լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ նրանց իրավասությունների շրջանակներում, և որոնք անդամ պետություններից մեկի տարածքում վավերացված են զինանշանի պատկերով կնիքով, առանց որևէ հատուկ հաստատման ընդունվում են մյուս անդամ պետությունների տարածքում:

40. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավական օգնություն ցուցաբերելը կարող է մերժվել, եթե հարցումը կամ հանձնարարականը կատարելը կարող է վնաս հասցնել հարցումն ստացող անդամ պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ այլ շահերի կամ հակասում է դրա օրենսդրությանը:

41. Յուրաքանչյուր անդամ պետություն ինքնուրույն է կրում այն ծախսերը, որոնք առաջանում են հարցումներն ու հանձնարարականները կատարելու հետևանքով:

Առանձին դեպքերում անդամ պետությունների լիազոր մարմինները կարող են համաձայնության գալ ծախսերի կատարման այլ կարգի շուրջ:

42. Անդամ պետությունների լիազոր մարմիններն առանձին ընթացակարգային և այլ գործողություններ իրականացնելու վերաբերյալ հանձնարարականները կատարելիս՝

1) հարցաքննում են այն անձանց, որոնց առնչությամբ համապատասխան գործն ուսումնասիրվում է, ինչպես նաև վկաներին.

2) պահանջում են գործով վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը.

3) զննում են այն անձի տարածքները, շինությունները, փաստաթղթերը և իրերը, որի առնչությամբ է ստացվել հանձնարարականը (բացառությամբ այդ անձի բնակավայրի).

4) ձեռք են բերում գործով վարույթի իրականացման կամ դրա ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկություններ պետական մարմիններից և անձանցից,

5) համապատասխան գործի մասնակիցներին հանձնում են համապատասխան փաստաթղթերը և դրանց պատճենները.

6) իրականացնում են փորձաքննություն և այլ գործողություններ:

43. Համապատասխան գործերով ընթացակարգային և այլ գործողություններ իրականացվում են հարցումն ստացող անդամ պետության օրենսդրության համաձայն:

44. Այն դեպքում, երբ հարցումն ստացող անդամ պետության օրենսդրության համաձայն առանձին ընթացակարգային գործողությունների իրականացման համար լիազոր պաշտոնատար անձանցից պահանջվում է ընդունել հատուկ որոշումներ, ապա դրանք ընդունվում են՝ ըստ հանձնարարականի կատարման վայրի:

45. Անդամ պետությունների լիազոր մարմինների համաձայնությամբ հարցումն ստացող անդամ պետության տարածքում առանձին ընթացակարգային գործողությունները կարող են իրականացվել հարցումն ուղարկող անդամ պետության լիազոր մարմնի ներկայացուցիչների ներկայությամբ կամ նրանց մասնակցությամբ՝ հարցումն ստացող անդամ պետության օրենսդրության համաձայն:

46. Անդամ պետությունների լիազոր մարմինները, հաշվի առնելով իրենց օրենսդրության պահանջները, փոխանակում են տեղեկություններ՝

1) ապրանքային շուկաների իրավիճակի, տնտեսության կառուցվածքային վերակառուցման շրջանակներում ապամենաշնորհացման մոտեցումների և գործնական արդյունքների, մենաշնորհային գործունեության կանխարգելման, սահմանափակման ու կանխման և մրցակցությունը խթանելու մեթոդների ու աշխատանքային փորձի վերաբերյալ.

2) գերիշխող դիրք ունեցող և անդամ պետությունների ապրանքային շուկաներ արտադրանքի մատակարարում իրականացնող ձեռնարկությունների ազգային ռեեստրներում ընդգրկված տվյալների մասին.

3) անդամ պետությունների մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության խախտումների վերաբերյալ գործերի ուսումնասիրության մասին:

47. Անդամ պետությունների լիազոր մարմինները համագործակցում են մրցակցային (հակամենաշնորհային) քաղաքականության վերաբերյալ ազգային օրենքների և նորմատիվ փաստաթղթերի մշակման հարցում՝ տեղեկություններ և մեթոդական օգնություն տրամադրելու միջոցով:

48. Անդամ պետության լիազոր մարմինը մյուս անդամ պետության լիազոր մարմնին է տրամադրում հակամրցակցային գործողությունների վերաբերյալ իր տրամադրության տակ առկա ցանկացած տեղեկություն, եթե նման տեղեկությունը, հարցում ուղարկող անդամ պետության լիազոր մարմնի կարծիքով, կապված է մյուս անդամ պետության լիազոր մարմնի իրավակիրառ գործունեության հետ կամ կարող է հիմք ծառայել նման գործունեություն համար:

49. Անդամ պետության լիազոր մարմինն իրավունք ունի մյուս անդամ պետության լիազոր մարմնին ուղարկելու հարցում այն գործի հանգամանքները շարադրող համապատասխան տեղեկությունների տրամադրման վերաբերյալ, որի ուսումնասիրության համար պահանջվում են հարցվող տեղեկությունները:

Հարցումն ստացած անդամ պետության լիազոր մարմինը մյուս անդամ պետության՝ հարցումն ուղարկող լիազոր մարմնին տրամադրում է իր ունեցած տեղեկությունները, եթե

կարծում է, որ այդ տեղեկությունները կապ ունեն հարցում ուղարկող անդամ պետության իրավակիրառ գործունեության հետ կամ հիմք են ծառայում նման գործունեության համար:

Պահանջվող տեղեկություններն ուղարկվում են անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից համաձայնեցված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան հարցումն ստանալու օրվանից 60 օրացուցային օր հետո:

Ստացված տեղեկություններն օգտագործվում են միայն համապատասխան հարցման կամ խորհրդատվության նպատակներով և ենթակա չեն հրապարակման կամ փոխանցման երրորդ անձանց՝ առանց նշված տեղեկությունները փոխանցած անդամ պետության լիազոր մարմնի համաձայնության:

50. Եթե անդամ պետություններից մեկը համարում է, որ մյուս անդամ պետության տարածքում իրականացվող հակամրցակցային գործողությունները բացասաբար են անդրադառնում իր շահերի վրա, ապա այն կարող է դրա մասին ծանուցել այն անդամ պետությանը, որի տարածքում իրականացվում են հակամրցակցային գործողությունները, ինչպես նաև կարող է դիմել այդ անդամ պետությանը՝ համապատասխան հակամրցակցային գործողությունները կանխելու նպատակով պատշաճ իրավակիրառ գործողություններ իրականացնելու խնդրանքով: Նշված համագործակցությունն ապահովվում է անդամ պետությունների լիազոր մարմինների միջոցով:

Ծանուցումը պետք է պարունակի տեղեկություններ հակամրցակցային գործողությունների բնույթի և ծանուցող անդամ պետության շահերի համար դրանց հնարավոր հետևանքների մասին, ինչպես նաև լրացուցիչ տեղեկությունների տրամադրման և այլ տեսակի համագործակցության մասին առաջարկ, որը ծանուցող անդամ պետությունն իրավասու է առաջարկելու:

51. Սույն Արձանագրության 50-րդ կետի համաձայն ծանուցումն ստանալուց և անդամ պետությունների լիազոր մարմինների միջև բանակցություններ վարելուց հետո (եթե դրանց անցկացումն անհրաժեշտ է), ծանուցվող անդամ պետությունը լուծում է ծանուցման մեջ նշված հակամրցակցային գործողությունների նկատմամբ իրավակիրառ գործողություններ սկսելու կամ ավելի վաղ սկսված իրավակիրառ գործողություններն ընդլայնելու անհրաժեշտության հարցը: Ծանուցվող անդամ պետությունը տեղեկացնում է ծանուցող պետությանն ընդունված որոշման մասին: Ծանուցման մեջ նշված հակամրցակցային գործողությունների նկատմամբ իրավակիրառ գործողություններ իրականացնելիս ծանուցվող անդամ պետությունը տեղեկացնում է ծանուցող անդամ պետությանը համապատասխան իրավակիրառ գործողությունների արդյունքների մասին:

Իրավակիրառ գործողություններ նախաձեռնելու հարցը լուծելիս ծանուցող անդամ պետությունը ղեկավարվում է իր օրենսդրությամբ:

Սույն Արձանագրության 50-րդ և 51-րդ կետերի դրույթները չեն սահմանափակում ծանուցող անդամ պետության իրավունքը՝ կատարելու տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված իրավակիրառ գործողությունները:

52. Փոխկապակցված գործարքների (կատարվող գործողությունների) նկատմամբ իրավակիրառ գործողությունների իրականացման հարցում փոխադարձ շահագրգռվածության առկայության դեպքում անդամ պետությունների լիազոր մարմինները կարող են պայմանավորվել իրավակիրառ գործողություններ իրականացնելիս համագործակցելու շուրջ: Իրավակիրառ գործողություններն իրականացնելիս համագործակցելու հարցը որոշելիս անդամ պետությունների լիազոր մարմինները հաշվի են առնում հետևյալ գործոնները՝

1) իրավակիրառ գործունեությանն ուղղված նյութական և տեղեկատվական ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործելու և (կամ) իրավակիրառ գործունեություն իրականացնելու ընթացքում անդամ պետությունների կրած ծախքերը նվազեցնելու հնարավորությունը.

2) իրավակիրառ գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու առնչությամբ անդամ պետությունների ունեցած հնարավորությունները.

3) նման համագործակցության ենթադրվող արդյունքը՝ համագործակցող անդամ պետությունների՝ իրենց իրավակիրառ գործունեության նպատակներն իրականացնելու հնարավորությունների ընդլայնումը:

53. Մյուս անդամ պետությանը պատշաճ ծանուցելիս անդամ պետությունը կարող է սահմանափակել կամ դադարեցնել սույն Արձանագրության շրջանակներում

համագործակցությունը և իրականացնել իրավակիրառ գործողություններ մյուս անդամ պետությունից անկախ՝ իր օրենսդրությանը համապատասխան:

54. Անդամ պետություններն իրականացնում են համաձայնեցված մրցակցային քաղաքականություն երրորդ երկրների տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) գործողությունների նկատմամբ, եթե նման գործողությունները կարող են բացասաբար ազդել անդամ պետությունների ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի վրա՝ նման տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) նկատմամբ անդամ պետությունների նորմերը միևնույն ձևով կիրառելու միջոցով և հավասար պայմաններով՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և գրանցման վայրից, ինչպես նաև համագործակցելու դեպքում՝ սույն մասով սահմանված կարգով:

55. Սույն Արձանագրության 22-53-րդ հոդվածներով նախատեսված հարցերի շուրջ համագործակցության շրջանակներում տրամադրված տեղեկությունները և փաստաթղթերը գաղտնի են և կարող են օգտագործվել բացառապես սույն Արձանագրությամբ նախատեսված նպատակներով: Տեղեկությունների օգտագործումն ու երրորդ անձանց դրանց փոխանցումն այլ նպատակներով հնարավոր են միայն այն անդամ պետության լիազոր մարմնի գրավոր համաձայնությամբ, որը դրանք տրամադրել է:

56. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է տեղեկությունների, փաստաթղթերի և այլ տվյալների, այդ թվում՝ մյուս անդամ պետության լիազոր մարմնի կողմից ներկայացվող անձնական տվյալների պաշտպանությունը:

VI. Մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս Հանձնաժողովի և անդամ պետությունների լիազոր մարմինների համագործակցությունը

57. Հանձնաժողովը և անդամ պետությունների լիազոր մարմինները համագործակցում են՝ անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումները Հանձնաժողովի ուսումնասիրությանը ներկայացնելու, Հանձնաժողովի կողմից անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների քննության, Հանձնաժողովի կողմից անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործերի ուսումնասիրության հարցերի շուրջ, ինչպես նաև այլ դեպքերում:

Իրավակիրառ պրակտիկայի առավել արդիական հարցերի քննարկման, տեղեկությունների փոխանակման և անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման հարցերի շուրջ անդամ պետությունների լիազոր մարմինների փոխադարձ շահագրգռվածության դեպքում Հանձնաժողովն անդամ պետությունների լիազոր մարմինների հետ համատեղ խորհրդակցություններ է անցկացնում անդամ պետությունների լիազոր մարմինների ղեկավարների և Հանձնաժողովի՝ մրցակցության ու հակամենաշնորհային կարգավորման հարցերի համար պատասխանատու կոլեգիայի անդամի մակարդակով:

Հանձնաժողովը համագործակցում է անդամ պետությունների լիազոր մարմինների կենտրոնական ապարատների հետ:

58. Մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումները Հանձնաժողովի ուսումնասիրությանը ներկայացնելու մասին որոշումն ընդունվում է անդամ պետության լիազոր մարմնի կողմից՝ դրա ուսումնասիրության ցանկացած փուլում, որն իրականացվում է՝ հաշվի առնելով դիմումը ներկայացնող անդամ պետության օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները:

Նման որոշում ընդունելու դեպքում անդամ պետության լիազոր մարմինը համապատասխան գրավոր դիմում է ներկայացնում Հանձնաժողով:

Դիմումի մեջ նշվում են՝

դիմումը ներկայացնող մարմնի անվանումը.

այն տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) անվանումը, որի գործողությունները (անգործությունը) պարունակում են մրցակցության ընդհանուր կանոնների խախտման նշաններ.

մրցակցության ընդհանուր կանոնների խախտման նշաններ պարունակող գործողությունների (անգործության) նկարագրությունը.

այն ապրանքային շուկայի սահմանները, որում հայտնաբերվել են խախտման նշանները.

Պայմանագրի 76-րդ հոդվածի այն դրույթները, որոնք, անդամ պետության լիազոր մարմնի կարծիքով, խախտվել են:

Դիմումին կցվում են այն փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են մրցակցության ընդհանուր կանոնների խախտման նշանները և որոնք, անդամ պետության լիազոր մարմնի կարծիքով, անհրաժեշտ են Հանձնաժողովի կողմից դիմումն ուսումնասիրելու համար:

Անդամ պետության լիազոր մարմնի կողմից Հանձնաժողով դիմումը ներկայացնելը հիմք է համարվում անդամ պետության լիազոր մարմնի կողմից մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումի ուսումնասիրությունը դադարեցնելու համար՝ մինչև Հանձնաժողովի կողմից մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների քննություն իրականացնելու մասին կամ դիմումը (նյութերը) անդամ պետությունների լիազոր մարմինների քննարկմանը փոխանցելու մասին կամ դիմումը վերադարձնելու մասին որոշում ընդունելը:

Անդամ պետության լիազոր մարմինը ծանուցում է դիմումատուին դիմումը Հանձնաժողովին հանձնելու մասին՝ այն Հանձնաժողով ուղարկելու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում Հանձնաժողովը ծանուցում է անդամ պետությունների լիազոր մարմիններին և դիմումատուին նշված դիմումն ուսումնասիրության ընդունելու մասին:

59. Հանձնաժողովի կողմից անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների քննություն իրականացնելու մասին կամ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին դիմումը (նյութերը) անդամ պետությունների քննարկմանը լիազոր մարմիններին փոխանցելու մասին որոշում ընդունելը հիմք է համարվում անդամ պետության լիազոր մարմնի կողմից դիմումի ուսումնասիրությունը դադարեցնելու համար:

60. Հանձնաժողովի կողմից դիմումը (նյութերը) անդամ պետության լիազոր մարմնի ուսումնասիրությանը փոխանցելու մասին որոշումն ընդունվում է դրա ուսումնասիրության ցանկացած փուլում՝ այն դեպքում, երբ Հանձնաժողովը որոշում է, որ մրցակցության ընդհանուր կանոնների խախտման կանխումն անդամ պետության լիազոր մարմնի իրավասության շրջանակում է:

Նման որոշում ընդունելու դեպքում Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումը նախապատրաստում է համապատասխան դիմում՝ ուղղված անդամ պետության լիազոր մարմնին, որը ստորագրվում է Հանձնաժողովի՝ մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման համար պատասխանատու կոլեգիայի անդամի կողմից:

Դիմումի մեջ նշվում են՝

այն տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) անվանումը, որի գործողությունները (անգործությունը) պարունակում են մրցակցության ընդհանուր կանոնների խախտման նշաններ.

մրցակցության ընդհանուր կանոնների խախտման նշաններ պարունակող գործողությունների (անգործության) նկարագրությունը.

այն ապրանքային շուկայի սահմանները, որում հայտնաբերվել են խախտման նշանները:

Դիմումին կցվում են այն փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են մրցակցության ընդհանուր կանոնների խախտման նշանները և որոնք, Հանձնաժողովի կարծիքով, անհրաժեշտ են անդամ պետության լիազոր մարմնի կողմից դիմումն ուսումնասիրելու համար:

Հանձնաժողովը դիմումն ուղարկելու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է դիմումատուին անդամ պետության լիազոր մարմին այն փոխանցելու մասին:

61. Եթե հարցման արդյունքում ստացված տեղեկությունները բավարար չեն որոշում ընդունելու համար, մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների քննությունն իրականացնելիս և անդրսահմանային շուկաներում մրցակցության կանոնների խախտման

մասին գործերն ուսումնասիրելիս Հանձնաժողովն իրավունք ունի անդամ պետությունների լիազոր մարմիններին ուղարկելու հիմնավորված միջնորդություն՝ հետևյալ ընթացակարգային գործողություններն իրականացնելու վերաբերյալ՝

հարցաքննել այն անձանց, որոնց առնչությամբ իրականացվում է քննությունը, կամ որոնց առնչությամբ ուսումնասիրվում է գործը, ինչպես նաև վկաներին.

պահանջել քննության կամ գործով վարույթի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը.

զննել այն անձի տարածքները, շինությունները, փաստաթղթերը և առարկաները, որի նկատմամբ իրականացվում է քննությունը, կամ ուսումնասիրվում է մրցակցության ընդհանուր կանոնների խախտման մասին գործը (բացառությամբ նման անձի բնակավայրի).

հանձնել համապատասխան գործի մասնակիցներին փաստաթղթերը և դրանց պատճենները.

փորձաքննություն և այլ գործողություններ:

Այն ընթացակարգային գործողությունները, որոնք իրականացվում են այն անդամ պետության տարածքում, որտեղ գրանցված է այն անձը, որի նկատմամբ Հանձնաժողովի կողմից իրականացվում է քննությունը կամ ուսումնասիրվում է մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործը, իրականացվում են Հանձնաժողովի լիազորված կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցների, ինչպես նաև այն անդամ պետության լիազոր մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ, որի տարածքում իրավախախտումը կատարվել է և (կամ) առաջացել են մրցակցության համար բացասական հետևանքները:

Այն անդամ պետության տարածքում ընթացակարգային գործողությունների իրականացմանը, որտեղ տեղի է ունեցել իրավախախտումը և (կամ) առաջացել են մրցակցության համար բացասական հետևանքները, մասնակցում են Հանձնաժողովի լիազորված կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցները և այն անդամ պետության լիազոր մարմինը, որի տարածքում գրանցված է իրավախախտը:

Ընթացակարգային գործողությունների իրականացմանը Հանձնաժողովի լիազորված կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցների և (կամ) շահագրգիռ լիազոր մարմնի ներկայացուցչի ներկա գտնվելու անհնարինության դեպքում անդամ պետության լիազոր մարմինը, որն իրականացնում է Հանձնաժողովի հիմնավորված միջնորդությունը, իրավունք ունի իրականացնելու այդ ընթացակարգային գործողություններն ինքնուրույն՝ դրանց իրականացմանը ներկա գտնվելու անհնարինության մասին գրավոր ծանուցելու պայմանով՝ այդ գործողություններն իրականացնելուց ոչ պակաս, քան 5 աշխատանքային օր առաջ:

62. Առանձին ընթացակարգային գործողություններ իրականացնելու մասին հիմնավորված միջնորդությունը գրավոր է կազմվում և պարունակում է՝

1) համապատասխան գործի համարը (առկայության դեպքում), որի առնչությամբ տեղեկություններ են պահանջվում, իրավախախտման և դրան առնչվող այլ փաստերի մանրամասն նկարագրությունը, արարքի իրավաբանական որակումը՝ Պայմանագրի 76-րդ հոդվածի համաձայն.

2) այն անձանց անունները, հայրանունները և ազգանունները, որոնց առնչությամբ Հանձնաժողովի կողմից կատարվում է համապատասխան գործի ուսումնասիրությունը կամ իրականացվում է քննությունը, վկաների անունները, հայրանունները և ազգանունները, նրանց բնակության կամ գտնվելու վայրը, քաղաքացիությունը, ծննդյան վայրն ու ամսաթիվը, իրավաբանական անձանց դեպքում՝ դրանց անվանումն ու գտնվելու վայրը (նման տեղեկությունների առկայության դեպքում).

3) ստացողի ճշգրիտ հասցեն և հանձնվող փաստաթղթի անվանումը (փաստաթուղթը հանձնելու անհրաժեշտության դեպքում).

4) ներկայացնելու ենթակա տվյալների և կատարման ենթակա գործողությունների ցանկը (հարցաքննություն անցկացնելու համար անհրաժեշտ է նշել այն հանգամանքները, որոնք պետք է պարզվեն և ճշգրտվեն, ինչպես նաև այն հարցերի հաջորդականությունն ու ձևակերպումը, որոնք պետք է տրվեն հարցաքննվող անձին):

63. Առանձին ընթացակարգային գործողություններ իրականացնելու մասին հիմնավորված միջնորդությունը կարող է նաև պարունակել՝

1) պահանջվող միջոցների իրականացման ժամկետը.

2) ուղարկվող հարցման մեջ նշված միջոցները որոշակի հերթականությամբ իրականացնելու մասին միջնորդությունը.

3) Հանձնաժողովի լիազորված կառուցվածքային ստորաբաժանման այն աշխատակիցների անունները, հայրանունները և ազգանունները, որոնք ներկա են գտնվելու միջնորդությունում նշված գործողությունների իրականացմանը, ինչպես նաև մասնակցելու են դրանց իրականացմանը, եթե դա չի հակասում հարցումն ստացող անդամ պետության օրենսդրությանը.

4) այլ միջնորդություններ, որոնք կապված են միջնորդություն իրականացնելու հետ:

64. Առանձին ընթացակարգային գործողություններ իրականացնելու մասին հիմնավորված միջնորդությունը ստորագրվում է Հանձնաժողովի՝մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման համար պատասխանատու կոլեգիայի անդամի կողմից: Նշված հիմնավորված միջնորդությանը պետք է կցվեն այն փաստաթղթերի պատճենները, որոնց կատարված են հղումներ միջնորդության տեքստում, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են դրա պատշաճ կատարման համար:

65. Անդամ պետության լիազոր մարմինը, որը կատարում է Հանձնաժողովի հիմնավորված միջնորդությունը, իրականացնում է Հանձնաժողովի հիմնավորված միջնորդության մեջ նշված ընթացակարգային գործողությունները՝ տվյալ անդամ պետության օրենսդրության համաձայն և միայն այն անձանց նկատմամբ, որոնց գտնվելու վայրը կատարող անդամ պետության տարածքում է:

66. Փորձաքննություն և այլ ընթացակարգային գործողություններ իրականացնելու մասին հիմնավորված միջնորդությունը, որոնց իրականացման համար անդամ պետություններից պահանջվում են հավելյալ ծախսեր, իրականացվում են Հանձնաժողովի և այն անդամ պետության լիազոր մարմնի միջև ծախսերի փոխհատուցման հարցի շուրջ համաձայնությունից հետո, որին հասցեագրված է միջնորդությունը:

67. Առանձին ընթացակարգային գործողություններ իրականացնելու մասին հիմնավորված միջնորդությունը կատարվում է այն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում կամ այլ ժամկետում, որը նախապես համաձայնեցվում է Հանձնաժողովի և անդամ պետության լիազոր մարմնի կողմից, որին այն հասցեագրված է:

Անդամ պետության այլ պետական մարմնի կամ հարցումն ստացող անդամ պետության տնտեսավարող սուբյեկտին (շուկայում գործող սուբյեկտին) դիմելու անհրաժեշտության դեպքում նշված ժամկետներն երկարաձգվում են՝ նման դիմումն իրագործելու համար անհրաժեշտ ժամանակով:

68. Կատարող անդամ պետության լիազոր մարմինն իրականացնում է հիմնավորված միջնորդությունում նշված գործողությունները և պատասխանում է տրված հարցերին, և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ իրականացնելու միջնորդության մեջ չնշված այնպիսի գործողություններ, որոնք կապված են դրա կատարման հետ:

69. Հիմնավորված միջնորդությունը կատարելու անհնարինության դեպքում կամ սույն Արձանագրության 67-րդ կետով նախատեսված ժամկետում կատարելու անհնարինության դեպքում անդամ պետության լիազոր մարմինը տեղեկացնում է Հանձնաժողովին նշված միջնորդությունն իրականացնելու անհնարինության կամ դրա կատարման համար առաջարկվող ժամկետների մասին:

70. Առանձին ընթացակարգային գործողություններ իրականացնելու մասին հիմնավորված միջնորդությունը կարող է մասամբ կամ ամբողջությամբ մերժվել միայն այն դեպքերում, երբ դրա կատարումը կարող է վնաս հասցնել կատարող անդամ պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ հակասում է դրա օրենսդրությանը, ինչի մասին Հանձնաժողովը գրավոր ծանուցվում է անդամ պետության կողմից: Հանձնաժողովի կոլեգիան իրավասու է Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը ներկայացնելու անդամ պետության լիազոր մարմնի կողմից՝ հիմնավորված միջնորդության կատարումը մերժելու իրավաչափության հարցը:

71. Այն փաստաթղթերը, որոնք կազմված կամ հաստատված են որևէ հաստատության կամ դրա համար հատուկ լիազորված պաշտոնատար անձի կողմից նրանց իրավասությունների շրջանակներում, և որոնք այն անդամ պետության տարածքում, որին ուղղված է հիմնավորված միջնորդությունը, վավերացված են զինանշանի պատկերով կնիքով, ընդունվում են Հանձնաժողովի կողմից առանց որևէ հատուկ հաստատման:

72. Թույլատրվում է առանձին ընթացակարգային գործողություններ կատարելու վերաբերյալ հիմնավորված միջնորդության կրկնակի ուղարկումը՝ լրացուցիչ տվյալներ ստանալու կամ նախորդ միջնորդությունը կատարելու շրջանակներում ստացված տեղեկությունները ճշտելու անհրաժեշտության դեպքում:

73. Եթե առանձին ընթացակարգային գործողություններ իրականացնելու մասին հիմնավորված միջնորդությունը անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ մեկ գործի շրջանակներում ուղարկվում է անդամ պետությունների երկու կամ ավելի լիազոր մարմիններին, ապա Հանձնաժողովի լիազորված կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցները համակարգում են անդամ պետությունների լիազոր մարմինների համագործակցությունը Հանձնաժողովի հետ:

74. Մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները քննելիս և անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործերն ուսումնասիրելիս Հանձնաժողովն իրավունք ունի անդամ պետությունների լիազոր մարմիններին հարցումներ ուղարկելու տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրման վերաբերյալ:

75. Տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու մասին հարցումը կազմվում է գրավոր և պարունակում է՝

հարցման նպատակը.

համապատասխան գործի համարը (առկայության դեպքում), որի առնչությամբ տեղեկություններ են պահանջվում, իրավախախտման և դրան առնչվող այլ փաստերի մանրամասն նկարագրությունը, արարքի իրավաբանական որակումը՝ Պայմանագրի 76-րդ հոդվածի և սույն Արձանագրության համաձայն.

տվյալներ այն անձի մասին, որի առնչությամբ ուսումնասիրվում է համապատասխան գործը (նման տեղեկությունների դեպքում)՝

ֆիզիկական անձանց համար՝ ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը կամ գտնվելու վայրը, քաղաքացիությունը, ծնվելու վայրը և ամսաթիվը.

իրավաբանական անձանց համար՝ անվանումը և գտնվելու վայրը.

այն ժամկետը, որի ընթացքում տեղեկությունները պետք է տրամադրվեն, բայց ոչ պակաս, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած հարցումն ստանալու օրվանից.

այն տվյալների ցանկը, որոնք պետք է ներկայացվեն:

Հարցմանը պետք է կցվեն այն փաստաթղթերի պատճենները, որոնց կատարված են հղումներ հարցման տեքստում, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք հարցումը պատշաճ կատարելու համար անհրաժեշտ են:

76. Անդամ պետության լիազոր մարմինը հարցման մեջ նշված ժամկետում տրամադրում է իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունները:

77. Հարցումը կատարելու անհնարինության դեպքում (կամ եթե դրա կատարումը կարող է վնաս հասցնել անդամ պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ հակասում է դրա օրենսդրությանը), հարցում ստացող անդամ պետության լիազոր մարմինը տեղեկացնում է դրա մասին Հանձնաժողովին 10 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում՝ սկսած հարցումն ստանալու օրվանից՝ նշելով տեղեկությունները տրամադրելու անհնարինության պատճառի մասին, իսկ այն դեպքում, երբ տեղեկությունները չեն տրամադրվել Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում՝ նշելով այն ժամկետը, որում դրանք կտրամադրվեն:

78. Հանձնաժողովի կողմից մրցակցության ընդհանուր կանոնների խախտումների քննությունն իրականացնելիս և անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների խախտման վերաբերյալ գործերն ուսումնասիրելիս անդամ պետությունների իշխանության մարմիններին, անդամ պետության իրավաբանական և (կամ) իրավաբանական անձանց տեղեկությունների ու փաստաթղթերի տրամադրման մասին հարցում ուղարկելու դեպքում Հանձնաժողովը միևնույն ժամանակ այդ հարցման պատճենն ուղարկում է այն անդամ պետության լիազոր մարմնին, որի տարածքում հարցում ստացող իշխանության մարմինն իրականացնում է իր գործառույթները, գրանցված է հարցում ստացող իրավաբանական անձը, ժամանակավորապես կամ մշտապես բնակվում է հարցում ստացող ֆիզիկական անձը:

79. Լրացուցիչ տվյալներ ստանալու կամ նախորդ հարցումը կատարելու շրջանակներում ստացված տեղեկությունները ճշտելու անհրաժեշտության դեպքում անդամ պետության լիազոր

մարմին կարող է ուղարկվել տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ կրկնակի հարցում:

80. Հանձնաժողովին անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից տրամադրվող և գաղտնի տեղեկություններ պարունակող փաստաթղթերի հետ աշխատանքներն իրականացվում են՝ Միության շրջանակում միջազգային պայմանագրին համապատասխան:

VII. Անդամ պետությունների տարածքում ապրանքների և ծառայությունների գների պետական կարգավորման ներմուծումը

81. Անդամ պետությունների կողմից գների պետական կարգավորման ներմուծումն այն ապրանքային շուկաներում, որտեղ բնական մենաշնորհ հաստատված չէ, իրականացվում է այնպիսի բացառիկ դեպքերում, ինչպիսիք են, մասնավորապես, արտակարգ իրավիճակները, տարերային աղետները, ազգային անվտանգության նկատառումները՝ պայմանով, որ առաջացած խնդիրները հնարավոր չէ լուծել այնպիսի միջոցով, որն ավելի պակաս բացասական հետևանքներ կունենա մրցակցային իրավիճակի վրա:

82. Որպես ժամանակավոր միջոց՝ անդամ պետությունները սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների առանձին տեսակների նկատմամբ կարող են ներմուծել գների պետական կարգավորում առանձին տարածքներում, որոշակի ժամկետով՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Առանձին տարածքում սոցիալական նշանակություն ունեցող մեկ տեսակի ապրանքի նկատմամբ սույն կետով նախատեսված գների պետական կարգավորումը կիրառելու ընդհանուր ժամկետը մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել 90 օրացուցային օրը: Այդ ժամկետի երկարաձգումը կարող է իրականացվել Հանձնաժողովի հետ համաձայնեցմամբ:

83. Անդամ պետությունը սույն Արձանագրության 81-րդ և 82-րդ կետերով նախատեսված՝ գների պետական կարգավորումը ներմուծելու մասին ծանուցում է Հանձնաժողովին և մյուս անդամ պետություններին 7 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում՝ սկսած համապատասխան որոշումն ընդունելու օրվանից:

84. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում բոլոր ծառայությունների, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից տրամադրվող ծառայությունների գների պետական կարգավորման նկատմամբ, ինչպես նաև պետական գնումային և ապրանքային միջամտությունների ոլորտի նկատմամբ:

85. Սույն Արձանագրության 81-83-րդ կետերի դրույթները, բացի սույն Արձանագրության 84-րդ կետում թվարկված ծառայություններից, չի կիրառվում նաև հետևյալ ապրանքների գների պետական կարգավորման դեպքերի նկատմամբ՝

1) բնական գազ,

2) հեղուկացված գազ՝ կենցաղային կարիքների համար,

3) էլեկտրական և ջերմային էներգիա,

4) օղու, լիկյոր-օղու և այլ ալկոհոլային արտադրանք՝ 28 տոկոսից ավելի թնդություն ունեցող (նվազագույն գին),

5) էթիլային սպիրտ սննդի հումքից (նվազագույն գին),

6) կարծր վառելիք, վառարանային վառելիք,

7) միջուկային վառելիքային ցիկլի արտադրանք,

8) կերոսին՝ կենցաղային կարիքների համար,

9) նավթամթերքներ,

10) դեղամիջոցներ,

11) ծխախոտային արտադրատեսակներ:

86. Այն դեպքում, երբ անդամ պետություններից որևէ մեկը դիմում է ներկայացնում Հանձնաժողով մյուս անդամ պետության՝ սույն Արձանագրության 81-րդ և 82-րդ կետերով նախատեսված գների պետական կարգավորում ներմուծելու որոշման հետ անհամաձայնության վերաբերյալ, Հանձնաժողովն իրավունք ունի գների պետական կարգավորումը չեղյալ հայտարարելու անհրաժեշտության վերաբերյալ որոշում ընդունելու՝ սույն Արձանագրության 87-րդ կետով նախատեսված պատճառների առկայության դեպքում:

87. Գների պետական կարգավորումը չեղյալ հայտարարելու անհրաժեշտության վերաբերյալ որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից, եթե տվյալ կարգավորումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, այդ թվում՝

շուկայի հասանելիության համար արգելքների ստեղծմանը.

անձանց մեկ խմբում չընդգրկվող տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) թվի կրճատմանը նման շուկայում:

Ընդ որում, այն անդամ պետությունը, որը վիճարկում է մյուս անդամ պետության կողմից գների պետական կարգավորում ներմուծելու մասին որոշումը, պետք է ապացուցի, որ գների պետական կարգավորում ներմուծելու նպատակը հնարավոր է իրագործել այնպիսի այլ եղանակով, որն ավելի պակաս բացասական հետևանքներ կունենա մրցակցության վիճակի վրա:

Հանձնաժողովն որոշում է ընդունում գների պետական կարգավորման ներմուծումը չեղյալ հայտարարելու անհրաժեշտության առկայության կամ բացակայության վերաբերյալ՝ 2 ամիսը չգերազանցող ժամկետում՝ սկսած Հանձնաժողովի կողմից սույն Արձանագրության 86-րդ կետով նախատեսված դիմումն ստանալու օրվանից:

88. Հանձնաժողովն ուսումնասիրում է անդամ պետության՝ մյուս անդամ պետության կողմից գների պետական կարգավորում ներմուծելու մասին որոշումը վիճարկելու մասին դիմումը՝ իր կողմից սահմանված կարգով:

89. Գների պետական կարգավորումը չեղյալ հայտարարելու անհրաժեշտության մասին Հանձնաժողովի՝ սույն Արձանագրության 87-րդ կետի հիման վրա ընդունված որոշումն ոչ ուշ, քան որոշումն ընդունելու օրվան հաջորդող օրն ուղարկվում է անդամ պետության այն մարմնին, որն ընդունել է գների պետական կարգավորում ներմուծելու մասին որոշումը, և կատարվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որն ընդունել է գների պետական կարգավորում ներմուծելու մասին որոշումը:

Եթե անդամ պետությունը համաձայն չէ գների պետական կարգավորումը չեղյալ հայտարարելու անհրաժեշտության մասին Հանձնաժողովի որոշման հետ, ապա հարցը ներկայացնում է Գերագույն խորհրդի քննարկմանը: Այդ դեպքում Հանձնաժողովի որոշումը ենթակա չէ կատարման՝ մինչև Գերագույն խորհրդի կողմից դրա ուսումնասիրությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 20
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 78-րդ հոդվածի համաձայն և ուղղված է սույն Արձանագրության 1-ին հավելվածում նշված ոլորտներում անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և ընդհանուր կանոնների կիրառման համար իրավական հիմքեր ստեղծելուն:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«ներքին շուկա»՝ անդամ պետության շուկա, որում շրջանառվում են բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունները.

«բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիություն»՝ մեկ անդամ պետության բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից բնական մենաշնորհի ոլորտին առնչվող ծառայությունների մատուցում այլ անդամ պետության սպառողներին՝ առաջին անդամ պետության սպառողներին համանման ծառայություն տրամադրելու պայմաններից ոչ պակաս բարենպաստ պայմաններով՝. տեխնիկական հնարավորության առկայության դեպքում.

«բնական մենաշնորհ»՝ ծառայությունների շուկայի վիճակ, որի դեպքում ծառայությունների որոշակի տեսակի պահանջարկի բավարարման նպատակով մրցակցային պայմանների

ստեղծումն անհնար է կամ տնտեսապես նպատակահարմար չէ արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունների ու ծառայությունների տվյալ տեսակի մատուցման պատճառով.

«անդամ պետության օրենսդրություն»՝ բնական մենաշնորհի ոլորտին առնչվող՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի ազգային օրենսդրությունը.

«անդամ պետությունների ազգային մարմիններ»՝ անդամ պետության մարմիններ, որոնք իրականացնում են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորում և (կամ) հսկողություն.

«ծառայությունների մատուցում»՝ ծառայությունների տրամադրում, քաղաքացիական շրջանառության օբյեկտ հանդիսացող ապրանքների արտադրություն (իրացում).

«սպառող»՝ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ (ֆիզիկական կամ իրավաբանական անձ), որն օգտվում է կամ մտադիր է օգտվել բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայություններից.

«բնական մենաշնորհի սուբյեկտ»՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված բնական մենաշնորհի ոլորտներում ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտ.

«բնական մենաշնորհի ոլորտ»՝ օրենսդրությամբ բնական մենաշնորհ հանդիսացող շրջանառության ոլորտ, որտեղ սպառողը կարող է օգտվել բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններից:

II. Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընդհանուր սկզբունքները

3. Սույն Արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներում նշված բնական մենաշնորհի ոլորտներում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեությունը կարգավորելիս և (կամ) հսկելիս անդամ պետություններն առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով՝

1) անդամ պետությունների սպառողների ու բնական մենաշնորհի սուբյեկտների շահերի հավասարակշռության պահպանում, որն ապահովում է սպառողների համար մատուցվող ծառայությունների հասանելիությունը և դրանց որակի պատշաճ մակարդակը, բնական մենաշնորհի սուբյեկտների արդյունավետ գործունեությունն ու զարգացումը.

2) կարգավորման արդյունավետության բարձրացում՝ ուղղված բնական մենաշնորհի ոլորտների հետագա կրճատմանն այդ ոլորտներում մրցակցության զարգացման պայմանների ստեղծման հաշվին.

3) բնական մենաշնորհի սուբյեկտների ճկուն սակագնային (գնային) կարգավորման կիրառում՝ հաշվի առնելով ճյուղային առանձնահատկությունները, դրանց գործունեության մասշտաբները, շուկայական պայմանները, միջնաժամկետ (երկարաժամկետ) մակրոտնտեսական և ճյուղային կանխատեսումները, ինչպես նաև այդ սուբյեկտների սակագնային (գնային) կարգավորման միջոցները, այդ թվում՝ տարբերակված (դիֆերենցված) սակագնի սահմանման հնարավորության կիրառումը, որը չի կարող սահմանվել ըստ սպառողի (սպառողների խմբի)՝ անդամ պետություններից ցանկացածին պատկանելիության սկզբունքի.

4) կարգավորում սահմանելն այն դեպքերում, երբ համապատասխան ներքին շուկայի վերլուծության հիման վրա հաստատվում է, որ այդ շուկայում գործում է բնական մենաշնորհ.

5) ներքին շուկաների հասանելիության խոչընդոտների կրճատում, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիություն ապահովելու միջոցով.

6) բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընթացակարգերի կիրառում, որոնք ապահովում են ընդունվող որոշումների անկախությունը, հետևողականությունը, հրապարակայնությունը, օբյեկտիվությունն ու թափանցիկությունը.

7) բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից սպառողների հետ այն ծառայությունների տրամադրման վերաբերյալ պայմանագրերի կնքման պարտադիրություն, որոնց նկատմամբ, տեխնիկական հնարավորության առկայության դեպքում, կիրառվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված կարգավորում, եթե Պայմանագրի XX և XXI բաժինների դրույթներով այլ բան նախատեսված չէ.

8) բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության կանոնների պահպանման ապահովում.

9) կարգավորման ուղղվածությունը բնական մենաշնորհի կոնկրետ սուբյեկտին.

10) սահմանվող սակագների (գների) համապատասխանությունը բնական մենաշնորհի այն ոլորտներում մատուցվող ծառայությունների որակին, որոնց նկատմամբ կարգավորում է կիրառվում.

11) սպառողների շահերի պաշտպանություն, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից՝ կարգավորվող ծառայությունների սակագների (գների) կիրառման հետ կապված խախտումներից.

12) այնպիսի տնտեսական պայմանների ստեղծում, որոնց դեպքում բնական մենաշնորհի սուբյեկտների համար շահավետ է կրճատել ծախքերը, ներդնել նոր տեխնոլոգիաներ, բարձրացնել ներդրումների օգտագործման արդյունավետությունը:

III. Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման տեսակներն ու մեթոդները

4. Անդամ պետությունները կիրառում են անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման տեսակները (ձևերը, միջոցները, մեթոդները, գործիքները) սույն Արձանագրությամբ սահմանված բնական մենաշնորհի կարգավորման ընդհանուր սկզբունքների ու կանոնների հիման վրա:

5. Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորումն իրականացնելիս կիրառվում են կարգավորման հետևյալ տեսակները (ձևերը, մեթոդները, միջոցները, գործիքները)՝

1) սակագնային (գնային) կարգավորում.

2) սույն Համաձայնագրով սահմանված կարգավորման տեսակներ.

3) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգավորման այլ տեսակներ:

6. Բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագնային (գնային) կարգավորումը՝ ներառյալ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններում ընդգրկվելու (դրանց միանալու) արժեքի սահմանումը, կարող է իրականացվել հետևյալ կերպ՝

1) ազգային մարմնի կողմից բնական մենաշնորհի սուբյեկտների համար կարգավորվող ծառայությունների սակագների (գների), այդ թվում՝ ազգային մարմնի կողմից հաստատված մեթոդաբանության (բանաձևի) և դրա կիրառման կանոնների հիման վրա դրանց առավելագույն մակարդակների սահմանման (հաստատման), ինչպես նաև բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից սահմանված սակագների (գների) կիրառման նկատմամբ համապատասխան հսկողության միջոցով.

2) ազգային մարմնի կողմից մեթոդաբանության և դրա կիրառման կանոնների սահմանման (հաստատման) միջոցով, որոնց համաձայն, բնական մենաշնորհի սուբյեկտը սահմանում և կիրառում է սակագներ (գներ), ինչպես նաև բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից սակագների (գների) սահմանման ու կիրառման նկատմամբ ազգային մարմնի կողմից իրականացվող հսկողության միջոցով:

7. Սակագնային (գնային) կարգավորում իրականացնելիս անդամ պետությունների ազգային մարմիններն իրավունք ունեն կիրառելու նաև սակագնային (գնային) կարգավորման հետևյալ մեթոդները կամ դրանց համակցությունները՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝

1) տնտեսապես հիմնավորված ծախսերի մեթոդը.

2) ինդեքսավորման մեթոդը.

3) ներդրումային կապիտալի եկամտաբերության մեթոդը.

4) բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության արդյունավետության համեմատական վերլուծության մեթոդը:

8. Սակագները (գները) կարգավորելիս հաշվի են առնվում՝

1) բնական մենաշնորհի սուբյեկտներին կարգավորվող գործունեության իրականացման հետ կապված ծախսերի տնտեսապես հիմնավորված փոխհատուցումը,

2) տնտեսապես հիմնավորված շահույթի ստացումը,

3) բնական մենաշնորհի սուբյեկտներին ծախսերի կրճատման խրախուսումը,

4) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագների (գների) ձևավորումը՝ հաշվի առնելով մատուցվող ծառայությունների հուսալիությունն ու որակը:

9. Սակագները (գները) սահմանելիս կարող են հաշվի առնվել՝

1) անդամ պետությունների տարածքներում բնական մենաշնորհի գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ տեխնիկական պահանջների և կանոնակարգերի առանձնահատկությունները.

2) պետական լրավճարները և պետական օժանդակության այլ միջոցներ.

3) շուկայական պայմանները, այդ թվում՝ գների մակարդակը շուկայի չկարգավորվող հատվածներում.

4) տարածքների զարգացման ծրագրերը.

5) պետական հարկային, բյուջետային, ներդրումային, էկոլոգիական ու սոցիալական քաղաքականությունը.

6) էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներն ու էկոլոգիական հայեցակետերը:

10. Բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայությունների սակագները (գները) կարգավորելիս հաշվի է առնվում այն փաստը, որ բնական մենաշնորհի սուբյեկտի ծախսերի ձևավորման ժամանակ տեղի է ունենում ծախսերի, այդ թվում՝ ներդրումների, ինչպես նաև եկամուտների, գործողության մեջ դրված ակտիվների առանձին հաշվառում՝ ըստ բնական մենաշնորհի սուբյեկտների կարգավորվող ծառայությունների տեսակների:

11. Բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայությունների սակագների (գների) կարգավորումը կարող է իրականացվել կարգավորման երկարաժամկետ հարաչափերի հիման վրա, որոնց կարող են առնչվել կարգավորվող ծառայությունների հուսալիության ու որակի մակարդակը, համապատասխան ծառայությունների մատակարարման հետ կապված ծախսերի փոփոխման դինամիկան, եկամտաբերության նորման, ներդրումային կապիտալի վերադարձի ժամկետները և այլ հարաչափեր:

Բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայությունների սակագների (գների) կարգավորման նպատակով կարող են կիրառվել նաև կարգավորման երկարաժամկետ հարաչափեր, որոնք ստացվում են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության արդյունավետության համեմատական վերլուծության մեթոդի կիրառմամբ:

12. Սույն Արձանագրության 4-11-րդ կետերի կիրառման առանձնահատկությունները բնական մենաշնորհի որոշակի ոլորտներում կարող են սահմանվել Պայմանագրի XX և XXI բաժիններում:

IV. Բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիությունն ապահովելու կանոնները

13. Անդամ պետություններն իրենց օրենսդրություններում սահմանում են կարգավորման կանոններ, որոնցով կապահովվի բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին՝ սույն Արձանագրության 2-րդ կետով սահմանված հասանելիությունը:

Անդամ պետությունների ազգային մարմիններն ապահովում են բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին սպառողների հասանելիության կանոնների և դրանցում ընդգրկվելու (դրանց միանալու, դրանցից օգտվելու) պայմանների պահպանման նկատմամբ հսկողությունը:

14. Բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին սպառողների հասանելիության ապահովման կանոնները ներառում են՝

1) պայմանագրերի էական պայմանները, ինչպես նաև դրանց կնքման ու կատարման կարգը.

2) տեխնիկական հնարավորությունների առկայության սահմանման կարգը.

3) բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների, դրանց արժեքների, հասանելիության, իրացման հնարավոր ծավալների, այդպիսի ծառայությունների մատուցման տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը.

4) թափանցիկ տեղեկություններ ստանալու պայմանները, որոնց շնորհիվ հնարավոր է շահագրգիռ անձանց համար ապահովել բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների շրջանառության և (կամ) դրանց հասանելիության պայմանները համադրելու հնարավորություն.

5) առևտրային գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների ցանկը.

6) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության հարցերի առնչությամբ բողոքների, հայտերի և վեճերի կարգավորման կարգը:

15. Անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտներին թույլատրվում է կիրառել իրենց ծառայություններին անդամ պետությունների սպառողների հասանելիության տարբերակված պայմաններ (հաշվի առնելով Պայմանագրի XX և XXI բաժիններում սահմանված բնական մենաշնորհի յուրաքանչյուր առանձին ոլորտի առանձնահատկությունները), եթե այդպիսի պայմանները չեն կիրառվում ըստ ցանկացած անդամ պետությանը սպառողների պատկանելիության սկզբունքի՝ յուրաքանչյուր անդամ պետության օրենսդրությունը պահպանելու պայմանով:

16. Չհակասելով սույն Արձանագրության 15-րդ կետի դրույթներին՝ անդամ պետությունների օրենսդրություններում չպետք է լինեն այնպիսի նորմեր, որոնցով անդամ պետությունների սպառողների նկատմամբ սահմանվում են բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության տարբերակված պայմաններ՝ ելնելով սպառողների պատկանելիությունից անդամ պետություններից ցանկացածին:

17. Սույն Արձանագրության 13-16-րդ կետերի կիրառման առանձնահատկությունները բնական մենաշնորհի որոշակի ոլորտներում, այդ թվում՝ տարանցման հարցերը, սահմանվում են Պայմանագրի XX և XXI բաժիններում:

V. Անդամ պետությունների ազգային մարմինները

18. Անդամ պետություններում գործում են անդամ պետությունների ազգային մարմիններ, որոնք օժտված են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորում և (կամ) հսկողություն իրականացնելու լիազորություններով՝ անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

Անդամ պետությունների ազգային մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են անդամ պետությունների օրենսդրության, Պայմանագրի, ինչպես նաև անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերի համաձայն:

19. Անդամ պետությունների ազգային մարմինների գործառույթներն են՝

1) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագնային (գնային) կարգավորումը.

2) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության կարգավորումը, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններում ընդգրկվելու (դրանց միանալու) համար վճարներ (գներ, սակագներ, գանձումներ) սահմանելն անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.

3) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սպառողների շահերի պաշտպանությունը.

4) կարգավորվող սակագների (գների) սահմանման ու կիրառման, ինչպես նաև բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության հարցերին առնչվող բողոքների, հայտերի քննարկումը և վեճերի կարգավորումը.

5) բնական մենաշնորհի սուբյեկտների ներդրումային ծրագրերի քննարկումը, հաստատումը կամ համաձայնեցումը և դրանց իրականացման նկատմամբ հսկողությունը.

6) տեղեկությունները որպես առևտրային գաղտնիք դիտարկելու առնչությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների պահպանման ապահովումը բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից.

7) բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելը, այդ թվում՝ նաև ստուգումների այլ ձևեր (մոնիթորինգ, վերլուծություն, փորձաքննություն) անցկացնելով.

8) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

VI. Հանձնաժողովի իրավասությունները

20. Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) որոշում է կայացնում անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման վերաբերյալ, եթե անդամ պետությունը, Հանձնաժողովին համապատասխան կերպով դիմելուց հետո, մտադիր է բնական մենաշնորհի ոլորտին դասել բնական մենաշնորհի այլ ոլորտ, որը նշված չէ սույն Արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներում.

2) վերլուծում ու առաջարկում է բնական մենաշնորհի ոլորտներին առնչվող՝ ազգային մարմինների որոշումների համակարգման, մշակման և իրականացման եղանակներ.

3) անդամ պետություններում անցկացնում է բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման համակարգի և փորձի համեմատական վերլուծություն՝ ամենամյա համապատասխան զեկույցներ ու հաշվետվություններ պատրաստելով.

4) նպաստում է էկոլոգիական հայեցակետերի և էներգաարդյունավետության առնչությամբ բնական մենաշնորհի ոլորտներում կարգավորման ներդաշնակեցմանը.

5) Բարձրագույն խորհրդի քննարկմանն է ներկայացնում անդամ պետությունների ազգային մարմինների հետ համաձայնեցված, սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված՝ տարվող աշխատանքի արդյունքները, ինչպես նաև բնական մենաշնորհի ոլորտում անդամ պետությունների՝ մոտարկման ենթակա նորմատիվ իրավական ակտերի սահմանման առնչությամբ և տվյալ ոլորտում օրենսդրության ներդաշնակեցման համապատասխան միջոցների իրականացման հաջորդականության սահմանման առնչությամբ անդամ պետությունների հետ համաձայնեցված առաջարկությունները.

6) հսկողություն է իրականացնում Պայմանագրի XIX բաժնի կիրառման նկատմամբ:

Հավելված 1
«Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» արձանագրության

Անդամ պետությունների բնական մենաշնորհի ոլորտները

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն	Հայաստանի Հանրապետություն
1.	Նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրում մայրուղային խողովակաշարերով	Նավթի և (կամ) նավթամթերքների՝ մայրուղային խողովակաշարերով տրանսպորտային փոխադրման ծառայություններ	Նավթի և նավթամթերքների տրանսպորտային փոխադրումը մայրուղային խողովակաշարերով	-
2.	էլեկտրական էներգիայի հաղորդում և բաշխում	էլեկտրական էներգիայի հաղորդման և (կամ) բաշխման ծառայություններ	էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայություններ	էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայություններ
3.		էլեկտրական էներգիայի ցանց բացթողման և սպառման տեխնիկական կարգավարացման (դիսպետչերացման) ծառայություններ, էլեկտրական էներգիայի արտադրության և սպառման միջև հավասարակշռության ապահովման	էլեկտրական էներգետիկայի ոլորտում օպերատիվ-կարգավարացման (դիսպետչերացման) կառավարման ծառայություններ	էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություններ

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն	Հայաստանի Հանրապետություն
		ծառայություններ, բեռնվածքը կրելու էլեկտրական հզորության պատրաստականության ապահովման ծառայություններ (2016 թվականի հունվարի 1-ից)		
4.	Ընդհանուր օգտագործման տրանսպորտի շարժ, գնացքների շարժի կառավարում, երկաթուղային փոխադրումներն ապահովող երկաթուղային տրանսպորտի հաղորդակցությունների կողմից մատուցվող ծառայություններ	Մայրուղային երկաթուղային ցանցերի ծառայություններ	Երկաթուղային փոխադրումներ	Երկաթուղու ենթակառուցվածքի օգտագործումն ապահովող ծառայություններ

(հավելվածը լրաց. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

Հավելված 2
«Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» արձանագրության

Անդամ պետությունների բնական մենաշնորհի ոլորտները

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն	Հայաստանի Հանրապետություն
1.	Գազի փոխադրումը մայրուղային և բաշխման խողովակաշարերով	Միացնող մայրուղային գազատարներով և (կամ) գազաբաշխման համակարգերով ապրանքային գազի պահպանման, փոխադրման, խմբային ամբարային կայանքների շահագործման, ինչպես նաև միացնող գազատարներով հում գազի փոխադրման ծառայություններ	Գազի փոխադրումը խողովակաշարերով	Բնական գազի փոխադրման ծառայություններ, բնական գազի բաշխման ծառայություններ, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայություններ
2.	Տրանսպորտային տերմինալների,	Օդանավագնացության (աերոնավիգացիոն)	Տրանսպորտային տերմինալներում,	

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն	Հայաստանի Հանրապետություն
	օդանավակայանների ծառայություններ, Օդանավագնացային (աերոնավիգացիոն) ծառայություններ	ծառայություններ, նավահանգիստների, օդանավակայանների ծառայություններ	նավահանգիստներում և օդանավակայաններում մատուցվող ծառայություններ	
3.	Ընդհանուր օգտագործման էլեկտրակապի և փոստային կապի ծառայություններ	Հեռահաղորդակցության ծառայություններ տեխնոլոգիական անհնարինության կամ տվյալ տեսակների ծառայությունները տրամադրելը տնտեսապես ոչ նպատակահարմար լինելու պատճառով կապի մրցակցային օպերատորի բացակայության դեպքում՝ բացառությամբ հեռահաղորդակցության համընդհանուր ծառայությունների, գույքային վարձակալման (վարձակալության) տրամադրման կամ մալուխային կոյուղու և ընդհանուր օգտագործման հեռահաղորդակցության ցանցին հեռահաղորդակցության ցանցերը միացնելու հետ տեխնոլոգիապես կապված այլ հիմնական միջոցների օգտագործման ծառայություններ, փոստային կապի՝ հանրությանը մատչելի ծառայություններ	Հանրությանը մատչելի էլեկտրակապի ու փոստային կապի ծառայություններ	
4.	Ջերմային էներգիայի հաղորդում և բաշխում	Ջերմային էներգիայի արտադրության, հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման ծառայություններ	Ջերմային էներգիայի հաղորդման ծառայություններ	
5.	Կենտրոնացված	Ջրամատակարարման և	Ջրամատակարարում և	Ոչ մրցակցային

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն	Հայաստանի Հանրապետություն
	ջրամատակարարում և ջրահեռացում	(կամ) ջրահեռացման ծառայություններ	ջրահեռացում՝ կենտրոնացված համակարգի, կոմունալ ենթակառուցվածքի համակարգերի օգտագործմամբ	ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ
6.			Ներքին ջրային ուղիների ենթակառուցվածքի օգտագործման ծառայություններ	
7.		Կոնցեսիայի պայմանագրերի հիման վրա երկաթուղային տրանսպորտի օբյեկտներով երկաթուղային գծերի սպասարկման ծառայություններ		
8.		Մերձատար ուղիների ծառայություններ		
9.			Հյուսիսային ծովային ուղու ջրատարածությունում սառցահատի միջոցով նավերի անցկացում	
10.				էլեկտրական էներգիայի բաշխման ծառայություններ
11.				Հաշվարկային կենտրոնի ծառայություններ

(հավելվածը լրաց. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ 21
«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքների մասին

1. Սույն Արձանագրությամբ՝ Եվրասիական տնտեսական միության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 81-րդ և 82-րդ հոդվածներին համապատասխան սահմանվում են էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման միասնական սկզբունքներն ու կանոնները:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«էլեկտրական էներգիայի (հզորության) ներքին պահանջներ»՝ էլեկտրական էներգիայի (հզորության) ծավալներ, որոնք անհրաժեշտ են համապատասխան անդամ պետությունների տարածքներում դրանց սպառման համար.

«էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիություն»՝ անդամ պետություններից մեկի ներքին շուկայի սուբյեկտի կողմից այլ անդամ պետության տարածքում էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններից օգտվելու հնարավորություն.

«էլեկտրական էներգիայի (հզորության) փոխարինում»՝ դեպի էլեկտրաէներգետիկական համակարգ և դրանից դուրս էլեկտրական էներգիայի (հզորության) հավասար ծավալների՝ փոխկապակցված և միաժամանակյա մատակարարում մատակարարման տարբեր կետերի միջև, որոնք տեղակայված են անդամ պետության սահմանի (սահմանների) վրա.

«էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդում»՝ անդամ պետությունների լիազոր կազմակերպությունների կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) փոխադրման և (կամ) փոխարինման ծառայությունների մատուցում: Անդամ պետության օրենսդրությունից կախված՝ համապատասխան հարաբերությունները ձևակերպվում են փոխադրման (տարանցման) ծառայությունների մատուցման պայմանագրերով կամ այլ քաղաքացիաիրավական պայմանագրերով, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի (հզորության) առք ու վաճառքի պայմանագրերով.

«անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկա»՝ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական ներքին շուկաների սուբյեկտների միջև հարաբերությունների համակարգ, որը կապված է էլեկտրական էներգիայի (հզորության)՝ ընդհանուր կանոնների և համապատասխան պայմանագրերի հիմքով մատուցվող առք ու վաճառքի և հարակից ծառայությունների հետ.

«էլեկտրական էներգիայի (հզորության) փոխադրում»՝ անդամ պետություններից մեկի տարածքում արտադրված էլեկտրական էներգիայի (հզորության) փոխհոսքերի ապահովում մեկ այլ անդամ պետության ցանցերով այդ պետության մատակարարման կետերի միջև, որոնք տեղակայված են դրա սահմանի (սահմանների) վրա.

«էլեկտրական էներգիայի ներքին շուկայի սուբյեկտներ»՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան էլեկտրական էներգիայի (հզորության) շուկայի սուբյեկտ հանդիսացող անձինք, որոնք էլեկտրաէներգետիկայի ոլորտում գործունեություն են իրականացնում, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն, էլեկտրական էներգիայի (հզորության) ձեռքբերում և վաճառք, էլեկտրական էներգիայի բաշխում, սպառողների էներգամատակարարում, էլեկտրաէներգետիկայի ոլորտում հաղորդման, օպերատիվ-կարգավարական կառավարման մասով ծառայությունների մատուցում, էլեկտրական էներգիայի (հզորության) իրացում, էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի կազմակերպում.

«էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններ»՝ էլեկտրական ցանցով էլեկտրական էներգիայի հաղորդման, էլեկտրաէներգետիկայի ոլորտում օպերատիվ-կարգավարական կառավարման և այլ ծառայություններ, որոնք անդամ պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան առնչվում են բնական մենաշնորհի ոլորտին:

3. էլեկտրաէներգետիկայի ոլորտում անդամ պետությունների փոխգործակցությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի տեխնիկական և տնտեսական առավելությունների օգտագործում.

զուգահեռ աշխատանքների իրականացման ընթացքում տնտեսական վնաս չհասցնելու սկզբունք.

այնպիսի մեխանիզմների օգտագործում, որոնք հիմնված են շուկայական հարաբերությունների և բարեխիղճ մրցակցության վրա, որպես էլեկտրական էներգիայի (հզորության) պահանջարկը բավարարելու կայուն համակարգի ձևավորման հիմնական գործիք.

անդամ պետությունների՝ զուգահեռ աշխատող էլեկտրաէներգետիկական համակարգերի հիմքի վրա էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի փուլային ձևավորում՝ հաշվի առնելով անդամ պետությունների էլեկտրական էներգիայի (հզորության) շուկաների գոյություն ունեցող մոդելների առանձնահատկությունները.

էլեկտրաէներգետիկայի ոլորտում անդամ պետությունների օրենսդրության փուլային ներդաշնակեցում.

տեխնիկական նորմերի և կանոնների ներդաշնակեցում:

էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորումն իրականացվում է Պայմանագրի XIX բաժնում սահմանված միասնական սկզբունքների, կանոնների և մեթոդների հիման վրա:

4. Անդամ պետությունները նպաստում են իրենց պետությունների էլեկտրաէներգետիկայի զարգացման ծրագրերի համակարգմանը՝ նպատակ ունենալով երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ համագործակցություն ապահովել էլեկտրաէներգետիկայի ոլորտում:

5. Միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորումն իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

իրավահավասարության, փոխշահավետության և անդամ պետություններից յուրաքանչյուրին տնտեսական վնաս չհասցնելու վրա հիմնված համագործակցություն.

էլեկտրական էներգիա արտադրողների և սպառողների, ինչպես նաև անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի այլ սուբյեկտների տնտեսական շահերի հավասարակշռության պահպանում.

էլեկտրաէներգետիկայի ոլորտում անդամ պետությունների օրենսդրության փուլային ներդաշնակեցում, այդ թվում՝ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների կողմից տեղեկատվության բացահայտման մասով.

շուկայական հարաբերությունների և բարեխիղճ մրցակցության վրա հիմնված մեխանիզմների առաջնահերթ օգտագործում գործունեության մրցակցային տեսակներում էլեկտրական էներգիայի (հզորության) պահանջարկի բավարարման կայուն համակարգի ձևավորման համար.

էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններից անարգել օգտվելու հնարավորության ապահովում առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում՝ անդամ պետությունների ներքին պահանջների ապահովման համար էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման իրականացնման ժամանակ նշված ծառայությունների առաջնահերթ օգտագործման պայմանով.

էլեկտրաէներգետիկայի ոլորտում ազգային ուղղահայաց ինտեգրված ընկերությունների կառուցվածքի փուլային փոխակերպություն՝ գործունեության մրցակցային և մենաշնորհային տեսակների առանձնացման նպատակով.

էլեկտրաէներգետիկայի ոլորտում անդամ պետությունների միջպետական հարաբերությունների զարգացում՝ անդամ պետությունների ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի համաձայնեցված մոդելին համապատասխան.

անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի փուլային ձևավորում՝ անդամ պետությունների՝ զուգահեռ աշխատող էլեկտրաէներգետիկական համակարգերի հիման վրա՝ հաշվի առնելով անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական շուկաների առկա մոդելների առանձնահատկությունները.

անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի տեխնիկական և տնտեսական առավելությունների օգտագործում՝ զուգահեռ աշխատանքի փոխհամաձայնեցված պայմանների պահպանմամբ.

շուկաների ինտեգրման համապատասխան փուլում անդամ պետությունների էլեկտրական էներգիայի շուկաների հասանելիության ապահովում էլեկտրական էներգիա արտադրողների և սպառողների համար՝ հաշվի առնելով ազգային տնտեսությունների շահերը.

անդամ պետությունների սուբյեկտների միջև էլեկտրական էներգիայի առևտրի իրականացում՝ հաշվի առնելով անդամ պետությունների էներգետիկ անվտանգությունը:

6. Առկա տեխնիկական հնարավորության սահմաններում անդամ պետություններն ապահովում են էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններից անարգել օգտվելու հնարավորություն՝ անդամ պետությունների ներքին պահանջների ապահովման համար նշված ծառայությունների առաջնահերթ օգտագործման պայմանով՝ հետևյալ սկզբունքների հիման վրա՝

էլեկտրական էներգիայի (հզորության) ներքին շուկայի սուբյեկտներին ներկայացվող պահանջների հավասարություն, որոնք սահմանված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում մատուցվում են այդ ծառայությունները.

էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի ծառայություններից օգտվելու հնարավորություն տրամադրելիս՝ անդամ պետությունների օրենսդրությունը հաշվի առնելը՝ անդամ պետությունների ներքին պահանջների ապահովման համար նշված ծառայությունների առաջնահերթ օգտագործման պայմանով.

էլեկտրաէներգետիկայի այն օբյեկտների տեխնիկական պատշաճ վիճակի ապահովում, որոնք ազդում են անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի ռեժիմների վրա էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների մատուցման ժամանակ.

անդամ պետությունների էլեկտրական էներգիայի ներքին շուկաների սուբյեկտների միջև ծագող հարաբերությունների պայմանագրային ձևակերպում.

էլեկտրաէներգետիկայի ոլորտում անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հատուցելիություն:

7. էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ապահովումն իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) սահմանակից անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգով էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդումն անդամ պետությունների կողմից ապահովվում է առկա տեխնիկական հնարավորության սահմաններում՝ անդամ պետությունների՝ էլեկտրական էներգիայի (հզորության) ներքին պահանջների առաջնահերթ ապահովման պայմանով.

2) էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման տեխնիկական հնարավորության սահմանումն իրականացվում է ըստ հետևյալ առաջնահերթության՝

էլեկտրական էներգիայի (հզորության)՝ այն անդամ պետության ներքին պահանջների ապահովում, որի էլեկտրաէներգետիկական համակարգով է պլանավորվում իրականացնել միջպետական հաղորդումը.

սահմանակից անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի միջոցով էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ապահովում անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի մի մասից դեպի մյուս մասը.

էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ապահովում անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգով՝ մեկ անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգից դեպի այլ անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգ.

էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ապահովում անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգով՝ երրորդ պետությունների էլեկտրաէներգետիկայի ոլորտի սուբյեկտների նկատմամբ պարտավորությունների կատարման նպատակով.

3) էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ժամանակ անդամ պետությունների լիազոր կազմակերպություններն առաջնորդվում են էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման արժեքի փոխհատուցման սկզբունքով՝ ելնելով անդամ պետության օրենսդրությունից.

4) երրորդ պետությունների էլեկտրաէներգետիկայի ոլորտի սուբյեկտների նկատմամբ պարտավորությունները կատարելու նպատակով էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդումը կարգավորվում է երկկողմ հիմունքներով՝ հաշվի առնելով համապատասխան անդամ պետության օրենսդրությունը:

8. էլեկտրաէներգետիկական համակարգերով էլեկտրական էներգիայի (հզորության) անխափան միջպետական հաղորդում ապահովելու նպատակով անդամ պետություններն իրականացնում են համաձայնեցված նախապատրաստական համալիր միջոցառումներ, այն է՝

մինչև էլեկտրական էներգիայի (հզորության) մատակարարման օրացուցային տարվա սկիզբը՝ անդամ պետությունների կողմից լիազորված կազմակերպությունների կողմից հայտագրվում են միջպետական հաղորդման համար նախատեսված էլեկտրական էներգիայի (հզորության) պլանային ծավալները՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության և

սպառման կանխատեսվող ազգային հաշվեկշիռների մեջ հաշվի առնելու համար, այդ թվում՝ այդ մատակարարումների հաշվառման համար բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագների հաշվարկի ժամանակ.

էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման պլանային արժեքի հաշվարկների հիման վրա, անդամ պետությունների կողմից լիազորված կազմակերպությունները կնքում են պայմանագրեր՝ ի կատարումն ձեռք բերված պայմանավորվածությունների:

Անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերով էլեկտրական էներգիայի (հզորության) անխափան միջպետական հաղորդում ապահովելու նպատակով անդամ պետությունների լիազոր մարմինները կիրառում են անդամ պետությունների միջև էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման իրականացման միասնական մեթոդաբանություն, որը ներառում է էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման տեխնիկական պայմանների և ծավալների սահմանման կարգը, ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման հետ կապված ծառայությունների գնագոյացման համաձայնեցված մոտեցումները և որը ներկայացված է սույն Արձանագրության հավելվածում:

Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանվող կազմակերպություններն իրենց պետության տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդումն ապահովում են վերոնշյալ մեթոդաբանությանը համապատասխան:

9. էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման իրականացումը և էլեկտրացանցային տնտեսության օբյեկտների շահագործման ապահովումը, որոնք անհրաժեշտ են էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ապահովման համար, իրականացվում են էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ապահովման հետ կապված ծառայությունները մատուցող անդամ պետության նորմատիվ իրավական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համաձայն:

10. էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման մերժման դեպքում անդամ պետությունների կողմից լիազորված կազմակերպություններն ապահովում են մերժման պատճառները հիմնավորող նյութերի տրամադրումը:

11. էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների գնագոյացումը (սակագնի գոյացումը) իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայում էլեկտրաէներգետիկայի ոլորտի բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագները չպետք է գերազանցեն համարժեք ներքին սակագները, որոնք գործում են էլեկտրական էներգիայի ներքին շուկայի սուբյեկտների համար:

12. էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման հետ կապված հարաբերությունների կարգավորումն իրականացվում է՝ հաշվի առնելով գործող այլ միջազգային պայմանագրերը:

Հավելված
էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքների մասին արձանագրության

Անդամ պետությունների միջև էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման իրականացման մեթոդաբանություն

1. էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության և սպառման կանխատեսվող հաշվեկշիռների մեջ ներառման ենթակա, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագների հաշվարկման ժամանակ հաշվի առնվող էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման տարեկան կանխատեսվող ծավալների ձևավորման և դրանց համար հայտեր ներկայացնելու կարգի հիմնական դրույթները

1.1. Բելառուսի Հանրապետության տարածքում.

1.1.1. Բելառուսի Հանրապետության ազգային էլեկտրական ցանցերով էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման (այսուհետ՝ ՄՊՀ) տարեկան կանխատեսվող ծավալները որոշվում են դրա իրականացման համար լիազորված կազմակերպության կողմից ներկայացված հայտի հիման վրա:

1.1.2. Առաջիկա օրացուցային տարվա համար հայտը ներկայացվում է նախորդող տարվա ապրիլի 1-ից ոչ ուշ: Հայտի մեջ նշվում է ՄՊՀ-ի և առավելագույն հզորության տարեկան ծավալը՝ ամիսների բացվածքով:

1.1.3. Հայտն ուսումնասիրելիս Բելառուսի Հանրապետության լիազոր կազմակերպությունն առաջնորդվում է առկա տեխնիկական հնարավորության մեծությամբ, որը որոշվում է սույն մեթոդաբանությանը համապատասխան:

Եթե ՄՊՀ-ի հայտագրվող մեծությունը գերազանցում է առկա տեխնիկական հնարավորության մեծությունը ընդհանուր առմամբ տարեկան կտրվածքով կամ տարվա որևէ ամսվա համար, ապա Բելառուսի Հանրապետության լիազոր կազմակերպությունը հայտ ներկայացրած կազմակերպությանն ուղարկում է հիմնավորված մերժում:

1.1.4. ՄՊՀ-ի հայտագրված ծավալները, որոնք համաձայնեցվել են Բելառուսի Հանրապետության լիազոր կազմակերպության հետ, ձևակերպվում են որպես էլեկտրական էներգիայի հաղորդման պայմանագրի հավելված և հաշվի են առնվում էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների սակագները հաշվարկելու ժամանակ:

1.1.5. ՄՊՀ-ի համար նախատեսվող էլեկտրական էներգիայի ծավալները կարող են ճշգրտվել անդամ պետությունների լիազոր կազմակերպությունների համաձայնեցմամբ՝ մինչև պլանավորվող ՄՊՀ-ի տարվան նախորդող տարվա նոյեմբերի 1-ը:

1.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում.

1.2.1. Ղազախստանի Հանրապետության ազգային էլեկտրական ցանցերով էլեկտրական էներգիայի (հզորության) ՄՊՀ-ի տարեկան կանխատեսվող ծավալները որոշվում են ՄՊՀ-ի իրականացման համար լիազորված կազմակերպության կողմից՝ Ղազախստանի Հանրապետության համակարգային օպերատորին՝ ՄՊՀ-ի իրականացման համար ներկայացված հայտի հիման վրա:

1.2.2. Առաջիկա օրացուցային տարվա համար հայտը ներկայացվում է նախորդող տարվա ապրիլի 1-ից ոչ ուշ: Հայտի մեջ նշվում է ՄՊՀ-ի տարեկան ծավալը՝ ամիսների բացվածքով և Ղազախստանի Հանրապետության սահմանի վրա էլեկտրաէներգիայի ընդունման կետերի և հանձնման կետերի նշումով:

1.2.3. Հայտն ուսումնասիրելիս Ղազախստանի Հանրապետության համակարգային օպերատորն առաջնորդվում է առկա տեխնիկական հնարավորության մեծությամբ, որը որոշվում է սույն մեթոդաբանության համաձայն: Եթե ՄՊՀ-ի հայտագրվող մեծությունը գերազանցում է առկա տեխնիկական հնարավորության մեծությունն ընդհանուր առմամբ տարեկան կտրվածքով կամ տարվա որևէ ամսվա համար, ապա Ղազախստանի Հանրապետության համակարգային օպերատորը հայտ ներկայացրած կազմակերպությանն ուղարկում է հիմնավորված մերժում:

1.2.4. ՄՊՀ-ի հայտագրված ծավալները, որոնք համաձայնեցվել են Ղազախստանի Հանրապետության համակարգային օպերատորի հետ, ձևակերպվում են որպես էլեկտրաէներգիայի հաղորդման պայմանագրի հավելված և հաշվի են առնվում էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունների սակագները հաշվարկելու ժամանակ:

1.2.5. Ղազախստանի Հանրապետության Միասնական էներգետիկ համակարգի (այսուհետ՝ Ղազախստանի ՄԷՀ) համաձայն էլեկտրաէներգիայի և հզորության կանխատեսվող հաշվեկշռի ձևավորումից հետո, մինչև պլանավորվող տարվան նախորդող տարվա հոկտեմբերի 15-ը, երկկողմ միջպետական պայմանագրերով էլեկտրաէներգիայի մատակարարումների ծավալները սահմանվում և համաձայնեցվում են մեծածախ շուկայի սուբյեկտների հետ:

1.2.6. ՄՊՀ-ի համար նախատեսվող էլեկտրական էներգիայի ծավալները կարող են ճշգրտվել ՄՊՀ-ի կազմակերպման և իրականացման համար լիազորված սուբյեկտների առաջարկով՝ մինչև պլանավորվող մատակարարման տարվան նախորդող տարվա նոյեմբերի 1-ը:

1.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում.

1.3.1. «Ռուսաստանի ՄԷՀ-ի շրջանակներում ըստ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների կանխատեսվող ամփոփիչ հաշվեկշռի ձևավորման կարգին» համապատասխան, լիազոր կազմակերպությունը (Ռուսաստանի Դաշնության միասնական ազգային (համառուսաստանյան) էլեկտրական ցանցի կառավարման կազմակերպություն (այսուհետ՝ ՄԱԷՑ) մինչև պլանավորվող մատակարարման տարվան նախորդող տարվա ապրիլի 1-ը, անդամ պետությունների՝ ազգային էլեկտրացանցի կառավարում իրականացնող լիազոր կազմակերպությունների հետ համաձայնեցված առաջարկություններ է ներկայացնում Ռուսաստանի Դաշնության սակագների հարցերով դաշնային ծառայություն (Ռուսաստանի ՍԴԾ) և Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորին:

1.3.2. Համաձայնեցված առաջարկություններն ուսումնասիրվում են Ռուսաստանի ՍԴԾ-ի կողմից և հաշվի են առնվում հաջորդ օրացուցային տարվա համար էլեկտրական էներգիայի՝ ըստ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների արտադրության և սպառման կանխատեսվող ամփոփիչ հաշվեկշիռը ձևավորելիս՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում:

1.3.3. ՄՊՀ-ի համար նախատեսված էլեկտրական էներգիայի և հզորության ծավալները, որոնք հաստատվել են էլեկտրական էներգիայի (հզորության)՝ ըստ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների արտադրության և սպառման կանխատեսվող ամփոփիչ հաշվեկշռի ցուցանիշների կազմում մատակարարման տարվա համար, հաշվի են առնվում էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների վճարները (սակագները) հաշվարկելիս:

1.3.4. ՄՊՀ-ի համար նախատեսվող էլեկտրական էներգիայի և հզորության ծավալները կարող են ճշգրտվել ՄԱԷՑ կառավարման կազմակերպության առաջարկով՝ անդամ պետությունների լիազոր կազմակերպությունների հետ համաձայնեցման պայմանով, մինչ պլանավորվող մատակարարման տարվան նախորդող տարվա նոյեմբերի 1-ը, ինչն իրականացվում է էլեկտրաէներգետիկայի ոլորտի բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների համար սահմանված վճարների (սակագների) համապատասխան ճշգրտմամբ:

2. ՄՊՀ-ի տեխնիկական հնարավորությունը և պլանավորվող ծավալները որոշելու կարգը՝ էլեկտրաէներգետիկական համակարգերի աշխատանքի տարեկան, ամսական, օրական և ներօրյա ռեժիմների հիման վրա՝ ներառյալ պլանավորման համակարգողի գործառույթներն ու լիազորությունները սահմանող դրույթները

2.1. Եզրութաբանությունը.

Սույն մեթոդաբանության 2-րդ բաժնի նպատակներով օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

Հսկվող հատվածք՝ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի համակարգային օպերատորների կարգավարական կենտրոնների կողմից սահմանվող էլեկտրահաղորդման գծերի (ԷՀ Գ) և էլեկտրական ցանցերի այլ տարրերի ամբողջություն, որոնցով հզորությունների փոխհոսքերը հսկվում են էլեկտրաէներգետիկական համակարգերի կայուն աշխատանքի, հուսալիության և կենսունակության ապահովման նպատակով:

Հզորության առավելագույն թույլատրելի փոխհոսք՝ համակարգի հատվածքում առավելագույն փոխհոսք, որը բավարարում է նորմալ ռեժիմների բոլոր պահանջները:

Միջպետական հատվածք՝ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի օպերատորների կողմից սահմանվող մատակարարման կետ կամ կետերի խումբ, որը տեղակայված է հարևան պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերը (առանձին էներգաշրջանները) իրար միացնող միջպետական ԷՀ Գ-ի (ԷՀ Գ-ների) վրա՝ տեխնոլոգիապես պայմանավորված զուգահեռ աշխատանքի էլեկտրաէներգետիկական ռեժիմների պլանավորման և կառավարման խնդիրներով:

Օգտագործվող մյուս հասկացություններն ունեն «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքների մասին» արձանագրությամբ

(«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 21-րդ հավելված) սահմանված իմաստը:

2.2. Ընդհանուր դրույթներ.

2.2.1. Պլանավորման փուլում որոշվող խնդիրները.

- տարեկան կտրվածքով պլանավորում. անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի (հզորության)՝ հայտագրված այն ծավալներով մատակարարումների և ՄՊՀ-ի իրագործման տեխնիկական հնարավորության ստուգում, որոնք հաշվառվել են էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության և սպառման տարեկան կանխատեսվող հաշվեկշիռներում՝ հաշվի առնելով էլեկտրացանցային սարքավորումների վերանորոգումների տարեկան պլանային գրաֆիկները, որոնք սահմանափակում են արտահանման-ներմուծման հատվածքները, և, անհրաժեշտության դեպքում, դրանց ճշգրտում.

- ամսական կտրվածքով պլանավորում. անդամ պետությունների միջև հայտագրված այն ծավալներով մատակարարումների և ՄՊՀ-ի իրագործման տեխնիկական հնարավորության ստուգում, որոնք հաշվվել են էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության և սպառման տարեկան կանխատեսվող հաշվեկշիռներում՝ հաշվի առնելով էլեկտրացանցային սարքավորումների վերանորոգումների ամսական պլանային գրաֆիկները, որոնք սահմանափակում են արտահանման-ներմուծման հատվածքները, և, անհրաժեշտության դեպքում, դրանց ճշգրտում.

- ռեժիմների օրական կտրվածքով պլանավորում և ներօրյա կտրվածքով ճշգրտում. անդամ պետությունների միջև մեկ օր առաջ հայտագրված՝ ժամային ծավալներով մատակարարումների և ՄՊՀ-ի իրագործման տեխնիկական հնարավորության ստուգում՝ հաշվի առնելով իրական սխեմա-ռեժիմային իրավիճակը, էլեկտրացանցային սարքավորումների պլանային, ոչ պլանային և վթարային անջատումները, որոնք սահմանափակում են արտահանման-ներմուծման հատվածքները, անդամ պետությունների միջև մատակարարումների և ՄՊՀ-ի ծավալները:

2.2.2. Պլանավորումը (անդամ պետությունների միջև մատակարարումների և ՄՊՀ-ի պլանավորված ծավալների իրագործելիության հաշվարկը) իրականացվում է Ռուսաստանի ՄԷՀ-ի ու Ղազախստանի ՄԷՀ-ի միջև և Ռուսաստանի ՄԷՀ-ի ու Բելառուսի Միացյալ էներգետիկական համակարգի (Բելառուսի ՄԷՀ)՝ զուգահեռ աշխատող էներգահամակարգերի հաշվարկային մոդելների օգտագործմամբ (այսուհետ՝ հաշվարկային մոդել):

2.2.3. Հաշվարկային մոդելն իրենից ներկայացնում է Ռուսաստանի ՄԷՀ-ի, Ղազախստանի ՄԷՀ-ի և Բելառուսի ՄԷՀ-ի տեխնոլոգիապես փոխկապակցված մասերի մաթեմատիկական մոդել՝ պլանավորման համար անհրաժեշտ ծավալով, և որը ներառում է հետևյալի նկարագրությունը՝

- էլեկտրական ցանցի փոխարինման սխեմայի գրաֆեր և պարամետրեր.
- ակտիվ և ռեակտիվ հանգուցային բեռնվածքներ.
- հանգույցներում ակտիվ և ռեակտիվ գեներացում.
- գեներացման ակտիվ և ռեակտիվ նվազագույն և առավելագույն հզորություններ.
- ցանցային սահմանափակումներ:

2.2.4. Հաշվարկային մոդելը ձևավորվում է անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի համակարգային օպերատորների միջև համաձայնեցված փոխարինման սխեմայի հիման վրա, որպես կանոն, բազային ռեժիմների համար, որոնք համապատասխանում են ձմեռային ռեժիմի առավելագույն և նվազագույն բեռնվածքի ժամերին ու ամառային ռեժիմի առավելագույն և նվազագույն բեռնվածքի ժամերին (բազային հաշվարկային սխեմաներ): Բնականոն սխեմա-ռեժիմային իրավիճակների համար պետք է նշվեն միջպետական հսկվող հատվածքներում, ինչպես նաև ներքին հսկվող հատվածքներում առավելագույն թույլատրելի փոխհոսքերը, եթե դրանք էականորեն ազդում են միջպետական մատակարարումների (փոխանակումներ) իրականացման վրա:

2.2.5. Պլանավորման համակարգողը Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորն է:

2.2.6. Պլանավորման յուրաքանչյուր փուլի համար հաշվարկային մոդելների և թարմացվող տեղեկությունների կազմը, այդ թվում՝ հաշվարկային մոդելներում ներառվող էներգաօբյեկտների և էլեկտրաէներգետիկական համակարգերի (համարժեք էլեկտրաէներգետիկական համակարգերի) ցանկը և դրանց ձևավորման և թարմացման կարգն ու ժամանակային կանոնակարգը, էլեկտրաէներգետիկական համակարգերի աշխատանքի տարեկան, ամսական,

օրական և ներօրյա ռեժիմների պլանավորման ձևաչափերն ու տվյալների փոխանակման միջոցները սահմանվում են փաստաթղթերով, որոնք հաստատվում են Ռուսաստանի ՄԷՀ համակարգային օպերատորի և ՄԱԷՑ կառավարման ընկերության կողմից՝ Բելառուսի ՄԵՀ համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության և Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի հետ:

2.3. Պլանավորման համակարգողի և անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի համակարգային օպերատորների գործառույթներն ու լիազորությունները:

2.3.1. Պլանավորման համակարգողն իրականացնում է՝

- բազային հաշվարկային մոդելների ձևավորում.

- պլանավորման նպատակով տեղեկատվության փոխանակման կազմակերպում Բելառուսի ՄԷՀ համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ համակարգային օպերատորի հետ.

- էլեկտրաէներգետիկական ռեժիմների հաշվարկների իրականացում՝ Բելառուսի ՄԷՀ համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությունից, Ղազախստանի ՄԷՀ համակարգային օպերատորից ստացված տվյալների հիման վրա.

- անդամ պետությունների էլեկտրաէներգետիկաան համակարգերի (էեկտրաէներգետիկական համակարգերի մասերի) միջև միջպետական փոխհոսքի ճշգրտում, եթե հաշվարկի ժամանակ հայտնաբերվել է էլեկտրական ռեժիմների անիրագործելիություն կամ հաշվարկային մոդելի հսկվող հատվածքներում առավելագույն թույլատրելի փոխհոսքերի գերազանցում՝ մատակարարումների և ՄՊՀ-ի հայտագրված ծավալների դեպքում՝ հաշվի առնելով առաջնահերթության սկզբունքները, որոնք սահմանված են «էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքների մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 21-րդ հավելված) 4-րդ կետի 2-րդ ենթակետում.

1) անդամ պետության ներքին պահանջների ապահովում, որի էլեկտրաէներգետիկական համակարգի միջոցով է պլանավորվում իրականացնել ՄՊՀ-ն.

2) էլեկտրական էներգիայի (հզորության) ՄՊՀ-ի ապահովում անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի մի մասից դեպի մյուս մասը՝ սահմանակից անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի միջոցով.

3) էլեկտրական էներգիայի (հզորության) ՄՊՀ-ի ապահովում անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի միջոցով՝ մեկ անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգից դեպի այլ անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգ.

4) էլեկտրական էներգիայի (հզորության) ՄՊՀ ապահովում անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի միջոցով՝ Միության կազմի մեջ չմտնող երրորդ պետությունների էլեկտրաէներգետիկայի ոլորտի սուբյեկտների նկատմամբ պարտավորությունների կատարման նպատակով.

- Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությանը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորին վերոնշյալ հաշվարկների արդյունքների մասին տեղեկացում:

2.3.2. Եթե հաշվարկի ժամանակ հայտնաբերվել է էլեկտրական ռեժիմների անիրագործելիություն կամ հաշվարկային մոդելի հսկվող հատվածքներում առավելագույն թույլատրելի փոխհոսքերի գերազանցում, ապա պլանավորման համակարգողը Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությանը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորին և ՄԱԷՑ կառավարման կազմակերպությանն է ուղարկում էլեկտրաէներգետիկական համակարգերի սալդո-փոխհոսքերի (հաշվեկշիռների) մեծությունների ճշգրտման համար անհրաժեշտ մեծությունները:

Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությունը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորը և ՄԱԷՑ կառավարման կազմակերպությունը ճշգրտում են էլեկտրաէներգիայի (հզորության) մատակարարման ծավալները բոլոր պայմանագրերի մասով, այդ թվում՝ ՄՊՀ-ի, հիմք ընդունելով վերոնշյալ առաջնահերթությունը, կամ այլ միջոցներ են ձեռնարկում հսկվող հատվածքներում

թույլատրելի փոխհոսքի խախտումների վերացման ուղղությամբ, որոնք հաշվարկների արդյունքում հայտնաբերվել են պլանավորման համակարգողի կողմից:

էլեկտրաէներգիայի (հզորության) մատակարարումների շտկված պայմանագրային ծավալների մասին տեղեկությունները, ըստ բոլոր պայմանագրերի, այդ թվում՝ անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի, Բելառուսի ՄԷՀ համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ համակարգային օպերատորի և ՄԱԷՑ կառավարման կազմակերպության կողմից հաղորդվում են անդամ պետությունների էլեկտրական էներգիայի ներքին շուկաների սուբյեկտներին՝ ըստ կնքված պայմանագրերի:

2.3.3. Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությունից, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից պլանավորման համար արդիական տվյալներ չստանալու դեպքում կամ տեխնիկական սխալներով կամ ակնհայտորեն ոչ հավաստի տվյալներ ստանալու դեպքում պլանավորման համակարգողն իրավունք ունի օգտագործելու փոխարինող տեղեկություններ, որոնց բովանդակությունն ու կիրառման կարգը սահմանվում է փաստաթղթերով, որոնք հաստատվում են Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի և Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից:

2.4. Տարեկան կտրվածքով պլանավորում.

2.4.1. Տարեկան կտրվածքով պլանավորումը կատարվում է Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի և Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից սահմանվող ժամկետներում և կարգով:

2.4.2. Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությունը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորը և Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորը կազմում են էլեկտրացանցային սարքավորումների վերանորոգումների գրաֆիկների նախագծեր պլանավորվող օրացուցային տարվա համար և դրանք ներկայացնում են պլանավորման համակարգողին: Պլանավորվող օրացուցային տարվա համար էլեկտրացանցային սարքավորումների վերանորոգումների գրաֆիկը պլանավորման համակարգողի կողմից համաձայնեցվում է և ուղարկվում Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությանը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորին և ՄԱԷՑ-ի կառավարման կազմակերպություն: էլեկտրացանցային օբյեկտների ցանկը, որոնց հետ կապված վերանորոգումները ենթակա են համաձայնեցման վերանորոգումների տարեկան (ինչպես նաև ամսական) գրաֆիկի շրջանակներում և դրա կազմման ժամանակային կանոնակարգը սահմանվում է Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի և Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից:

2.4.3. Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությունը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորը պլանավորման համակարգողին տարեկան պլանավորման նպատակով տեղեկություններ են փոխանցում համապատասխան ազգային էլեկտրաէներգետիկական համակարգի վերաբերյալ (սպառում, գեներացում, սալդո-փոխհոսքեր, ցանցային սարքավորումների վերանորոգումներ), որոնք նրանց կողմից ձևավորվում են էլեկտրական էներգիայի կանխատեսվող հաշվեկշիռների, բնականոն աշխատանքային օրվա առավելագույն բեռնվածքային ժամի հզորության հաշվարկով:

2.4.4. Պլանավորման արդյունքը Ռուսաստանի ՄԷՀ-Ղազախստանի ՄԷՀ և Ռուսաստանի ՄԷՀ-Բելառուսի ՄԷՀ սալդո-փոխհոսքերի ճշգրտված կանխատեսվող մեծությունն է:

2.4.5. Պլանավորման համակարգողն իրականացնում է ռեժիմների հաշվարկում և հաշվարկների արդյունքներն ուղարկում է Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությանը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորին:

2.5. Ամսական կտրվածքով պլանավորում.

2.5.1. Ամսական կտրվածքով պլանավորումն իրականացվում է Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության,

Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի և Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից սահմանվող ժամկետներում և կարգով՝ նույն սխեմայով, որը կիրառվում է տարեկան պլանավորման ժամանակ՝ ամսական կտրվածքով տվյալների և արդյունքների փոխանակմամբ:

2.6. Օրական և ներօրյա կտրվածքով պլանավորում:

2.6.1. Օրական և ներօրյա կտրվածքով պլանավորումն իրականացվում է Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի և Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից սահմանվող ժամկետներում և կարգով:

2.6.2. Յուրաքանչյուր օր Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությունը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորը պլանավորման համակարգողին հաշվարկային մոդելի թարմացման նպատակով տվյալներ են ներկայացնում պլանավորվող օրերի (այսուհետ՝ X օրեր) համար՝ 24-ժամյա կտրվածքով թարմացված տվյալների (00:00-ից մինչև 24:00) հավաքակազմերի տեսքով, որոնք ներառում են՝

- էլեկտրաէներգետիկական համակարգի 220 կՎ և ավելի բարձր լարման էլեկտրացանցային սարքավորումների տարրերի պլանավորվող վերանորոգումները.

- սպառման և գեներացման ժամային գրաֆիկները՝ ըստ էլեկտրաէներգետիկական համակարգի (այդ թվում՝ ըստ Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի և Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից՝ հաշվարկային մոդելի կազմի ձևավորման ժամանակ հաստատված առանձին էներգաշրջանների).

- սալդո-փոխհոսքերի ժամային գրաֆիկներ (որպես էլեկտրէներգետիկական համակարգի փոխհոսքերի դրական սալդո ընդունվում է դրա դեֆիցիտը):

ՄԱԷՑ կառավարման կազմակերպությունը պլանավորման համակարգողին է ներկայացնում Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի հետ համաձայնեցված՝ Ռուսաստանի ՄԷՀ-ի, Ղազախստանի ՄԷՀ-ի և Բելառուսի ՄԷՀ-ի միջև էլեկտրաէներգիայի մատակարարումների ծավալների ժամային գրաֆիկների հանրագումարային մեծությունները բոլոր տեսակների պայմանագրերի համար, այդ թվում՝ անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի:

2.6.3. Եթե Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից պլանավորման համակարգողին չեն տրամադրվել հաշվարկային մոդելի թարմացման համար անհրաժեշտ տվյալները, վերջինս օգտագործում է փոխարինող տեղեկություններ, որոնք հաշվարկային մոդելների կազմի ձևավորման ժամանակ հաստատվել են Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի և Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից՝ իրենց միջև համաձայնեցմամբ:

2.6.4. Պլանավորման համակարգողը թարմացնում է հաշվարկային մոդելը և իրականացնում էլեկտրական ռեժիմների հաշվարկ:

2.6.5. Պլանավորման համակարգողն իրականացնում է ռեժիմների հաշվարկ և հաշվարկների արդյունքները համաձայնեցված ձևաչափով փոխանցում է Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությանը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորին:

2.6.6. Եթե անդամ պետությունների միջև մատակարարումների և ՄՊՀ-ի ծավալների հայտագրված մեծություններն իրագործելի չեն, ապա Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությունը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորը և ՄԱԷՑ-ի կառավարման կազմակերպությունը միջոցներ են ձեռնարկում մատակարարումների և ՄՊՀ-ի ծավալների ճշգրտման համար՝ հաշվի առնելով սույն մեթոդաբանության 2.3.1 կետում սահմանված առաջնահերթությունը:

2.6.7. Եթե էլեկտրասպառման և (կամ) սխեմա-ռեժիմային պայմանների չկանխատեսված փոփոխության արդյունքում և (կամ) մատակարարումների պայմանագրերի պայմանների փոփոխության դեպքում պահանջվում է անդամ պետությունների միջև մատակարարումների և ՄՊՀ-ի պլանային ծավալների մեջ ճշգրտում կատարել օպերատիվ օրերի ընթացքում, ապա

Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպությունը, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորը պլանավորման համակարգողին ներկայացնում են՝

- տվյալներ ընթացիկ օրերի համար հաշվարկային մոդելի թարմացման համար անհրաժեշտ տվյալներ՝ X օրերի մնացած ժամերի համար թարմացված ժամային տվյալների համակազմերի տեսքով՝ այն ծավալով, որը համապատասխանում է մեկ օր առաջ պլանավորման նպատակով փոխանցվող տվյալներին.
- անդամ պետությունների միջև մատակարարումների և ՄՊՀ-ի պլանային ծավալներում փոփոխության առաջարկվող ծավալի մասին հայտ:

2.6.8. Օրվա ընթացքում յուրաքանչյուր ժամային փուլի համար վերջնաժամկետ է սահմանվում է տվյալների ներկայացման («դարպասները փակելու ժամանակ») և հաշվարկների արդյունքները փոխանցելու համար: «Դարպասները փակելու ժամանակ»-ից հետո տվյալների փոխանցում չի թույլատրվում: Պլանավորման համակարգողը թարմացնում է հաշվարկային մոդելը և կատարում է X օրվա մնացած ժամերի համար էլեկտրական ռեժիմների հաշվարկ:

2.6.9. Պլանավորման արդյունքում կազմվում է անդամ պետությունների միջև մատակարարումների և ՄՊՀ-ի ծավալների ճշգրտված պլանային ժամային գրաֆիկը՝ X օրերի մնացած ժամերի համար: Եթե պլանային ճշգրտված պլանային ժամային գրաֆիկներն անհնար է իրականացնել՝ ռեժիմների ներօրյա կտրվածքով ճշգրտման ժամանակից հետո սխեմա-ռեժիմային պայմանների փոփոխության պատճառով, ապա անդամ պետությունների միջև մատակարարումների և ՄՊՀ-ի ծավալների փոփոխություն թույլատրվում է կատարել վթարային օգնության տրամադրման կամ էլեկտրաէներգիայի հարկադրված մատակարարումների պայմաններով՝ անդամ պետությունների լիազորված տնտեսավարող սուբյեկտների միջև էլեկտրաէներգիայի մատակարարման մասին հատուկ պայմանագրերի համաձայն:

3. Անդամ պետությունների՝ ՄՊՀ-ի կազմակերպման և իրականացման համար լիազորված սուբյեկտների ցանկը, ՄՊՀ-ի ապահովման շրջանակներում յուրաքանչյուր կազմակերպության կողմից իրականացվող գործառույթների մատնանշմամբ

3.1. Բելառուսի Հանրապետության տարածքում.

3.1.1. Բելառուսի Հանրապետության տարածքում ՄՊՀ-ի կազմակերպումն ու իրականացումը վերապահվում է Բելառուսի ՄԷՀ-ի կառավարման գործառույթն իրականացնող կազմակերպությանը և Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթն իրականացնող կազմակերպությանը, որոնք իրականացնում են նաև հետևյալ գործառույթները՝

- էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների մատուցում հաղորդման էլեկտրական ցանցով (Բելառուսի ՄԷՀ-ի կառավարման գործառույթն իրականացնող կազմակերպությանը ենթադաս կազմակերպություններ՝ Բելառուսի ՄԷՀ-ի կառավարման գործառույթն իրականացնող կազմակերպության ընդհանուր համակարգմամբ).
- ՄՊՀ-ի տեխնիկական կարգավարացման գծով ծառայությունների մատուցում (Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթները կատարող կազմակերպություն).
- սահմանակից պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ համագործակցություն զուգահեռ աշխատանքների կառավարման և կայունության ապահովման գծով (Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթները կատարող կազմակերպություն):

3.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում.

3.2.1. Ղազախստանի Հանրապետության տարածքում ՄՊՀ կազմակերպումը և իրականացումը վերապահվում է համակարգի օպերատորին, որն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- Ազգային էլեկտրական ցանցով էլեկտրական էներգիայի հաղորդման մասով ծառայությունների մատուցում.
- էլեկտրաէներգիայի սպառման և ցանց բաց թողնելու տեխնիկական կարգավարացման գծով ծառայությունների մատուցում.
- էլեկտրական էներգիայի արտադրության և սպառման միջև հավասարակշռման կազմակերպման ծառայություններ.

- սահմանակից պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ համագործակցություն զուգահեռ աշխատանքի ռեժիմների կառավարման և կայունության ապահովման գծով:

3.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում.

3.3.1. Անդամ պետությունների միջև Ռուսաստանի Դաշնության ՄԷՀ-ի միջոցով Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան ՄՊՀ-ի ապահովումը ենթադրում է համալիր գործողությունների իրականացում, որոնք կապված են հետևյալի հետ՝

3.3.1.1. էլեկտրաէներգետիկայի ոլորտում օպերատիվ-կարգավարական կառավարման, այդ թվում՝ Ռուսաստանի ՄԷՀ-ի և այլ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի ռեժիմների կառավարման, էլեկտրական էներգիայի (հզորության) փոխարինում և համակարգված պլանավորում ապահովելու մասով ծառայությունների մատուցում.

3.3.1.2. Միասնական ազգային (համառուսաստանյան) էլեկտրական ցանցով էլեկտրական էներգիայի հաղորդման (փոխադրման) ծառայությունների մատուցում, այդ թվում՝ անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ապահովման համար.

3.3.1.3. Ռուսաստանի Դաշնության էլեկտրաէներգիայի և հզորության մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի և հզորության շրջանառության առանձնահատկություններ, այդ թվում՝ անդամ պետությունների հետ Ռուսաստանի Դաշնության սահմանին (սահմաններին) տեղակայված տարբեր մատակարարման կետերի միջով դեպի Ռուսաստանի ՄԷՀ և դրանից դուրս եկող էլեկտրական էներգիայի (հզորության) հավասար ծավալների փոխկապակցված և միաժամանակյա մատակարարման ապահովման անհրաժեշտության դեպքում:

3.3.2. Անդամ պետությունների միջև ՄՊՀ-ն ապահովվում է հետևյալ լիազորված կազմակերպությունների կողմից՝

3.3.2.1. Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատոր՝ Ռուսաստանի ՄԷՀ-ի՝ Ղազախստանի ՄԷՀ-ի և Բելառուսի ՄԷՀ-ի հետ զուգահեռ աշխատանքի ռեժիմների կազմակերպման և կառավարման մասով.

3.3.2.2. ՄԱԷՑ կառավարման կազմակերպություն՝ անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ժամանակ Ռուսաստանի ՄԷՀ-ով էլեկտրական էներգիայի տեղափոխման հետ կապված (փոխարինման սկզբունքի օգտագործմամբ) ծառայությունների մատուցման և Ռուսաստանի ՄԷՀ-ի՝ Ղազախստանի ՄԷՀ-ի և Բելառուսի ՄԷՀ-ի հետ զուգահեռ աշխատանքի կազմակերպման մասով, այդ թվում՝ ՄՊՀ-ի (տարեկան, ամսական, ժամային) պլանավորման գծով օտարերկրյա լիազորված կազմակերպությունների հետ փոխգործակցության մասով, Ռուսաստանի Դաշնության և անդամ պետությունների պետական սահմանով տեղափոխված էլեկտրաէներգիայի փաստացի ժամային ծավալների՝ ըստ առևտրային պայմանագրերի բաշխման մասով, հաշվի առնելով ճշգրտված պլանային ծավալները. Ռուսաստանի Դաշնության և անդամ պետությունների պետական սահմանի միջև տեղափոխված էլեկտրաէներգիայի փաստացի ժամային ծավալների՝ պլանավորվածից շեղումների հայտնաբերման մասով. անդամ պետությունների ընդհանուր սահմանների վրա տեղակայված մատակարարման կետերում էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման իրականացման մասով.

3.3.2.3. Առևտրային օպերատոր՝ կազմակերպություն, որն իրականացնում է էլեկտրական էներգիայի, հզորության և մեծածախ շուկայում շրջանառության համար թույլատրված այլ ապրանքների ու ծառայությունների մեծածախ առևտրի կազմակերպման գործառույթներ.

3.3.2.4. Կազմակերպություն, որն իրականացնում է մեծածախ շուկայի մասնակիցների պահանջների և պարտականությունների հաշվարկման ծառայությունների մատուցման հետ կապված գործառույթներ.

3.3.2.5. Առևտրային գործակալ՝ էլեկտրաէներգիայի և հզորության մեծածախ շուկայի՝ արտահանման-ներմուծման գործառնություններ իրականացնող մասնակից այն մասով, որը վերաբերում է մասնակցության հասանելիության կազմակերպմանը՝ էլեկտրաէներգիայի և հզորության մեծածախ շուկայում առկա հարաբերություններում անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ապահովման համար հայտագրված էլեկտրական էներգիայի (հզորության) ծավալների և փաստացի սալդո-փոխհոսքի՝ պլանային մեծությունից շեղումների հետ կապված հարաբերությունների կարգավորման ապահովման առնչությամբ:

4. ՄՊՀ իրականացնելիս բնական մենաշնորհի սուբյեկտների սակագներում ներառվող բաղադրիչների ցանկը

4.1. Բելառուսի Հանրապետության տարածքում.

4.1.1. Բելառուսի Հանրապետություն հաղորդման ցանցով (այսուհետ՝ ՀՑ) ՄՊՀ-ի ծառայությունների $Ծ_{գանց}$ ծախսերը, որոնք բնական մենաշնորհի սուբյեկտների սակագներում են ներառվում անդամ պետությունների միջև ՄՊՀ իրականացնելիս, հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$Ծ_{գանց} = Ծ(1+ՆՖ)(1+ՇՀ)(+1Հ) \text{ ,որտեղ՝}$$

Ծ - ՀՑ-ի պահպանման և շահագործման ընդհանուր ծախսերն են, որոնք վերաբերում են անդամ պետությունների միջև ՄՊՀ-ին, որոշվում են լիազորված պետական մարմինների կողմից հաստատված կարգով.

ՆՖ - նորարարական ֆոնդ ուղղվող հատկացումների մասնաբաժինն է.

ՇՀ - Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որպես շահույթ ուղղվող հատկացումների մասնաբաժինն է.

Հ - հարկային հատկացումների մասնաբաժինն է.

Ընդհանուր ծախսերում՝ Ծ-ում, ներառվում են շահագործման և վերանորոգման ծախսերը, աշխատավարձը, մաշվածությունը, այլ դրամական ծախսեր (օժանդակ նյութեր, կողմնակի էներգիա, սոցիալական ապահովագրության հատկացումներ և այլն), էլեկտրաէներգիայի կորուստների փոխհատուցման ծախսեր:

4.1.2. Բելառուսի ՄԷՀ-ի ցանցերով իրականացվող՝ ՄՊՀ-ի ծառայությունների մատուցման սակագինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \frac{Ծ_{գանց}}{է_т}$$

U - Բելառուսի ՄԷՀ-ի ցանցերով իրականացվող՝ ՄՊՀ-ի ծառայությունների մատուցման սակագինն է.

$է_т$ - Բելառուսի ՄԷՀ-ի ցանցերով անդամ պետությունների միջև իրականացվող՝ ՄՊՀ-ի հանրագումարային ծավալն է:

4.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում.

4.2.1. Ղազախստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ էլեկտրական էներգիայի հաղորդման, այդ թվում՝ անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ծառայությունների սակագինը, որը կիրառվում է ազգային էլեկտրական ցանցերով (այսուհետ՝ ԱԷՑ) էլեկտրական էներգիայի հաղորդում իրականացնող սպառողների համար, հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$T = \frac{Z+P}{W_{գում}} \left(\text{տենգե} / \text{կՎտ.ժ} \right), \text{ որտեղ՝}$$

T - էլեկտրական էներգիայի հաղորդման, այդ թվում՝ անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ծառայությունների սակագինն է, որը կիրառվում է ԱԷՑ ցանցերով էլեկտրական էներգիայի հաղորդում, այդ թվում՝ ՄՊՀ իրականացնող սպառողների համար (տենգե/կՎտ.ժ).

Z - էլեկտրական էներգիայի հաղորդման, այդ թվում՝ ՄՊՀ-ի ծառայությունների համար, օրենսդրությամբ սահմանված կարգով որոշվող Ղազախստանի Հանրապետության ԱԷՑ ընդհանուր ծախսերն են (միլիոն տենգե).

P - շահույթի մակարդակն է, որն անհրաժեշտ է էլեկտրական էներգիայի հաղորդման, այդ թվում՝ ՄՊՀ-ի ծառայությունների մատուցման դեպքում ԱԷՑ-ի արդյունավետ գործունեության համար, որը որոշվում է Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով (միլիոն տենգե).

$W_{գում}$ - էլեկտրական էներգիայի հաղորդման հանրագումարային ծավալն է, որը հայտագրված է պայմանագրերով (միլիոն կՎտ.ժ):

4.2.2. Ղազախստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ԱԷՑ-ով էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման սակագինը հաշվարկելիս, որպես սակագնային եկամուտ ներառվում են ԱԷՑ-ով էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման ընդհանուր ծախսերը և շահույթի մակարդակը, որը էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման դեպքում անհրաժեշտ է արդյունավետ գործունեության համար (որոշվում է ելնելով ակտիվների գործածության մեջ դրված լինելու հանգամանքից):

էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների սակագներում ներառվող ծախսերը որոշվում են Ղազախստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

4.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում.

4.3.1. Ընդհանուր դրույթներ

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ ՄԱԷՑ-ով էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման սակագինը սահմանվում է 2 տեսակի դրույքաչափերով՝ էլեկտրական ցանցերի պահպանման դրույքաչափեր և ՄԱԷՑ-ում էլեկտրական էներգիայի կորուստների փոխհատուցման դրույքաչափեր:

Նմանապես, Ռուսաստանի Դաշնության ՄԷՀ-ով անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ծառայությունների մատուցման սակագնում ներառվող ծախսերի տարրերը ստորաբաժանվում են որպես անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ծառայությունների սակագնում ներառված ծախսերի տարր՝ ՄԱԷՑ-ի օբյեկտների պահպանման համար և որպես անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ծառայությունների սակագնում ներառված ծախսերի տարր՝ ՄԱԷՑ-ում էլեկտրական էներգիայի և հզորության կորուստների փոխհատուցման համար:

4.3.2. Անդամ պետությունների միջև ՄՊՀ իրականացնելիս բնական մենաշնորհի սուբյեկտների սակագներում ներառվող ծախսերի որոշումը.

4.3.2.1. Անդամ պետությունների միջև ՄՊՀ ծառայությունների՝ ՄԱԷՑ-ի օբյեկտների պահպանման համար սակագնի ծախսերի տարրերի ցանկը.

ՄԱԷՑ-ի օբյեկտների պահպանման դրույքաչափով վճարվում է անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի համար հայտագրված հզորությունը, որը որոշվում է այն պետության էլեկտրաէներգետիկական համակարգից դուրս եկող էլեկտրաէներգիայի փոխհոսքի «ելքի կետում», որի էլեկտրական ցանցերով իրականացվում է անդամ պետությունների միջև ՄՊՀ-ն:

ՄԱԷՑ-ի օբյեկտների պահպանման համար դրույքաչափերը հաշվարկելիս հաշվի են առնվում ազգային կարգավորող մարմնի կողմից համապատասխան հաշվարկային ժամանակաշրջանի համար սահմանված հետևյալ տնտեսապես հիմնավորված ծախսերը՝

- գործառնական ծախսեր.
- ոչ կառավարելի (ոչ գործառնական) ծախսեր.
- ներդրված կապիտալի վերադարձելիություն (մաշվածության մասով հատկացումներ) ներդրումների համար.
- ներդրված կապիտալի եկամտաբերություն:

4.3.2.2. Անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ծառայությունների՝ ՄԱԷՑ-ում էլեկտրական էներգիայի և հզորության կորուստների փոխհատուցման համար սակագնի ծախսերի տարրերի ցանկը:

ՄԱԷՑ-ում էլեկտրական էներգիայի և հզորության կորուստների փոխհատուցման համար ծախսերը որոշվում են՝ ելնելով ՄԱԷՑ-ում էլեկտրական էներգիայի նորմատիվ կորուստներից՝ նվազեցված էլեկտրական էներգիայի կորուստնեի ծավալի չափով, որոնք հաշվի են առնվել էլեկտրական էներգիայի հավասարակշիռ գների մեջ, և էլեկտրական էներգիայի ու հզորության՝ յուրաքանչյուր հաշվարկային ժամանակաշրջանի արդյունքներով մեծածախ շուկայում ձևավորված առքի գներից՝ ըստ մատակարարման կետերի խմբի (ՄԿԽ), որը համապատասխանում է այն պետության էլեկտրաէներգետիկական համակարգից էլեկտրական

էներգիայի փոխհոսքի «ելքի կետին», որի էլեկտրական ցանցերով է իրականացվում անդամ պետությունների միջև ՄՊՀ-ն՝ հաշվի առնելով համապատասխան ազգային շուկայի ենթակառուցվածքային կազմակերպությունների ծառայությունների արժեքը:

5. Բնական մենաշնորհի սուբյեկտների սակագներում չներառվող՝ ՄՊՀ-ի իրականացման հետ կապված տարրերի ցանկ

5.1. Բելառուսի Հանրապետության տարածքում.

Բելառուսի Հանրապետությունում համակարգային ծախսերը՝ $Ծ_{համ}$, ներառում են իրավասու պետական մարմնի կողմից հաստատվող գեներացման հզորությունների պահուստի պահպանման՝ անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ապահովման նպատակով ծախսերը՝ հաշվի առնելով Բելառուսի ՄԷՀ-ի ցանցերով հաղորդվող հզորության ընդհանուր մեծության մեջ ՄՊՀ հզորության մասնաբաժինը, ինչպես նաև անդամ պետությունների միջև ՄՊՀ տեխնիկական կարգավարացման ծառայությունների ծախսերը:

5.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում.

Անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ծառայությունների սակագնի ձևավորման ժամանակ հաշվի չեն առնվում Ղազախստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ծախսերը:

5.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում.

էլեկտրական էներգիայի (հզորության) փոխարինման ապահովման նպատակով՝ անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի ենթակա էլեկտրական էներգիայի ծավալները պետք է հաշվի առնվեն մեծածախ շուկայում գնային առաջարկներ ներկայացնելիս, մրցակցային պայմաններում մեկ օր առաջ ներկայացրած գնային հայտերի մեջ ընտրություն կատարելիս, շուկայական գները և Ռուսաստանի ՄԷՀ-ի սահմանի (սահմանների) տարբեր կետերում էլեկտրական էներգիայի (հզորության) հավասար ծավալների փոխկապակցված և միաժամանակյա մատակարարումների հետ կապված համակարգային ծախսերի մասնաբաժինը որոշելիս: Համակարգային ծախսերը ձևավորվում են հետևյալ տարրերից՝

5.3.1. Ռուսաստանի ՄԷՀ-ով անդամ պետությունների միջև ՄՊՀ իրականացնելիս էլեկտրական էներգիայի բեռնվածքային կորուստների արժեքի և համակարգային սահմանափակումների հետ կապված փոխհատուցման տարր (հանգուցային գների տարբերություն)՝

$$S^1_m = \sum_{hcm} \left(\max \left[(\lambda_h^{ելք} - \lambda_h^{մտք}); 0 \right] \times V_h^{ՄՊՀ} \right), \text{ որտեղ}$$

$\lambda_h^{ելք}$ - այն գինն է, որը ձևավորվել է ՄՊՀ շրջանակներում Ռուսաստանի ՄԷՀ-ից էլեկտրաէներգիայի փոխհոսքի «ելքի կետին» համաատասխանող արտահանում-ներմուծում հատվածքում «m» ամսվա «h» ժամին մեկ օր առաջ տրված գնային հայտերի մրցակցային ընտրության արդյունքներով,

$\lambda_h^{մտք}$ - այն գինն է, որը ձևավորվել է ՄՊՀ շրջանակներում Ռուսաստանի ՄԷՀ-ից էլեկտրաէներգիայի փոխհոսքի «մուտքի կետին» համաատասխանող արտահանում-ներմուծում հատվածքում «m» ամսվա «h» ժամին մեկ օր առաջ տրված գնային հայտերի մրցակցային ընտրության արդյունքներով,

$V_h^{ՄՊՀ}$ - «m» ամսվա «h» ժամին Ռուսաստանի ՄԷՀ-ով ՄՊՀ-ի ծավալն է:

5.3.2. ՄՊՀ ապահովող Ռուսաստանի ՄԷՀ-ի աշխատանքի ռեժիմների իրագործման համար պահանջվող՝ գեներացման հզորությունների պահուստի առկայության անհրաժեշտության հետ կապված տարր՝

$$S^2_m = ՊԻ_{Կm} \times \left(Գր^{պահ}_{պլան.ԱՓԳi} - 1 \right) \times Գն^{ԱՓԳi}_{ՀՄԸնախն.}, \text{ որտեղ}$$

$ПИЧ_m$- պիկային հզորությունն է, որը համապատասխանում է «m» ամսվա կտրվածքով ՄՊՀ-ի հայտագրված առավելագույն ժամային ծավալին,

$Գր^{պահ}_{պլան.ԱՓԳi}$ - ԱՓԳi-ում պահուստավորման պլանային գործակիցն է, որը համակարգային օպերատորի կողմից հաշվի է առնվում համապատասխան տարվա համար հզորության մրցակցային ընտրության անցկացման ժամանակ.

$Գն^{ԱՓԳi}_{ՀՄԸնախն.}$- համապատասխան տարվա համար ԱՓԳi-ում սպառողների համար մրցակցային ընտրության նախնական գինն է (սահմանվում է համակարգային օպերատորի կողմից էլեկտրական էներգիայի և հզորության մեծածախ շուկայի կանոններին համապատասխան).

ԱՓԳi - ազատ փոխհոսքի գոտին է, որին են պատկանում ՄՊՀ իրականացնելիս Ռուսաստանի ՄԷՀ-ից էլեկտրական էներգիայի «ելքի կետին» համապատասխանող մատակարարման կետերը:

ՄՊՀ-ի արժեքը որոշելիս հաշվի է առնվում հզորության մրցակցային ընտրության արդյունքներով որոշված՝ ՄՊՀ-ի «ելքի» և «մուտքի» կետերին համապատասխանող ազատ փոխհոսքի գոտիներում (ազատ փոխհոսքի գոտիների խմբերում) գնորդների համար պլանային գների միջև տարբերությունը:

6. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ՄՊՀ-ի պայմանագրային ձևակերպմանը ներկայացվող պահանջներ

6.1. Բելառուսի Հանրապետության տարածքում.

Բելառուսի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգով անդամ պետությունների միջև ՄՊՀ-ն իրականացվում է ՄՊՀ-ի համար նախատեսվող էլեկտրաէներգիայի և հզորության ծավալների համաձայնեցման պայմանով՝ սույն մեթոդաբանության 1-ին բաժնի և 2-րդ բաժնի 2.4, 2.5 և 2.6 կետերին Բելառուսի Հանրապետության լիազորված կազմակերպության հետ ՄՊՀ-ի մասին պայմանագրերին համապատասխան:

Յուրաքանչյուր պայմանագրով ՄՊՀ-ի ծառայությունների արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$Ա^{ՄՊՀ}_{} = Ծ_{գանգ} + Ծ_{հաճ}$

6.2. Ղազախստանի Հանրապետության տարածքում.

Ղազախստանի Հանրապետության տարածքում անդամ պետությունների միջև ՄՊՀ-ն իրականացվում է էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման պայմանագրերի հիման վրա, որոնք կնքվում են Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատվող տիպային ձևով: Ընդ որում, ՄՊՀ-ի իրականացման համար պայմանագրերում կարող են հաշվի առնվել նման հաղորդման առանձնահատկությունները:

6.3. Ռուսաստանի Դաշնության տարածքում.

Ռուսաստանի ՄԷՀ-ով անդամ պետությունների միջև ՄՊՀ-ն իրականացվում է հետևյալ պայմանագրերի առկայության դեպքում՝

6.3.1. Բելառուսի Հանրապետության կամ Ղազախստանի Հանրապետության անունից լիազոր կազմակերպության հետ առևտրային գործակալի պայմանագրեր՝ բնական մենաշնորհի ծառայությունների հասանելիության և Ռուսաստանի ՄԷՀ-ի սահմանին (սահմաններին) մատակարարման տարբեր կետերում ՄՊՀ իրականացնելու համար հայտագրված էլեկտրական էներգիայի (հզորության) հավասար ծավալների փոխկապակցված և միաժամանակյա մատակարարման ապահովման նպատակով:

Ռուսաստանի ՄԷՀ-ով անդամ պետությունների միջև ՄՊՀ-ի արժեքը «m» ամսում այդպիսի պայմանագրերում սահմանվում է հետևյալ բանաձևով՝

$Q_m^{ՍՊՀ} = Q_m^{ՖՀԿ}ՄՊՀ + Q_m^{ՀՕ}ՄՊՀ + Q_m^{ԱՕ}ՄՊՀ$, որտեղ

$Q_m^{ՖԿ}$ՄՊՀ - ՄԱԷՑ կառավարման կազմակերպության ծառայությունների արժեքն է, որը վճարվում է Ռուսաստանի օրենսդրությանը համապատասխան.

$Q_m^{ՀՕ}$ՄՊՀ - համակարգային օպերատորի ծառայությունների արժեքն է, որը վճարվում է Ռուսաստանի օրենսդրությանը համապատասխան.

$Q_m^{ԱՕ}$ՄՊՀ - էլեկտրական էներգիայի (հզորության) մեծածախ շուկայում գործողությունների հետ կապված ծառայությունների արժեքն է, որոնք մատուցվում են Ռուսաստանի ՄԷՀ-ով ՄՊՀ-ի հետ միասին՝ «m» ամսում.

$Q_m^{ԱՕ}$ՄՊՀ= S^1_m + S^2_m + $Q_m^{ԱՀԱ}$ՄՊՀ+ $Q_m^{ՖՀԿ}$ՄՊՀ +$Q_m^{Գործակալ}$ՄՊՀ, որտեղ

$Q_m^{ԱՀԱ}$ՄՊՀ - էլեկտրական էներգիայի, հզորության և մեծածախ շուկայում շրջանառության համար թույլատրելի այլ ապրանքների և ծառայությունների մեծածախ առևտրի կազմակերպման համար առևտրային օպերատորի ծառայությունների արժեքը՝ «m» ամսում.

$Q_m^{ՖՀԿ}$ՄՊՀ - պահանջների և պարտավորությունների հաշվարկման համալիր ծառայությունների արժեքն է, որը որոշվում է «Մեծածախ շուկայի առևտրային համակարգին միանալու մասին պայմանագրով՝ «m» ամսում.

$Q_m^{Գործակալ}$ՄՊՀ - առևտրային գործակալի ծախսերն են, որոնք երկկողմ կարգով սահմանվում են առևտրային գործակալի կողմից կնքվող պայմանագրերում:

6.3.2. Անդամ պետությունների այն կազմակերպությունների միջև էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին պայմանագրեր (տեխնիկական համաձայնագրեր), որոնք իրականացնում են էլեկտրաէներգետիկայի ոլորտում օպերատիվ-կարգավարական կառավարման և ազգային էլեկտրական ցանցով էլեկտրական էներգիայի հաղորդման (փոխադրման) գծով գործառույթներ.

6.3.3. էլեկտրական էներգիայի առք ու վաճառքի պայմանագրեր, որոնց նպատակը ՄՊՀ հատվածքներով փաստացի փոխհոսքերի մեծությունների՝ պլանայինից այն շեղումների փոխհատուցումն է, որոնք կարող են առաջանալ անդամ պետությունների սահմաններով անդամ պետությունների լիազորված տնտեսավարող սուբյեկտների միջև էլեկտրական էներգիայի փոխադրման ժամանակ:

7. Անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների միջև էլեկտրական էներգիայի միջպետական փոխհոսքերի փաստացի ժամային ծավալների մասին առևտրային հաշվառման տվյալների փոխանակումը կազմակերպելու կարգը

7.1. Սույն կարգով սահմանվում են առևտրային հաշվառման ժամային տվյալների ստացման մասով երկկողմ փոխգործակցության հիմնական ուղղությունները՝ Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև էլեկտրահաղորդման միջպետական գծերով (ԷՀՄՊԳ) էլեկտրական էներգիայի օպերատիվ[1] ժամային փոխհոսքի սահմանման կարգը՝ հաշվի առնելով առևտրային հաշվառման ժամային տվյալների և առևտրային հաշվառման նշված տվյալների՝ մինչև մատակարարման կետերում մեծությունների լրահաշվարկման համաձայնեցված մեթոդիկաների օգտագործումը. առևտրային հաշվառման տվյալների փոխանակման և մատակարարման կետերի մեծություններին բերված առևտրային հաշվառման տվյալների համաձայնեցման ընթացակարգերը սահմանող կարգը:

ԷՀՄՊԳ-ով էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման ժամային տվյալների ձևավորման և փոխանակման պայմաններն ու կարգը սահմանվում են ԷՀՄՊԳ-ի հաշվառման կետերով էլեկտրաէներգիայի փոխհոսքերի ժամային մեծությունների մասին տվյալների փոխանակման վերաբերյալ երկկողմ համաձայնագրերին համապատասխան:

7.2. Տեղեկությունների օպերատիվ փոխանակումը:

Ամենօյա (կամ անդամ պետությունների կողմից համաձայնեցված այլ ժամանակահատվածի) կտրվածքով անդամ պետությունների համապատասխան տնտեսավարող սուբյեկտները կազմում են ԷՀՄՊԳ-ով էլեկտրաէներգիայի ժամային փոխհոսքերի մեծությունները, փոխանակում են ստացված տվյալները, կատարում են համապատասխան հաշվարկներ, գնահատում են համապատասխան տվյալները:

ԷՀՄՊԳ-ով հաղորդվող էլեկտրաէներգիայի ժամային փոխհոսքերի արժեքներ պարունակող տեղեկությունների օպերատիվ փոխանակման համար կիրառվում են տվյալների հաղորդման համաձայնեցված ձևաչափեր:

7.3. Ժամային մեծությունների հաշվարկը ըստ մատակարարման կետի:

Ժամային մեծությունների՝ ըստ մատակարարման կետի հաշվարկն իրականացվում է փոխանցված և ստացված էլեկտրաէներգիայի փաստացի ծավալների հաշվարկման մեթոդաբանությամբ, որի մասին համաձայնություն է ձեռք բերվում երկկողմանի կերպով:

8. Անդամ պետությունների միջպետական էլեկտրահաղորդման գծերով փաստացի սալդո-փոխհոսքի որոշման կարգը

Սույն կարգը, որով որոշվում են օրացուցային ամսվա ընթացքում էլեկտրական էներգիայի միջպետական հատվածքներով փոխանցվող փաստացի ծավալները, նախատեսված է անդամ պետությունների լիազորված կազմակերպությունների կողմից օգտագործվելու համար:

Անդամ պետությունների միջպետական հատվածքներով փոխանցվող էլեկտրական էներգիայի փաստացի սալդո-փոխհոսքը, որոշվում է որպես ստացած (WU1_սահմ) և (կամ) հաղորդած (WՀ1_սահմ) էլեկտրական էներգիայի քանակության հանրահաշվական գումար՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար մատակարարման յուրաքանչյուր կետում (WUսալդո_սահմ):

Օրացուցային ամսվա համար մաքսային սահման (մատակարարման կետ) բերված էլեկտրական էներգիայի արժեքները՝ «ստացում», «հաղորդում» ռեժիմներով աշխատանքում ներառված բոլոր ԷՀՄՊԳ-ների մասով, և սալդոն հաշվարկվում են հետևյալ բանաձևերով՝

$$WU1_{\text{սահմ}} = \sum W(\text{փաստU1})i$$

$$WՀ2_{\text{սահմ}} = \sum W(\text{փաստՀ1})i$$

$$WU_{\text{սալդոսահմ}} = WU1_{\text{սահմ}} + WՀ1_{\text{սահմ}} \text{, որտեղ}$$

W(փաստU1)i - ԷՀՄՊԳ-ով օրացուցային ամսվա ընթացքում մատակարարման յուրաքանչյուր կետով ստացված էլեկտրական էներգիայի փաստացի քանակությունն է: Սալդո-փոխհոսքի հաշվարկի բանաձևի համար արժեքը վերցվում է փոխհոսքի ուղղության նշանով.

W(փաստՀ1)i - ԷՀՄՊԳ-ով օրացուցային ամսվա ընթացքում մատակարարման յուրաքանչյուր կետով հաղորդված էլեկտրաէներգիայի փաստացի քանակությունն է: Սալդո-փոխհոսքի հաշվարկման բանաձևի համար արժեքը վերցվում է փոխհոսքի ուղղության նշանով.

R - ԷՀՄՊԳ-ի քանակությունն է միջպետական հատվածքում, որոնք օրացուցային ամսվա ընթացքում ներգրավվել են աշխատանքում:

[1] Օպերատիվ ժամային փոխհոսքեր նշանակում է առևտրային հաշվառման ժամային տվյալներ (կեսժամյա կամ մեկժամյա կտրվածքով), որոնք ստացվել են էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման ավտոմատացված համակարգերի (ԷԱՀԱՀ) փոխհոսքում ներառված հաշվառման բոլոր կետերի մասով՝ առևտրային հաշվառման համալիր տեխնիկական հնարավորությունների օգտագործմամբ:

9. Միության շրջանակում ՄՊՀ իրականացնելիս միջպետական հատվածքներում փաստացի փոխհոսքերի՝ պլանայինից շեղումների ծավալների և արժեքի հաշվարկի կարգը

Միջպետական հատվածքներում փաստացի մատակարարումները ներառում են հետևյալ տարրերը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ծավալները, անդամների տնտեսավարող սուբյեկտների կողմից կնքված առևտրային պայմանագրերում ներառված էլեկտրաէներգիայի ծավալները, վթարային օգնության ծավալները և պլանայինից սալդո-փոխհոսքերի փաստացի արժեքների շեղումով պայմանավորված ծավալները:

Պլանավորված մեծություններից սալդո-փոխհոսքի փաստացի ժամային շեղումների մեծությունների հաշվարկը և շեղումների ծավալների որոշումը՝ կախված դրանց սկզբնավորումից՝ իրականացվում է ՄԱԷՑ-ի կառավարման կազմակերպության, Ռուսաստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի, Բելառուսի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի գործառույթներն իրականացնող կազմակերպության, Ղազախստանի ՄԷՀ-ի համակարգային օպերատորի կողմից, հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- Ռուսաստանի ՄԷՀ-ով ՄՊՀ իրականացնելիս ՄՊՀ-ի ծավալների ժամային մեծություններն ընդունվում են որպես համապատասխան պլանային արժեքներին հավասար, որոնք հաշվի են առնվել կարգավարական օրական գրաֆիկի մեջ.
- հաշվետու ժամանակահատվածի յուրաքանչյուր ժամի համար առևտրային պայմանագրերով էլեկտրաէներգիայի մատակարարման փաստացի ժամային ծավալներն ընդունվում են որպես համապատասխան պլանային մեծություններին հավասար, որոնք հաշվի են առնվել կարգավարական օրական գրաֆիկի մեջ՝ հաշվի առնելով սահմանված կարգով համաձայնեցված ճշգրտումները.
- ժամային շեղումների ծավալները, որոնք կարգավորվում են երրորդ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ հարաբերությունների շրջանակներում (արտաքին հաշվեկշռում), հաշվի են առնվում Միության շրջանակներում շեղումների ծավալներում: Արտաքին հաշվեկշռման ծավալների որոշման կարգը համաձայնեցվում է անդամ պետությունների սահմանակից էլեկտրաէներգետիկական համակարգերի համակարգային օպերատորների հետ (ՄԱԷՑ կառավարման կազմակերպության մասնակցությամբ).
- վթարային օգնության տրամադրման ծավալները սահմանվում են վթարային օգնություն տրամադրելու դեպքում էլեկտրական էներգիայի առք ու վաճառքի պայմանագրերի պայմաններով, որոնք կնքվում են ազգային ներքին շուկաների սուբյեկտների միջև:

Ժամային շեղումների ծավալները ենթակա են անդամ պետությունների լիազորված տնտեսավարող սուբյեկտների միջև ֆինանսական կարգավորման՝ այն պայմանագրերին համապատասխան, որոնց կնքումը ՄՊՀ-ի ապահովման համար նախատեսվում է սույն մեթոդաբանության 6-րդ բաժնով:

Ելնելով էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին պայմանագրերի (տեխնիկական համաձայնագրերի) պայմանների կատարման անհրաժեշտությունից, այդ թվում՝ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերում հաճախականության կարգավորման և միջպետական հատվածքներում համաձայնեցված սալդո-փոխհոսքերի պահպանման մասով, շեղումների արժեքով պետք է փոխհատուցվի էլեկտրական էներգիայի (հզորության) ազգային ներքին շուկաների սուբյեկտների հիմնավորված ծախսերը, որոնք նրանք կրում են էլեկտրական էներգիայի (հզորության) ազգային շուկայում համակարգերի հաշվեկշռման մասով հարաբերություններում մասնակցության արդյունքում:

Շեղումների արժեքի հաշվարկը պետք է կատարվի՝ հաշվի առնելով էլեկտրական էներգիայի (հզորության) առքուվաճառքի ծավալների հաշվառման հատուկ կարգը՝ ուղղված էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի տեխնոլոգիական ապահովմանն այն ծավալներով, որոնք չեն գերազանցում էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին պայմանագրերում (տեխնիկական համաձայնագրերում) կամ անդամ պետությունների էլեկտրաէներգիայի ոլորտում փոխհարաբերությունները կարգավորող այլ պայմանագրերում սահմանված մեծությունները:

Շեղումների փոխհատուցման նպատակով գնված և վաճառված էլեկտրական էներգիայի ու հզորության հաշվարկի ժամանակ օգտագործվող քանակական և գնային պարամետրերը հաստատվում են Ռուսաստանի Դաշնության առևտրային ենթակառուցվածքի կազմակերպությունների հաշվետու փաստաթղթերով:

Պայմանագրերով իրականացվող մատակարարումների արժեքը հաշվարկելիս, չի թույլատրվում կատարել էլեկտրական էներգիայի (հզորության) ծավալների կրկնակի հաշվառում:

ՀԱՎԵԼՎԱԾ 22
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության կանոնների, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքների մասին

1. «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 79-րդ, 80-րդ և 83-րդ հոդվածների համաձայն՝ սույն Արձանագրությամբ սահմանվում են գազի ոլորտում համագործակցության հիմքերը, գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման սկզբունքներն ու պայմանները, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմունքները՝ անդամ պետությունների պահանջարկները բավարարելու նպատակով:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«գազի նկատմամբ ներքին պահանջարկ»՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի տարածքում սպառման համար անհրաժեշտ գազի ծավալները,

«գազ»՝ գազանման ածխաջրածնի և այլ գազերի վառելիքային խառնուրդ, որն արդյունահանվում և (կամ) արտադրվում է անդամ պետությունների տարածքներում, և հիմնականում բաղկացած է խտացված գազանման վիճակում գազափոխադրման համակարգերով փոխադրվող մեթանից,

«գազ արդյունահանող անդամ պետություններ»՝ անդամ պետություններ, որոնց տարածքում ավելի քիչ գազ է սպառվում, քան արդյունահանվում և արտադրվում է,

«գազ սպառող անդամ պետություններ»՝ անդամ պետություններ, որոնց տարածքում ավելի շատ գազ է սպառվում, քան արդյունահանվում և արտադրվում է,

«գազափոխադրման համակարգեր»՝ շինություններ գազի փոխադրման համար՝ ներառյալ մայրուղային (մագիստրալային) գազատարների շինությունները և միասնական տեխնոլոգիական գործընթացով դրանց հետ կապված օբյեկտները՝ բացառությամբ գազաբաշխման ցանցերի,

«գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիություն»՝ անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից կառավարվող գազափոխադրման համակարգերի օգտագործման իրավունքի շնորհում՝ գազափոխադրման համար,

«գազի հավասարակամտաբեր գներ»՝ գազի մեծածախ գներ, որոնք ձևավորվել են ներքին պահանջարկը բավարարելու համար՝ ելնելով, այդ թվում՝ հետևյալ սկզբունքներից.

գազ արդյունահանող անդամ պետությունների համար շուկայական մեծածախ գնի ձևավորումն իրականացվում է արտաքին շուկայում գազի վաճառքի գնից հանելով այդ պետություններում գանձվող տուրքերի, վճարների, հարկերի, այլ վճարումների արժեքները, ինչպես նաև գազ արդյունահանող պետությունների սահմաններից դուրս գազի փոխադրման արժեքը՝ հաշվի առնելով գազի մատակարարի արտաքին և ներքին շուկաներում գազի փոխադրման արժեքի տարբերությունը,

գազ արդյունահանող անդամ պետությունների համար շուկայական մեծածախ գին, որի ձևավորումն իրականացվում է գազ արդյունահանող պետության արտադրողի կողմից արտաքին շուկայում գազի վաճառքի գնից հանելով տուրքերը, վճարները, հարկերը, այլ վճարումներ, ինչպես նաև գազ արդյունահանող անդամ պետությունների սահմաններից դուրս գազի փոխադրման արժեքը,

«գազի փոխադրման ծառայություններ»՝ գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ծառայություններ,

«լիազոր մարմիններ»՝ սույն Արձանագրության կատարումը հսկելու համար անդամ պետությունների կողմից լիազորված մարմիններ:

3. Անդամ պետություններն իրականացնում են Միության՝ գազի ընդհանուր շուկայի փուլ առ փուլ ձևավորումը, ինչպես նաև ապահովում են անդամ պետությունների գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիությունը՝ ելնելով հետևյալ հիմնական սկզբունքներից՝

1) փոխադարձ առևտրում ներմուծման և արտահանման մաքսատուրքերի (համարժեք նշանակություն ունեցող այլ տուրքեր, հարկեր և վճարներ) չկիրառում,

2) անդամ պետությունների գազի ներքին պահանջարկի առաջնահերթ բավարարում,

3) անդամ պետությունների գազի ներքին պահանջարկը բավարարելու նպատակով մատուցվող գազի փոխադրման ծառայությունների գների ու սակագների սահմանում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան,

4) անդամ պետություններում գազին առնչվող նորմերի ու չափանիշների միասնականացում,

5) բնապահպանական անվտանգության ապահովում,

6) տեղեկատվության փոխանակում այն տեղեկությունների հիման վրա, որոնք գազի ներքին սպառման վերաբերյալ տվյալներ են պարունակում:

4. Գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների՝ սույն Արձանագրության պայմաններին համապատասխան հասանելիությունն ապահովվում է միայն անդամ պետությունների տարածքներից առաջացած գազի նկատմամբ: Սույն Արձանագրության դրույթները չեն տարածվում գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիությանն առնչվող հարաբերությունների վրա՝ երրորդ պետությունների տարածքներից ծագող գազի մասով, և Միության տարածքից ու Միության տարածք գազի փոխադրման ոլորտին առնչվող հարաբերությունների վրա:

5. Սույն Արձանագրությամբ նախատեսված՝ անդամ պետությունների գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման պայմանն է անդամ պետությունների կողմից համալիր միջոցառումների իրականացումը, որը ներառում է՝

տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծումն այն տեղեկությունների հիման վրա, որոնք տվյալներ են պարունակում գազի ներքին սպառման վերաբերյալ,

ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների պատրաստման մեխանիզմների ստեղծումը՝ սույն Արձանագրությանը համապատասխան,

անդամ պետություններում գազին առնչվող նորմերի ու չափանիշների միասնականացումը,

անդամ պետությունների տարածքներում գազի վաճառքի առևտրային շահութաբերությունն ապահովող շուկայական գների պահպանումը:

Անդամ պետությունների կողմից սույն կետում նշված համալիր միջոցառումների իրականացման ավարտը ձևակերպվում է համապատասխան արձանագրությամբ:

6. Անդամ պետությունները ձգտում են գազի հավասարակշռված գների հաստատմանը բոլոր անդամ պետությունների տարածքներում:

7. Սույն Արձանագրության 5-րդ հոդվածում շարադրված համալիր միջոցառումների՝ բոլոր անդամ պետությունների կողմից իրականացվելուց հետո անդամ պետությունները, եղած տեխնիկական հնարավորությունների, գազափոխադրման համակարգի ազատ հզորությունների սահմաններում, հաշվի առնելով Միությունում գազի համաձայնեցված ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը և հիմնվելով տնտեսավարող սուբյեկտների իրավաքաղաքացիական պայմանագրերի վրա, անդամ պետությունների գազի ներքին պահանջարկը բավարարելու նպատակով նախատեսված՝ այլ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից գազի փոխադրման համար անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի հասանելիությունն ապահովում են հետևյալ կանոններով՝

այլ անդամ պետության գազափոխադրման համակարգը հասանելի դարձնել անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար այնպիսի հավասար պայմաններով՝ ներառյալ սակագները, որոնցից օգտվում են նաև այն անդամ պետության գազափոխադրման համակարգի սեփականատեր չհանդիսացող գազարտադրողները, որի տարածքով իրականացվում է փոխադրումը,

գազի փոխադրման ծավալները, գները և սակագները, ինչպես նաև գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման առևտրային և այլ պայմանները սահմանվում են անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված իրավաքաղաքացիական պայմանագրերով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Անդամ պետություններն աջակցում են իրենց տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների միջև «Մայրուղային գազատարներով գազի փոխադրման մասին» գործող պայմանագրերի պատշաճ կատարմանը:

8. Գազի, նավթի ու նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների ձևավորման մեթոդաբանության համաձայն՝ անդամ պետությունների լիազոր մարմինները Հանձնաժողովի մասնակցությամբ մշակում ու համաձայնեցնում են Միությունում գազի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը (ներքին պահանջարկի բավարարման համար նախատեսված արտադրություն, սպառում ու մատակարարումներ, այդ թվում՝ փոխադարձ), որը կազմվում է 5 տարով և հստակեցվում՝ մինչև յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 1-ը:

Հաշվի առնելով գազի համաձայնեցված հաշվեկշիռը՝ անդամ պետությունների ներքին շուկաների համար հասանելի են դարձվում գազափոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունները:

9. Անդամ պետությունները ձգտում են երկարաժամկետ փոխշահավետ համագործակցություն զարգացնել հետևյալ ոլորտներում՝

1) գազի փոխադրում անդամ պետությունների տարածքներով,

2) գազատարների, գազի ստորգետնյա պահեստարանների և գազի պահուստների ենթակառուցվածքի այլ օբյեկտների շինարարություն, վերակառուցում և շահագործում,

3) անդամ պետությունների ներքին պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ սպասարկման ծառայությունների մատուցում:

10. Անդամ պետություններն ապահովում են անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի գործունեությունը կանոնակարգող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի միասնականացումը:

11. Սույն Արձանագրության դրույթները չեն ազդում անդամ պետությունների՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքների և պարտավորությունների վրա, որոնց մասնակիցն են իրենք:

Գազափոխադրման ոլորտում անդամ պետությունների՝ Պայմանագրով չկարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառվում է անդամ պետությունների օրենսդրությունը:

12. Պայմանագրի XVIII բաժնի դրույթները կիրառվում են գազի փոխադրում իրականացնող՝ բնական մենաշնորհի սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով սույն Արձանագրությամբ նախատեսված առանձնահատկությունները:

13. Պայմանագրի 83-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ Միությունում գազի ընդհանուր շուկայի ձևավորման մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու ժամանակահատվածի ընթացքում գործում են գազի մատակարարման ոլորտում անդամ պետությունների միջև կնքված երկկողմ պայմանագրերը, եթե համապատասխան անդամ պետություններն այլ բան չպայմանավորվեն:

ՀԱՎԵԼՎԱԾ 23
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների կազմակերպման, կառավարման, գործունեության և զարգացման կարգի մասին

1. «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 79-րդ, 80-րդ և 84-րդ հոդվածների համաձայն՝ սույն Արձանագրությամբ սահմանվում են նավթային ոլորտում համագործակցության հիմքերը, Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկայի ձևավորման սկզբունքները, ինչպես նաև նավթի ու նավթամթերքների փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման սկզբունքները:

Սույն Արձանագրությունը մշակվել է՝ հաշվի առնելով «Եվրասիական տնտեսական համայնքի անդամ պետությունների ընդհանուր էներգետիկ շուկայի ձևավորման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի հայեցակարգի դրույթները՝ անդամ պետությունների վառելիքաէներգետիկ համալիրների ներուժի արդյունավետ օգտագործման, ինչպես նաև ազգային տնտեսությունները նավթով և նավթամթերքներով ապահովելու նպատակներով:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«նավթի և նավթամթերքների փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիություն»՝ անդամ պետությունների բնական մենաշնորհի

սուբյեկտների կողմից կառավարվող՝ նավթի ու նավթամթերքների փոխադրման համակարգերի օգտագործման իրավունքի տրամադրում նավթի ու նավթամթերքների փոխադրման նպատակով,

«նավթ և նավթամթերքներ»՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնին համապատասխան սահմանված ապրանքներ,

«անդամ պետությունների նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկա»՝ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների առևտրատնտեսական հարաբերությունների ամբողջություն անդամ պետությունների տարածքներում նավթի և նավթամթերքների արդյունահանման, փոխադրման, մատակարարման, վերամշակման և իրացման ոլորտում, որոնք անհրաժեշտ են անդամ պետություններին՝ դրանց պահանջարկը բավարարելու համար,

«Միությունում նավթի և նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռներ»՝ գազի, նավթի և նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների ձևավորման մեթոդաբանությամբ սահմանվող կանխատեսման ցուցանիշների համակարգ,

«նավթի և նավթամթերքների փոխադրում»՝ նավթի և նավթամթերքների տեղափոխմանն ուղղված գործողությունների իրականացում ցանկացած եղանակով, այդ թվում՝ խողովակաշարային տրանսպորտի օգտագործմամբ՝ ուղարկողից դրա ընդունման կետից մինչև ստացողին հանձնելու կետը՝ ներառյալ դատարկելը, լցնելը, այլ փոխադրամիջոցի վրա վերաբեռնելը, պահելը, խառնելը:

3. Միությունում նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաներ ձևավորելիս՝ անդամ պետություններն առաջնորդվում են հետևյալ հիմնական սկզբունքներով՝

1) փոխադարձ առևտրում քանակական սահմանափակումներ և արտահանման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր և հավաքագրումներ) չկիրառելը: Միության մաքսային տարածքի սահմաններից նավթի և նավթամթերքների արտահանման մաքսատուրքերի վճարման կարգը սահմանվում է անդամ պետությունների առանձին, այդ թվում՝ երկկողմ համաձայնագրերով,

2) անդամ պետությունների՝ նավթի և նավթամթերքների պահանջարկի առաջնահերթ բավարարումը,

3) անդամ պետություններում նավթին և նավթամթերքներին առնչվող նորմերի ու ստանդարտների միասնականացումը,

4) բնապահպանական անվտանգության ապահովումը,

5) Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների տեղեկատվական ապահովումը:

4. Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման ուղղությամբ անդամ պետություններն իրականացնում են հետևյալ համալիր միջոցառումները՝

1) տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծումը մաքսային տեղեկատվության հիման վրա, որը ներառում է փոխադրամիջոցների բոլոր տեսակներով նավթի և նավթամթերքների մատակարարումների, արտահանման ու ներմուծման մասին տվյալներ,

2) վերահսկողության մեխանիզմների ստեղծում՝ սույն Արձանագրության պայմանների խախտումը կանխելու նպատակով,

3) անդամ պետություններում նավթին և նավթամթերքներին առնչվող նորմերի ու ստանդարտների միասնականացումը:

5. Սույն Արձանագրության 4-րդ կետում նշված միջոցառումներն իրականացվում են անդամ պետությունների կամ դրանց լիազոր մարմինների կողմից համապատասխան միջազգային պայմանագրերի շրջանակներում մեթոդաբանություն կամ կանոններ պարունակող փաստաթղթեր ստորագրելու միջոցով:

6. Անդամ պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի համաձայն՝ անդամ պետությունները, իրենց ունեցած տեխնիկական հնարավորությունների սահմաններում, ապահովում են հետևյալ պայմանները՝

1) արդյունահանված նավթի և դրանից արտադրված նավթամթերքների երկարաժամկետ փոխադրումն իրականացնելու երաշխավորված հնարավորություն անդամ պետությունների տարածքներում գործող փոխադրման համակարգով, այդ թվում՝ մայրուղային (մագիստրալային) նավթամուղների և նավթամթերքների խողովակաշարերի համակարգերով,

2) անդամ պետությունների տարածքներում գրանցված տնտեսավարող սուբյեկտների համար յուրաքանչյուր անդամ պետության տարածքում տեղակայված նավթի և նավթամթերքների փոխադրման համակարգի հասանելիություն՝ նույն պայմաններով, որով դրանք հասանելի են այն անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների համար, որի տարածքով իրականացվում է նավթի և նավթամթերքների փոխադրումը:

7. Նավթամուղների ու նավթամթերքների խողովակաշարերի համակարգով նավթի և նավթամթերքների փոխադրման սակագները սահմանվում են յուրաքանչյուր անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար նավթի և նավթամթերքների փոխադրման ծառայությունների սակագները սահմանվում են այնպիսի մակարդակի վրա, որ չգերազանցեն այն անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված սակագները, որի տարածքով իրականացվում է նավթի և նավթամթերքների փոխադրումը:

Անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար նավթի և նավթամթերքների փոխադրման սակագների սահմանումը, որոնք ավելի ցածր են, քան այն անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված սակագները, որի տարածքով իրականացվում է նավթի և նավթամթերքների փոխադրումը, պարտավորություն չէ անդամ պետությունների համար:

8. Անդամ պետությունների լիազոր մարմինները, գազի, նավթի և նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների ձևավորման մեթոդաբանության համաձայն, Հանձնաժողովի մասնակցությամբ մշակում ու համաձայնեցնում են՝

յուրաքանչյուր տարի մինչև հոկտեմբերի 1-ը՝ հաջորդ օրացուցային տարվա համար Միության՝ նավթի և նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռները,

Միության՝ նավթի և նավթամթերքների երկարաժամկետ ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռներ, որոնցում, անհրաժեշտության դեպքում, կարող են ճշգրտումներ կատարվել՝ հաշվի առնելով անդամ պետություններում նավթի արդյունահանման, նավթամթերքների արտադրության և սպառման ոլորտում տեղի ունեցած փաստացի փոփոխությունները:

Անդամ պետություններից մեկի տարածքում արդյունահանված նավթի՝ այլ անդամ պետության տարածքով փոխադրման ծավալներն ու ուղղությունները, յուրաքանչյուր տարի սահմանվում են անդամ պետությունների լիազոր մարմինների միջև արձանագրություններով:

9. Անդամ պետությունների՝ նավթի և նավթամթերքների ներքին շուկաների կարգավորումն իրականացվում է անդամ պետությունների ազգային մարմինների կողմից: Անդամ պետություններն իրականացնում են միջոցառումներ նավթի և նավթամթերքների շուկաների ազատականացման համար՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան:

10. Սույն Արձանագրության դրույթները չեն ազդում անդամ պետությունների՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքների և պարտավորությունների վրա, որոնց մասնակիցն են իրենք:

11. Պայմանագրի XVIII բաժնի դրույթները կիրառվում են նավթի և նավթամթերքների փոխադրում իրականացնող բնական մենաշնորհի սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով սույն Արձանագրությամբ նախատեսված առանձնահատկությունները:

12. Միության՝ նավթի և նավթամթերքների ընդհանուր շուկաների ձևավորման վերաբերյալ՝ Պայմանագրի 84-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում գործում են նավթի և նավթամթերքների մատակարարումների, արտահանման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) սահմանման ու վճարման կարգի ոլորտում անդամ պետությունների միջև կնքված երկկողմ համաձայնագրերը, եթե համապատասխան անդամ պետություններն այլ բանի մասին չպայմանավորվեն:

ՀԱՎԵԼՎԱԾ 24
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 86-րդ և 87-րդ հոդվածների համաձայն՝ համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրականացման նպատակով:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«քաղաքացիական ավիացիա»՝ բնակչության և տնտեսության պահանջմունքների ապահովման նպատակով օգտագործվող ավիացիա.

«միասնական տրանսպորտային տարածք»՝ անդամ պետությունների տրանսպորտային համակարգերի ամբողջություն, որի շրջանակներում ապահովվում է ուղևորների անարգել տեղաշարժը, բեռների և տրանսպորտային միջոցների տեղափոխումը, դրանց տեխնիկական ու տեխնոլոգիական համատեղելիությունը՝ հիմնված տրանսպորտի բնագավառում անդամ պետությունների ներդաշնակեցված օրենսդրության վրա.

«անդամ պետությունների օրենսդրություն»՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի ազգային օրենսդրություն.

«տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկա»՝ տնտեսական հարաբերությունների ձև, որոնց դեպքում ստեղծվում են տրանսպորտային ծառայությունների մատուցման հավասար և պարիտետային պայմաններ, որոնց շուկայի գործունեության առանձնահատկությունները, ըստ տրանսպորտի տեսակի, որոշվում են սույն Արձանագրությամբ, ինչպես նաև Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

3. Սույն Արձանագրության կիրարկումն իրականացվում է անդամ պետությունների՝ նրանցից յուրաքանչյուրի կողմից Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելիս ստանձնած, ինչպես նաև այլ միջազգային պայմանագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների հաշվառմամբ:

II. Ավտոմոբիլային տրանսպորտը

4. Անդամ պետություններից մեկի տարածքում գրանցված փոխադրողների կողմից իրականացվող բեռների միջազգային ավտոմոբիլային փոխադրումներն առանց թույլտվություն ստանալու անհրաժեշտության իրականացվում են.

1) անդամ պետության, որի տարածքում գրանցված են փոխադրողները, և այլ անդամ պետության միջև.

2) տարանցիկ փոխադրմամբ՝ այլ անդամ պետությունների տարածքով.

3) այլ անդամ պետությունների միջև:

5. Անդամ պետությունները մինչև 2015 թվականի հուլիսի 1-ն ընդունում են անդամ պետություններից մեկի տարածքում գրանցված փոխադրողների կողմից այլ անդամ պետության տարածքում գտնվող կետերի միջև բեռների ավտոմոբիլային փոխադրումների իրականացման փուլային ազատականացման ծրագիրը 2016-ից մինչև 2025 թվականն ընկած ժամանակահատվածի համար՝ այդ ազատականացման աստիճանի և պայմանների որոշմամբ:

Անդամ պետություններում թույլատրվում են սույն կետի առաջին պարբերությունում նշված բեռների ավտոմոբիլային փոխադրումների ազատականացումն իրականացնելու տարբեր մակարդակներ և տեմպեր:

6. Սույն Արձանագրության 5-րդ կետում նշված փուլային ազատականացման ծրագիրը հաստատվում է Բարձրագույն խորհրդի կողմից:

7. Միության շրջանակներում բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի ծառայությունների կարգավորման հարցերով համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրականացման առանձնահատկությունները սահմանվում են միջազգային պայմանագրերով:

8. Անդամ պետությունները համաձայնեցված միջոցներ են ձեռնարկում՝ միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության զարգացման և Միության շրջանակներում ավտոմոբիլային տրանսպորտի ծառայությունների ձևավորման վրա ազդեցություն ունեցող խոչընդոտների (արգելքների) վերացման համար:

9. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողությունն իրականացվում է սույն Արձանագրության 1-ին հավելվածի համաձայն սահմանված կարգով:

III. Օդային տրանսպորտը

10. Միությունում օդային տրանսպորտի զարգացումն իրականացվում է համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրագործման շրջանակներում օդային տրանսպորտի ծառայությունների շուկայի փուլ առ փուլ ձևավորման միջոցով:

Անդամ պետությունների կողմից համակարգում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) ստանդարտների և առաջարկվող պրակտիկայի կիրառման նկատմամբ միասնական մոտեցման մասով ներդրվող ջանքերը:

11. Օդային տրանսպորտի ծառայությունների ընդհանուր շուկայի ձևավորումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի և ակտերի՝ քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հետ համապատասխանության ապահովումը.

2) անդամ պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցումը՝ քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան.

3) արդար և բարեխիղճ մրցակցության ապահովումը.

4) օդանավերի համակազմի նորացման, օդանավակայանների վերգետնյա ենթակառուցվածքների օբյեկտների արդիականացման և զարգացման նպատակով պայմանների ստեղծումը՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) պահանջներին և առաջարկվող պրակտիկային համապատասխան.

5) թռիչքների անվտանգության և ավիացիոն անվտանգության ապահովումը.

6) անդամ պետությունների ավիաընկերությունների համար ավիացիոն ենթակառուցվածքի ոչ խտրական հասանելիության ապահովումը.

7) անդամ պետությունների միջև օդային հաղորդակցությունների ընդլայնումը:

12. Անդամ պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր անդամ պետություն ունի լիարժեք և բացառիկ ինքնիշխանություն իր տարածքի վերևում գտնվող օդային տարածության նկատմամբ:

13. Միության շրջանակներում անդամ պետությունների օդանավերի թռիչքներն իրականացվում են անդամ պետությունների միջազգային պայմանագրերի և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով տրվող թույլտվությունների հիման վրա:

14. Սույն Բաժնի դրույթները կիրառվում են միայն քաղաքացիական ավիացիայի նկատմամբ:

IV. Ջրային տրանսպորտը

15. Միությունում ջրային տրանսպորտի զարգացումն իրականացվում է համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրագործման շրջանակներում:

16. Անդամ պետության դրոշի ներքո նավարկող նավերն իրավասու են իրականացնելու բեռների, ուղևորների և նրանց ուղեբեռի փոխադրում, սահմանակից ներքին ջրային ուղիներով նավի դրոշի պետության և այլ անդամ պետության միջև քարշակում, այլ անդամ պետության ներքին ջրային ուղիներով տարանցում՝ բացառությամբ այլ անդամ պետության և երրորդ երկրների նավահանգիստների միջև փոխադրման և քարշակման ու դեպի նավահանգիստներ (նավահանգիստներից) իրականացվող փոխադրումների՝ սույն Արձանագրության կատարման համար անդամ պետությունների կողմից կնքված նավագնացության մասին անդամ պետությունների միջազգային պայմանագրին համապատասխան:

17. Անդամ պետության ներքին ջրային ուղիներով նավարկություն իրականացնող նավերը պետք է գրանցված լինեն անդամ պետության նավերի ռեեստրում և գտնվեն իր ռեեստրում նավը գրանցած անդամ պետության ռեզիդենտի տիրապետման տակ:

V. Երկաթուղային տրանսպորտը

18. Անդամ պետությունները, նպաստելով փոխշահավետ տնտեսական հարաբերությունների հետագա զարգացմանը, հաշվի առնելով անդամ պետությունների երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության ապահովման և այդ ծառայությունների սակագների պետական կարգավորման համաձայնեցված մոտեցումների անհրաժեշտությունը, եթե նման կարգավորումը նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, սահմանում են հետևյալ նպատակները՝

1) երկաթուղային տրանսպորտի բնագավառում տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի փուլ առ փուլ ձևավորում.

2) անդամ պետությունների սպառողների համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության ապահովում՝ յուրաքանչյուր անդամ պետության տարածքով փոխադրումները տվյալ յուրաքանչյուր անդամ պետության սպառողների համար ստեղծված պայմաններից ոչ պակաս բարենպաստ պայմաններով իրականացնելիս.

3) երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սպառողների և անդամ պետությունների երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների միջև տնտեսական շահերի հավասարակշռության պահպանում.

4) մի անդամ պետության երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների համար մեկ այլ անդամ պետության երկաթուղային տրանսպորտի ծառայությունների ներքին շուկայի հասանելիության պայմանների ապահովում.

5) փոխադրողների համար անդամ պետությունների ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության պայմանների ապահովումը Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքների կարգավորման մասին կարգի 1-ին և 2-րդ հավելվածների համաձայն (սույն Արձանագրության թիվ 2 հավելված):

19. Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքների կարգավորում, իրականացվում է սույն Արձանագրության 2-րդ հավելվածով սահմանված կարգով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով:

Հավելված 1
Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին արձանագրության

Կարգ
Եվրասիական տնտեսական միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման

1. Սույն Կարգը մշակվել է Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին արձանագրության 9-րդ կետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 24-րդ հավելված) և սահմանում է Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման կարգը:

2. Սույն Կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«տրանսպորտային միջոցի քաշային և եզրաչափային պարամետրեր»՝ բեռով կամ առանց բեռի տրանսպորտային միջոցի զանգվածի, սռնու վրա բեռնվածության և եզրաչափերի (ըստ լայնության, բարձրության և երկարության) մեծություններ.

«Միության արտաքին սահման»՝ Միության մաքսային տարածքի սահմաններ, որոնք տարանջատում են անդամ պետությունների և Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքները.

«հսկիչ կետ»՝ անդամ պետության օրենսդրության պահանջներին համապատասխան սարքավորված ստացիոնար կամ շարժական կետ, ինչպես նաև պետական սահմանով բացթողման կետ, որոնցում իրականացվում է տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն.

«տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնող մարմիններ»՝ իրավասու մարմիններ, որոնք անդամ պետության կողմից լիազորված են իրականացնելու տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն անդամ պետության տարածքում.

«փոխադրող»՝ սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով տրանսպորտային միջոցն օգտագործող իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

«տրանսպորտային միջոց».

բեռների փոխադրման դեպքում՝ բեռնատար ավտոմեքենա, բեռնատար ավտոմեքենա կցորդով, ավտոմոբիլային (թամբային) քարշակ կամ ավտոմոբիլային (թամբային) քարշակ կիսակցորդով, շասսի.

ուղևորների փոխադրման դեպքում՝ ուղևորների և ուղեբեռի փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլային տրանսպորտային միջոց, որն ունի ավելի քան ինը նստատեղ՝ ներառյալ վարորդի նստատեղը, այդ թվում՝ ուղեբեռ փոխադրելու համար կցորդ.

«տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն»՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրումների իրականացման նկատմամբ հսկողություն:

Սույն Կարգով հատուկ չսահմանված այլ հասկացությունները գործածվում են միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

3. Սույն Կարգով սահմանվում են անդամ պետությունների տարածքներ մուտք գործող (այդ տարածքներից դուրս եկող, այդ տարածքներով տարանցման կարգով անցնող) տրանսպորտային միջոցների նկատմամբ Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների կողմից տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու միասնական մոտեցումները:

4. Այն տրանսպորտային միջոցները, որոնք շարժվում են դեպի մի անդամ պետության տարածք մեկ այլ անդամ պետության տարածքով, Միության արտաքին սահմանին տեղակայված հսկիչ կետերում ենթակա են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքով շարժվում են նշված տրանսպորտային միջոցները, և սույն Կարգի 7-րդ ու 8-րդ կետերին համապատասխան:

5. Տրանսպորտային միջոցների, տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության նպատակներով անհրաժեշտ փաստաթղթերի ստուգումը և դրա արդյունքների ձևակերպումն իրականացվում են այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքը դրանք հատում են Միության արտաքին սահմանին, ինչպես նաև սույն Կարգին համապատասխան:

6. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինները փոխադարձաբար ճանաչում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքներով իրենց կողմից ձևակերպված փաստաթղթերը:

7. Այն անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինը, որի պետական սահմանով է իրականացվում մուտքը Միության մաքսային տարածք, ի լրումն նշված անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողությանն առնչվող գործողությունների, հսկիչ կետերում իրականացնում է.

1) տրանսպորտային միջոցների քաշային և եզրաչափային պարամետրերի համապատասխանության ստուգումը մյուս անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված համանման նորմերի հետ, որոնց տարածքներով իրականացվում է անցումը, ինչպես նաև այն տվյալների հետ, որոնք նշված են այլ անդամ պետությունների տարածքներով մեծ եզրաչափերով և (կամ) ծանրաքաշ բեռի փոխադրման կամ մեծ եզրաչափերով և (կամ) ծանրաքաշ տրանսպորտային միջոցի անցման համար հատուկ թույլտվություններում.

2) փոխադրողի մոտ՝ այլ անդամ պետությունների տարածքներով անցնելու թույլտվությունների առկայության ստուգումը, որոնցով իրականացվում է անցումը, դրանց՝ իրականացվող փոխադրման տեսակի հետ համապատասխանության և տրանսպորտային միջոցի բնութագրերի՝ այդ թույլտվություններով նախատեսված պահանջների հետ համապատասխանության ստուգումը.

3) փոխադրողի մոտ՝ մեծ եզրաչափերով և (կամ) ծանրաքաշ բեռի փոխադրման, մեծ եզրաչափերով և (կամ) ծանրաքաշ տրանսպորտային միջոցի անցման համար հատուկ թույլտվությունների առկայության, ինչպես նաև այլ անդամ պետությունների տարածքներով վտանգավոր բեռների փոխադրման հատուկ թույլտվությունների առկայության ստուգումը, որոնցով իրականացվում է փոխադրումը կամ անցումը.

4) փոխադրողի մոտ՝ այլ անդամ պետությունների տարածքներով երրորդ երկրներ (երրորդ երկրներից) փոխադրման թույլտվությունների (հատուկ թույլտվությունների) առկայության ստուգումը, որոնցով իրականացվում է փոխադրումը.

5) փոխադրողին՝ տրանսպորտային (ավտոմոբիլային) մարմինների կողմից համաձայնեցված ձևով հաշվառման կտրոնի տրամադրումն այն դեպքում, երբ այլ անդամ պետությունների օրենսդրության համաձայն՝ փոխադրման իրականացումը թույլատրվում է առանց այլ անդամ պետությունների տարածքներով անցնելու թույլտվության, ինչպես նաև այն դեպքում, երբ փոխադրումն իրականացվում է բազմակողմանի թույլտվություններին համապատասխան:

8. Միության արտաքին սահմանով տրանսպորտային միջոցի դուրս գալու ժամանակ տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինները, ի լրումն սույն Կարգի 7-րդ կետում նշված գործողությունների, հսկիչ կետերում իրականացնում են հետևյալի ստուգումը՝

1) այն անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով անցնելու համար գանձումների վճարման անդորրագրի առկայությունը փոխադրողի մոտ, որոնց տարածքներով իրականացվում է անցումը, եթե այդպիսի գանձումների վճարումը պարտադիր է անդամ պետությունների օրենսդրության համաձայն.

2) անդամ պետության տարածքում միջազգային ավտոմոբիլային փոխադրումների իրականացման կարգը խախտելու համար տուգանքի վճարումը հավաստող անդորրագրի առկայությունը փոխադրողի (վարորդի) մոտ կամ փոխադրողի (վարորդի) նկատմամբ համապատասխան վարչական տույժ նշանակելու մասին որոշման դեմ բողոքը բավարարելու մասին դատական մարմինների որոշման առկայությունն այն դեպքում, երբ անդամ պետություններից մեկի տարածքով անցնելու թույլտվության մեջ կամ հաշվառման կտրոնում առկա է փոխադրողի (վարորդի) նկատմամբ այդպիսի տուգանքի նշանակման մասին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի նշումը.

3) անդամ պետությունների փոխադրողների տրանսպորտային միջոցները միջազգային ավտոմոբիլային փոխադրումների համար օգտագործելու թույլտվության առկայությունը.

4) մյուս անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնից սույն Կարգի 9-րդ կետում նշված ծանուցումն ստանալու դեպքում՝ փոխադրողի մոտ անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը:

9. Սույն Կարգի 7-րդ կետով նախատեսված հսկիչ գործողությունների ընթացքում տրանսպորտային միջոցի՝ հսկման ենթակա պարամետրերի անհամապատասխանության, անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի բացակայության կամ անհամապատասխանության հայտնաբերման դեպքում անդամ պետություններից մեկի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինը վարորդին ներկայացնում է անդամ պետությունների տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների հետ համաձայնեցված ձևով ծանուցում, որը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

հայտնաբերված անհամապատասխանությունների մասին.

մինչև մյուս անդամ պետության տարածք ժամանելը՝ պակասող փաստաթղթերի ստացման անհրաժեշտության մասին.

մյուս անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի մոտակա հսկիչ կետի մասին՝ հաշվի առնելով տրանսպորտային միջոցի երթուղին, որտեղ փոխադրողը պետք է ներկայացնի տրանսպորտային միջոցի՝ հսկման ենթակա պարամետրերի անհամապատասխանության վերացման ապացույցները և (կամ) ծանուցման մեջ նշված փաստաթղթերը:

10. Ծանուցումը հանձնելու վերաբերյալ տեղեկատվությունն ուղարկվում է մյուս անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին և մուտքագրվում է անհամապատասխանությունը հայտնաբերած տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի տեղեկատվական բազա:

11. Եթե մի անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնի կողմից փոխադրողին հանձնվել է ծանուցում սույն Կարգի 9-րդ կետին համապատասխան, ապա մյուս անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինն իրավասու է հսկիչ կետում իրականացնելու այդ ծանուցման կատարման ստուգում և հիմքերի առկայության դեպքում փոխադրողի (վարորդի) նկատմամբ կիրառել այդ մյուս անդամ պետության օրենսդրությանը համապատասխան միջոցներ:

12. Միության տարածքից տրանսպորտային միջոցի բացթողումը չի իրականացվում նախքան փոխադրողի կողմից սույն Կարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը:

13. Անդամ պետություններից մեկի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինն այդ պետության տարածքից դեպի այլ անդամ պետության տարածք շարժվող տրանսպորտային միջոցի՝ Միության արտաքին սահմանով մեկնման ժամանակ այդ մյուս անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմնին տեղեկացնում է տրանսպորտային միջոցի՝ հսկման ենթակա պարամետրերի անհամապատասխանության հայտնաբերման, անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի բացակայության կամ անհամապատասխանության մասին:

14. Կողմերը, փոխադարձության հիմքով, միջոցներ են ձեռնարկում՝ իրենց օրենսդրությունը, Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու մեթոդները և տեխնոլոգիաները ներդաշնակեցնելու համար՝

1) միջազգային տրանսպորտային միջանցքի մաս կազմող՝ ընդհանուր օգտագործման ճանապարհներով շարժվելու դեպքում տրանսպորտային միջոցների քաշային պարամետրերին ներկայացվող պահանջների մասով.

2) այլ պետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցների անցման համար գանձումների լրիվության նկատմամբ հսկողության համակարգի ստեղծման մասով.

3) երրորդ երկրների փոխադրողների հետ վիճելի իրավիճակների առաջացման դեպքերում դրանց կարգավորման մեխանիզմի մշակման մասով.

4) Միության տարածքով միջազգային ավտոմոբիլային փոխադրումների պայմանների կատարման համար սահմանված պահանջները խախտելու դեպքում տրանսպորտային միջոցները վերադարձնելու (պահելու) մեխանիզմների մշակման մասով:

15. Թույլտվությունները (հատուկ թույլտվությունները) անվավեր են համարվում հետևյալ դեպքերում՝

1) այդ թույլտվությունները ձևակերպված են կամ օգտագործվում են այն անդամ պետության օրենսդրության խախտմամբ, որի իրավասու մարմինների կողմից դրանք տրամադրվել են.

2) տրանսպորտային միջոցի՝ հատուկ թույլտվության մեջ նշված քաշային և (կամ) եզրաչափային պարամետրերը չեն համապատասխանում տրանսպորտային միջոցի եզրաչափերի կշռման և չափման արդյունքներին.

3) տրանսպորտային միջոցի բնութագրերը չեն համապատասխանում անդամ պետությունների տարածքներով անցնելու թույլտվությամբ նախատեսված տրանսպորտային միջոցների բնութագրերին:

16. Հսկիչ գործողությունների ընթացքում թույլտվության մեջ նշված պարամետրերի (բնութագրերի) հետ տրանսպորտային միջոցի պարամետրերի (բնութագրերի)՝ անհամապատասխանության հայտնաբերման դեպքում անդամ պետություններից մեկի տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինն իրավասու է օպերատիվ կարգով թույլտվության վավերականությունը հաստատելու հարցմամբ դիմելու մյուս անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմին:

17. Սույն Կարգի կիրարկման նպատակներով տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինները՝

1) կնքում են առանձին արձանագրություններ, այլ անդամ պետության տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններին իրազեկում են իրենց պետությունների նորմատիվ իրավական ակտերի այն դրույթների մասին, որոնցով կանոնակարգվում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացմանը ներկայացվող պահանջները, միմյանց տեղեկացնում են նշված ակտերում կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև փոխանակում են սույն Կարգին համապատասխան տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի նմուշները.

2) փոխադարձաբար և կանոնավորապես փոխանակում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքում ստացված տեղեկատվությունը:

Նշված տեղեկատվության փոխանակման ձևը և կարգը, ինչպես նաև դրա կազմը սահմանվում են տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինների կողմից.

3) կազմակերպում են մի անդամ պետության տարածքով մեկ այլ պետության տարածք տարանցման կարգով փոխադրվող տրանսպորտային միջոցների մասին տվյալների բազայի վարումը, և փոխադարձաբար փոխանակում են այդ բազայում ընդգրկված տեղեկատվությունը:

18. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքում ստացված տեղեկատվության փոխանակումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

19. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմինները կարող են տրամադրել տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքում ստացված այլ տեղեկություններ ապրանքներ տեղափոխող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ:

20. Տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության արդյունքների և տրանսպորտային միջոցների ձևակերպման և հաշվառման նպատակներով տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության մարմիններն օգտագործում են տեղեկատվական ռեսուրսներ, որոնք տեղեկություններ են պարունակում սույն Կարգի 7-րդ և 9-րդ կետերին համապատասխան իրականացվող տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության լրացուցիչ գործողությունների արդյունքների մասին, ինչպես նաև ապահովում են այդ տեղեկատվական ռեսուրսների փոխադարձ օգտագործումը:

21. Անդամ պետությունները Միության անդամ չհանդիսացող պետությունների իրավասու մարմիններին սահմանված կարգով տեղեկացնում են Միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողության իրականացման կարգի փոփոխությունների մասին:

Հավելված 2
Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին արձանագրության

Կարգ
Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքների կարգավորման մասին

1. Սույն Կարգը մշակվել է Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին արձանագրությանը համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 24-րդ հավելված), և սահմանում է Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքների կարգավորման մասին կարգը ու տարածվում է երկաթուղային տրանսպորտի ծառայությունների բնագավառում անդամ պետությունների երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների, սպառողների, լիազոր մարմինների միջև հարաբերությունների վրա:

2. Սույն Կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիություն»՝ մի անդամ պետության երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների կողմից մեկ այլ անդամ պետության սպառողներին ծառայությունների մատուցում այնպիսի պայմաններով, որոնք պակաս բարենպաստ չեն այն պայմաններից, որոնցով համանման ծառայություններ են մատուցվում առաջին անդամ պետության սպառողներին.

«ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիություն»՝ սույն Կարգի 1-ին և 2-րդ հավելվածներին համապատասխանող կանոնների համաձայն փոխադրումներն իրականացնելու համար ենթակառուցվածքի ծառայություններից օգտվելու՝ փոխադրողների հնարավորություն.

«ենթակառուցվածք»՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածք, որը ներառում է դրա գործունեության համար տեխնոլոգիապես անհրաժեշտ մագիստրալային և կայարանային գծերը, էլեկտրամատակարարման, ազդանշանային, կապի օբյեկտները, սարքերը, սարքավորումները, շենքերը, շինությունները, կառույցները և այլ օբյեկտներ.

«երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն»՝ սպառողներին երկաթուղային տրանսպորտի ծառայություններ մատուցող՝ անդամ պետության ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

«փոխադրման գործընթաց»՝ կազմակերպական առումով և տեխնոլոգիապես փոխկապակցված գործողությունների ամբողջություն, որոնք իրականացվում են երկաթուղային տրանսպորտով ուղևորների, բեռների, ուղեբեռի, բեռնածանրոցների և փոստային առաքանիների փոխադրումների նախապատրաստման, իրականացման և ավարտման ժամանակ.

«փոխադրող»՝ բեռների, ուղևորների, ուղեբեռի, բեռնաճանրոցների և փոստային առաքանիների փոխադրման գործունեություն իրականացնող երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն, որն ունի համապատասխան լիցենզիա, սեփականության իրավունքով կամ օրինական այլ հիմքով՝ շարժակազմ, այդ թվում՝ քարշակող տրանսպորտային միջոցներ.

«սպառող»՝ անդամ պետության ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն օգտվում է կամ մտադիր է օգտվել երկաթուղային տրանսպորտի ծառայություններից.

«երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագին»՝ երկաթուղային տրանսպորտի ծառայությունների արժեքի դրամական արտահայտություն.

«երկաթուղային տրանսպորտի ծառայություններ»՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների կողմից մատուցվող (կատարվող) ծառայություններ (աշխատանքներ), այն է՝

բեռների փոխադրում և լրացուցիչ ծառայություններ (աշխատանքներ), որոնք կապված են բեռների (այդ թվում՝ դատարկ շարժակազմերի) փոխադրումների կազմակերպման և իրականացման հետ.

ուղևորների, ուղեբեռի, բեռնաճանրոցների, փոստային առաքանիների փոխադրում և այդ փոխադրման հետ կապված լրացուցիչ ծառայություններ (աշխատանքներ).

ենթակառուցվածքի ծառայություններ.

«ենթակառուցվածքի ծառայություններ»՝ փոխադրումների իրականացման համար ենթակառուցվածքների օգտագործման հետ կապված ծառայություններ և այլ ծառայություններ, որոնք նշված են սույն Կարգի 2-րդ հավելվածում:

3. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները, անկախ սպառողի՝ այս կամ այն անդամ պետությանը պատկանելիությունից, նրա կազմակերպա-իրավական ձևից, ապահովում են նրա համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիությունը՝ հաշվի առնելով սույն Կարգը և անդամ պետությունների օրենսդրությունը:

4. Անդամ պետությունները սույն Կարգի 1-ին և 2-րդ հավելվածներում նշված սկզբունքների և պահանջների պահպանմամբ անդամ պետությունների փոխադրողների համար ապահովում են ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիությունը:

Սույն Կարգի 1-ին և 2-րդ հավելվածների դրույթները չեն տարածվում անդամ պետությունների փոխադրողների միջև անդամ պետությունների ենթակառուցվածքների տեղամասերում գնացքաքարշերի (լոկոմոտիվների) և գնացքաքարշային բրիգադների օգտագործման ծառայությունների մատուցման հարաբերությունների վրա, որոնք տրամադրվում են նման փոխադրողների միջև՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կնքվող պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա:

5. Տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի ձևավորման շրջանակներում երկաթուղային տրանսպորտի այլ ծառայությունների մատուցման կարգը և պայմաններն անհրաժեշտության դեպքում սահմանվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

6. Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագները և (կամ) դրանց առավելագույն մակարդակը (գնային սահմանաչափերը) սահմանվում են (փոփոխվում են) անդամ պետությունների օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան՝ ապահովելով սակագների դիֆերենցման հնարավորությունն իր անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ պահպանելով հետևյալ սկզբունքները՝

1) տնտեսապես հիմնավորված այն ծախսերի փոխհատուցումը, որոնք ուղղակիորեն կապված են երկաթուղային տրանսպորտի ծառայությունների մատուցման հետ.

2) երկաթուղային տրանսպորտի զարգացման ապահովումը՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

3) երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների թափանցիկության, ինչպես նաև այդ սակագները և (կամ) դրանց առավելագույն մակարդակը (գնային սահմանաչափերը) տնտեսական պայմանների կտրուկ փոփոխության դեպքում լրացուցիչ վերանայելու հնարավորության ապահովումը անդամ պետություններին նախապես տեղեկացնելու միջոցով.

4) երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագները սահմանելու վերաբերյալ որոշումների ընդունման հրապարակայնության ապահովումը.

5) ներդաշնակեցված մոտեցման կիրառումը բեռների անվանացանկը և բնական մենաշնորհի պայմաններում մատուցվող երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների սահմանման կանոնները նախատեսելու նկատմամբ.

6) յուրաքանչյուր անդամ պետությունում երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագնի արժույթը որոշելը՝ իր անդամ պետության օրենսդրության համաձայն:

7. Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների և (կամ) դրանց առավելագույն մակարդակների (գնային սահմանաչափերի) սահմանումը (փոփոխությունը) իրականացվում է իր անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կարգը:

8. Անդամ պետությունների տարածքներով երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրման ժամանակ կիրառվում են միասնականացված սակագներ՝ ըստ հաղորդակցության տեսակների (արտահանման, ներմուծման և ներպետական սակագներ):

9. Անդամ պետությունների երկաթուղային տրանսպորտի մրցունակությունը բարձրացնելու, երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրումն իրականացնելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, նախկինում երկաթուղային տրանսպորտով չիրականացված նոր բեռնահոսքեր ներգրավելու, երկաթուղիներով բեռների փոխադրումների՝ չգործարկված կամ քիչ գործարկված երթուղիներից օգտվելու հնարավորություն ապահովելու, անդամ պետությունների երկաթուղիներով բեռների փոխադրման ծավալների աճը խթանելու, նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրումը խթանելու նպատակով երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններին իրավունք է վերապահվում տնտեսական նպատակահարմարությունից ելնելով, որոշումներ կայացնել բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը փոփոխելու վերաբերյալ՝ անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից սահմանված կամ համաձայնեցված առավելագույն մակարդակների (գնային սահմանաչափերի) սահմաններում:

10. Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունները բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը առավելագույն մակարդակների (գնային սահմանաչափերի) սահմաններում փոփոխելու՝ իրենց վերապահված իրավունքն իրականացնում են անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից հաստատված (սահմանված) մեթոդաբանության (մեթոդների, կարգի, կանոնների, ուղեցույցների և այլ նորմատիվ ակտերի) համաձայն՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ պահպանելով անդամ պետությունների կոնկրետ ապրանքարտադրողների համար առավելություններ ստեղծելու անթույլատրելիության հիմնական սկզբունքը:

11. Բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը փոփոխելու մասին որոշումները ենթակա են պաշտոնական հրապարակման՝ անդամ պետությունների օրենսդրության համաձայն, անդամ պետությունների լիազոր մարմիններ և Հանձնաժողով պարտադիր կերպով ուղարկման՝ ոչ ուշ, քան դրանք ուժի մեջ մտնելու օրվանից 10 աշխատանքային օր առաջ:

12. Այն դեպքում, երբ բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը փոփոխելուն ուղղված՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների գործողությունների հետևանքով խախտվում են սպառողների իրավունքներն ու շահերը, ապա սպառողներն իրավունք ունեն իրենց խախտված իրավունքների և շահերի պաշտպանության մասին դիմում ներկայացնելու այն անդամ պետության ազգային հակամենաշնորհային մարմին, որի տարածքում սպառողը գտնվում կամ բնակվում է:

Եթե երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը, որի գործողությունները բողոքարկվում են սպառողի կողմից, գտնվում է սպառողի գտնվելու կամ բնակության վայրում, ապա անդամ պետության ազգային հակամենաշնորհային մարմինը սպառողի դիմումն ուսումնասիրում է իր անդամ պետության օրենսդրության համաձայն:

Այն դեպքում, երբ սպառողի կողմից դիմում է ներկայացվել երկաթուղային տրանսպորտի կազմակերպության գործողությունների դեմ, որը չի գտնվում սպառողի գտնվելու կամ բնակության վայրում, ապա անդամ պետության ազգային հակամենաշնորհային մարմինը սպառողի դիմումի մեջ նշված պահանջների հիմնավորվածությունը որոշելուց և ընդունելուց հետո՝ ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում, քննություն անցկացնելու մասին դիմում

է ներկայացնում Հանձնաժողով և տվյալ դիմումը Հանձնաժողով ներկայացնելու օրվանից հաշված՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է սպառողին և այն անդամ պետության ազգային հակամենաշնորհային մարմնին, որի տարածքում գտնվում է երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը, որը բեռների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների սակագների մակարդակը առավելագույն մակարդակների (գնային սահմանաչափերի) սահմաններում փոփոխելու ժամանակ խախտում է թույլ տվել:

Վերը նշված դիմումի հիման վրա Հանձնաժողովն ուսումնասիրում է սպառողի դիմումը և ընդունում որոշումներ՝ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով սահմանված կանոններին համապատասխան:

13. Անդամ պետությունների միջև այլ անդամ պետության տարածքով և անդամ պետության տարածքների միջև՝ այլ անդամ պետության երկաթուղային գծերի օգտագործմամբ երկաթուղային տրանսպորտով բեռների փոխադրման դեպքում, ինչպես նաև մի անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածքով դեպի երրորդ երկրներ անդամ պետությունների ծովային նավահանգիստներով և հակառակ ուղղությամբ բեռների փոխադրման դեպքում անդամ պետություններից յուրաքանչյուրը կիրառում է յուրաքանչյուր անդամ պետության միասնականացված սակագինը:

14. Մի անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածքով տարանցման կարգով դեպի երրորդ երկրներ և հակառակ ուղղությամբ բեռների փոխադրման դեպքում (բացառությամբ անդամ պետությունների ծովային նավահանգիստներով բեռների փոխադրումների), ինչպես նաև երրորդ երկրներից դեպի երրորդ երկրներ անդամ պետությունների տարածքով տարանցման կարգով բեռների փոխադրման դեպքում իրականացվում է համակարգված (համաձայնեցված) սակագնային քաղաքականություն՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների երկաթուղային տրանսպորտի վերաբերյալ համաձայնեցված սակագնային քաղաքականություն սահմանելու մասին 1996 թվականի հոկտեմբերի 18-ի հայեցակարգին համապատասխան:

15. Անդամ պետությունների կողմից նշանակվում են սույն Կարգի կիրարկման համար պատասխանատու լիազոր մարմիններ:

16. Անդամ պետություններն իրենց լիազոր մարմինների նշանակման և դրանց պաշտոնական անվանումների մասին միմյանց և Հանձնաժողովին տեղեկացնում են ոչ ուշ, քան Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում:

Հավելված 1
Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների
հասանելիության՝ ներառյալ սակագնային
քաղաքականության հիմունքների կարգավորման մասին կարգը

Կանոններ
Եվրասիական տնտեսական միության շրջանակներում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոններով կարգավորվում են Միության շրջանակներում ենթակառուցվածքների տեղամասերում երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության ապահովման բնագավառում փոխադրողների և ենթակառուցվածքների օպերատորների հարաբերությունները:

2. Մի անդամ պետության տարածքի սահմաններում ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության ապահովման բնագավառում փոխադրողների և ենթակառուցվածքների օպերատորների հարաբերությունների կարգավորումը, բացառությամբ սույն Կանոնների 1-ին կետում նշված հարաբերությունների, իրականացվում է տվյալ անդամ պետության օրենսդրության համաձայն:

II. Սահմանումները

3. Սույն Կանոններում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«գնացքների երթևեկության ժամանակացույց»՝ ենթակառուցվածքի օպերատորի նորմատիվատեխնիկական փաստաթուղթ, որով սահմանվում է ենթակառուցվածքի տեղամասերում բոլոր կատեգորիաների գնացքների երթևեկության կազմակերպումը, և որով մասշտաբային վանդակացանցի վրա գրաֆիկորեն պատկերվում են պայմանական օրերին գնացքների ընթացուղին, և որը լինում է նորմատիվային (պլանային տարվա համար), տարբերակային (առանձին ժամանակահատվածների համար) և օպերատիվ (ընթացիկ պլանային օրերի համար).

«ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման երկարաժամկետ պայմանագիր»՝ ենթակառուցվածքի օպերատորի և փոխադրողի միջև առնվազն 5 տարի ժամկետով կնքված ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանագիր.

«լրացուցիչ հայտ»՝ ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության ապահովման համար հայտ, որն ստացվել է փոխադրողի կողմից՝ գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցի գործողության ժամանակահատվածում լրացուցիչ փոխադրումների իրականացման համար.

«ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիություն»՝ փոխադրումների իրականացման համար փոխադրողների կողմից ենթակառուցվածքի ծառայություններից օգտվելու հնարավորություն.

«ազգային (համընդհանուր ցանցային) փոխադրող»՝ բեռների, ուղևորների, ուղեբեռի, բեռնածանրոցների, փոստային առաքանիների փոխադրման գործունեություն իրականացնող և անդամ պետության ամբողջ ենթակառուցվածքի վրա գնացքների կազմավորման պլանի իրագործումն ապահովող, այդ թվում՝ հատուկ և ռազմական նշանակության փոխադրումների մասով գործունեություն իրականացնող փոխադրող: Ազգային (համընդհանուր ցանցային) փոխադրողի կարգավիճակը որոշվում է անդամ պետության օրենսդրությամբ.

«ժամանակացույցի գիծ»՝ գնացքների երթևեկության ժամանակացույցի վրա գնացքի երթուղու գրաֆիկական պատկերում՝ ուղարկման, նշանակման և ընթացուղով շարժվելու կետերի, ուղարկման, ժամանման, տեխնոլոգիական կանգառների ժամանակի, ընթացքի միջին ժամանակի, ինչպես նաև գնացքի այլ տեխնիկական ու տեխնոլոգիական պարամետրերի մասին նշումով.

«ենթակառուցվածքի օպերատոր»՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն, որն օրինական հիմունքներով տիրապետում է ենթակառուցվածքը ու օգտագործում այն և (կամ) ենթակառուցվածքի ծառայություններ է մատուցում այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

«գնացքների կազմավորման պլան»՝ նորմատիվատեխնիկական փաստաթուղթ, որը հաստատվում է ենթակառուցվածքի օպերատորի կողմից՝ փոխադրողների գնացքների կազմավորման պլանների նախագծերի հիման վրա, և որով սահմանում են այն գնացքների կատեգորիաները և նշանակությունները, որոնք կազմավորվում են երկաթուղային կայարաններում՝ հաշվի առնելով ենթակառուցվածքի տեղամասերի թողունակությունը և կայարանների վերամշակման հնարավորությունները.

«ենթակառուցվածքի տեղամասի թողունակություն»՝ առավելագույն թվով գնացքներ և գնացքների զույգեր, որոնք կարող են ենթակառուցվածքի տվյալ տեղամասով բաց թողնվել հաշվարկային ժամանակահատվածի (օրերի) ընթացքում՝ կախված ենթակառուցվածքի, շարժակազմի տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից և գնացքների տեղաշարժի կազմակերպման մեթոդներից՝ հաշվի առնելով տարբեր կատեգորիաների գնացքների բացթողումը.

«գնացքների երթևեկության չվացուցակ»՝ գնացքների երթևեկության ժամանակացույցի հիման վրա գնացքների, ըստ որոշակի օրացուցային ամսաթվերի, երթևեկության վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ.

«անվտանգության հավաստագիր»՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված փաստաթուղթ, որով հավաստվում է փոխադրման գործընթացի մասնակցի՝ անվտանգության կառավարման համակարգի համապատասխանությունը երկաթուղային տրանսպորտում անվտանգության կանոնների հետ.

«լիազոր մարմին»՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն որոշված՝ անդամ պետության գործադիր իշխանության (պետական կառավարման) մարմին, որի

իրավասությունների մեջ են մտնում պետական կարգավորման և (կամ) երկաթուղային տրանսպորտի բնագավառում ղեկավարման հարցերը.

«ենթակառուցվածքի տեղամաս»՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի հատվածամաս, որը հարակից է անդամ պետությունների երկու սահմանակից ենթակառուցվածքների կցվանքին՝ ենթակառուցվածքի օպերատորի կողմից սահմանված գնացքաքարշի շրջապտույտի տեղամասի սահմաններում:

4. Սույն Կանոններում գործածվող այլ հասկացություններն ընկալվում են այն իմաստներով, որոնք սահմանված են Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին արձանագրությամբ, Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքների կարգավորման մասին կարգով, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման կանոններով (այսուհետ՝ Ծառայությունների մատուցման կանոններ):

III. Ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության ընդհանուր սկզբունքները

5. Ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիությունն ապահովվում է ենթակառուցվածքի տեղամասերում և հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) փոխադրողներին ներկայացվող՝ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պահանջների հավասարությունը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը՝ հաշվի առնելով ենթակառուցվածքի տեղամասերի թողունակության սահմաններում տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորությունները.

2) ենթակառուցվածքի ծառայությունների ոլորտում փոխադրողների նկատմամբ միասնական գնային (սակագնային) քաղաքականության կիրառումը այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

3) ենթակառուցվածքի ծառայությունների ցանկի, ենթակառուցվածքի տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից ելնելով՝ դրանց մատուցման կարգի, այդ ծառայությունների դիմաց սակագների, վճարի ու գանձումների մասին տեղեկատվության հասանելիությունը.

4) ենթակառուցվածքի վերանորոգման, պահպանման և սպասարկման աշխատանքների ռացիոնալ պլանավորումը՝ դրա թողունակության արդյունավետ օգտագործման և փոխադրման գործընթացի անընդհատության, տեխնոլոգիական գործընթացների ամբողջականության և անվտանգության ապահովման նպատակներով.

5) առևտրային կամ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունը, որոնք հայտնի են դարձել փոխադրման գործունեության պլանավորման, կազմակերպման և ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման գործընթացում.

6) փոխադրողների համար՝ ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության ապահովման առաջնահերթությունը (հերթականությունը) ենթակառուցվածքի սահմանափակ թողունակության պայմաններում՝ գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցին համապատասխան.

7) փոխադրողների կողմից օգտագործվող երկաթուղային շարժակազմի պատշաճ տեխնիկական վիճակի ապահովումն իրենց կողմից:

6. Փոխադրողների համար՝ ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության ապահովման առաջնահերթության (հերթականության) սկզբունքն իրականացվում է ընտրության հետևյալ մակարդակների միջոցով՝

1) գնացքի կատեգորիայի որոշումը, որի առաջնահերթությունը (հերթականությունը) որոշվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, կամ ենթակառուցվածքի օպերատորի այն ակտերով, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

2) գնացքների կատեգորիաների նույնական լինելու դեպքում՝ ելնելով՝

ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման երկարաժամկետ պայմանագրերի առկայությունից՝ հաշվի առնելով փոխադրումների ծավալների մասով պայմանագրային պարտավորությունների կատարումը.

փոխադրողի կողմից ենթակառուցվածքի տեղամասերի փոխադրունակության օգտագործման ինտենսիվությունից.

ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման՝ գոյություն ունեցող պայմանագրի առկայությունից.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված չափորոշիչների նույնական լինելու դեպքում մրցույթային ընթացակարգերի իրականացում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

IV. Ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության ապահովման պայմանները

7. Ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիությունը ենթակառուցվածքի օպերատորի կողմից ապահովվում է, եթե փոխադրողի մոտ առկա են՝

1) փոխադրման գործունեություն իրականացնելու լիցենզիաներ, որոնք անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրվում են այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

2) անվտանգության հավաստագրեր, որոնք անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

3) փոխադրման գործունեության կազմակերպման, կառավարման և իրականացման մեջ ներգրավված հաստիքային որակավորված աշխատողներ, որոնք ունեն իրենց որակավորումը և մասնագիտական պատրաստվածությունը հավաստող փաստաթղթեր այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

8. Ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիությունն ապահովվում է, ելնելով՝

1) ենթակառուցվածքի սահմաններում գնացքների երթևեկության և մանևրային տեղաշարժերի կազմակերպման համար ենթակառուցվածքի տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից.

2) բեռնատար գնացքների կազմավորման պլանից և գնացքների երթևեկության ժամանակացույցից.

3) ենթակառուցվածքի առկա թողունակությունից և ենթակառուցվածքի տեղամասերի օգտագործման վերաբերյալ փոխադրողների առաջարկություններից և ենթակառուցվածքի օպերատորի կողմից՝ ենթակառուցվածքի տեղամասերի թողունակության բաշխումից՝ ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության սկզբունքների հիման վրա, որոնք սահմանված են սույն Կանոնների III բաժնում.

4) երկաթուղային փոխադրման իրականացմանը խոչընդոտող արգելքների և սահմանափակումների բացակայությունից այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

5) փոխադրողի մոտ՝ այլ մարմինների և կազմակերպությունների հետ համաձայնեցումների առկայությունից, եթե դա նախատեսված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

9. Ժամանակացույցի որոշակի գծերով ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության իրավունքը կարող է փոխադրողների համար ապահովվել գնացքների երթևեկության չվացուցակի գործողության ժամկետը չգերազանցող ժամանակով՝ բացառությամբ երկարաժամկետ պայմանագրերից բխող իրավունքների:

V. Ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության ապահովումը

10. Ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության ապահովումն իրականացվում է այն անդամ պետության օրենսդրության պահանջների հաշվառմամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, և ներառում է հետևյալ փուլերը՝

1) ենթակառուցվածքի օպերատորի կողմից ենթակառուցվածքի տեղամասերի տեխնիկական բնութագրերի մշակում և հրապարակում.

2) Եվրասիական տնտեսական միության սահմաններում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության համար հայտի (այսուհետ՝ հայտ) ներկայացում փոխադրողի կողմից՝ հավելվածում ներկայացված ձևով.

3) ենթակառուցվածքի օպերատորի կողմից հայտի ուսումնասիրություն.

4) գնացքների երթևեկության ժամանակացույցի և գնացքների երթևեկության չվացուցակի հաստատում.

5) ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

Եթե փոխադրողը միաժամանակ հանդիսանում է օգտագործման համար նախատեսված ենթակառուցվածքի օպերատորը, ապա չի պահանջվում ներկայացնել հայտ և կնքել պայմանագիր:

11. Գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցով չնախատեսված լրացուցիչ փոխադրումների համար ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության ապահովումն իրականացվում է լրացուցիչ հայտերի հիման վրա՝ սույն Կանոններով սահմանված կարգով:

VI. Ենթակառուցվածքի տեղամասերի տեխնիկական բնութագիրը

12. Յուրաքանչյուր տարի՝ հայտերի ընդունումն սկսելու ամսաթվից ոչ ուշ, քան 3 ամիս առաջ, ենթակառուցվածքի օպերատորը կազմում, հաստատում և հրապարակում է ենթակառուցվածքի տեղամասերի տեխնիկական բնութագիրը ենթակառուցվածքի օպերատորի ակտերով սահմանված կարգով, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

13. Ենթակառուցվածքի տեղամասերի տեխնիկական բնութագրում պետք է նշվեն՝

1) ենթակառուցվածքի տեղամասերի և կայարանների տեխնիկական բնութագրերը, որոնք անհրաժեշտ են գնացքների երթևեկության և մանևրային տեղաշարժերի կազմակերպման համար՝ նշելով ենթակառուցվածքի տեղամասերի տարածականությունը և քարշուժի տեսակը, քաշի նորմերը և գնացքների շարժակազմերի երկարությունը, տարբեր կատեգորիաների գնացքների երթևեկության արագությունները.

2) միջազգային ուղևորահաղորդակցության համար գնացքների երթևեկության ժամանակացույցի գծերի նախագծերը.

3) բեռնատար գնացքների ընդունման - հանձնման (փոխանակման) կանխատեսվող ժամանակը՝ ըստ միջպետական յուրաքանչյուր կցվանքային կետի, որը որոշվում է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի որոշմամբ.

4) ենթակառուցվածքի տեղամասերի թողունակությունը, բացառությամբ ենթակառուցվածքի տեղամասերի թողունակության, որն ազգային (համընդհանուր ցանցային) փոխադրողին անհրաժեշտ է այն անդամ պետության օրենսդրության պահանջներին համապատասխան փոխադրումներ իրականացնելու համար, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

14. Ենթակառուցվածքի օպերատորը կարող է ենթակառուցվածքի տեղամասերի տեխնիկական բնութագրում նշել այլ տեղեկություններ և պայմաններ՝ ենթակառուցվածքի տեղամասերով փոխադրումների պլանավորման ու գնացքների երթևեկության կազմակերպման համար:

VII. Հայտի ներկայացումը և ուսումնասիրությունը

15. Փոխադրողը հայտ է ներկայացնում ենթակառուցվածքի օպերատորին:

16. Հայտերի ընդունումը, ուսումնասիրությունը, գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցի նախնական նախագիծը կազմելը սկսելու և ավարտելու ժամկետները, ինչպես նաև սույն Կանոնների 24-րդ և 26-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը ներկայացնելու ժամկետները սահմանվում են այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, և (կամ) ենթակառուցվածքի

օպերատորի ակտերով, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

17. Հայտին կից ներկայացվում են՝

1) ժամանակացույցի պլանավորվող գծերի նախագիծը,

2) տեղեկատվություն պլանավորվող փոխադրումների տարեկան ծավալների վերաբերյալ (ըստ եռամսյակների և ամիսների, ինչպես նաև ըստ բեռների տեսակների),

3) տեղեկատվություն փոխադրումների համար նախատեսվող գնացքների քանակի վերաբերյալ,

4) տեղեկատվություն գնացքաքարշերի տեսակների և բնութագրերի վերաբերյալ, որոնք փոխադրողի կողմից նախատեսվում են փոխադրումների ապահովման համար,

5) սույն Կանոնների 7-րդ կետով սահմանված պահանջների հետ փոխադրողի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

18. Փոխադրողի կողմից ենթակառուցվածքի օպերատորին թղթային կրիչի վրա ներկայացվող հայտը և դրան կից փաստաթղթերը՝

պետք է լինեն կարված, համարակալված և վավերացված փոխադրողի կնիքով, ինչպես նաև նրա ղեկավարի կամ վերջինիս կողմից լիազորված անձի ստորագրությամբ.

ներկայացվում են ռուսերենով կամ ենթակառուցվածքի օպերատորի իրավաբանական գրանցման վայրի պետության լեզվով և չպետք է պարունակեն ուղղումներ կամ լրացումներ, իսկ դրանք այլ լեզվով ներկայացնելու դեպքում դրանց կցվում է սահմանված կարգով վավերացված ռուսերեն թարգմանությունը:

Հայտին կցվող փաստաթղթերը պետք է լինեն բնօրինակներ կամ պատճեններ: Փաստաթղթերի պատճենները ներկայացնելու դեպքում, հայտը ստորագրող ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը պետք է գրավոր հաստատեն դրանց արժանահավատությունն ու ամբողջականությունը:

19. էլեկտրոնային եղանակով տրվող հայտը ներկայացվում է սույն Կանոնների 17-րդ կետին համապատասխան՝ հաշվի առնելով էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության պահանջները, և պետք է ստորագրվի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

20. Հայտը ենթակա է գրանցման ենթակառուցվածքի օպերատորի կողմից՝ փոխադրողին տրամադրելով այն փաստաթուղթը, որում նշվում են գրանցման հերթական համարը, հայտի ընդունման ամսաթիվը և ընդունված փաստաթղթերի ցանկը:

21. Ենթակառուցվածքի օպերատորը ստուգում է ստացված հայտերի համապատասխանությունը սույն Կանոնների 17-19-րդ կետերով սահմանված պահանջների հետ:

22. Հայտի՝ սույն Կանոններով սահմանված պահանջների հետ անհամապատասխանության դեպքում ենթակառուցվածքի օպերատորը, հայտը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, փոխադրողին գրավոր տեղեկացնում է հայտն ուսումնասիրության համար ընդունելը մերժելու մասին՝ նշելով մերժման պատճառները:

23. Հայտերի ուսումնասիրության ընթացքում (սակայն հայտերի ուսումնասիրությունն ավարտվելու ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 1 ամիս առաջ) ենթակառուցվածքի օպերատորն իրավասու է անհրաժեշտության դեպքում փոխադրողներից հարցմամբ պահանջելու լրացուցիչ տեղեկություններ (տվյալներ), որոնք անհրաժեշտ են գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցը կազմելու համար:

Ենթակառուցվածքի օպերատորի կողմից հարցմամբ պահանջված լրացուցիչ տեղեկությունները (տվյալները) պետք է փոխադրողի կողմից ներկայացվեն ենթակառուցվածքի օպերատորի կողմից հարցումն ստանալու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ պահպանելով հայտը ներկայացնելուն և ձևակերպելուն ներկայացվող պահանջները:

24. Գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցի սկզբնական նախագիծը կազմվում է ենթակառուցվածքի օպերատորի կողմից՝ հաշվի առնելով փոխադրողների՝ ուսումնասիրության համար ընդունված հայտերը և ենթակառուցվածքի տեղամասերի թողունակության առավելագույն օգտագործումը:

Ենթակառուցվածքի օպերատորը փոխադրողին տեղեկացնում է նրա հայտի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ենթակառուցվածքի օպերատորի կողմից սահմանված ժամկետներում:

25. Հայտի ուսումնասիրության սկզբնական արդյունքների հետ փոխադրողների անհամաձայնության դեպքում ենթակառուցվածքի օպերատորը կարող է կազմակերպել շահագրգիռ փոխադրողների միջև տարաձայնությունների (վեճերի) լուծմանն ուղղված համաձայնեցման կոորդինացիոն ընթացակարգեր բանակցությունների միջոցով, որոնց անցկացման ընթացքում ենթակառուցվածքի օպերատորն իրավասու է փոխադրողին առաջարկելու ժամանակացույցի այլ գծեր, որոնք տարբերվում են այն գծերից, որոնց համար ներկայացվել էր հայտը:

26. Սույն Բաժնով նախատեսված բոլոր ընթացակարգերի իրականացումից հետո ենթակառուցվածքի օպերատորը փոխադրողին տեղեկացնում է հայտը համաձայնեցնելու (չհամաձայնեցնելու) մասին՝ հաշվի առնելով դրա ճշգրտումները (առկայության դեպքում):

VIII. Գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցի և գնացքների երթևեկության չվացուցակի կազմումը, մշակումն ու հաստատումը

27. Գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցը և գնացքների երթևեկության չվացուցակը մշակվում ու հաստատվում են ենթակառուցվածքի օպերատորի կողմից մեկ տարի ժամանակահատվածի համար այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը՝ հաշվի առնելով փոխադրողներից ստացված հայտերը և իրականացված՝ համաձայնեցման կոորդինացիոն ընթացակարգերի արդյունքները:

28. Գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցը կազմվում է ենթակառուցվածքի օպերատորի կողմից՝ հաշվի առնելով.

1) գնացքների երթևեկության անվտանգության ապահովումը,

2) ենթակառուցվածքի տեղամասերի թողունակության և փոխադրունակության ու երկաթուղային կայարանների վերամշակման հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործումը,

3) ենթակառուցվածքի տեղամասերի պահպանման և վերանորոգման գծով աշխատանքների իրականացման հնարավորությունները:

29. Գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցի մշակումն իրականացվում է՝ հաշվի առնելով առաջնահերթության (հերթականության) սկզբունքը:

30. Գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցը գործողության մեջ է դրվում օրացուցային տարվա մայիս ամսվա վերջին կիրակի օրը՝ ժամը 00:00-ից, և դրա գործողությունը դադարեցվում է հաջորդ օրացուցային տարվա մայիս ամսվա վերջին շաբաթ օրը՝ ժամը 24:00-ին:

31. Գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցի և գնացքների երթևեկության չվացուցակի մեջ կարող են բեռնատար գնացքների համար կատարվել ճշգրտումներ ենթակառուցվածքի օպերատորի կողմից սահմանված կարգով:

IX. Ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը

32. Ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվում է հայտը ենթակառուցվածքի օպերատորի կողմից համաձայնեցնելուց հետո, բայց ոչ ուշ, քան գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցը գործողության մեջ դնելուց 10 օրացուցային օր առաջ:

33. Ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվում է՝ հաշվի առնելով Ծառայությունների մատուցման կանոններով նախատեսված դրույթները:

Ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանագիրը, ըստ լրացուցիչ հայտերի պետք է կնքվի ոչ ուշ, քան փոխադրումների իրականացման օրացուցային ամսվա սկզբից 1 ամիս առաջ:

34. Ենթակառուցվածքի օպերատորն իրավասու է փոխադրողին մերժել կնքելու պայմանագիրը, եթե փոխադրողը ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման դիմաց ունի պարտք ենթակառուցվածքի օպերատորի նկատմամբ, ինչպես նաև այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

X. Լրացուցիչ հայտերը

35. Լրացուցիչ հայտը ձևակերպվում է սույն Կանոնների 17-19-րդ կետերով նախատեսված պահանջների համաձայն:

36. Լրացուցիչ հայտը ենթակա է ենթակառուցվածքի օպերատորի կողմից գրանցման՝ փոխադրողին տրամադրելով այն փաստաթուղթը, որում նշվում են գրանցման հերթական համարը, լրացուցիչ հայտի ընդունման ամսաթիվը և ընդունված փաստաթղթերի ցանկը:

37. Լրացուցիչ հայտը ներկայացվում է ոչ ուշ, քան փոխադրումների իրականացման օրացուցային ամսվա սկզբից 2 ամիս առաջ:

38. Լրացուցիչ հայտերն ուսումնասիրվում են՝ սույն Կանոններով սահմանված պահանջների հետ համապատասխանությունն ստուգելու նպատակով՝ դրանք ստանալու պահից սկսած 1 ամսվա ընթացքում: Լրացուցիչ հայտերի ուսումնասիրության արդյունքներով կարող է կնքվել պայմանագիր կամ կնքված պայմանագրերի լրացուցիչ համաձայնագրեր:

39. Ենթակառուցվածքի օպերատորը կարող է, ըստ փոխադրողների լրացուցիչ հայտերի, ուսումնասիրել ժամանակացույցի լրացուցիչ գծեր հատկացնելու հնարավորությունը:

40. Սույն Կանոնների 16-րդ կետով սահմանված ժամկետից ուշ ստացված հայտերը հաշվի չեն առնվում գնացքների երթևեկության նորմատիվ ժամանակացույցը կազմելու ժամանակ և դիտարկվում են որպես լրացուցիչ հայտեր:

41. Ժամանակացույցի գծերի հատկացումը, ըստ լրացուցիչ հայտերի, իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

42. Լրացուցիչ հայտերը մասամբ բավարարելու կամ դրանք մերժելու ռիսկերը կրում են փոխադրողները:

XI. Տեղեկատվության տրամադրման կարգը

43. Ենթակառուցվածքի օպերատորը համացանցի իր պաշտոնական կայքէջում տեղադրում է ենթակառուցվածքի տեղամասերի տեխնիկական բնութագրերը, նորմատիվ իրավական ակտերի ցանկը, ինչպես նաև ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության կարգը կանոնակարգող՝ ենթակառուցվածքի օպերատորի ակտերը՝ հաշվի առնելով այն անդամ պետության օրենսդրության պահանջները, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

44. Ենթակառուցվածքի օպերատորը և փոխադրողները պետք է պահպանեն այն անդամ պետության օրենսդրության պահանջները, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, այդ թվում՝ ազգային անվտանգության ապահովման պահանջները՝ հաշվի առնելով պետական գաղտնիք կազմող կամ սահմանափակ տարածում ունեցող տեղեկություններ պարունակող տեղեկատվության տարածման նկատմամբ սահմանափակումները:

XII. Վեճերի կարգավորման կարգը

45. Սույն Կանոնների կիրառման ընթացքում փոխադրողի և օպերատորի միջև ծագած բոլոր վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցություններ անցկացնելու միջոցով:

46. Բանակցությունների ընթացքում փոխադրողի և ենթակառուցվածքի օպերատորի կողմից համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում բոլոր վեճերը և տարաձայնությունները կարգավորվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

Հավելված
Եվրասիական տնտեսական միության շրջանակներում
երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի
ծառայությունների հասանելիության կանոնների

ՀՀ

Հայտ

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության

_____ թվականի «____»_____ թիվ_____
_____ թ-ից մինչև _____ թ-ն ընկած ժամանակահատվածի համար

Ենթակառուցվածքի օպերատոր
_____
_____
_____
(անվանում, իրավաբանական հասցե, փոստային հասցե)

Փոխադրող_____
_____
(անվանում, իրավաբանական հասցե, փոստային հասցե)

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանագրի համարն ու ամսաթիվը (առկայության
դեպքում)_____
_____

Սույնով հաստատում եմ հայտին կից ներկայացվող հետևյալ փաստաթղթերի (տեղեկատվության)* արժանահավատությունն ու ամբողջականությունը _____ տարիների համար՝ _____ էջով և _____ օրինակից.

1) _____,
2) _____,
3) _____:

_____
Փոխադրողի ստորագրությունը

_____
Կ. Տ.

* Ծանոթագրություն՝ կից ներկայացվում են Եվրասիական տնտեսական միության շրջանակներում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության կանոնների 17-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (տեղեկատվությունը)

Հավելված 2
Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքների կարգավորման մասին կարգի

Կանոններ
Եվրասիական տնտեսական միության շրջանակներում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոններով սահմանվում են փոխադրման գործունեությունը պլանավորելու և կազմակերպելու շրջանակներում անդամ պետությունների երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի տեղամասերի սահմաններում ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները, այդպիսի ծառայությունների ցանկը, ենթակառուցվածքի կարգավարացման (դիսպետչերականացման) և թողունակության բաշխման միասնական սկզբունքները, ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի էական պայմանները, ենթակառուցվածքի օպերատորի և փոխադրողների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը:

II. Սահմանումները

2. Սույն Կանոններում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«արտահերթ գնացքներ»՝ գնացքների երթևեկության ժամանակացույցով չնախատեսված գնացքներ (վերականգնողական և հրշեջ գնացքներ, ձյունամաքրիչներ, գնացքաքարշեր՝ առանց վագոնների, հատուկ ինքնագնաց շարժակազմ), որոնք նախատեսված են գնացքների երթևեկության խոչընդոտների վերացման, անկանխատեսելի աշխատանքների կատարման և տրանսպորտային միջոցների համապատասխան վերատեղակայման համար (դրանց՝ ընթացուղով շարժվելու կարգը որոշվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, կամ ենթակառուցվածքի օպերատորի այն ակտերով, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը).

«փոխադրման գործընթացի կարգավարացում»՝ գնացքների երթևեկության և օպերատիվ պայմաններում մանևրային աշխատանքի հսկողության, կառավարման գործընթաց.

«մանևրային տեղաշարժեր»՝ գնացքակազմի փոփոխման մասով իրականացվող գործողություններ (շարժակազմի կցում (անջատում), գնացքակազմի կազմավորում (կազմացրում), գնացքակազմերի վերադասավորում՝ համակազմից համակազմ, գնացքաքարշի երթևեկություն ու տեղադրում գնացքակազմում կամ գնացքաքարշի հեռացում տվյալ կազմից, վագոնների մոտեցում մերձատար ուղիներին կամ դրանց հեռացում այդպիսի ուղիներից և այլ գործողություններ.

«արտակարգ իրավիճակ»՝ հանգամանք, որը սպառնում է գնացքների երթևեկության անվտանգությանը՝ ենթակառուցվածքի օբյեկտների անսարքության արդյունքում, կամ որը խոչընդոտ է ստեղծում գնացքների բացթողման համար.

«ենթակառուցվածքի օպերատոր»՝ երկաթուղային տրանսպորտի կազմակերպություն, որն օրինական հիմունքներով տիրապետում է ենթակառուցվածքն ու օգտագործում այն և (կամ) ենթակառուցվածքի ծառայություններ է մատուցում այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

«փոխադրումների պլանավորում»՝ ենթակառուցվածքի օբյեկտներում (տեղամասերում և կայարաններում) սահմանված ժամանակահատվածի համար (տարի, ամիս, օր) փոխադրումների պլանի մշակում՝ ծառայությունների մատուցման կնքված պայմանագրերի համաձայն.

«գնացքների երթևեկության օրական պլան»՝ պլանավորված օրերին փոխադրման գործընթացի կարգավարացման և գնացքների երթևեկության կազմակերպման համար ենթակառուցվածքի օպերատորի կողմից կազմված փաստաթուղթ.

«տեխնիկական պլան»՝ փոխադրումների ամփոփ պլանի, փոխադրողների տեխնիկական պլանների և Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի տեղեկատվության հիման վրա ենթակառուցվածքի օպերատորի կողմից կազմված փաստաթուղթ:

3. Սույն Կանոններում գործածվող այլ հասկացություններն ընկալվում են այն իմաստներով, որոնք նախատեսված են Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին արձանագրությամբ, Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքների կարգավորման մասին կարգով, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության շրջանակներում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիության կանոններով (այսուհետ՝ Հասանելիության կանոններ):

III. Ենթակառուցվածքի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունները

4. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների ցանկը (այսուհետ՝ ծառայությունների ցանկ) ներառում է փոխադրումների իրականացման համար ենթակառուցվածքի օգտագործման հետ կապված հիմնական ծառայությունները՝ սույն Կանոնների հավելվածի համաձայն :

5. Ենթակառուցվածքի ծառայությունների կազմի մեջ մտնող գործողությունների (աշխատանքների) ցանկը սահմանվում է՝ հաշվի առնելով փոխադրման գործընթացի տեխնոլոգիական առանձնահատկություններն ու այն անդամ պետության օրենսդրության պահանջները, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

6. Սույն Կանոնների հավելվածում նշված ենթակառուցվածքի ծառայությունները տրամադրվում են այն անդամ պետության օրենսդրության պահանջների պահպանմամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, այդ թվում՝ ազգային անվտանգության ապահովման մասով:

7. Փոխադրողի հետ համաձայնություն ձեռք բերելով՝ ենթակառուցվածքի օպերատորն իրավասու է մատուցելու այլ ծառայություններ, որոնք նշված չեն սույն Կանոնների հավելվածում այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

IV. Ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման կարգը

8. Ենթակառուցվածքի ծառայությունների մատուցմամբ նախատեսվում է ենթակառուցվածքի օպերատորի և փոխադրողի փոխգործակցություն փոխադրումների կազմակերպման ու իրականացման հետևյալ գործընթացների շրջանակներում.

1) փոխադրումների տեխնոլոգիական պլանավորում և նորմավորում.

2) փոխադրումների ամսական և օպերատիվ պլանավորում.

3) փոխադրումների իրականացում՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում (այսուհետ՝ պայմանագիր).

4) ենթակառուցվածքի օպերատորի և փոխադրողի միջև տվյալների փոխանակում:

9. Փոխադրումների պլանավորումը և նորմավորումը, փոխադրման ծավալների և գնացքների երթևեկության ժամանակացույցի ճշգրտումն իրականացվում են սույն Կանոնների համաձայն սահմանված կարգով, Հասանելիության կանոններով, այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, ինչպես նաև ենթակառուցվածքի օպերատորի այն ակտերով, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

10. Օպերատիվ պլանավորման ժամանակ ենթակառուցվածքի օպերատորը և փոխադրողները կատարում են գնացքների երթևեկության հաստատված օրական պլանը (գնացքների երթևեկության ժամանակացույցը և համաձայնեցված տեխնիկական պլանը, այդ թվում՝ այն միջպետական կցվանքային կետերի համաձայն գնացքների, վագոնների փոխանակման պլանը, որոնք սահմանված են Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի որոշմամբ):

11. Փոխադրման իրականացումը ենթակառուցվածքի օպերատորի և փոխադրողների կազմակերպչական ու տեխնոլոգիական փոխկապակցված գործողությունների ամբողջություն է և իրականացվում է սույն Կանոնների և այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, ինչպես նաև ենթակառուցվածքի օպերատորի այն ակտերի համաձայն, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

12. Ենթակառուցվածքի օգտագործումն իրականացվում է սույն Կանոնների համաձայն՝ պահպանելով այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված նորմերը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, այդ թվում՝ երթևեկության անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխան, ինչպես նաև ենթակառուցվածքի օպերատորի այն ակտերի համաձայն, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

13. Ենթակառուցվածքի պահպանումն իրականացվում է այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

14. Փոխադրման գործընթացի կարգավարացման և թողունակության բաշխման միասնական սկզբունքներն են՝

1) ենթակառուցվածքի սպասարկվող տեղամասերում մեկ կարգավարի կողմից գնացքների երթևեկության կառավարումը.

2) գնացքների երթևեկության ժամանակացույցում ներառված տեխնոլոգիական նորմերի և նորմատիվների, շահագործման աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների ու տեխնիկական նորմերի իրականացումը.

3) գնացքների երթևեկության անվտանգության և աշխատողների աշխատանքի պահպանության ապահովումը.

4) կարգավարի կողմից երթևեկության առաջնահերթությունները ներկայացնելը:

15. Փոխադրման գործընթացի կարգավարացումն իրականացնում է ենթակառուցվածքի օպերատորը կամ նրա կողմից լիազորված անձը՝ ենթակառուցվածքում գնացքների անվտանգ բացթողումն ապահովելու նպատակով:

Փոխադրման գործընթացի կարգավարացումն իրականացվում է գնացքների երթևեկության օրական պլանով հաստատված գնացքների երթևեկության ժամանակացույցի համաձայն և տեխնիկական շահագործման կանոններով, գնացքների երթևեկության ու կայարաններում մանևրային աշխատանքի, ազդանշանների և կապի վերաբերյալ ուղեցույցներով սահմանված կարգով, որոնք հաստատված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, և (կամ) ենթակառուցվածքի օպերատորի այն ակտերով, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

16. Գնացքների ընդունման, ուղարկման և բացթողման, ենթակառուցվածքի տեղամասում օգտագործվող ցանկացած տրանսպորտային միջոցի (շարժակազմի) կամ ինքնագնաց տեխնիկայի մանևրային տեղաշարժի գործընթացները կարգավորվում են ենթակառուցվածքի օպերատորի կողմից:

Նշված գործընթացների մասով ենթակառուցվածքի օպերատորի հրահանգները (ցուցումները), այդ թվում՝ գնացքների երթևեկության անվտանգության պահանջների ապահովման, գնացքների երթևեկության ժամանակացույցի նորմատիվների առնչությամբ, ենթակառուցվածքի գծային ստորաբաժանումների աշխատանքի տեխնոլոգիական գործընթացների առնչությամբ պարտադիր են փոխադրման գործընթացի բոլոր մասնակիցների համար:

17. Փոխադրման գործընթացի իրականացման նպատակով ենթակառուցվածքի օպերատորը և փոխադրողները օգտագործում են ենթակառուցվածքի օպերատորի տեղեկատվական համակարգերը՝ տեղեկատվությունը (տվյալները) այն ծավալով փոխանակելու համար, որը նախատեսված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

18. Հիմնական տեղեկատվությանն առնչվող լրացուցիչ տեղեկատվությունը ենթակառուցվածքի օպերատորի կողմից փոխադրողին տրամադրվում է առանձին պայմանագրերի հիման վրա:

19. Ենթակառուցվածքի օպերատորը կնքված պայմանագրի առկայության դեպքում կարող է փոխադրողին մերժել մատուցելու ենթակառուցվածքի ծառայություններ, եթե՝

1) փոխադրումը դադարեցվել է կամ դրա նկատմամբ կիրառվել է սահմանափակում, այդ թվում՝ բեռների, ուղեբեռի և բեռնածանրոցների ներսբերման և (կամ) դուրսհանման սահմանափակումներ այն անդամ պետության օրենսդրության պահանջներին համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

2) հնարավոր չէ մատուցել ենթակառուցվածքի ծառայություններ՝ արտակարգ իրավիճակների առաջացման հետևանքով.

3) իրականացվում են փոխադրումներ արտահերթ գնացքներով.

4) առաջացել է ազգային անվտանգությանը սպառնացող վտանգ կամ արտակարգ դրություն, անհաղթահարելի ուժ, ռազմական գործողություններ, շրջափակում, համաճարակ կամ ենթակառուցվածքի օպերատորից և փոխադրողներից անկախ այլ հանգամանքներ, որոնք խոչընդոտում են պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը.

5) սահմանվել է լիազորված անձի կողմից ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման այլ կարգ այն անդամ պետության կառավարության որոշմամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

6) այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

20. Սույն Կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքերում փոխադրողին ենթակառուցվածքի ծառայությունների մատուցումը մերժելիս ենթակառուցվածքի օպերատորը

ծանուցում է փոխադրողին պայմանագրով նախատեսված կարգով պարտավորությունների կատարման անհնարինության մասին:

21. Ենթակառուցվածքի օպերատորը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ այն գնացքների բացթողումը կազմակերպելու համար, որոնք շեղվում են գնացքների երթևեկության ժամանակացույցից կամ նախատեսված չեն տվյալ ժամանակացույցով:

22. Ենթակառուցվածքի օպերատորի կողմից ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման փաստը և դրանց փաստացի ծավալն առանձին՝ ըստ ծառայությունների յուրաքանչյուր տեսակի՝ ծառայությունների ցանկի համաձայն, հաստատվում են այնպիսի փաստաթղթերով, որոնց ձևը հաստատվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, և (կամ) ենթակառուցվածքի օպերատորի այն ակտերով, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

V. Ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանագիրը և դրա էական պայմանները

23. Ենթակառուցվածքի ծառայությունները մատուցվում են այն պայմանագրի հիման վրա, որը պարզ գրավոր ձևով կնքվում է ենթակառուցվածքի օպերատորի և փոխադրողի միջև:

24. Պայմանագիրը չպետք է ներառի այնպիսի նորմեր, որոնք հակասում են Հասանելիության կանոններով և սույն Կանոններով սահմանված սկզբունքներին ու պահանջներին, ինչպես նաև այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

25. Եթե պայմանագրի գործողության ժամկետում հաստատվում է Հասանելիության կանոնների 17-րդ կետում նշված և պայմանագրով նախատեսված՝ փոխադրողի կողմից ներկայացված տեղեկատվության (բացառությամբ կանխատեսելի ցուցանիշների) ոչ արժանահավատ լինելը, ապա ենթակառուցվածքի օպերատորն իրավասու է լուծելու պայմանագիրն այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

26. Արգելվում է փոխադրողի պահանջի իրավունքի զիջումը, որը բխում է պայմանագրից՝ բացառությամբ սույն Կանոնների 27-րդ կետով նախատեսված դեպքերի:

27. Պայմանագրից բխող իրավունքներն օգտագործելու անհնարինության դեպքում փոխադրողը կարող է ենթակառուցվածքի օպերատորի համաձայնությամբ այդ իրավունքը փոխանցել այլ փոխադրողի, եթե վերջինիս մոտ առկա է պայմանագրով նախատեսված պայմաններով կնքված պայմանագիր:

28. Պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ էական պայմանները՝

1) պայմանագրի առարկան (ծառայությունների ծավալները, ենթակառուցվածքի թողունակության չափը (ժամանակացույցի գծերի քանակը), ենթակառուցվածքի տեղամասերը).

2) ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման պայմանները և ժամկետները.

3) ծառայությունների արժեքը (սակագները, գները, գանձումների դրույքաչափերը) կամ դրա սահմանման կարգը.

4) ծառայությունների դիմաց վճարման կարգն ու պայմանները (հաշվարկների կարգը, վճարման եղանակները, վճարման արժույթը).

5) կողմերի՝ պայմանագրով նախատեսված պատասխանատվությունը՝ վնասներ հասցնելու, պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար (տուժանքներ, տուգանքներ, վնասների հատուցում).

6) ֆորսմաժորային հանգամանքները (անհաղթահարելի ուժ).

7) պայմանագրի գործողության ժամկետը, պայմանագրի գործողությունը դադարեցնելու (լուծելու) հիմքերը և կարգը՝ ներառյալ պայմանագրի գործողությունը դադարեցնելու (լուծելու) պայմանները:

29. Ենթակառուցվածքի օպերատորի և փոխադրողի միջև կարող է կնքվել մեկանգամյա պայմանագիր՝ կնքված պայմանագրի առկայության դեպքում (կամ պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագիր)՝ լրացուցիչ փոխադրում իրականացնելու համար լրացուցիչ հայտ ներկայացնելու դեպքում:

VI. Ենթակառուցվածքի օպերատորի և փոխադրողի իրավունքներն ու պարտականությունները

30. Փոխադրողն իրավասու է՝

1) ենթակառուցվածքի օպերատորին ուղարկելու առաջարկություններ՝ փոխադրումների կազմակերպման վերաբերյալ.

2) ստանալու տեղեկատվություն այն ծավալով, որն անհրաժեշտ է սույն Կանոնների և Հասանելիության կանոնների համաձայն փոխադրումները կազմակերպելու համար՝ պարտադիր պահպանելով այն անդամ պետության օրենսդրության պահանջները, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, այդ թվում՝ ազգային անվտանգության ապահովման պահանջները՝ հաշվի առնելով պետական գաղտնիք կազմող կամ սահմանափակ տարածում ունեցող տեղեկություններ պարունակող տեղեկատվության տարածման նկատմամբ սահմանափակումները.

3) ապահովված լինելու ենթակառուցվածքի ծառայությունների հասանելիությամբ և ենթակառուցվածքի ծառայություններով՝ փոխադրման գործունեությունն իրականացնելու համար, այդ թվում՝ գնացքի ընթացուղու ժամանակ՝ պայմանագրի պայմանների համաձայն.

4) իրականացնելու այլ իրավունքներ՝ սահմանված այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, և (կամ) կնքված պայմանագրերի համաձայն:

31. Փոխադրողը պարտավոր է՝

1) ենթակառուցվածքի օպերատորին ներկայացնել ենթակառուցվածքի ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը.

2) ապահովել շարժակազմի համապատասխանությունը երկաթուղային տրանսպորտում անվտանգությանը ներկայացվող պահանջներին, որոնք սահմանված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, ինչպես նաև ենթակառուցվածքի օպերատորի այն ակտերով, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

3) ենթակառուցվածքի օպերատորին տեղեկացնել այն միջադեպերի և հանգամանքների մասին, որոնք հանգեցնում են (կարող են հանգեցնել) երկաթուղային տրանսպորտի բնագավառում անվտանգությանը ներկայացվող այն պահանջների խախտմանը, որոնք սահմանված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, ինչպես նաև ձեռնարկել միջոցներ՝ դրանք վերացնելու (կանխելու) նպատակով.

4) ապահովել երկաթուղային տրանսպորտում երթևեկության և շահագործման անվտանգությանը ներկայացվող այն պահանջների պահպանումը, որոնք սահմանված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, ինչպես նաև ենթակառուցվածքի օպերատորի այն ակտերով, որոնք չեն հակասում այն անդամ պետության օրենսդրությանը, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

5) ապահովել ենթակառուցվածքի օպերատորի առևտրային (ծառայողական) գաղտնիք կազմող այն տեղեկությունների պաշտպանությունը, որոնք հայտնի են դարձել փոխադրողին.

6) ենթակառուցվածքի ծառայությունների դիմաց վճարել այն սակագներով, որոնք սահմանված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, ինչպես նաև կատարել ենթակառուցվածքի օպերատորին հասանելիք այլ վճարումներ՝ պայմանագրով նախատեսված ծավալով, ժամկետներում և պայմաններով.

7) փոխհատուցել առանձին պայմանագրերով չնախատեսված ծախսերի գումարները, որոնք ենթակառուցվածքի օպերատորը կատարել է կայարաններում փոխադրողների վագոնների (գնացքների) վերատեղակայման (տեղափոխման) և (կամ) շարժակազմի անշարժ վիճակի կապակցությամբ.

8) ենթակառուցվածքի օպերատորին գրավոր ծանուցել պայմանագրով նախատեսված ծառայությունների ստացումից հրաժարվելու մասին այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

9) ապահովել բեռների՝ հատուկ պայմաններով երկաթուղային փոխադրման, ոչ եզրաչափային բեռների երկաթուղային փոխադրման պայմանների համաձայնեցումն ու պահպանումն այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը.

10) ապահովել համաձայնեցված ծավալով փոխադրումները և երկաթուղային փոխադրման այլ պարամետրերի (պայմանների) համապատասխանությունը երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի տեղամասերի փոխադրունակությանը և (կամ) երկաթուղային կայարանների վերամշակման հնարավորություններին՝ ըստ բեռի երթուղու.

11) հատուցել ենթակառուցվածքի օպերատորին և (կամ) երրորդ անձանց պատճառված վնասը.

12) կատարել այլ պարտականություններ, որոնք սահմանված են պայմանագրով և այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

32. Ենթակառուցվածքի օպերատորն իրավասու է՝

1) ձեռնարկելու երթևեկության անվտանգությունն ապահովելու միջոցներ, այդ թվում՝

սահմանելու ենթակառուցվածքի տեղամասերում գնացքների երթևեկության արագության ժամանակավոր և մշտական սահմանափակումներ.

կանգնեցնելու գնացքի երթևեկությունը կայարանում, միջուղում, եթե ավտոմատ և տեսողական հսկողության միջոցներով գնացքի ընթացքի ժամանակ հայտնաբերվում են շարժակազմի տեխնիկական անսարքություններ և առևտրային խոտաններ, որոնք սպառնում են երթևեկության անվտանգությանը.

ենթակառուցվածքի աշխատանքները վերականգնելու նպատակով օգտագործելու փոխադրողի ռեսուրսները (շարժակազմ, անձնակազմ), եթե առաջացել են գնացքների երթևեկությունը խոչընդոտող իրավիճակներ.

փոխադրողին տալու հրահանգներ (հրամաններ, կարգադրագրեր, ցուցումներ, նախազգուշացումներ և այլն), որոնք առնչվում են գնացքների երթևեկության անվտանգության պահանջների ապահովմանը, գնացքների երթևեկության ժամանակացույցի նորմատիվներին, գնացքների կազմավորման պլանին և կարգին, ենթակառուցվածքի կայարանների (գծային ստորաբաժանումների) աշխատանքի տեխնոլոգիական գործընթացներին.

2) պայմանագրի կնքման փուլում փոխադրողից պահանջելու երկաթուղային տրանսպորտում անվտանգության հավաստագիր, լիցենզիաներ՝ փոխադրումներ իրականացնելիս լիցենզավորման ենթակա գործունեության բոլոր տեսակներն իրականացնելու համար.

3) պայմանագրի կատարման փուլում փոխադրողից պահանջելու երկաթուղային տրանսպորտի անվտանգության համակարգի պահանջներին համապատասխանությունը հաստատող փաստաթղթերը.

4) միակողմանիորեն փոփոխություններ և լրացումներ կատարելու պայմանագրում թողունակության հատկացված չափի (ժամանակացույցի գծերի) ճշգրտման մասով այն դեպքում, երբ փոխադրողն օգտագործում է ենթակառուցվածքի տեղամասի թողունակության հատկացված չափը ոչ այն ամբողջական ծավալով, որը սահմանված է գնացքների երթևեկության ժամանակացույցով.

5) ընդունելու որոշումներ փոխադրողների շարժակազմի՝ այն կայարաններում վերատեղակայման (տեղափոխման) և անշարժ վիճակի վերաբերյալ, որտեղ առկա են դրա անշարժ վիճակի համար ազատ ուղու հնարավորություններ, կամ լոկալ ենթակառուցվածքում, եթե փոխադրողն օգտագործում է ենթակառուցվածքը պայմանագրի պայմանների խախտմամբ.

6) մերժելու փոխադրողի համար ենթակառուցվածքի հասանելիության ապահովումը՝ ենթակառուցվածքի օպերատորից անկախ պատճառներով (երրորդ անձանց, այդ թվում՝ հարակից (սահմանակից) երկաթուղային վարչակազմերի և (կամ) լոկալ ենթակառուցվածքների տիրապետողների մեղքով)՝ նման փաստերը չհամարելով որպես պայմանագրի պայմանների խախտում.

7) միակողմանիորեն որոշում կայացնելու այն ծառայությունների մատուցումը ժամանակավոր դադարեցնելու մասին, որոնք կապված են երկաթուղային հաղորդակցության որոշակի ուղղություններով փոխադրումներ իրականացնելու հետ, կամ ծառայությունները ոչ ամբողջական ծավալով մատուցելու մասին՝ բնական և տեխնածին արտակարգ իրավիճակներ առաջանալու դեպքում, ինչպես նաև արտակարգ դրություն հայտարարելու և փոխադրումը խոչընդոտող այլ հանգամանքների դեպքում.

8) սահմանափակելու ենթակառուցվածքի հասանելիությունն արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում՝ ժամանակացույցի բաշխված գծերը ենթակառուցվածքի վերականգնման համար անհրաժեշտ ժամկետով վերացնելու միջոցով.

9) իրականացնելու այլ իրավունքներ՝ սահմանված այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, և (կամ) կնքված պայմանագրերով:

33. Ենթակառուցվածքի օպերատորը պարտավոր է՝

1) ընդունել և ուսումնասիրել փոխադրումների կազմակերպման վերաբերյալ փոխադրողների առաջարկությունները, ինչպես նաև ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը.

2) ժամանակին փոխադրողներին տրամադրել տեղեկատվություն այն ծավալով, որն անհաժեշտ է սույն Կանոնների և Հասանելիության կանոնների համաձայն փոխադրումները կազմակերպելու համար՝ պարտադիր պահպանելով այն անդամ պետության օրենսդրության պահանջները, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը, այդ թվում՝ ազգային անվտանգության ապահովման պահանջները՝ հաշվի առնելով պետական գաղտնիք կազմող կամ սահմանափակ տարածում ունեցող տեղեկություններ պարունակող տեղեկատվության նկատմամբ սահմանափակումները.

3) ենթակառուցվածքի տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորության շրջանակներում բաշխել ենթակառուցվածքի թողունակությունը՝ Հասանելիության կանոններին համապատասխան.

4) պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով փոխադրողին տեղեկացնել գնացքների երթևեկության ժամանակացույցում կատարվող փոփոխությունների մասին, որոնք հանգեցնում են ծառայությունների մատուցման համաձայնեցված ժամկետների և պայմանների փոփոխություն.

5) պայմանագրով սահմանված պայմաններով փոխադրողին տեղեկացնել ենթակառուցվածքում տեղի ունեցած վթարների, վնասվածքների և այլ հանգամանքների մասին, որոնք փոխադրողի համար կարող են առաջացնել խոչընդոտներ ենթակառուցվածքն օգտագործելիս իր գործունեությունն իրականացնելու ժամանակ.

6) ապահովել փոխադրողների առևտրային (ծառայողական) գաղտնիք կազմող այն տեղեկությունների պաշտպանությունը, որոնք հայտնի են դարձել ենթակառուցվածքի օպերատորին ենթակառուցվածքի ծառայությունների մատուցման ընթացքում.

7) սարքին վիճակում պահել անհրաժեշտ տեխնիկական միջոցները և ձեռնարկել միջոցներ՝ գնացքների երթևեկության ժամանակ այն ընդհատումները կանխելու և վերացնելու համար, որոնք առաջացել են բնական կամ տեխնածին վթարների հետևանքով.

8) կատարել այլ պարտականություններ, որոնք սահմանված են պայմանագրով և այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

VII. Վեճերի կարգավորման կարգը

34. Սույն Կանոնների կիրառման կամ ծառայությունների մատուցման ընթացքում փոխադրողի և օպերատորի միջև ծագած բոլոր վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցություններ անցկացնելու միջոցով:

35. Այն դեպքում, եթե բանակցությունների ընթացքում փոխադրողը և ենթակառուցվածքի օպերատորը չեն կարողանում փոխադարձ համաձայնություն ձեռք բերել, ապա բոլոր վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում գտնվում է ենթակառուցվածքը:

Հավելված
Եվրասիական տնտեսական միության շրջանակներում
երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի
ծառայությունների
մատուցման կանոնների

Ցանկ
Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ծառայությունների

թիվը/կ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն*	Ռուսաստանի Դաշնություն**
1.	Ենթակառուցվածքի տրամադրումը և անհրաժեշտ աշխատանքների կատարումը՝ գնացքների երթևեկությունը (ընթացուղին)՝ ներառյալ փոխադրողի քարշակող շարժակազմի էլեկտրամատակարարումն իրականացնելու համար	Ենթակառուցվածքի տրամադրումը և անհրաժեշտ աշխատանքների կատարումը՝ գնացքների երթևեկությունը (ընթացուղին) իրականացնելու համար	Ենթակառուցվածքի տրամադրումը և անհրաժեշտ աշխատանքների կատարումը՝ գնացքների երթևեկությունը (ընթացուղին)՝ ներառյալ փոխադրողի քարշակող շարժակազմի էլեկտրամատակարարումն իրականացնելու համար
2.	Ենթակառուցվածքի տրամադրումը և անհրաժեշտ աշխատանքների կատարումը մանևրային տեղաշարժերի համար՝ ներառյալ փոխադրողի քարշակող շարժակազմի էլեկտրամատակարարումը	Ենթակառուցվածքի տրամադրումը և անհրաժեշտ աշխատանքների կատարումը մանևրային տեղաշարժերի համար	Ենթակառուցվածքի տրամադրումը և անհրաժեշտ աշխատանքների կատարումը մանևրային տեղաշարժերի համար՝ ներառյալ փոխադրողի քարշակող շարժակազմի էլեկտրամատակարարումը
3.	Ծառայություններ տեխնիկական և առևտրային հսկողության մասով՝ ուղղված գնացքների երթևեկության անվտանգությանն ու փոխադրվող բեռների, ուղեբեռի և բեռնածանրոցների պահպանվածության ապահովմանը	--	Ծառայություններ տեխնիկական և առևտրային հսկողության մասով՝ ուղղված գնացքների երթևեկության անվտանգության ապահովմանը

* Այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում Ղազախստանի Հանրապետությանը պատկանող ենթակառուցվածքի տեղամասերի համար

** Այդ թվում՝ Ղազախստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնությանը պատկանող ենթակառուցվածքի տեղամասերի համար

ՀԱՎԵԼՎԱԾ 25
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գնումների կարգավորման կարգի մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի XXII բաժնին համապատասխան (այսուհետ՝ պայմանագիր) և սահմանում է գնումների կարգավորման կարգը:

2. Պայմանագրի XXII բաժնում և սույն Արձանագրության մեջ օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

«Համացանցային պորտալ» համացանցում անդամ պետության միասնական պաշտոնական կայքը, որն ապահովում է միասնական վայր՝ գնումների մասին տեղեկատվության հասանելիության համար.

«Պատվիրատու»՝ պետական մարմին, տեղական ինքնակառավարման մարմին, բյուջետային կազմակերպություն, այդ թվում՝ պետական և մունիցիպալ հաստատություններ, ինչպես նաև անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն գնումներ իրականացնող այլ անձինք: Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսվել գնումների գործընթացի կազմակերպչի ստեղծումը (գործելը), որի գործունեությունն իրականացվում է այդ օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, չի թույլատրվում պատվիրատուի՝ գնումների պայմանագիր կնքելու գործառույթների փոխանցումը գնումների գործընթացի կազմակերպչին.

«Գնումներ»՝ պետական (մունիցիպալ) գնումներ, որոնց ներքո հասկացվում են պատվիրատուների կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում և այլ գնումներ բյուջետային միջոցների, ինչպես նաև անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում այլ միջոցների հաշվին, ինչպես նաև գնման պայմանագրերի կատարման հետ կապված հարաբերություններ.

«Գնումների մասին տեղեկատվություն»՝ գնումն իրականացնելու մասին ծանուցագիրը, գնման մասին փաստաթղթերը (այդ թվում՝ գնման պայմանագրի նախագիծը), այդ ծանուցագրերում, փաստաթղթերում կատարվող փոփոխությունները, գնումների մասին փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները, գնման գործընթացում կազմված արձանագրությունները, գնման ընթացակարգի արդյունքների մասին տեղեկությունները, գնման պայմանագրերի և այդ պայմանագրերին կից լրացուցիչ համաձայնագրերի մասին տեղեկությունները, գնման պայմանագրի կատարման արդյունքների մասին տեղեկությունները, գնումների ոլորտում՝ անդամ պետության իշխանության կարգավորող և (կամ) հսկող լիազոր մարմիններում ստացված բողոքների, դրանց բովանդակության և այդ բողոքներն ուսումնասիրելու արդյունքում ընդունված որոշումների, այդ մարմինների կողմից տրամադրված կարգադրագրերի վերաբերյալ տեղեկությունները: Գնումների մասին տեղեկատվությունը ենթակա է պարտադիր հրապարակման համացանցային պորտալում.

«Ազգային ռեժիմ»՝ ռեժիմ, որով նախատեսվում է, որ անդամ պետություններից յուրաքանչյուրը պետք է գնումների նպատակներով՝ անդամ պետությունների տարածքներից ծագող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, այդպիսի ապրանքներ առաջարկող, աշխատանքներ իրականացնող և ծառայություններ մատուցող՝ անդամ պետությունների մատակարարների և հնարավոր մատակարարների համար ապահովի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որն ապահովել է իր պետության տարածքից ծագող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև այդպիսի ապրանքներ տրամադրող, աշխատանքներ կատարող և ծառայություններ մատուցող մատակարարների ու հնարավոր մատակարարների համար: Ապրանքի ծագման երկիրը որոշվում է Միության մաքսային տարածքում ապրանքների ծագման երկրները որոշելու համար սահմանված կանոնների համաձայն.

«Էլեկտրոնային առևտրային հարթակի (էլեկտրոնային հարթակի) օպերատոր»՝ իրավաբանական անձ կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որը, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, տնօրինում է էլեկտրոնային առևտրային հարթակը (էլեկտրոնային հարթակը), դրա գործարկման համար անհրաժեշտ ծրագրա-ապարատային միջոցները և (կամ) ապահովում է դրա գործարկումը.

«Մատակարար»՝ անձ, որը մատակարար, կատարող կամ կապալառու է և որի հետ կնքվել է գնման պայմանագիր.

«Հնարավոր մատակարար»՝ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր).

«էլեկտրոնային առևտրային հարթակ (էլեկտրոնային հարթակ)»՝ կայք համացանցում, որը որոշվել է անդամ պետության գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով էլեկտրոնային ձևաչափով գնումների իրականացման համար: Ընդ որում՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ համացանցային պորտալն է էլեկտրոնային առևտրային հարթակ (էլեկտրոնային հարթակ), ինչպես նաև պետք է որոշվի էլեկտրոնային առևտրային հարթակների (էլեկտրոնային հարթակների) սահմանափակ քանակը.

«Գնումների էլեկտրոնային ձևաչափ»՝ գնումների ընթացակարգ, որն իրականացվում է համացանցի, համացանցային պորտալի և (կամ) էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով, ինչպես նաև ծրագրա-ապարատային միջոցներով:

3. Սույն Արձանագրությունը կիրառելիս, եթե անդամ պետության օրենսդրության դրույթներից չի հետևում սույն Արձանագրությամբ սահմանված իմաստներից տարբերվող իմաստ, ապա չի պահանջվում անդամ պետության օրենսդրության համապատասխանեցում սույն Արձանագրությանը:

II. Գնումների ոլորտին ներկայացվող պահանջները

4. Անդամ պետություններում գնումներն իրականացվում են հետևյալ եղանակներով՝

բաց մրցույթ, որով կարող է նախատեսվել, այդ թվում՝ երկփուլ ընթացակարգեր և նախաորակավորման ընտրություն (այսուհետ՝ մրցույթ),

գնային առաջարկների հարցում (գնանշումների հարցում),

առաջարկների հարցում (եթե դա նախատեսված է անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ),

բաց էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ),

բորսային առևտուր (եթե դա նախատեսված է անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ),

գնումներ մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից):

Անդամ պետություններն ապահովում են էլեկտրոնային ձևաչափով մրցույթի և աճուրդի անցկացումն ու գնումների այլ եղանակներ իրականացնելիս ձգտում են անցում կատարել էլեկտրոնային ձևաչափին:

5. Մրցույթի անցկացման միջոցով կատարվող գնումներն իրականացվում են՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 1-ին հավելվածի 1-4-րդ կետերով նախատեսված պահանջները:

6. Գնային առաջարկների հարցում (գնանշման հարցում) անցկացնելու միջոցով կատարվող գնումներն իրականացվում են՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 1-ին հավելվածի 5-րդ կետով նախատեսված պահանջները:

7. Առաջարկների հարցում անցկացնելու միջոցով կատարվող գնումներն իրականացվում են սույն Արձանագրության 1-ին հավելվածի 6-րդ կետով նախատեսված պահանջներին համապատասխան՝ սույն Արձանագրության 2-րդ հավելվածով նախատեսված դեպքերում, ինչպես նաև սույն Արձանագրության 3-րդ հավելվածի 10-րդ, 42-րդ, 44-րդ, 47-րդ, 59-րդ և 63-րդ կետերով նախատեսված դեպքերում, եթե դա նախատեսված է անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

8. Աճուրդի անցկացման միջոցով կատարվող գնումներն իրականացվում են՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 1-ին հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված պահանջները՝ սույն Արձանագրության 4-րդ հավելվածին համապատասխան:

Անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրության մեջ սահմանել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների առավել ընդլայնված ցանկ, որի մասով կատարվող գնումներն իրականացվում են աճուրդի անցկացման միջոցով:

9. Ապրանքային բորսայում կարող են իրականացվել բորսային ապրանքների (այդ թվում՝ սույն Արձանագրության 4-րդ հավելվածով նախատեսված ապրանքների) գնումներ:

Անդամ պետությունն իրավունք ունի իր օրենսդրության մեջ սահմանելու այն ապրանքային բորսաները, որտեղ կարող են իրականացվել գնումները:

10. Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) կատարվող գնումներն իրականացվում են սույն Արձանագրության 3-րդ հավելվածով նախատեսված դեպքերում՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 1-ին հավելվածի 10-րդ կետում նշված պահանջները:

Անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրության մեջ կրճատելու սույն Արձանագրության 3-րդ հավելվածով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկը:

11. Անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրության մեջ միակողմանիորեն սահմանելու գնումների իրականացման այն առանձնահատկությունները,

որոնք կապված են, նախքան գնումների իրականացման ավարտը, հնարավոր մատակարարների մասին տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտության հետ, ինչպես նաև բացառիկ դեպքերում՝ 2 տարուց ոչ ավելի ժամկետով՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների առանձին տեսակների գնումների իրականացման առանձնահատկությունները:

Այդպիսի առանձնահատկությունների սահմանման առնչությամբ ընդունված որոշումները և գործողություններն ընդունվում են սույն Արձանագրության 32-րդ և 33-րդ կետերով նախատեսված կարգով:

12. Գնումները պատվիրատուի կողմից իրականացվում են ինքնուրույն, կամ գնումների գործընթացի կազմակերպչի մասնակցությամբ (այն դեպքում, եթե անդամ պետության օրենսդրությամբ նախատեսվում է գնումների գործընթացում կազմակերպչի գործունեությունը):

13. Անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ պետք է նախատեսվի անբարեխիղճ մատակարարների ռեեստրի ստեղծում և վարում, որում ընդգրկվում են տեղեկություններ՝

այն հնարավոր մատակարարների մասին, որոնք խուսափել են գնման պայմանագիրը կնքելուց,

իրենց հետ կնքված գնման պայմանագրերով ամրագրված պարտականությունները չկատարած կամ ոչ պատշաճ կերպով կատարած մատակարարների մասին,

այն մատակարարների մասին, որոնց հետ պատվիրատուները միակողմանիորեն խզել են գնման այն պայմանագրերը, որոնց կատարման ընթացքում պարզվել է, որ մատակարարը չի համապատասխանում գնման մասին փաստաթղթերում հնարավոր մատակարարների, մատակարարների նկատմամբ սահմանված պահանջներին կամ այդպիսի պահանջներին իր համապատասխանության մասին ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ, որը նրան թույլ է տվել դառնալ հաղթող այն գնումների ընթացակարգում, որի արդյունքների հիման վրա կնքվել է այդպիսի պայմանագիր:

Անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսված լինել, որ անդամ պետության անբարեխիղճ մատակարարների ռեեստրում ներառվեն տվյալներ՝ դրանցում ընդգրկված անձանց հիմնադիրների, կոլեգիալ գործադիր մարմինների անդամների, միանձնյա գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձանց մասին:

Սույն կետի երկրորդից չորրորդ պարբերություններով նախատեսված տեղեկությունների հաստատման (փաստերի սահմանման) դեպքում անբարեխիղճ մատակարարների ռեեստրում ընդգրկումն իրականացվում է 2 տարով՝ դատարանի և (կամ) անդամ պետության պետական իշխանության՝ գնումների ոլորտում կարգավորող և (կամ) հսկող լիազոր մարմնի որոշման հիման վրա:

Այն անձը, որի մասին տեղեկությունները ներառվել են անբարեխիղճ մատակարարների ռեեստրում, իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու տվյալ ռեեստրում ներառված լինելու փաստը:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են նախատեսվել բացառություններ, որոնք, մասնավորապես, վերաբերում են անբարեխիղճ մատակարարների ռեեստրում սույն Արձանագրության 3-րդ հավելվածի 1-ին և 6-րդ կետերին համապատասխան սահմանված հնարավոր մատակարարների և մատակարարների ընդգրկմանը:

14. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են նախատեսվել գնումներին մասնակցությունը թույլատրելու պատվիրատուի իրավունքը կամ պարտականությունը՝ ելնելով տվյալ պետության և (կամ) այլ անդամ պետությունների անբարեխիղճ մատակարարների ռեեստրում պարունակվող տեղեկություններից:

15. Անդամ պետությունները սահմանափակում են գնումներին մասնակցությունը՝

1) հնարավոր մատակարարների և մատակարարների նկատմամբ իրենց օրենսդրություններին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների առանձին տեսակներ գնելիս լրացուցիչ պահանջներ սահմանելու միջոցով,

2) սույն Արձանագրությամբ սահմանված այլ դեպքերում:

16. Անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է արգելք՝

1) գնումների պայմանների մեջ հնարավոր մատակարարների և մատակարարների նկատմամբ քանակապես անչափելի և (կամ) անիրականանալի պահանջների ընդգրկման նկատմամբ,

2) գնումների մասին փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանող հնարավոր մատակարարներին գնումներին մասնակցության թույլտվություն տրամադրելու նկատմամբ,

3) գնումների իրականացման ծանուցագրով և (կամ) գնումների մասին փաստաթղթերով չնախատեսված հիմքերով հնարավոր մատակարարներին գնումների գործընթացին մասնակցելու թույլտվությունը մերժելու նկատմամբ:

17. Հնարավոր մատակարարներից և մատակարարներից գնումների գործընթացին մասնակցության համար վճարի գանձում չի թույլատրվում՝ բացառությամբ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

18. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են սահմանվել հնարավոր մատակարարներին և մատակարարներին ներկայացվող պահանջներ՝ գնումներին մասնակցության հայտերի ապահովման, ինչպես նաև գնման պայմանագրերի կատարման ապահովման վերաբերյալ:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը և ձևերը, ինչպես նաև գնումների պայմանագրի կատարման ապահովումը: Ընդ որում, գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը չի կարող գերազանցել գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի 5 տոկոսը, իսկ գնման պայմանագրի կատարման ապահովման չափը՝ գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 տոկոսը, բացառությամբ այն դեպքի, երբ գնման պայմանագրով նախատեսվում է կանխավճարի վճարում: Այդ դեպքում գնման պայմանագրի կատարման ապահովման չափը պետք է կազմի կանխավճարի չափի 50 տոկոսից ոչ պակասը:

Այն դեպքում, երբ գնման պայմանագիրը պարունակում է մատակարարին կանխավճարի տրամադրման վերաբերյալ պահանջներ՝ մատակարարն իրավունք ունի հրաժարվելու դրանից:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ պետք է սահմանվի գնումներին մասնակցության հայտի և գնման պայմանագրի կատարման ապահովման առնվազն 2 եղանակ (ձև):

Ընդ որում, որպես գնման մասնակցության հայտի ապահովում և գնման պայմանագրի կատարման ապահովում, ընդունվում են նաև հետևյալ միջոցները՝

դրամական միջոցներով երաշխիքային վճար, որը մուտքագրվում է պատվիրատուի բանկային հաշվին կամ, անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ գնումների կազմակերպչի, էլեկտրոնային առևտրային հարթակի (էլեկտրոնային հարթակ) օպերատորի բանկային հաշվին,

բանկային երաշխիք:

Բանկային երաշխիքների նկատմամբ գնումների նպատակներով ներկայացված պահանջները սահմանվում են անդամ պետության օրենսդրությամբ:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ պետք է սահմանվի հնարավոր մատակարարների և մատակարարների գնումներին մասնակցության հայտերի ապահովման ու գնումների մասին պայմանագրի կատարման ապահովման միջոցները ժամանակին վերադարձնելու պահանջ՝ այդպիսի օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքերում:

19. Գնման մասին փաստաթղթերում և գնումների իրականացման ժամանակ օգտագործվող այլ փաստաթղթերում չեն ընդգրկվում ապրանքային նշանների, սպասարկման նշանների, ֆիրմային անվանումների, պատենտների, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքի ծագման վայրի, արտադրողի կամ մատակարարի անվանման նկատմամբ պահանջներ կամ դրանց մասին նշումներ, բացառությամբ այն դեպքերի, երբ գնման օբյեկտի հատկանիշների նկարագրության բավարար ճշգրիտ այլ եղանակ չկա (այդպիսի դեպքերում պատվիրատուն գնումների մասին փաստաթղթերում ներառում է հետևյալ բառերը «կամ համարժեքը (անալոգը)»):

Բացառություն է համարվում գնվող ապրանքի և պատվիրատուի կողմից օգտագործվող ապրանքի անհամատեղելիությունը՝ այդպիսի ապրանքների համատեղելիությունն ապահովելու

անհրաժեշտության դեպքում (այդ թվում՝ հիմնական (տեղակայված) սարքավորանքի արդիականացումը, կազմալրումն ու համալրումը լրացուցիչ սարքերով):

Պատվիրատուն իրավունք ունի սահմանելու ստանդարտ ցուցանիշներ, պահանջներ, պայմանական նշումներ և տերմինաբանություն, որոնք վերաբերում են գնման օբյեկտի տեխնիկական և որակական բնութագրերին, որոնք սահմանվել են տեխնիկական կանոնակարգերով, ստանդարտներով և Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերով ու ակտերով նախատեսված այլ պահանջներով և (կամ) անդամ պետության օրենսդրությամբ:

20. Հանձնաժողովի անդամները (այդ թվում՝ մրցութային, աճուրդային և գնանշման) չեն կարող լինել այնպիսի ֆիզիկական անձինք, որոնք անձամբ հետաքրքրված են գնումների արդյունքներով (այդ թվում՝ ֆիզիկական անձինք, որոնք մրցույթին, աճուրդին, գնային առաջարկների հարցմանը (գնանշման կամ առաջարկների հարցմանը) մասնակցության հայտ են ներկայացրել, մրցույթին, աճուրդին, գնային առաջարկների (գնանշման) կամ առաջարկների հարցմանը մասնակցության հայտ ներկայացրած հնարավոր մատակարարների աշխատողները կամ այն ֆիզիկական անձինք, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ հնարավոր մատակարարները (այդ թվում՝ ֆիզիկական անձինք, որոնք հնարավոր մատակարարների մասնակիցներ (բաժնետերեր) են, նրանց կառավարման մարմինների աշխատողներ և հնարավոր մատակարարների վարկատուներ), ինչպես նաև գնումների ոլորտում ուղղակի հսկողություն իրականացնող՝ անդամ պետության իշխանության կարգավորող և (կամ) հսկող լիազոր մարմինների պաշտոնատար անձինք:

21. Գնման պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պարտադիր պայմանները՝

1) կողմերի պատասխանատվությունը գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

2) վճարման կարգը, ինչպես նաև պատվիրատուի կողմից գնման արդյունքի ընդունումը՝ գնման պայմանագրով սահմանված պահանջներին՝ դրա համապատասխանությունը (այդ թվում՝ քանակով, (ծավալով), լրակազմությամբ, որակով) գնահատելու համար:

22. Անդամ պետության օրենսդրության մեջ պետք է նախատեսված լինի արգելք՝

1) գնման պայմանագրում այնպիսի պայմաններ սահմանելու նկատմամբ, որոնք հանգեցնում են հնարավոր մատակարարների և մատակարարների թվի սահմանափակմանը՝ այդ օրենսդրությամբ չնախատեսված դեպքերում,

2) պատվիրատուների և մատակարարների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց միակողմանիորեն հրաժարվելու նկատմամբ, այն դեպքում, երբ մյուս կողմը պատշաճորեն կատարում է գնման պայմանագրով սահմանված իր պարտավորությունները և այդ օրենսդրությամբ չնախատեսված դեպքերում,

3) պայմանագրային պարտավորությունների կատարման պայմանները փոփոխելու, այդ թվում՝ գնման պայմանագրի արժեքը փոփոխելու նկատմամբ՝ բացառությամբ այդ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Առանց գնման պայմանագրի արժեքի համամասնական նվազեցման չի թույլատրվում նվազեցնել ապրանքների քանակը, աշխատանքների և ծառայությունների ծավալը:

23. Անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում թույլատրվում է գնման պայմանագիր կնքել մի քանի մատակարարների հետ:

24. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է սահմանվել այնպիսի գնման պայմանագիր կնքելու պահանջ, որը նախատեսում է ապրանքի կամ աշխատանքի գնում, հետագա սպասարկում, պիտանիության ժամկետի ընթացքում շահագործում, մատակարարված կամ օբյեկտների աշխատանքների կատարման արդյունքում ստեղծված ապրանքների վերանորոգում և օգտահանում (կենսական պարբերաշրջանի պայմանագիր):

25. Որոշակի գնումների առնչությամբ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է գնման փաստաթղթերի անքակտելի մասը կազմող գնման պայմանագրի նախագծում նախատեսվել դրա կատարման համար լրացուցիչ (այդ թվում՝ գնման օբյեկտի հետ կապ չունեցող) պայմաններ ներառելու անհրաժեշտություն:

26. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է հնարավոր մատակարարի և (կամ) մատակարարի համար նախատեսվել գնման պայմանագրով

սահմանված բոլոր համակատարողների և ենթակապալառուների մասին պատվիրատուին տեղեկություն տրամադրելու պարտականություն:

27. Անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսվել գնման պայմանագրի բանկային ուղեկցում:

28. Անդամ պետությունները ձգտում են մինչև 2016 թվականն անցում կատարել էլեկտրոնային ձևաչափով գնման պայմանագրերի կնքմանը:

29. Անդամ պետություններն ապահովում են գնումների մասին տեղեկատվության բաց լինելը և թափանցիկությունը, այդ թվում՝

1) յուրաքանչյուր անդամ պետության կողմից համացանցային պորտալի ստեղծման միջոցով,

2) համացանցային պորտալում գնումների մասին տեղեկատվության, անբարեխիղճ մատակարարների ռեեստրի հրապարակման միջոցով (այդ թվում՝ ռուսերենով),

3) համացանցային պորտալում գնումների ոլորտում անդամ պետության նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միջոցով (այդ թվում՝ ռուսերենով),

4) էլեկտրոնային առևտրային հարթակների (էլեկտրոնային հարթակ) սահմանափակ քանակ սահմանելու և (կամ) էլեկտրոնային ձևաչափով գնումների մասին տեղեկատվության և այդպիսի գնումների հետ կապված էլեկտրոնային ծառայությունների հասանելիության համար միասնական վայր ապահովող համացանցային պորտալ սահմանելու միջոցով՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում,

5) համացանցային պորտալում հրապարակվող՝ գնումների մասին տեղեկատվությունից, անբարեխիղճ մատակարարների ռեեստրից և գնումների ոլորտում անդամ պետության նորմատիվ իրավական ակտերից անարգել և անվճար օգտվելը կազմակերպելու, ինչպես նաև այդպիսի տեղեկատվության, ռեեստրի և ակտերի հետ կապված տեղեկությունների առավելագույնս ընդգրկուն որոնումն ապահովելու միջոցով:

III. Ազգային ռեժիմը և դրա ապահովման առանձնահատկությունները

30. Անդամ պետություններից յուրաքանչյուրը մյուս անդամ պետությունների տարածքներից ծագող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև այդպիսի ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ առաջարկող մյուս անդամ պետությունների հնարավոր մատակարարների և մատակարարների առնչությամբ ապահովում է ազգային ռեժիմ գնումների ոլորտում:

31. Անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրությամբ սահմանված միակողմանի կարգով բացառիկ դեպքերում սահմանելու ազգային ռեժիմից բացառություններ՝ 2 տարուց ոչ ավելի ժամկետով:

32. Անդամ պետության պետական իշխանության՝ գնումների ոլորտը կարգավորող և (կամ) հսկող լիազոր մարմինը նախապես, սակայն ոչ ուշ, քան սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան բացառություններ սահմանելու մասին ակտն ընդունելուց 15 օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում է Հանձնաժողովին և անդամ պետություններից յուրաքանչյուրին՝ նման ակտ ընդունելու մասին՝ տրամադրելով նաև դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումը:

Այդպիսի ծանուցագիր ստացած անդամ պետությունը կարող է դիմել այն ուղարկած մարմնին՝ առաջարկելով անցկացնել համապատասխան խորհրդակցություններ:

Նշված ծանուցագիրն ուղարկած անդամ պետությունը չի կարող մերժել խորհրդակցություններ անցկացնելու առաջարկը:

33. Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու որոշում անդամ պետության կողմից սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան ընդունված՝ բացառումներ սահմանելու վերաբերյալ ակտը չեղարկելու անհրաժեշտության մասին՝ այդ ակտն ընդունելու օրվանից 1 տարվա ընթացքում:

Հանձնաժողովի կողմից նշված ակտը չեղարկելու անհրաժեշտության մասին որոշում ընդունելու դեպքում՝ որոշումն ընդունած անդամ պետությունը 2 ամսվա ընթացքում ապահովում է ակտում համապատասխան փոփոխությունների կատարումը (այն ուժը կորցրած ճանաչելը):

Հանձնաժողովի կողմից սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան ակտերի ընդունման մասին ծանուցագրերի և դրանք չեղարկելու հարցերով անդամ պետությունների դիմումների ուսումնասիրությունը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից այդ ակտերը չեղարկելու

անհրաժեշտության մասին որոշումների ընդունումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Եթե սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան ընդունված ակտը չեղարկելու անհրաժեշտության մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում այն անդամ պետությունը, որի առնչությամբ կայացվել է նշված որոշումը, չի կատարում այն, ապա մյուս անդամ պետություններից յուրաքանչյուրը միակողմանիորեն իրավունք ունի ազգային ռեժիմը չտարածելու այդ անդամ պետության վրա: Այդ մասին ծանուցագիրն անհապաղ ուղարկվում է Հանձնաժողով և անդամ պետություններից յուրաքանչյուրին:

34. Այն դեպքում, երբ անդամ պետությունը չի կատարում Պայմանագրի XXII բաժնով և սույն Արձանագրությամբ նախատեսված պարտավորությունները, մյուս անդամ պետություններն իրավունք ունեն դիմելու Հանձնաժողովին: Հանձնաժողովը խնդրի ուսումնասիրության արդյունքում ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

խախտման փաստի բացակայության մասին,

խախտման փաստի ընդունման և հայտնաբերված խախտումը անդամ պետության կողմից վերացնելու անհրաժեշտության մասին:

Եթե բացահայտված խախտումը վերացնելու անհրաժեշտության մասին որոշում ընդունելու օրվանից 2 ամսվա ընթացքում անդամ պետությունը, որի առնչությամբ կայացվել է նշված որոշումը, չի կատարում այն, ապա մյուս անդամ պետություններից յուրաքանչյուրը միակողմանիորեն իրավունք ունի ազգային ռեժիմը չտարածելու այդպիսի անդամ պետության վրա:

Այդ մասին ծանուցագիրն անհապաղ ուղարկվում է Հանձնաժողով և անդամ պետություններից յուրաքանչյուրին:

IV. Գնումներին մասնակցության ժամանակ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը

35. Յուրաքանչյուր անդամ պետություն միջոցներ է ձեռնարկում գնումների մասին իր օրենսդրության խախտման դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և կանխման համար:

36. Գնումների ոլորտում անձանց ապահովվող իրավունքների և օրինական շահերի ծավալը սահմանվում է Պայմանագրի XXII բաժնով, սույն Արձանագրությամբ և անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

37. Գնումների ոլորտում անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման, ինչպես նաև անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակներով անդամ պետություններից յուրաքանչյուրն իր օրենսդրությանը համապատասխան, ապահովում է անդամ պետության պետական իշխանության՝ գնումների ոլորտը կարգավորող և (կամ) հսկող լիազոր մարմինների առկայությունը: Ընդ որում՝ թույլատրվում է այդ գործառույթների կատարումը մեկ մարմնի կողմից, որի իրավասության մեջ մտնում են, այդ թվում՝

1) գնումների ոլորտում հսկողության իրականացումը (այդ թվում՝ ստուգումներ անցկացնելու միջոցով).

2) պատվիրատուների, գնումների կազմակերպիչների, էլեկտրոնային առևտրային հարթակների (էլեկտրոնային հարթակների) օպերատորների, համացանցային պորտալների օպերատորների, առևտրային բորսաների, հանձնաժողովների և գնումների իրականացման ժամանակ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությունը խախտող այլ անձանց կապակցությամբ ստացված բողոքների և դիմումների ուսումնասիրությունը: Ընդ որում՝ ցանկացած հնարավոր մատակարար, ինչպես նաև այլ անձ իրավունք ունի անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու պատվիրատուների, գնումների կազմակերպիչների, էլեկտրոնային առևտրային հարթակների (էլեկտրոնային հարթակների) օպերատորների, համացանցային պորտալների օպերատորների, առևտրային բորսաների, հանձնաժողովների և գնումների իրականացման ժամանակ այլ անձանց որոշումները և գործողությունները (անգործությունը), որոնք ընդունվել են (կատարվել են)

նախքան գնումների գործընթացում մասնակցության հայտը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալը.

3) անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության խախտման դեպքերի կանխարգելումը և հայտնաբերումը, ինչպես նաև նշված խախտումների վերացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը (այդ թվում՝ այդ խախտման դեպքերի վերացման վերաբերյալ պարտադիր կատարման ենթակա հանձնարարական տալու և այդ խախտումների համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջոցով).

4) անբարեխիղճ մատակարարների ռեեստրների կազմումը և վարումը:

V. Գնումների արդյունավետությունը բարձրացնող և սոցիալական գործառույթների իրականացմանն ուղղված միջոցների ապահովումը

38. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է գնումների գործընթացը ծրագրելու պահանջ:

39. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են նախատեսվել գնումների արդյունավետությունը բարձրացնող հետևյալ նորմերը՝

1) գնումների նորմավորում՝ գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների նկատմամբ (այդ թվում՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների սահմանային արժեքի նկատմամբ) պահանջներ և (կամ) պատվիրատուների գործառույթներն ապահովելու համար նորմատիվ ծախսեր սահմանելու միջոցով,

2) հանրային հսկողության և գնումների վերաբերյալ հանրային քննարկումների իրականացում,

3) հակագնագցման միջոցների կիրառում,

4) փորձագետների, փորձագիտական կազմակերպությունների ներգրավում:

40. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով գնումներ իրականացնելիս քրեակատարողական համակարգի հաստատությունների և հիմնարկների, հաշմանդամների կազմակերպությունների, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների, ինչպես նաև սոցիալական ուղղվածություն ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների համար կարող են սահմանվել առավելություններ:

Պատվիրատուն գնումների անցկացման ծանուցագրում և գնումների մասին փաստաթղթերում կատարում է նշում այդ առավելությունների մասին:

41. Իրավակիրառ պրակտիկայի առավել արդիական խնդիրներ քննարկելու, տեղեկության փոխանակման, օրենսդրության կատարելագործման և ներդաշնակեցման, գնումների ոլորտում մեթոդական նյութերի համատեղ մշակման համար Հանձնաժողովը անդամ պետության պետական իշխանության՝ գնումների ոլորտը կարգավորող և (կամ) հսկող լիազոր մարմնի հետ միասին, ղեկավարների և փորձագետների մակարդակով անցկացնում է խորհրդակցություններ՝ ոչ պակաս, քան տարին 3 անգամ:

Հավելված 1
«Գնումների կարգավորման կարգի
մասին» արձանագրության

Պահանջներ
մրցույթի կազմակերպման և անցկացման, գնային առաջարկների հարցման (գնանշման հարցման), առաջարկների հարցման, աճուրդի և մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնումների կատարման նկատմամբ

1. Մրցույթն անցկացվում է էլեկտրոնային ձևաչափով, որը, մասնավորապես, նախատեսում է մրցույթում մասնակցության հայտերը էլեկտրոնային փաստաթղթի ձևով ներկայացնելը:

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն հնարավոր մատակարարը, որը գնման պայմանագրի կատարման լավագույն պայմաններն է առաջարկել:

Ոչ օբյեկտիվ և (կամ) ոչ կառավարելի ձևով անդամ պետության գնումների մասին օրենսդրությանը չհամապատասխանող մատակարարի ընտրության հանգեցնող գնահատման չափորոշիչներ, ինչպես նաև գնահատման կարգ սահմանելը և մրցույթին մասնակցության հայտերը համադրելը չի թույլատրվում:

2. Մրցույթն իրականացվում է՝ հաշվի առնելով հետևյալ պահանջները՝

1) մրցութային փաստաթղթերի հաստատում,

2) մրցութային հանձնաժողովի կազմի հաստատում,

3) համացանցային պորտալում մրցույթի անցկացման մասին ծանուցագրի և մրցութային փաստաթղթերի հրապարակում (տեղադրում)՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 15 օրացուցային օր առաջ: Մրցույթի իրականացման մասին ծանուցագրում և (կամ) մրցութային փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում՝ մրցույթում մասնակցության հայտեր ներկայացնելու ժամկետը երկարաձգվում է այնպես, որ կատարված փոփոխությունները համացանցային պորտալում հրապարակելու (տեղադրելու) օրվանից մինչև մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը կազմի առնվազն 10 օրացուցային օր: Ընդ որում, գնման պայմանագրի առարկայի փոփոխություն չի թույլատրվում,

4) մրցութային փաստաթղթերի դրույթների պարզաբանում և այդպիսի պարզաբանումների հրապարակում (տեղադրում) համացանցային պորտալում՝ ոչ ուշ, քան մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 3 օրացուցային օր առաջ: Հարցման հիման վրա մրցութային փաստաթղթերի դրույթների պարզաբանումն իրականացվում է այն դեպքում, երբ հարցումն ստացվում է ոչ ուշ, քան մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 5 օրացուցային օր առաջ,

5) էլեկտրոնային փաստաթղթի ձևով մրցույթին մասնակցության հայտերի ներկայացում էլեկտրոնային առևտրային հարթակ (էլեկտրոնային հարթակ) և (կամ) համացանցային պորտալ,

6) մրցույթին մասնակցության հայտերի բացում, ուսումնասիրություն մրցութային հանձնաժողովի կողմից՝ մրցույթին հնարավոր մատակարարների մասնակցությունը թույլատրելու նպատակով մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխանող հայտերը որոշելու համար,

7) մրցույթին մասնակցության հայտերի բացման, ուսումնասիրության և մրցույթին հնարավոր մատակարարների մասնակցության թույլատրման վերաբերյալ արձանագրությունների հրապարակում (տեղադրում) համացանցային պորտալում և հայտերի բացման, ուսումնասիրության և մրցույթին մասնակցելու թույլտվության արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան մրցութային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներ ընդունելու օրվան հաջորդող օրը,

8) մրցույթին մասնակցելու թույլտվություն ունեցող հնարավոր մատակարարների կողմից ներկայացրած՝ մրցույթին մասնակցության հայտերի համադրման գնահատում, ինչպես նաև հաղթողի վերաբերյալ որոշման կայացում և համապատասխան արձանագրության հրապարակում (տեղադրում) համացանցային պորտալում, այդպիսի գնահատման, համադրման և մրցույթի հաղթողի վերաբերյալ որոշման արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան մրցութային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներ ընդունելու օրվան հաջորդող օրը,

9) մրցույթում հաղթող ճանաչված՝ հնարավոր մատակարարի կողմից ներկայացված մրցույթին մասնակցության հայտով և մրցութային փաստաթղթերով սահմանված պայմաններով գնման պայմանագրի կնքում՝ մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումն ընդունելու օրվանից ոչ շուտ, քան 10 օրացուցային կամ աշխատանքային օր հետո, սակայն ոչ ուշ, քան 30 օրացուցային օր հետո, կամ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում մրցույթը չկայացած ճանաչելու վերաբերյալ որոշման ընդունում: Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նաև սահմանվում են պատվիրատուի և հնարավոր մատակարարի միջև գնման պայմանագիր կնքելու կարգն ու հերթականությունը՝ ելնելով գնման պայմանագրի կատարման համար լավագույն պայմաններ առաջարկած հնարավոր մատակարարի հետ գնման պայմանագիր կնքելու անհրաժեշտությունից, ինչպես նաև պատվիրատուի գործողությունների կարգը՝ մրցույթը չկայացած ճանաչելու դեպքում.

10) էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) և (կամ) համացանցային պորտալում մրցույթի արդյունքների մասին տեղեկությունների հրապարակում (տեղադրում) և մրցույթի արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի

տեղեկացում՝ ոչ ուշ, քան մրցութային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումները ընդունելու օրվան հաջորդող օրը:

3. Նախաորակավորման ընտրություն նախատեսող մրցույթ անցկացնելիս կիրառվում են սույն հավելվածի 1-ին և 2-րդ կետերում նշված պահանջները՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները.

1) մրցույթի հաղթողը որոշվում է նախաորակավորման ընտրություն անցած հնարավոր մատակարարների կազմից.

2) հնարավոր մատակարարների և մատակարարների նկատմամբ լրացուցիչ պահանջները կիրառվում են նախաորակավորման ընտրություն կատարելու համար և չեն կարող օգտագործվել որպես մրցույթին մասնակցության հայտերի գնահատման և համադրման չափորոշիչներ:

4. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մրցույթը կարող է անցկացվել երկփուլ ընթացակարգերի կիրառմամբ:

Երկփուլ ընթացակարգերի կիրառմամբ իրականացվող մրցույթի առաջին փուլում միջոցներ են ձեռնարկվում փորձագետի (փորձագիտական հանձնաժողովի) կողմից՝ հնարավոր մատակարարների այն տեխնիկական առաջարկների հիման վրա գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տեխնիկական մասնագրերը կազմելու համար, որոնք մշակվել են պատվիրատուի տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

Երկփուլ ընթացակարգերի կիրառմամբ իրականացվող մրցույթի երկրորդ փուլում ձեռնարկվում են մրցույթին մասնակցության համար նախատեսված միջոցները՝ հաշվի առնելով սույն հավելվածի 1-ին և 2-րդ կետերում նշված պահանջները:

5. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ գնային առաջարկների հարցման (գնանշման հարցման) եղանակի կիրառման համար սահմանվում է գնման պայմանագրի սահմանային մեկնարկային (առավելագույն) գինը (գնման կողմնորոշիչ արժեքը), այդ թվում՝ գնումների կարգավորման կարգի մասին արձանագրության 2-րդ և 4-րդ հավելվածների համաձայն կազմված ցանկերում ընդգրկված ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ գնելիս («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հավելված):

Գնային առաջարկների հարցման հաղթող է ճանաչվում այն հնարավոր մատակարարը, որն առաջարկել է գնման պայմանագրի ամենացածր գինը:

Անդամ պետություններից յուրաքանչյուրը ձգտում է գնային առաջարկների հարցման (գնանշումների հարցման) եղանակից անցում կատարել առավելապես աճուրդների անցկացման եղանակին:

Գնային առաջարկների հարցմամբ (գնանշումների հարցմամբ) գնումների իրականացման դեպքում, համացանցային պորտալում հրապարակվում է (տեղադրվում է) դրա անցկացման մասին ծանուցագիր անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն գնային առաջարկների հարցման (գնանշումների հարցման) մասնակցության հայտ ներկայացնելու ժամկետը լրանալուց առնվազն 4 աշխատանքային օր առաջ:

Հանձնաժողովի արձանագրությունները, որոնք կազմվում են գնային առաջարկների հարցում (գնանշումների հարցում) անցկացնելու ընթացքում, հրապարակվում են (տեղադրվում են) էլեկտրոնային առևտրային հարթակում և(կամ) համացանցային պորտալում, իսկ գնանշման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների մասին ծանուցագրերն ուղարկվում են յուրաքանչյուր հնարավոր մատակարարի՝ ոչ ուշ, քան այդ որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրը:

6. Առաջարկների հարցում անցկացնելու միջոցով գնումները կարող են իրականացվել Գնումների կարգավորման կարգի մասին արձանագրության 2-րդ հավելվածով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների առնչությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հավելված):

Գնային առաջարկների հարցման հաղթող է ճանաչվում այն հնարավոր մատակարարը, որն անդամ պետության գնումների մասին օրենսդրությանը համապատասխան, ներկայացրել է պայմանագրի կատարման լավագույն պայմանները:

Առաջարկների հարցման միջոցով գնումների իրականացման դեպքում, համացանցային պորտալում հրապարակվում է (տեղադրվում է) դրա անցկացման մասին ծանուցագիր անդամ

պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն առաջարկների հարցման մասնակցության հայտ ներկայացնելու ժամկետը լրանալուց առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

Հանձնաժողովի արձանագրությունները, որոնք կազմվում են առաջարկների հարցում անցկացնելու ընթացքում, հրապարակվում են (տեղադրվում են) էլեկտրոնային առևտրային հարթակում և (կամ) համացանցային պորտալում, իսկ հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների մասին ծանուցագրերն ուղարկվում են յուրաքանչյուր հնարավոր մատակարարի՝ ոչ ուշ, քան այդ որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրը:

7. Աճուրդում մասնակցության նպատակով հնարավոր մատակարարները պետք է առնվազն 3 տարի ժամկետով պարտադիր հավաստագրում անցնեն համացանցային պորտալում և (կամ) էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակ), եթե դա նախատեսվում է անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն հնարավոր մատակարարը, որը գնման պայմանագրի ամենացածր գինն է առաջարկել և համապատասխանում է աճուրդի մասին փաստաթղթերի պահանջներին:

8. Աճուրդն իրականացվում է՝ հաշվի առնելով հետևյալ պահանջները՝

1) աճուրդի մասին փաստաթղթերի հաստատում,

2) աճուրդային հանձնաժողովի կազմի հաստատում,

3) էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) և (կամ) համացանցային պորտալում աճուրդի անցկացման և աճուրդի անցկացման մասին փաստաթղթերի հրապարակում (տեղադրում)՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 15 օրացուցային օր առաջ: Աճուրդի իրականացման մասին ծանուցագրում և (կամ) աճուրդի մասին փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում՝ աճուրդին մասնակցության հայտեր ներկայացնելու ժամկետը երկարաձգվում է այնպես, որ կատարված փոփոխությունները էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) և (կամ) համացանցային պորտալում հրապարակելու (տեղադրելու) օրվանից մինչև աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը կազմի առնվազն 7 օրացուցային օր: Ընդ որում, գնման պայմանագրի առարկայի փոփոխություն չի թույլատրվում: Եթե անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսվում է գնման պայմանագրի այնպիսի մեկնարկային (առավելագույն) գին (գնման կողմնորոշիչ արժեք), որի պարագայում հնարավոր է աճուրդն անցկացնել նախատեսվածից ավելի սեղմ ժամկետում, ապա անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են սահմանվել աճուրդին մասնակցության հայտեր ներկայացնելու ավելի սեղմ ժամկետներ, քան նախատեսված է սույն ենթակետով, սակայն ոչ պակաս, քան 7 օրացուցային օր մինչև աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալը, իսկ աճուրդի մասին փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում՝ ոչ պակաս, քան 3 օրացուցային օր մինչև աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալը՝ էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) և (կամ) համացանցային պորտալում այդ փոփոխությունները հրապարակելու (տեղադրման) օրվանից,

4) աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի դրույթների պարզաբանում և այդպիսի պարզաբանումների հրապարակում (տեղադրում) էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) և (կամ) համացանցային պորտալում՝ ոչ ուշ, քան աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 3 օրացուցային օր առաջ: Հարցման հիման վրա աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի դրույթների պարզաբանումն իրականացվում է այն դեպքում, երբ հարցումն ստացվում է ոչ ուշ, քան աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 5 օրացուցային օր առաջ,

5) էլեկտրոնային փաստաթղթի ձևով աճուրդին մասնակցության հայտերի ներկայացում էլեկտրոնային առևտրային հարթակ (էլեկտրոնային հարթակ) կամ համացանցային պորտալ,

6) աճուրդին մասնակցության հայտերի բացում և ուսումնասիրություն աճուրդային հանձնաժողովի կողմից՝ սույն կետի 8-րդ ենթակետում նշված ընթացակարգին հնարավոր

մատակարարների մասնակցությունը թույլատրելու մասով աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի պահանջներին համապատասխանող հայտերը որոշելու համար,

7) աճուրդին մասնակցության հայտերի բացման, ուսումնասիրության և սույն կետի 8-րդ ենթակետում սահմանված ընթացակարգին հնարավոր մատակարարների մասնակցության թույլատրման վերաբերյալ արձանագրությունների հրապարակում (տեղադրում) էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) և (կամ) համացանցային պորտալում և հայտերի բացման, ուսումնասիրության և մասնակցության թույլտվության արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան աճուրդային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներ ընդունելու օրվան հաջորդող օրը,

8) գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) նվազեցման ընթացակարգի անցկացում գնի նվազեցման նպատակով անցկացվող աճուրդի միջոցով: Ընդ որում, անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսվել, որ գնման պայմանագրի գինը մինչև մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 0,5 տոկոս և դրանից ցածր նվազեցնելու դեպքում աճուրդը շարունակվում է գնման պայմանագրի գնի բարձրացմամբ, որն այդ դեպքում պատվիրատուին վճարում է մատակարարը,

9) սույն կետի 8-րդ ենթակետում նշված ընթացակարգի արդյունքների վերաբերյալ արձանագրության հրապարակում (տեղադրում) էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) և (կամ) համացանցային պորտալում և այդ ընթացակարգի մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ դրա ավարտվելու օրը,

10) սույն կետի 8-րդ ենթակետում նշված ընթացակարգին մասնակցած հնարավոր մատակարարների աճուրդին մասնակցության հայտերի ուսումնասիրություն աճուրդային հանձնաժողովի կողմից՝ աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված պահանջներին համապատասխանող հնարավոր մատակարարներին և աճուրդի հաղթողին որոշելու համար, ինչպես նաև էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) և (կամ) համացանցային պորտալում այդ մասին արձանագրության հրապարակում (տեղադրում) և այդ քննարկման արդյունքների ու աճուրդում հաղթողի որոշման մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան աճուրդային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրը,

11) աճուրդում հաղթող ճանաչված՝ հնարավոր մատակարարի կողմից ներկայացված աճուրդին մասնակցության հայտով և աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված պայմաններով, սույն կետի 8-րդ ենթակետում նշված ընթացակարգի արդյունքների վերաբերյալ արձանագրության համաձայն այդ հնարավոր մատակարարի գնման պայմանագրի գնով գնման պայմանագրի կնքում՝ աճուրդում հաղթող ճանաչելու մասին որոշումն ընդունելու օրվանից ոչ շուտ, քան 10 օրացուցային կամ աշխատանքային օր հետո, սակայն ոչ ուշ, քան 30 օրացուցային օր հետո, կամ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում աճուրդը չկայացած ճանաչելու վերաբերյալ որոշման ընդունում: Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նաև սահմանվում են պատվիրատուի և հնարավոր մատակարարի միջև գնման պայմանագիր կնքելու կարգն ու հերթականությունը՝ ելնելով գնման պայմանագրի ամենացածր գինն առաջարկած հնարավոր մատակարարի հետ գնման պայմանագիր կնքելու անհրաժեշտությունից, ինչպես նաև պատվիրատուի գործողությունների կարգը՝ աճուրդը չկայացած ճանաչելու դեպքում,

12) էլեկտրոնային առևտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) և (կամ) համացանցային պորտալում աճուրդի արդյունքների մասին տեղեկությունների հրապարակում (տեղադրում) և աճուրդային հանձնաժողովի կողմից աճուրդի արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան համապատասխան որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրը:

9. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում թույլատրվում է առանց մատակարարի ընտրությունը կարգավորող նորմերի կիրառման գնումների իրականացումը և դրա հետ գնման պայմանագրի կնքումը: Ընդ որում, Գնումների կարգավորման կարգի մասին արձանագրության 3-րդ հավելվածով նախատեսված դեպքերում այդպիսի գնումներն իրականացվում են անդամ պետության քաղաքացիական օրենսդրությանը

համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հավելված):

10. Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կապալառուից, կատարողից) կատարվող գնումն իրականացվում է գնման պայմանագրի գնի հաշվարկի և հիմնավորման առկայության դեպքում:

Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից գնելու մասին տեղեկատվության տեղադրման մասով պահանջները սահմանվում են անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ:

Հավելված 2
«Գնումների կարգավորման կարգի
մասին» արձանագրության

Առաջարկների հարցում անցկացնելու եղանակով գնումներ իրականացնելու դեպքերի ցանկ

1. Գնման պայմանագրի առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների իրականացում, որը դադարեցվել է պատվիրատուի կողմից, հաշվի առնելով «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության 22-րդ կետի պահանջները (Եվրասիական տնտեսական միության պայմանագրի 25-րդ հավելված): Ընդ որում, եթե մինչ գնման պայմանագրի դադարեցումը մատակարարը մասնակիորեն կատարել է գնման պայմանագրով նախատեսված պարտականությունները, ապա գնման նոր պայմանագրի կնքման դեպքում՝ ըստ սույն կետի, մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքի կամ մատուցվող ծառայության ծավալը պետք է նվազեցվեն, հաշվի առնելով դադարեցված գնման պայմանագրով մատակարարված ապրանքի քանակը, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության ծավալը, իսկ գնման մասին պայմանագրի արժեքը պետք է նվազեցվի մատակարարված ապրանքի քանակի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության համամասնությամբ:

2. Բժշկական հանձնաժողովի որոշմամբ, բժշկական ցուցանիշների առկայության դեպքում, բուժվող հիվանդին նշանակելու համար՝ հիվանդի բժշկական քարտում և բժշկական հանձնաժողովի մատյանում ամրագրված անհրաժեշտ դեղամիջոցների գնումների իրականացում: Ընդ որում, գնվող դեղամիջոցների ծավալը չպետք է գերազանցի բուժվելու ընթացքում հիվանդին անհրաժեշտ դեղամիջոցների ծավալը: Բացի դրանից՝ սույն կետի համաձայն գնումներ իրականացնելու դեպքում, երկու կամ ավելի հիվանդների նշանակման համար նախատեսված դեղամիջոցները չեն կարող գնման մասին մեկ պայմանագրի առարկա լինել:

Հավելված 3
«Գնումների կարգավորման կարգի
մասին» արձանագրության

Մեկ աղբյուրից կամ մեկ մատակարարից (կատարողից, կապալառուից) իրականացվող գնումների դեպքերի ցանկ

1. Այնպիսի ծառայությունների գնում, որոնք առնչվում են բնական մենաշնորհների գործունեության ոլորտին՝ բացառությամբ հեղուկ գազի իրացման, ինչպես նաև անդամ պետության օրենսդրությամբ կարգավորվող գներով (սակագներով) ինժեներա-տեխնիկական ապահովման ցանցերի միացման, էներգամատակարարման կամ էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի հետ էլեկտրական էներգիայի առքուվաճառքի ծառայությունների:

2. Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պահպանման ու ներմուծման (արտահանման) ծառայությունների գնում:

3. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված գներով (սակագներով):

4. Մշակութային արժեքների, այդ թվում՝ թանգարանային իրերի և թանգարանային հավաքածուների, ինչպես նաև հազվագյուտ և արժեքավոր հրատարակումների, ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի մատակարարում՝ ներառյալ պատմական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակություն ունեցող օրինակները, որոնք նախատեսված են պետական

թանգարանային, գրադարանային, արխիվային հիմնադրամների, կինո-, լուսանկարչական հիմնադրամների և այլ նմանատիպ հիմնադրամների համալրման համար:

5. Մոբիլիզացիոն նախապատրաստական աշխատանքների կատարում:

6. Անդամ պետության օրենսդրական ակտերով սահմանված կոնկրետ անձից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, ինչպես նաև այնպիսի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, որոնց կատարումը կամ մատուցումը կարող է իրականացվել բացառապես գործադիր իշխանության մարմինների կողմից, համաձայն դրանց լիազորությունների կամ դրանց ենթակա պետական հիմնարկների, պետական (ունիտար) ձեռնարկությունների, իրավաբանական անձանց կողմից, պետությանը պատկանող (մասնակցության բաժնեմասերի) քվեարկող բաժնետոմսերի հարյուր տոկոսով, որոնց (բոլոր վերը թվարկված կազմակերպությունների) համապատասխան լիազորությունները սահմանվում են անդամ պետության օրենսդրական և անդամ պետության ղեկավարի ակտերով:

7. Որոշակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ արտակարգ իրավիճակի (արտակարգ իրավիճակների տեղայնացման և (կամ) հետևանքների վերացման), վթարի, շտապ բուժօգնության միջամտության անհրաժեշտության դեպքում, որի կապակցությամբ ժամանակի ծախս պահանջող այլ գնումների միջոցների կիրառումն աննպատակ է:

8. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ քրեակատարողական համակարգի հիմնարկներից և ձեռնարկություններից, բուժարտադրական (աշխատանքային) բուժական պրոֆիլակտիկ հիմնարկներից և բուժարտադրական (աշխատանքային) արհեստանոցներից, ինչպես նաև հաշմանդամների հասարակական միավորումների կողմից ստեղծված այնպիսի կազմակերպություններից, որոնցում հաշմանդամների թիվը կազմում է աշխատակիցների ցուցակային թվի առնվազն 50 տոկոսը:

9. Պատիժ կատարող հիմնարկների կողմից, դատապարտյալներին աշխատանքի տեղավորելու նպատակով՝ ապրանքների արտադրման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար հումքի, նյութերի և համալրող իրերի ձեռքբերում՝ իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա, պայմանով, որ նշված հիմնարկների կողմից հումքի, նյութերի ու համալրող իրերի ձեռքբերումն իրականացվում է նշված պայմանագրերով նախատեսված միջոցների հաշվին:

10. Գնումներ, որոնք ճանաչվել են չկայացած՝ գնումների ընթացակարգերի արդյունքներով (անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում):

11. Կապի ծառայություններ ազգային պաշտպանության և ազգային անվտանգության կարիքների, ինչպես նաև իրավակարգի ապահովման համար:

12. Գնումների առավելագույն գումարի սահմանումը (կամ սահմանային եռամսյակային կամ տարեկան ծավալը), որը կարող է որոշվել անդամ պետության օրենսդրությամբ, և որի դեպքում թույլատրվում է գնումներ իրականացնել մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից), ընդ որում՝ նշված չափը չպետք է կրի անհատական բնույթ (անդամ պետությունները ձգտում են նվազագույնի հասցնել նշված շեմը՝ հնարավոր մատակարարների մուտքը գնումներին առավելագույնս ընդլայնելու նպատակով):

13. Սպառազինության և ռազմական տեխնիկայի մատակարարման համար պատվերի տեղաբաշխում՝ մեկ մատակարարից, անդամ պետության օրենսդրության համաձայն, ինչպես նաև սպառազինության, ռազմական և հատուկ տեխնիկայի վերանորոգման (արդիականացման) աշխատանքների ու ծառայությունների ձեռքբերում:

14. Կոնկրետ գնում հնարավոր մատակարարից՝ անդամ պետության ղեկավարի որոշմամբ կամ հանձնարարությամբ, անդամ պետության պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից՝ պետության ղեկավարի որոշմամբ կամ հանձնարարությամբ սահմանված: Այդպիսի ակտերի ընդունմանն առնչվող որոշումներն ու գործողություններն իրականացվում են «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության 32-րդ և 33-րդ կետերով նախատեսված կարգով («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հավելված):

15. Որոշակի հեղինակների գրականության և արվեստի ստեղծագործությունների ձեռքբերում՝ բացառությամբ վարձույթի նպատակով կինոնախագծերի ձեռքբերման դեպքերի, կոնկրետ կատարողների կատարումների, կոնկրետ արտադրողների ձայնագրվածքների, այն

դեպքում, եթե այդպիսի ստեղծագործությունների, կատարումների և ձայնագրվածքների բացառիկ իրավունքները պատկանում են մեկ անձի:

16. Որոշակի պարբերականների և էլեկտրոնային հրատարակումների բաժանորդագրումը, ինչպես նաև որոշակի հեղինակների տպագիր և էլեկտրոնային հրատարակումների գնումը, էլեկտրոնային հրատարակումներին մուտքի ապահովման գծով ծառայությունների մատուցումը՝ նման տպագիր և էլեկտրոնային հրատարակությունների հրատարակիչների կողմից, պետական և համայնքային կրթական հիմնարկների, պետական և համայնքային գրադարանների, պետական գիտական կազմակերպությունների գործունեությունն ապահովելու նպատակով, այն դեպքում, եթե նշված հրատարակիչներին են պատկանում նման հրատարակություններն օգտագործելու բացառիկ իրավունքները:

17. Կենդանաբանական այգու, թատրոնի, կինոթատրոնի, համերգի, կրկեսի, թանգարանի, ցուցահանդեսի և սպորտային միջոցառումների մասնակցության պատվերի տեղաբաշխում, ինչպես նաև գնման պայմանագրի կնքում մուտքի տոմսերի և բաժանորդագրերի՝ թատերատեսարանային, մշակութալուսավորչական ու տեսա-զվարճալի միջոցառումների մասնակցության, էքսկուրսիոն տոմսերի և ուղեգրերի իրացման համար:

18. Ցուցահանդեսների, սեմինարների, համաժողովների, նիստերի, ֆորումների, գիտաժողովների, վերապատրաստման դասընթացների նյութերի ձեռքբերում և նման միջոցառումներում մասնակցությունների համար վճարումների կատարում, ինչպես նաև ծառայություններ մատուցելու գնման պայմանագրի կնքում՝ միջոցառման մասնակցության դեպքում, որն անցկացվում է մի քանի պատվիրատուների կարիքների համար, անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացված միջոցառման կազմակերպչի՝ պատվիրատուի կողմից սահմանված մատակարարի (կատարողի, կապալառուի) հետ:

19. Ֆիզիկական անձանցից դասախոսական, ինչպես նաև էքսկուրսավարի (գիդի) ծառայությունների գնում:

20. Թատերատեսարանային կազմակերպության, թանգարանի, ակումբային հաստատության, կինեմատոգրաֆիայի կազմակերպության, այլ մշակութային կազմակերպության, մշակութային ոլորտում կրթական հաստատության, հեռուստառադիոհաղորդման հիմնարկի պատվերի տեղաբաշխում, կոնկրետ ֆիզիկական անձի կամ կոնկրետ ֆիզիկական անձանց՝ սցենարի հեղինակի, արտիստ-կատարողի, բալետմեյստերի, հեռուստա- կամ ռադիոծրագրի հաղորդավարի, դիզայների, դիրիժորի, թատերագրի, մարզչի, կոմպոզիտորի, կոնցերտմեյստերի, լիբրետիստի, կինո-, տեսա-, ձայնագրման օպերատորի, գրողի, բանաստեղծի, ռեժիսորի, դասուսույցի, քանդակագործի, պարուսույցի, երգչախմբի ղեկավարի և նկարչի կամ այլ ստեղծագործական աշխատողի՝ գրականության կամ արվեստի արգասիքների ստեղծման կամ կատարման համար, ինչպես նաև կոնկրետ ֆիզիկական անձից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերից, կամ իրավաբանական անձից՝ դեկորացիաների, բեմական կահույքի, բեմական հագուստի (այդ թվում՝ գլխարկների և կոշիկների) ու դեկորացիաների և հագուստի պատրաստման համար անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև թատերական ռեկվիզիտի, շինծու իրերի, գրիմի, կեղծամների, թատերական տիկնիկների պատրաստման և տեղադրման՝ նախատեսված սույն կետում նշված կազմակերպությունների կողմից ստեղծագործությունների ստեղծման կամ կատարման համար:

21. Կապիտալ շինարարության օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման հեղինակային վերահսկողության, կապիտալ շինարարության օբյեկտների շինարարության, վերակառուցման և կապիտալ վերանորոգման հեղինակային վերահսկողության ծառայությունների գնում՝ համապատասխան հեղինակների կողմից:

22. Անդամ պետությունների ժողովուրդների մշակութային ժառանգության (պատմական և մշակութային հուշարձանների) օբյեկտների պահպանման աշխատանքների տեխնիկական ու հեղինակային վերահսկողության անցկացման պատվերի տեղաբաշխում:

23. Ծառայությունների գնում, որոնք կապված են աշխատակցին ծառայողական գործուղման ուղարկելու, աշակերտներին, ուսանողներին, ասպիրանտներին՝ ստեղծագործական մրցույթներում (մրցակցությունների, օլիմպիադաների, ֆեստիվալների, խաղերի), ցուցահանդեսներում, պլեներներում, կոնֆերանսներում, ֆորումներում, վարպետության դասերին, ստաժավորումներին մասնակցություն, ուսուցողական գործնական առաջադրանքների կատարում ապահովելու հետ՝ ներառյալ դեպի նշված միջոցառումների վայր և հետ վերադարձի

ճանապարհածախսը, բնակելի տարածքի վարձույթը, տրանսպորտային սպասարկումը, սննդի ապահովումը, ինչպես նաև ներկայացուցչական ծախսերի հետ կապված՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը:

24. Օտար երկրների ղեկավարների, օտարերկրյա պետությունների կառավարությունների ղեկավարների, միջազգային կազմակերպությունների, խորհրդարանական պատվիրակությունների, կառավարական պատվիրակությունների, օտարերկրյա պատվիրակությունների (հյուրանոցային, տրանսպորտային ապահովման, համակարգչային սարքավորումների շահագործման, սննդի ապահովման) ղեկավարների այցերի ապահովման հետ կապված ծառայությունների մատուցման պատվերի տեղաբաշխում:

25. Անդամ պետության ղեկավարի, այլ պաշտպանվող անձանց կացության համար նախատեսված օբյեկտների (կենցաղային, հյուրանոցային, տրանսպորտային սպասարկում, համակարգչային սարքավորումների շահագործում, սանիտարահամաճարակաբանական բարեկեցություն, անվտանգ սննդի տրամադրում), պաշտպանվող անձանց պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև անդամ պետության ղեկավարի գործունեության տեղեկատվական սպասարկման և տեսաարխիվի ձևավորման ծառայությունների ձեռքբերում:

26. Պետական և մոբիլիզացիոն նյութական պահուստներից իրացվող նյութական արժեքների գնում:

27. Որոշակի մատակարարից գնումներ իրականացնող պատվիրատուի մոտ այդպիսի ապրանքների լրացուցիչ քանակի պահանջմունքի առաջացում, ընդ որում՝ լրացուցիչ գնվող ապրանքի քանակը չի կարող գերազանցել գնման պայմանագրով նախատեսված ապրանքների 10 տոկոսը (լրացուցիչ մատակարարվող ապրանքի միավորի գինը պետք է որոշվի որպես պայմանագրի սկզբնական գնի՝պայմանագրում նախատեսված այդպիսի ապրանքի քանակի վրա բաժանման արդյունք):

28. Բազմաբնակարանային շենքի կառավարման ծառայությունների գնման իրականացում՝ բազմաբնակարան շենքի սեփականատերերի կողմից՝ տարածքի ընտրության հիման վրա, կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ կառավարող կազմակերպության բնակարանային օրենսդրության համաձայն, եթե տարածքները բազմաբնակարան շենքում գտնվում են մասնավոր, պետական կամ մունիցիպալ սեփականության ներքո:

29. Գնման մասին պայմանագրի կնքում, որի առարկան ոչ բնակելի նշանակություն ունեցող շենքերի, կառույցների, շինությունների, սենքերի ձեռքբերումն է, անդամ պետության օրենսդրության համապատասխան ակտով սահմանված, ինչպես նաև ոչ բնակելի նշանակություն ունեցող շենքերի, կառույցների, շինությունների, սենքերի վարձակալումը, վարձակալվող տարածքի տեխնիկական պահպանման, պաշտպանության և սպասարկման ծառայությունների գնումը, պետական կամ մունիցիպալ պատվիրատուին անհատույց օգտագործման համար փոխանցված մեկ կամ մի քանի ոչ բնակելի տարածքների տեխնիկական ապահովման, պահպանման և սպասարկման ծառայությունների գնումը, այն դեպքում, եթե այդ ծառայությունները մատուցվում են այլ անձի կամ անձանց, որոնք օգտվում են շենքում գտնվող ոչ բնակելի սենքերից՝ անհատույց օգտագործման և (կամ) գործառական կառավարման համար:

30. Ամենօրյա և (կամ) ամենշաբաթյա պահանջմունքի գնումների իրականացման անհրաժեշտությունը՝ գնումների արդյունքների ամփոփման և գնումների մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու ժամանակաշրջանի համար, այն դեպքում, եթե նման գնումն իրականացվում է անդամ պետության օրենսդրությամբ սահմանված տարվա 1-ին ամսվա ընթացքում: Այս դեպքում գնման ծավալը չի կարող գերազանցել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակը, որն անհրաժեշտ է պատվիրատուի պահանջմունքի բավարարման համար գնումը կատարելու ժամկետի ընթացքում, սակայն 2 ամսից ոչ ավելի ժամանակահատվածում:

31. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում օպերատիվ-հետախուզական, քննչական գործունեություն իրականացնելու համար՝ դրանք իրականացնող իրավասու մարմինների կողմից, անդամ պետության օրենսդրության համաձայն՝ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման, ինչպես նաև անհրաժեշտ գիտատեխնիկական կամ այլ հատուկ գիտելիքներով պաշտոնատար անձանց ու մասնագետների ծառայությունների կատարման համար:

32. Բնօգտագործման իրավունքի ձեռքբերում:

33. Արտասահմանում աշխատակիցների նախապատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ծառայությունների ձեռքբերում:
34. Վարկանիշային գործակալությունների և ֆինանսական ծառայությունների ձեռքբերում:
35. Կույր և թույլ տեսողությամբ քաղաքացիների մասնագիտացված գրադարանների ծառայությունների ձեռքբերում:
36. Արժեթղթերի և իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերում:
37. Անդամ պետությունում ընտրությունների, հանրաքվեների անցկացման համար նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ սահմանված անդամ պետության օրենսդրությամբ:
38. Անդամ պետությունների միջազգային պայմանագրերով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ ըստ անդամ պետության գործադիր իշխանության գերագույն մարմնի կողմից հաստատված ցանկի, ինչպես նաև ներդրումային նախագծերի իրացման շրջանակներում, որոնք ֆինանսավորվում են այն միջազգային ընկերությունների կողմից, որոնց անդամակցում է այդ պետությունը:
39. Պայմանագրի կնքում՝ սահմանագծման, սահմանազատման և պետական սահմանագծի անցման ստուգման՝ գեոդեզիական, քարտեզագրական, տեղագրական և հիդրոգրաֆիկական ապահովում, ինչպես նաև անդամ պետության միջազգային պարտավորությունների կատարման նպատակով՝ ծովային տարածության սահմանագծում:
40. Անդամ պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնին՝ պետությունների, պետությունների կառավարությունների, միջազգային և պետական կազմակերպությունների, օտարերկրյա ոչ կառավարական հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների կողմից, (որոնց գործունեությունը կրում է բարեգործական և միջազգային բնույթ) անհատույց հիմքով տրվող դրամաշնորհների գումարների, ինչպես նաև այդ դրամաշնորհների համաֆինանսավորման համար հատկացվող գումարների օգտագործման հետ կապված՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, այն դեպքում, երբ դրանց տրամադրման համաձայնագրերում նախատեսված են ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման այլ ընթացակարգեր:
41. Ֆիզիկական անձի համար պետական կրթական պատվերի հետ կապված ծառայությունների ձեռքբերում (այն դեպքում, եթե ֆիզիկական անձն ինքնուրույն է ընտրել կրթական կազմակերպությունը):
42. Անդամ պետությունների քաղաքացիների՝ արտասահմանում բուժման ծառայությունների, ինչպես նաև նրանց փոխադրման և ուղեկցման ծառայությունների ձեռքբերում:
43. Մտավոր սեփականության առարկա հանդիսացող ապրանքների և ծառայությունների ձեռքբերում այն անձանցից, որոնք ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների նկատմամբ ունեն բացառիկ իրավունքներ:
44. Անդամ պետությունների արտասահմանյան հիմնարկների, ինչպես նաև նրանց անունից գործող պատվիրատուների առանձնացված ստորաբաժանումների կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում՝ օտարերկրյա պետության տարածքում իրենց գործունեությունն ապահովելու, ինչպես նաև խաղաղարական գործողությունների կատարման նպատակով:
45. Միջազգային տեղեկատվական կազմակերպություններից տեղեկությունների տրամադրման ծառայությունների ձեռքբերում:
46. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են դրամավարկային գործունեության, ինչպես նաև անդամ պետության ազգային հիմնադրամի և կենսաթոշակային ակտիվների կառավարման գծով գործունեություն իրականացնելու համար:
47. Միջազգային առևտրային արբիտրաժներում և արտասահմանյան դատական մարմիններում պետության կամ պատվիրատուների շահերը պաշտպանելու և ներկայացնելու գծով խորհրդատվական ու իրավաբանական ծառայությունների ձեռքբերում:
48. Անդամ պետության օրենսդրությամբ սահմանված անձից ծառայությունների ձեռքբերում՝ ըստ գույքի հավատարմագրային կառավարման:
49. Վիճակագրական դիտարկումների տվյալների մշակման ծառայությունների ձեռքբերում:

50. Դատական ակտերի կատարողների կողմից այն սակարկություններում (աճուրդներում) իրացվող գույքի (ակտիվների) ձեռքբերում՝ համաձայն յուրաքանչյուր անդամ պետության կատարողական վարույթի մասին օրենսդրության, որոնք անցկացվում են անդամ պետության սնանկության մասին օրենսդրության, հողային օրենսդրության համաձայն և պետական գույքի սեփականաշնորհման ժամանակ:

51. Ծառայությունների ձեռքբերում՝ մատուցված փաստաբանների կողմից, դրանց վճարումներից ազատված անձանց՝ անդամ պետության օրենսդրության համաձայն:

52. Ապրանքների ձեռքբերում՝ պետական նյութական պահուստ, անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքում շուկայի վրա կարգավորող ազդեցություն գործելու նպատակով:

53. Պետական նյութական պահուստի նյութական արժեքների պահպանման ծառայությունների ձեռքբերում:

54. Տիեզերագնացների նախապատրաստման և դեպի տիեզերք թռիչքների իրականացումը կազմակերպող ծառայությունների ձեռքբերում՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքում, ինչպես նաև տիեզերական ապարատների նախագծման, հավաքման և փորձարկման ծառայություններ:

55. Մասնագիտացված ավիավերանորոգման ձեռնարկություններում ավիացիոն տեխնիկայի վերանորոգման ծառայությունների ձեռքբերում:

56. Պետական և գերատեսչական պարգևների ու դրանց վերաբերող փաստաթղթերի, անդամ պետության օրենսդրական մարմնի պատգամավորի կրծքանշանի և դրան վերաբերող փաստաթղթի, պետական հավատարմական դրոշմների, անձնագրերի (այդ թվում՝ ծառայողական և դիվանագիտական), անդամ պետության քաղաքացու անձի հաստատման, անդամ պետությունում օտարերկրացու կացության քարտի, քաղաքացիություն չունեցող անձի վկայականի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի պատրաստման ծառայությունների ձեռքբերում, ինչպես նաև գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից հաստատված ցանկով՝ անդամ պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից սահմանված մատակարարներից հատուկ պաշտպանության աստիճան պահանջող տպագիր արտադրանքի ձեռքբերում:

57. Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի գնում՝ թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի պետական ֆոնդի համալրման համար:

58. Ծանր աշխատանք կատարող, աշխատանքային վնասակար (ծայրահեղ վնասակար) և (կամ) վտանգավոր պայմաններում, ինչպես նաև ծայրահեղ վտանգի, մեքենաների և մեխանիզմների հետ կապված աշխատավայրերում աշխատող աշխատակիցների պարտադիր բժշկական զննման ծառայությունների ձեռքբերում:

59. Սպորտային գույքի և սարքավորումների (առարկաների), սպորտային հանդերձանքի ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են անդամ պետության սպորտային ազգային և հավաքական թիմերի մասնակցության և (կամ) պատրաստման համար, ինչպես նաև անդամ պետության սպորտային ազգային և հավաքական թիմերի՝ օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ և այլ միջազգային սպորտային միջոցառումներին մասնակցության համար՝ այդ ոլորտում կարգավորում իրականացնող պետական կառավարման մարմնի կողմից հաստատված օրացուցային պլանի հիման վրա:

60. Անդամ պետության ղեկավարի կամ անդամ պետության կառավարության պահուստից անհետաձգելի ծախսերի համար հատկացված միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, այնպիսի իրավիճակների դեպքում, որոնք սպառնում են տվյալ անդամ պետության կամ դրա վարչատարածքային միավորի քաղաքական, տնտեսական կամ սոցիալական կայունությանը:

61. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են իրավապաշտպան և հատուկ պետական մարմինների հատուկ նշանակության ստորաբաժանումների գործունեության ապահովման համար՝ կապված պայթուցիկ նյութերի և սարքերի բացահայտման ու վնասազերծման, հակաահաբեկչական գործողությունների անցկացման, ինչպես նաև պատանդների ազատագրման, զինված հանցագործների, ծայրահեղականների, ահաբեկիչների, կազմակերպված հանցագործ խմբավորումների

անդամների, ծայրահեղ կամ առավել ծայրահեղ հանցագործների կալանավորման և վնասազերծման հետ:

62. Հատուկ սոցիալական ծառայությունների ձեռքբերում՝ նախատեսված հատուկ սոցիալական ծառայությունների երաշխավորված ծավալով, որը տրամադրվում է այն անձանց (այդպիսի անձանցից բաղկացած (ընտանիքներին), որոնք ունեն ֆիզիկական և (կամ) մտավոր հնարավորություններով պայմանավորված՝ օրգանիզմի ֆունկցիաների հաստատուն խախտումներ,և (կամ) անձանց՝ առանց հստակ բնակության վայրի, ինչպես նաև այն անձանց, որոնք ի վիճակի չեն ինքնապասարկման՝ զառամյալ հասակի հետ կապված, ինչպես նաև հատուկ սոցիալական ծառայությունների անհրաժեշտության սահմանման և գնահատման ծառայությունների ձեռքբերում:

63. Ազգային գեղարվեստական ստեղծագործական արտադրանքի ձեռքբերում՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Հավելված 4
«Գնումների կարգավորման կարգի
մասին» արձանագրության

Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկ, որոնց գնումներն իրականացվում են աճուրդի անցկացման միջոցով

1. Գյուղատնտեսական արտադրանք, որսորդական զբաղմունքի արտադրանք, ծառայություններ գյուղատնտեսության և որսորդության մեջ, բացի կենդանի կենդանիներից, որսորդության, վայրի կենդանիների և թռչունների բազմացման ու բուծման հետ կապված արտադրանքից և ծառայություններից, ինչպես նաև վայրի կենդանիների ու թռչունների որսորդության և բազմացման արտադրանքից:*

2. Անտառային տնտեսության և փայտամթերման արտադրանք, ծառայություններ անտառային տնտեսության և փայտամթերման համար:

3. Ձկնորսության, ձկնաբուծարանների և ձկնային ֆերմաների արտադրանք, ծառայություններ՝ կապված ձկնորսության հետ:*

4. Քարածուխ և լիգնիտ (գորշ ածուխ), տորֆ:

5. Հում նավթ և բնական գազ, ծառայություններ դրանց հանույթի վերաբերյալ՝ բացի հետախուզական աշխատանքներից:

6. Մետաղական հանքանյութեր:

7. Քար, կավ, ավազ և հանքային հումքերի այլ տեսակներ:

8. Սննդամթերք և ըմպելիքներ:*

9. Մանածագործվածք և մանածագործական արտադրանք:

10. Հագուստ, մորթի և մորթուց պատրաստված արտադրանք՝ բացառությամբ մանկական հագուստի:

11. Կաշի և կաշվից արտադրանք, փոկային և թամբագործական արտադրանք, կոշկեղեն:

12. Փայտանյութ, արտադրանք փայտանյութից, խցանակեղևից, փափուկ ծղոտից և հյուսվածեղենից՝ բացի կահույքից:

13. Ցելյուլոզա, թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված արտադրանք:

14. Պոլիգրաֆիական և տպագիր արտադրանք, բացի գովազդային նյութերից, նկարներից, գծագրերից, տպագրված լուսանկարներից, հուշանվերների և նվերների հավաքածուներից (նոթատետրերից և գրառումների տետրերից), ընտրություններում և հանրաքվեներում քվեարկելու համար նախատեսված քվեաթերթիկներից:

15. Կոքսի վառարանների արտադրանք:

16. Օրգանական և անօրգանական սինթեզի արտադրանք:

17. Արտադրանք ռետինից և պլաստմասսայից:

18. Այլ ոչ մետաղական հանքային արտադրանք, բացի ապակե տնտեսա-կենցաղային ապրանքներից, կահավորման ապրանքներից, ինչպես նաև կավագործական, ոչ շինարարական, ոչ հրակայուն արտադրանքից:

19. Մետաղագործական արդյունաբերության արտադրանք:

20. Մետաղամշակման արտադրանք՝ բացի մեքենաներից, սարքավորումներից, միջուկային ռեակտորներից և դրանց մասերից, լիցքավորված մասնիկների արագացուցիչներից:

21. Մեքենաներ և սարքավորումներ, որոնք ներգրավված չեն այլ խմբավորումներում՝ բացի զենքից, զինամթերքից և դրանց մասերից, ժողովրդա-տնտեսական նշանակություն ունեցող պայթուցիկ սարքերից ու պայթուցիկ նյութերից:

22. Գրասենյակային և հաշվիչ տեխնիկա:

23. էլեկտրաշարժիչներ և էլեկտրատեխնիկական սարքավորումներ (այդ թվում՝ էլեկտրասարքավորումներ), որոնք ներգրավված չեն այլ խմբավորումներում:

24. Սարքավորումներ և ապարատուրա ռադիոյի, հեռուստատեսության ու կապի համար:

25. Բժշկական սարքավորումներ և ապարատուրա, չափման միջոցներ, լուսանկարչական և կինոապարատուրա (բացառությամբ անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված՝ բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների):

26. Ավտոմեքենաներ, կցասայլեր և կիսակցասայլեր, թափքեր ավտոմեքենաների համար, մեքենաների մասեր ու պարագաներ, ավտոտնակների սարքավորումներ:

27. Այլ տրանսպորտային միջոցներ՝ բացի առևտրային ու մարդատար նավերից, ռազմանավերից, օդային տիեզերական թռչող սարքերից, թռչող սարքերի սարքավորումներից ու մասերից:

28. Պատրաստի արտադրանք՝ բացի ոսկերչական և դրանց հետ առնչվող արտադրանքից, երաժշտական գործիքներից, խաղերից և խաղալիքներից, աշխատանքային գործընթացում ուսուցանելու համար սարքավորումներից, ուսումնական ձեռնարկներից և դպրոցական սարքավորումներից, գեղարվեստական արհեստի գործերից, արվեստի գործերից և հավաքածուների առարկաներից, ցուցադրական կինոժապավենից, մարդու, կենդանու մազից, սինթետիկ նյութերից և դրանցից պատրաստված իրերից:

29. Թափոններ և ջարդոն, որը պիտանի է որպես նոր հումք օգտագործելու համար:

30. Ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրի, տեխնիկական սպասարկման ու վերանորոգման ծառայություններ:

31. Մեծածախ և կոմիսիոն առևտրի ծառայություններ՝ բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրի ծառայություններից:

32. Ցամաքային տրանսպորտի ծառայություններ՝ բացի երկաթուղային տրանսպորտի ծառայություններից, մետրոպոլիտենի ծառայություններից, խողովակաշարով փոխադրման ծառայություններից:

33. Ջրային տրանսպորտի ծառայություններ:

34. Օժանդակ և լրացուցիչ տրանսպորտային ծառայություններ, տուրիզմի և էքսկուրսիաների ոլորտում ծառայություններ՝ բացի ճանապարհորդությունների բյուրոների և տուրիստական գործակալությունների, զբոսաշրջիկներին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ այլ ծառայություններից:

35. Կապ՝ բացի սուրհանդակային ծառայություններից՝ բացառությամբ ազգային փոստի ծառայությունների, էլեկտրական կապի ծառայությունների:

36. Ֆինանսական միջնորդությանը վերաբերող ծառայություններ՝ բացի ապահովագրության և կենսաթոշակային ապահովման, պարտատոմսային փոխառության թողարկման կազմակերպմանը վերաբերող ծառայություններից:

37. Ծառայություններ, որոնք ֆինանսական միջնորդության նկատմամբ օժանդակ են համարվում՝ բացառությամբ գնահատման ծառայությունների:

38. Ծառայություններ գրասենյակների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և դրանց հետ համատեղ օգտագործվող երկրորդական սարքավորման համար օրգտեխնիկայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման վերաբերյալ:

39. Շենքերի մաքրման ծառայություններ:

40. Փաթեթավորման ծառայություններ:

41. Թափոնների վերացման, սանիտարական մշակման և համանման ծառայություններ:

---

* Բացի երեխաների դաստիարակչական, կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություններում, բժշկական կազմակերպություններում, սոցիալական ծառայություններ տրամադրող հաստատություններում և երեխաների հանգստի կազմակերպություններում գնումներից՝ նշված հաստատությունների և կազմակերպությունների համար հանրային սննդի ծառայություններ:

միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության և պաշտպանության մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի XXIII բաժնի համաձայն և կարգավորում է մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության և պաշտպանության ոլորտի հետ կապված հարաբերությունները:

2. Մտավոր սեփականություն ասելով՝ հասկացվում են գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար նախատեսված ծրագրերը (համակարգչային ծրագրերը), հնչյունագրերը, կատարումները, ապրանքային նշանները և սպասարկման նշանները, աշխարհագրական նշումները, ապրանքների ծագման տեղանունները, գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները, սելեկցիոն նվաճումները, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաները, արտադրության գաղտնիքները (նոու-հաու), ինչպես նաև մտավոր սեփականության այլ օբյեկտներ, որոնց համար ապահովվում է իրավական պահպանություն՝ միջազգային պայմանագրերին, Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին և ակտերին ու անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

II. Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ

3. Հեղինակային իրավունքը տարածվում է գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների վրա: Ստեղծագործության հեղինակին են պատկանում, մասնավորապես, հետևյալ իրավունքները՝

1) ստեղծագործության նկատմամբ բացառիկ իրավունք,
2) հեղինակության իրավունք,
3) անվան իրավունք,
4) ստեղծագործության անձեռնմխելիության իրավունք,
5) ստեղծագործության հրապարակման իրավունք,
6) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4. Անդամ պետություններն ապահովում են հեղինակի ստեղծագործության նկատմամբ բացառիկ իրավունքի, համահեղինակությամբ ստեղծված ստեղծագործության նկատմամբ բացառիկ իրավունքի, հեղինակի մահից հետո հրապարակված ստեղծագործության նկատմամբ բացառիկ իրավունքի պահպանության այն ժամկետների պահպանումը, որոնք չպետք է պակաս լինեն «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին» 1886 թվականի սեպտեմբերի 9-ի Բեռնի կոնվենցիայով (1971 թվականի խմբագրությամբ), Առևտրի համաշխարհային կազմակերպության՝ «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի Համաձայնագրով սահմանված ժամկետներից: Անդամ պետությունների օրենսդրության մեջ կարող են ամրագրված լինել նշված իրավունքների պահպանության երկար ժամկետներ:

էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար նախատեսված ծրագրերը (համակարգչային ծրագրեր)՝ ներառյալ ելակետային տեքստը և օբյեկտի կոդը, պահպանվում են որպես գեղարվեստական ստեղծագործություններ՝ «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին» 1886 թվականի սեպտեմբերի 9-ի Բեռնի կոնվենցիայի համաձայն (1971 թվականի խմբագրությամբ):

Հավաքածո ստեղծագործությունները (հանրագիտարանները, ժողովածուները և այլ ստեղծագործություններ), որոնք նյութերի ընտրության կամ տեղաբաշխման առումով ստեղծագործական աշխատանքի արդյունք են, պահպանվում են առանց հավաքածո ստեղծագործության մաս հանդիսացող յուրաքանչյուր ստեղծագործության հեղինակների իրավունքներին վնաս հասցնելու: Հավաքածո ստեղծագործություն կազմողին է պատկանում

դրա ստեղծման (նյութի ընտրություն և տեղաբաշխում) հեղինակային իրավունքը: Ընդ որում, հավաքածո ստեղծագործությունները պահպանվում են հեղինակային իրավունքով անկախ այն հանգամանքից, թե այն ստեղծագործությունները, որոնց վրա դրանք հիմնված են կամ որոնք դրանցում ներառված են, հեղինակային իրավունքի օբյեկտ են, թե՞ ոչ:

Ածանցյալ ստեղծագործությունները (թարգմանություններ, ադապտացիաներ, երաժշտական դաշնակումներ և գրականության կամ գեղարվեստական ստեղծագործությունների այլ վերափոխումներ) պահպանվում են այնպես, ինչպես բնօրինակ ստեղծագործությունները առանց բնօրինակ ստեղծագործության հեղինակի իրավունքներին վնաս հասցնելու: Ածանցյալ ստեղծագործության հեղինակին է պատկանում այլ (բնօրինակ) ստեղծագործության կատարված թարգմանության և այլ վերամշակման նկատմամբ հեղինակային իրավունքը:

5. Անդամ պետությունները կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների առումով իրավատերերին իրավունք են ընձեռում թույլատրելու կամ արգելելու հեղինակային իրավունքով պահպանվող իրենց ստեղծագործությունների բնօրինակների կամ դրանց օրինակների առևտրային նպատակով հրապարակային վարձույթն այլ անդամ պետությունների տարածքում:

6. Կատարման հետ կապված գործունեության արդյունքների (կատարման), ինչյունագրերի նկատմամբ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված մյուս իրավունքները համարվում են հեղինակային իրավունքներին հարակից իրավունքներ (հարակից իրավունքներ):

Կատարող է համարվում այն ֆիզիկական անձը, որի ստեղծագործական աշխատանքով ստեղծվել է կատարում՝ արտիստ-կատարողը (դերասան, երգիչ, երաժիշտ, պարող կամ այլ անձ, որը դեր է կատարում, կարդում, ասմունքում, երգում, նվագում է երաժշտական գործիք կամ այլ կերպ մասնակցում է գրականության, արվեստի կամ ժողովրդական արվեստի ստեղծագործությունների կատարմանը, այդ թվում՝ էստրադային, կրկեսային, կամ տիկնիկային համարներին), ինչպես նաև ներկայացման ռեժիսոր-բեմադրիչը (անձը, որը բեմադրում է թատերական, կրկեսային, տիկնիկային, էստրադային կամ այլ թատերահանդիսային ներկայացում) և դիրիժորը:

Անդամ պետությունները փոխադարձ հիմունքներով անդամ պետությունների կատարողներին են տրամադրում հետևյալ իրավունքները՝

կատարման բացառիկ իրավունք.

անվան իրավունք՝ ինչյունագրերի օրինակների վրա կամ կատարումն այլ դեպքերում օգտագործելիս սեփական անունը կամ կեղծանունը նշելու իրավունք, կատարողների խմբի անվանումը նշելու իրավունք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կատարումն օգտագործելու բնույթով բացառվում է կատարողի անունը կամ կատարողների խմբի անվանումը նշելու հնարավորությունը,

անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

7. Կատարողներն իրականացնում են իրենց իրավունքները՝ պահպանելով կատարվող ստեղծագործությունների հեղինակների իրավունքները: Կատարողի իրավունքները ճանաչվում և գործում են անկախ կատարվող ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքների առկայությունից և գործողությունից:

8. Հնչյունագիր ստեղծող (արտադրող) է ճանաչվում այն անձը, որը նախաձեռնություն և պատասխանատվություն է ստանձնում իրականացնելու կատարման հնչյունների կամ այլ հնչյունների կամ այդ հնչյունների այլ արտահայտչաձևերի առաջին ձայնագրումը: Այլ ապացույցների բացակայության դեպքում, հնչյունագիր ստեղծող (արտադրող) է համարվում այն անձը, որի անունը կամ անվանումը սովորաբար նշված է հնչյունագրի օրինակի և (կամ) դրա փաթեթվածքի վրա:

Անդամ պետությունները անդամ պետությունների հնչյունագիր ստեղծողներին (արտադրողներին) տրամադրում են հետևյալ իրավունքները՝

հնչյունագրման բացառիկ իրավունք,

անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

9. Անդամ պետություններն ապահովում են կատարման բացառիկ իրավունքի, հնչյունագրման բացառիկ իրավունքի պահպանության այն ժամկետների պահպանումը, որոնք չպետք է պակաս լինեն Առևտրի համաշխարհային կազմակերպության «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» 1994 թվականի

ապրիլի 15-ի Համաձայնագրով և «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին» 1961 թվականի հոկտեմբերի 26-ի Միջազգային Կոնվենցիայով սահմանված ժամկետներից: Անդամ պետությունների օրենսդրության մեջ կարող են ամրագրված լինել նշված իրավունքների պահպանության երկար ժամկետներ:

10. Իրավունքների կոլեկտիվ կառավարման հարցերով կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որը գործում է հեղինակներից, կատարողներից, հնչյունագրեր ստեղծողներից (արտադրողներից) և հեղինակային ու հարակից իրավունքներ ունեցող այլ անձանցից ստացված լիազորությունների հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ անդամ պետությունների օրենսդրությամբ, ինչպես նաև իրավունքների կոլեկտիվ կառավարման հարցերով այլ կազմակերպություններից ստացված լիազորությունների հիման վրա՝ հեղինակային ու հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման դիմաց հեղինակների և այլ իրավատերերի կողմից վարձատրության ստացումն ապահովելու նպատակով կոլեկտիվ հիմունքներով համապատասխան իրավունքների կառավարման ոլորտում:

Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների օբյեկտներն օրինաչափ օգտագործելու հնարավորությունն ապահովելու նպատակներով՝ իրավունքների կոլեկտիվ կառավարման հարցերով կազմակերպությունների գործունեության առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

III. Ապրանքային նշաններ և սպասարկման նշաններ

11. Ապրանքային նշան և սպասարկման նշան (այսուհետ՝ ապրանքային նշան) է համարվում քաղաքացիական շրջանառության մասնակիցների մի մասի ապրանքները և (կամ) ծառայությունները քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների ապրանքներից և (կամ) ծառայություններից անհատականացնելու համար ծառայող նշումը, որը պահպանվում է անդամ պետության օրենսդրության և այն միջազգային պայմանագրերի համաձայն, որոնց մասնակից են անդամ պետությունները:

Անդամ պետությունների օրենսդրական ակտերին համապատասխան՝ որպես ապրանքային նշան կարող են գրանցվել բառային, պատկերային, ծավալային և այլ նշումներ կամ դրանց համակցությունները: Ապրանքային նշանը կարող է գրանցվել ցանկացած գույնով կամ գունային համադրությամբ:

12. Ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի անդամ պետության օրենսդրությանը համապատասխան օգտագործելու ապրանքային նշանը և տնօրինելու այդ բացառիկ իրավունքը, ինչպես նաև իրավունք ունի այլ անձանց արգելելու համանման ապրանքների և (կամ) ծառայությունների առնչությամբ օգտագործել այդ ապրանքային նշանը կամ շփոթելու աստիճան դրան նման նշումներ:

13. Ապրանքային նշանի նախնական գրանցման գործողության ժամկետը կազմում է 10 տարի: Նշված ժամկետը, ապրանքային նշանի իրավատիրոջ դիմումի համաձայն, կարող է անսահմանափակ անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առնվազն 10 տարի ժամկետով:

Բոլոր այն ապրանքների և (կամ) ծառայությունների առնչությամբ, որոնց անհատականացման համար ապրանքային նշանը գրանցվել է տվյալ անդամ պետության տարածքում, կամ այդ ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի առնչությամբ ապրանքային նշանի իրավական պահպանությունն անդամ պետության տարածքում կարող է վաղաժամկետ դադարեցվել այդ ապրանքային նշանը տվյալ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրա գրանցումից հետո ցանկացած 3 տարվա ընթացքում անընդմեջ չօգտագործելու հետևանքով՝ բացառությամբ իրավատիրոջից անկախ հանգամանքներով ապրանքային նշանը չօգտագործելու դեպքերի:

Ապրանքային նշանի համար իրավական պահպանության ապահովումը կարող է վիճարկվել և ճանաչվել անվավեր այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, որի տարածքում տվյալ ապրանքային նշանը գրանցված է:

IV. Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանները և Եվրասիական տնտեսական միության սպասարկման նշանները

14. Անդամ պետություններն իրականացնում են Եվրասիական տնտեսական միության ապրանքային նշանի և Եվրասիական տնտեսական միության սպասարկման նշանի գրանցումը (այսուհետ՝ Միության ապրանքային նշան): Միության ապրանքային նշանի համար բոլոր անդամ պետությունների տարածքում միաժամանակ ապահովվում է իրավական պահպանություն:

Որպես Միության ապրանքային նշան՝ կարող է գրանցվել միայն գրաֆիկական տեսքով տրամադրված նշումը:

Միության ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան օգտագործելու Միության ապրանքային նշանը և տնօրինելու այդ բացառիկ իրավունքը, ինչպես նաև իրավունք ունի այլ անձանց արգելելու համանման ապրանքների և (կամ) ծառայությունների առնչությամբ օգտագործել Միության ապրանքային նշանը կամ շփոթելու աստիճան դրան նման նշաններ:

15. Անդամ պետությունների տարածքներում Միության ապրանքային նշանի գրանցման, իրավական պահպանության և օգտագործման առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

V. Ապրանքային նշանի, Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի սպառման սկզբունքը

16. Անդամ պետությունների տարածքներում կիրառվում է ապրանքային նշանի, Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի սպառման սկզբունքը, համաձայն որի տվյալ ապրանքային նշանի, Միության ապրանքային նշանի օգտագործումն այն ապրանքների առնչությամբ, որոնք իրավաչափորեն դրվել են քաղաքացիական շրջանառության մեջ ցանկացած անդամ պետության տարածքում՝ անմիջականորեն ապրանքային նշանի և (կամ) Միության ապրանքային նշանի իրավատիրոջ կամ վերջինիս համաձայնությամբ այլ անձանց կողմից, ապրանքային նշանի, Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի խախտում չի համարվում:

VI. Աշխարհագրական նշումները

17. Աշխարհագրական նշումներ ասելով՝ ենթադրվում է նշում, որը նույնականացնում է ապրանքը որպես անդամ պետության տարածքից, շրջանից կամ այդ տարածքի որևէ տեղանքից ծագող ապրանք, եթե ապրանքի որակը, համբավը կամ մյուս բնութագրերը զգալիորեն պայմանավորված են դրա աշխարհագրական ծագմամբ:

18. Անդամ պետության տարածքում աշխարհագրական նշումների համար կարող է ապահովվել իրավական պահպանություն, եթե այդպիսի իրավական պահպանությունը նախատեսված է այդ անդամ պետության օրենսդրությամբ կամ միջազգային այն պայմանագրերով, որոնց մասնակից է այդ պետությունը:

VII. Ապրանքի ծագման տեղանունը

19. Ապրանքի ծագման տեղանուն, որի համար ապահովվում է իրավական պահպանություն, համարվում է այն նշումը, որն իրենից ներկայացնում է կամ պարունակում է պետության, քաղաքային կամ գյուղական բնակավայրի, տեղանքի կամ այլ աշխարհագրական օբյեկտի ժամանակակից կամ պատմական, պաշտոնական կամ ոչ պաշտոնական, լրիվ կամ կրճատ անվանումը, ինչպես նաև այն նշումը, որն ածանցվել է այդ անվանումից և հայտնի է դարձել այն ապրանքի առնչությամբ դրա օգտագործման արդյունքում, որի առանձնահատկությունները բացառապես կամ գլխավորապես որոշվում են տվյալ աշխարհագրական տեղանքին բնորոշ բնապայմաններով և (կամ) մարդկային գործոններով:

Նշված դրույթները կիրառվում են այն նշման համար, որը հնարավորություն է տալիս նույնականացնելու ապրանքը որպես որոշակի աշխարհագրական օբյեկտի տարածքից ծագող

ապրանք և, չնայած այն հանգամանքի, որ չի պարունակում տվյալ օբյեկտի անվանումը, հայտնի է դարձել տվյալ նշումն այն ապրանքի առնչությամբ օգտագործելու արդյունքում, որի առանձնահատկությունները համապատասխանում են սույն կետի առաջին պարբերության մեջ նշված պահանջներին:

20. Ապրանքի ծագման տեղանուն չի համարվում այն նշումը, որը, չնայած այն հանգամանքի, որ իրենից ներկայացնում է կամ պարունակում է աշխարհագրական օբյեկտի անվանում, մտել է համընդհանուր գործածության մեջ որպես որոշակի տեսակի ապրանքի նշում, որը կապված չէ դրա արտադրության վայրի հետ:

Ապրանքի ծագման տեղանվանման համար իրավական պահպանության ապահովումը կարող է վիճարկվել և ճանաչվել անվավեր՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով:

21. Ապրանքի ծագման տեղանվանման առնչությամբ անդամ պետությունները նախատեսում են այնպիսի իրավական միջոցներ, որոնք շահագրգիռ կողմերին հնարավորություն են տալիս կանխարգելելու՝

1) ապրանքը նշելու կամ ներկայացնելու ժամանակ ցանկացած այնպիսի միջոցների օգտագործումը, որոնք վկայում են կամ զուգորդություն են առաջացնում, որ այդ ապրանքը ծագել է իրական ծագման վայրից տարբերվող այլ աշխարհագրական շրջանից՝ այնպես, որ դա այդ ապրանքի ծագման տեղանվանման և առանձնահատկությունների առումով կարող է սպառողին մոլորության մեջ գցել.

2) ցանկացած գործածություն, որն անբարեխիղճ մրցակցության գործողություն է համարվում՝ «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1883 թվականի մարտի 20-ի Փարիզի կոնվենցիայի 10բիս հոդվածի իմաստով:

VIII. Եվրասիական տնտեսական միության ապրանքի ծագման տեղանունը

22. Անդամ պետություններն իրականացնում են Եվրասիական տնտեսական միության ապրանքի ծագման տեղանվան գրանցում (այսուհետ՝ Միության ապրանքի ծագման տեղանուն): Միության ապրանքի ծագման տեղանվանման համար բոլոր անդամ պետությունների տարածքում միաժամանակ ապահովվում է իրավական պահպանություն:

23. Անդամ պետությունների տարածքում Միության ապրանքի տեղանվանման գրանցման, իրավական պահպանության և օգտագործման առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորվում են Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրով:

IX. Արտոնագրային իրավունքները

24. Գյուտի, օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքը պահպանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով և հավաստվում է արտոնագրով, որը հաստատում է առաջնությունը, հեղինակությունը և գյուտի, օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքը:

25. Գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի հեղինակին են պատկանում հետևյալ իրավունքները՝

1) գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքը,

2) հեղինակության իրավունքը:

26. Անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի հեղինակին են պատկանում նաև այլ իրավունքներ, այդ թվում՝ արտոնագիր ստանալու իրավունքը, ծառայողական գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի օգտագործման դիմաց վարձատրության իրավունքը:

27. Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը կազմում է՝

1) գյուտերի համար՝ 20 տարուց ոչ պակաս,

2) օգտակար մոդելների համար՝ 5 տարուց ոչ պակաս,

3) արդյունաբերական նմուշների համար՝ 5 տարուց ոչ պակաս:

28. Գյուտի, օգտակար մոդելի կամ արդյունաբերական նմուշի համար արտոնագիրը դրա իրավատիրոջը տալիս է բացառիկ իրավունք՝ օգտագործելու գյուտը, օգտակար մոդելը կամ արդյունաբերական նմուշը, անդամ պետությունների օրենսդրությանը չհակասող ցանկացած եղանակով, ինչպես նաև տալիս է այլ անձանց կողմից նշված օբյեկտների օգտագործումն արգելելու իրավունք:

29. Անդամ պետություններն իրավունք ունեն նախատեսելու արտոնագրով տրամադրվող իրավունքների սահմանափակում՝ պայմանով, որ այդպիսի բացառությունները չարդարացված վնաս չհասցնեն գյուտի, օգտակար մոդելների կամ արդյունաբերական նմուշների բնականոն օգտագործման առումով և անհիմն չոտնահարեն արտոնագրի իրավատիրոջ օրինական շահերը՝ հաշվի առնելով երրորդ անձանց օրինական շահերը:

X. Սելեկցիոն նվաճումները

30. Բույսերի տեսակների և կենդանիների ցեղատեսակների (սելեկցիոն նվաճումներ) նկատմամբ իրավունքի պահպանությունն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

31. Սելեկցիոն նվաճման հեղինակին են պատկանում հետևյալ իրավունքները՝

1) սելեկցիոն նվաճման նկատմամբ բացառիկ իրավունքը,

2) հեղինակության իրավունքը:

32. Անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում սելեկցիոն նվաճման հեղինակին են պատկանում նաև այլ իրավունքներ, այդ թվում՝ արտոնագիր ստանալու իրավունքը, սելեկցիոն նվաճումն անվանելու իրավունքը, ծառայողական սելեկցիոն նվաճումն օգտագործելու դիմաց վարձատրության իրավունքը:

33. Բույսերի տեսակների, կենդանիների ցեղատեսակների համար սելեկցիոն նվաճման նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը կազմում է 25 տարուց ոչ պակաս:

XI. Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաները

34. Ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիան նյութական կրիչի վրա ամրագրված ինտեգրալ միկրոսխեմայի տարրերի համախմբության և դրանց միջև կապերի տարածաերկրաչափական դասավորությունն է:

35. Ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի նկատմամբ մտավոր սեփականության իրավունքները պահպանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

36. Ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի հեղինակին են պատկանում հետևյալ իրավունքները՝

1) ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի նկատմամբ բացառիկ իրավունքը,

2) հեղինակության իրավունքը:

37. Անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի հեղինակին են պատկանում նաև այլ իրավունքներ, այդ թվում՝ ծառայողական տոպոլոգիայի օգտագործման դիմաց վարձատրության իրավունքը:

38. Ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի նկատմամբ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը կազմում է 10 տարի:

XII. Արտադրության գաղտնիքները (նոու-հաու)

39. Արտադրության գաղտնիք (նոու-հաու) են ճանաչվում ցանկացած տեսակի տեղեկությունները (արտադրական, տեխնիկական, տնտեսական, կազմակերպչական և այլն), այդ թվում՝ գիտատեխնիկական ոլորտում մտավոր գործունեության արդյունքների մասին տեղեկությունները, ինչպես նաև մասնագիտական գործունեություն իրականացնելու եղանակների մասին տեղեկությունները, որոնք իրական կամ հնարավոր առևտրային արժեք են ներկայացնում՝ երրորդ անձանց անհայտ լինելու ուժով, որոնք չեն կարող օրինական հիմքերով հասանելի լինել երրորդ անձանց, և որոնց հանդեպ այդպիսի տեղեկության տիրապետողի կողմից առևտրային գաղտնիքի ռեժիմ է սահմանվել:

40. Արտադրության գաղտնիքների (նոու-հաու) համար ապահովվում է իրավական պահպանություն՝ անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

XIII. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավակիրառ միջոցները

41. Միության շրջանակներում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ անդամ պետությունների գործողությունների համակարգումն իրականացվում է Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ 27
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Արդյունաբերական համագործակցության մասին

1. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«տնտեսական գործունեության գերակա տեսակներ»՝ բոլոր անդամ պետությունների կողմից արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրականացման համար որպես գերակայություն սահմանված գործունեության տեսակներ.

«արդյունաբերական կոոպերացիա»՝ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների հաստատուն փոխշահավետ համագործակցություն արդյունաբերության ոլորտում.

«Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականություն»՝ արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններով անդամ պետությունների գործունեություն, որն իրականացվում է անդամ պետությունների կողմից ինչպես ինքնուրույն, այնպես էլ խորհրդատվական աջակցությամբ և Հանձնաժողովի համակարգմամբ.

«արդյունաբերություն»՝ տնտեսական գործունեության տեսակների ամբողջություն, որոնք վերաբերում են արդյունահանող և մշակող արդյունաբերությանը՝ բացի սննդամթերքի վերամշակումից՝ համաձայն տնտեսական գործունեության ազգային դասակարգիչների: Արդյունաբերական գործունեության այլ տեսակներ կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի համապատասխան բաժիններով.

«արդյունաբերական համախմբեր (կլաստերներ)»՝ արդյունաբերական փոխկապակցված խմբեր և դրանց հետ կապված կազմակերպություններ, որոնք փոխլրացնում են միմյանց և դրա հաշվին ուժեղացնում են իրենց մրցակցային առավելությունները.

«տեխնոլոգիական հարթակ»՝ նորարարական ենթակառուցվածքի օբյեկտ, որը հնարավորություն է տալիս ապահովելու արդյունավետ հաղորդակցություն և բոլոր շահագրգիռ կողմերի (գործարարության, գիտության, պետության, հասարակական կազմակերպությունների) մասնակցության հիման վրա ստեղծելու առևտրային հեռանկարային տեխնոլոգիաներ, բարձր տեխնոլոգիական, նորարարական և մրցունակ արտադրանք:

2. Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններով անդամ պետությունների խորհրդատվական աջակցության և գործունեության համակարգման շրջանակներում հանձնաժողովի լիազորությունները ներառում են՝

1) աջակցություն՝

տեղեկատվության փոխանակման, խորհրդատվության անցկացման, հարցերի քննարկման համար համատեղ հարթակների ստեղծմանը, որոնք վերաբերում են արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղություններին, այդ թվում՝ նորարարական գործունեության հեռանկարային ուղղությունների մշակմանը.

առաջարկների մշակմանը, որոնք ուղղված են Միության շրջանակներում արդյունաբերական քաղաքականության իրականացման ժամանակ անդամ պետությունների փոխգործակցության խորացմանը.

փորձի փոխանակմանը՝ արդյունաբերության մեջ բարեփոխումներ և կառուցվածքային վերափոխումներ անցկացնելու, նորարարական գործունեության խթանման, արդյունաբերության զարգացման հետ կապված.

համատեղ ծրագրերի և նախագծերի մշակմանն ու իրականացմանը.

անդամ պետությունների արդյունաբերական համալիրների համար փորձի փոխանակման ծրագրերի մշակմանը.

անդամ պետությունների փոքր և միջին ձեռնարկատիրությունների սուբյեկտներին արդյունաբերական կոոպերացիայի մեջ ներառելուն.

տեղեկատվական փոխգործակցությանը.

անդամ պետությունների կողմից արդյունաբերության ոլորտում գլոբալ տնտեսական ճգնաժամի հետևանքների դեմ համատեղ հակազդեցության միջոցների մշակմանն ու իրականացմանը.

Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ձևավորման առաջարկությունների մշակմանը:.

2) իրականացում՝

արդյունաբերական համագործակցության հետագա զարգացման առաջարկների՝ անդամ պետությունների դիտարկմանը ներկայացման՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մասնակցի շահերը.

Միության շրջանակներում Արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրականացման մոնիթորինգի և վերլուծության.

անդամ պետությունների համար արդյունաբերության զարգացման արդիական մեթոդներ հայտնաբերելու նպատակով արդյունաբերության զարգացման համաշխարհային փորձի ուսուցման.

3) Միջկառավարական խորհրդի որոշմամբ իրականացում՝

համատեղ ծրագրերի և նախագծերի մշակման, ֆինանսավորման ու իրականացման վերաբերյալ դրույթների նախագծերի նախապատրաստման.

Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության զարգացման ուղու վրա վարչական և այլ խոչընդոտների հայտնաբերման ու դրանք հետագայում վերացնելու մասին առաջարկների մշակման.

համատեղ արտադրանքի արտադրության կոոպերացիոն շղթաների ձևավորման առաջարկների նախապատրաստման.

Միության շրջանակներում արդյունաբերական արտադրանքի շուկայի, ինչպես նաև երրորդ երկրների արտահանման շուկաների մոնիթորինգի.

անդամ պետությունների արդյունաբերության զարգացման վերլուծության.

անդամ պետությունների հետ համատեղ այլ (լրացուցիչ) փաստաթղթերի մշակման, ինչպիսիք են կանոնները, կարգերը, և Միության, ինչպես նաև համագործակցության շրջանակային համաձայնագրերի շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների մասով արդյունաբերական քաղաքականության իրականացման մեխանիզմների մշակման:

Նշված գործառույթների ցանկն սպառիչ չէ և կարող է ընդլայնվել Միջկառավարական խորհրդի որոշմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 28
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 93-րդ հոդվածին համապատասխան, և դրանով սահմանվում են արդյունաբերական ապրանքների առնչությամբ սուբսիդիաների տրամադրումը կարգավորող միասնական կանոնները, այդ թվում՝ այն ծառայությունները մատուցելու կամ ստանալու դեպքում, որոնք անմիջականորեն կապված են ապրանքների արտադրության, իրացման (այդ թվում՝ պահպանումը, անդամ պետության տարածքից արտահանումն ու տրանսպորտային փոխադրումը) և (կամ) սպառման հետ:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«վարչատարածքային միավորներ»՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության (ներառյալ Մինսկ քաղաքը) և Ղազախստանի Հանրապետության (ներառյալ Աստանա ու Ալմաթի քաղաքները) վարչատարածքային միավորները, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտներն ու մունիցիպալ կազմավորումները.

«նույնանման ապրանք»՝ ապրանք, որն ամբողջությամբ նույնական է այն ապրանքին, որի արտադրության, անդամ պետության տարածքից արտահանման կամ տրանսպորտային փոխադրման ժամանակ կիրառվել է հատուկ սուբսիդիա, կամ այդպիսի ապրանքի բացակայության դեպքում՝ այլ ապրանք, որի հատկանիշները նման են այն ապրանքի հատկանիշներին, որի արտադրության, անդամ պետության տարածքից արտահանման կամ տրանսպորտային փոխադրման ժամանակ կիրառվել է հատուկ սուբսիդիա.

«փոխհատուցման միջոց»՝ տվյալ միջոցը սահմանելու համար դիմում ներկայացրած անդամ պետության տնտեսության ճյուղի վրա՝ սուբսիդավորող անդամ պետության հատուկ սուբսիդիայի բացասական ազդեցության չեզոքացման միջոց.

«իրավասու մարմին»՝ անդամ պետության՝ պետական իշխանության մարմին, որը պատասխանատու է ուսումնասիրություններ կատարելու համար.

«ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնաս»՝ ազգային տնտեսության ճյուղի վիճակի՝ ապացույցներով հաստատված վատթարացում, որն ի հայտ է եկել արդյունաբերական ապրանքի արտադրության, տրանսպորտային փոխադրման, պահպանման ժամանակ սուբսիդիա տրամադրած անդամ պետության տարածքից այդ ապրանքը ներմուծելու հետևանքով, և արտահայտվում է անդամ պետության տարածքում նույնանման ապրանքի արտադրության ու իրացման ծավալների կրճատմամբ, այդպիսի ապրանքի արտադրության շահութաբերության նվազմամբ, ապրանքային պաշարների, զբաղվածության, աշխատավարձի մակարդակի և տվյալ ճյուղում ներդրումների մակարդակի վրա ունեցած բացասական ազդեցությամբ.

«նույնանման ապրանքի ազգային արտադրողներ»՝ ուսումնասիրություն կատարող անդամ պետությունում նույնանման ապրանք արտադրողներ.

«ազգային տնտեսության ճյուղ»՝ անդամ պետությունում նույնանման ապրանքի բոլոր արտադրողները կամ այն արտադրողները, որոնց մասնաբաժինն անդամ պետությունում նույնանման ապրանքի արտադրության ընդհանուր ծավալում կազմում է 25 տոկոսից ոչ պակաս.

«սուբսիդիա ստացող»՝ արդյունաբերական ապրանք արտադրող, որը սուբսիդիայից օգուտ ստացողն է.

«սուբսիդավորվող ապրանք արտադրողներ»՝ հատուկ սուբսիդիա տրամադրած անդամ պետության սուբսիդավորվող ապրանք արտադրողներ.

«արդյունաբերական ապրանքներ»՝ ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 25-97-րդ խմբերում դասակարգվող ապրանքներ, ինչպես նաև ձուկ ու ձկնամթերք՝ բացառությամբ, ԱՏԳ ԱԱ ԵՏՄ-ին համապատասխան, 2905 43 000 0 և 2905 44 ենթադիրքերում, 3301, 3501-3505 դիրքերում, 3809 10 և 3824 60 ենթադիրքերում, 4101-4103, 4301, 5001 00 000 0-5003 00 000 0, 5101-5103, 5201 00-5203 00 000 0, 5301 և 5302 դիրքերում (2905 43 000 0 ենթադիրք՝ մաննիտ, 2905 44 ենթադիրք՝ սորբիտ, 3301 դիրք՝ եթերայուղեր, 3501-3505 դիրքեր՝ ալբումինային նյութեր, վերափոխված օսլաներ, սոսինձներ, 3809 10 ենթադիրք՝ մակերեսների մշակման համար նյութեր, 3824 60 ենթադիրք՝ սորբիտոլ, այլ արտադրանք, 4101-4103 դիրքեր՝ մորթեր և կաշվե հումք, 4301 դիրք՝ չմշակված մորթեր, 5001 00 000 0-5003 00 000 0 դիրքեր՝ հումք-մետաքս և մետաքսե թափոններ, 5101-5103՝ բուրդ և կենդանիների մազ, 5201 00-5203 00 000 0 ենթադիրքեր՝ բամբակի հումք, բամբակի թափոններ, բամբակի մանրաթել՝ գզած, 5301 դիրք՝ վուշ-հումք, 5302 դիրք՝ կանեփաթել-հումք) դասակարգվող ապրանքների: Պարտադիր չէ ներկայացնել ապրանքների սպառիչ նկարագրությունը:

ԱՏԳ ԱԱ ԵՏՄ-ի նշված ծածկագրերի ցանկում փոփոխություններ կատարվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից.

«սուբսիդավորվող ապրանք»՝ արդյունաբերական ապրանք, որի արտադրության, տրանսպորտային փոխադրման, պահպանման կամ սուբսիդավորող անդամ պետության տարածքից արտահանման ժամանակ կիրառվել է հատուկ սուբսիդիա.

«սուբսիդավորող անդամ պետություն»՝ անդամ պետություն, որի սուբսիդավորող մարմինը տրամադրում է սուբսիդիա.

«սուբսիդավորող մարմին»՝ անդամ պետությունների մեկ կամ մի քանի պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին, որը որոշումներ է կայացնում սուբսիդիաների տրամադրման ոլորտում.

«սուբսիդիա»՝

ա) սուբսիդավորող մարմնի (կամ անդամ պետության կողմից լիազորված կառույցի) տրամադրած ֆինանսական օժանդակություն, որի արդյունքում ստեղծվում են (ապահովվում են) առավելություններ, և որն իրականացվում է՝

դրամական միջոցների ուղղակի փոխանցման միջոցով (օրինակ՝ անվերադարձ տրամադրվող փոխատվությունների, վարկերի) կամ կանոնադրական կապիտալում մասնաբաժին ձեռք բերելու կամ այն մեծացնելու կամ այդպիսի միջոցներ փոխանցելու պարտավորության (օրինակ՝ վարկային երաշխիքներ) միջոցով.

անդամ պետության եկամուտների կազմ հավաքագրվող վճարները գանձելուց ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու միջոցով(օրինակ՝ հարկային արտոնությունները, պարտքի դուրսգրումը): Ընդ որում, ներքին սպառման համար նախատեսված նույնանման ապրանքի համար գանձվող տուրքերից և հարկերից արտահանվող արդյունաբերական ապրանքն ազատելը, կամ այդպիսի տուրքերն ու հարկերը նվազեցնելը կամ այդպիսի տուրքերը և հարկերը փաստացի հաշվեգրված գումարը չգերազանցող չափով վերադարձնելը չի դիտարկվում որպես սուբսիդիա.

ապրանքներ տրամադրելու կամ ծառայություններ մատուցելու միջոցով (բացառությամբ ընդհանուր ենթակառուցվածքի պահպանման և զարգացման համար նախատեսված ապրանքների կամ ծառայությունների).

արդյունաբերական ապրանքներ ձեռք բերելու միջոցով.

բ) եկամուտների կամ գների պահպանման ցանկացած այլ ձև, որն ազդեցություն է ունենում (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) ցանկացած անդամ պետության տարածքից արդյունաբերական ապրանքի ներմուծման ծավալների կրճատման կամ ցանկացած անդամ պետության տարածք արդյունաբերական ապրանքի արտահանման ծավալների մեծացման վրա, որի արդյունքում առավելություն է տրամադրվում.

«ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգ»՝ ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու՝ ապացույցներով հաստատված անխուսափելիություն.

«ազգային տնտեսության ճյուղին հասցված վնաս»՝ ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնաս, ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգ կամ ազգային տնտեսության ճյուղի ստեղծման գործընթացի զգալի դանդաղում:

(2-րդ կետը խմբ. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

II. Հատուկ սուբսիդիաները

3. Սուբսիդավորող մարմնի իրավասությունների շրջանակներում գտնվող տարածքներում արդյունաբերական ձեռնարկության կամ արդյունաբերության ճյուղի կամ արդյունաբերական ձեռնարկությունների կամ արդյունաբերության ճյուղերի խմբի (այսուհետ՝ հատկորոշված ձեռնարկություններ) համար սուբսիդիայի հատուկ լինելը պարզելու համար կիրառվում են հետևյալ սկզբունքները՝

1) եթե սուբսիդավորող մարմնի կողմից կամ այն իրավական ակտով, որին համապատասխան գործում է սուբսիդավորող մարմինը, սուբսիդիա ստանալու հնարավորությունը սահմանափակվում է միայն հատկորոշված ձեռնարկությունների համար, ապա այդպիսի սուբսիդիան համարվում է հատուկ՝ այն պայմանով, որ արդյունաբերական ձեռնարկությունների խմբի կամ արդյունաբերության ճյուղերի խմբի մեջ մտնում են սուբսիդավորող անդամ պետության տարածքի ոչ բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները կամ արդյունաբերության ճյուղերը.

2) եթե սուբսիդավորող մարմնի կողմից կամ այն իրավական ակտով, որին համապատասխան գործում է սուբսիդավորող մարմինը, սահմանվում են սուբսիդիա ստանալու իրավունքը և սուբսիդիայի չափը սահմանող օբյեկտիվ չափանիշներ կամ պայմաններ (չեզոք են համարվում այն չափանիշները, որոնք այլ ձեռնարկությունների համեմատ որոշ ձեռնարկությունների համար առավելություններ չեն ստեղծում, բնույթով տնտեսական են և կիրառման եղանակով՝ հորիզոնական, ինչպես օրինակ՝ զբաղվածների թիվը կամ ձեռնարկությունների չափը), ապա այդպիսի սուբսիդիան չի համարվում հատուկ այն պայմանով, որ այն ստանալու իրավունքն ավտոմատ է, և որ այդպիսի չափանիշներն ու պայմանները խստորեն պահպանվում են: Չափանիշներն ու պայմանները պետք է սահմանվեն օրենքով, հրահանգով, իրավական ակտով կամ այլ պաշտոնական փաստաթղթերով այնպես, որ դրանք հնարավոր լինի ստուգել.

3) եթե, թեև սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված սկզբունքների կիրառման արդյունքում սուբսիդիան առերևույթ համարվում է ոչ հատուկ, սակայն հիմքեր կան ենթադրելու, որ սուբսիդիան իրականում կարող է լինել հատուկ, ապա կարող են հաշվի առնվել հետևյալ գործոնները (ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսական գործունեության տեսակների բազմազանության աստիճանը սուբսիդավորող մարմնի իրավասությունների շրջանակներում գտնվող տարածքի սահմաններում, ինչպես նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում այդպիսի սուբսիդիան գործում է)՝

սուբսիդիայի օգտագործումը սահմանափակ թվով հատկորոշված ձեռնարկությունների կողմից,

սուբսիդիայի գերակշիռ օգտագործումը հատկորոշված ձեռնարկությունների կողմից,

անհամամասնորեն մեծ չափով սուբսիդիաների տրամադրումը որոշ ձեռնարկությունների,

սուբսիդիա տրամադրելու մասին որոշում ընդունելիս սուբսիդավորող մարմնի կողմից ընտրություն կատարելու եղանակը (այդ առումով, մասնավորապես, հաշվի են առնվում սուբսիդիա ստանալու համար ներկայացվող հայտերի մերժման կամ հաստատման հաճախականության մասին տեղեկությունները և համապատասխան որոշումների հիմքերը):

4. Հատուկ է համարվում այն սուբսիդիան, որի օգտագործման հնարավորությունը սահմանափակված է սուբսիդավորող մարմնի իրավասությանը ենթակա տարածքի՝ սահմանազատված աշխարհագրական շրջանում գտնվող հատկորոշված ձեռնարկությունների շրջանակով: Անդամ պետության պետական մարմնի կողմից դրա իրավասության շրջանակում գտնվող ամբողջ տարածքի սահմաններում գործող հարկերի դրույքաչափերի սահմանումը կամ դրանց փոփոխումը չի համարվում հատուկ սուբսիդիա:

5. Ցանկացած սուբսիդիա, որի վրա տարածվում են սույն Արձանագրության III բաժնի դրույթները, համարվում է հատուկ:

Սույն բաժնին համապատասխան սուբսիդիայի հատուկ լինելու փաստի հաստատման համար հիմք են ընդունվում սուբսիդիայի յուրահատկության մասին ապացույցները:

6. Անդամ պետությունն իրավունք ունի դիմելու Հանձնաժողովին նրա կողմից հատուկ սուբսիդիայի տրամադրումը համաձայնեցնելու նպատակով:

Անդամ պետությունները չեն կիրառում փոխհատուցման միջոցներ այն սուբսիդիաների դեպքում, որոնք տրամադրվում են Հանձնաժողովի կողմից համաձայնեցված ժամկետով, պայմաններով և ծավալներով:

Անդամ պետությունները պարտադիր տեղեկացման կարգով Հանձնաժողով են ուղարկում հատուկ սուբսիդիաների տրամադրումը նախատեսող նորմատիվ իրավական ակտերը սույն Արձանագրության 7-րդ կետով նախատեսված՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրով սահմանված ժամկետում:

Այն դեպքում, երբ անդամ պետություններից որևէ մեկը հիմքեր ունի ենթադրելու, որ այլ անդամ պետությունների հատուկ սուբսիդիա տրամադրելը կարող է վնաս հասցնել ազգային տնտեսության ճյուղին, ապա այդպիսի անդամ պետությունն իրավունք ունի հանդես գալու Հանձնաժողովի կողմից համապատասխան քննությունն անցկացնելու նախաձեռնությամբ:

Եթե, ըստ քննության արդյունքների, հաստատվում է ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայությունը, ապա Հանձնաժողովը որոշում է կայացնում այն մասին, որ այդպիսի հատուկ սուբսիդիա տրամադրող անդամ պետությունը պետք է վերացնի վնասի հանգեցնող պայմանները, եթե քննության գործընթացում ներգրավված անդամ պետությունները

այլ համաձայնության չեն եկել սույն Արձանագրության 7-րդ կետով նախատեսված՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում:

Հանձնաժողովը սահմանում է ողջամիտ ժամկետ այդպիսի որոշումը կատարելու համար:

Եթե անդամ պետությունը, որի նկատմամբ կայացվել է նշված որոշումը, չի կատարում այդ որոշումը Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում, ապա մյուս անդամ պետությունները կարող են դիմել Միության դատարան:

Սույն կետի դրույթների կիրառումն իրականացվում է՝ հաշվի առնելով Պայմանագրի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անցումային դրույթները:

7. Անդամ պետությունները Միության շրջանակներում միջազգային պայմանագրով սահմանվում են՝

հատուկ սուբսիդիաները Հանձնաժողովի հետ կամավոր կերպով համաձայնեցնելու և Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներ ընդունելու կարգը.

Հանձնաժողովի կողմից քննություններ անցկացնելու կարգը (այդ թվում՝ սույն Արձանագրությամբ սահմանված հատուկ սուբսիդիաների տրամադրման և օգտագործման պայմանների, կարգի խախտման փաստերով).

այն չափանիշները, որոնց հիման վրա Հանձնաժողովը որոշում է կայացնելու հատուկ սուբսիդիաների թույլատրելի կամ ոչ թույլատրելի լինելու մասին (այդ թվում՝ հաշվի առնելով անդամ պետությունների արտադրողների միջև ձևավորված և նոր կոոպերացիոն կապերի զարգացումը).

տրամադրվող սուբսիդիաների վերաբերյալ տեղեկությունների՝ Հանձնաժողովի կողմից հարցման կարգը և պայմանները:

Նշված միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու ժամկետը նախատեսված է Պայմանագրի 105-րդ հոդվածի 1-ին կետով:

8. Այն դեպքում, երբ հատուկ սուբսիդիա ստանալու համար անդամ պետության կողմից սուբսիդիա ստացողի (արտադրողի) նկատմամբ սահմանված է որոշակի ապրանքի արտադրության ժամանակ տեխնոլոգիական գործողությունների իրականացման անհրաժեշտության վերաբերյալ պահանջ, ապա այլ անդամ պետության արտադրողի կողմից այդպիսի գործողությունների իրականացումն այլ անդամ պետություններում ենթակա է այդպիսի պահանջի կատարմանը՝ Բարձրագույն խորհրդի կողմից սահմանված կարգին համապատասխան:

III. Արգելված սուբսիդիաները

9. Արգելվում են սուբսիդիաների հետևյալ տեսակները՝

արտահանման սուբսիդիա՝ սուբսիդիա, որի տրամադրումը, որպես միակ պայման կամ մի քանի պայմաններից մեկը, կապված է այդ սուբսիդիան տրամադրող անդամ պետության տարածքից արդյունաբերական ապրանքն այլ անդամ պետության տարածք արտահանելու արդյունքների հետ.

փոխարինման սուբսիդիա՝ սուբսիդիա, որի տրամադրումը, որպես միակ պայման կամ մի քանի պայմաններից մեկը, կապված է այդ սուբսիդիան տրամադրող անդամ պետության տարածքից ծագող արդյունաբերական ապրանքի օգտագործման հետ:

«Կապված է» ասելով՝ պետք է հասկանալ նաև այն փաստերի առկայությունը, որոնք վկայում են այն մասին, որ սուբսիդիայի տրամադրումը, իրավաբանորեն պայմանավորված չլինելով սուբսիդավորող անդամ պետության տարածքից արդյունաբերական ապրանքի արտահանման արդյունքներով, կամ այդպիսի անդամ պետության տարածքից ծագած արդյունաբերական ապրանքի օգտագործմամբ, իրականում կապված է փաստացի կամ ակնկալվող արտահանման կամ արտահանումից ստացվող հասույթի կամ սուբսիդավորող անդամ պետության տարածքից ծագող արդյունաբերական ապրանքների օգտագործման պահանջների հետ:

Այն փաստը, որ սուբսիդիան տրամադրվում է արտահանում իրականացնող տնտեսավարող սուբյեկտի, չի կարող ինքնին հիմք ծառայել այն արտահանման սուբսիդիա համարելու համար:

10. Այն դեպքում, երբ մեկ անդամ պետության կողմից հատուկ սուբսիդիա տրամադրելու արդյունքում վնաս է հասցվում այլ անդամ պետության ազգային տնտեսության ճյուղին, ապա այդպիսի սուբսիդիան համարվում է արգելված:

Ազգային տնտեսության ճյուղին վնաս հասցնելու փաստը պետք է ապացուցվի՝ սույն Արձանագրության V բաժնին համապատասխան:

11. Անդամ պետությունները չեն պահպանում և չեն սահմանում նորմատիվ իրավական ակտի կամ սուբսիդավորող մարմնի իրավական ակտի հիման վրա կիրառվող այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ է պահպանել հատուկ սուբսիդիա ստանալու համար և համապատասխանում են հետևյալ պայմաններից որևէ մեկին՝

1) պահանջներ են ներառում՝

գնումների իրականացման կամ տնտեսավարող սուբյեկտի կողմից այնպիսի արդյունաբերական ապրանքների օգտագործման վերաբերյալ, որոնք ծագում են միջոցը սահմանող անդամ պետության տարածքից կամ սուբսիդավորող մարմնի կողմից նշված՝ ցանկացած տեղական աղբյուրից (անկախ այն հանգամանքից, թե սահմանվում են արդյոք կոնկրետ ապրանքները, դրանց ծավալը կամ արժեքը կամ դրանց տեղական արտադրության ծավալից կամ արժեքից ունեցած մասնաբաժինը).

ցանկացած անդամ պետության տարածքից ներմուծվող ապրանքների գնման կամ տնտեսավարող սուբյեկտի կողմից օգտագործման նկատմամբ սահմանափակման վերաբերյալ՝ այն քանակությամբ, որը կապված է այդ տնտեսավարող սուբյեկտի կողմից արտահանվող այն ապրանքների ծավալների կամ արժեքի հետ, որոնք ծագում են միջոցը սահմանող անդամ պետության տարածքից.

2) սահմանափակում են՝

տնտեսավարող սուբյեկտի կողմից ցանկացած անդամ պետության տարածքից այն արդյունաբերական ապրանքների ներմուծումը, որոնք օգտագործվում են տեղական արտադրության մեջ կամ առնչություն ունեն այդպիսի արտադրության հետ (այդ թվում՝ պայմանավորված՝ միջոցը սահմանող անդամ պետության տարածքից ծագող և այդ տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ անդամ պետության տարածք արտահանվող ապրանքների ծավալով կամ արժեքով).

տնտեսավարող սուբյեկտի կողմից ցանկացած անդամ պետության տարածքից այն արդյունաբերական ապրանքների ներմուծումը, որոնք օգտագործվում են տեղական արտադրության մեջ կամ առնչություն ունեն այդպիսի արտադրության հետ՝ տնտեսավարող սուբյեկտի համար ցանկացած անդամ պետության արժույթից օգտվելու հնարավորությունը սահմանափակելով այդ արժույթի մուտքերի՝ ձեռնարկությանը հասանելիք ծավալով.

տնտեսավարող սուբյեկտի կողմից արդյունաբերական ապրանքների արտահանումը ցանկացած անդամ պետության տարածք կամ տնտեսավարող սուբյեկտի կողմից արդյունաբերական ապրանքների վաճառքը ցանկացած անդամ պետության տարածքում (պայմանավորված ապրանքների կոնկրետացումով, դրանց ծավալով կամ արժեքով կամ դրանց՝ այդ տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող տեղական արտադրության ծավալից կամ արժեքից ունեցած մասնաբաժնով):

12. Արգելվում են այն հատուկ սուբսիդիաները, որոնց տրամադրումը հանգեցնում է ցանկացած անդամ պետության շահերի կոպիտ ոտնահարման: Մեկ անդամ պետության շահերի կոպիտ ոտնահարում առաջանում է այն դեպքում, երբ մյուս անդամ պետություններին հատուկ սուբսիդիա տրամադրելու արդյունքում՝

1) նույնանման ապրանքը դուրս է մղվում սուբսիդավորող անդամ պետության շուկայից, կամ զսպվում է սուբսիդավորող անդամ պետության շուկա ցանկացած անդամ պետության տարածքից ծագող նույնանման ապրանքի ներմուծման աճը.

2) ցանկացած անդամ պետության տարածքից ծագող նույնանման ապրանքը դուրս է մղվում երրորդ անդամ պետության շուկայից, կամ զսպվում է երրորդ անդամ պետության տարածք այդպիսի նույնանման ապրանքի արտահանման աճը.

3) զգալիորեն նվազեցվում է այն արդյունաբերական ապրանքի գինը, որի արտադրության, տրանսպորտային փոխադրման կամ սուբսիդավորող անդամ պետության տարածքից արտահանման ժամանակ ցանկացած անդամ պետության միևնույն շուկայում այլ անդամ պետության տարածքից ծագող նույնանման ապրանքի գնի համեմատությամբ օգտագործվել է հատուկ սուբսիդիա, կամ զգալիորեն զսպվում են գների աճը, գների անկումը, կամ միևնույն շուկայում առաջանում է վաճառքի հնարավորությունների բացթողում:

13. Սույն Արձանագրության 12-րդ կետում նշված շահերի կոպիտ ոտնահարման փաստը որոշվում է սույն բաժնին համապատասխան և ապացուցվում է սույն Արձանագրության V բաժնին համապատասխան:

14. Անդամ պետությունների տարածքներում չեն տրամադրվում և չեն պահպանվում սույն Արձանագրության 11-րդ կետում նշված միջոցները, ինչպես նաև արգելված սուբսիդիաները, այդ թվում՝ հետևյալը (ընդ որում, «ապրանքների արտահանում» ասելով՝ պետք է հասկանալ սուբսիդավորող անդամ պետության տարածքից ապրանքների արտահանում այլ անդամ պետության տարածք)՝

1) ծրագրեր, որոնցով արտահանողն ազատվում է արժութային հասույթի մի մասը անդամ պետությանը պարտադիր վաճառելուց, կամ որոնցով թույլատրվում է կիրառել արժույթի մի քանի փոխարժեք՝ ազգային արժույթի մասնակի արժեզրկման միջոցով, ինչի արդյունքում փոխարժեքի տարբերության հաշվին արտահանողն առավելություն է ստանում.

2) արտահանվող բեռների համար ներքին տրանսպորտային և նավավարձման (ֆրախտի) սակագները, որոնք, ներքին շուկայում իրականացվող փոխադրումների համեմատ, անդամ պետության կողմից սահմանվում կամ գանձվում են ավելի արտոնյալ պայմաններով.

3) արտահանվող ապրանքների արտադրության մեջ օգտագործվող ապրանքների տրամադրումը և ծառայությունների մատուցումն ավելի արտոնյալ պայմաններով, քան ներքին շուկայում իրացվող նույնանման ապրանքների արտադրության մեջ օգտագործվող ապրանքների և ծառայությունների համար.

4) վճարումից լրիվ կամ մասնակի ազատումը, վճարումը հետաձգելու հնարավորության ընձեռումը կամ տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող կամ վճարման ենթակա հարկերի կամ ցանկացած այլ մասհանումների նվազեցումը, որոնք կապված են արտահանման արդյունքների կամ այն ապրանքների օգտագործման հետ, որոնք ծագում են նշված արտոնությունները տրամադրող անդամ պետության տարածքից: Ընդ որում, պարտադիր չէ, որ վճարման հետաձգումը լինի արգելված սուբսիդիա, եթե գանձվում են հարկերը չվճարելու դիմաց վճարման ենթակա տույժերը: Արտահանվող ապրանքի համար ավելացված արժեքի զրոյական դրույքաչափով հարկումը չի համարվում արգելված սուբսիդիայի նշան.

5) արտահանման արդյունքների հետ կապված՝ ապրանքների հարկման բազան կրճատող հատուկ պահումները ներքին շուկայում իրացվող նույնանման ապրանքների հետ համեմատ՝ ավելի մեծ ծավալով.

6) արտահանվող ապրանքների արտադրության մեջ օգտագործվող ապրանքների և ծառայությունների հարկման բազայի հաշվարկման համար կիրառվող հարկերի վճարումից ազատումը, դրանց նվազեցումը, վճարման հետաձգումը կամ հատուկ պահումներն ավելի մեծ ծավալով, քան ներքին շուկայում իրացվող նույնանման ապրանքների արտադրության մեջ օգտագործվող ապրանքների և ծառայությունների հարկման բազայի հաշվարկման համար կիրառվող հարկերի վճարումից ազատումը, դրանց նվազեցումը, վճարման հետաձգումը կամ հատուկ պահումները.

7) արտահանվող արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող հումքի և նյութերի դիմաց մաքսային վճարների գանձումը՝ ավելի ցածր դրույքաչափերով, քան ներքին շուկայում սպառման համար նախատեսված նույնանման արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող նույնպիսի հումքի և նյութերի դիմաց, կամ արտահանվող արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող հումքի և նյութերի դիմաց մաքսային վճարները վերադարձնելը՝ ավելի մեծ ծավալով, քան ներքին շուկայում իրացվող նույնանման արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող նույնպիսի հումքի և նյութերի դիմաց.

8) այն ներմուծման տուրքերը նվազեցնելը կամ վերադարձնելը, որոնք գանձվում են արտադրանքի արտադրության մեջ օգտագործված ներմուծված հումքի և նյութերի դիմաց, եթե արտադրված արտադրանքում հայրենական հումքի կամ նյութերի պարունակությունը պարտադիր է (անկախ այն հանգամանքից, թե սահմանվում են արդյոք կոնկրետ ապրանքներ, դրանց ծավալը կամ արժեքը կամ դրանց տեղական արտադրության ծավալից կամ արժեքից ունեցած մասնաբաժինը).

9) այնպիսի պարգևավճարների գանձումը, որոնք բավարար չեն արտահանման վարկերի երաշխավորման կամ ապահովագրման, արտահանվող ապրանքների արժեքի կամ արժութային

ռիսկերի մեծացումից ապահովագրման կամ երաշխավորման ծրագրերով երկարաժամկետ գործառնական ծախսերը կամ վնասները ծածկելու համար.

10) արտահանման վարկերի տրամադրումն այնպիսի դրույքաչափերով, որոնք ավելի ցածր են այն դրույքաչափերից, որոնք այդ վարկերն ստացողները փաստացիորեն պետք է վճարեին շուկայական պայմաններում համադրելի վարկից օգտվելու դիմաց (վարկի մարման միևնույն ժամկետը, վարկի արժույթը և այլն), կամ բոլոր այն ծախսերի կամ դրանց մի մասի վճարումը, որոնք կրել են արտահանողները կամ ֆինանսական հաստատությունները՝ վարկն ստանալու հետ կապված: Արտահանման վարկավորման գործելակերպը, որը համապատասխանում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ պետությունների կողմից՝ արտահանման պաշտոնական վարկերի առնչությամբ պայմանավորվածության տոկոսադրույքներին վերաբերող դրույթներին, չի համարվելու արգելված սուբսիդիա.

11) ձեռնարկության համար նախատեսված էլեկտրաէներգիայի կամ էներգակիրների սակագների նվազեցումն այն պայմանով, որ այդպիսի սուբսիդավորումը կապված է արտահանման արդյունքների կամ ներմուծված ապրանքների փոխարեն հայրենական ապրանքների օգտագործման հետ:

15. Հանձնաժողովը, առաջնորդվելով սույն Արձանագրությամբ, չի համաձայնեցնում արգելված սուբսիդիաները որպես թույլատրելի սուբսիդիաներ:

Սույն կետի դրույթների կիրառումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անցումային դրույթները:

16. Այն դեպքում, երբ անդամ պետություններից որևէ մեկը հիմք ունի համարելու, որ այլ անդամ պետության սուբսիդավորող մարմինը տրամադրում է արգելված սուբսիդիաներ և (կամ) սահմանում է այնպիսի միջոցներ, որոնք պահպանելն անհրաժեշտ է սույն Արձանագրությանը համապատասխան հատուկ սուբսիդիաներ ստանալու համար, ապա առաջին անդամ պետությունն իրավունք ունի դիմելու այդ մյուս անդամ պետությանը՝ այդպիսի արգելված սուբսիդիաները և միջոցները չեղյալ հայտարարելու վերաբերյալ խորհրդակցություններ անցկացնելու խնդրանքով:

17. Եթե սույն Արձանագրության 16-րդ կետում նշված խորհրդակցություններն անցկացնելու վերաբերյալ ծանուցումը պաշտոնական դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից հետո 2 ամսվա ընթացքում անդամ պետությունները փոխհամաձայնության չեն գալիս, ապա առկա տարաձայնությունները կարգավորվում են սույն Պայմանագրի 93-րդ հոդվածին համապատասխան:

Եթե վեճերի կարգավորման արդյունքներով որոշում է կայացվել, որ անդամ պետություններից մեկը տրամադրում է սույն Արձանագրության 9-րդ և 12-րդ կետերում նշված արգելված սուբսիդիաները և (կամ) կիրառում է սույն Արձանագրության 11-րդ կետում նշված միջոցները, ապա այդ անդամ պետությունն անհապաղ չեղյալ է հայտարարում այդպիսի արգելված սուբսիդիաները կամ միջոցները՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդպիսի արգելված սուբսիդիաների կամ միջոցների արդյունքում վնաս է հասցվում այլ անդամ պետությունների ազգային տնտեսությանը, և այդպիսի արգելված սուբսիդիաների առնչությամբ սահմանում է փոխհատուցման միջոց՝ սույն Արձանագրության 89 - 94-րդ կետերին համապատասխան:

18. Սուբսիդավորող մարմինները սահմանված անցումային ժամանակահատվածում իրավունք ունեն տրամադրելու սուբսիդիաներ՝ միջոցներ կիրառելով սույն Արձանագրության հավելվածին համապատասխան:

IV. Թույլատրելի սուբսիդիաները

19. Սույն Արձանագրությանը համապատասխան արգելված և հատուկ չհամարվող սուբսիդիաները ճանաչվում են որպես թույլատրելի սուբսիդիաներ, որոնց տրամադրումը չի խաթարում անդամ պետությունների միջև փոխադարձ առևտուրը:

Անդամ պետություններն իրավունք ունեն տրամադրելու այդպիսի սուբսիդիաներ առանց սահմանափակումների, և այդպիսի սուբսիդիաների առնչությամբ փոխհատուցման ու պատասխան միջոցների կիրառմանը կամ սուբսիդիաներ տրամադրելու արգելքին վերաբերող սույն Արձանագրության դրույթները չեն գործում:

20. Անդամ պետություններն իրավունք ունեն տրամադրելու սույն բաժնով նախատեսված թույլատրելի սուբսիդիաները՝ առանց Հանձնաժողովի համաձայնության:

Սույն կետի դրույթները կիրառվում են՝ հաշվի առնելով Պայմանագրի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անցումային դրույթները:

21. Սույն Արձանագրության VII բաժնում նշված այն սուբսիդիաները, որոնք սույն Արձանագրության II բաժնին համապատասխան համարվում են հատուկ, բայց անդամ պետությունների կողմից ճանաչվում են որպես փոխադարձ առևտուրը չխաթարող սուբսիդիաներ, փոխհատուցման միջոցներ ձեռնարկելու հիմք չեն ծառայում՝ սույն Արձանագրության VIII բաժնին համապատասխան:

V. Ուսումնասիրություններ անցկացնելու կարգը

22. Անդամ պետության տարածքում տրամադրվող սուբսիդիաների համապատասխանությունը սույն Արձանագրության դրույթներին վերլուծելու, ինչպես նաև հատուկ սուբսիդիա տրամադրած անդամ պետության տարածքից սուբսիդավորվող ապրանքի ներմուծման արդյունքում ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության փաստը հաստատելու կամ սուբսիդավորող անդամ պետության շուկայից նույնանման ապրանքը դուրս մղելու նպատակով ուսումնասիրությունն անցկացվում է իրավասու մարմնի կողմից՝ տվյալ անդամ պետության տարածքում գրանցված նույնանման ապրանքի ազգային արտադրողների կողմից սույն Արձանագրությանը համապատասխան ներկայացված գրավոր դիմումի հիման վրա կամ իրավասու մարմնի սեփական նախաձեռնությամբ (այսուհետ՝ դիմում):

23. Դիմումը ներկայացվում է նույնանման ապրանքի ազգային արտադրողի կամ այդպիսի արտադրողների միավորման կողմից, որի մասնակիցներից են ազգային տնտեսության ճյուղը կազմող արտադրողները, ինչպես նաև այդ անձանց ներկայացուցիչների կողմից, որոնք ունեն այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան պատշաճ կերպով ձևակերպված լիազորություններ, որի տարածքում այդ ներկայացուցիչները գրանցված են (այսուհետ՝ դիմումատուներ):

24. Դիմումը պարունակում է՝

1) տեղեկություններ դիմումատուի վերաբերյալ.

2) ապրանքի նկարագիրը (նշելով ծագման երկիրը և ԱՏԳ ԱԱ ԵՏՄ ծածկագիրը).

3) տվյալներ հատուկ սուբսիդիայի առկայության, բնույթի և չափի վերաբերյալ.

4) տվյալներ սուբսիդավորվող ապրանքն արտադրողների վերաբերյալ.

5) տվյալներ նույնանման ապրանքի ազգային արտադրողների վերաբերյալ.

6) տվյալներ այն անդամ պետության տարածք սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ծավալի փոփոխության վերաբերյալ, որի իրավասու մարմին դիմումը ներկայացվում է դիմումը ներկայացնելուն նախորդող 3 օրացուցային տարվա ընթացքում.

7) տվյալներ այն անդամ պետության տարածքից այլ անդամ պետությունների տարածքներ նույնանման ապրանքի արտահանման ծավալի փոփոխության վերաբերյալ, որի իրավասու մարմին ներկայացվում է դիմումը.

8) սուբսիդավորվող ապրանքը ներմուծելու հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության կամ սուբսիդավորող անդամ պետության շուկայից նույնանման ապրանքը դուրս մղելու մասին ապացույցներ: Սուբսիդավորվող ապրանքը ներմուծելու հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված նյութական վնասի առկայության կամ նյութական վնաս հասցնելու վտանգի կամ սուբսիդավորող անդամ պետության շուկայից նույնանման ապրանքը դուրս մղելու մասին ապացույցները հիմնվում են այն օբյեկտիվ գործոնների վրա, որոնցով բնութագրվում է ազգային տնտեսության ճյուղի տնտեսական վիճակը, և որոնք կարող են արտահայտվել քանակական ցուցանիշներով (այդ թվում՝ ապրանքի արտադրության ծավալը և դրա վաճառքի ծավալը, անդամ պետության շուկայում ապրանքի մասնաբաժինը, ապրանքի արտադրության ինքնարժեքը, ապրանքի գինը, արտադրական հզորությունների ծանրաբեռնվածության, աշխատանքի արտադրողականության, շահույթի չափերի, ապրանքի արտադրության և վաճառքի շահութաբերության, ազգային տնտեսության ճյուղում ներդրումների ծավալի վերաբերյալ տվյալներ).

9) տվյալներ Միության մաքսային տարածք նույնանման ապրանքի ներմուծման ծավալի փոփոխության վերաբերյալ (քանակական և արժեքային արտահայտությամբ)՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 3 օրացուցային տարվա ընթացքում.

10) տվյալներ Միության մաքսային տարածքից նույնանման ապրանքի արտահանման ծավալի փոփոխության վերաբերյալ (քանակական և արժեքային արտահայտությամբ)՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 3 օրացուցային տարվա ընթացքում.

11) այլ գործոնների վերլուծություն, որոնք վերլուծվող ժամանակահատվածում կարող էին ազդեցություն ունենալ ազգային տնտեսության ճյուղի վրա:

25. Դիմումի մեջ ընդգրկված արժեքային ցուցանիշները նշելիս համադրելիության նպատակով կիրառվում է Հանձնաժողովի կողմից՝ արտաքին առևտրի վիճակագրություն վարելու համար սահմանված դրամական միավոր:

26. Դիմումը և դրա ոչ գաղտնի տարբերակը (եթե դիմումի մեջ առկա են գաղտնի տեղեկություններ) ներկայացվում են իրավասու մարմին. դիմումը ենթակա է գրանցման նշված մարմին այն ներկայացնելու օրը:

27. Դիմումը մերժվում է հետևյալ հիմքերով՝

սույն Արձանագրության 23-րդ կետով սահմանված պահանջներին դիմումատուի չհամապատասխանելը.

սույն Արձանագրության 24-րդ կետում նշված տվյալները չներկայացնելը.

դիմումատուի կողմից ներկայացված տվյալների ոչ հավաստի լինելը:

Դիմումը չի կարող մերժվել այլ հիմքերով:

28. Նախքան ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելը իրավասու մարմինը դիմումն ստանալու մասին գրավոր ծանուցում է այն անդամ պետության իրավասու մարմնին, որի տարածքում տրամադրվում է ուսումնասիրվող հատուկ սուբսիդիան:

29. Ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելու նպատակով իրավասու մարմինը դիմումի գրանցման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում ուսումնասիրում է տվյալ դիմումի մեջ առկա ապացույցների և տվյալների բավարար և հավաստի լինելը՝ սույն Արձանագրության 24-րդ կետին համապատասխան: Դիմումատուի կողմից իրավասու մարմին լրացուցիչ տվյալներ ներկայացնելու անհրաժեշտության դեպքում նշված ժամկետը կարող է երկարաձգվել, սակայն այն չպետք է գերազանցի դիմումը գրանցելու օրվանից 40 օրացուցային օրը:

30. Դիմումը կարող է հետ վերցվել դիմումատուի կողմից նախքան ուսումնասիրություն սկսելը կամ դրա անցկացման ընթացքում:

Նախքան ուսումնասիրություն սկսելը դիմումը հետ վերցնելու դեպքում այդպիսի դիմումը համարվում է չներկայացված:

Ուսումնասիրություն անցկացնելու ընթացքում դիմումը հետ վերցնելու դեպքում ուսումնասիրությունը դադարեցվում է կամ շարունակվում է իրավասու մարմնի որոշմամբ:

31. Դիմումն ուսումնասիրելու համար ընդունելուց հետո և նախքան ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կայացնելն իրավասու մարմինը հատուկ սուբսիդիան տրամադրած անդամ պետության լիազոր մարմնին առաջարկում է անցկացնել խորհրդակցություններ՝ հատուկ սուբսիդիայի առկայությունը, չափն ու օգտագործումը, ինչպես նաև այն տրամադրելու հետևանքները ճշտելու և փոխընդունելի որոշում կայացնելու նպատակով: Այդպիսի խորհրդակցությունները կարող են անցկացվել նաև ուսումնասիրության ընթացքում:

32. Հատուկ սուբսիդիայի առկայությունը, չափը և այն տրամադրելու հետևանքները ճշտելու նպատակով խորհրդակցություններ անցկացնելը չի խոչընդոտում իրավասու մարմնի կողմից՝ ուսումնասիրություն սկսելու, ինչպես նաև այդպիսի ուսումնասիրության արդյունքներով՝ մեկ այլ անդամ պետության տարածքում տրամադրված հատուկ սուբսիդիայի՝ սույն Արձանագրության դրույթներին համապատասխանության վերաբերյալ եզրակացություն նախապատրաստելու և (կամ) հատուկ սուբսիդիան տրամադրած անդամ պետության տարածքից սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին վնաս հասցնելու և փոխհատուցման միջոց կիրառելու վերաբերյալ դիմումն այն անդամ պետությանը փոխանցելու մասին որոշում կայացնելուն, որի տարածքում տրամադրվում է ուսումնասիրվող հատուկ սուբսիդիան:

33. Նախքան սույն Արձանագրության 29-րդ կետում նշված ժամկետի լրանալն իրավասու մարմինը որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու կամ այն անցկացնելը մերժելու մասին:

Ուսումնասիրություն անցկացնելը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում իրավասու մարմինն այդպիսի որոշում կայացնելու օրվանից ոչ ավելի, քան 10 օրացուցային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է դիմումատուին ուսումնասիրություն անցկացնելը մերժելու պատճառի մասին:

Ուսումնասիրություն սկսելու մասին որոշում ընդունելիս իրավասու մարմինը գրավոր ծանուցում է հատուկ սուբսիդիա տրամադրած անդամ պետության լիազոր մարմնին, ինչպես նաև իրեն հայտնի այլ շահագրգիռ անձանց ընդունված որոշման մասին և ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից ոչ ավելի, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է ուսումնասիրություն սկսելու մասին ծանուցման հրապարակումը: Ուսումնասիրություն սկսելու մասին ծանուցումը հրապարակելու օրը համարվում է ուսումնասիրություն սկսելու օրը:

34. Իրավասու մարմինը կարող է որոշում կայացնել ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ (այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ), եթե այդ մարմնի տրամադրության տակ գտնվում են սույն Արձանագրության դրույթները խախտելու մասին փաստերի առկայության և (կամ) տվյալ անդամ պետության տարածք սուբսիդավորվող ապրանք ներմուծելու հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի փաստի առկայության կամ սուբսիդավորվող ապրանքի պատճառով հատուկ սուբսիդիա տրամադրած անդամ պետության կամ մեկ այլ անդամ պետության շուկայից նույնանման ապրանքը դուրս մղելու մասին ապացույցներ:

Եթե ապացույցները բավարար չեն ուսումնասիրություն անցկացնելու համար, այդպիսի ուսումնասիրություն չի կարող սկսվել:

35. Ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո իրավասու մարմինը նույնանման ապրանքի իրեն հայտնի ազգային արտադրողներին և ուսումնասիրության առարկա հանդիսացող սուբսիդավորվող ապրանքի արտադրողներին ուղարկում է այն հարցերի ցանկը, որոնց նրանք պատասխանում են ուսումնասիրություն անցկացնելու նպատակով:

Հարցերի ցանկը համարվում է ստացված՝ այն նույնանման ապրանքի ազգային արտադրողի ներկայացուցչին կամ սուբսիդավորվող ապրանքի արտադրողին անմիջականորեն փոխանցելու օրվանից կամ այդ ցանկը փոստով ուղարկելու օրվանից 7 օրացուցային օր հետո:

Նույնանման ապրանքի ազգային արտադրողները և ուսումնասիրության առարկա հանդիսացող սուբսիդավորվող ապրանքի արտադրողները, որոնց ուղարկվել է հարցերի ցանկը, իրենց պատասխանները ներկայացնում են իրավասու մարմին իրենց կողմից այդպիսի ցանկ ստանալու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: Նույնանման ապրանքի ազգային արտադրողների և ուսումնասիրության առարկա հանդիսացող սուբսիդավորվող ապրանքի արտադրողների կողմից հիմնավորված և գրավոր շարադրված խնդրանքի հիման վրա իրավասու մարմինը կարող է երկարաձգել նշված ժամկետը, սակայն առավելագույնը 10 օրացուցային օրով:

36. Ուսումնասիրության ընթացքում ներկայացված տվյալներն ստուգելու կամ անցկացվող ուսումնասիրությանն առնչվող լրացուցիչ տվյալներ ստանալու նպատակով իրավասու մարմինը կարող է ուսումնասիրություն անցկացնել հատուկ սուբսիդիա տրամադրած անդամ պետության տարածքում՝ դրա վերաբերյալ ուսումնասիրության առարկա հանդիսացող սուբսիդավորվող ապրանքի համապատասխան արտադրողի համաձայնությունն ստանալու պայմանով, ինչպես նաև համապատասխան անդամ պետության կառավարության ներկայացուցիչներին նախապես ծանուցելու և այդ անդամ պետության տարածքում ուսումնասիրություն անցկացնելու վերաբերյալ այդ պետության կողմից առարկության բացակայության պայմանով:

Ուսումնասիրության ընթացքում ներկայացված տվյալներն ստուգելու կամ անցկացվող ուսումնասիրությանն առնչվող լրացուցիչ տվյալներ ստանալու նպատակով իրավասու մարմինն իրավունք ունի իր ներկայացուցիչներին ուղարկելու նույնանման ապրանքի ազգային արտադրողների գտնվելու վայր, անցկացնելու խորհրդակցություններ և բանակցություններ շահագրգիռ անձանց հետ, ծանոթանալու ուսումնասիրության առարկա հանդիսացող սուբսիդավորվող ապրանքի նմուշներին և ձեռնարկելու ուսումնասիրություն անցկացնելու

համար անհրաժեշտ այլ գործողություններ, որոնք չեն հակասում ուսումնասիրություն անցկացնող անդամ պետության օրենսդրությանը:

37. Ուսումնասիրություն անցկացնելու ընթացքում իրավասու մարմինը կարող է ուսումնասիրվող սուբսիդիան տրամադրած կամ տրամադրող անդամ պետության լիազոր մարմիններին, ինչպես նաև շահագրգիռ անձանց հարցումներ ուղարկել անցկացվող ուսումնասիրությանն առնչվող տեղեկություններ տրամադրելու մասին:

38. Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ուսումնասիրություն սկսելու մասին ծանուցման մեջ նշված օրվանից ոչ ուշ տրամադրելու ուսումնասիրություն անցկացնելու համար անհրաժեշտ տվյալներ (այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ)՝ նշելով դրանք ստանալու աղբյուրը: Իրավասու մարմինն իրավունք ունի շահագրգիռ անձանցից պահանջելու լրացուցիչ տվյալներ:

39. Ուսումնասիրությանն առնչվող ապացույցներն ու տվյալները պետք է տրամադրվեն իրավասու մարմնին ուսումնասիրություն անցկացնող անդամ պետության պետական լեզվով, իսկ օտար լեզվով կազմված փաստաթղթերի բնօրինակներին պետք է կցված լինի սահմանված կարգով հաստատված թարգմանությունը:

40. Հաշվի առնելով սույն Արձանագրությանը համապատասխան գաղտնի տեղեկությունները պաշտպանելու անհրաժեշտությունը՝ ուսումնասիրության ընթացքում իրավասու մարմինը շահագրգիռ անձանց նրանց գրավոր խնդրանքի հիման վրա հնարավորություն է ընձեռում ծանոթանալու ցանկացած շահագրգիռ անձի կողմից գրավոր ներկայացված տվյալներին՝ որպես ուսումնասիրությանն առնչվող ապացույցներ: Իրավասու մարմինն ուսումնասիրության մասնակիցներին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու ուսումնասիրությանն առնչվող և ուսումնասիրության ընթացքում իր կողմից օգտագործվող, սակայն, սույն Արձանագրությանը համապատասխան, գաղտնի չհամարվող այլ տեղեկությունների:

41. Մաքսային գործի, պետական վիճակագրություն վարելու բնագավառում լիազորված՝ անդամ պետությունների պետական իշխանության (կառավարման) մարմինները, անդամ պետությունների պետական իշխանության (կառավարման) մյուս մարմինները և պետական իշխանության (կառավարման) տարածքային (տեղական) մարմիններն աջակցություն են ցուցաբերում ուսումնասիրություն անցկացնելու գործում և իրավասու մարմնի հարցումների հիման վրա տրամադրում են ուսումնասիրություն անցկացնելու համար անհրաժեշտ տվյալներ (այդ թվում՝ գաղտնի տեղեկություններ պարունակող):

42. Ուսումնասիրություն անցկացնելու ժամկետը չի գերազանցում ուսումնասիրությունն սկսելու օրվանից վեց ամիսը:

Ուսումնասիրությունը համարվում է ավարտված իրավասու մարմնի կողմից ուսումնասիրության արդյունքներն իր կառավարության դիտարկմանն ուղարկելու օրը:

43. Ուսումնասիրության արդյունքներով իրավասու մարմինը եզրակացություն է մշակում սույն Արձանագրության դրույթներին մեկ այլ անդամ պետության տարածքում տրամադրված սուբսիդիաների համապատասխանության վերաբերյալ:

44. Եթե ուսումնասիրության արդյունքներով ապացուցվում է սույն Արձանագրության դրույթները խախտելու և (կամ) ազգային տնտեսության ճյուղին վնաս հասցնելու փաստը, ապա անդամ պետությունը, որի իրավասու մարմինն անցկացրել է ուսումնասիրությունը, փոխհատուցման միջոց սահմանելու մասին դիմում է փոխանցում այն անդամ պետությանը, որի տարածքում տրամադրվում է ուսումնասիրվող հատուկ սուբսիդիան:

45. Ազգային տնտեսության ճյուղը սահմանելիս այն անդամ պետության տարածքը, որի իրավասու մարմինն անցկացնում է ուսումնասիրությունը, կարող է դիտարկվել որպես մի տարածք, որտեղ գործում են երկու կամ մի քանի մրցակից շուկաներ, իսկ այդպիսի շուկաներից որևէ մեկի սահմաններում նույնանման ապրանքի ազգային արտադրողները կարող են դիտարկվել որպես ազգային տնտեսության առանձին ճյուղ, եթե այդպիսի արտադրողներն այդ շուկայում վաճառում են իրենց կողմից արտադրվող նույնանման ապրանքի առնվազն 80 տոկոսը, և նույնանման ապրանքի պահանջարկն այդ շուկայում զգալիորեն չի բավարարվում տվյալ ապրանքի այն ազգային արտադրողների կողմից, որոնք գտնվում են ուսումնասիրություն անցկացնող անդամ պետության մնացած տարածքում: Նման դեպքերում ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայությունը կարող է հաստատվել, նույնիսկ եթե ազգային տնտեսության ճյուղի հիմնական մասին վնաս չի հասցվել՝ պայմանով, որ սուբսիդավորվող ապրանքի վաճառքը կենտրոնացած է մրցակից շուկաներից մեկում, և

սուբսիդավորվող ապրանքի ներմուծումը վնաս է հասցնում մեկ այդպիսի շուկայի սահմաններում նույնանման ապրանքի ազգային արտադրողների առնվազն 80 տոկոսին:

46. Հատուկ սուբսիդիայի չափը որոշվում է այդպիսի սուբսիդիա ստացողին հասած օգուտի չափի հիման վրա: Օգուտի չափը հաշվարկելիս իրավասու մարմինը հաշվի է առնում հետևյալը՝

1) սուբսիդավորող մարմնի մասնակցությունը կազմակերպության կապիտալում չի դիտարկվում որպես հատուկ սուբսիդիայի տրամադրում, եթե այդպիսի մասնակցությունը չի կարող որակվել որպես համապատասխան անդամ պետության տարածքում սովորական ներդրումային պրակտիկային չհամապատասխանող գործողություն (ներառյալ ռիսկային կապիտալի տրամադրումը).

2) սուբսիդավորող մարմնի տրամադրած վարկը չի դիտարկվում որպես հատուկ սուբսիդիա, եթե վարկն ստացող կազմակերպության կողմից պետական վարկերի դիմաց վճարվող գումարը չի տարբերվում այն գումարից, որն այն կվճարեր այն համարժեք առևտրային վարկի դիմաց, որը տվյալ կազմակերպությունը կարող է ստանալ համապատասխան անդամ պետության վարկային շուկայում: Հակառակ դեպքում օգուտ է համարվում այդ գումարների միջև եղած տարբերությունը.

3) սուբսիդավորող մարմինը վարկային երաշխիքը չի դիտարկում որպես հատուկ սուբսիդիայի տրամադրում, եթե սուբսիդավորող մարմնի կողմից երաշխավորված վարկի դիմաց երաշխիք ստացող կազմակերպության կողմից վճարվող գումարը չի տարբերվում այն գումարից, որն այն կվճարեր առանց պետական երաշխիքի համարժեք առևտրային վարկի դիմաց: Հակառակ դեպքում օգուտ է համարվում այդ գումարների միջև առկա տարբերությունը՝ միջնորդավճարների տարբերությամբ ճշգրտված:

4) սուբսիդավորող մարմնի կողմից ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը կամ ապրանքների գնումը չի դիտարկվում որպես հատուկ սուբսիդիայի տրամադրում, եթե ապրանքները մատակարարվում են կամ ծառայությունները մատուցվում են համարժեքից ավելի փոքր վճարման դիմաց, կամ գնումները չեն կատարվում համարժեքից ավելի մեծ վճարման դիմաց: Վճարի համարժեքությունը որոշվում է՝ ելնելով համապատասխան անդամ պետության շուկայում այդպիսի ապրանքների և ծառայությունների գնման ու վաճառքի՝ գոյություն ունեցող շուկայական պայմաններից (ներառյալ գինը, որակը, մատչելիությունը, իրացվելիությունը, տրանսպորտային փոխադրումը և ապրանքի գնմանը կամ վաճառքին առնչվող մյուս պայմանները):

47. Սուբսիդիայի չափի հաշվարկն իրականացվում է այն ապրանքի միավորի (տոննա, խորանարդ մետր, հատ և այլն) համար, որը ներմուծվել է այն անդամ պետության տարածք, որի իրավասու մարմինն անցկացնում է ուսումնասիրությունը, կամ որն իրացվել է այն անդամ պետության շուկայում, որի տարածքում տրամադրվում է հատուկ սուբսիդիան, կամ մեկ այլ անդամ պետության շուկայում:

48. Սուբսիդիայի չափը հաշվարկելիս պետք է հաշվի առնել համապատասխան անդամ պետությունում գնաճի ցուցանիշներն այն դեպքում, երբ գնաճի տեմպերն այնքան մեծ են, որ կարող են խեղաթյուրել ստացված արդյունքները:

49. Ապրանքի միավորի համար սուբսիդիայի չափը սահմանվում է՝ ելնելով հատուկ սուբսիդիա տրամադրած անդամ պետության՝ այդ նպատակներով կատարած ծախսերի չափից:

50. Ապրանքի միավորի համար սուբսիդիայի չափը հաշվարկելիս այդպիսի ապրանքի արժեքը որոշվում է սուբսիդիան ստացողի կողմից այն 12 ամիսների ընթացքում կատարված վաճառքների ընդհանուր արժեքով, որոնք նախորդել են սուբսիդիան ստանալուն, և որոնց վերաբերյալ առկա են անհրաժեշտ տվյալներ:

51. Սուբսիդիայի չափը հաշվարկելիս անհրաժեշտ է սուբսիդիայի ընդհանուր գումարից հանել գրանցման դիմաց ցանկացած գանձման գումարը կամ սուբսիդիան ստանալու համար կատարված այլ ծախսեր:

52. Եթե սուբսիդիան տրամադրվում է արտադրված, արտահանված կամ տրանսպորտային միջոցով փոխադրված արդյունաբերական ապրանքի ոչ որոշակի քանակի առնչությամբ, ապա ապրանքի միավորի համար սուբսիդիայի չափի հաշվարկն իրականացվում է սուբսիդիայի ընդհանուր գումարը սուբսիդիան տրամադրելու ժամանակահատվածում այդ ապրանքի արտադրության, վաճառքի կամ արտահանման ծավալի բաժանելու միջոցով՝ անհրաժեշտության դեպքում ապրանքի արտադրության, վաճառքի կամ արտահանման

ընդհանուր ծավալի մեջ հաշվի առնելով սուբսիդավորվող ներմուծվող ապրանքի մասնաբաժինը:

53. Եթե սուբսիդիան տրամադրվում է հիմնական միջոցների բարելավման կամ ձեռքբերման առնչությամբ, ապա սուբսիդիայի չափի հաշվարկն իրականացվում է՝ սուբսիդիան բաշխելով ըստ հատուկ սուբսիդիան տրամադրած համապատասխան անդամ պետության տնտեսության ուսումնասիրվող ճյուղում այդպիսի հիմնական միջոցների մաշվածության միջին ժամկետի: Ապրանքի միավորի համար սուբսիդիայի չափի հաշվարկը ներառում է նաև այն սուբսիդիաները, որոնք տրամադրվել են նախքան ուսումնասիրության անցկացման ժամանակահատվածի սկիզբը այնպիսի հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով, որոնց մաշվածության ժամկետը, սակայն, դեռևս չի լրացել:

54. Եթե միևնույն ապրանքի համար տարբեր ժամանակահատվածներում կամ տարբեր նպատակներով տրամադրվող սուբսիդիայի մեծությունը տարբերվում է, ապա սուբսիդիայի չափը հաշվարկելիս կիրառվում է սուբսիդիայի չափի ցուցանիշների կշռված միջինը՝ ելնելով ապրանքի արտադրության, վաճառքի կամ արտահանման ծավալից:

55. Եթե սուբսիդիան տրամադրվում է հարկային արտոնությունների ձևով, ապա ապրանքի արժեքը որոշվում է վերջին այն 12 ամիսների ընթացքում դրա վաճառքի ընդհանուր արժեքի հաշվարկի հիման վրա, որոնց ընթացքում կիրառվել են հարկային արտոնություններ:

56. Օրացուցային տարվա ընթացքում տարբեր սուբսիդավորող մարմինների կողմից և (կամ) տարբեր ծրագրերի իրականացման նպատակով տրամադրված սուբսիդիաները պետք է ամփոփվեն:

57. Սուբսիդավորող անդամ պետության կամ մեկ այլ անդամ պետության շուկայից նույնանման ապրանքը դուրս մղելու կամ սուբսիդավորող անդամ պետության տարածք նույնանման ապրանքի ներմուծման աճը զսպելու կամ այլ անդամ պետության տարածք նույնանման ապրանքի արտահանման աճը զսպելու փաստը սահմանվում է այն դեպքում, երբ ապացուցված է, որ սուբսիդավորող անդամ պետության շուկայում կամ մեկ այլ անդամ պետության շուկայում նույնանման ապրանքի մասնաբաժինը սուբսիդավորվող ապրանքի նկատմամբ անբարենպաստ փոփոխության է ենթարկվել: Նշված փաստը սահմանվում է այնպիսի ժամանակահատվածում, որը բավարար է համապատասխան ապրանքի շուկայի զարգացումների հստակ միտումներն ապացուցելու համար, և որը սովորական պայմաններում պետք է տևի առնվազն մեկ տարի:

58. Սուբսիդավորող անդամ պետության շուկայում կամ մեկ այլ անդամ պետության շուկայում նույնանման ապրանքի մասնաբաժնի անբարենպաստ փոփոխությունը ներառում է հետևյալ իրավիճակներից մեկը՝

1) սուբսիդավորվող ապրանքի շուկայական մասնաբաժինը մեծանում է.

2) սուբսիդավորվող ապրանքի շուկայական մասնաբաժինը մնում է անփոփոխ այնպիսի հանգամանքներում, որոնց դեպքում հատուկ սուբսիդիայի բացակայության պարագայում այն պետք է նվազեր.

3) սուբսիդավորվող ապրանքի շուկայական մասնաբաժինը փոքրանում է, սակայն ավելի դանդաղ տեմպերով, քան դա տեղի կունենար հատուկ սուբսիդիայի բացակայության պարագայում:

59. Գների նվազեցումը սահմանվում է համապատասխան շուկայում սուբսիդավորվող ապրանքի գներն այն ապրանքի գների հետ համադրելու միջոցով, որի արտադրության, տրանսպորտային փոխադրման կամ ցանկացած անդամ պետության տարածք արտահանման ժամանակ չի կիրառվել հատուկ սուբսիդիա: Համադրումը կատարվում է առևտրի միևնույն մակարդակի վրա և համեմատելի ժամանակահատվածներում: Համադրման ընթացքում հաշվի է առնվում գների համադրելիության վրա ազդող ցանկացած գործոն: Այն դեպքում, երբ նշված համադրումը հնարավոր չէ կատարել, գների նվազեցման առկայությունը կարող է սահմանվել արտահանման միջին գների հիման վրա:

60. Եթե Պայմանագրի 93-րդ հոդվածին համապատասխան՝ երկու անդամ պետություն վիճարկում են սույն Արձանագրության 12-րդ, 57-59-րդ, 61-րդ և 62-րդ կետերի համաձայն երրորդ անդամ պետության շուկայում շահերի կոպիտ ոտնահարման առկայությունը, ապա այդպիսի անդամ պետությունը վեճի կողմ հանդիսացող անդամ պետություններին տրամադրում է իր տրամադրության տակ եղած՝ վեճի առարկային առնչվող վիճակագրական տեղեկություններն

այդպիսի երրորդ անդամ պետության շուկայում գտնվող՝ վեճի կողմ հանդիսացող անդամ պետությունների տարածքից ծագած ապրանքների մասնաբաժնի փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան ապրանքների գներին վերաբերող վիճակագրական տեղեկություններ: Ընդ որում, այդպիսի անդամ պետությունն իրավունք ունի չկատարելու շուկայի կամ գների հատուկ վերլուծություն, ինչպես նաև չտրամադրելու այն տեղեկությունները, որոնք համարում է առևտրային կամ պետական գաղտնիք:

61. Շահերի կոպիտ ոտնահարման առկայության փաստը չի կարող հաստատվել համապատասխան ժամանակահատվածում ստորև նշված հանգամանքներից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) շահերի կոպիտ ոտնահարման փաստը պարզող անդամ պետության տարածքից ապրանքն արտահանելու արգելքի կամ սահմանափակումների առկայությունը կամ ապրանքն այդպիսի անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության շուկա ներմուծելու արգելքի կամ սահմանափակումների առկայությունը.

2) ոչ առևտրային պատճառներով շահերի կոպիտ ոտնահարման փաստը պարզող անդամ պետությունից ներմուծումն մեկ այլ անդամ պետությունից ներմուծմամբ վերաուղղորդելու վերաբերյալ որոշումը՝ ընդունված այն անդամ պետության լիազոր մարմնի կողմից, որը ներմուծում է նույնանման ապրանք և ունի տվյալ ապրանքի գծով առևտրի մենաշնորհ կամ իրականացնում է տվյալ ապրանքի պետական առևտուր.

3) տարերային աղետները, գործադուլները, տրանսպորտի խափանումները կամ այլ ֆորս մաժորային իրավիճակներ, որոնք խիստ բացասական ազդեցություն են ունենում շահերի կոպիտ ոտնահարման փաստի առկայությունը պարզող անդամ պետությունից արտահանելու համար նախատեսված ապրանքի արտադրության, որակի, քանակի կամ գնի վրա.

4) շահերի կոպիտ ոտնահարման փաստի առկայությունը պարզող անդամ պետությունից արտահանումը սահմանափակող պայմանավորվածությունների առկայությունը.

5) շահերի կոպիտ ոտնահարման փաստի առկայությունը պարզող անդամ պետությունից արդյունաբերական ապրանքն արտահանելու հնարավորությունը կամավոր կերպով նվազեցնելը (ներառյալ այն իրավիճակը, երբ այդ անդամ պետության տնտեսավարող սուբյեկտները նույնանման տվյալ ապրանքի արտահանումը միակողմանիորեն ուղղել են դեպի նոր շուկաներ).

6) այն պետությունում ընդունված չափանիշներին և (կամ) վարչական մյուս պահանջներին անհամապատասխանությունը, որի տարածք ներմուծվում է ապրանքը:

62. Սույն Արձանագրության 61-րդ կետում նշված հանգամանքների բացակայության դեպքում շահերի կոպիտ ոտնահարման փաստի առկայությունը սահմանվում է Միության դատարան ներկայացված կամ Միության դատարանի կողմից ինքնուրույն ձեռքբերված տեղեկությունների հիման վրա:

63. Սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի փաստը հաստատվում է սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ծավալի և ուսումնասիրությունն անցկացնող իրավասու մարմնի անդամ պետության շուկայում նույնանման ապրանքի գների և նույնանման ապրանքի ազգային արտադրողների վրա այդ ներմուծման ազդեցության վերլուծության արդյունքների հիման վրա:

64. Սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ծավալը վերլուծելիս իրավասու մարմինը որոշում է, թե արդյոք ավելացել է սուբսիդավորված ապրանքի ներմուծման ծավալը (բացարձակ ցուցանիշներով կամ այն անդամ պետությունում նույնանման ապրանքի արտադրության կամ սպառման առնչությամբ, որի իրավասու մարմինն անցկացնում է ուսումնասիրությունը):

65. Ուսումնասիրությունն անցկացնող իրավասու մարմնի անդամ պետության շուկայում նույնանման ապրանքի գների վրա սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ազդեցությունը վերլուծելիս իրավասու մարմինը պարզում է.

1) թե արդյո՞ք այդ անդամ պետության շուկայում սուբսիդավորվող ապրանքի գներն ավելի ցածր էին, քան նույնանման ապրանքի գները.

2) թե արդյո՞ք սուբսիդավորվող ապրանքի ներմուծումը հանգեցրել է այդ անդամ պետության շուկայում նույնանման ապրանքի գների նվազեցման.

3) թե արդյո՞ք սուբսիդավորվող ապրանքի ներմուծումը խոչընդոտել է նույնանման ապրանքի գների աճն այդ անդամ պետության շուկայում, ինչը տեղի կունենար այդպիսի ներմուծման բացակայության դեպքում:

66. Ազգային տնտեսության ճյուղի վրա սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ազդեցության վերլուծությունը ենթադրում է ազգային տնտեսության ճյուղի վիճակին առնչվող տնտեսական գործոնների գնահատում, այդ թվում՝

1) սուբսիդավորվող ապրանքի արտադրության, վաճառքի, ուսումնասիրությունն անցկացնող իրավասու մարմնի անդամ պետության շուկայում դրա մասնաբաժնի, շահույթի, աշխատանքի արտադրողականության, ներգրավված ներդրումներից կամ արտադրական հզորությունների օգտագործումից ստացված եկամտի կրճատումը կամ ապագայում հնարավոր կրճատումը.

2) նույնանման ապրանքի գների վրա ազդող գործոններն այն անդամ պետության շուկայում, որի իրավասու մարմինն անցկացնում է ուսումնասիրությունը.

3) դրամական հոսքերի շարժի, նույնանման ապրանքի պաշարների, զբաղվածության մակարդակի, աշխատավարձի, արտադրության աճի տեմպերի, ներդրումներ ներգրավելու հնարավորության վրա բացասական ազդեցությունը կամ ապագայում հնարավոր բացասական ազդեցությունը:

67. Ազգային տնտեսության ճյուղի վրա սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ազդեցությունը գնահատվում է այն պետությունում նույնանման ապրանքի արտադրության նկատմամբ, որի իրավասու մարմինն անցկացնում է ուսումնասիրությունը, եթե առկա տվյալներով հնարավոր է առանձնացնել նույնանման ապրանքի արտադրությունն այնպիսի չափորոշիչների հիման վրա, ինչպիսիք են արտադրական գործընթացը, ապրանքի վաճառքը դրա արտադրողների կողմից և շահույթը: Եթե առկա տվյալներով հնարավոր չէ առանձնացնել նույնանման ապրանքի արտադրությունը, ապա սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ազդեցությունը ազգային տնտեսության ճյուղի վրա գնահատվում է այն ապրանքների ամենանեղ խմբի կամ անվանացանկի արտադրության նկատմամբ, որոնք ներառում են նույնանման ապրանքը և որոնց վերաբերյալ առկա են անհրաժեշտ տվյալներ:

68. Սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության փաստը հաստատվում է գործին առնչվող և իրավասու մարմնի տրամադրության տակ գտնվող բոլոր ապացույցների և տվյալների վերլուծության հիման վրա: Իրավասու մարմինը վերլուծում է նաև Միության մաքսային տարածք նույնանման ապրանքի ներմուծման, մյուս անդամ պետություններից մատակարարումների դինամիկան և ազդեցությունը: Ընդ որում, սուբսիդավորվող ապրանքի ներմուծման ծավալը և ազգային տնտեսության ճյուղի վրա այդ ներմուծման ազդեցությունը վերլուծելու արդյունքում պարզված գործոններից ո՛չ մեկը և ո՛չ էլ մի քանիսը չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայության փաստը հաստատելու համար: Իրավասու մարմինը, սուբսիդավորվող ապրանքի ներմուծումից բացի, վերլուծում է նաև այլ հայտնի գործոններ, որոնց հետևանքով միևնույն ժամանակահատվածում ազգային տնտեսության ճյուղին վնաս է հասցվել: Այդ վնասն իրավասու մարմինը չի կարող որակել որպես սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին հասցված վնաս:

69. Սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի հաստատման դեպքում իրավասու մարմինը հաշվի է առնում առկա բոլոր գործոնները, այդ թվում՝ ստորև նշվածները՝

1) սուբսիդիայի կամ սուբսիդիաների բնույթը, չափը և առևտրի վրա դրանց հնարավոր ազդեցությունը.

2) սուբսիդավորվող ապրանքի ներմուծման աճի տեմպերը, որոնք վկայում են այդ ներմուծման հետագա աճի իրական հնարավորության մասին.

3) սուբսիդիա տրամադրած անդամ պետությունում սուբսիդավորվող ապրանքի արտադրողների համար բավարար հնարավորությունների առկայությունը կամ դրանց ընդլայնման ակնհայտ անխուսափելիությունը.

4) սուբսիդավորվող ապրանքի գների մակարդակը, եթե գների այդպիսի մակարդակը կարող է հանգեցնել նույնանման ապրանքի գնի նվազմանը կամ զսպմանն այն անդամ պետության

շուկայում, որի իրավասու մարմինն անցկացնում է ուսումնասիրությունը, ինչպես նաև սուբսիդավորվող ապրանքի պահանջարկի հետագա աճին.

5) սուբսիդավորվող ապրանքի՝ արտադրողի մոտ եղած պաշարները:

70. Ընդ որում, սույն Արձանագրության 69-րդ կետում նշված գործոններից ո՛չ մեկը և ո՛չ էլ մի քանիսը չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ սուբսիդավորվող ապրանքի ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգը հաստատելու համար:

71. Ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելու վտանգի առկայության մասին որոշում ընդունվում է այն դեպքում, երբ սույն Արձանագրության 69-րդ կետում նշված գործոնների վերլուծության արդյունքներով անցկացվող ուսումնասիրության ընթացքում իրավասու մարմինը հանգել է այն եզրակացության, որ սուբսիդավորվող ապրանքի ներմուծումը շարունակելը և այդ ներմուծման հետևանքով ազգային տնտեսության ճյուղին նյութական վնաս հասցնելն անխուսափելի են՝ փոխհատուցման միջոց չձեռնարկելու դեպքում:

72. Ուսումնասիրության անցկացման ընթացքում շահագրգիռ անձինք են համարվում՝

1) նույնանման ապրանքի ազգային արտադրողը, ազգային արտադրողների միավորումը, որի մասնակիցների մեծամասնությունը նույնանման ապրանքի արտադրող է.

2) ուսումնասիրության առարկա համարվող սուբսիդավորվող ապրանքի արտադրողը, նման սուբսիդավորվող ապրանքի արտադրողների միավորումը, որի մասնակիցների մեծամասնությունը տվյալ ապրանքի արտադրող է.

3) սուբսիդավորող անդամ պետությունը և (կամ) սուբսիդավորող անդամ պետության լիազոր մարմինը.

4) սպառողների հասարակական միավորումները (եթե ուսումնասիրության առարկա համարվող սուբսիդավորվող ապրանքը հիմնականում սպառվում է ֆիզիկական անձանց կողմից).

5) ուսումնասիրության առարկա համարվող սուբսիդավորվող ապրանքի սպառողները (եթե նրանք տվյալ ապրանքն օգտագործում են արտադրանքի արտադրության մեջ) և այդ սպառողների միավորումները:

73. Սույն Արձանագրության 1-ին կետում նշված շահագրգիռ անձինք ուսումնասիրության ընթացքում գործում են ինքնուրույն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով, որոնք ունեն պատշաճ կերպով ձևակերպված լիազորություններ՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի իրավասու մարմինն անցկացնում է ուսումնասիրությունը:

Եթե ուսումնասիրության ընթացքում շահագրգիռ անձը գործում է լիազոր ներկայացուցչի միջոցով, ապա իրավասու մարմինն ուսումնասիրության առարկայի վերաբերյալ բոլոր տեղեկությունները փոխանցում է շահագրգիռ անձին միայն այդ ներկայացուցչի միջոցով:

74. Շահագրգիռ անձի կողմից իրավասու մարմին ներկայացված տեղեկությունները դիտվում են որպես գաղտնի այն դեպքում, երբ տվյալ անձը ներկայացնում է այնպիսի հիմնավորումներ, որոնք վկայում են այն մասին, որ նման տեղեկությունների բացահայտման հետևանքով մրցակցության պայմաններում առավելություն կտրվի երրորդ անձին, կամ դա կհանգեցնի բացասական հետևանքների տվյալ տեղեկությունները տրամադրած անձի կամ այն անձի համար, որն ստացել է այդ տեղեկությունները: աղտնի տեղեկությունները չպետք է հրապարակվեն՝ առանց դրանք ներկայացրած շահագրգիռ անձի թույլտվության՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Իրավասու մարմինը գաղտնի տեղեկություններ ներկայացրած շահագրգիռ անձից իրավունք ունի պահանջելու, որ վերջինս ներկայացնի այդ տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը: Ոչ գաղտնի տարբերակը պետք է ներառի տվյալներ, որոնք բավարար են ներկայացված գաղտնի տեղեկությունների էությունը հասկանալու համար: Այն դեպքերում, երբ նշված պահանջին ի պատասխան շահագրգիռ անձը հայտարարում է, որ գաղտնի տեղեկություններն այդ տարբերակով չեն կարող տրամադրվել, տվյալ անձը պետք է ներկայացնի համապատասխան հիմնավորումներ:

Եթե իրավասու մարմինը հաստատի, որ շահագրգիռ անձի կողմից ներկայացված հիմնավորումներով հնարավոր չէ ներկայացված տեղեկությունները որակել որպես գաղտնի, կամ եթե գաղտնի տեղեկությունների ոչ գաղտնի տարբերակը չներկայացրած շահագրգիռ անձը չի ներկայացնում համապատասխան հիմնավորում կամ ներկայացնում է այնպիսի տվյալներ,

որոնք չեն դիտվում որպես հիմնավորում, ապա իրավասու մարմինը կարող է հաշվի չառնել այդ տեղեկությունները:

75. Իրավասու մարմինը գաղտնի տեղեկությունների հրապարակման համար կրում է պատասխանատվություն՝ նախատեսված իր անդամ պետության օրենսդրությամբ:

VI. Ընդհանուր բացառությունները

76. Սույն Արձանագրության մեջ ոչինչ չպետք է մեկնաբանվի՝

1) որպես որևէ անդամ պետությանը ներկայացվող պահանջ այնպիսի տեղեկություններ տրամադրելու մասին, որոնց բացահայտումը այն համարում է հակասող իր անվտանգության էական շահերին.

2) որպես խոչընդոտ ցանկացած անդամ պետության կողմից այնպիսի գործողություններ ձեռնարկելու համար, որոնք այն անհրաժեշտ կհամարի իր անվտանգության էական շահերը պաշտպանելու համար.

գործողություններ՝ կապված ճեղքվող նյութերի կամ այն նյութերի հետ, որոնցից դրանք արտադրվում են.

գործողություններ՝ կապված զենքի, զինամթերքի և ռազմամթերքի, ինչպես նաև այլ ապրանքների և նյութերի մշակման, արտադրության ու առևտրի հետ, որոնք իրականացվում են ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ զինված ուժերին մատակարարելու նպատակով.

գործողություններ, որոնք ձեռնարկվում են պատերազմի ժամանակ կամ միջազգային հարաբերությունների շրջանակներում առաջացած այլ արտակարգ իրավիճակներում.

3) որպես խոչընդոտ ցանկացած անդամ պետության կողմից ամբողջ աշխարհում խաղաղության և միջազգային անվտանգության պահպանման նպատակով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն իր պարտավորությունների կատարմանն ուղղված ցանկացած գործողություն ձեռնարկելու համար:

77. Սույն Արձանագրության դրույթները չեն խոչընդոտում անդամ պետություններին կիրառելու առևտուրը խաթարող հատուկ սուբսիդիաներ, եթե այդ սուբսիդիաները սահմանվում են բացառիկ հանգամանքներում (պայմանով, որ այդ միջոցներն ուղղված չլինեն մյուս անդամ պետությունների տարածքից ապրանքների ներմուծման սահմանափակմանը, և այդ միջոցները չկրեն խտրական բնույթ), և եթե դրանք սահմանելը պայմանավորված է հետևյալը պաշտպանելու անհրաժեշտությամբ՝

1) հասարակական բարոյականությունը, հասարակական կարգուկանոնը և պետական անվտանգությունը.

2) մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքը կամ առողջությունը.

3) գեղարվեստական, պատմական կամ հնագիտական արժեք ունեցող ազգային հարստությունը.

4) մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները.

5) սպառվող բնական պաշարները (եթե նման միջոցներն իրականացվում են ներքին արտադրությունը կամ սպառումը սահմանափակելու հետ միաժամանակ):

VII. Հատուկ սուբսիդիաներ, որոնց տրամադրումը չի համարվում հիմք փոխհատուցման միջոցներ ընդունելու համար

78. Փոխհատուցման միջոցների ընդունման համար հիմք չի համարվում այնպիսի հատուկ սուբսիդիայի տրամադրումը, ինչպիսին է տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների կողմից տնտեսավարող սուբյեկտների հետ պայմանագրային հիմունքներով իրականացվող հետազոտական գործունեության համար օգնությունը՝ պայմանով, որ այդ օգնությունը ծածկի արդյունաբերական հետազոտությունների արժեքի 75%-ից ոչ ավելին կամ նախամրցակցային փուլում մշակումների արժեքի 50%-ից ոչ ավելին, և որ այն տրամադրվի բացառապես հետևյալ ծախսերը ծածկելու համար՝

1) անձնակազմի հետ կապված ծախսերը (հետազոտողներ, տեխնիկական աշխատողներ և այլ օժանդակ աշխատողներ, որոնք զբաղվում են բացառապես հետազոտական գործունեությամբ).

2) այն գործիքների, սարքավորումների, հողի և կառույցների հետ կապված ծախսերը, որոնք բացառապես և մշտապես օգտագործվում են հետազոտական գործունեության համար (բացառությամբ առևտրային հիմունքներով վաճառքի).

3) այն խորհրդատվական և համարժեք ծառայությունների հետ կապված ծախսերը, որոնք օգտագործվում են բացառապես հետազոտական գործունեության համար (ներառյալ գիտական հետազոտությունների արդյունքների, տեխնիկական գիտելիքների, արտոնագրերի և այլնի գնում).

4) հավելյալ վերադիր ծախսերը, որոնք կատարվել են ուղղակիորեն հետազոտական գործունեության հետևանքով.

5) մյուս ընթացիկ ծախսերը (նյութերի, ապահովման և այլնի հետ կապված), որոնք կատարվել են ուղղակիորեն հետազոտական գործունեության արդյունքում:

79. Սույն բաժնի նպատակներով՝ «արդյունաբերական հետազոտություններ» եզրույթը նշանակում է ծրագրված հետազոտություններ կամ կարևորագույն հետազոտություններ՝ ուղղված նոր գիտելիքների բացահայտմանն այն նկատառումով, որ այդ գիտելիքները կարող են օգտակար լինել նոր ապրանքներ, տեխնոլոգիական գործընթացներ կամ ծառայություններ մշակելու համար, ինչպես նաև գոյություն ունեցող ապրանքները, գործընթացները կամ ծառայությունները զգալիորեն բարելավելու համար:

«Նախամրցակցային փուլում մշակումներ» եզրույթը նշանակում է արդյունաբերական հետազոտությունների արդյունքների հիման վրա վաճառքի կամ օգտագործման համար նախատեսված նոր, ձևափոխված կամ բարելավված ապրանքների, տեխնոլոգիական գործընթացների կամ ծառայությունների նախագծերի, գծագրերի կամ մանրակերտների կազմումը (այդ թվում՝ առևտրային նպատակներով օգտագործման համար ոչ պիտանի առաջին նախատիպի ստեղծումը): Նշված մշակումները կարող են ներառել նաև այլընտրանքային ապրանքների, եղանակների կամ ծառայությունների կոնցեպցիայի մշակումը և դիզայնը, ինչպես նաև նախնական ցուցադրական կամ փորձնական ծրագրերը՝ պայմանով, որ դրանք չեն կարող հարմարեցվել կամ օգտագործվել արդյունաբերական կիրառման կամ առևտրային շահագործման նպատակներով: Նշված մշակումները չեն վերաբերում գոյություն ունեցող ապրանքների, արտադրական գծերի, մշակման գործընթացների, ծառայությունների և մյուս սովորական գործողությունների ընթացիկ և պարբերական փոփոխություններին, նույնիսկ եթե այդ փոփոխությունները հանգեցնում են բարելավումների:

80. Սույն Արձանագրության 78-րդ կետում նշված՝ օգնության թույլատրելի մակարդակը, որը փոխհատուցման միջոցներ ընդունելու հիմք չի ծառայում, սահմանվում է համապատասխան այն ծախսերի ընդհանուր գումարի համար, որոնք կատարվել են որոշակի նախագծի իրականացման ժամանակահատվածում:

Արդյունաբերական հետազոտություններն ու նախամրցակցային փուլի մշակումները միավորող ծրագրերի իրականացման դեպքում օգնության թույլատրելի մակարդակը, որը հիմք չի ծառայում միջոցներ ընդունելու համար, չպետք է լինի այդ երկու կատեգորիաների համար թույլատրելի մակարդակների թվաբանական միջինից ավելի բարձր, որը հաշվարկվում է՝ հաշվի առնելով սույն ենթակետի սույն Արձանագրության 78-րդ կետում նշված համապատասխան բոլոր ծախսերը:

81. Սույն Արձանագրության դրույթները չեն կիրառվում հիմնարար գիտական այն հետազոտությունների նկատմամբ, որոնք անկախ կերպով իրականացվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ գիտական հաստատությունների կողմից: «Հիմնարար հետազոտություններ» եզրույթը նշանակում է ընդհանուր գիտական և տեխնիկական այն գիտելիքների ընդլայնումը, որոնք կապված չեն արդյունաբերական կամ առևտրային նպատակների հետ:

82. Անդամ պետության տարածքում գտնվող ոչ բարեկեցիկ շրջաններին, տարածքային զարգացման ընդհանուր շրջանակներում տրամադրվող օգնությունը համարվում է ոչ հատուկ (հաշվի առնելով սույն Արձանագրության II բաժնի դրույթները) և բաշխվում է համապատասխան շրջանների միջև՝ պայմանով, որ՝

1) ոչ բարեկեցիկ յուրաքանչյուր շրջան պետք է լինի հստակորեն սահմանազատված պարփակ վարչական և տնտեսական գոտի.

2) այդ շրջանը դիտարկվում է որպես ոչ բարեկեցիկ՝ այնպիսի չեզոք և օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա, որոնք վկայում են այն մասին, որ շրջանի դժվարություններն առաջանում են ոչ միայն ժամանակավոր հանգամանքների պատճառով (այդ չափորոշիչները պետք է հստակորեն սահմանված լինեն օրենքներում, կանոններում կամ այլ պաշտոնական փաստաթղթերում այնպես, որ դրանք հնարավոր լինի ստուգել).

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված չափորոշիչները ներառում են տնտեսական զարգացման գնահատումը, որը հիմնված է եռամյա ժամանակահատվածի համար հաշվարկված հետևյալ ցուցանիշներից առնվազն մեկի վրա (այդպիսի հաշվարկը կարող է լինել կոմպլեքսային, և դրանում կարող են հաշվի առնվել այլ գործոններ)՝

բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտը կամ տնային տնտեսության հաշվով եկամուտը կամ բնակչության մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի մեծությունը, որը չպետք է գերազանցի համապատասխան տարածքի համար միջին ցուցանիշի 85%-ը,

գործազրկության մակարդակը, որը պետք է կազմի տվյալ տարածքի համար միջին ցուցանիշի առնվազն 110%-ը:

83. «Տարածքային զարգացման ընդհանուր շրջանակներ» նշանակում է, որ շրջաններում սուբսիդավորման ծրագրերը կազմում են տարածքային զարգացման՝ ներքին հետևողական և համընդհանուր կիրառելի քաղաքականության մի մաս, և որ շրջանների զարգացման համար սուբսիդիաները չեն տրամադրվում առանձին աշխարհագրական այն կետերին, որոնք շրջանի զարգացման վրա որևէ ազդեցություն չեն ունենում կամ գրեթե չեն ունենում:

«Չեզոք և օբյեկտիվ չափորոշիչներ» նշանակում է այնպիսի չափորոշիչներ, որոնց միջոցով որոշակի շրջանների չեն տրվում ավելի մեծ արտոնություններ, քան անհրաժեշտ է տարածքային զարգացման քաղաքականության շրջանակներում շրջանների միջև տարբերությունները վերացնելու կամ նվազեցնելու համար: Այս առումով սուբսիդավորման տարածքային ծրագրերում ներառվում են օգնության այն առավելագույն գումարները, որոնք կարող են տրամադրվել սուբսիդավորվող յուրաքանչյուր նախագծի համար: Այդ առավելագույն գումարները տարբերակվում են՝ ելնելով այն շրջանների զարգացման մակարդակից, որոնց ցուցաբերվում է օգնությունը, և արտահայտվում են ներդրումների նպատակով կատարվող ծախսերի կամ աշխատատեղերի ստեղծման համար կատարվող ծախսերի միջոցով: Այդ գումարների սահմաններում օգնությունը բաշխվում է բավականաչափ ընդլայնված կերպով՝ սուբսիդիաների արտոնյալ օգտագործումից կամ, սույն Արձանագրության II բաժնի համաձայն, որոշ ձեռնարկություններին անհամաչափորեն մեծ գումարներ տրամադրելուց խուսափելու համար:

84. Փոխհատուցման միջոցների ընդունման համար հիմք չի համարվում նաև աջակցությունը՝ գոյություն ունեցող արտադրական հզորությունները («գոյություն ունեցող արտադրական հզորություններ» եզրույթը նշանակում է այն արտադրական հզորությունները, որոնք շահագործման մեջ են գտնվել առնվազն երկու տարի՝ նախքան շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող նոր պահանջներ սահմանելը) շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող՝ օրենսդրությամբ և (կամ) նորմատիվ ակտերով նախատեսված այն նոր պահանջներին համապատասխանեցման հարցում, որոնք տնտեսավարող սուբյեկտների համար ենթադրում են լրացուցիչ սահմանափակումներ և ֆինանսական բեռի մեծացում՝ պայմանով, որ այդ աջակցությունը՝

1) լինի մեկանգամյա, չկրկնվող միջոց.

2) կազմի համապատասխանեցման հետ կապված ծախսերի 20%-ից ոչ ավելին.

3) չծածկի սուբսիդավորվող սարքավորման փոխարինման և շահագործման հետ կապված այն ծախսերը, որոնք ամբողջությամբ պետք է կատարեն ձեռնարկությունները.

4) անմիջականորեն և համամասնորեն կապված լինի տնտեսավարող սուբյեկտի կողմից աղտոտման ծրագրվող կրճատման հետ և չծածկի արտադրական ծախսերի այն խնայողությունը, որին կարելի է հասնել.

5) հասանելի լինի բոլոր այն տնտեսավարող սուբյեկտների համար, որոնք կարող են անցում կատարել նոր սարքավորումների և (կամ) արտադրական գործընթացների:

VIII. Փոխհատուցման ու պատասխան միջոցների սահմանումը և կիրառումը

85. Մեկ անդամ պետության իրավասու մարմինն իրավունք ունի իրականացնելու ուսումնասիրություն սույն Արձանագրության դրույթներին մյուս անդամ պետությունների տարածքում տրամադրվող սուբսիդիաների համապատասխանության վերաբերյալ կամ սույն Արձանագրության 11-րդ կետում նշված միջոցները սույն Արձանագրության V բաժնով սահմանված կարգով մյուս անդամ պետությունների կողմից կիրառելու հարցի վերաբերյալ: Ուսումնասիրությունը նախաձեռնած իրավասու մարմինը անդամ պետություններին տեղեկացնում է ուսումնասիրությունն սկսելու մասին: Անդամ պետությունների իրավասու մարմիններն իրավունք ունեն պահանջելու ուսումնուսիրության ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները:

86. Եթե իրականացված ուսումնասիրության արդյունքում մեկ անդամ պետության իրավասու մարմինը պարզում է, որ մյուս անդամ պետության սուբսիդավորող մարմինը տրամադրում է հատուկ սուբսիդիա, և այդ հատուկ սուբսիդիան վնաս է հասցնում այն անդամ պետության ազգային տնտեսության ճյուղին, որի իրավասու մարմինը իրականացնում է ուսումնասիրությունը, ապա այդ իրավասու մարմինը սուբսիդավորող անդամ պետությանը կարող է փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում փոխանցել: Նշված դիմումը պետք է պարունակի ապացույցներ սուբսիդիաների՝ սույն Արձանագրության դրույթներին անհամապատասխանության մասին:

87. Եթե ըստ սույն Արձանագրության 6-րդ կետի համաձայն իրականացված քննության արդյունքների՝ Հանձնաժողովի կողմից հաստատվում է որևէ անդամ պետության ազգային տնտեսության ճյուղին հասցված վնասի առկայությունը, ապա այդ անդամ պետության իրավասու մարմինը սուբսիդավորող անդամ պետությանը կարող է փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմում փոխանցել: Նշված դիմումը պետք է պարունակի ապացույցներ սուբսիդիայի՝ Պայմանագրի 93-րդ հոդվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն անթույլատրելիության մասին:

Անդամ պետությունները փոխհատուցման միջոցներ չեն կիրառում սույն Արձանագրության 6-րդ կետի համաձայն Հանձնաժողովի կողմից համաձայնեցված սուբսիդիաների դեպքում:

Սույն կետի դրույթների կիրառումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անցումային դրույթները:

88. Փոխհատուցման միջոց կիրառելու մասին դիմումը կարող է բավարարվել կամավոր հիմունքներով այդ դիմումն ստացած անդամ պետության կողմից երկու ամիսը չգերազանցող ժամանակահատվածում կամ վեճերի կարգավորման արդյունքների հիման վրա:

89. Այն անդամ պետությունը, որը դիմում է ստացել փոխհատուցման այնպիսի միջոց կիրառելու մասին, որի իրավաչափությունն այդ անդամ պետությունն ընդունել է կամավոր հիմունքներով կամ սույն Պայմանագրի 93-րդ հոդվածի դրույթների համաձայն վեճերի կարգավորման արդյունքների հիման վրա, 30 օրացուցային օրերի ընթացքում սահմանում է փոխհատուցման միջոց՝ դիմումի համաձայն:

90. Սույն Արձանագրության 89-րդ կետի համաձայն սահմանվող փոխհատուցման միջոցը գոյանում է փոխհատուցման միջոց կիրառելու վերաբերյալ դիմումի մեջ նշված՝ տրամադրված սուբսիդիայի գումարից և այդ դրամական միջոցները (գույքը) օգտագործելու ամբողջ ժամանակահատվածի համար սուբսիդիայի գումարին հավելագրված տոկոսից:

Սուբսիդիայի գումարը հաշվարկվում է սույն Արձանագրության համաձայն:

Տոկոսադրույքը հավասար է սուբսիդիան տրամադրելու պահին գործող և սուբսիդավորող անդամ պետության Կենտրոնական (Ազգային) բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման դրույքի մեկուկես չափին: Ընդ որում, տոկոսադրույքը հաշվարկվում է սուբսիդիան տրամադրելու օրվանից մինչև փոխհատուցման միջոցի կատարման օրն ընկած ամբողջ ժամանակահատվածի նկատմամբ բարդ տոկոս կիրառելու միջոցով:

Բարդ տոկոս նշանակում է տոկոս, որը յուրաքանչյուր տարի հավելագրվում է գումարին և նախորդ տարվա ընթացքում դրան հավելագրված տոկոսներին:

91. Փոխհատուցման միջոցը համարվում է կատարված այն բանից հետո, երբ սուբսիդիայի գումարը, հաշվի առնելով համապատասխան տոկոսները, գանձվել է սուբսիդիա ստացողից և փոխանցվել սուբսիդավորող անդամ պետության բյուջե:

92. Փոխհատուցման միջոցը չի համարվում կատարված, եթե այն գանձվում է սույն Արձանագրության 91-րդ կետում նշված աղբյուրներից բացի այլ աղբյուրներից:

Դիմումը ներկայացրած անդամ պետության և պատասխանող անդամ պետության փոխհամաձայնությամբ փոխհատուցման միջոցի գանձման աղբյուրները կարող են փոփոխվել՝ բացառապես սուբսիդիան ստացողի կողմից փոխհատուցման միջոցը կազմող միջոցների վճարումից խուսափելը կանխելու համար:

93. Փոխհատուցման միջոցի կատարումը բավարար հիմք է՝ համարելու, որ փոխհատուցման միջոց կիրառելու մասին բավարարում ստացած դիմումին ընթացք է տրվել: Ընդ որում, անդամ պետությունը նման դիմումին ընթացք է տալիս այնպիսի ժամկետում, որը չի գերազանցում նշված դիմումը բավարարելու օրվանից հետո մեկ օրացուցային տարին:

94. Եթե փոխհատուցման միջոց կիրառելու մասին բավարարում ստացած դիմումին անդամ պետությունն ընթացք չի տալիս սահմանված ժամկետում, դիմում ներկայացրած անդամ պետությունն իրավասու է կիրառելու պատասխան այնպիսի միջոցներ, որոնք պետք է մոտավորապես համաչափ լինեն փոխհատուցման միջոցին:

Սույն Պայմանագրի նպատակներով «պատասխան միջոցներ» նշանակում է պատասխան միջոց սահմանած անդամ պետության կողմից այն անդամ պետության նկատմամբ, որի դեմ սահմանվել է պատասխան միջոցը, նրանց միջև գործող առևտրատնտեսական բնույթի պայմանագրերից բխող իր պարտավորությունների կատարման ժամանակավոր դադարեցում (բացառությամբ նավթային և գազային ոլորտներին առնչվող պայմանագրերի):

Պատասխան միջոցները կրում են ժամանակավոր բնույթ և կիրառվում են դիմումը ներկայացրած անդամ պետության կողմից միայն այնքան ժամանակ, քանի դեռ սույն Պայմանագրի դրույթները խախտող միջոցը չեղյալ չի հայտարարվել կամ փոփոխվել այնպես, որ համապատասխանի Պայմանագրի դրույթներին, կամ քանի դեռ անդամ պետություններն այլ բանի շուրջ պայմանավորվել:

IX. Ծանուցումները

95. Անդամ պետությունները (անդամ պետությունների լիազոր մարմինները) յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 1-ից ոչ ուշ հերթական տարվա ընթացքում դաշնային (հանրապետական) և շրջանային (մունիցիպալ, տեղական) մակարդակներով տրամադրման համար նախատեսվող բոլոր սուբսիդիաների մասին ծանուցում են միմյանց և Հանձնաժողովին:

Անդամ պետությունները տրամադրվող սուբսիդիաների վերաբերյալ տեղեկությունները չեն համարում գաղտնի՝ բացառությամբ սույն Արձանագրության 76-րդ կետով նախատեսված դեպքերի:

96. Սույն Արձանագրության 95-րդ կետի համաձայն ծանուցումների համար տեղեկությունների աղբյուր են համարվում դաշնային (հանրապետական) բյուջեների, ինչպես նաև վարչատարածքային միավորների բյուջեների նախագծերի ծախսային մասերը:

97. Անդամ պետությունները (անդամ պետությունների իրավասու մարմինները) եռամսյակը մեկ, սակայն ոչ ուշ, քան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 30-ը, միմյանց և Հանձնաժողով են ներկայացնում սահմանված ձևով կազմված ծանուցումները հաշվետու եռամսյակի ընթացքում դաշնային (հանրապետական) և շրջանային (մունիցիպալ, տեղական) մակարդակներով տրամադրված սուբսիդիաների մասին:

Սույն կետի դրույթների կիրառումը իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անցումային դրույթները:

98. Անդամ պետությունները (անդամ պետությունների իրավասու մարմինները) յուրաքանչյուր տարի, սակայն ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ը, միմյանց և Հանձնաժողով են ներկայացնում սահմանված ձևով կազմված ծանուցումները հաշվետու տարվա ընթացքում դաշնային (հանրապետական) և շրջանային (մունիցիպալ, տեղական) մակարդակներով տրամադրված սուբսիդիաների մասին: Նշված ծանուցման մեջ պետք է ներառվեն բավարար տեղեկություններ, որպեսզի մյուս անդամ պետության լիազոր մարմինը և Հանձնաժողովը կարողանան գնահատել տրամադրվող սուբսիդիաների գումարն ու դրանց համապատասխանությունը սույն Արձանագրության դրույթներին:

99. Անդամ պետությունների (անդամ պետությունների լիազոր մարմինների)՝ սուբսիդիաների վերաբերյալ սույն բաժնով նախատեսված ծանուցումների ձևերը, ինչպես նաև դրանք լրացնելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ անդամ պետությունների հետ համաձայնեցմամբ:

100. Սուբսիդիաների վերաբերյալ ծանուցումների մեջ նշվում են հետևյալ տեղեկությունները՝

1) սուբսիդավորման ծրագրի անվանումը (դրա առկայության դեպքում) սուբսիդիայի համառոտ նկարագիրը կամ դրա մասին նշում (օրինակ՝ «Փոքր ձեռնարկատիրության զարգացում»).

2) հաշվետու ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է ծանուցումը.

3) սուբսիդիայի հիմնական նշանակությունը և (կամ) նպատակը (սուբսիդիայի տրամադրման նպատակին վերաբերող տվյալները, որպես կանոն, ներառված են այն նորմատիվ իրավական ակտի մեջ, որի համաձայն տրամադրվում է սուբսիդիան).

4) սուբսիդիա տրամադրելու հիմքը (այն նորմատիվ իրավական ակտի անվանումը, որի համաձայն տրամադրվում է սուբսիդիան, ինչպես նաև տվյալ ակտի համառոտ նկարագիրը).

5) սուբսիդիայի ձևը (դրամաշնորհ, փոխառություն, հարկային արտոնություն և այլն).

6) այն սուբյեկտը (արտադրողը, արտահանողը կամ այլ անձ), որին տրամադրվում է սուբսիդիան, և սուբսիդիայի տրամադրման կարգը (թե ինչ միջոցների օգնությամբ է տրամադրվում սուբսիդիան՝ ապրանքի միավորի համար՝ սահմանված կամ փոփոխվող գումարով (երկրորդ տարբերակի դեպքում անհրաժեշտ է հստակեցնել գումարը սահմանելու մեխանիզմը)), ինչպես նաև սուբսիդիայի տրամադրման մեխանիզմն ու պայմանները.

7) սուբսիդիայի չափը (սուբսիդիայի համար հատկացված տարեկան կամ ընդհանուր գումարը՝ արտադրանքի միավորի համար).

8) սուբսիդիայի գործողության տևողությունը և (կամ) սուբսիդիայի համար կիրառելի ժամանակային ցանկացած այլ սահմանափակում՝ (ներառյալ սուբսիդիան տրամադրելու (տրամադրումը դադարեցնելու) ամսաթիվը).

9) տվյալներ առևտրի վրա ազդեցության վերաբերյալ (վիճակագրական տվյալներ, որոնք թույլ են տալիս գնահատել սուբսիդիայի ազդեցությունը առևտրի վրա:

101. Հնարավորության դեպքում անհրաժեշտ է, որ սույն Արձանագրության 100-րդ կետում նշված տեղեկությունները ներառեն վիճակագրական տվյալներ սուբսիդավորվող ապրանքների կամ ոլորտների արտադրության, սպառման, ներմուծման և արտահանման մասին՝

1) վերջին երեք տարիների համար, որոնց վերաբերյալ առկա են վիճակագրական տվյալներ,

2) սուբսիդիայի սահմանմանը կամ սուբսիդիայի վերջին կարևոր փոփոխությանը նախորդող տարվա համար:

Հավելված
«Արդյունաբերական սուբսիդիաների տրամադրման միասնական կանոնների մասին»
արձանագրության

Միջոցների ցանկ, որոնց նկատմամբ «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» արձանագրության դրույթները չեն կիրառվում

Միջոցի նկարագիրը	Անցումային ժամանակահատվածը՝ միջոցի առնչությամբ
I. Բելառուսի Հանրապետություն	
«Ուղեւորատար մեքենաների արտադրության զարգացման համար կիրառվող միջոցների մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2009 թվականի ապրիլի 4-ի թիվ 175 հրամանագրի և «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Մաքսային միության միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» Հանձնաժողովի 2009 թվականի	մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը, եթե այլ բան նախատեսված չլինի «Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Բելառուսի Հանրապետության միանալու մասին» արձանագրությամբ

Միջոցի նկարագիրը	Անցումային ժամանակահատվածը՝ միջոցի առնչությամբ
նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշման համաձայն կնքված ներդրումային համաձայնագրերի առնչությամբ կիրառվող միջոցները*	
II. Ղազախստանի Հանրապետություն	
1. Արտահանմանն ուղղված արտադրության համար բանկային վարկերի տոկոսադրույքների դիմաց սուբսիդիայի տրամադրումը՝ «2020 թվականի ձեռնարկատիրության ճանապարհային քարտեզ» ծրագիրը հաստատելու մասին» Ղազախստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 301 որոշման համաձայն	մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը՝ այն վարկերի համար, որոնք տրամադրվել են վարկային կազմակերպությունների կողմից մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը
2. Բավարար վերամշակման չափանիշների համաձայն ղազախական ճանաչված ապրանքների ազատումը մաքսատուրքերից և հարկերից՝ ազատ պահեստից Մաքսային միության տարածքի մնացած մաս արտահանելիս՝ «Բյուջե մուտքագրվող հարկերի և պարտադիր վճարների մասին» (Հարկային օրենսգիրք) Ղազախստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 99-I օրենսգրքին, «Ապրանքի ծագման երկիրը որոշելու, ապրանքի ծագման վերաբերյալ փորձաքննության ակտ կազմելու ու տրամադրելու և ապրանքի ծագման մասին հավաստագիր ձեւակերպելու, հաստատելու և տրամադրելու կանոնները հաստատելու մասին» Ղազախստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1647 որոշմանը, «Ազատ մաքսային պահեստների և ազատ մաքսային պահեստի մաքսային ընթացակարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին համապատասխան	մինչև 2017 թվականի հունվարի 1-ը
3. Բավարար վերամշակման չափանիշների համաձայն ղազախական ճանաչված ապրանքների ազատումը մաքսատուրքերից և հարկերից՝ հատուկ տնտեսական գոտիների տարածքից Մաքսային միության մաքսային տարածք արտահանելիս՝ «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիներին և ազատ մաքսային գոտու մաքսային ընթացակարգին առնչվող հարցերի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին, «Ղազախստանի Հանրապետությունում հատուկ տնտեսական գոտիների մասին» Ղազախստանի Հանրապետության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 469-IV օրենքին և «Ապրանքի ծագման երկիրը որոշելու, ապրանքի ծագման վերաբերյալ	մինչև 2017 թվականի հունվարի 1-ը

Միջոցի նկարագիրը	Անցումային ժամանակահատվածը՝ միջոցի առնչությամբ
փորձաքննության ակտ կազմելու ու տրամադրելու և ապրանքի ծագման մասին հավաստագիր ձեւակերպելու, հաստատելու և տրամադրելու կանոնները հաստատելու մասին» Ղազախստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1647 որոշմանը համապատասխան	
4. ««Շարժիչային տրանսպորտային միջոցների արդյունաբերական հավաքման մասին» Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձանց հետ կնքված համաձայնագրի կնքմանը, պայմաններին և տիպային ձեւին առնչվող որոշ հարցերի վերաբերյալ» Ղազախստանի Հանրապետության ինդուստրիայի և նոր տեխնոլոգիաների նախարարության 2010 թվականի հունիսի 11-ի թիվ 113 որոշման եւ «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Մաքսային միության միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշման համաձայն կնքված ներդրումային համաձայնագրերի առնչությամբ կիրառվող միջոցները*	մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը, եթե այլ բան նախատեսված չլինի «Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Ղազախստանի Հանրապետության միանալու մասին» արձանագրությամբ
5. Ղազախստանի Հանրապետության կառավարության և ընդերքօգտագործողի միջև «Ընդերքի եւ ընդերքի օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության 2010 թվականի հունիսի 24-ի թիվ 291-IV օրենքի համաձայն կնքված ընդերքի օգտագործման պայմանագրերում նշված տեղային պարունակությունը	մինչև 2023 թվականի հունվարի 1-ը, եթե այլ բան նախատեսված չլինի «Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Ղազախստանի Հանրապետության միանալու մասին» արձանագրությամբ
6. Տեղային պարունակությունն այն գնումների դեպքում, որոնք իրականացվում են «Սամրուկ-Կազին» Ազգային բարեկեցության հիմնադրամի (ԱԲՀ) և այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնցում քվեարկող բաժնետոմսերի (մասնաբաժնի) 50%-ը և ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում է «Սամրուկ-Կազին» ԱԲՀ-ն, ինչպես նաև այն ընկերություններում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են պետությանը (պետության մասնաբաժինը, որոնցում կազմում է 50 % և ավելի)՝ «Ազգային բարեկեցության հիմնադրամի մասին» Ղազախստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 1-ի թիվ 550-IV օրենքի և «Այն ազգային կառավարող հոլդինգի, ազգային հոլդինգների,	մինչև 2016 թվականի հունվարի 1-ը, եթե այլ բան նախատեսված չլինի «Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Ղազախստանի Հանրապետության միանալու մասին» արձանագրությամբ

Միջոցի նկարագիրը	Անցումային ժամանակահատվածը՝ միջոցի առնչությամբ
ազգային ընկերությունների և կազմակերպությունների կողմից իրականացվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնման տիպային կանոնները հաստատելու մասին, որոնց բաժնետոմսերի (մասնաբաժնի) հիսուն տոկոսը և ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են ազգային կառավարող հոլդինգին, ազգային հոլդինգին, ազգային ընկերությանը» Ղազախստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի մայիսի 28-ի թիվ 787 որոշման համաձայն	
III. Ռուսաստանի Դաշնություն	
1. Մինչև 2011 թվականի փետրվարի 28-ը կնքված ներդրումային համաձայնագրերի առնչությամբ կիրառվող միջոցները, որոնք ներառում են «Հայրենական ավտոմոբիլային արդյունաբերության զարգացման համար ներդրումներ ներգրավելու նպատակով լրացուցիչ միջոցների մասին» Ռուսաստանի Դաշնության նախագահի 1998 թվականի փետրվարի 5-ի թիվ 135 հրամանագրի, «Արդյունաբերական հավաքման համար ներմուծվող ավտոմեքենաների մասերի առնչությամբ Ռուսաստանի Դաշնության մաքսային սակագնի փոփոխության մասին» Ռուսաստանի Դաշնության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի թիվ 166 որոշման, «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Մաքսային միության միասնական մաքսային սակագնային կարգավորման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 130 որոշման դրույթներ*	անցումային ժամանակահատվածը համապատասխանում է համաձայնագրերի գործողության՝ ստորագրելու պահին սահմանված ժամկետին եւ կարող է երկարաձգվել «Մարաքեշի համաձայնագրին Ռուսաստանի Դաշնության միանալու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 16-ի արձանագրությամբ նախատեսված ժամկետով, սակայն չի կարող գերազանցել երկու օրացուցային տարիները
2. «Կալինինգրադի մարզում հատուկ տնտեսական գոտու մասին և Ռուսաստանի Դաշնության որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» 2006 թվականի հունվարի 10-ի թիվ 16-ՖԶ դաշնային օրենքի համաձայն կիրառվող միջոցները	մինչև 2016 թվականի ապրիլի 1-ը
IV. Հայաստանի Հանրապետություն	
Բավարար վերամշակման չափանիշների համաձայն հայկական ճանաչված ապրանքների՝ մաքսատուրքերից և հարկերից ազատումն ազատ տնտեսական գոտիների տարածքներից ու ազատ պահեստների տարածքներից Մաքսային միության մաքսային տարածքի մյուս հատված արտահանելիս՝ համաձայն «Ազատ տնտեսական գոտիների մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 18-ի	Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը

Միջոցի նկարագիրը	Անցումային ժամանակահատվածը՝ միջոցի առնչությամբ
օրենքի, «Ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրման և փորձաքննության անցկացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1772-Ն որոշման, «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի շուրջ» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի ու «Ազատ պահեստների և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի	

* Կիրառվում են՝ հաշվի առնելով անդամ պետությունների տարածքներում «շարժիչային տրանսպորտային միջոցների արդյունաբերական հավաքում» հասկացության՝ Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող կիրառման պայմանները:

(հավելվածը լրաց. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

(հավելվածը խմբ., լրաց. 10.10.14 ՀՀ «ԵՏՄ մասին» 29.05.14 պայմանագրին միանալու մասին պայմանագիր)

ՀԱՎԵԼՎԱԾ 29
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցների մասին

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 94-րդ և 95-րդ հոդվածներին համապատասխան և կիրառվում է սույն Արձանագրության II բաժնում նշված ապրանքների նկատմամբ (այսուհետ՝ գյուղատնտեսական ապրանքներ):

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«վարչատարածքային միավորներ»՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության (ներառյալ Մինսկ քաղաքը) և Ղազախստանի Հանրապետության (ներառյալ Աստանա և Ալմաթի քաղաքները) վարչատարածքային միավորները, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտներն ու մունիցիպալ կազմավորումները.

«գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցություն»՝ անդամ պետության կառավարության կամ այլ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից գյուղատնտեսական ապրանքների արտադրողների շահերին ուղղակիորեն կամ իրենց կողմից լիազորված գործակալի միջոցով ցուցաբերվող ֆինանսական օժանդակություն.

«սուբսիդավորող մարմին»՝ անդամ պետության մեկ կամ մի քանի պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին, որոնք գյուղատնտեսությանը պետական աջակցության տրամադրման հարցերում որոշումներ են կայացնում: Լրավճար տրամադրող մարմինը, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, կարող է լիազորված գործակալի (ցանկացած կազմակերպության) հանձնարարել կամ վերապահել իր վրա դրված մեկ կամ մի քանի այնպիսի գործառույթների իրականացումը, որոնք վերաբերում են գյուղատնտեսությանը պետական աջակցության միջոցների տրամադրմանը: Լիազորված գործակալի (ցանկացած

կազմակերպության) այդպիսի գործողությունները դիտարկվում են որպես սուբսիդավորող մարմնի գործողություններ:

Անդամ պետության նախագահի՝ գյուղատնտեսությանը պետական աջակցության միջոցների տրամադրմանն ուղղված գործողությունները դիտարկվում են որպես սուբսիդավորող մարմնի գործողություններ:

(2-րդ կետը խմբ. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

I. Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցները

3. Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցները հետևյալն են՝

1) անդամ պետությունների՝ գյուղատնտեսական ապրանքների փոխադարձ առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցներ (այսուհետ՝ առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցներ),

2) անդամ պետությունների գյուղատնտեսական ապրանքների փոխադարձ առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ (այսուհետ՝ առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ),

3) անդամ պետությունների գյուղատնտեսական ապրանքների փոխադարձ առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ (այսուհետ՝ առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ):

4. Առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցներին են դասվում սույն Արձանագրության III բաժնում նշված միջոցները: Առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցները կարող են կիրառվել անդամ պետությունների կողմից առանց սահմանափակումների:

5. Առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներն են՝

գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցները, որոնց տրամադրումը համաձայնեցված է պետական աջակցության այդ միջոցը տրամադրող՝ անդամ պետության տարածքից ցանկացած այլ անդամ պետության տարածք գյուղատնտեսական ապրանքի՝ իրականացված կամ ապագայում հնարավոր արտահանման արդյունքներով, որոնք պետական աջակցության տրամադրման միակ պայմանն են կամ մի քանի պայմաններից մեկն են,

գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցները, որոնց տրամադրումը՝ որպես միակ պայման կամ մի քանի պայմաններից մեկը, կապված է բացառապես այն անդամ պետության տարածքի ծագում ունեցող գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերման կամ օգտագործման հետ, որը տրամադրում է պետական աջակցության այդ միջոցը, այդ անդամ պետության տարածքում գյուղատնտեսական ապրանքների արտադրության ժամանակ՝ անկախ այն բանից՝ սահմանվում են արդյոք կոնկրետ ապրանքները, դրանց ծավալը, արժեքը, ծավալի կամ արտադրության արժեքի կամ հայրենական ապրանքների օգտագործման մասնաբաժինը, օգտագործվող հայրենական ապրանքների արտադրության տեղայնացման մակարդակը.

Առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցների ցանկը նշված է սույն Արձանագրության IV բաժնում:

6. Անդամ պետությունները չպետք է կիրառեն առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ:

7. Առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցների շարքին դասվում են այն միջոցները, որոնք չեն կարող դասվել սույն Արձանագրության 4-րդ և 5-րդ կետերում նշված միջոցների շարքին:

8. Առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցների մակարդակը, որը հաշվարկվում է որպես գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության տոկոսային հարաբերություն՝ արտադրված գյուղատնտեսական ապրանքների համախառն վերցված արժեքի նկատմամբ, սահմանվում է որպես թույլատրված ծավալ և չպետք է գերազանցի 10 տոկոսը՝ մինչև սույն կետի երրորդ պարբերությանը համապատասխան պարտավորություններն ուժի մեջ մտնելը:

Առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցների թույլատրված մակարդակի հաշվարկի մեթոդաբանությունը մշակվում է անդամ պետությունների կողմից՝ հաշվի առնելով միջազգային փորձը, և հաստատվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

Անդամ պետությունների՝ առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցների նկատմամբ պարտավորությունները սահմանվում են նշված մեթոդաբանության համաձայն և հաստատվում են Բարձրագույն խորհրդի կողմից:

Սույն կետի դրույթների կիրառումն իրականացվում է՝ հաշվի առնելով «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 106-րդ հոդվածով նախատեսված անցումային դրույթները:

9. Պետության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը միանալուց հետո տվյալ անդամ պետության՝ առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցների առնչությամբ որպես ԱՀԿ-ին միանալու պայման ընդունված պարտավորությունները Միության շրջանակներում դառնում են իր պարտավորությունները:

10. Պետությանը տրամադրվող պետական աջակցության ծավալների հաշվարկն իրականացվում է սույն Արձանագրության V բաժնին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 8-րդ կետով նախատեսված՝ առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցների թույլատրված մակարդակի հաշվարկի մեթոդաբանությունը:

II. Այն ապրանքները, որոնց նկատմամբ կիրառվում են գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միասնական կանոններ

11. Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միասնական կանոնները կիրառվում են ԱՏԳ ԱԱ ԵՏՄ հետևյալ ապրանքների նկատմամբ՝

1) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 01-24 խմբեր՝ բացառությամբ 03 խմբի (ձուկ և խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ), 1604 (պատրաստի կամ պահածոյացված ձուկ. թառափազգիների ձկնկիթ և դրա փոխարինիչները՝ պատրաստած ձկան ձկնկիթի հատիկներից) և 1605 (պատրաստի կամ պահածոյացված խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ) ապրանքային դիրքերի.

2) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 2905 43 000 0 ենթադիրք (մաննիտ).

3) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 2905 44 ենթադիրք (D-գլյուցիտ (սորբիտ)).

4) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 3301 ապրանքային դիրք (եթերայուղեր (տերպեններ պարունակող կամ չպարունակող)՝ ներառյալ լուծամզված բուսական նյութերը (concrete) և բացարձակ եթերայուղերը, ռետինանյութերը, լուծամզված եթերայուղերը, եթերայուղերի խտանյութերը՝ ճարպերի, չցնդող յուղերի, մոմերի կամ համանման նյութերի մեջ, որոնք ստացվում են անֆլերաժի կամ թթվամշակման մեթոդով, եթերայուղերի տերպենազերծումից ստացված տերպենային կողմնակի արգասիքներ, եթերայուղերի ջրային թորվածքներ և եթերայուղերի ջրային լուծույթներ).

5) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 3501-3505 ապրանքային դիրքեր (կազեին, կազեինատներ և կազեինի այլ ածանցյալներ, կազեինային սոսինձներ. ալբումիններ (ներառյալ երկու կամ ավելի շիճուկային սպիտակուցների խտանյութերը, որոնք պարունակում են չոր նյութի վերահաշվարկով 80 % զանգվածային բաժնից ավելի շիճուկային սպիտակուցներ), ալբումինատներ և ալբումինի այլ ածանցյալներ. դոնդողանյութ (այդ թվում՝ ուղղանկյուն (ներառյալ քառակուսի) թերթերով՝ մակերեսային մշակմամբ կամ առանց մշակման, ներկած կամ չներկած) և դոնդողանյութի ածանցյալներ. ձկնասոսինձ. կենդանական ծագման այլ սոսինձներ (բացառությամբ 3501 ապրանքային դիրքում ընդգրկված կազեինային սոսինձների). պեպտոններ և դրանց ածանցյալները. սպիտակուցային այլ նյութեր և դրանց ածանցյալները՝ այլ տեղում չնշված կամ չներառված. քրոմապատված կամ չքրոմապատված կաշվի կամ հում կաշվի փոշի. դեքստրիններ և այլ վերափոխված օսլաներ (օրինակ՝ նախապես դոնդողացված կամ բարդ եթերի վերածված օսլաներ). օսլաների, դեքստրինների կամ վերափոխված այլ օսլաների հիմքով ստացված սոսինձներ՝ բացառությամբ 3503 00 8001 (չոր ձկնասոսինձ) և 3503 00 800 2 (հեղուկ ձկնասոսինձ) ապրանքային դիրքերում ընդգրկվածների).

6) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 3809 10 ենթադիրք (հարդարման միջոցներ, ներկումն արագացնելու կամ ներկանյութերը ֆիքսելու միջոցներ և այլ ապրանքներ ու պատրաստի պրեպարատներ (օրինակ՝

մշակման ու խածատման նյութեր), որոնք կիրառվում են մանածագործական, թղթի, կաշվի արդյունաբերության մեջ կամ նույնանման ճյուղերում՝ այլ տեղում չնշված կամ չընդգրկված, օսլայանման նյութերի հիմքով).

7) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 3824 60 ենթադիրք (սորբիտ՝ բացի 2905 44 ենթադիրքում նշված սորբիտից).

8) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 4101-4103 ապրանքային դիրքեր (խոշոր եղջերավոր անասունների (ներառյալ գոմեշների) կամ ձիազգի կենդանիների (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմագաղաթացրած կամ հետագա մշակման չենթարկված) չմշակված մորթիներ՝ մազածածկույթով կամ առանց մազածածկույթի, կրկնորդված կամ չկրկնորդված. չմշակված՝ ոչխարների չմշակված մորթեր կամ գառների մորթիկներ (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմագաղաթացրած կամ հետագա մշակման չենթարկված), բրդյա ծածկույթով կամ առանց բրդյա ծածկույթի, կրկնորդված կամ չկրկնորդված՝ բացի տվյալ խմբի 1գ ծանոթագրությամբ բացառվածներից. այլ չմշակված մորթեր (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմագաղաթացրած կամ հետագա մշակման չենթարկված), մազածածկույթով կամ առանց մազածածկույթի, կրկնորդված կամ չկրկնորդված՝ բացառությամբ տվյալ խմբի 1(բ) կամ 1(գ) ծանոթագրություններով բացառվածները.

9) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 4301 ապրանքային դիրք (մուշտակամորթ հումք (ներառյալ գլուխները, պոչերը, թաթերը և այլ մասեր կամ կտորտանքը՝ պիտանի մորթուց պատրաստվող արտադրատեսակների արտադրության համար)՝ բացառությամբ 4101, 4102 կամ 4103 ապրանքային դիրքերում նշված՝ չմշակված մորթերի).

10) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 5001 00 000 0-5003 00 000 0 ապրանքային դիրքեր (շերամի բոժոժներ, որոնք պիտանի են հետ կծկելու համար. հումք-մետաքս (չոլորած). մետաքսի մնացուկներ (ներառյալ հետ կծկելու համար ոչ պիտանի բոժոժները, բոժոժաթելի թափոններն ու փխրունացրած հումքը)).

11) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 5101-5103 ապրանքային դիրքեր (բուրդ՝ չենթարկած սանդերքազգման կամ սանրագզման. կենդանիների մազ՝ բարակ կամ կոշտ, սանդերքազգման կամ սանրագզման չենթարկած. կենդանիների բրդի կամ բարակ կամ կոշտ մազի թափոններ՝ ներառյալ մանվածքային թափոնները՝ բայց բացառելով փխրունացրած հումքը).

12) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 5201 00-5203 00 000 0 ապրանքային դիրքեր (բամբակի մանրաթել՝ սանդերքազգման կամ սանրագզման չենթարկված. բամբակյա մանրաթելի մնացուկներ (ներառյալ մանվածքային մնացուկներն ու փխրունացրած հումքը). բամբակի մանրաթել՝ սանդերքազգման կամ սանրագզման ենթարկած).

13) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 5301 ապրանքային դիրք (վուշ-հումք կամ վուշ՝ մշակած, բայց չմանած. վուշի քոլք և մնացուկներ (ներառյալ մանվածքային մնացուկներն ու փխրունացրած հումքը)).

14) ԱՏԳ ԱԱ ԵՏՄ 5302 ապրանքային դիրք (կանեփաթել (cannabis sativa L.) հումք կամ մշակած, բայց չմանած. կանեփաթելի քոլք և մնացուկները (ներառյալ մանվածքային մնացուկները և փխրունացրած հումքը)):

III. Առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցները

12. Առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցները, որոնք իրականացվում են ի նպաստ գյուղատնտեսական ապրանքներ արտադրողների, պետք է համապատասխանեն հետևյալ հիմնական չափանիշներին՝

1) աջակցությունը տրամադրվում է բյուջեի միջոցների (չպահանջված եկամուտների) հաշվին, այդ թվում՝ պետական ծրագրերի շրջանակներում, սակայն ոչ սպառողների միջոցների հաշվին: Չպահանջված եկամուտներ ասելով հասկացվում է բյուջե վճարման ենթակա պարտադիր վճարներ, որոնցից անդամ պետությունը վերջնականապես կամ ժամանակավորապես հրաժարվել է.

2) աջակցությունը չպետք է ունենա արտադրողների գների պահպանման հետևանք:

13. Ի լրումն սույն Արձանագրության 12-րդ կետում նշված չափորոշիչների՝ առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցները պետք է բավարարեն սույն Արձանագրության 14-26-րդ կետերով նախատեսված հատուկ չափորոշիչները և պայմանները:

14. Ընդհանուր բնույթի ծառայություններ մատուցելու պետական ծրագրերը նախատեսում են ծառայություններ մատուցելու կամ գյուղատնտեսությանը կամ գյուղի բնակչությանն արտոնություններ տրամադրելու համար բյուջեի միջոցներից հատկացումներ (չպահանջված եկամուտների օգտագործում)՝ բացի ուղղակի վճարումներից նրանց, որոնք արտադրում կամ վերամշակում են գյուղատնտեսական ապրանքները:

15. Ընդհանուր բնույթի ծառայությունների մատուցման պետական ծրագրերը կարող են իրականացվել հետևյալ ուղղություններով՝

1) գիտական, այդ թվում՝ ընդհանուր բնույթի հետազոտություններ, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծրագրերի հետ կապված հետազոտություններ և կոնկրետ արտադրատեսակներին վերաբերող հետազոտական ծրագրեր,

2) պայքար վնասատուների և հիվանդությունների դեմ՝ ներառյալ վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի ընդհանուր միջոցները, ինչպես նաև կոնկրետ ապրանքին վերաբերող միջոցները, օրինակ՝ վաղ կանխազգուշացման համակարգեր, կարանտին և ոչնչացում,

3) կադրերի՝ ընդհանուր և հատուկ պատրաստում,

4) տեղեկատվության տարածում, խորհրդատվական ծառայություններ՝ ներառյալ արտադրողներին և սպառողներին տեղեկատվության ու արդյունքների փոխանցման դյուրացմանն ուղղված միջոցների տրամադրումը,

5) տեսչական ծառայություններ՝ ներառյալ ընդհանուր տեսչական ծառայությունները և առանձին գյուղատնտեսական ապրանքների ստուգումը՝ առողջապահական, անվտանգության, ստանդարտացման և ըստ որակի տեսակավորելու նպատակով,

6) շուկայահանման և գյուղատնտեսական ապրանքների առաջխաղացման ծառայություններ՝ ներառյալ շուկայահանմանը վերաբերող տեղեկատվությունը, խորհրդատվությունները և կոնկրետ գյուղատնտեսական ապրանքների առաջխաղացումը (բացառությամբ ոչ կոնկրետ նպատակներին ուղղված ծախսերի, որոնք կարող են վաճառողների կողմից օգտագործվել գյուղատնտեսական ապրանքների իրացման գները նվազեցնելու և գնորդներին անմիջական տնտեսական արտոնություններ տրամադրելու համար),

7) ենթակառուցվածքին առնչվող ծառայություններ՝ ներառյալ էլեկտրամատակարարումը, ճանապարհները և հաղորդակցության այլ ուղիներ, շուկաների և նավահանգիստների սարքավորումները, ջրամատակարարումը, ամբարտակներն ու ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը, ենթակառուցվածքի ստեղծմանն ուղղված աշխատանքները՝ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծրագրերի զուգակցմամբ: Միջոցները բոլոր դեպքերում ուղղվում են միայն ընդհանուր օգտագործման ենթակառուցվածքի կապիտալ շինությունների և հանրամատչելի օբյեկտների սարքավորումներով համալրմանն ու շինարարությանը՝ բացառությամբ այն միջոցների, որոնք ուղղվում են շահագործման ծախսերի կամ արտոնություններ ունեցող սպառողների սպասարկումից չստացված եկամտի վճարմանը:

16. Պարենային անվտանգությունն ապահովելու համար պետական պահուստների ստեղծումն իրականացվում է պարենի պաշարները կուտակելու և պահելու նպատակով տրամադրվող ու անդամ պետության պարենային անվտանգության ապահովման ծրագրերի շրջանակներում հատկացվող ֆինանսական միջոցների (չպահանջված եկամուտների) հաշվին, և դրանք պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) պարենային անվտանգությունն ապահովելու նպատակով պետական պահուստի ծավալը և կուտակումը պետք է համապատասխանեն բացարձակապես պարենային անվտանգությանը վերաբերող՝ նախապես սահմանված նպատակներին.

2) պահուստների կուտակման և բաշխման գործընթացը ֆինանսական ծախսերի առումով պետք է լինի թափանցիկ.

3) պարենի գնումներն իրականացվում են ընթացիկ շուկայական գներով, պարենային պահուստներից վաճառքը՝ համապատասխան որակի կոնկրետ արտադրատեսակի ընթացիկ ներքին շուկայական գներից ոչ ցածր գներով:

17. Ներքին պարենային օգնություն ցուցաբերելը բնակչության կարիքավոր հատվածին իրականացվում է բյուջետային միջոցների (չպահանջված եկամուտներ) հաշվին:

Ներքին պարենային օգնություն ցուցաբերելը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

ներքին պարենային օգնություն ստանալու իրավունքը սահմանվում է անդամ պետության օրենսդրությամբ.

ներքին պարենային օգնությունը տրամադրվում է շահագրգիռ անձանց՝ պարենի անմիջական առաքումների կամ շուկայական կամ սուբսիդավորված գներով այդ անձանց կողմից պարենի ձեռքբերման համար միջոցների տրամադրման ձևով.

պարենի գնումները ներքին պարենային օգնություն տալու շրջանակներում իրականացվում են ընթացիկ շուկայական գներով, իսկ ֆինանսավորումը և բաշխումը թափանցիկ են:

18. Ուղղակի վճարումների ձևով արտադրողներին տրամադրվող պետական աջակցության (չպահանջված եկամուտների և բնաիրային արտահայտությամբ վճարումների օգտագործման) միջոցները պետք է համապատասխանեն սույն Արձանագրության 12-րդ կետում նշված չափանիշներին, որոնք վերաբերում են սույն Արձանագրության 19-26-րդ կետերում նշված ուղղակի վճարումների առանձին տեսակներին: Ուղղակի վճարումները՝ բացի սույն Արձանագրության 19-26-րդ կետերում նշվածներից, պետք է համապատասխանեն սույն Արձանագրության 19-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված պահանջներին՝ ի լրումն սույն Արձանագրության 12-րդ կետում նշված ընդհանուր չափորոշիչների:

19. Արտադրողների եկամուտների «չկապակցված» աջակցությունը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) վճարումներ ստանալու իրավունքը սահմանվում է անդամ պետության օրենսդրությամբ՝ ելնելով, պայմանավորված եկամտի մակարդակից, արտադրողի կարգավիճակից, արտադրության գործոնների օգտագործումից կամ որոշակի և ֆիքսված բազային ժամանակահատվածում արտադրության մակարդակից.

2) վճարումների գումարը կախված չէ արտադրանքի տեսակից կամ ծավալից (ներառյալ անասնագլխաքանակը), արտադրված արտադրանքի ներքին կամ համաշխարհային գնից և արտադրության գործոններից.

3) վճարումներն ստանալու համար չի պահանջվում իրականացնել արտադրանքի արտադրություն:

20. Պետական իշխանության լիազոր մարմինների ֆինանսական մասնակցությունը եկամուտների ապահովագրման և դրանց անվտանգության ապահովման ծրագրերում պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) վճարումներ ստանալու իրավունքը սահմանվում է այն եկամուտների կորուստների միջոցով (մինչդեռ հաշվի են առնվում միայն գյուղատնտեսությունից ստացվող եկամուտները), որոնք գերազանցում են նախորդ 3-ամյա ժամանակահատվածում ստացված միջին համախառն եկամտի կամ զուտ եկամտի ձևով դրա համարժեքից (այդպիսի կամ համանման ծրագրերի շրջանակներում ստացված եկամուտների բացառությամբ) կամ նախորդ 3 տարվա համար միջին այն ցուցանիշի 30 տոկոսը, որը հաշվարկվել է նախորդ 5-ամյա ժամանակահատվածի հիման վրա, որից բացառվել են տարեկան ամենաբարձր և ամենացածր ցուցանիշները: Այս պայմանին համապատասխանող յուրաքանչյուր արտադրող իրավունք ունի վճարումներ ստանալու.

2) փոխհատուցումների գումարը չի կարող գերազանցել արտադրողի այն տարվա եկամտի կորուստների 70 տոկոսը, որում արտադրողն օգնություն ստանալու իրավունք է ստանում.

3) վճարումների գումարը կախված չէ արտադրանքի տեսակից կամ ծավալից (ներառյալ անասնագլխաքանակը), արտադրված արտադրանքի ներքին կամ համաշխարհային գնից և արտադրության գործոններից.

4) այն դեպքում, երբ գյուղատնտեսական արտադրանք արտադրողը 1 օրացուցային տարվա ընթացքում ստանում է պետական աջակցություն՝ համաձայն սույն կետի և սույն Արձանագրության 21-րդ կետի, ապա փոխհատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել արտադրողի ընդհանուր կորուստների 100 տոկոսը:

21. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի և անասունների ապահովագրման ծրագրերում՝ տարերային կամ այլ աղետների ժամանակ օգնության տրամադրման կարգով ապահովագրության ծրագրերի շրջանակներում ուղղակիորեն կամ պետական իշխանության

մարմինների (նրանց կողմից լիազորված կազմակերպությունների) ֆինանսական մասնակցությամբ կատարվող վճարումները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) վճարումներ ստանալու իրավունքը ծագում է, երբ պետական իշխանության լիազոր մարմինները պաշտոնապես ընդունում են, որ տեղի է ունեցել կամ տեղի է ունենում տարերային կամ այլ աղետ (ներառյալ անդամ պետության տարածքում հիվանդությունների բռնկումները, վարակումը վնասատուներով, մորեխների ներխուժումը, բնական հրդեհները, երաշտները, ջրհեղեղները և այլ վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթներ, տեխնածին բնույթի իրադարձությունները, միջուկային վթարներն ու ռազմական գործողությունները և այլն).

2) վճարումների գումարը սահմանվում է՝ ելնելով արտադրական կորուստների ծավալից, որոնք գերազանցում են նախորդ 3-ամյա ժամանակահատվածում արտադրության միջին ցուցանիշի կամ նախորդ 5-ամյա ժամանակահատվածի հիման վրա՝ ամենամյա ամենաբարձր և ամենացածր ցուցանիշների բացառմամբ հաշվարկված 3-ամյա ցուցանիշի 30 տոկոսը.

3) վճարումները կատարվում են տարերային կամ այլ աղետով պայմանավորված եկամտի, անասնագլխաքանակի կորուստների (ներառյալ կենդանիների անասնաբուժական սպասարկման հետ կապված վճարները), գյուղատնտեսական նշանակության հողերը շրջանառությունից դուրս գալու և արտադրության այլ գործոնների կապակցությամբ.

4) վճարումների գումարը չպետք է գերազանցի արտադրողի կորուստների ընդհանուր արժեքը, որոնք պայմանավորված են տարերային կամ այլ աղետով՝ անկախ արտադրվելիք արտադրանքի տեսակից կամ քանակից.

5) վճարումների գումարը չպետք է գերազանցի սույն կետի 3-րդ ենթակետում սահմանված՝ հետագա կորուստները կանխելու կամ մեղմելու համար անհրաժեշտ մակարդակը.

6) այն դեպքում, երբ արտադրողը 1 օրացուցային տարվա ընթացքում ստանում է պետական աջակցություն՝ համաձայն սույն կետի և սույն Արձանագրության 20-րդ կետի, ապա փոխհատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել արտադրողի ընդհանուր կորուստների 100 տոկոսը:

22. Կառուցվածքային փոփոխություններին ուղղված օժանդակությունն արտադրողներին իրենց գործունեությունը դադարեցնել դրդող ծրագրերի միջոցով նախատեսում է հետևյալը՝

1) վճարումներ ստանալու իրավունքը պայմանավորվում է հստակ սահմանված չափանիշներով՝ այնպիսի ծրագրերի շրջանակներում, որոնք նախատեսված են գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի արտադրությամբ զբաղված անձանց գործունեության դադարեցման դյուրացմանը կամ նրանց՝ տնտեսության այլ հատվածներ տեղափոխման համար.

2) վճարումները կախված են օգնությունն ստացողի կողմից գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի լիակատար և մշտական դադարեցումից:

23. Ռեսուրսների օգտագործման դադարեցմանն ուղղված ծրագրերի միջոցով աջակցությունը կառուցվածքային փոփոխություններին նախատեսում է հետևյալը՝

1) վճարումներ ստանալու իրավունքը պայմանավորված է հստակ սահմանված չափանիշներով՝ այնպիսի ծրագրերի շրջանակում, որոնք ուղղված են հողի կամ այլ ռեսուրսների՝ ներառյալ ընտանի անասունների՝ գյուղատնտեսական ապրանքների արտադրության նպատակներով օգտագործման դադարեցմանը.

2) վճարումները կախված են հողը՝ գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի արտադրության ոլորտից առնվազն 3 տարով դուրս բերելուց, իսկ ընտանի անասունների դեպքում՝ դրա սպանդից՝ այն բուծելուց հետագայում հրաժարվելուց.

3) վճարումներն իրականացնելու համար չի պահանջվում և չի որոշակիացվում այդպիսի հողերի և այլ ռեսուրսների այլընտրանքային օգտագործումը, որոնք հանված են գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի արտադրությունից.

4) վճարումները կախված չեն արտադրանքի տեսակներից, քանակից, հողի կամ արտադրության համար պահպանվող այլ ռեսուրսների օգտագործմամբ արտադրված արտադրանքի ներքին կամ համաշխարհային գներից:

24. Ներդրումների խթանման միջոցով կառուցվածքային փոփոխություններին ուղղված օժանդակությունը նախատեսում է հետևյալը՝

1) վճարումներ ստանալու իրավունքը պայմանավորված է պետական այնպիսի ծրագրերի շրջանակներում հստակ սահմանված չափանիշներով, որոնք նախատեսված են օբյեկտիվորեն ապացուցված կառուցվածքային կորուստների հետևանքով արտադրողի գործունեության ֆինանսական կամ ֆիզիկական վերակառուցման համար: Այդպիսի վճարումներ ստանալու իրավունքը նաև կարող է հիմնվել գյուղատնտեսական հանդավարների ապապետականացման հստակ սահմանված կառավարական ծրագրի վրա.

2) վճարումների գումարը չի սահմանվում տվյալ արտադրողի կողմից արտադրված արտադրանքի տեսակների կամ ծավալի (ներառյալ անասնագլխաքանակը) հիման վրա և կախված չէ դրանցից՝ բացառությամբ սույն կետի 5-րդ ենթակետում նախատեսված պահանջի.

3) վճարումների գումարը չի սահմանվում կոնկրետ ապրանքների ներքին կամ համաշխարհային գների հիման վրա և կախված չէ դրանցից.

4) վճարումները տրամադրվում են միայն այն ժամանակահատվածով, որն անհրաժեշտ է ներդրումներ իրականացնելու համար, որոնց համար նախատեսված են այդ վճարումները.

5) վճարումներն իրականացնելու ժամանակ աջակցությունն ստացողին չի կարգադրվում և ոչ մի կերպ չի նշվում, թե նա ինչպիսի գյուղատնտեսական ապրանքներ պետք է արտադրի՝ բացառությամբ որևէ կոնկրետ արտադրատեսակ չարտադրելու պահանջի.

6) վճարումները սահմանափակվում են կառուցվածքային կորուստների փոխհատուցման համար պահանջվող գումարով:

25. Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծրագրերին առնչվող վճարներն իրականացվում են՝ հաշվի առնելով հետևյալը՝

1) վճարումներ ստանալու իրավունքը պայմանավորված է շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանմանն ուղղված պետական ծրագրում մասնակցությամբ ու կախված է տվյալ պետական ծրագրով նախատեսված կոնկրետ պայմանները կատարելուց՝ ներառյալ արտադրության մեթոդներին կամ անհրաժեշտ նյութերին վերաբերող պայմանները.

2) վճարումների գումարը սահմանափակվում է պետական ծրագրի կատարման հետ կապված լրացուցիչ ծախսերի կամ եկամտի կորուստների չափով:

26. Տարածքային օգնության ծրագրերով վճարումներն իրականացվում են՝ հաշվի առնելով հետևյալը՝

1) վճարումների իրավունքը տրամադրվում է անբարենպաստ շրջաններում արտադրողներին: Անբարենպաստ շրջանն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված վարչական և (կամ) տնտեսական տարածք է.

2) վճարումների գումարը չի սահմանվում գյուղատնտեսական ապրանքի (ներառյալ անասնագլխաքանակը) տեսակների կամ ծավալի հիման վրա և կախված չէ դրանցից, սակայն կապված է այդ ապրանքի արտադրության կրճատման հետ.

3) վճարումների գումարը չի սահմանվում կոնկրետ ապրանքների ներքին կամ համաշխարհային գների հիման վրա և կախված չէ դրանցից.

4) վճարումներն արտադրողներին են տրամադրվում միայն այն շրջաններում, որոնք ունեն օգնություն ստանալու իրավունք, և դրանք այդպիսի շրջաններում հասանելի են բոլոր արտադրողների համար.

5) արտադրության գործոնների հետ կապված վճարումներն իրականացվում են աստիճանաբար նվազող սանդղակով՝ արտադրության տվյալ գործոնին առնչվող շեմից վեր.

6) վճարումների գումարը սահմանափակվում է նշված տարածքում գյուղատնտեսական ապրանքներին առնչվող լրացուցիչ ծախսերի կամ եկամտի կորուստների չափով:

IV. Առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցները

27. Առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ են ճանաչվում՝

1) գյուղատնտեսական ապրանքների կոնկրետ արտադրողներին, դրանց խմբին կամ միավորմանն ուղղակի վճարումների կատարումը (ներառյալ բնաիրային արտահայտությամբ վճարները)՝ կախված այդպիսի ապրանքների արտահանման արդյունքներից.

2) գյուղատնտեսական ապրանքների ոչ առևտրային պաշարներ վաճառելը կամ այլ անդամ պետության տարածք արտահանման համար առաջարկելը՝ անդամ պետության ներքին շուկայում գնորդներին համանման ապրանքի համար առաջարկվող գներից ցածր գներով.

3) գյուղատնտեսական ապրանքներն այլ անդամ պետության տարածք արտահանելու ժամանակ վճարումների կատարումը կառավարության աջակցությամբ ֆինանսավորվում է ինչպես պետական միջոցների, այնպես էլ այլ միջոցների հաշվին՝ ներառյալ վճարումները, որոնք ֆինանսավորվում են գյուղատնտեսական արտադրատեսակի նկատմամբ կիրառվող հավաքագրումից ստացվող հասույթից կամ այն գյուղատնտեսական արտադրատեսակի նկատմամբ կիրառվող հավաքագրումից ստացված հասույթից, որից արտադրվել է այլ Կողմ պետության տարածք արտահանվող արտադրատեսակը.

4) պետական աջակցության տրամադրում՝ այլ անդամ պետության տարածք գյուղատնտեսական ապրանքների շուկայահանմանն ու առաջխաղացմանն առնչվող ծախսերի նվազեցման նպատակով (բացառությամբ արտահանման և խորհրդատվական ծառայությունների զարգացմանն օժանդակող լայնատարած ծառայությունների)՝ ներառյալ բեռնման-բեռնաթափման աշխատանքների, արտադրանքի որակի բարձրացման հետ կապված ծախսերը և վերամշակման հետ կապված այլ ծախսեր, ինչպես նաև միջազգային փոխադրումների հետ կապված ծախսերը.

5) այլ անդամ պետության տարածք արտահանելու համար նախատեսված գյուղատնտեսական ապրանքների փոխադրման ներքին սակագների սահմանումը՝ ավելի բարենպաստ պայմաններով, քան ներքին սպառման համար նախատեսված գյուղատնտեսական ապրանքների փոխադրման ժամանակ.

6) գյուղատնտեսությանը պետական աջակցության տրամադրում՝ կախված այլ անդամ պետության տարածք արտահանելու համար նախատեսված արտադրանքի մեջ գյուղատնտեսական ապրանքներ ներառված լինելուց:

V. Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծավալների հաշվարկը

28. Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծավալների հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում՝

1) դրամական միջոցների ուղղակի փոխանցումը.

2) պարտավորության կատարման երաշխիքի տրամադրումը (օրինակ՝ փոխատվությունների և փոխառությունների գծով երաշխիքներ).

3) ապրանքի, ծառայության, արժեթղթերի, ձեռնարկության (գույքային համալիրի) կամ դրա մի մասի, կազմակերպության կանոնադրական ֆոնդի մասնաբաժնի (ներառյալ բաժնետոմսերի ձեռքբերումը), այլ գույքի, մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների և այլնի ձեռքբերումը պետության կողմից շուկայականից բարձր գնով.

4) պետության և վարչատարածքային միավորների վճարման ենթակա բյուջետային եկամուտների գանձումից լրիվ կամ մասնակի հրաժարում (օրինակ՝ բյուջե վճարումների մասով պարտքի դուրսգրում և այլն).

5) ապրանքների կամ ծառայությունների արտոնյալ պայմաններով կամ անհատույց տրամադրում.

6) գնային աջակցություն, որը միավորում է շուկայական գների մակարդակի պահպանմանն ուղղված միջոցները:

29. Դրամական միջոցների ուղղակի փոխանցման դեպքում գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծավալը համապատասխանում է անհատույց տրամադրված միջոցների գումարին (օրինակ՝ դոտացիաների, փոխհատուցումների միջոցով և այլն): Այն դեպքում, երբ միջոցները տրամադրվում են վերադարձելիության հիմունքներով՝ հասանելի շուկայում (բանկային վարկերի, պարտատոմսերի և այլնի շուկա) ձևավորված պայմաններից ավելի բարենպաստ պայմաններով, ապա աջակցության ծավալը սահմանվում է որպես տարբերություն այն գումարի, որը կպահանջվեր վճարել տվյալ միջոցների՝ դրանք շուկայում ստանալու դեպքում օգտագործման դիմաց և փաստացի վճարված գումարի միջև:

30. Պարտավորության կատարման համար տրամադրված երաշխիքի մասով գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծավալը սահմանվում է որպես տարբերություն այն գումարի միջև, որը կպահանջվեր վճարել՝ ելնելով ապահովագրական ծառայությունների հասանելի շուկայում համապատասխան պարտավորությունը չկատարելու

ռիսկի ապահովագրության սակագնից, և այն գումարի միջև, որը պետք է վճարվի սուբսիդավորող մարմնին երաշխիքի տրամադրման համար:

Երաշխիքի կատարման բյուջետային ծախսերը ներառվում են պետական աջակցության ծավալի մեջ՝ սույն կետի առաջին պարբերության համապատասխան հաշվարկված մակարդակը գերազանցող գումարի չափով:

Սույն Արձանագրության VI բաժնով նախատեսված ծանուցագրերում անդամ պետությունները ներառում են տեղեկություն, որը թույլ է տալիս գնահատել պարտավորությունների կատարման պետական երաշխիքների տրամադրմանն ուղղված պետական աջակցության մակարդակը:

31. Ապրանքի, ծառայության, արժեթղթերի, ձեռնարկության (գույքային համալիրի) կամ դրա մի մասի, կազմակերպության կանոնադրական ֆոնդի մասնաբաժնի (ներառյալ բաժնետոմսերի ձեռքբերումը), այլ գույքի, մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների և այլնի շուկայականից բարձր գնով ձեռքբերման ժամանակ գյուղատնտեսությանը տրամադրվող աջակցության ծավալը հաշվարկվում է որպես տարբերություն՝ ձեռք բերված օբյեկտների համար փաստացի վճարված գումարի և այն գումարի միջև, որը կպահանջվեր, որ վճարվեր տվյալ օբյեկտների համար շուկայում ձևավորված գներով:

Պետության ծախսերը՝ ուղղված բաժնետոմսերի ձեռքբերմանը, ձեռնարկության կանոնադրական կապիտալում իր մասնաբաժնի ավելացմանը և այլնի, որոնցով պահպանում են սովորական ներդրումային գործելակերպի պայմանները, չեն դասվում պետական աջակցության միջոցների շարքին:

32. Անդամ պետությունների կամ վարչատարածքային միավորների բյուջեներում անհրաժեշտ վճարների գանձումից ամբողջական կամ մասնակի հրաժարվելու դեպքում աջակցության ծավալը համապատասխանում է գյուղատնտեսական ապրանքի արտադրողի կողմից բյուջեի մասով չկատարված ֆինանսական պարտավորությունների գումարին՝ ներառյալ այն պարտավորությունները, որոնք կառաջանային այն դեպքում, երբ աջակցությունը չտրամադրվեր: Պարտավորության կատարումը հետաձգելու դեպքում գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծավալը սահմանվում է այն գումարի չափով, որն անհրաժեշտ է վճարել տոկոսների միջոցով՝ հետաձգված պարտավորությանը հավասար քանակությամբ հասանելի վարկային շուկայում ստացված փոխառության միջոցների օգտագործման համար:

33. Ապրանքների կամ ծառայությունների արտոնյալ պայմաններով կամ անհատույց տրամադրման դեպքում գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծավալը սահմանվում է որպես տարբերություն ապրանքների կամ ծառայությունների շուկայական արժեքի և դրանց ձեռքբերման (տրամադրման) համար փաստացի վճարված գումարի միջև:

34. Գնային աջակցության ծավալը, որը միավորում է շուկայական գների մակարդակի պահպանմանն ուղղված միջոցները, սահմանվում է որպես արտադրյալ՝ այն որոշակի տեսակի գյուղատնտեսական ապրանքի քանակության, որի նկատմամբ կիրառվում են կարգավորվող գներ կամ գների կարգավորման միջոցներ, և կարգավորվող ներքին գնի ու համաշխարհային հենանիշային գնի տարբերության՝ տեղեկատվության ճշգրտմամբ՝ ելնելով ապրանքների (օրինակ՝ կաթի բազիսային յուղայնություն) որակից և վերամշակման աստիճանից: Գների պահպանմանն ուղղված բյուջետային ծախսերը (օրինակ՝ գնման և պահպանման ծախսերը) գնային աջակցության ծավալի հաշվարկի մեջ չեն ներառվում:

VI. Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության մասին ծանուցագրերը

35. Անդամ պետությունները միմյանց և Հանձնաժողովին գրավոր տեղեկացնում են ընթացիկ տարում իրականացվելիք՝ գյուղատնտեսությանը պետական աջակցություն տրամադրելուն ուղղված ծրագրերի մասին, որոնք պետք է իրականացվեն դաշնային կամ հանրապետական, ինչպես նաև վարչատարածքային միավորների մակարդակով՝ ներառյալ գյուղատնտեսությանը պետական աջակցության տրամադրման կարգի և ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը: Ծանուցագիրը պետք է բավականաչափ տեղեկություններ պարունակի, որպեսզի անդամ պետության լիազոր մարմինները և Հանձնաժողովը կարողանան գնահատել անդամ պետությունների կողմից գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության չափը և

դրա համապատասխանությունը սույն Արձանագրությանը: Անդամ պետությունները գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության մասին տեղեկատվությունը չեն դասակարգում որպես սահմանափակ մատչելիությամբ տեղեկատվություն: Անդամ պետությունները միմյանց և Հանձնաժողովին յուրաքանչյուր տարի, մայիսի 1-ից ոչ ուշ, ուղարկում են ծանուցագրեր:

36. Անդամ պետությունները միմյանց և Հանձնաժողովին են ուղարկում սույն հոդվածի 35-րդ կետում նշված ծանուցագրերը, որոնք պարունակում են դաշնային և հանրապետական բյուջեի նախագծերի ծախսային մասեր՝ տրամադրվող ըստ բաժինների, ենթաբաժինների և ծախսերի գործառական ու գերատեսչական դասակարգման տեսակների, ինչպես նաև՝ գյուղատնտեսությանը պետական աջակցության տրամադրման կարգի և ծավալների վերաբերյալ նորմեր: Անդամ պետությունների վարչատարածքային միավորների բյուջեների ծախսերը ցանկացած այլ ձևով արտացոլվում են ծանուցագրերում:

37. Դաշնային կամ հանրապետական, այդ թվում՝ վարչատարածքային միավորների մակարդակով իրականացվող գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծավալների և ուղղությունների մասին տեղեկատվության աղբյուրների ցանկը տրամադրվում է անդամ պետության կամ անդամ պետության լիազոր մարմնի կողմից՝ այլ անդամ պետության կամ Հանձնաժողովի պահանջով:

38. Անդամ պետությունների լիազոր մարմինները միմյանց և Հանձնաժողովին՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա դեկտեմբերի 1-ը, հաշվետու տարում իրենց պետության տարածքում գյուղատնտեսությանը տրամադրված պետական աջակցության մասին ծանուցագրեր են ուղարկում:

39. Ընթացիկ տարում գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծրագրերի և հաշվետու տարում գյուղատնտեսությանը պետական աջակցություն տրամադրելու մասին ծանուցագրերի ձևը մշակվում է Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների հետ միասին և հաստատվում է Հանձնաժողովի կողմից:

VII. Անդամ պետությունների պատասխանատվությունը

40. Այն դեպքում, երբ անդամ պետություններից որևէ մեկը խախտում է սույն Արձանագրության 6-րդ և 8-րդ կետերի դրույթները, այդպիսի անդամ պետությունը խելամիտ ժամկետներում դադարեցնում է այնպիսի միջոցների տրամադրումը, որոնք առավելապես խաթարող ազդեցություն են գործում առևտրի վրա, կամ այն միջոցների տրամադրումը, որոնք առևտրի վրա թույլատրված ծավալից ավելի խաթարող ազդեցություն են գործում, և մյուս անդամ պետություններին վճարում է փոխհատուցում՝ առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն գործող միջոցների ծավալին կամ առևտրի վրա թույլատրված ծավալից ավելի խաթարող ազդեցություն գործող միջոցներին հավասար չափով: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է Հանձնաժողովի խորհուրդը: Անդամ պետության կողմից նշված փոխհատուցումը չվճարելու դեպքում այլ անդամ պետություններ իրավունք ունեն պատասխան միջոցներ ձեռնարկելու:

(հավելվածը խմբ. 10.10.14 «ՀՀ «ԵՏՄ մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի արձանագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ 30
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Անդամ պետությունների աշխատավորներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնություն ցուցաբերելու մասին

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի XXVI բաժնի համաձայն և կարգավորում է անդամ պետությունների աշխատավորներին ու նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնություն ցուցաբերելու հետ կապված հարցերը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«մշտական բնակության պետություն»՝ պետություն, որի քաղաքացին է պացիենտը.

«բժշկական կազմակերպություն (առողջապահական հիմնարկ)»՝ իրավաբանական անձ անկախ կազմակերպաիրավական ձևից, որը որպես հիմնական (կանոնադրական) գործունեություն իրականացնում է բժշկական գործունեություն՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա, այլ իրավաբանական անձ անկախ կազմակերպաիրավական ձևից, որը հիմնական (կանոնադրական) գործունեության հետ մեկտեղ իրականացնում է բժշկական գործունեություն, կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ, որն իրականացնում է բժշկական գործունեություն՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

«բժշկական տարահանում»՝ պացիենտի կյանքը փրկելու և առողջությունը պահպանելու նպատակով պացիենտի տեղափոխում (այդ թվում՝ այն պացիենտների, որոնց կյանքին սպառնացող իրավիճակների դեպքում հնարավոր չէ ցուցաբերել անհրաժեշտ բժշկական օգնություն այն բժշկական կազմակերպություններում (առողջապահական հիմնարկներում), որտեղ նրանք գտնվում են, և այն պացիենտների, որոնք տուժել են արտակարգ իրավիճակների և բնական աղետների հետևանքով, ինչպես նաև տառապում են շրջապատի մարդկանց համար վտանգավոր հիվանդություններով).

«պացիենտ»՝ անդամ պետության աշխատավոր կամ նրա ընտանիքի անդամ, որին ցուցաբերվում է բժշկական օգնություն, կամ որը դիմել է բժշկական օգնություն ստանալու համար՝ անկախ իր մոտ հիվանդությունների առկայությունից և իր վիճակից.

«շտապ բժշկական օգնություն (անհետաձգելի)»՝ բժշկական այնպիսի ծառայությունների համալիր, որոնք տրամադրվում են առանց պացիենտի կյանքին սպառնացող վտանգի ակնհայտ նշանների հանկարծակի սուր հիվանդությունների, վիճակների, քրոնիկ հիվանդությունների սրացումների դեպքում.

«շտապ բժշկական օգնություն (արտակարգ)»՝ բժշկական այնպիսի ծառայությունների համալիր, որոնք տրամադրվում են պացիենտի կյանքի համար սպառնալիք ներկայացնող սուր հիվանդությունների, դժբախտ պատահարների, վնասվածքների, թունավորումների և այլ վիճակների դեպքում:

3. Աշխատանքի տեղավորման պետությունն անդամ պետությունների աշխատավորներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ցուցաբերումն ապահովում է այն կարգով և պայմաններով, որոնք սահմանվել են աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով:

4. Անդամ պետություններն իրենց տարածքում անդամ պետության աշխատավորներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրում են անվճար շտապ բժշկական օգնության իրավունք (անհետաձգելի և արտակարգ) նույն կարգով և նույն պայմաններով, ինչ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիներին:

Շտապ բժշկական օգնությունը (անհետաձգելի և արտակարգ) անդամ պետությունների աշխատավորներին և նրանց ընտանիքի անդամներին աշխատանքի տեղավորման պետության առողջապահական պետական ու մունիցիպալ համակարգերի բժշկական կազմակերպությունների (առողջապահական հիմնարկների) կողմից ցուցաբերվում է անվճար՝ անկախ բժշկական ապահովագրության վկայականի առկայությունից:

Բժշկական կազմակերպության (առողջապահական հիմնարկի)՝ անդամ պետությունների աշխատավորներին և նրանց ընտանիքի անդամներին ցուցաբերված շտապ բժշկական օգնության ծախսերի փոխհատուցումն իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության բյուջետային համակարգի համապատասխան բյուջեների հաշվին՝ առողջապահության ֆինանսավորման գործող համակարգին համապատասխան:

5. Պացիենտի կյանքին կամ շրջապատի մարդկանց առողջությանն սպառնացող անմիջական վտանգը վերացնելուց հետո աշխատանքի տեղավորման երկրի բժշկական կազմակերպությունում (առողջապահական հիմնարկում) բուժումը շարունակելու դեպքում տրամադրված ծառայությունների փաստացի արժեքի վճարումն իրականացվում է անմիջականորեն պացիենտի կամ այլ աղբյուրների կողմից, որոնք արգելված չեն աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ՝ սակագներով կամ պայմանավորված գներով:

6. Պացիենտին մշտական բնակության պետություն բժշկական տարահանում իրականացնելու անհրաժեշտության դեպքում առողջության մասին տեղեկությունները բժշկական կազմակերպության (առողջապահական հիմնարկի) կողմից ուղարկվում են մշտական բնակության պետության դեսպանություն և (կամ) լիազոր մարմին (կազմակերպություն):

Պացիենտի բժշկական տարահանման հնարավորությունը, ինչպես նաև բժշկական տարահանման կարգը սահմանվում են անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Բժշկական տարահանումն իրականացվում է շտապ բժշկական օգնության արտագնա բրիգադներով՝ տեղափոխման ժամանակ բժշկական օգնություն ցուցաբերելու միջոցառումներ անցկացնելով, այդ թվում՝ բժշկական սարքավորումներ կիրառելով:

Պացիենտի բժշկական տարահանման ծախսերի փոխհատուցումն իրականացվում է մշտական բնակության պետության բյուջետային համակարգի համապատասխան բյուջեի հաշվին՝ առողջապահության ֆինանսավորման գործող համակարգին համապատասխան, կամ այլ աղբյուրների հաշվին, որոնք արգելված չեն մշտական բնակության պետության օրենսդրությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 31
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում Եվրասիական տնտեսական միության գործունեության մասին

Միության շրջանակներում համապատասխան հարաբերությունների նկատմամբ կիրառվում է «Բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում Մաքսային միության գործունեության մասին» 2011 թվականի մայիսի 19-ի պայմանագիրը:

ՀԱՎԵԼՎԱԾ 32
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
Եվրասիական տնտեսական միությունում սոցիալական երաշխիքների, արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«հյուրընկալող պետություն»՝ անդամ պետություն, որի տարածքում տեղակայված է Միության մարմինը.

«Միության մարմինների շինություններ»՝ շենքեր կամ շենքերի մասեր, որոնք օգտագործվում են պաշտոնեական նպատակների, ինչպես նաև Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների բնակության համար.

«անդամ պետությունների ներկայացուցիչներ»՝ պատվիրակությունների ղեկավարներ և անդամներ, որոնց անդամ պետություններն ուղարկում են Միության մարմինների նիստերին և Միության շրջանակներում անցկացվող միջոցառումներին մասնակցելու համար.

«սոցիալական ապահովություն (սոցիալական ապահովագրություն)»՝ պարտադիր ապահովագրություն ժամանակավոր անաշխատունակության դեպքում և մայրության հետ կապված, պարտադիր ապահովագրություն արտադրական դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերում, պարտադիր բժշկական ապահովագրություն.

«Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց ընտանիքի անդամներ»՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների,

Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց հետ մշտապես բնակվող ամուսինը (կինը), անչափահաս երեխաները և խնամքի տակ գտնվող անձինք.

«աշխատակիցների ընտանիքի անդամներ»՝ աշխատակիցների հետ մշտապես բնակվող ամուսինը (կինը) և անչափահաս երեխաները:

2. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Միության դատարանի դատավորները, պաշտոնատար անձինք և աշխատակիցները միջազգային ծառայողներ են: Իրենց լիազորություններն իրականացնելիս (պաշտոնեական (ծառայողական) պարտականությունները կատարելիս) նրանք չպետք է պահանջեն կամ ստանան ցուցումներ անդամ պետությունների պետական իշխանության մարմիններից կամ պաշտոնատար անձանցից, ինչպես նաև Միության անդամ չհանդիսացող պետությունների իշխանություններից: Նրանք պետք է ձեռնպահ մնան որևէ գործողությունից, որը չի համապատասխանում միջազգային ծառայողի՝ իրենց կարգավիճակին:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն պարտավորվում է անշեղորեն պահպանել Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների լիազորությունների միջազգային բնույթը և նրանց վրա ազդեցություն չգործել իրենց ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում:

II. Միության արտոնություններն ու անձեռնմխելիությունները

4. Միության մարմինների գույքը և ակտիվներն անձեռնմխելի են վարչական կամ դատական ցանկացած միջամտությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Միությունն ինքն է հրաժարվում անձեռնմխելիությունից:

5. Միության մարմինների շինությունները, ինչպես նաև դրանց արխիվները և փաստաթղթերը, այդ թվում՝ ծառայողական նամակագրությունը, անկախ դրանց գտնվելու վայրից, ենթակա չեն խուզարկության, ռեկվիզիցիայի, բռնագրավման կամ միջամտության ցանկացած այլ ձևի, որը խոչընդոտում է այդ մարմինների բնականոն գործունեությունը:

6. Հյուրընկալող պետության պետական իշխանության և կառավարման համապատասխան մարմինների ներկայացուցիչները չեն կարող Միության մարմինների շինություններ մուտք գործել առանց Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի, Միության դատարանի նախագահի կամ նրանց փոխարինող անձանց համաձայնության և պետք է մուտք գործեն նրանց կողմից հաստատված պայմանները հաշվի առնելով՝ բացառությամբ հրդեհի դեպքերի կամ այլ հանգամանքների, որոնց համար պահանջվում են պաշտպանության անհապաղ միջոցներ:

7. Հյուրընկալող պետության պետական իշխանության և կառավարման համապատասխան մարմինների որոշմամբ ցանկացած գործողություն Միության մարմինների շինություններում կարող է իրականացվել Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի, Միության դատարանի նախագահի կամ նրանց փոխարինող անձանց համաձայնությամբ:

8. Միության մարմինների շինությունները չեն կարող որպես ապաստան ծառայել ցանկացած անդամ պետության օրենքով հետապնդվող կամ որևէ անդամ պետության կամ Միության անդամ չհանդիսացող պետության հանձնման ենթակա անձանց համար:

9. Միության մարմինների շինությունների անձեռնմխելիությունն իրավունք չի տալիս դրանք օգտագործելու Միության գործառույթներին կամ խնդիրներին չհամապատասխանող կամ անդամ պետությունների անվտանգությունը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց շահերը վնասող նպատակներով:

10. Հյուրընկալող պետությունը պատշաճ միջոցներ է ձեռնարկում Միության շինությունները ցանկացած ներխուժումից կամ վնաս հասցնելուց պաշտպանելու համար:

11. Միության մարմիններն ազատվում են հյուրընկալող պետությունում գանձվող հարկերից, հավաքագրումներից, տուրքերից և այլ վճարումներից, բացառությամբ այն վճարումների, որոնք սպասարկման (ծառայության) կոնկրետ տեսակի համար վճարներ են, և սույն Կանոնակարգի 44-րդ և 45-րդ կետերին համապատասխան կատարվող վճարումների (հատկացումների և մուծումների):

12. Միության մարմինների պաշտոնեական օգտագործման համար նախատեսված առարկաներն ու այլ գույքն անդամ պետությունների տարածքներում ազատվում են մաքսատուրքերից, հարկերից և մաքսավճարներից:

13. Կապի իրենց պաշտոնական միջոցների մասով Միության մարմիններն օգտվում են ոչ պակաս բարենպաստ պայմաններից, քան այն պայմանները, որոնք հյուրընկալող պետության կողմից տրամադրվում են դիվանագիտական ներկայացուցչություններին:

14. Միության մարմինները Միության դրոշը, խորհրդանշանը կամ որևէ այլ խորհրդանիշ կարող են տեղադրել իրենց կողմից զբաղեցված շինությունների և իրենց պատկանող ավտոտրանսպորտային միջոցների վրա:

15. Անդամ պետությունների օրենսդրությունը պահպանելիս Միության մարմինները, իրենց նպատակներին և գործառույթներին համապատասխան, կարող են հրատարակել և տարածել տպագիր արտադրանք, որի հրապարակումը նախատեսված է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով:

16. Հյուրընկալող պետությունը Միությանն աջակցում է այնպիսի շինություններ ձեռք բերելու կամ ստանալու հարցում, որոնք անհրաժեշտ են Միության մարմինների կողմից իրենց գործառույթներն իրականացնելու համար:

17. Միությունն անդամ պետությունների պետական իշխանության և կառավարման համապատասխան մարմինների հետ համագործակցում է արդարադատության պատշաճ իրականացումը և իրավապահ մարմինների կարգադրագրերի կատարումն ապահովելու, ինչպես նաև սույն Կանոնակարգով նախատեսված արտոնությունների և անձեռնմխելիությունների ցանկացած չարաշահում կանխարգելելու նպատակով:

III. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների արտոնություններն ու անձեռնմխելիությունները

18. Եթե Հանձնաժողովի կոլեգիայի անդամները և Միության դատարանի դատավորները հյուրընկալող պետության քաղաքացիներ չեն, ապա արտոնություններից և անձեռնմխելիություններից օգտվում են այն չափով, որը «Դիվանագիտական կապերի մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայով նախատեսված է դիվանագիտական գործակալի համար:

Այդպիսի անձեռնմխելիությունները չեն տարածվում հետևյալ դեպքերի վրա՝

գույքային հայցեր, որոնք վերաբերում են հյուրընկալող պետության տարածքում գտնվող՝ մասնավոր սեփականություն հանդիսացող անշարժ գույքին.

ժառանգությանը վերաբերող հայցեր, որոնց դեպքում Հանձնաժողովի կոլեգիայի անդամը, Միության դատարանի դատավորը կամ ընտանիքի անդամը հանդես է գալիս կտակակատարի, ժառանգվող գույքի խնամակալի, ժառանգի կամ շահառուի դերում՝ որպես մասնավոր անձ, այլ ոչ թե Միության մարմնի անունից.

հայցեր՝ կապված մասնագիտական այնպիսի գործունեության հետ, որը դուրս է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված լիազորությունների սահմաններից:

Հյուրընկալող պետության քաղաքացիներ հանդիսացող Հանձնաժողովի կոլեգիայի անդամների և Միության դատարանի դատավորների վրա տարածվում է սույն Կանոնակարգի 19-րդ կետի 1-ին ենթակետի դրույթների գործողությունը:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամների և Միության դատարանի դատավորների հետ բնակվող ընտանիքների անդամների վրա տարածվում է սույն Կանոնակարգի 19-րդ կետի 3-5-րդ ենթակետերի դրույթների գործողությունը, եթե այդ ընտանիքների անդամները հյուրընկալող պետության քաղաքացիներ չեն:

Հյուրընկալող պետության քաղաքացի հանդիսացող և (կամ) այդ պետության տարածքում մշտապես բնակվող՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների և Միության դատարանի դատավորների ընտանիքների անդամների վրա չի տարածվում հյուրընկալող պետության քաղաքացիական իրավազորությունից անձեռնմխելիությունը՝ ընտանիքի այդպիսի անդամին պատկանող կամ նրա կողմից կառավարվող տրանսպորտային միջոցի հետևանքով տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետ կապված վնասի փոխհատուցման հայցերի մասով:

19. Պաշտոնատար անձինք՝

1) ենթակա չեն քրեական, քաղաքացիական և վարչական պատասխանատվության որպես պաշտոնատար անձ իրենց կողմից ասվածի կամ գրվածի և իրենց կողմից կատարված բոլոր գործողությունների համար.

2) ազատվում են Միության մարմինների կողմից վճարվող աշխատավարձի և այլ վարձատրությունների հարկումից.

3) ազատվում են պետական ծառայության պարտականություններից.

4) ազատվում են հյուրընկալող երկիր մուտք գործելու և այդ երկրից հեռանալու հետ կապված սահմանափակումներից, օտարերկրացիների համար սահմանված գրանցումից և ժամանակավոր կացության թույլտվություն ստանալուց.

5) օգտվում են հայրենադարձության նույն արտոնություններից, որոնցից միջազգային ճգնաժամերի ժամանակ օգտվում են դիվանագիտական ներկայացուցիչները:

20. Հյուրընկալող պետության քաղաքացի հանդիսացող և (կամ) այդ պետության տարածքում մշտապես բնակվող պաշտոնատար անձանց վրա չի տարածվում սույն Կանոնակարգի 19-րդ կետի 2-5-րդ ենթակետերի դրույթների գործողությունը:

21. Պաշտոնատար անձանց հետ բնակվող ընտանիքի անդամների վրա չի տարածվում սույն Կանոնակարգի 19-րդ կետի 3-5-րդ ենթակետերի դրույթների գործողությունը, եթե ընտանիքի այդ անդամները հյուրընկալող պետության քաղաքացիներ չեն և (կամ) մշտապես չեն բնակվում այդ պետության տարածքում:

22. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների հավատարմագրման հարցերը կարգավորվում են հյուրընկալող պետության տարածքում Միության մարմինների գտնվելու մասին միջազգային պայմանագրերով:

23. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Միության դատարանի դատավորները, պաշտոնատար անձինք և աշխատակիցներն իրավունք չունեն զբաղվելու ձեռնարկատիրական և սեփական կամ այլ անձանց շահ հետապնդող որևէ այլ գործունեությամբ՝ բացառությամբ գիտական, ստեղծագործական և մանկավարժական գործունեության:

Գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական գործունեությունից ստացված եկամուտները ենթակա են հարկման՝ միջազգային պայմանագրերին և հյուրընկալող պետության օրենսդրությանը համապատասխան:

24. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Միության դատարանի դատավորները, պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքների անդամները պետք է պահպանեն հյուրընկալող պետության օրենսդրության պահանջները, որոնք առնչվում են տրանսպորտային ցանկացած միջոցի օգտագործմամբ երրորդ անձանց հասցված վնասից ապահովագրությանը:

25. Աշխատակիցները ենթակա չեն հյուրընկալող պետության դատական կամ վարչական մարմինների իրավազորությանը՝ այն գործողությունների մասով, որոնք իրականացվում են նրանց կողմից ծառայողական պարտականությունների անմիջական կատարման ընթացքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվում են՝

1) աշխատակցին պատկանող կամ նրա կողմից կառավարվող տրանսպորտային միջոցի հետևանքով տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետ կապված վնասի փոխհատուցման հայցեր.

2) աշխատակցի գործողությունների հետևանքով առաջացած մահվան կամ մարմնական վնասվածքի հետ կապված հայցեր:

26. Աշխատակիցներն ազատվում են հյուրընկալող երկիր մուտք գործելու և այդ երկրից հեռանալու հետ կապված սահմանափակումներից, օտարերկրացիների համար սահմանված գրանցումից և ժամանակավոր կացության թույլտվություն ստանալուց:

27. Սույն Կանոնակարգի 25-րդ և 26-րդ կետերի դրույթները չեն տարածվում աշխատակիցների և այն անդամ պետության պետական իշխանության ու կառավարման մարմինների միջև հարաբերությունների վրա, որոնց քաղաքացին են հանդիսանում նրանք:

28. Այն արտոնությունները և անձեռնմխելիությունները, որոնցից օգտվում են Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Միության դատարանի դատավորները, պաշտոնատար անձինք և աշխատակիցները, նրանց տրամադրվում են ոչ թե անձնական շահի համար, այլ իրենց լիազորությունների արդյունավետ, անկախ իրականացման (պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման) համար՝ ելնելով Միության շահերից:

29. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Միության դատարանի դատավորները, պաշտոնատար անձինք, աշխատակիցները և նրանց ընտանիքների անդամները սույն Կանոնակարգով նախատեսված արտոնություններից և անձեռնմխելիություններից օգտվում են հյուրընկալող պետության տարածք մուտք գործելու պահից՝ դեպի նպատակակետը շարժվելիս, կամ, եթե նրանք արդեն այդ տարածքում են գտնվում, այն պահից, երբ Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Միության դատարանի դատավորները, պաշտոնատար անձինք, աշխատակիցներն անցել են իրենց լիազորությունների (պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների) կատարմանը:

30. Եթե Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Միության դատարանի դատավորի, պաշտոնատար անձի կամ աշխատակցի լիազորությունները (պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարումը) դադարեցվում են, ապա նրանց արտոնությունները և անձեռնմխելիությունները, ինչպես նաև նրանց հետ բնակվող ընտանիքների անդամների արտոնությունները և անձեռնմխելիությունները սովորաբար դադարեցվում են այն պահին, երբ տվյալ անձը հեռանում է հյուրընկալող պետությունից կամ մինչև հյուրընկալող պետությունից հեռանալու համար ողջամիտ ժամկետը լրանալը՝ կախված նրանից, թե այդ ժամկետներից որն է ավելի վաղ վրա հասնում: Ընտանիքի անդամների արտոնությունները և անձեռնմխելիությունները դադարեցվում են, երբ նրանք դադարում են լինել Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Միության դատարանի դատավորի, պաշտոնատար անձի կամ աշխատակցի ընտանիքի անդամ: Ընդ որում, եթե այդպիսի անձինք մտադիր են ողջամիտ ժամկետի ընթացքում հեռանալու հյուրընկալող պետությունից, ապա նրանց արտոնություններն ու անձեռնմխելիությունները պահպանվում են մինչև նրանց մեկնելու պահը:

31. Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Միության դատարանի դատավորի, պաշտոնատար անձի կամ աշխատակցի մահվան դեպքում նրանց հետ բնակվող ընտանիքի անդամները շարունակում են իրենց արտոնություններից և անձեռնմխելիություններից օգտվել մինչև այն պահը, երբ նրանք հեռանում են հյուրընկալող պետությունից կամ մինչև հյուրընկալող պետությունից հեռանալու համար ողջամիտ ժամկետի լրանալը՝ կախված նրանից, թե այդ ժամկետներից որն է ավելի վաղ վրա հասնում:

32. Վարչական, քաղաքացիական և քրեական իրավազորությունից Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Միության դատարանի դատավորի կամ պաշտոնատար անձի անձեռնմխելիությունները, կապված այն ամենի հետ, ինչ ասվել կամ գրվել է իրենց գործառույթների իրականացման և Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Միության դատարանի դատավորի կամ պաշտոնատար անձի դիրքում կատարված բոլոր գործողությունների շրջանակներում, լիազորությունների դադարեցումից հետո նույնպես պահպանվում են:

Սույն կետը գործում է առանց հակասելու Պայմանագրով կամ Միության շրջանակում միջազգային պայմանագրերով նախատեսված՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Միության դատարանի դատավորի կամ պաշտոնատար անձի համար պատասխանատվություն առաջացնող դեպքերին:

33. Սույն Կանոնակարգին համապատասխան՝ արտոնություններից և անձեռնմխելիություններից օգտվող բոլոր անձինք պարտավոր են, առանց իրենց արտոնությունների և անձեռնմխելիությունների համար վնասի, հարգել հյուրընկալող պետության օրենսդրությունը: Նրանք պարտավոր են նաև չմիջամտել այդ պետության ներքին գործերին:

34. Հանձնաժողովի կոլեգիայի անդամին, Միության դատարանի դատավորին, պաշտոնատար անձին, աշխատակիցը կարող է զրկվել անձեռնմխելիությունից, եթե անձեռնմխելիությունը խոչընդոտում է արդարադատության իրականացումը և եթե անձեռնմխելիությունից զրկելը չի վնասում այն նպատակները, որոնց առնչությամբ այն տրամադրվել է:

35. Անձեռնմխելիությունից զրկելն իրականացվում է՝

1) Բարձրագույն խորհրդի կողմից Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Միության դատարանի դատավորի նկատմամբ.

2) Հանձնաժողովի խորհրդի կողմից Հանձնաժողովի պաշտոնատար անձի և աշխատակցի նկատմամբ.

3) Միության դատարանի Նախագահի կողմից Միության դատարանի պաշտոնատար անձի և աշխատակցի նկատմամբ:

36. Անձեռնմխելիությունից հրաժարվելն իրականացվում է գրավոր և պետք է հստակորեն ներկայացված լինի:

IV. Անդամ պետությունների ներկայացուցիչների արտոնությունները և անձեռնմխելիությունները

37. Անդամ պետությունների ներկայացուցիչներն իրենց պաշտոնեական գործառույթներն իրականացնելիս և անդամ պետության տարածքներում Միության մարմինների կողմից կազմակերպվող միջոցառումների անցկացման վայր ուղևորվելիս օգտվում են հետևյալ արտոնություններից և անձեռնմխելիություններից՝

1) կալանքից կամ ձերբակալումից, ինչպես նաև դատական և վարչական իշխանությունների իրավազորությունից անձեռնմխելիություն՝ այդ դիրքում իրենց կողմից կատարված բոլոր գործողությունների առնչությամբ.

2) բնակարանի անձեռնմխելիություն.

3) ուղեբեռի և ձեռքի իրերի ազատում մաքսային զննումից, եթե լուրջ հիմքեր չկան ենթադրելու, որ դրանցում առկա են այնպիսի առարկաներ և այլ գույք, որոնք նախատեսված չեն պաշտոնեական կամ անձնական օգտագործման համար, կամ առարկաներ և այլ գույք, որոնց ներմուծումն ու արտահանումը արգելված կամ սահմանափակված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում անցկացվում է միջոցառումը.

4) հյուրընկալող երկիր մուտք գործելու և այդ երկրից հեռանալու սահմանափակումներից, օտարերկրացիների համար սահմանված գրանցումից և ժամանակավոր կացության թույլտվության ստացումից ազատում:

38. Սույն Կանոնակարգի 37-րդ կետի դրույթները չեն տարածվում անդամ պետության ներկայացուցչի և այն անդամ պետության իշխանությունների միջև հարաբերությունների վրա, որոնց քաղաքացին կամ ներկայացուցիչն է հանդիսանում կամ հանդիսացել նա:

39. Այն արտոնությունները և անձեռնմխելիությունները, որոնցից օգտվում են անդամ պետությունների ներկայացուցիչները, նրանց տրամադրվում են ոչ թե անձնական շահի համար, այլ իրենց պաշտոնեական գործառույթների արդյունավետ, անկախ իրագործման համար՝ ելնելով իրենց անդամ պետության շահերից:

40. Անդամ պետությունների ներկայացուցիչների կողմից զբաղեցված շինությունները, նրանց կողմից ծառայողական կարիքների համար օգտագործվող կահույքը և մյուս գույքը, ինչպես նաև տրանսպորտային միջոցներն անձեռնմխելի են խուզարկությունից, ռեկվիզիցիայից, կալանքից և կատարողական գործողություններից:

41. Անդամ պետությունների ներկայացուցիչների արխիվներն ու փաստաթղթերն անձեռնմխելի են ցանկացած ժամանակ և անկախ տեղեկությունների կրիչից ու դրանց գտնվելու վայրից:

42. Հյուրընկալող պետությունն անդամ պետությունների բոլոր ներկայացուցիչների համար ապահովում է իր տարածքում տեղաշարժվելու և ուղևորություն կատարելու ազատություն այն չափով, որն անհրաժեշտ է իրենց պաշտոնեական գործառույթներն իրականացնելու համար, եթե դա չի հակասում այն գոտիների մասին օրենքին և կանոններին, որտեղ մուտք գործելն արգելվում կամ կարգավորվում է պետական անվտանգության նկատառումներով:

V. Միության մարմիններում աշխատանքային հարաբերությունները և սոցիալական երաշխիքները

43. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են հյուրընկալող պետության օրենսդրությամբ՝ հաշվի առնելով սույն Կանոնակարգի նորմերը:

44. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացիներն են հանդիսանում նրանք:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների կենսաթոշակային ապահովման գծով պարտադիր մասհանումները կատարվում են Միության մարմինների կողմից առանց աշխատավարձից պահման՝ Միության բյուջետային միջոցների հաշվի այն անդամ պետությունների կենսաթոշակային ֆոնդերին, որոնց քաղաքացիներն են նշված անձինք՝ համապատասխան անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով: Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների կենսաթոշակների վճարման ծախսերը հոգում է այն անդամ պետությունը, որի քաղաքացիներն են հանդիսանում նրանք:

45. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների սոցիալական ապահովությունը (սոցիալական ապահովագրությունը), բացի կենսաթոշակային ապահովագրությունից, և սոցիալական ապահովագրության գծով նպաստների ապահովումն իրականացվում են հյուրընկալող պետության օրենսդրությանը համապատասխան՝ նույն կարգով և նույն պայմաններով, որոնք կիրառվում են հյուրընկալող պետության քաղաքացիների նկատմամբ:

Սոցիալական ապահովության (սոցիալական ապահովագրության) ապահովագրավճարների վճարումը, բացի թոշակային ապահովագրությունից, Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների օգտին վճարումներից կատարվում է Միության բյուջետային միջոցների հաշվին՝ հյուրընկալող պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սոցիալական ապահովության (սոցիալական ապահովագրության) նպաստների վճարման ծախսերը կրում է հյուրընկալող պետությունը՝ առանց այլ անդամ պետությունների հետ փոխադարձ հաշվարկներ կատարելու:

46. Սոցիալական ապահովության (սոցիալական ապահովագրության) մասով կենսաթոշակներ կամ նպաստներ նշանակելիս ապահովագրական կամ աշխատանքային ստաժում հաշվի է առնվում որպես Հանձնաժողովի կոլեգիայի անդամ, Միության դատարանի դատավոր, պաշտոնատար անձ և աշխատակից աշխատելու ժամկետն այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացին են հանդիսանում նրանք:

Կենսաթոշակ նշանակելիս որպես Հանձնաժողովի կոլեգիայի անդամ, Միության դատարանի դատավոր, պաշտոնատար անձ և աշխատակից աշխատելու ժամկետը հաշվառվում է ապահովագրական կամ աշխատանքային ստաժում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացիներն են հանդիսանում նրանք, իսկ սոցիալական ապահովության (սոցիալական ապահովագրության) գծով նպաստ նշանակելիս՝ հյուրընկալող պետության օրենսդրությանը համապատասխան:

47. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների՝ իրենց լիազորությունների իրականացման ժամկետում վաստակած գումարները հաշվի են առնվում կենսաթոշակի չափը սահմանելիս՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացիներն են հանդիսանում նրանք, իսկ սոցիալական ապահովության (սոցիալական ապահովագրության) գծով նպաստի չափը սահմանելիս՝ հյուրընկալող պետության օրենսդրությանը համապատասխան:

48. Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Միության դատարանի դատավորի լիազորությունների իրականացման ժամանակահատվածում տրամադրվում են հետևյալ սոցիալական երաշխիքները՝

1) ամենամյա վճարվող արձակուրդ՝ 45 օրացուցային օր տևողությամբ.

2) բժշկական սպասարկում, այդ թվում՝ նրանց ընտանիքների անդամներին, ինչպես նաև Միության բյուջեի հաշվին իրականացվող տրանսպորտային սպասարկում.

3) Միության բյուջեի հաշվին ծառայողական բնակելի շինության տրամադրում Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին և Միության դատարանի դատավորներին (հաշվի առնելով նրանց ընտանիքների անդամներին), որոնք բնակելի տարածք չունեն այն քաղաքի տարածքում, որտեղ տեղակայված է Միության համապատասխան մարմինը.

4) Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորություններն իրականացնելու ժամանակահատվածի հաշվառում պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում՝ պետական ծառայողներին (դաշնային պետական քաղաքացիական ծառայողներին)

այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված սոցիալական երաշխիքները տրամադրելիս, որի քաղաքացին են հանդիսանում նրանք, ինչպես նաև՝ նախարարի (դաշնային նախարարի) լիազորություններն իրականացնելու ժամանակահատվածում՝ նախարարի (դաշնային նախարարի) համար Հանձնաժողովի կոլեգիայի անդամի քաղաքացիության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կենսաթոշակային (սոցիալական) ապահովության (կենսաթոշակի նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի) չափը (իրավունքը) սահմանելիս.

5) Միության դատարանի դատավորի լիազորություններն իրականացնելու ժամանակահատվածի հաշվառում այն անդամ պետությունում դատավորի պաշտոնում աշխատելու ստաժում, որի քաղաքացին է Միության դատարանի դատավորը:

49. Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին և Միության դատարանի դատավորներին տրամադրվող սոցիալական երաշխիքների (այդ թվում՝ բժշկական և տրանսպորտային սպասարկման) ապահովման հետ կապված հարցերը կարգավորվում են հյուրընկալող պետության իրավասու մարմնի կողմից:

50. Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող Հանձնաժողովի կոլեգիայի այն անդամները, որոնք վայր են դնում իրենց լիազորությունները (բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության» մասին կանոնակարգով (Պայմանագրի 1-ին հավելված) նախատեսված՝ լիազորությունները վաղաժամ դադարելու դեպքերի), ծերության (հաշմանդամության) ապահովագրական կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարի սահմանման իրավունք ունեն: Կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ դաշնային նախարարի համար նախատեսված չափով, կարգով և պայմաններով: Կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարի սահմանման մասին որոշումն ընդունվում է գործադիր իշխանության դաշնային մարմնի ղեկավարի կողմից, որը կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրականացման և նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ է իրականացնում: Կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարը սահմանվում է դաշնային բյուջեի միջոցների հաշվին:

Միության դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելիս նրա վրա տարածվում են երաշխիքներ և նրան տրամադրվում են անդամ պետության գերագույն դատարանի նախագահի համար այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դրամական վճարումները, որի կողմից նշանակված է Միության դատարանի դատավորը: Այդ երաշխիքները և դրամական վճարումները Միության դատարանի դատավորի համար սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի կողմից նշանակվել է Միության դատարանի դատավորը:

51. Իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունները կատարելիս պաշտոնատար անձանց, աշխատակիցներին և նրանց ընտանիքների անդամներին Միության բյուջետային միջոցների հաշվին տրամադրվում է բժշկական սպասարկում, Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրեններին և Միության դատարանի քարտուղարության ղեկավարին Միության բյուջետային միջոցների հաշվին տրամադրվում է նաև տրանսպորտային սպասարկում:

52. Իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունները կատարելիս այն պաշտոնատար անձանց և աշխատակիցներին, որոնք Միության համապատասխան մարմնի գտնվելու քաղաքում բնակելի տարածք չունեն, Միության բյուջետային միջոցների հաշվին տրամադրվում են ծառայողական բնակելի շինություններ (հաշվի առնելով նրանց ընտանիքների անդամներին):

53. Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող Հանձնաժողովի այն պաշտոնատար անձինք և աշխատողները, որոնք մինչև Հանձնաժողովի և Միության դատարանի կազմում աշխատելը զբաղեցրել են դաշնային պետական (պետական քաղաքացիական) ծառայության պաշտոններ, որոնք ազատվել են Հանձնաժողովի և Միության դատարանի կազմում իրենց զբաղեցրած պաշտոններից (բացառությամբ՝ իրենց մեղքով աշխատանքից ազատվելու դեպքերի) և որոնք պետական քաղաքացիական ծառայության առնվազն 15 տարվա ստաժ ունեն, պետական քաղաքացիական ծառայողների համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով երկարամյա ծառայության թոշակի իրավունք ունեն, եթե

մինչև Հանձնաժողովի և Միության դատարանի կազմում աշխատանքից ազատվելը նրանք առնվազն 12 ամիս պաշտոն են զբաղեցրել: Երկարամյա ծառայության համար կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարի սահմանման մասին որոշումն ընդունվում է գործադիր իշխանության դաշնային մարմնի ղեկավարի կողմից, որը կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրականացման և նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ է իրականացնում՝ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կամ Միության դատարին նախագահի առաջարկով:

Երկարամյա ծառայության կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝ հաշվի առնելով պաշտոնատար անձի կամ աշխատակցի միջին ամսական աշխատավարձը, որի առավելագույն չափը սահմանվում է այն պաշտոնային դրույքաչափերի (դրամական վարձատրության) համար, որոնք սահմանվում են ըստ պետական քաղաքացիական ծառայության հավասարեցված պաշտոնների՝ համաձայն Հանձնաժողովի և Միության դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների պաշտոնների և Ռուսաստանի Դաշնության կառավարության աշխատակազմում և Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանի աշխատակազմում դաշնային պետական քաղաքացիական ծառայության պաշտոնների համապատասխանության՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից հաստատված ցանկի:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն՝ երկարամյա ծառայության կենսաթոշակը նշանակվում է դաշնային բյուջեի միջոցների հաշվին:

54. Հանձնաժողովի և Միության դատարանի պաշտոնատար անձանց և աշխատակիցների աշխատելու ժամանակահատվածը հաշվառվում է այն անդամ պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում, որի քաղաքացին են հանդիսանում նրանք՝ պետական (պետական քաղաքացիական) ծառայության ժամանակահատվածում սոցիալական երաշխիքների սահմանման և պետական ծառայողների (դաշնային պետական քաղաքացիական ծառայողների) երկարամյա ծառայության համար թոշակի նշանակման նպատակով:

55. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների և Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց և աշխատակիցների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների բժշկական ու տրանսպորտային սպասարկման կարգը սահմանվում է Միջկառավարական խորհրդի կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ 33
«Եվրասիական տնտեսական
միության մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու կապակցությամբ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի ձևավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի գործողությունը դադարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ուժի մեջ մտնելու կապակցությամբ դադարում է Մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի ձևավորման շրջանակներում կնքված հետևյալ միջազգային պայմանագրերի գործողությունը:

I. Միջազգային պայմանագրեր, որոնց գործողությունը դադարում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

1. «Միասնական մաքսային տարածք ստեղծելու և Մաքսային միություն ձևավորելու մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագիր:

2. «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձևավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու և դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրություն:

3. «Մաքսային միության ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի վերաբերյալ մաքսային վիճակագրություն վարելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր:

4. «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր:

5. «Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր:

6. «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր:

7. «Ապրանքների արտահանման և ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման սկզբունքների, աշխատանքների իրականացման, Մաքսային միությունում ծառայություններ մատուցելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր:

8. «Սակագնային արտոնությունների տրամադրման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն:

9. «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշման կանոնների միանման կիրառումն ապահովելու մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն:

10. «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմինների միջև ապրանքների մաքսային արժեքի որոշման և հսկողության համար անհրաժեշտ տեղեկությունների փոխանակման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն:

11. «Բացառիկ դեպքերում միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի կիրառման պայմանների և կարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն:

12. «Մաքսային ընթացակարգերի և մաքսային ռեժիմների տեսակների մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր:

13. «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման կարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր:

14. «Ապրանքների հայտարարագրման կարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր:

15. «Մաքսային միության մասնակից պետություններում մաքսային վճարների հաշվարկման և վճարման կարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր:

16. «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշման ճշգրտության նկատմամբ հսկողության իրականացման կարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր:

17. «Մաքսային միության մասնակից պետություններում մաքսային ձևակերպման և մաքսային հսկողության կարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր:

18. «Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարության մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր:

19. «Սակագնային քվոտաներ կիրառելու պայմանների և մեխանիզմների մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր:

20. «Երրորդ երկրների նկատմամբ Միասնական մաքսային տարածքում ապրանքների արտաքին առևտուրը կարգավորող միջոցներ սահմանելու և դրանք կիրառելու մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագիր:

21. «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագիր:

22. «Մաքսային միությունում ապրանքների արտահանման և ներմուծման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ հսկողություն իրականացնելու մեխանիզմների մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրություն:

23. «Մաքսային միությունում աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման կարգի մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրություն:

24. «Արտաքին առևտրի վիճակագրության և փոխադարձ առևտրի վիճակագրության տվյալների փոխանցման կարգի մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրություն:

25. «Մաքսային միության հանձնաժողովի մաքսային վիճակագրության կենտրոնի կարգավիճակի մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրություն:

26. «Համապատասխանության գնահատման (հավաստման) աշխատանքներ իրականացնող սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) հավատարմագրման մարմինների փոխադարձ ճանաչման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիր:

27. «Մաքսային միության մաքսային տարածքում համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) ենթակա արտադրանքի շրջանառության մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիր:

28. «Անասնաբուժասանիտարական միջոցների իրականացման մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիր:

29. «Բույսերի կարանտինի մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիր:

30. «Սանիտարական միջոցների իրականացման մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագիր:

31. ««Մաքսային միությունում ապրանքների ներմուծման և արտահանման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրություն:

32. «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (համարժեք ազդեցություն ունեցող այլ մաքսատուրքերի, հարկերի և գանձումների) հաշվեգրման և բաշխման կարգի սահմանման և կիրառման մասին» 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագիր:

33. ««Բույսերի կարանտինի մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 21-ի արձանագրություն:

34. ««Անասնաբուժասանիտարական միջոցների իրականացման մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 21-ի արձանագրություն:

35. ««Սանիտարական միջոցների իրականացման մասին» Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 21-ի արձանագրություն:

36. «Մաքսային միության միասնական մաքսային տարածքից գործառութային ռեժիմի առանձին ժամանակավոր բացառումների մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի արձանագրություն:

37. «Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտաքին և փոխադարձ առևտրում էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության մասին» 2010 թվականի սեպտեմբերի 21-ի համաձայնագիր:

38. «Մաքսային միության արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության և զարգացման մասին» 2010 թվականի սեպտեմբերի 21-ի համաձայնագիր:

39. «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագիր:

40. «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառմանը նախորդող ուսումնասիրություն իրականացնող մարմին տվյալներ, այդ թվում՝ կոնֆիդենցիալ տեղեկություններ տրամադրելու կարգի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի արձանագրություն:

41. «Անցումային շրջանի ընթացքում հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման կարգի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագիր:

42. «Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավական կարգավիճակի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագիր:

43. «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհների ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմքերի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագիր:

44. «Պետական (մունիցիպալ) գնումների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

45. «Գյուղատնտեսության պետական աջակցության միասնական կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

46. «Արդյունաբերական սուբսիդիաներ տրամադրելու միասնական կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

47. «Մրցակցության միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

48. «Բնական մենաշնորհ ունեցող սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

49. «Մտավոր սեփականության իրավունքների պահպանության և պաշտպանության ոլորտում կարգավորման միասնական սկզբունքների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

50. «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նավթի ու նավթամթերքի ընդհանուր շուկաների կազմակերպման, կառավարման, գործունեության և զարգացման կարգի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

51. «Գազատրանսպորտային համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման և սակագնային քաղաքականության հիմքերի մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

52. «Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիությունը, այդ թվում՝ սակագնային քաղաքականության հիմունքները կարգավորելու մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

53. «Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

54. «Արժութային քաղաքականության համաձայնեցված սկզբունքների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

55. «Կապիտալի ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով ֆինանսական շուկաներում պայմաններ ստեղծելու մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

56. «Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետություններում ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագիր:

57. «Մաքսային միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու մասին» 2011 թվականի հունիսի 22-ի համաձայնագիր:

58. ««Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի արձանագրություն:

59. «Ներկրման մաքսատուրքերի վճարման հետ կապված տեղեկությունների փոխանակման կարգի մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի արձանագրություն:

60. «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագիր:

61. ««Արժութային քաղաքականության համաձայնեցված սկզբունքների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի մասնակից պետությունների՝ արժութային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինների փոխգործակցության մասին» 2011 թվականի դեկտեմբերի 15-ի պայմանագիր:

62. «Վիճակագրության ոլորտում տեղեկատվական համագործակցության մասին» 2013 թվականի մայիսի 29-ի համաձայնագիր:

63. ««Միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից տարբեր՝ բացառիկ դեպքերում կիրառվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի պայմանների և կիրառման կարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2012 թվականի օգոստոսի 24-ի արձանագրություն:

64. ««Սակագնային քվոտաներ կիրառելու պայմանների և մեխանիզմի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» 2013 թվականի հունիսի 21-ի արձանագրություն:

65. ««Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» 2013 թվականի սեպտեմբերի 25-ի արձանագրություն:

II. Պայմանագրի 102-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետևյալ միջազգային պայմանագրերի գործողությունը դադարելը

1. «Ապրանքների ծագման երկիրը որոշելու միասնական կանոնների մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր:

2. «Մաքսային միության սակագնային արտոնությունների միասնական համակարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրություն:

3. «Զարգացող և առավել թույլ զարգացած երկրների ապրանքների ծագումը որոշելու կանոնների մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագիր: